

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ

*Դասագիրք բուհերի հումանիտար և բնագիտական
ֆակուլտետների ուսանողների համար*



ԵՐԵՎԱՆ • 2019

ՀՏԴ 811.19'271:808
ԳՄԴ 81.2Հ-5+83.7
Հ 282

Հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարության կողմից
որպես բուհական դասագիրք

Երաշխավորել է հրատարակության
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը

Հեղինակներ՝

ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ — Լեզու. լեզվի հասարակական դերը,
տարբերակները, գործառույթները: Խոսք. ընդհանուր
հատկանիշները, դրսևորումները: Խոսքի արժանիքները:
Պաշտոնական ոճ
Ա. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ — Հրապարակային խոսք: Բանավեճի արվեստ
Ն. Վ. ՆԵՐՍԻՍՅԱՆ — Ձանգվածային լրատվության միջոցների լեզուն
Լ. Գ. ԹԵԼՅԱՆ — Գիտական ոճ
Ա. Ա. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ — Գեղարվեստական ոճ
Շ. Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ — Խոսակցական ոճ
Լ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ — Խոսքային էթիկետ
Ա. Ջ. ԱԴԻԼԽԱՆՅԱՆ — Գովազդի լեզուն

Խմբագիրներ՝

Յու. Ս. Ավետիսյան (բ. գ. դ., պրոֆ.), Լ. Գ. Թելյան (բ. գ. թ., դոց.),
Ա. Լ. Սարգսյան (բ. գ. թ., դոց.)

Գրախոսներ՝

Լ. Կ. Եզեկյան (բ. գ. դ., պրոֆ.), Ա. Ա. Գալստյան (բ. գ. դ., պրոֆ.)

Հայոց լեզու և խոսքի մշակույթ / Յու. Ս. Ավետիսյան, Ա. Լ. Սարգսյան,
Հ 282 Ն. Վ. Ներսիսյան, Լ. Գ. Թելյան, Ա. Ա. Տեր-Մինասյան, Շ. Ս. Գևորգյան,
Լ. Ս. Սարգսյան, Ա. Ջ. Ադիլխանյան.— Եր.: «Ձանգակ» հրատ., 2019.— 288 էջ:

Ձեռնարկում քննադատվում են լեզվի և խոսքի հիմնական հատկանիշները, խոսքի արժանիքները՝ ճշտություն, հարստություն, ճշգրտություն, տրամաբանականություն, սեղմություն, արտահայտչականություն ևն, քաջատրվում են հաղորդակցման գործընթացի յուրահատկությունները, ներկայացվում են խոսքի գործառական տարբերակները՝ պաշտոնական, գիտական, հրապարակային ևն: Ուսուցանվում են բանավեճային արվեստի հմտություններ, խոսքային վարվեցողության կանոններ: Նախատեսված է բուհերի հումանիտար և քնագիտական ֆակուլտետների ուսանողների և բոլոր նրանց համար, ովքեր ուզում են հայերեն ճիշտ և արտահայտիչ խոսել ու գրել:

ՀՏԴ 811.19'271:808
ԳՄԴ 81.2Հ-5+83.7

ISBN 978-9939-68-753-7

© «Ձանգակ-97» ՍՊԸ, 2019
© Հեղինակներ, 2019

Ով խոսել չի կարողանում, նա
կարիերա չի կարող ստեղծել:
Նապոլեոն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ժամանակակից բարձրագույն կրթության հիմնական խնդիրներից մեկը անհատականության զարգացման համար պայմաններ ապահովելն է: Սա ենթադրում է կրթական այնպիսի միջավայրի ստեղծում, որտեղ կրթություն ստանալով՝ անհատը հետագայում կարողանա ինքնադրսևորվել ոչ միայն իր մասնագիտության մեջ, այլև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Այդ նպատակին է կոչված ծառայելու նաև «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկայի դասավանդումը բուհերում:

Դասընթացը սկզբնապես ներկայացված է եղել երկու գրքով: Առաջին գրքում (Գիրք Ա. **Հայոց լեզու. գրական արևելահայերենի նորմը**, 2014) բնութագրվում էին լեզվի ընդհանուր հատկանիշները և գրական արևելահայերենի լեզվական հիմնական կանոնները: Այլ կերպ ասած՝ առաջին գրքում ներկայացված էր հայերենի **լեզվական մշակույթը**: Երկրորդ գիրքը (Գիրք Բ. **խոսքի մշակույթ**, 2015) վերաբերում էր խոսքի արժանիքներին և խոսքի գործառական տարբերակների (գիտական, պաշտոնական, առօրյա-խոսակցական, հրապարակային ևն) նկարագրությանը: Ներկայացված էր հայերենի **խոսքի մշակույթը (խոսքի կուլտուրան)**:

Այս ձեռնարկը համատեղում է նշված գրքերի բովանդակությունը որոշ փոփոխություններով: Առաջինից ներառված են հիմնականում այն նյութերը, որոնք վերաբերում են գրական արևելահայերենի հնչյունական, բառային և քերականական նորմերին, խոսքում դրանց ճիշտ իրացմանը: Հանգամանորեն են ներկայացվում առավելապես այն կանոնները, որոնց յուրացումն ու գործածությունն ունեն որոշ դժվարություններ: Ընտրությունից դուրս է մնացել տեսական-քերականական գիտելիքների մի մասը, որը կամ յուրացվել է / պիտի յուրացվեր հանրակրթական դպրոցում, կամ այս դասընթացի տեսանկյունից գործնական կարևոր նշանակություն չունի: Առաջին գրքի նյութը զետեղված է խոսքի **ճշտություն** բաժնում: **Ճիշտ խոսքի կառուցման առաջին և հիմնական պայմանը լեզվական կանոնների իմացությունն է:**

Երկրորդ գիրքը՝ **խոսքի մշակույթ**–ը, այստեղ ներառված է գրեթե ամբողջությամբ՝ որոշ շտկումներով և հավելումներով. ուսուցանում է լեզվի կիրառական և հաղորդակցային հնարավորությունները:

Հաղորդակցման հմտություններին տիրապետելը կյանքում հաջողության հասնելու ամենամեծ գրավականն է: Ազդու, գեղեցիկ, տպավորիչ, տրամաբանված խոսքը հզոր գործիք է բոլոր նրանց համար, ովքեր ուզում են հասարակության մեջ և հանրային կյանքում որոշակի դիրք ունենալ, կարիերա ստեղծել կամ պարզապես ներդաշնակ հաղորդակցվել մարդկանց հետ, միջավայրում երևալ որպես նպատակային, բանիմաց ու հետաքրքիր անձնավորություն: **Հաղորդակցվելու շնորհքը մարդու մեծագույն հարստություններից մեկն է:**

Ձեռնարկը ուսումնառության ընթացքում կօգնի տիրապետելու խոսքային հաղորդակցման հմտություններին, ձեռք բերելու մասնագիտական կարողություններ, իսկ հետագայում՝ դրանք հաջողությամբ կիրառելու նաև աշխատանքային գործունեության մեջ:

Այս գիրքը իր տեսակի մեջ առաջին փորձերից է: Հեղինակները սիրով կընդունեն բոլոր այն առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կնպաստեն կատարված աշխատանքը մշակելուն:

ՄԱՍ 1.

ԼԵԶՈՒ. ԼԵԶՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԸ, ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1.1. Լեզվի հասարակական դերը (5): 1.2. Լեզվի հիմնական հատկանիշները (5): 1.3. Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում (6): 1.4. Հայոց լեզվի ձևավորումը (6): 1.5. Հայոց լեզվի փարբերակները. բարբառներ, խոսակցական լեզու, գրական լեզու (7): 1.6. Գրական հայերենի զարգացման փուլերը. գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար (9): 1.7. Արևմտահայերեն և արևելահայերեն (11): 1.8. Պեպական լեզու (12): 1.9. Հայոց լեզվի գործառույթները (13):

1.1. ԼԵԶՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԸ

Լեզուն **հասարակական երևույթ է**: Ստեղծվում է հասարակության՝ հանրության կողմից: Լեզվական օրենքները առարկայական (օբյեկտիվ) բնույթ ունեն, դրանք գործում են խոսողի կամքից անկախ: Հասարակական գործունը մեծ դեր ունի լեզվի զարգացման մեջ. բարձր քաղաքակրթություն ունեցող և զարգացած հասարակական կյանքով ապրող ժողովրդի լեզուն նույնպես զարգացած է:

Հասարակական երևույթներ են նաև մշակույթը, կրթությունը, գիտությունը ևն: Լեզուն դրանցից առանձնանում է նրանով, որ մարդկանց ծառայում է որպես **հաղորդակցման միջոց**: Լեզվի միջոցով մարդիկ միմյանց հայտնում են իրենց մտքերը, հասնում են փոխադարձ ըմբռնման: Այն ապահովում է սերունդների միջև կապը և ժառանգորդությունը: Լեզուն հոգևոր–մշակութային առաջընթացի գործիք է:

1.2. ԼԵԶՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Իբրև հաղորդակցման միջոց՝ լեզուն **նշանների համակարգ է**: Հաղորդակցական արժեքով նշաններ շատ կան՝ շարժումները, լուսային, ծայնային, գունային, պատկերային ազդանշանները, նշանային արժեքով օժտված այլ միջոցներ՝ հայելի, ծաղիկ, դրոշակ ևն: Դրանցից լեզուն առանձնանում է մի շարք էական **հատկանիշներով**. 1. Լեզուն հաղորդակցման հիմնական, ամենակարևոր միջոցն է: 2. Նշանակիչի դերում հանդես է գալիս ծայնը՝ իր բոլոր հատկանիշներով: 3. Ընդհանրացնում է անհատական և հասարակական փորձի արդյունքները: 4. Գործառում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: 5. Մտածողության արտահայտման ձև է. լեզուն և մտածողությունը սերտ կապի մեջ են (այստեղից էլ **լեզվամտածողություն** հասկացությունը): 6. Ազգային գոյության հիմնական

ծևերից մեկն է, ինչպես ազգային մշակույթը, տնտեսությունը, բանակը, տարածքային ամբողջականությունը: 7. Համակարգ է. նրա հորինվածքի տարրերը սերտորեն փոխկապակցված են, յուրաքանչյուր միավոր լեզվական կառուցվածքում ունի իր տեղը, դիրքը, դերը, գործառույթը:

1.3. ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԼԵՁՈՒՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Մեռած և կենդանի լեզուների թիվը աշխարհում, ըստ տարբեր հաշվումների, 2500–3000 է: Այժմ գործածվում են 500–ից ավելի լեզուներ: **Ըստ տարածվածության** (խոսողների քանակի)՝ առաջին շարքերում են չինարենը (1,2 մլրդ), անգլերենը (1,1 մլրդ), իսպաներենը (0,5 մլրդ), ռուսերենը (260 մլն) ևն: Հայերենը առաջին հարյուր լեզուների շարքում է (9–10 մլն): Այս թվերը ժամանակի ընթացքում փոփոխվում են:

Աշխարհի լեզուների պատկերը տարբեր է նաև ըստ այն հատկանիշի, թե դրանցից որը քանի երկրում **պետական կարգավիճակ** ունի: Միայնակ կամ տեղական լեզուների հետ միաժամանակ պետական կարգավիճակ ունեն ֆրանսերենը (27 երկրում), արաբերենը (23), անգլերենը (20), իսպաներենը (19), ռուսերենը (7), չինարենը (3) ևն: Հայերենը պետական լեզու է 2 երկրում՝ Հայաստանի Հանրապետությունում և ԼՂ Հանրապետությունում: Պետական կարգավիճակ ունեն 116 լեզուներ:

1.4. ՀԱՅՈՑ ԼԵՁՎԻ ՁԱՎՈՐՈՒՄԸ

Ըստ լեզուների ծագման գիտական տեսության՝ հայերենը **հնդեվրոպական ընտանիքի լեզուներից մեկն է**: Ցեղակից է հնդկերենին, իրանական լեզուներին, ռուսերենին, եվրոպական գրեթե բոլոր լեզուներին: Ցեղակից չէ, օրինակ, վրացերենին, արաբերենին, եբրայերենին, թուրքերենին, ֆիններենին: Հնդեվրոպական հիմք լեզվից անջատվել է վաղնջական ժամանակներում՝ մեզանից 6000 տարի առաջ: Ձևավորվել է հայասա–արմենական ցեղերի ու ցեղախմբերի լեզուների հիմքի վրա:

Մինչև մ. թ. 5–րդ դարը հայերենի վերաբերյալ գրավոր վկայությունները խիստ սակավ են: Այս շրջանում գիր ունենալու մասին շրջանառվում են իրական և հավանական փաստեր: Այսպես՝ Մովսես Խորենացին հիշատակում է մեհենական մատյանների մասին, որոնք, ըստ վկայության, հայագիր էին: Հույն պատմիչ Փիլոստրատոսը (մ. թ. 2–րդ դար) գիր ունեցող ժողովուրդների շարքում թվում է նաև հայերին: Վարդան Արևելցին (13–րդ դարի պատմիչ) խոսում է Կիլիկյան Հայաստանում գտնված հնագույն դրամների մասին, որոնք դրոշմված են եղել հայերեն գրով: Հավանական փաստերից են հետևյալները. 5–րդ դարում կարճ ժամանակահատվածում ստեղծվեց գրավոր բարձր մշակույթ՝ մշակված ու հղկված գրավոր լեզվով: Հեթանոսական աստվածների պանթեոնում ունեցել ենք գրի ու դպրության աստված (Տիր). գրի պաշտամունք ունեցող ժողովուրդը չէր կարող գիր չունենալ: Մեր հարևան գրեթե բոլոր ժողովուրդները (պարսիկները,

ասորիները, արաբները և այլք) ունեցել են գիր. ինչի՞ն պիտի հայերս չունենայինք գիր ու դպրություն, մանավանդ որ ունեցել ենք ուսյալ և կրթյալ թագավորներ, ովքեր պիտի որ մտահոգված լինեին այդ հարցով ևս: Փաստ է, սակայն, որ Նախամեսրոպյան շրջանի հայերեն գրավոր խոսքի որևէ նմուշ մեզ չի հասել:

Հայերենի պատմության այդ շրջանը՝ մինչև 5–րդ դարը, կոչվում է **հայերենի նախագրային շրջան**: Գրերի գյուտից հետո (405 թ.) սկսվում է հայերենի պատմության **գրային շրջանը**: Այս շրջանը, իր հերթին, բաժանվում է երեք փուլի՝ **հին հայերեն** (գրաբար՝ 5–11 դդ.), **միջին հայերեն** (կիրիկյան հայերեն՝ 12–16 դդ.), **նոր հայերեն** (աշխարհաբար՝ 17–րդ դարից սկսած): Վերջինս ունի երկու տարբերակ՝ **արևելահայերեն** և **արևմտահայերեն**:

1.5. ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ. ԲԱՐԲԱՌՆԵՐ, ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՈՒ, ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ

Բարբառներ: Լեզվի տարածքային տարբերակներ են և սպասարկում են հասարակության որոշակի հատվածների: Յուրաքանչյուր բարբառ ունի որոշակի տարբերություններ մյուս բարբառներից և իհարկե նաև գրական լեզվից: Դրանով է պայմանավորված այս կամ այն բարբառի ինքնուրույնությունը: Այդ տարբերությունները առկա են լեզվական բոլոր մակարդակներում՝ հնչյունական, բառային և քերականական: Խոշոր բարբառներն ունենում են նաև ենթաբարբառներ կամ խոսվածքներ. դրանց միջև եղած տարբերություններն ավելի քիչ են:

Ծան.: Նախկինում բարբառ ասելով՝ հասկացել են լեզու, խոսք, նույնիսկ ծայն, հնչյուն, ինչպես գրաբարյան հետևյալ դարձվածքում՝ «Ձայն **բարբառոյ** յանապատի», կամ՝ «Եվ **բարբառ** քոյ քաղցր է, եւ տեսիլ քոյ գեղեցիկ» («Երգ երգոց»): Այսօր էլ այդ իմաստը մասամբ պահպանվել է՝ «Ինչ է ասում այդ գիրքը և ինչ է **բարբառում**...» (ԵԶ), «Եվ նա բարձր ծայնով **բարբառեց**...»:

Բարբառների առաջացման հիմնական պատճառը տարածքային և լեզվական տարանջատվածությունն է: Կարծիք կա, որ գրաբարում բարբառային մեծ տարբերություններ չեն եղել: Դրանք ավելի ակնառու են դառնում միջնադարում՝ հատկապես 15–16–րդ դարերից սկսած: Հայերենում բարբառների քանակը մեծ է. հասնում է մոտ վեց տասնյակի: Հայերենի բարբառները, ըստ այս կամ այն հատկանիշի, ներկայացվում են տարբեր խմբերով: Առավել ընդունված մոտեցումներից է բարբառների դասակարգումն ըստ ձևաբանական հատկանիշների (Հրաչյա Աճառյան): Այս դեպքում հաշվի է առնվում ներկայի կազմությունը: Ընդունվում են երեք խումբ կամ երեք ճյուղի բարբառներ:

Ում ճյուղ: Ներկան կազմվում է **ում**, **ամ**, **իմ** կամ նման այլ մասնիկներով (գնում եմ, էթում եմ): Այս ճյուղին են պատկանում Երևանի, Ագուլիսի, Ղարաբաղի, Աստրախանի, Ջուղայի բարբառները:

Կը ճյուղ: Ներկան կազմվում է **կը**, **կու**, **գը**, **գի** մասնիկներով (կը խօսիմ, կու գամ, երգեմ գը): Այս ճյուղին են պատկանում Պոլսի, Կարինի, Մշո, Վանի, Շապին–Գարահիսարի, Կիլիկիայի, Համշենի, Սիրիայի, Ղրիմի բարբառները:

Ել ճյուղ: Ներկայի կազմությանը մասնակցում են **ել, ալ, իլ** վերջավորությամբ դերբայներ (գրել եմ, չեմ գրել, կարդալ եմ): Այդպիսիք են Մարադայի, Խոյի, Ուրմիայի բարբառները: Հետագայում վերջինից (**ել ճյուղից**) առանձնացվում է **ս ճյուղը** (գրես եմ, կարդաս եմ)՝ իր բարբառներով՝ Մեղրու, Ուրմիայի, Հադրութի:

Ազգային լեզվի զարգացումը և փոխադարձ շփումները տանում են բարբառների աստիճանական վերացման:

Խոսակցական լեզու: Ի տարբերություն բարբառների՝ որպես լեզվի տարբերակ ունի տարածական ավելի մեծ ընդգրկում, իր լեզվական կառուցվածքով միջին դիրք է գրավում բարբառների և գրական լեզվի միջև: Իհարկե, իր մշակվածությամբ զիջում է գրական լեզվին: Խոսակցական լեզվի գործառական հիմնական ոլորտը բանավոր հաղորդակցումն է, թեև ինչպես բարբառները, խոսակցական լեզուն արտահայտչական նպատակներով ազատ կարող է կիրառվել նաև գործառական տարբեր ոլորտներում՝ գեղարվեստական գրականություն, զանգվածային լրատվություն ևն: Բարբառային լեզվի տարրերը (հատկապես բառեր, դարձվածքներ) աստիճանաբար անցնում են խոսակցական լեզու և զտվելուց, մշակվելուց հետո փոխանցվում են գրական լեզվին: *Բարբառ – խոսակցական – գրական լեզու* ճանապարհով անցած բառեր են, օրինակ՝ **իրիկուն, ասուլիս, բերանքսիվայր, ծնկաչոք, հերթ, նշանդրեք, սրտաբաց, պռունկ** ևն:

Գրական լեզու: Ազգային և սոցիալական զարգացման որոշակի փուլում ազգային լեզուն ձեռք է բերում իր գոյության բարձրագույն ձևը, որ է **գրական լեզուն**: Բարբառների և խոսակցական լեզվի հիմքի վրա ձևավորված և գրական մշակման ենթարկված, կանոնարկված լեզվի տարբերակ է: Նրա հիմնական հատկանիշներն են.

- 1. Մշակվածությունը և նորմավորվածությունը.** գրական լեզուն ունի հնչյունական–արտասանական մշակված համակարգ, բառային հարուստ կազմ, քերականական կուռ կառուցվածք:
- 2. Միասնականությունը և հանրահասկանալիությունը.** մյուս տարբերակները չունեն այդ հատկանիշը: Գրական լեզուն ունի համաժողովրդական բնույթ:
- 3. Ոճական բազմազանությունը և բազմարժեքությունը.** նրա գործառական հնարավորությունները դրսևորվում են հասարակական կյանքի ու գործունեության բոլոր ոլորտներում՝ առօրյա հաղորդակցում, գիտական ու պաշտոնական գործունեություն, գեղարվեստական գրականություն, պարբերական մամուլ, կրթություն ևն:

Գրական լեզվի ձևավորման որոշակի փուլերում հնարավոր է՝ էական դեր կատարեն անհատները՝ գրական մեծությունները, ինչպես Ա. Պուշկինը՝ ռուս իրականության մեջ, Խ. Աբովյանը՝ հայ: Խաչատուր Աբովյանի մեծ ծառայությունը աշխարհաբար հայերենի ձևավորման ու մշակման գործում հատկապես այն էր, որ նա քիչ թե շատ մշակված նոր հայերենով գրեց բարձրարժեք գեղարվեստական գործ՝ «Վերք Հայաստանի» վեպը:

Իրարից պիտի զանազանել **ազգային լեզու** և **գրական լեզու** հասկացությունները: Առաջինը որպես ազգ ձևավորված հայ ժողովրդի լեզուն է, որ ընդգրկում է

մարդկանց խոսքային գործունեության բոլոր ոլորտները, ներառում է բարբառները, ժարգոնը, խոսակցականը: **Գրական լեզու** հասկացությունը այս համեմատության մեջ ավելի նեղ իմաստ ունի. նշանակում է այն լեզուն, որը մշակվել է խոսքի վարպետների, գիտնականների, հասարակական գործիչների կողմից: Այս տեսակետից գրական լեզուն համաժողովրդական ազգային լեզվի խստորեն նորմավորված ձևն է¹: Գրական լեզուն ծառայում է տվյալ հանրության ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր հաղորդակցմանը: Գրական լեզու էր **գրաբարը**, մասամբ՝ **միջին հայերենը**: Այսօր մենք ունենք ազգային գրական լեզվի երկու տարբերակ՝ **արևելահայերեն** և **արևմտահայերեն**:

1.6. ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼՆԵՐԸ. ԳՐԱԲԱՐ, ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ, ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

Գրաբար (5–11-րդ դդ.): **Գրաբար** բառացիորեն նշանակում է «գրի պես»: Պատճառն այն է, որ 7-րդ դարից սկսած՝ առաջին գրական հայերենը՝ գրաբարը, աստիճանաբար դադարում է ժողովրդի բանավոր հաղորդակցման լեզու լինելուց և մնում է միայն գրավոր լեզու, այսինքն՝ գրքի ու գրականության լեզու՝ **գրաբար**: Գրաբարի ծաղկման շրջանը 5-րդ դարն է, որ հաճախ անվանում են ոսկեդարյան հայերենի շրջան: Այս շրջանում գրաբարը և բանավոր, և գրավոր հաղորդակցման լեզու էր: Հետագա զարգացման ընթացքում գրաբարի մեջ մուտք են գործում բարբառների և աշխարհաբարի տարրեր: Գրաբարի հիմքում սկսում է ձևավորվել միջին հայերենը:

Գրաբարը մշակված, նորմավորված լեզու էր: Ուներ հարուստ բառապաշար: Գրաբարից վկայված բառերի թիվը հասնում է 70 հազարի: Այդ բառապաշարի հիմնական մասը՝ մոտ 50 հազար բառ, ամփոփված է գրաբարի ամենածավալուն երկհատորանոց բառարանում, որը կոչվում է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1836–1837 թթ.): Բառարանը հեղինակել են ժամանակի ճանաչված երեք մտավորական գործիչներ՝ Մկրտիչ Ավգերյանը, Գաբրիել Ավետիքյանը, Խաչատուր Սյուրմեյանը: Դա հեղինակների 50 և ավելի տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն է՝ Մխիթարյան միաբանության մատենադարանում եղած մոտ հազար ձեռագիր հուշարձաններից և հայ հին մատենագրության՝ այն ժամանակ տպագրված մատյաններից կատարված բառաքաղությամբ:

Արդի հայերենը կառուցված է գրաբարի հիմքի վրա: Պահպանում է նրա բոլոր հիմնական հատկանիշները լեզվական բոլոր մակարդակներում: Լեզվաբան Գրիգոր Ղափանցյանի խոսքերով ասած՝ «Բարևից ցտեսություն գրաբար ենք խոսում»: Իբրև լեզվական համակարգ՝ գրաբարը, սակայն, իր մի շարք հատկանիշներով տարբերվում է արդի հայերենից և ուստի համարվում է հայոց լեզվի զարգացման առանձին փուլ: Բացի ընդհանուր հայերեն բառերից (**արև**, **տուն**, **հաց**, **նկար**, **վախ**, **սեր**, **հիշատակ**, **լավ**, **նվազ**, **ազատ** ևն)՝ գրաբարից աշխարհաբարին են փոխանցվել զուտ գրաբարյան բազմաթիվ բառեր՝ **ակադճուն**, **ամանոր**, **ատոք**, **արագոտն**, **գուղծ**, **հանգույն**, **հիրավի**, **պախուրց**, **ունկ**,

¹ Տե՛ս **И. Голуб**, Русский язык и культура речи, М., 2007, էջ 12–13:

ուստր, դարձվածքային արտահայտություններ՝ «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման», «դարձ ի շրջանս յուր», «ի գիր արկանել», «ի խորոց սրտի», «ծայն բազմաց՝ ծայն Աստծո», «ծայն մեծաց», քերականական կազմություններ՝ իրենց նոր կամ նորացված նշանակությամբ՝ **առթիվ**, **առձեռն**, **ընդամին**, **ի դեմս**, **իրավ**, **ի փառս**, **կեցցե**, **հայոց**, **ծեռաց**, **մասին**, **վրաց** ևն:

Գրաբարով ստեղծվել է մատենագրական հարուստ ժառանգություն՝ Մովսես Խորենացի՝ «Հայոց պատմութիւն», Կորյուն՝ «Վարք Մաշտոցի», Եզնիկ Կողբացի՝ «Եղծ աղանդոց», Դավիթ Անհաղթ՝ «Սահմանք իմաստասիրութեան», և չափաժողովարար հարուստ գրականություն՝ Մեսրոպ Մաշտոցի տաղերն ու շարականները, Սահակ Պարթևի հոգևոր տաղերը և «Մատեան ողբերգութեան» պոեմը (կոչվում է նաև Նարեկ) գրաբարով է ստեղծել Գրիգոր Նարեկացին (951–1003 թթ.): 5-րդ դարում գրաբար թարգմանվեց Աստվածաշունչը: Դա Աստվածաշնչի առաջին թարգմանություններից է:

19-րդ դարի կեսերից գրավոր լեզվից աստիճանաբար դուրս մղվեց գրաբարը՝ իր տեղը զիջելով աշխարհաբարին: Գրաբարի գործածությունը մինչև այժմ շարունակվում է միայն եկեղեցական արարողությունների ժամանակ: Դասավանդվում է ավագ դպրոցում և բուհերի որոշ ֆակուլտետներում:

Միջին հայերեն (12–16-րդ դդ.): Այս շրջանում իբրև համընդհանուր գրական լեզու շարունակում է գործածվել գրաբարը, իսկ խոսակցական ոլորտում՝ բարբառների հիմքի վրա ձևավորված միջին հայերենը: Միջին հայերենը միջին դիրք է գրավում գրաբարի և աշխարհաբարի միջև և ժամանակագրական առումով, և լեզվական որակի տեսակետից: Հայոց պատմության կիլիկյան շրջանում այդ լեզուն սկսեց գրաբարին զուգահեռ կատարել գրական լեզվի որոշ գործառույթներ և դարձավ Կիլիկյան թագավորության պետական լեզուն: Այդ պատճառով միջին հայերենը հաճախ կոչում են **կիլիկյան հայերեն**: Կիլիկյան հայերենը, սակայն, չդարձավ համահայկական գրական լեզու, ինչպես գրաբարը կամ աշխարհաբարը: Միջին հայերենի շրջանում ստեղծվել կամ փոխառվել են և արդի հայերենի բառապաշարին են անցել քիչ թվով բառեր ու արտահայտություններ: Դրանք ունեն հիմնականում խոսակցական բնույթ՝ **գաթա**, **լավաշ**, **խավիժ**, **ծես**, **հինա**, **մշուշ**, **մեկիք**, **վեզիր**, **փնթի**: Ֆրանսերենից փոխառվեց **պարոն** (բարոն. անվանում է ազնվականական աստիճան, տիտղոս) բառը:

Միջին հայերենով նույնպես ստեղծվել է գեղարվեստական հարուստ գրականություն՝ Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների աշխարհիկ տաղերը, Ֆրիկի սոցիալական քնարերգությունը, Առաքել Սյունեցու «Աղամագիրքը», Նահապետ Քուչակի հայրենները ևն: Գրվել են գործեր, որոնք վերաբերում են գիտության տարբեր ոլորտների՝ իրավագիտություն (Մխիթար Գոշ, Սմբատ Գունդստաբլ), բժշկագիտություն (Մխիթար Հերացի), պատմագրություն (Վարդան Արևելցի) ևն:

Աշխարհաբար կամ **նոր հայերեն** (17-րդ դարից սկսած): **Աշխարհաբար** տերմինի առաջացումը կապվում է հենց **աշխարհ**, **աշխարհիկ**, **աշխարհական** բառերի հետ: Սկզբնական շրջանում անվանվել է նաև **քաղաքացիական հայերեն**, **աշխարհորեն**, **աշխարհական լեզու**, **ռամկորեն**, իսկ ավելի ուշ՝ նաև

Նոր հայերեն: Գրական հայերենը ավելի ուշ շրջանի իրողություն է. աշխարհաբար հայերենի գրականացված տարբերակն է, որն ընդունված է անվանել նաև **նոր գրական հայերեն** կամ **արդի հայերեն**՝ իր երկու ճյուղերով՝ արևմտահայերեն և արևելահայերեն, կամ ուղղակի՝ **հայոց լեզու** և կամ **ժամանակակից հայոց լեզու** (**արդի հայերեն** անվանումը միայն պայմանականորեն է ենթադրում հայոց լեզվի երկու ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը): 19-րդ դարից, նոր ժամանակներում հայոց ազգային մշակույթի և քաղաքական զարթոնքին զուգահեռ, ձևավորվում է **հայոց ազգային գրական լեզուն**:

Գրավոր հաղորդակցման հիմնական լեզուն մինչև 19-րդ դարի կեսերը մնում էր գրաբարը: Գրաբարի կողմնակիցները համառ պայքար էին մղում գրաբարը ընդհանուր հաղորդակցման լեզու դարձնելու համար: Հիմնական փաստարկն այն էր, որ գրաբարը կանոնարկված և մշակված լեզու է, ունի հարուստ բառապաշար և քերականական ճկուն համակարգ, ուստի և նախընտրելի է գործառման բոլոր ոլորտներում: Իսկ աշխարհաբարի կողմնակիցները, ընդունելով գրաբարի առավելությունները, նոր հայերենի իրավունքը պաշտպանում էին այն համոզմամբ, որ աշխարհաբարը թեև համեմատաբար քիչ է մշակված, բայց կենդանի լեզու է, ի տարբերություն գրաբարի՝ հասկանալի է ժողովրդին: 19-րդ դարի կեսերից հետո հարցը լուծվում է հոգուտ աշխարհաբարի: Գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների պայքարը հետագայում կոչվեց **գրապայքար**: Աշխարհաբարը մշակվեց ու հղկվեց և համահայկական գրական լեզվի կարգավիճակ ձեռք բերեց 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբներին:

1.7. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ

Աշխարհաբարի արևմտյան տարբերակը՝ **արևմտահայերենը**, ձևավորվեց արևմտահայության մշակութային ամենախոշոր կենտրոնում՝ Կոստանդնուպոլսում, առավելապես Պոլսի բարբառի հիմքի վրա: Նրա արմատները գնում են դեպի միջին հայերեն: Աշխարհաբարի տրոհումը երկու ճյուղերի պայմանավորված էր արտալեզվական և լեզվական մի շարք գործոններով. 1. Հայաստանի պատմա-աշխարհագրական տրոհումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև (387 թ.): 2. Դրանով պայմանավորված՝ գերիշխող լեզուների և որոշակիորեն տարբեր քաղաքակրթությունների ազդեցությունները. արևմտահայերենի վրա սկզբնապես մեծ եղավ թուրքերենի, իսկ ավելի ուշ՝ 19-րդ դարի կեսերից սկսած, ֆրանսերենի ազդեցությունը: Դա նկատվում է բառապաշարում, առանձին քերականական ձևերի կազմության մեջ: Արևելահայերենի վրա մեծ է եղել ռուսերենի ազդեցությունը: Դա նկատելի է բառապաշարի մեջ և շարահյուսական առանձին կառույցներում: 3. Տարբերակներից յուրաքանչյուրը յուրովի է կապվում մեր լեզվի զարգացման նախորդ փուլերին. արևմտահայերենը հնչյունական համակարգով, քերականական մի շարք հատկանիշներով սերտ առնչություններ ունի միջին հայերենի հետ, մինչդեռ արևելահայերենը նույն հատկանիշներով ավելի մոտ է գրաբարին: 4. Տարբեր են երկու գրականների բարբառային հիմքերը. արևելահայերենը հիմնվում է հայերենի ամենատարածված բարբառներից մեկի՝ **Արարատյան** (Երևանյան) (ում ճյուղի), իսկ արևմտահայերենը՝ **Պոլսի** (կը ճյուղի) բարբառի վրա:

Արևմտահայերենը և արևելահայերենը մեկ ազգային լեզվի երկու դրսևորումներ են, մեկ միասնական լեզվի տարբերակներ կամ ճյուղեր: Դրանցից որևէ մեկը մյուսի նկատմամբ չունի գերազանցություն, չկա բարբառ – գրական լեզու հակադրությունը: Երկուսին էլ հատուկ են գրական լեզվի հատկանիշները. երկուսն էլ բավարար չափով մշակված են, կանոնարկված և ծառայում են հայոց լեզվով խոսող հանրության գրավոր և բանավոր հաղորդակցմանը: Այլ խնդիր է, որ այսօր գրական արևելահայերենը համեմատաբար մշակված է և բառապաշարով ավելի հարուստ, պետական լեզու է և հասկանալի պատճառներով ունի զարգացման ավելի մեծ հնարավորություններ: Առավել մշակված են նրա գործառական որոշ տարբերակներ, մասնավորապես պաշտոնական և գիտական ոճերը:

Արևմտահայերենը Սփյուռքի հայության բավական ստվար հատվածի ընդհանուր հաղորդակցման լեզուն է: Դպրոցի, մամուլի, գեղարվեստական գրականության լեզու է: Քիչ է մշակված գիտական և պաշտոնական ոճերում, նորմավորման ինչ-ինչ հատկանիշներով զիջում է արևելահայերենին, շատ են զուգաձևությունները: Արևմտահայերենով ստեղծված են հարուստ մշակույթ, գեղարվեստական և գիտական գրականություն: Դուրյանի, Պարոնյանի, Զոհրապի, Մեծարենցի, Վարուժանի, Շահնուրի և այլոց գրական ժառանգությունը ապացույց է մեր լեզվի այդ տարբերակի հարստության ու մշակվածության:

Երկու տարբերակների մերձեցման իրական հնարավորություն ստեղծվեց Հայաստանի անկախացումից հետո՝ պայմանավորված Հայրենիք–Սփյուռք հարաբերությունների ակտիվացմամբ: Այդ մերձեցումը շատ որոշակի է լեզվի հատկապես բառային մակարդակում. արևելահայերենը վերջին երկու տասնամյակում բազմաթիվ նոր բառեր է փոխառել արևմտահայերենից, ինչպես՝ **այլընտրանքային, կարգավար, գործարար, խոսնակ, երգահան, խոսափող, կաճառ, համույթ, հանրահավաք, տարածաշրջան** ևն:

Լինելով մեկ լեզվի տարբերակներ՝ արևելահայերենը և արևմտահայերենը երևան են հանում որոշակի տարբերություններ հնչյունային, բառային և քերականական մակարդակներում²:

1.8. ՊԵՏԱԿԱՆ ԼԵՂՈՒ

Հայերենի արևելահայ տարբերակը **պետական լեզու** է: Անկախ պետականության դարաշրջաններում (Բագրատունիների թագավորություն, Կիլիկյան Հայաստան) հայերենը փաստացի կատարել է **պետական լեզվի** դեր: Գրաբարը՝ որպես պաշտոնական լեզու, գործածվել է հայոց հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կողմից: 1918 թ.՝ Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո, հատուկ հրովարտակով հայերենը հռչակվեց պետական լեզու: Խորհրդային Հայաստանի Սահմանադրությամբ հայերենին վերապահված էր պետական լեզվի կարգավիճակ: Ներկայումս հայերենը պետական լեզվի կարգավիճակ ունի Հայաստանի

² Տես **Ա. Սարգսյան**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Եր., 1985: **Ռ. Սաքապետոյան**, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006: **Յու. Ավետիսյան**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Եր., 2007, ևն:

և ԼՂ Հանրապետություններում: Հայաստանի Հանրապետությունում հայերենը պաշտոնական գործավարության լեզու է:

1.9. ՀԱՅՈՑ ԼԵՁԿԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հայերենը պարտադիր գործառույթներ ունի պետական–պաշտոնական գործունեության բոլոր ոլորտներում՝ հանրակրթություն, զանգվածային լրատվություն, մաքսային և հարկային ծառայություններ, դատարան: Հայերեն են ընդունվում և հրապարակվում օրենքները և օրենսդրական մյուս ակտերը: Ըստ ՀՀ օրենսդրության՝ հայերենի առկայությունը պարտադիր է գովազդներում, ցուցանակներում, պիտակներում, զանգվածային օգտագործման այլ տեքստերում: Հայերենը, ինչպես ասվեց, նաև կրթության, գեղարվեստական գրականության, թատրոնի, կինոյի և գիտության լեզու է: Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է հայերենի պահպանումն ու տարածումը նաև արտերկրում, մասնավորապես հայկական սփյուռքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Եր., 1967:
2. Сид Голуб И., Русский язык и культура речи, М., 2007:

ՄԱՍ 2.

ԽՈՍՔ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ, ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ: «ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ» ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Խոսք (14): 2.2. Խոսքի դրսևորման ծները (15). 2.2.1. Համառոտ և ծավալուն խոսք (15), 2.2.2. Բանավոր և գրավոր խոսք (15), 2.2.3. Մենախոսություն և երկխոսություն (18), 2.2.4. Արտաքին և ներքին խոսք (19), 2.2.5. Հեղինակային և ուրիշի խոսք (20), 2.2.6. Արձակ և չափածո խոսք (20), 2.2.7. Պարբերություն (20): 2.3. Խոսքի մշակույթի ուսումնասիրության առարկան, նպատակը: Խոսքի մշակույթի հասկացությունը: Կապը այլ գիտաճյուղերի հետ: Խնդիրները (21):

2.1. ԽՈՍՔ

Լեզվական նշանները և դրանք գործածելու կանոնները մարդիկ օգտագործում են իրենց մտքերն ու զգացմունքներն արտահայտելու, հաղորդակցվելու համար: Հաղորդակցական այդ գործընթացում առաջ է գալիս խոսքը (խոսքային գործունեությունը, խոսողությունը): **Խոսքը լեզուն է գործածության մեջ, լեզվի կիրառական տարբերակն է կամ դրսևորումը:**

Լեզուն ընդհանուր, հասարակական երևույթ է: Խոսքը անհատական է, կոնկրետ, պայմանավորված է խոսողի անհատական հատկանիշներով և լեզվամտածողությամբ, պատմական իրավիճակով, ժամանակով, նաև լեզվի հատկանիշներով ու կառուցվածքով: Լեզուն համեմատաբար անկախ է պատմական կարճ ընթացքից, կառուցվում է որոշակի կանոնների և օրինաչափությունների համապատասխան՝

Խոսքը շարժուն է (դինամիկ), փոփոխվող, ենթակա է արտալեզվական գործոնների ուժեղ ազդեցության. հասարակական վիճակը, քաղաքական անցուդարձը, իրադրությունը, հաղորդակցվողների հոգեֆիզիկական որակները, տրամադրությունը, շփման պայմանները, պատահականությունը և բազմաթիվ այլ գործոններ ազդում են խոսքի դրսևորման հատկանիշների վրա:

Լեզվական փոփոխությունները և տեղաշարժերը սկզբնապես ձևավորվում են խոսքում: Խոսքային հաղորդակցման գործընթացում նախընտրություն է կատարվում լեզվական այն միջոցների, որոնք ավելի արդյունավետ են, առավել հարմար հաղորդակցվելու համար: Խոսքում կատարված քանակային և որակական փոփոխությունները ստեղծում են որոշակի համակարգ, որը քայլ առ քայլ անցնում է լեզվին, ձևավորվում որպես լեզվական կանոն կամ նորմ: Օր.³ Ժամանակի

³ Տես Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 280:

ընթացքում մեր բանավոր և գրավոր խոսքից աստիճանաբար դուրս են մղվում բազմաթիվ բառեր (**շուրջանակի, գուք, իցիվ թե, անագան** ևն), իսկ լեզվական մակարդակում դրանք դիտվում են որպես հնաբանություններ՝ ընդհանուր գործածությունից դուրս եկած բառեր: Լեզուն փոփոխվում ու զարգանում է խոսքային մակարդակում և խոսքի միջոցով:

2.2. ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Խոսքը ունի տարատեսակներ, որոնք առանձնանում են մի քանի սկզբունքներով: Ըստ ծավալի՝ խոսքը լինում է **համառոտ** և **ծավալուն**, ըստ արտահայտման եղանակի՝ **բանավոր** և **գրավոր**, ըստ պատկանելության՝ **հեղինակի** և **ուրիշի** (մեջբերվող), ըստ արտահայտման ձևի՝ **արտաքին** և **ներքին**, ըստ մասնակիցների քանակի՝ **մենախոսություն** և **երկխոսություն** ևն:

2.2.1. ՀԱՄԱՌՈՏ ԵՎ ԾԱՎԱԼՈՒՆ ԽՈՍՔ: Խոսքը համառոտ է, երբ նրանով պայմանականորեն քիչ բան է ասված: Խոսքի նվազագույն միավորը նախադասությունն է, որը մեկ միտք է, մեկ կարճ և ամփոփ մտածում: Սա նշանակում է, որ համառոտ խոսքը կարող է արտահայտվել մեկ բառով, որը ինքնուրույն նախադասություն է՝ «Համեցե՛ք», «Այո՛», «Կխոսեն՛ք»: (Ամենաերկար նախադասություններից մեկը, օրինակ, Հյուգոյի «Թշվառներ» վեպում է՝ կազմված 823 բառից, ծավալով՝ մոտ 3 էջ, կամ՝ Ի. Արովյանի «Վերք Հայաստանի» վեպում՝ մեկուկես էջ): Սրանք, իհարկե, դժվար է համառոտ խոսք համարել: Համառոտ խոսքի օրինակ են առածները, ասացվածքները, կոչերը, վերնագրերն ու անվանումները («Հայաստանի Հանրապետություն»: «Անուշ»: «Հայաստանը իմ տունն է»: «Հայոց լեզու»):

Ծավալուն խոսքը մտածությունների մի ամբողջ շարք է. համեմատաբար ծավալուն խոսք են ընդարձակ նկարագրությունը, հողվածը, զեկուցումը, պատմվածքը, ավելի ծավալուն՝ վեպը, վեպերի շարքը ևն:

2.2.2. ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ: Առաջինը պատմականորեն նախորդում է երկրորդին: Չնայած դրանք սերտորեն փոխապայմանավորված են, միասնական, այնուամենայնիվ խոսքի ինքնուրույն ձևեր են և ունեն իրենց յուրահատուկ բնութագրերը:

Բանավոր խոսքը հնչող խոսքն է, հիմնականում՝ բարձրաձայն խոսողություն: Կարող է ծայնագրվել և անհրաժեշտության դեպքում՝ վերարտադրվել: Ձևավորվում է հաղորդակցման գործընթացում: Հնչեղանգի հնարավորությունները՝ նվազայնությունը, բարձրությունը, տևողությունը, տեմպը, ելևէջումը ևն, չափազանց մեծ են: Կարևոր դեր են կատարում տրամաբանական շեշտը, արտասանության հստակության աստիճանը, դադարը ևն: Իբրև կանոն՝ ենթադրում է խոսողի և լսողի **անմիջական շփում**: Կենդանի, աշխույժ խոսք է, և սա մեծ առա-

վելություն է գրավոր խոսքի նկատմամբ: Հնարավորություն կա անմիջական կապ ստեղծելու լսարանի հետ:

Բանավոր հաղորդակցումը հիմնականում իրականանում է միաժամանակ լսողական և տեսողական ուղիներով: Առանձին դեպքերում՝ միայն լսողական ուղիով, օր.՝ հեռախոսային հաղորդակցումը: Բանավոր խոսքի արտահայտչականությունը էապես ուժեղացնում են արտալեզվական այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ շարժումը (ժեստը), դիմախաղը, հայացքը, մարմնի դիրքը, կեցվածքը, տարածական վարքը, փոխադարձ ընկալումը և արծագանքը, հագուստը ևն:

Սովորաբար այն ունենում է **հանպատրաստից** բնույթ. խոսողը ստիպված է միաժամանակ մտածել և խոսել: Այդ է պատճառը, որ բանավոր խոսքը ձևավորվում է ընդհատումներով, հատվածաբար՝ երբեմն տարրալուծվելով ինքնուրույն-հաղորդակցական խոսքային միավորների: Բանավոր խոսքը կարող է լինել նաև նախապես պատրաստված:

Բնորոշ է **անշրջելիությունը**. «Ասվածը էլ հետ չես բերի»: Սա նշանակում է, որ հաղորդակցական լուրջ իրավիճակներում մեծ պատասխանատվություն պետք է դրսևորել ասվածի նկատմամբ. ծանր ու թեթև անել յուրաքանչյուր բառ, ճիշտ ընտրել հնչերանգը, դիմախաղը և շարժումը:

Արտահայտության ձևերն են զեկուցումը, գրույցը, բանավեճը, ճառը, կոչը ևն: Իրացվում է տարածության և ժամանակի մեջ, այսինքն՝ սահմանափակված է դրանցով: (Մեր օրերում էլեկտրոնային միջոցները տարածական և ժամանակային հաղորդակցման շատ մեծ հնարավորություններ են ընձեռում):

Խոսքի բանավոր և գրավոր տեսակներում օգտագործվում են լեզվական նույն միավորները, բայց տարբեր կերպ՝ պայմանավորված նյութի ընկալմամբ և հաղորդակցման նպատակներով: Բանավոր խոսքի անմիջական նպատակը որոշակի տեղեկություն կամ բովանդակություն արագ հաղորդելն է ու ընկալումը: Խոսքի դրսևորման այս տեսակում գործածական են խոսակցական բառեր, արտահայտություններ, խոսքային համառոտ կառույցներ՝ թերի և միակազմ նախադասություններ, առավելապես պարզ նախադասություններ, բարդերից հատկապես համադասական տեսակները՝ շարահարությամբ (առանց շաղկապների) կապված բաղադրիչ նախադասություններով, ևն: Հազվադեպ են դերբայական դարձվածները, ավելի հաճախակի են հանդիպում եղանակավորող բառեր, ծայնարկություններ, զանազան միջարկումներ, կրկնություններ: Բնորոշ են զեղչումը, շարահասական խախտումները: Գրական լեզվի նորմերից շեղումները բանավոր խոսքի հատկանիշներից են: Ահա այդպիսի խոսքի մի նմուշ.

Հայերին Լեոն է հնարել: Մինչև Լեոն, սուտ է, հայեր չեն եղել: Էն է Լեոյի ժամանակներն էր, էլի, սարի պես մարդուն տվին աչքիս դեմ շուռ տվին՝ մի ձեն հանող չեղավ: Հայ կմր՝ որ հայի համար ձեն հանող լիներ – կաթ, ոչխար, ես ինչ իմանամ ուրիշ ինչ: Մերանը Լեոն գցեց: Մածունը ոնց են սարքում, կաթի մեջ մերան են գցում՝ դառնում է մածուն, Լեոն հայերին էդպես է հնարել: Հովհաննես Թումանյանի «Շունն ու կատուն» – ոչ կատուն է արհեստավոր եղել, ոչ էլ շունը անգլխարկ, գլխարկը շան ինչի՞ն է պետք, այտա, Հովհաննես Թումանյանը նստել ու երեխեքի

համար հնարել է: Էն է մյուս սեղանին էլ Լեոն է նստել ու մեր հայերիս պատմությունը հնարել: Զարմայր նահապետ, չէ մի, զահրումար նահապետ (ՀՄ):

Ծան.: Բանավոր խոսքի առանձին տեսակներ (ճառ, զեկուցում ևն) նման են գրավոր խոսքին. առավել մշակված են, կարող են ձևավորվել գրականին ավելի մոտ կամ, պարզապես, գրական լեզվով:

Գրավոր խոսքը, ինչպես ասվեց, ժամանակագրական առումով հաջորդում է բանավորին: Ձևավորվում է մարդկության զարգացման համեմատաբար բարձր փուլում՝ որպես գրանցման նշանային համակարգ, ծայնային խոսքի ամրագրում: Իրացվում է գրային պայմանական նշանների (տառեր, գաղափարագրեր, պատկերագրեր ևն) գործադրումով, ընկալվում է տեսողությամբ կամ շոշափելիքով: Տառերը հնչյունների գրային պայմանական նշաններն են գրավոր խոսքում:

Գրավոր խոսքը կարող է իրականացվել տեխնիկական տարբեր միջոցներով և լինում է **վիմագիր** (քարի վրա փորագրված), **գրչագիր** (մագաղաթի, պապիրուսի վրա գրված), **մեքենագիր** (գրամեքենայով տպագրված), **տպագիր** (տպիչով կամ հաստոցով տպագրված), **էլեկտրոնային** (էլեկտրոնային սարքի էկրանին շարված) ևն:

Հնչերանգային հատկանիշները մասամբ արտահայտվում են կետադրական նշաններով՝ շեշտ, պարույկ (հարցական նշան), բացականչական նշան, վերջակետ, միջակետ, բութ, ստորակետ, կախման կետեր ու բազմակետեր: Խոսքի այս տեսակի անհրաժեշտությունը, ըստ հետազոտողների, պայմանավորված է երկու հիմնական հանգամանքով. 1. պահպանել ձեռք բերված գիտելիքները, 2. ապահովել հաղորդակցումը տարածությամբ և ժամանակով բաժանված կողմերի միջև: Գրավոր խոսքի դերը չափազանց մեծ է քաղաքակրթության զարգացման գործում. բացառիկ կարևոր դեր է կատարում մարդկային մտքի մշակման, մտածողության զարգացման ու կատարելագործման մեջ⁴: Այդ իսկ պատճառով չափազանց մեծ տեղ է տրվում գրավոր խոսքի մշակմանն ու զարգացմանը:

Գրավոր խոսքը, բանավոր խոսքի գրային արձանագրումից բացի, ինչպես ասվեց, ունի նաև այլ գործառույթներ: Հնարավորություն է տալիս մարդկության կուտակած գիտելիքը ամրագրելու, փոխանցելու սերնդից սերունդ: Հիմնական հատկանիշը տեղեկությոն (ինֆորմացիան) երկարատև պահպանելու կարողությունն է: Գրավոր խոսքը հաղորդակցման միջոց է այն դեպքում, երբ հաղորդակցվողները բաժանված են տարածությամբ և ժամանակով:

Գրավոր խոսքը հաղորդակցման միջնորդավորված ձև է: Նրա վրա անմիջականորեն չի ազդում ընթերցող(ներ)ի արձագանքը: **Անհամեմատ մշակված է**. հեղինակը կարող է անդրադառնալ գրածին, ուղղել, բառեր ու արտահայտություններ փոխել, մշակել, դարձնել ավելի տպավորիչ ու ազդեցիկ: Գրավոր խոսքում հիմնականում գործառում է խստորեն կանոնակարգված ու նորմավորված գրքային-գրական լեզուն: Գործածվում է գրական բառապաշարը, բնորոշ են բարդ նախադասությունները, կայուն շարադասությունը: Խստորեն պահպանվում

⁴ Տե՛ս Ա. Նալչաջյան, Հոգեբանության հիմունքներ, Եր., 1997, էջ 238-239:

են մտքի տրամաբանական ընթացքը, բովանդակությունը շարադրելու հետևողականությունը: Սրանք ապահովում են գրավոր խոսքի ճշգրտությունը⁵:

Երբեմն հարց է ծագում՝ խոսքի դրսևորման որ ձևին նախապատվություն տալ՝ գրավոր, թե՛ բանավոր: Ընտրությունը, բնականաբար, պայմանավորվում է մի շարք գործոններով՝ խոսքի թեման, տեսակը, լսարանը, իրավիճակը, միջավայրը, խոսողի անհատական կարողությունները, հմտությունը ևն: Գիտական գեկուցման դեպքում, օրինակ, նախընտրելի է ելույթի գրավոր ձևը՝ խոսքի ճշգրտությունը, տրամաբանականությունը ապահովելու համար: Ողջույնի կարճ խոսքը տպավորիչ է, երբ բանավոր է հնչում: Այս դեպքում հուշաթուղթ օգտագործելը, նույնիսկ մեկ-երկու անգամ դրան հայացք նետելը խոսքի տպավորությունը թուլացնում են: Հաշվետվությունը, տեղեկագիրը, արձանագրությունը, դատավճիռը, ուղերձը և խոսքի այլ տեսակներ բնական են հնչում, եթե արտահայտվում են գրավոր ձևով: Փաստաբանի ելույթը, բաժակաճառը, շնորհավորանքի մտերմիկ խոսքը և նման այլ ձևեր «նախընտրում են» արտահայտման բանավոր եղանակը:

Բանավոր գեղեցիկ, արտահայտիչ, առինքնող խոսքի արվեստին տիրապետելը շնորհքի ու բանիմացության նշան է: Ասվում է, որ Պետրոս Առաքինը 1722 թ. հատուկ հրահանգով պարտադրում է, որ սենատորները ելույթ ունենան ոչ թե գրված տեքստը ընթերցելով, այլ բանավոր: Եվ դա անում էր՝ իմանալու համար յուրաքանչյուրի խելամտության չափը⁶:

2.2.3. ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ: Առաջինը մեկ մարդու խոսք է, որով նա դիմում է այլ անձի կամ լսարանի կամ ինքն իրեն: Մենախոսության տեսակներ են գիտական գեկուցումը, ելույթը, դասախոսությունը ևն: Խոսքի այս տեսակը սովորաբար ծավալուն է և, որպես կանոն, նախապես մտածված ու ծրագրված: Խոսքը գրավիչ դարձնելու համար խոսողը դիմում է հրապարակային-հոետորական խոսքի հնարավոր միջոցներին: Կարևոր դեր ունեն նաև արտալեզվական միջոցները՝ լսարանի արձագանքը, շփումը, միջավայրը, իրադրությունը ևն: Մենախոսելիս խոսակցի կամ լսարանի վրա տպավորություն թողնելու և ներագրելու համար փորձ ու հմտություններ են պետք:

Երկխոսությունը խոսքային գործողության այն տեսակն է, երբ հաղորդակցումը իրականացվում է երկու կամ ավելի անձերի միջև (վերջին դեպքում հաղորդակցումը երբեմն անվանում են նաև **բազմախոսություն**): **Իրադրային խոսք է**, քանի որ մեծապես պայմանավորված է խոսքային իրադրությամբ. այսպիսի խոսքի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն ոչ խոսքային հաղորդակցման միջոցները՝ խոսակիցների փոխհարաբերությունը, նրանց մտերմության աստիճանը, հաղորդակցվելու մշակույթը, նրանց տրամադրությունը, քննարկվող խնդիրների բնույթը, այլ անձանց ներկայությունը, խոսողների սոցիալական և ինտելեկտուալ մակարդակը ևն: Խոսքի այս տեսակը իրադրային է նաև այն իմաստով, որ հանպատրաստից խոսք է և սովորաբար կառուցվում է խոսողության գործընթացում:

⁵ Տե՛ս **А. Радугин**, Русский язык и культура речи, М., 2004, էջ 56–60:

⁶ Տե՛ս **Հ. Բաղդասարյան**, Հոետորական խոսքի ուժը, Եր., 1987, էջ 97:

Հատվածական է (դրվագային՝ ֆրագմենտար բնույթ ունի). եթե զրուցակիցները մտերիմներ են, լավ գիտեն իրար կամ քննարկվող խնդիրներին լավ են տիրապետում, զրույցը ընթանում է սահուն, փոխըմբռնման պայմաններում, ուստի կարող է հաճախ ընդմիջարկվել, կրճատվել: «Քիչ չեն այն մարդիկ, ովքեր վատ զրուցակիցներ են հենց այն պատճառով, որ չեն զգում, թե երկխոսության ընթացքում ինչի մասին պետք է ընդարձակ խոսել և ինչի մասին՝ միայն մեկ-երկու ակնարկով, առանց մանրամասնորեն շարադրելու այն, ինչ հայտնի է խոսակցին և հասկանալի է իրադրությունից և կոնտեքստից»⁷:

Խոսքը կտրտվում կամ հաճախակի ընդմիջվում է նաև այն դեպքում, երբ զրուցակիցները հուզված են կամ բանավիճում են: Եթե հույզերը բացասական են, ապա խոսքը կարող է դառնալ կաղապարային և սևեռված. կրկնվում են միևնույն բառերն ու արտահայտությունները, թեև դրանք ակնհայտորեն ավելորդ են ու աննպատակահարմար:

Բոլոր դեպքերում շատ կարևոր է, որ խոսակիցները կարողանան լսել իրար, ամբողջությամբ հասկանան ասելիքը և ապա արձագանքեն: Հակառակ դեպքում խոսքը կծախողվի, պարզապես կվերածվի մենախոսության կամ չստացված երկխոսության:

2.2.4. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԽՈՍՔ: Առաջինը հնչյունական–արտասանական (կամ գրային) իրացում ունեցող խոսքն է: Նախ և առաջ դրանով է մարդը ներկայանում իր միջավայրին, շրջապատին, հանրությանը: «Ոչինչ այնքան հեշտությամբ չի մատնում մեր ապրումները, մտածումները, մեր նկարագիրը, որքան խոսքը» (Գ. Նժդեհ):

Ներքին խոսքը անձի ներաշխարհում ընթացող և հնչյունական կամ գրավոր դրսևորումներ չունեցող խոսք է, մենախոսության տեսակ: Ուղղված չէ ունկնդրին: Ձևավորվում է «մտքում», լռելյայն: Եթե ունկնդիր էլ կա, ապա այն երևակայական, ենթադրական է: Սա մի տեսակ նախապատրաստություն է բարձրաձայն խոսքի և արագ կարող է վերածվել մենախոսության կամ երկխոսության⁸: «Այսպիսով, երբ մենք լուռ ենք, այնուամենայնիվ խոսում ենք, քանի որ մեր մտածողությունն ու ներհոգեկան գործընթացները բացարձակապես առանց խոսքի օգնության ընթանալ չեն կարող: Ներքին խոսքը մեր մտքերն ու գործողությունները կանխատեսելու և պլանավորելու միջոց է»⁹:

Իբրև ներքին խոսքի կառուցվածքային հատկանիշ է նշվում **հատվածականությունը**: Քանի որ սեփական մտքերի մեծ մասն ինքնըստինքյան հասկանալի է մարդուն, նա կարիք չունի դրանք ծավալուն շարադրելու մտքում: Հաճախ բավական է ներքին խոսքում գործածել միայն մեկ բառ–հասկացություն՝ որևէ ընդարձակ միտք գիտակցելու կամ հասկանալու համար: Մինչդեռ արտաքին խոսքում նույն միտքը ուրիշին հաղորդելու համար անհրաժեշտ կլինի կազմել մի

⁷ Ա. Նալչաջյան, նշվ. աշխ., էջ 238:

⁸ Տես Հ. Պետրոսյան, նշվ., աշխ., էջ 281:

⁹ Ա. Նալչաջյան, նշվ., աշխ., էջ 239:

քանի նախադասություն: Ակնհայտ է, որ ներքին խոսքում օգտագործվող լեզվական միջոցները հասնում են նվազագույնի¹⁰: Իր այս բնույթով ներքին խոսքը կարելի է համարել արտաքին խոսքի նախապատրաստման փուլ:

2.2.5. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՈՒՐԻՇԻ ԽՈՍՔ: Առաջինը խոսողից կամ գրական ստեղծագործության հեղինակից սերող խոսքն է՝ ի տարբերություն գրական հերոսների խոսքի կամ ուրիշի խոսքի:

Ուրիշի խոսքը այլ անձի կողմից գրավոր կամ բանավոր մեջբերված խոսքն է: Հաճախ է հանդիպում առօրյա-խոսակցական լեզվում, գեղարվեստական գրականության մեջ, պարբերական մամուլում, գիտական խոսքի որոշ տեսակներում:

2.2.6. ԱՐՁԱԿ ԵՎ ՉԱՓԱԾՈՒ ԽՈՍՔ: Առաջինը, որպես կանոն, կառուցվածքային և ծավալային սահմանափակումներ չունի: Խոսքի բնական վիճակն է, աչքի է ընկնում լեզվական ամենաբազմազան միջոցների գործածությամբ: Երկրորդը մի տեսակ արհեստական խոսք է. արդյունք է մտածողության ոչ բնական եղանակի: Սրան բնորոշ են կառուցվածքային և ծավալային որոշ պայմանականություններ. ունի ընդունված կամ պարտադրված ձևեր ու հատկանիշներ՝ չափ, կշռույթ, հանգ, ուղիղ, լեզվական ձևերի ու ոճական միջոցների որոշակի ընտրողականություն են: Այս առանձնահատկությունների շնորհիվ չափածո խոսքի բաղադրիչ տարրերը արձակի համապատասխան տարրերի նկատմամբ ձեռք են բերում տեղեկատվական ավելի մեծ հագեցվածություն¹¹:

2.2.7. ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ: Տեքստի այն հատվածն է, որն ունի իմաստային միասնություն և ինքնուրույնություն: Կազմված է առնվազն մեկ նախադասությունից: Բանավոր խոսքում պարբերությունների միջև եղած դադարը ավելի մեծ է, քան նախադասությունների: Գրավոր խոսքում սկսվում է նոր տողից: Պարբերության նախադասությունները բովանդակային, ուղիղաշնչական, հիմնականում որոշակի կապի ու ներդաշնակության մեջ են: Բնորոշվում է կառուցվածքային, իմաստային ավարտվածությամբ, նաև մասերի համաչափությամբ, կապակցվող տարրերի միատեսակությամբ, բաղադրիչների արտասանական գրեթե նույն տևողությամբ, կառույցների կաղապարային մերձակցությամբ, հնչերանգային հստակ անցումներով ևն¹²:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Եր., 1990, էջ 92-93:

¹² Տե՛ս Հ. Պետրոսյան, նշվ., աշխ., էջ 525:

2.3. ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ

Խոսքի մշակույթ հասկացությունը: Կապը այլ գիտաճյուղերի հետ: Խնդիրները:

Խոսքի մշակույթի ուսումնասիրության առարկան խոսքն է, խոսքի արժանիքները, հաղորդակցական յուրահատկությունները, դրա դրսևորման առանձնահատկությունները լեզվի գործառական տարբերակներում: **Նպատակը՝** ուսումնասիրել խոսքը, հաստատել խոսքի ընդհանուր օրինաչափությունները և դրա միջոցով հասարակության մեջ մշակել գրական խոսքի բարձր ճաշակ:

«Խոսքի մշակույթ» **հասկացությունը** կիրառվում է երկու հիմնական նշանակությամբ:

ա) Խոսքի մշակույթը բանասիրական գիտությունների գիտաճյուղ է: Ուսմունք է խոսքի հաղորդակցական որակների համակարգի մասին:

բ) Մարդու գիտելիքների և ունակությունների ամբողջությունն է, որ ապահովում է լեզվի նպատակաուղղված կիրառությունը հաղորդակցման համար: Սա ենթադրում է գրավոր և բանավոր խոսքի նորմերի իմացություն և դրանց տեղին ու արտահայտիչ գործածություն՝ խոսքի բովանդակությանը և նպատակներին համապատասխան¹³:

Իբրև գիտաճյուղ՝ սերտ առնչություն ունի տրամաբանության, հոգեբանության, գեղագիտության, գրականագիտության և այլ գիտաճյուղերի հետ: Բնականաբար, առավել շատ ընդհանրություններ ունի լեզվաբանական մյուս գիտությունների հետ՝ ընդհանուր լեզվաբանություն, լեզվի պատմություն, ժամանակակից հայոց լեզու ևն: Վերջիններիս ուսումնասիրության նյութը լեզուն է՝ իր ձևավորման հարցերով, զարգացման ընթացքով, կառուցվածքով, մակարդակներով: Խոսքի մշակույթը, ինչպես ասվեց, ուսումնասիրում է լեզվի կիրառական տարբերակը՝ խոսքը: Ավելի սերտորեն է առնչվում ոճագիտության հետ, այնքան, որ հաճախ դրանք դիտարկվում են նույն դասընթացում՝ **Խոսքի մշակույթ** կամ **Ոճագիտություն** ընդհանուր վերտառությամբ: Այդ երկու ճյուղերի սահմանները տակավին հստակորեն որոշարկված չեն. լայն առումով՝ խոսքի մշակույթի ուսումնասիրության նյութը ներառում է նաև ոճագիտության հարցերը՝ լեզվական նշանի ոճական կիրառությունները, գործառական ոճերը ևն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Եր., 1967:
2. Բաղդասարյան Հ., Հոստորական խոսքի ուժը, Եր., 1987:
3. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Եր., 1997:
4. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987:
5. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Եր., 1990:
6. Радугин А., Русский язык и культура речи, М., 2004.

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 85:

ՄԱՍ 3.

ԽՈՍՔԻ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

3.1. *Ճշգրտություն (23): 3.2. Հարստություն և բազմազանություն (95): 3.3. Ճգրտություն և հստակություն (110): 3.4. Պարզություն և մաքրելիություն (118): 3.5. Սեղմություն (120): 3.6. Տրամաբանականություն (125): 3.7. Արտահայտչականություն (131): 3.8. Խոսքի այլ արժանիքներ (175):*

Բոլոր ժամանակներում էլ խոսքը զորավոր ազդեցություն է ունեցել անհատների և հանրության վրա: Գեղեցիկ, արտահայտիչ, կրքոտ խոսքը հաղթանակներ է ապահովել ռազմի դաշտում, հերոսացման է մղել հայրենիքի զինվորին, պայմանավորել է հաջողությունը անձնային հարաբերություններում և գործի մեջ: «Խոսքը մարդու մեծագույն զենքերից է» (Ա. Կոնի):

Հին աշխարհում խոսքարվեստը առանձնացվել է որպես արվեստի ամենաազդեցիկ ճյուղերից մեկը: Պատմությանը հայտնի են հռետորական խոսքի ականավոր տեսաբանների ու ճարտասանների անուններ՝ **Դեմոսթենես**՝ հռետոր և քաղաքական գործիչ (IV դ., մ. թ. ա.), **Արիստոտել**՝ հռետորական արվեստի տեսաբան (IV դ., մ. թ. ա.), **Մարկոս Անտոնիոս**՝ Հին Հռոմի քաղաքական հռետոր (I դ., մ. թ. ա.), **Կրոմվել**՝ անգլիական բուրժուական հեղափոխության շրջանի քաղաքական գործիչ (XVII դ.), **Մարատ** (XVIII դ.) և **Ռոբեսպիեր** (XVIII դ.)՝ դատական ու քաղաքական հռետորներ, **Լոմոնոսով**՝ հռետորական արվեստի տեսաբան, փիլիսոփա (XVII դ.), **Անատոլի Կոնի**՝ դատական հռետոր (XIX–XX դդ.) և ուրիշներ:

Պետական, քաղաքական ականավոր գործիչ, իրավաբան և փիլիսոփա **Ցիցերոնի** (I դ., մ. թ. ա.) մասին ժամանակակիցներն ասում էին, որ երկինքը Ցիցերոնին երկիր է ուղարկել, որպեսզի նրա օրինակով ցույց տա, թե ինչ աստիճանի զորեղ կարող է լինել խոսքը: Իսկ **Սոկրատեսը** (V դ., մ. թ. ա.), ասում են, մարդու մասին կարծիք չէր հայտնում, քանի դեռ նրան չէր լսել: Մեծ փիլիսոփային է վերագրվում հայտնի արտահայտությունը՝ «Խոսիր, որ ճանաչեմ քեզ»: Լև **Տոլստոյի** կարծիքով՝ գեղեցիկ, նպատակասլաց, արտահայտիչ խոսելը բարձր մշակույթի արտահայտություն է, մտավոր զարգացածության նշան, վարվեցողություն է, կիրթ լինելու ցուցիչ:

Խոսքի արժանիքների վերաբերյալ ուսմունքը ձևավորվել է դեռևս Հին աշխարհում: Մշակվել է մի ամբողջ համակարգ: Հնում իմաստուն համարվելու համար երեք պայման կար, որոնցից մեկը **գեղեցիկ և անվրեպ խոսելն էր** (մյուս երկուսը՝ ճիշտ վճիռ կայացնելը, անիրաժեշտ գործ կատարելը (Դեմոկրիտ)): Հույն փիլիսոփա Թեոֆրաստը «Ոճի մասին» իր գրքում առանձնացնում է գեղեցիկ խոսքի մի շարք

հատկանիշներ՝ մաքրություն, ճշգրտություն, խստություն, հանդիսավորություն, վերամբարձություն, նպատակասլացություն, ճշմարտացիություն ևն: Նշվում են գեղեցիկ խոսքի նաև այլ որակներ՝ տեղինություն (Դիոնիսոս Հալիկառնասցի), մաքրություն և հասկանալիություն (Ցիցերոն): Հետագայում խնդրին անդրադարձել են փիլիսոփաներ, բանասերներ, հոգեբաններ, գրողներ, իրավաբաններ և այլք: Խոսքի արժանիքների (հաղորդակցական որակների) մասին ժամանակակից ուսմունքը մշակվել է մասնագետ-բանասերների կողմից: Առանձնացվել են խոսքի մշակույթի հետևյալ հիմնական որակները կամ այլ կերպ՝ խոսքի արժանիքները՝ **ճշտություն, հարստություն և բազմազանություն, ճշգրտություն, պարզություն և մատչելիություն, սեղմություն, տրամաբանականություն, արտահայտչականություն, մաքրություն, տեղինություն:**

3.1. ՃՇՏՈՒԹՅՈՒՆ

3.1.1. Բովանդակության ճշտություն (23): 3.1.2. Լեզվական նորմի պահպանում (23): 3.1.2.1. Լեզվական նորմ հասկացությունը (24): 3.1.2.2. Լեզվի նորմավորման չափանիշները (24): 3.1.2.3. Հայոց գրական լեզվի հիմնական նորմերը՝ արվասանական, բառային, քերականական (25):

Ճշտությունը խոսքի հաղորդակցական գլխավոր հատկանիշն է, քանի որ դրանով է պայմանավորվում փոխընկալումը: «Ճիշտ խոսել կարողանալը դեռ առաքինություն չէ, բայց ճիշտ խոսել չկարողանալը ամոթ է» (Ցիցերոն): **Խոսքի ճշտությունը** ունի երկու դրսևորում՝ **բովանդակության ճշտություն և լեզվական նորմի պահպանում:**

3.1.1. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆ: Սա լայն հասկացություն է. **նախ**՝ ենթադրում է **տեղեկույթի ճշտություն**՝ փաստեր, փաստարկներ, իրողությունների նկարագրություն, տարեթվեր, տեղանուններ ևն, և **երկրորդ**՝ դրանցից բխող դատողությունների, եզրակացությունների, ընդհանրացումների ճշտություն:

Երկու դեպքում էլ՝ ամեն մի շեղում կամ անճշտություն էապես փոխում է խոսքի ազդեցության ուժը. անճիշտ փաստը, սխալ տեղեկատվությունը անվստահություն են ստեղծում. ժամավաճառություն է դառնում խոսակցի հետ զրույցը: Իսկ ակնհայտ փաստերից սխալ եզրահանգումներ կատարելը փոխընկալումը և երկխոսությունը տանում են փակուղի, քանի որ առողջ և ճիշտ դատողությունները պետք է բխեն իրերի ու երևույթների բնույթից, ներկայացվող փաստերի իրական բովանդակությունից: Կամայական մեկնաբանությունները լուրջ խոչընդոտ են փոխադարձ ընկալման հասնելու ճանապարհին:

3.1.2. ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ: Խոսքի ճշտության հիմնական պայմանը լեզվական կանոնների պահպանումն է լեզվի բոլոր մակարդակներում՝ արտասանությունից մինչև շարահյուսական կառույցներ:

3.1.2.1. Լեզվական նորմ հասկացությունը: Լեզվական նորմը լեզվական միջոցների գործածության **համընդունված կանոններն են:** Լեզվի ձևավորման և պատմական զարգացման ընթացքում ստեղծվում ու մշակվում են օրինաչափություններ, որոնք ընդունելի և ընդհանուր են դառնում (համապարտադիր են) լեզվակիրառողների համար: «Լեզվական նորմը լեզվական միջոցների գործածության կանոնների ամբողջությունն է, որ ընդունված է բոլորի կողմից»¹⁴: Լեզվի նորմավորումը հասարակական և հոգեբանական պահանջ է: Դրա հիմնական նպատակը փոխադարձ ընկալման հասնելն է, իրար հասկանալի լինելը, հաղորդակցվելը:

3.1.2.2. Լեզվի նորմավորման չափանիշները: Հարց է առաջանում՝ երբ է լեզվական այս կամ այն կանոնը դառնում օրինաչափություն, ինչ սկզբունքով պետք է առաջնորդվել տեղաշարժը որպես լեզվական կանոն արձանագրելիս: Այլ կերպ ասած՝ որո՞նք են **լեզվի նորմավորման կամ կանոնակարգման չափանիշները:** Դրանք կարելի է սահմանել հետևյալ կետերով:

1. Լեզվական միջոցի **գործածականությունը, հասարակական ճանաչումը և ընկալումը:** Լեզվական այս կամ այն իրողությունը կանոնի վերածվելու համար անպայման պետք է ընդունվի հասարակության կողմից, տարածում գտնի հանրության մեջ: Իսկ դա հնարավոր է տևական գործածության ու աստիճանաբար տարածվելու շնորհիվ: Ասվածը բնավ չի նշանակում, որ լեզվական իրողությունը, եթե տարածում գտավ, անպայման պիտի դառնա նորմ, ճանաչվի որպես լեզվական կանոն: Բանավոր խոսակցական հայերենում գործածական են շատ իրողություններ, որոնք տեղ չունեն և առաջիկայում չեն էլ կարող տեղ ունենալ գրական լեզվի համակարգում: Դրանք գոեհկաբանություններ են, հասարակաբանություններ, օտար բառեր, քերականական անճիշտ ձևեր ու կառույցներ: Լավագույն օրինակը խոսակցականում գործածական դարձած՝ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի բարբառային ձևն է (գործածվում է նաև որպես հանգույց)՝ **գնում ա, երգում ա, լավ ա, նա ա, երեխա ա** ևն: Նախ՝ այդ ա-ն խիստ անբարեհունչ է եմ օժանդակ բայի համապատասխան ձևի համեմատությամբ (**գնում է, երգում է, լավ է, նա է, երեխա է**): Բացի այդ՝ ա-ի դեպքում ակնհայտորեն խախտվում է հարացույցի և՛ արտասանական, և՛ ձևային կազմը: Ներկայի շարքում՝ **եմ [եմ], ես [էս], ա [ա]** (փոխ.՝ է), անցյալի շարքում՝ **էի [էի], էիր [էիր], էր [էր]:** Ժխտական ձևերում **եմ-ի** դեպքում գործում է հստակ նորմավորված հարացույց՝ **չեմ, չես, չի (չէ):** Այնպես որ, այդ **անախորժ ա-ն** (Հր. Աճառյանի բնորոշումն է) վերականգնելու բոլոր փորձերը առայժմ դատապարտված են և հակասում են լեզվի զարգացման ընդհանուր տրամաբանությանը:

2. **Համապատասխանություն լեզվի կառուցվածքին, լեզվի զարգացման ներքին օրինաչափություններին:** Օր.՝ մի շարք անկանոն բայերի անցյալ կատարյալի զուգաձևերից գրական հայերենում գնալով սկսում են գերակշռող դառնալ կանոնավոր բայերին բնորոշ կամ դրանց մոտ տարբերակները, ինչպես՝ **բերի→բերեցի, դրի→դրեցի, տվի→տվեցի** ևն: Կամ՝ հայերենի բայական համակարգում գործող կանոն է հրամայականի դրական ձևերից արգելականի կազմությունը (**գրի՛ր – մի՛ գրիր, կարդա՛ – մի՛ կարդա**). սոսկածանցավոր և

¹⁴ **А. Радугин**, Русский язык и культура речи, М., 2004, с. 63.

պատճառական բայերի արգելականի զուգաձևերից գրական լեզվում այսօր ակնհայտորեն հաստատվում են այդ ընդհանուր օրինաչափությամբ ձևավորված կազմությունները (**մի՛ մտնիր**→**մի՛ մտիր**, **մի՛ մոտենա**→**մի՛ մոտեցիր**, **մի՛ խոսեցնիր**→**մի՛ խոսեցրու**) ևն: Առաջանում են նաև, ինչպես վերը տեսանք, առանձին շեղումներ, բայց դրանք որևէ էական դեր չեն կատարում լեզվի ընդհանուր զարգացման գործընթացում:

3. Լեզվական ավանդույթը: Տարիներով, ինչո՞ւ չէ, նաև դարերով հաստատված լեզվական կանոնը պահպանվում է երբեմն ավանդույթի ուժով. դժվար է լինում հրաժարվել դրանից գիտականորեն տրվող համոզիչ փաստարկումների դեպքում անգամ: Դա նաև հոգեբանական խնդիր է. ավանդախախտությունը հասարակական և անհատական հոգեբանության բնորոշ գիծ չէ: Օր.՝ մոտ մեկ տասնամյակ առաջ ՀՀ լեզվի պետական տեսչության որոշումը՝ **ՀԼՍ** (զանգվածային լրատվության միջոցներ) հապավումի փոխարեն գործածել **ՀՏՍ** (զանգվածային տեղեկատվության միջոցներ), այդպես էլ կիրառություն չգտավ, քանի որ նախկին տարբերակը արդեն տարածվել էր մեզանում:

Գործում են նաև այլ չափանիշներ՝ *հասկացության բովանդակությունը հստակորեն արտահայտելը, ձևային-արտասանական հատկանիշներ, գործառական ճկունություն, արտադրողականություն, լեզվական նշանի (բառ, բառաձև, քերականական կառույց ևն) գործածությունը ճանաչված և հեղինակություն վայելող անձի կամ սոցիալական այս կամ այն խմբի կողմից ևն:*

Լեզվական նորմը մշակված և ամրակայված լեզվական կանոնն է **լեզվի բոլոր մակարդակներում**: Այս մոտեցմամբ էլ առանձնացվում են լեզվի հիմնական նորմերը՝ **ինչյունական (արտասանական), բառային, քերականական**: Առանձնացվում են նաև **ենթանորմեր**, ինչպես, օրինակ՝ ուղղագրության նորմեր կամ կանոններ, բառակազմական նորմեր, նախադասության կազմության օրենքներ ու օրինաչափություններ ևն:

3.1.2.3. Հայոց գրական լեզվի հիմնական նորմերը՝ ինչյունական (արտասանական), բառային, քերականական:

Ա. ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ (ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ) ՆՈՐՄԵՐ

Ա.1. Ուղղախոսություն (25): Ա.2. Տառադարձություն (29): Ա.3. Հնչյունափոխություն (30): Ա.4. Շեշտ (32):

Ա.1. ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ: Խոսքի ճշտության առաջին պայմանը **ուղղագրական և ուղղախոսական նորմերի** պահպանումն է: Գրության (նկատի ունենք նաև կետադրությունը) կամ արտասանության սխալներով լեզուն խոսքը մերժելի է նույնիսկ զուտ հաղորդակցական-տեղեկատվական մակարդակում, քանի որ կարող է տարընթերցումների և թյուրըմբռնումների տեղիք տալ: Խոսողը կամ գրողը նախ և առաջ պետք է տիրապետի տվյալ լեզվի **գրական** արտասանության (ուղղախոսության), ուղղագրության և կետադրության կանոններին:

Ուղղախոսությունը տվյալ լեզվի՝ հանրության կողմից ընդունված արտասանական նորմերի, այսինքն՝ ճիշտ խոսելու կանոնների ամբողջությունն է: Դա վերաբերում է ոչ միայն բառերի ճիշտ արտասանությանը, այլև նախադասությունների հնչերանգին, շեշտադրությանը, առանձին հնչյունների կամ հնչաշարույթի ճիշտ արտաբերմանը ևն: Տարբեր մարդիկ բառերը կարող են արտասանել տարբեր կերպ, բայց լեզվում մշակվում են արտասանական ընդհանուր կանոններ, որոնք պարտավոր են յուրացնել տվյալ լեզվին տիրապետող հանրության բոլոր անդամները: Այդ ընդհանուր օրինաչափությունները կոչվում են ուղղախոսական նորմեր կամ կանոններ: Ինչպես լեզվական բոլոր կանոնները, սրանք նույնպես ենթակա են փոփոխությունների:

Վերջին տարիներին շատացել են բանավոր խոսքին ներկայացվող պահանջները: Քաղաքական կյանքի ակտիվացում, զանազան բանավեճեր ու հրապարակային քննարկումներ, քարոզարշավներ, դատավարություն, աննախադեպ բազմամարդ հեռուստալսարան, հաճախ ուղիղ եթերով՝ լսարանի հետ անմիջական կապով տրվող հաղորդումներ. այս բոլորը ավելի են մեծացնում ճիշտ ու հստակ խոսելու անհրաժեշտությունը: Դա ոչ միայն հարգանք է սեփական լեզվի հանդեպ, այլև լսարանին կամ խոսակցին հանկանալի լինելու, նրա ուշադրությունը գրավելու, հետևաբար նաև նրա վրա ազդելու կարևորագույն պայման: Անճիշտ արտասանված բառը կամ արտահայտությունը անմիջապես շեղում է ունկնդրի ուշադրությունը, դժվարացնում ընկալումը. խոսողության գործընթացը խաթարվում է:

Գրական հայերենով հաղորդակցվելիս արտասանական անճշտություններից («ուղղախոսական վթարներից») խուսափելու համար ծայնավորների, երկհնչյունների, բաղաձայնների և ծայնավորական զուգորդումների արտասանությունից պետք է հիշել հետևյալները.

1) **Ա, ի, ու** ծայնավորները հայերենում ինչպես գրվում, այնպես էլ արտասանվում են՝ **արագ, գիրք, ուրախ**:

2) Բառասկզբում **ե**-ն արտասանվում է **յե՝ [յե]րևալ, [յե]կամուտ** (բացառություն է եմ օժանդակ բայը՝ **ես [եմ], ենք [ենք]** ևն), բառամիջում արտասանվում է **է՝ աս[է]լ, գ[է]ղ[է]ցիկ**: Եթե բաղադրյալ բառերի բաղադրիչների կցությամբ **ե**-ով սկսվող բաղադրիչին նախորդում է ծայնավոր, ապա **ե**-ն արտասանվում է **յե**, որպեսզի ծայնավորների կուտակում չառաջանա՝ **ամենա[յե]րկար, կիսա[յե]զրափակիչ**, իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա **ե**-ն արտասանվում է **է՝ ան[է]րես, ինն[է]րորդ, արև[է]լք**:

Բառասկզբում **ո**-ն արտասանվում է **վո՝ [վո]րոշ, [վո]րակ** (բաց.՝ **[օ]վ, [օ]վքեր**), իսկ բառամիջում արտասանվում է **օ՝ բ[օ]-լ[օ]ր, հ[օ]սանք**: Եթե բաղադրյալ բառերի՝ **ո**-ով սկսվող բաղադրիչին նախորդում է ծայնավոր, ապա **ո**-ն արտասանվում է **վո**, որպեսզի ծայնավորների կուտակում չառաջանա՝ **ամենա- [վո]րակալ, բազմա[վո]ճ**, իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա **ո**-ն արտասանվում է **օ՝ բարձր[օ]րակ, բազմ[օ]տանի**:

Պետք է նկատել, սակայն, որ սահմանված կանոնը ժամանակակից հայերենի ուղղախոսության մեջ ամբողջությամբ չի գործում: **Ան**- ժխտական նախածանց

ունեցող բառերի մի որոշ մասում (հատկապես գրական–գրջային երանգ ունեցող բառերում) գործում է արտասանական զուգահեռ տարբերակ. է-ի փոխարեն արտասանվում է յէ, իսկ օ-ի փոխարեն՝ վօ, ինչպես՝ **ան[է]կամտաբեր // ան[յէ]կամտաբեր, ան[է]ռանդ // ան[յէ]ռանդ, ան[օ]ղնաշարավոր // ան[վօ]ղնաշարավոր, ան[օ]ղջամիտ // ան[վօ]ղջամիտ, ան[օ]խակալ // ան[վօ]խակալ, ան[օ]րդի // ան[վօ]րդի, ան[օ]տնահարեի // ան[վօ]տնահարեի** ևն (բայց՝ **ան[է]րես, ան[է]զական** ևն): **–երկու և –երեք** բաղադրիչներով թվականներում ե–ն ինչպիսիք է նաև որպես յէ (տասն բաղադրիչով կազմություններում արտասանվում է ը հենարանով)՝ **տասն[ը]էրեք, տասն[ը]էրկու, քսան[յէ]րկու, հիսուն[յէ]րկու** (սրանք հանձնարարելի չեն), փոխ.՝ **տասն[է]րեք, տասն[է]րկու, քսան[է]րկու, հիսուն[է]րեք** ևն: Արտասանական այս տեղաշարժերը մեր լեզվի արդի փուլի համար ոչ թե պետք է համարել շեղումներ, այլ պետք է ընդունել որպես հայերենի ուղղախոսության մեջ ձևավորվող արտասանական զուգահեռ տարբերակներ՝ **ան[յէ]րևակայելի // ան[է]րևակայելի, ան[վօ]խակալ // ան[օ]խակալ, վաթսուն[է]րեք // վաթսուն[յէ]րեք**:

Էական փոփոխություն է տեղի ունեցել կ և չ քերականական մասնիկներին հաջորդող ե–ի և ո–ի արտասանության մեջ: Գրական լեզվի կանոնով սահմանված արտասանությունը՝ **ե > է՝ կ[է]րագեն, չ[է]րևակայեն, ո > օ՝ կ[օ]րոշեն, չ[օ]րոնեն**, այսօր աստիճանաբար իր տեղը զիջում է այդ հնչյունների՝ **յէ և վօ** արտասանությանը: Ըստ որում՝ այս դեպքում չի աղավաղվում սկզբնաձևի արտասանական պատկերը՝ **յ[է]րագեն – կ[յէ]րագեն, յ[է]րևակայեն – չ[յէ]րևակայեն, վ[օ]րոնեն – չ[վօ]րոնեն, վ[օ]րոշեն – կ[վօ]րոշեն**: Բոլոր դեպքերում, ակնհայտ է, որ ունենք արտասանական զուգաձևեր, որոնցից արդի խոսակցական նորմի շրջանակներում գործող տարբերակը միտում է դառնալու գրական լեզվի արտասանական կանոն:

3) Գրական լեզվի արտասանական կանոնով՝ ծայնավորական զուգորդումները (կից ծայնավորների միացությունը՝ **առ, ոռ, առւ, իռ, իռ** ևն) մի շարք բառերում արտասանվում են յ ծայնակապի հավելումով՝ **ան[է]յանալ, գրե[յ]ի, մի[յ]ավոր, է[յ]ինք**, կամ վերածվում են յ–ի՝ **օվկ[յ]անոս, Անդր[յ]աս**: Սակայն լեզվի զարգացմամբ պայմանավորված՝ որոշակի տեղաշարժ է նկատվում ծայնական այդ զուգորդությունների արտասանության մեջ. դրանք արտաբերվում են **կիսահունչ** յ–ով: Գրական լեզվի համար հանձնարարելի է արտասանական այդ տարբերակը՝ **ան[է]յանալ, գրե[յ]ի, մի[յ]ավոր, օվկ[յ]անոս, է[յ]ինք**. Ըստ որում, որոշ բառերում թույլ հնչում է նաև յ–ին նախորդող ծայնավորը՝ **Անդր[եյ]աս, հր[եյ]ա, Մար[իյ]ամ, քրիստոն[եյ]ական**:

4) Ը ծայնավորը չի գրվում, բայց թույլ արտասանվում է **սկ, զք, ստ, զգ, սպ** և նման հնչյունակապակցություններից առաջ, ինչպես՝ **[ը]զբաղվել, [ը]զգուշանալ, [ը]սկսել, [ը]ստեղծել, [ը]ստանձնել** (Մ. Աբեղյանը ը–ի արտասանական այս տարբերակը անվանում է **կարճ ը**):

Ճիշտ չէ որոշ քանակական թվականների՝ ավելորդ **ը**–ով արտասանությունը, այսպես՝ ոչ թե **հինգ[ը], վեց[ը], յոթ[ը], ութ[ը]**, կամ՝ **վաթսուն[ը]մեկ, քառասուն[ը]չորս**, այլ՝ **հինգ, վեց, յոթ, ութ**, կամ՝ **վաթսունմեկ, քառասունչորս** ևն:

5) Հնչյունը և նրա գրային նշանը կարող են չհամապատասխանել իրար. գրում ենք այլ տառ, արտասանում ենք այլ հնչյուն՝ **բարձր** – բար[ց]ր, մարդ – մար[թ], վարձ – վար[ց]:

6) Եթե բառի մեջ **և**-ին նախորդում է բաղաձայն, ապա **և**-ը արտասանվում է էվ՝ առ[էվ]տուր, որ[էվ]իցե:

7) Գրական հայերենին բնորոշ չէ բաղաձայն հնչյունների փափուկ արտասանությունը՝ քմայնացումը, որը ռուսերենի ազդեցությամբ է մուտք գործել մեր բանավոր խոսք: Մի շարք բառերում **դ, տ, թ** գրային նշանները արտասանվում են **ծ, ծ, ց** հնչյունների քմայնացված տարբերակներով, ինչպես՝ **[ծյ]եխնիկա, մա[ծյ]ան, ա[ծյ]ան, [Մյ]իգրան, ար[ծյ]ունք, ակա[ծեմ]իա**, փոխանակ գրային ճիշտ արտասանության՝ **տեխնիկա, մատյան, ատյան, Տիգրան, ար[դ/թյուն]ք, ակադեմիա**:

8) Կրկնակ բաղաձայնները կամ արտասանվում են որոշ տևականությամբ (**ուղղածիգ, աբբա, գրավվել, տարրական**), կամ գաղտնավանկի հնչմամբ (**գ[ը]գվել, հույս[ը]ս, կ[ը]կառուցվի**): Ճիշտ չէ կրկնակ բաղաձայնների միջև **ը** արտասանելը, երբ այն գրական լեզվի կանոնով բացակայում է, կամ առկա է արմատի ծայնավորի կամ երկհնչյունի սղում: Ոչ թե՛ **գ[ըն]ընել** (զնին), **ք[ըն]ընել** (քնին), **սովա[ը]լուկ, պ[ը]տ[ը]տահողմ** (պտույտ), **բ[ըջ]ըջային** (բջիջ), այլ՝ **գ[ը]նել, ք[ը]նել, սովա[լ]ուկ, պ[ը]տտահողմ, բ[ը]ջջային**:

9) Առանձին բառերում որոշ բաղաձայնների համար մեր ընդհանուր խոսակցական լեզվում (բանավոր խոսքում) առաջացել են արտասանական զուգաձևեր, այսինքն՝ գործ ունենք բառի մեջ այս կամ այն հնչյունի երկակի արտասանության հետ. ծայնեղ բաղաձայնները՝ **բ, գ, դ, ծ, ջ**, արտասանվում են մեկ որպես ծայնեղներ, մեկ որպես շնչեղ խուլեր՝ **փ, ք, թ, ց, չ**, ինչպես, օրինակ՝ **գոգավորություն – գո[ք]ավորություն, երիտասարդ – երիտասար[թ], թագավոր – թա[ք]ավոր, Թադևոս – Թա[թ]ևոս, կախարդ – կախար[թ], կանխարգել – կանխար[ք]ելել, միջանցք – մի[չ]անցք, միջնակարգ – մի[չ]նակարգ, միջազգային – մի[չ]ազգային, միջամտել – մի[չ]ամտել, միջոց – մի[չ]ոց, վարագույր – վարա[ք]ույր**: Այս դեպքում նախապատվությունը պետք է տալ նշված հնչյունների գրային արտասանությանը՝ **միջնակարգ, միջոց, միջոցառում, նվագել, վարագույր** և այլն: Բայց սա, անշուշտ, չպետք է ընդունել որպես ընդհանուր օրինաչափություն, քանի որ խոսակցական լեզվում նկատվող այս երևույթը ունի մասնակի դրսևորումներ: Թեև կարող ենք ասել, որ այսօր նշված բաղաձայնների գրային արտասանությունը ակնհայտորեն միտում ունի ընդլայնվելու: Ավելին՝ առանձին բառերի արտասանության ժամանակ ծայնեղների անհարկի խլացումը պետք է համարել ոչ միայն անբարեհունչ, այլև անընդունելի, ինչպես՝ **ամ[փ]ողջ, ար[ց]ան, զար[ք]ացում, ըն[թ] որում, հաշման[թ]ամ, հա[չ]ողություն, հուշար[ց]ան, նվա[ք]ել, [քթ]նել, փոխանակ՝ ամբողջ, արձան, զարգացում, ընդ որում, հաջողություն, հաշմանդամ, հուշարձան, նվագել, գտնել** ևն:

10) Բանավոր խոսակցական լեզվում տարածված սխալ է **հ**-ով վերջացող մի շարք բառերում այդ վերջնահնչյունի սղումը (ոմանց նույնիսկ թվում է, թե այդ բառերը ոչ միայն արտասանվում, այլև գրվում են առանց **հ**-ի)՝ **նախագան**

(**«նախագահն»**) **ասաց, հերթապան** (**«հերթապահն»**) **այստեղ է, հաշվապան** (**«հաշվապահը»**) **տեղում չէ:** Առաջինները գրական լեզվում մերժելի ձևեր են:

Արտասանական կամ ուղղախոսական գրական նորմերից բազմաթիվ այլ շեղումներ պայմանավորված են հնչյունափոխության, բառի ճիշտ կազմության և քերականական իրողությունների չիմացությամբ: Դրանց մասին կխոսվի համապատասխան բաժիններում:

Ա.2. ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ. ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏ-ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Տառադարծություն է կոչվում տեքստի արտահայտումը հնչյունական գրության սկզբունքով (հնչադարձություն): Մեկ այլ նշանակությամբ՝ տառադարձությունը գրային արտահայտության այն եղանակն է, որը գործածվում է սովորական ուղղագրական համակարգում օտար բառերի համար: Վերջին նշանակությամբ **տառադարձություն** (**արտասանությանը հետևելով**) և **գրադարձություն** (**գրին հետևելով**) տերմինները համարժեք են¹⁵: Օտար բառերի ճիշտ տառադարձման համար պետք է իմանալ որոշակի սկզբունքներ, որոնք սահմանվել են տերմինաբանական կոմիտեի կողմից:

1) Օտար **բ**-ն (ռուսերենի **б**-ն) բառասկզբում և բառամիջի արմատական բաղադրիչում տառադարձվում է **ռ'** [**ռ**]ադիո, [**ռ**]ուբլի, բառամիջում՝ **ր'** պ[**ր**]ոֆեսոր, Սանկտ Պետե[**ր**]բուրգ, **լ**, **ն** ձայնորդներից առաջ՝ **ռ'** Բե[**ռ**]նարդ, Կա[**ռ**]լեն, Կալիֆո[**ռ**]նիա, սակայն երբեմն խախտվում է այս կանոնը՝ Կա[**ր**]լ, Նիդե[**ր**]լանդներ, **ի**նտե[**ր**]նացիոնալ: Սխալ է օտար լեզուների կամ այլ ազդեցությամբ կամ պարզապես ինքնատիպ երևալու համար օտար բառերում նշված դիրքերում **բ**-ի **ռ** արտասանությունը՝ Գե[**ռ**]մանիա, Ա[**ռ**]թուր (Ա[**ռ**]տուր), **ի**[**ռ**]անա-**ի**[**ռ**]աջյան, «Ա[**ռ**]մենիա», բ[**ռ**]ոնգ, գ[**ռ**]ոշ: Բ-ի **ռ** արտասանությունը ճիշտ չէ նաև հայերեն մի շարք բառերում՝ Ա[**ռ**]մեն, ա[**ռ**]իամարիել, ա[**ռ**]ծիվ, ե[**ռ**]եսուն, լ[**ռ**]իվ, խանգա[**ռ**]ել, վե[**ռ**]նագիր:

2) Ռուսերեն կամ ռուսերենից փոխառված բառերում **о(ո)**-ն արտասանվում է **օ**, այսինքն՝ այնպես, ինչպես հայերենում գրվում է. չի դառնում **ա** (բառամիջում) կամ **ը** (**-տ[օ]ր**, **-[օ]ր**, **-[օ]վ** հնչյունամիացությամբ վերջացող բառերի մեջ): Ծիշտ է՝ Մ[**օ**]սկվա, Դ[**օ**]ստ[**օ**]նակի, կամ՝ պրոֆես[**օ**]ր, դոկտ[**օ**]ր, ռեկտ[**օ**]ր, տրանսպ[**օ**]րտ, Փարաջան[**օ**]վ: Սխալ է՝ Մ[**ա**]սկվա, Դ[**ա**]ստ[**ա**]նակի, պր[**ա**]ֆես[**ը**]ր կամ՝ պրոֆես[**ը**]ր, դոկտ[**ը**]ր, ռեկտ[**ը**]ր, տրանսպ[**ը**]րտ, Փարաջան[**ը**]վ: (Զպետք է շփոթել **ա** հոդակապի հետ, որը հանդես է գալիս առանձին օտար և հայերեն բաղադրիչների միացման դերում՝ **электр/о⇒էլեկտր/ա**՝ էլեկտրա-էներգիա, էլեկտրահաղորդիչ, **евр/о⇒եվր/ա**՝ Եվրատեսիլ, Եվրախորհուրդ, Եվրամիություն):

Ծան.: Հայերենում **Белорусь** բառի ճիշտ տառադարձումն է ոչ թե **Բել[օ]ռուս**, այլ **Բել[ա]ռուս**:

3) Կրկնակ բաղաձայնները սովորաբար հայերենում արտասանվում են իբրև մենաբաղաձայն և այդպես էլ գրվում են, ինչպես՝ **congressman** – կոնգրեսմեն,

¹⁵ Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 571–572:

alligator – ալիգատոր, **ammonium** – ամոնիում, **classicism** – կլասիցիզմ, **communist** – կոմունիստ, **collective** – կոլեկտիվ: Կրկնակ բաղաձայնների՝ հայերենում երկար կամ ուժգին արտասանության դեպքում գրվում են կրկնակ բաղաձայնով՝ վիլլա, Աննա, վատտ, բրուտտո, կրկնակ **օօ**-ն՝ ոո՝ կոոպերատիվ, կրկնակ **րր**-ն (ռուս.՝ **рр**) ի ծայնավորից առաջ՝ **ր՝ բարիկադ**, մնացած դեպքերում՝ **ռ՝ Մառ, Պյոտռոս, Կառլոս**:

Ծան.: Կանոնական է **Բելոզերսկ, Բելոզերով, Ղասաբոլլյան, Դավութջյուլու, Չարչոլյան** և նման բառերի **օ**-ով գրությունը:

4) Վերջին շրջանում մեր գրականության մեջ և մամուլում ակնհայտ հակում է նկատվում օտար բառերի և հատուկ անունների տառադարձությունը ավելի մոտեցնելու փոխատու աղբյուրի արտասանական առանձնահատկություններին: Դա հատկապես նկատելի է անգլերեն բառերի և անգլերենում գործածվող հատուկ անունների տառադարձության մեջ: Նպատակ ունենալով միասնականացնելու նշված բառերի տառադարձության սկզբունքները՝ տերմինաբանական կոմիտեն հանձնարարում է ղեկավարվել հետևյալ կանոններով. 1. Անգլերեն **p, t, k**-ն և **k** արտասանվող **c**-ն տառադարձել բառասկզբում **փ, թ, ք**, մնացած դիրքերում՝ **պ, տ, կ**. Վերջին դեպքում կրկնավորները ևս տառադարձել մեկ բաղաձայնով, ինչպես՝ **[Թ]աֆտ (Taft), [Թ]եյլոր (Taylor), [թ]ենիս (tennis), [Ք]արտեր (Carter), [Ք]ենեդի (Kennedy), [թ]եստ (test)**, բայց ավանդաբար՝ **Նյու Յորք**, **Մարկ Տվեն**, **Կլոնգրես** ևն: 2. Անգլերենի **w(h)**-ն տառադարձել **ու (wa-ն՝ ուո)**, բացի այն դեպքերից, երբ հայերենում իրար կողքի կարող են հանդիպել երկու **ու (wu, wo, woo)**. այս դեպքում գրել և արտասանել **վու, օր.**՝ **[Ու]այտ (White), [Ու]այլդ (Wilde), [Ու]ոլտոն (Walton), Դ[ու]այտ (Dwight)**, բայց ավանդաբար՝ **[Վ]աշինգտոն (Washington), [Դ]արվին (Darwin), [վ]ատտ (Watt), [Վ]իլյամ (William)** ևն¹⁶:

Ա.3. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ: Լեզվական նորմերից շեղումները կապվում են նաև հնչյունափոխական առանձին իրողությունների հետ:

Գրական հայերենում մի շարք բառերի արտասանությանը բնորոշ է բաղաձայնների սղումը կամ, ավելի ստույգ, դրանց թույլ արտասանությունը՝ **աշխարհ** – **[աշխար]**, **ապաշնորհ** – **[ապաշնոր]**, **արհամարհանք** – **[արհամարանք]**, **ընդհանրապես** – **[ընդանրապես]**, **խորհուրդ** – **[խորուրդ]**, **շնորհ** – **[շնոր]**, **որպեսզի** – **[որպեսի]** (բայց ոչ՝ **որպիսի**), **պաշտպան** – **[պաշպան]**, **Մկրտչյան** – **[Մկրչյան]**: Սա գործում է գրական լեզվի արտասանական նորմերի շրջանակներում: Այս երևույթի հետ չպետք է շփոթել, սակայն, բարբառների կամ խոսակցական լեզվի ազդեցությամբ բառերի այլ խմբում արձանագրվող ծայնավոր կամ բաղաձայն հնչյունների անհարկի սղումները, որոնք աղավաղում են բառի հնչյունական ճիշտ պատկերը, ինչպես՝ **անդրադառնալ** – **անրադառնալ**, **գնահատական** – **գնհատական**, **դաստիարակել** – **դաստիրակել**, **եկրորդ** – **եկրորդ**, **համեմատություն** – **համմատություն**, **որովհետև** – **որտև**, **օրինակ** – **օրնակ**:

¹⁶ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 178–183:

Բառի աճման (բառաբարդում, ածանցում) ժամանակ **ույ** երկինջյունը փոխվում է **ու-ի**, արտասանվում է **ու**՝ համբույր (ոչ թե՝ **համբյուր**) – **համբուրել**, զրույց – **զրուցընկեր**, ողջույն – **ողջունել**: Սխալ է այս խմբի բառերի մեջ **ու-ի** փոխարեն յու կամ **ույ** արտասանելը՝ **համբյուրել**, **զրույցընկեր**, **ողջույնել** կամ **ողջունել**, բայց ունենք նաև՝ **ընկուզկտորիչ** // **ընկույզկտորիչ**, **հնչութային** // **հնչությանին**, **մշակութային** // **մշակությանին**, **սովորութային** // **սովորությանին** (հանձնարարելի են առաջին տարբերակները, թեև հաճախ ավելի բարեհունչ են երկրորդները՝ **հատությանին**, **հատությանվորել**, **կշռությանվոր**, **ձևությանին** ևն):

Ծան. 1: Ճիշտ տարբերակներ են **ի + ա → ե** հնչյունափոխությամբ առաջացած հետևյալ ձևերը՝ **ընտանի + ական → ընտանեկան**, **հարսանի(ք) + ական → հարսանեկան**, **պատանի + ական → պատանեկան**:

Ծան. 2: Առանձին բառերի բառակազմական և ձևակազմական որոշ հիմքերի տարբերակներից նախընտրելի են դրանց անհնչյունափոխ ձևերը, ինչպես՝ **Աղասիի** (Աղասու), **Աղասիով** (Աղասով), **Դավիթաշեն** (Դավթաշեն), **Դավիթի** (Դավթի), **երեսունական** (երեսնական), **Էրեբունիի** (Էրեբունու), **Էրեբունիով** (Էրեբունով), **հիսունամյա** (հիսնամյա), **Սարգիսի** (Սարգսի) ևն: Այս դեպքում չի աղավաղվում բառի պատկերը, և խոսքը հնչում է ավելի հստակ ու հասկանալի¹⁷:

Մի շարք բառերի երբեմն անճիշտ արտասանությունը կապվում է հատկապես հնչյունափոխության տեսակներից մեկի՝ **փոխազդեցական հնչյունափոխության** հետ: Դա բառի մեջ հնչյունների միմյանց վրա ազդելու հետևանքով տեղի ունեցող հնչյունափոխությունն է: Հնչյունափոխության այդ տիպին են պատկանում հետևյալները.

- **առնմանություն.** հնչյունը, ազդելով մեկ այլ հնչյունի վրա, ինչ-ինչ հատկանիշներով նմանեցնում է իրեն՝ **ծրագ – արագ**, **զթափ – սթափ**, **ընդբռնել – ըմբռնել**, **ծանաչել – ճանաչել**, **ճանապարհ – ճամփա**, **ուրախության – ուրախությամբ**.
- **տարնմանություն.** մի հնչյունը, ազդելով նույն կամ նման մեկ այլ հնչյունի վրա, ինչ-ինչ հատկանիշներով հեռացնում է իրենից՝ **բուկիկ – բոթիկ**, **բող + բող – բողբող**, բրբռ.՝ **շիճուկ – տիճուկ**.
- **հավելում.** բառասկզբում կամ հնչյունների միջև ավելանում է ևս մեկը՝ նպաստելով դրանց կապակցմանը՝ **աճար – հաճար**, **երկպառակություն – պառակտել**, **սրտաց – սրտանց**, խսկց.՝ **կանաչ – կանանչ**, **կապվել – կապչվել**.
- **համաբանություն.** իրար հետ զուգորդվող կամ հաճախ իրար հետ գործածվող որոշ բառեր ազդում են միմյանց վրա, և մեկը աստիճանաբար սկսում է հնչյունական կազմով նմանվել մյուսին՝ **բարձր → ցած – ցածր**, խսկց.՝ **հոկտեմբեր → սեկտեմբեր**, **տարեկան → ամսեկան**.

¹⁷ Որոշ հատուկ անունների զուգաձևեր տարբերակված են իբրև տեղանուններ, օր.՝ **Դավիթաշեն** (Երևանի թաղամաս) և **Դավթաշեն** (<< գյուղ). ընտրության հնարավորության դեպքում կարելի է նախապատվությունը տալ անհնչյունափոխ հիմքով ձևերին:

• **կորուստ կամ անկում.** բառի մեջ սղվում է որևէ հնչյուն՝ **դաբսել – դաս/ավորել, հայթ/հայթել – հայթայթել, հեղ/հեղատ – հեղեղատ, հոգի – ոգի, հուզաարտահայտչական – հուզարտահայտչական, խորհ/ել – խոհ/ական.**

• **ամփոփում.** միանման հնչյունախմբերի համառոտումն է, որը մասնակիորեն կոչվում է **արագաբանություն, օր.՝ աշխարհա/հայացք – աշխարհայացք, զբոսաշրջ/իություն – զբոսաշրջություն, ժողովրդավարականացում – ժողովրդավարացում, մեքենայական – մեքենական, տնտեսականապես – տնտեսապես.**

• **դրափոխություն.** բառի մեջ հնչյունը փոխում է իր դիրքը՝ **կմմթել – մմկթել, ձգել – գցել, մախր – մարխ, արմուկն – արմունկ, խսկց.՝ կամուրջ – կարմունջ:**

Հնչյունափոխական այս երևույթների ազդեցությամբ երբեմն արտասանություն են մուտք գործում սխալ ձևեր՝ **ամսեկան** (≠ամսական), **անծեռոցիկ** (≠անծեռոցիկ), **անծիք** (≠անծինք), **բալանի** (≠բանալի), **գտընվել** (≠գտնըվել), **համբյուր** (≠համբույր), **ծեռնըտու / ծեռնատու** (≠ծեռնտու): Գրական նորմի տեսակետից դրանք արտասանական մերժելի ձևեր են:

Ա.4. ՇԵՇՏ: Շեշտը որևէ հնչյունի առանձնացված և ուժեղ արտասանությունն է, որը արտահայտվում է ծայնի տևողությամբ ու բարձրությամբ: Շեշտը լինում է **բառային և տրամաբանական:** Երկրորդն ունի ճարտասանական-իմաստային նշանակություն. դրվելով որևէ բառի վրա՝ իմաստային երանգ է հաղորդում ամբողջ նախադասությանը և կարող է արտահայտվել գրությամբ, ինչպես՝ «Նա պատասխանեց հարցին»: «Նա՛ պատասխանեց հարցին»: «Նա պատասխանեց հարցի՛ն»:

Բառային շեշտը բառի մեջ որևէ ծայնավորի ուժեղ արտասանությունն է: Տարբեր լեզուներում բառային շեշտի դիրքը տարբեր է: Նախագրային հայերենում, մասամբ նաև գրաբարում շեշտակիր է եղել բառի վերջընթեր վանկը (ահաւասիկ, բոլորեքեան), որ այլ կերպ կոչվում է հարաշեշտություն: Ժամանակակից հայերենում շեշտը վերջնականակային է. սովորաբար դրվում է բառի վերջին վանկի ծայնավորի վրա: Բառի աճման կամ փոփոխության դեպքում շեշտը տեղափոխվում է վերջին վանկ, ինչպես՝ **դա՛տ – դատավարությունի՛ց, վկա՛ – վկայի՛ – վկաների՛** են: Այսինքն՝ շեշտը հայերենում կայուն-շարժական է: Այս ընդհանուր օրինաչափությունից, սակայն, կան առանձին շեղումներ.

ա) Մի շարք բազմավանկ բառեր կրում են երկու շեշտ, որոնցից մեկը գլխավոր է (ավելի ուժեղ է), մյուսը՝ երկրորդական, ինչպես՝ **ենթահամակարգայի՛ն, հա՛մապետակա՛ն, վե՛րագործարկու՛մ** (առաջինը՝ թույլ, երկրորդը՝ ուժեղ) են:

բ) Եթե բազմավանկ բառի վերջին ծայնավորը գրվող կամ չգրվող **ը**-ն է, ապա շեշտն ընկնում է նախորդ վանկի ծայնավորի վրա՝ **ա՛րկղ, բա՛րձր, գի՛րքը:** Եթե **ը**-ն բառի միակ ծայնավորն է, ապա գրվում է և շեշտվում՝ **իը՛, չը՛խկ, շըը՛խկ, բայց՛ չրխկո՛ց, շրխկա՛լ** են:

գ) Որոշ բառերում շեշտվում է նախավերջին կամ նրան նախորդող մեկ այլ վանկի ձայնավորը՝ **գրե՛թե, իհա՛րկե, մի՛միայն, նա՛մանավանդ, մի՛գուցե, մի՛թե, ո՛րերորդ, ո՛րևէ, որպե՛սզի** ևն:

դ) Երկակի արտասանություն ունեն մի քանի այլ բառեր՝ **գո՛նե – գոնե՛, գու՛ցե – գուցե՛, նա՛և – նաև՛, մա՛նավանդ – մանավանդ, նո՛յնիսկ – նույնի՛սկ, նո՛յնպես – նույնպե՛ս, նու՛յնպիսի – նույնպիսի՛, նո՛յնքան – նույնքա՛ն** ևն:

Ծան. Երկակի արտասանություն է վերագրվում նաև –**երորդ** մասնիկով կազմված թվականներին՝ **հի՛նգերորդ – հինգերո՛րդ, տա՛սներորդ – տասներո՛րդ, երեսուներեքերորդ – երեսուներեքերո՛րդ, քսա՛ներորդ – քսաներո՛րդ** ևն: Սովորական են դրանց առաջին տարբերակները:

ե) Եթե բառը բարդ է, և բաղադրիչները կազմում են հարադրություն, ապա շեշտը հաճախ դրվում է առաջին բաղադրիչի վրա՝ **ասե՛ս թե, դո՛ւրս գալ, զա՛րկ տալ, ի՛նչ–որ, խո՛սք տալ, հե՛նց որ, միա՛յն թե, մի՛տք անել, նե՛րս մտնել, վե՛ր կենալ, ո՛ւր որ է, օ՛ր օրի:** Այլ դեպքերում շեշտը դրվում է հարադրության վերջին բաղադրիչի վրա՝ **ասել–խոսե՛լ, ի դե՛պ** ևն:

զ) Օտար հատուկ անունների ուղիղ ձևերում պահպանվում է բնագրի շեշտադրությունը, իսկ թեքված կամ ածանցված ձևերում գործում է հայերենի ընդհանուր կանոնը՝ **Բերեզո՛վսկի – Բերեզովսկիների՛, Դոստոև՛սկի – Դոստոևսկի՛, Եսենին – Եսենինո՛վ, Լե՛նին – լենինյա՛ն, Պո՛լկին – Պուլկինի՛, Ֆրա՛նսիա – Ֆրանսիայի՛ց:**

Ծան. 1: Վերջին շրջանում նկատվում է արտասանական տեղաշարժ. այդ բառերի թեք ձևերում նույնպես պահպանվում է բնագրի շեշտադրությունը՝ **Եսենինի, Ֆրանսիայից, Դոստոևսկու:** Դրանք կարելի է համարել արտասանական զուգաձևեր՝ նախապատվությունը տալով հայերենի արտասանական կանոնով տարբերակներին:

Ծան. 2: Թեև տերմինաբանական կոմիտեի որոշումը վերապահում է անում միայն օտար հատուկ անունների համար¹⁸, սակայն այս կանոնի շրջանակներն ընդլայնվում են՝ տարածվելով նաև օտարամուտ (փոխառյալ) հասարակ անունների վրա՝ **օ՛պերա, ֆի՛զիկա, բրա՛ուզեր, օ՛պտիկա, կոմե՛դիա, մաթեմա՛տիկա** ևն:

Բ. ԲԱՌԱՅԻՆ ՆՈՐՄԵՐ

Բ.1. Հայոց լեզվի բառապաշարը (33): **Բ.1.1.** Բնիկ հայերեն բառեր (35): **Բ.1.2.** Սրացված-քային բառեր (35): **Բ.1.3.** Փոխառություններ և օտարաբանություններ (35): **Բ.1.4.** Նորակազմություններ (39): **Բ.2.** Տերմիններ (41): **Բ.3.** Բառի կազմության սխալ ընկալում (44): **Բ.4.** Սրուգաբանություն (45): **Բ.5.** Հապավական բարդություններ և համառոտագրություններ (47): **Բ.6.** Իմաստափոխություն (49): **Բ.7.** Հոմանիշների շփոթություն (51): **Բ.8.** Հարանունների շփոթություն (52): **Բ.9.** Բառային զուգակցում (համապատասխանություն) (53): **Բ.10.** Ավելորդաբանություն և կրկնաբանություն (55):

Բ.1. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ: Լեզվի պարունակած բառերի ամբողջությունն է: Հաճախ այն կոչում են նաև բառագանձ, բառային կազմ, բառամթերք:

¹⁸ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 195:

Բառապաշարը լեզվի ամենից արագ փոփոխվող բաժիններից է: Պատմական բնույթ ունի և իբրև այդպիսին՝ լավագույնս արտացոլում է ժողովրդի հասարակական և տնտեսական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները: Լեզվի պատմական զարգացման ընթացքում շատ բառեր հնանում են, գործածությունից դուրս են գալիս կամ անցնում ոչ գործուն բառերի շարքը, մյուս կողմից՝ բառապաշար են մուտք գործում նոր բառեր ու բառիմաստներ:

Հայերենը ունի հարուստ բառապաշար: Նորագույն տվյալներով՝ ժամանակակից հայոց լեզվի բառերի թիվը անցնում է 300 000-ից: Հայերենի ընդհանուր բառապաշարը, որ անհամեմատ մեծ թվով բառեր է ընդգրկում, արձանագրված է հայոց լեզվի (նկատի ունենք նաև գրաբարը, միջին հայերենը, բարբառները ևն) բառարաններում: Սակայն հայտնի է նաև, որ առհասարակ որևէ բառարան չի կարող տալ տվյալ կենդանի լեզվի բառապաշարի ամբողջական և ավարտուն պատկերը, քանի որ լեզվի բառապաշարը բաց համակարգ է և անընդհատ ենթակա է փոփոխությունների ու հարստացման:

Ամեն մարդ յուրացնում և գործածում է լեզվի բառապաշարի մի մասը միայն: Յուրաքանչյուր անհատ միջին հաշվով գիտի, հասկանում է 20-25 հազար բառ և գործածում է դրանցից 3-4 հազարը: Բայց բոլոր մարդիկ նույն բառերը չէ, որ գիտեն ու գործածում են: Մոտ 2000 բառ բոլորի բառապաշարում համընկնում է: Մնացածը տարբեր է լինում թե՛ քանակով, թե՛ կազմով՝ կախված մարդու մտավոր զարգացման մակարդակից, կրթությունից, զբաղմունքից, հետաքրքրություններից, միջավայրից ու շփումներից: Գեղարվեստական գրականության մեջ նշանակալից հետք թողած հեղինակները իրենց ստեղծագործություններում գործածել են իրենց մայրենի լեզվի բառերի 10-12 տոկոսը: Օր.¹⁹ Շեքսպիրի ստեղծագործությունների բառապաշարը ընդգրկում է 15 000 բառային միավոր, Ա. Իսահակյանի չափածոյի բառապաշարը՝ 5000 ևն: Մեկ մարդու իմացած և գործածած բառերի ամբողջությունը տվյալ անհատի բառապաշարն է:

Հայոց լեզվի բառապաշարը դասակարգվում է ըստ մի քանի սկզբունքների՝ **ըստ ծագման** կամ **առաջացման աղբյուրների** (ծագումնաբանական դասակարգում)²⁰՝ բնիկ հայերեն բառեր, ստացվածքային բառեր և փոխառյալ բառեր, **ըստ բառային կազմի շերտերի** (շերտաբանական դասակարգում)²¹՝ ընդհանուր բառեր, գրաբարյան բառեր, միջին հայերեն բառեր, բարբառային բառեր, նոր հայերեն բառեր, **ըստ գործածության և ընդգրկած ոլորտների**²²՝ համագործածական և ոչ համագործածական բառեր, **ըստ կենսունակության** կամ **գործածականության**²³՝ գործուն և չգործուն (ոչ գործուն) բառաշերտ, **ըստ ոճական-արտահայտչական գործածության ու դերի**²⁴՝ միջոճային կամ չեզոք, ժողովրդախոսակցական և գրական-գրքային²⁵:

Հայոց լեզուն, սերելով հնդեվրոպական հիմք լեզվից, ժառանգորդաբար վերցրել է այդ լեզվի բառապաշարի մի մասը: Միաժամանակ պատմական զարգացման ընթացքում հայերենը, մշտապես շփումների մեջ լինելով այլ լեզուների հետ, կատարել է փոխառություններ, հարստացրել բառապաշարը: Մեր լեզվի բառա-

¹⁹ Տե՛ս Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու. Բառագիտություն, Եր., 1993, էջ 125-228:

պաշարի ծագումնաբանության մասին հավաստի տեղեկություններ է տալիս Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ը²⁰: Ըստ այդ բառարանի տվյալների՝ հայերենն ունի մոտավորապես 11 000 բառարմատ, որոնցից 2221-ը՝ անվավեր (անստույգ), 5095-ը՝ մեկնված, 4015-ը՝ փոխառյալ, իսկ 3680-ը՝ չմեկնված: Ծագումնաբանական տեսակետից, ինչպես վերն ասվեց, բառապաշարը բաժանվում է մի քանի խմբերի՝ 1. բնիկ հայերեն բառեր, 2. ստացվածքային բառեր, 3. փոխառություններ:

Բ.1.1. Բնիկ հայերեն բառեր: Հնդեվրոպական հիմք լեզվից սերված արմատներից կազմված բառեր են, որոնք ձևավորում են հայոց լեզվի բառապաշարի հիմնական շերտը: Ծագումնաբանական տեսակետից ամենահին բառերն են, աչքի են ընկնում գործածության մեծ հաճախականությամբ: Հնդեվրոպական արմատների թիվը հասնում է մոտ 1000-ի: Բնիկ հայերեն բառերի շերտը մարդու կյանքի և գործունեության հիմնական ոլորտներին, մարդուն անմիջականորեն առնչվող իրողություններին վերաբերող բառեր են, անվանում կամ նշանակում են մարդու մարմնի մասեր (աչք, ականջ, կոկորդ, մարդ ևն), բնության առարկաներ ու երևույթներ (առու, լույս, արև, գետին, ձյուն ևն), կենդանիների անուններ (հավ, աքաղաղ, կով ևն), ազգակցություն, արհեստ, արվեստ, շինարարություն և նման բնագավառներին վերաբերող իրակություններ (դուստր, որդի, հայր, արտ, բերք, կամուրջ, դարբին, դուռ ևն), մարդու կյանքին ու կենցաղին վերաբերող սովորական երևույթներ (զնալ, խոսել, երգել, ասել, իր, բան, կարդալ, ապրել) ևն: Առանձին խումբ են կազմում **բնածայնական բառերը**, որոնք բնության ծայների նմանողությամբ առաջացած բառեր են (գրընգ, չըխկ, խշշալ, շշուկ, ֆշշոց, տզզալ, կչկչալ, ծվվալ, մլավել ևն) և ըստ էության իրենց նմաններն ունեն գրեթե բոլոր լեզուներում կամ ունեն ընդհանրություններ այլ լեզուների նույն բառաշերտին պատկանող բառերի հետ:

Բ.1.2. Ստացվածքային բառեր: Այն բառերն են, որոնք մասնագիտական գրականության մեջ արժանահավատ ստուգաբանության չեն ենթարկվել, կամ որոնց ծագման վերաբերյալ կան էական տարակարծություններ: Դրանք անվանում են կենդանիներ, բույսեր, գործիքներ, ընտանիք և ընտանեկան հարաբերություններ ևն, ինչպես՝ **նժույգ, սոխակ, ճայ, ծաղիկ, բարդի, բանջար, աթոռ, պարան, աներ, զոքանչ, պատանի, կույս, հաց, հունձ, ագահ, ուղեղ** ևն:

Բ.1.3. Փոխառություններ և օտարաբանություններ: Մի ժողովրդի լեզվից գրավոր կամ բանավոր ճանապարհով մեկ այլ ժողովրդի լեզվին անցած բառերն են: Հայերենը, ինչպես ցանկացած լեզու, փոխառություններ է կատարում իր զարգացման ամբողջ ընթացքում, բոլոր փուլերում: Ըստ այդմ՝ առանձնացնում են **հնագույն, հին և նոր ու նորագույն փոխառություններ**: Հին հայերենը փոխառություններ է կատարել՝ **• իրանական լեզուներից՝** ազգ, ազատ, աշխարհ, ատրճանակ, բարձ, գույն, դաշտ, դատ, դատավոր, դրախտ, դրամ, հազար, պանիր, ոստիկան, վարդ, փող, **հատուկ անուններ՝** Անահիտ, Արշակ, Արտակ, Արտավազդ, Շահեն, Սուրեն, Վահագն, Վարդան ևն, **• ասորերենից՝** արեղա, դար, հեթանոս, շաբաթ, տեղ, ուրբաթ, քահանա, **հատուկ անուններ՝** Աբգար,

²⁰ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 2-րդ հրատ., հ. I-IV, Եր., 1971-1979:

Եղիշե, Շամիրամ, Շուշան, Սարգիս ևն, • **հունարենից՝** ադամանդ, ամբիոն, եկեղեցի, կանոն, կրկես, հյուպատոս, մեղեդի, նոտար, **հատուկ անուններ՝** Բարսեղ, Հեղինե, Մինաս, Պետրոս, Սուքիաս ևն, • **արաբերենից՝** թաս, լոբի, կողպեք, հաշիշ, մզկիթ ևն:

Նոր և նորագույն փոխառություններ հայերենը կատարում է **ռուսերենից և եվրոպական լեզուներից**. դրանք բառեր են, որոնք բացակայում են հայերենի նախորդ փուլերում և գործածվում են նոր հայերենում: Նորագույն փոխառություններ են վերջին տասնամյակներում հայերենին անցած բառերը, օրինակ՝ **աերոբուս, բակալավր, բայքեր, բիրժա, բրաուզեր, բրենդ, գոլֆ, եվրո, դելֆինարիում, լոբբիզմ, կոալիցիա, մագիստրոս, ֆիթնես** ևն:

Փոխառությունները լինում են **անմիջական և միջնորդավորված**: Երկրորդները փոխառու լեզվից փոխառու լեզվին են անցնում այլ լեզվի միջնորդությամբ: Հայերենը այդպիսի փոխառություններ է կատարել հատկապես ռուսերենի միջնորդությամբ՝ եվրոպական լեզուներից, ինչպես՝ **ասամբլեա, բանկ, բենզին, գեներալ, գրամ, դիպլոմ, դուլար, դոկտոր, էլեկտրոն, կադր, պլան, պրոտոն, պոեմ, ռադիո, տեխնիկա, ֆակուլտետ** ևն:

Փոխառությունները լինում են **անհրաժեշտ և անհարկի**: Առաջինները փոխառվում են բառապաշարի համալրման իրական պահանջով, երկրորդները իրենց համարժեքներն ունեն փոխառու լեզվում: Դրանց մի մասը ինչ-ինչ առավելությունների շնորհիվ (կարծություն, բարեհնչունություն, արտադրողականություն ևն) կարող է գոյության իրավունք ձեռք բերել, որոշ ժամանակահատված զուգահեռ գործածվել, մրցել փոխառու լեզվի համարժեքների հետ, ինչպես՝ **ալիբի** // այլուրեքություն, **ակադեմիա** // կաճառ, **ավիաբազա** // օդահենակետ, **աուդիտ** // հաշվեստուգում, **էֆտանագիա** // բարեսպանություն, **ժուռնալիստիկա** // լրագրություն, **կոմունիստ** // համայնավար, **կրիմինալիստիկա** // քրեագիտություն, **օբյեկտիվ** // առարկայական ևն: Սրանք կոչվում են **մրցորդ փոխառություններ**. Եթե հաղթում են, անցնում են հիմնական բառապանդ:

Վերջին տարիներին շատ բառերի հայերեն համարժեքները ավելի գործածական են դարձել, ինչպես՝ **գրոսաշրջություն** – տուրիզմ, **լրագրող** – ժուռնալիստ, **համոյթ** – անսամբլ, **նվագավար** – դիրիժոր, **երգահան** – կոմպոզիտոր, **տնտեսություն** – էկոնոմիկա ևն:

Փոխառյալ բազմաթիվ բառերի համար հայերենում փոխարինիչ համարժեքներ ստեղծված են, սակայն դրանք առայժմ տարածված չեն և չունեն գործառական ակտիվություն, այդպիսի բառերից են, օրինակ՝ **արժենիշ** (կրեդիտ), **արժենվազում** (դևալյուացիա), **արտադրաբանություն** (տեխնոլոգիա), **բախումնաբանություն** (կոնֆլիկտոլոգիա), **գեղարարություն** (դիզայն), **համարկում** (ինտեգրում), **հանր-օդանավ** (աերոբուս), **ճեպամրցում** (բլից–տուրնիր), **քրեաբանություն** (կրիմինալոգիա), **օդաուժաբանություն** (աերոդինամիկա) ևն: Ժամանակը կորոշի՝ սրանք կդառնան համագործածական բառեր, թե՛ դուրս կմնան լեզվի բառապաշարից:

Օտար բառերի՝ հայերեն համարժեքներով փոխարինումը սովորաբար չի վերաբերում այդ բառերի տերմինային գործածությանը: Օր.՝ քիմիայում **ռեժիմ** և

ռեակցիա տերմինները գործածվում են անթարգմանաբար: **Մոդուլ** բառը հայերեն երկու թարգմանությունների կողքին (1. Բացարձակ մեծություն..., 2. Գործակից...) իմաստի նեղացմամբ (3. Ելակետային ընդհանուր միավոր ծառայող չափ կամ թիվ) շարունակում է պահպանվել թվերի տեսության, ճարտարապետության, մեքենաշինության մեջ՝ որպես տերմին:

Ծան.: **Կոլտուրա** բառը **մշակույթ**–ով է փոխարինվում, երբ խոսքը **հոգևոր մշակույթի** մասին է, կամ երբ նկատի է առնվում նվաճումների մակարդակը որոշակի հասարակարգում՝ **եզիպտական մշակույթ, սոցիալիստական մշակույթ:** **Կրթվածություն, դաստիարակվածություն** իմաստով այդ բառը փոխարինվում է **կիրթ, բարեկիրթ** բառերով՝ **կիրթ** (բարեկիրթ) **մարդ:** Երբ նշանակում է որևէ **բույսի մշակում, բուծում**, փոխարինվում է **մշակաբույս** բառով՝ **գյուղատնտեսական մշակաբույսեր, գարնանացան մշակաբույսեր** են: Նմանապես **կվարտետ**–ի փոխարեն գործածվում է **քառյակ**–ը, իսկ երաժշտական ստեղծագործության տեսակ նշանակությամբ՝ **քառերգ**–ը:

Անհարկի փոխառությունները, որոնք փոխառու լեզվում գործածվում են առանց հաղորդակցական անհրաժեշտության, կարող են կիրառվել ոճական նպատակներով՝ խոսքին զանազան արտահայտչական երանգներ տալու համար (այդ մասին կխոսվի իր տեղում): Դրանք կոչվում են **օտարաբանություններ:** Օտարաբանությունները իրենց համարժեքներն ունեն փոխառու լեզվում, և դրանց գործածությունը չի հանձնարարվում գրական լեզվում: Օտարաբանություններ են, օրինակ (փակագծերում տրված են հայերեն փոխարինիչները)՝ **ալտերնատիվ** (այլընտրանքային), **դիվիդենտ** (շահաբաժին), **գրանտ** (դրամաշնորհ), **ինտերնետ** (համացանց), **կոլեգա** (գործընկեր), **կոնցեպցիա** (հայեցակարգ), **միտինգ** (հանրահավաք), **պրոցես** (գործընթաց // ընթացք), **պրոբլեմ** (խնդիր // հիմնախնդիր), **ռեգիոն** (տարածաշրջան), **ռեզլամենտ** (աշխատակարգ) են:

Օտար բառի գործածությունը պետք է նպատակային լինի, այսինքն՝ անհրաժեշտությամբ պայմանավորված: Եթե հայերեն համարժեքի համեմատությամբ օտար բառը ոչինչ չի հավելում, չունի նրբիմաստներ, տերմինային նշանակության ինչ–ինչ առավելություններ, ապա այդ բառի գործածությունը ավելորդ է, անտեղի: Օր.՝ **վարկանիշ** հայերեն համարժեքն արտահայտում է անգլերեն **ռեյտինգ** (rating) բառի բուն բովանդակությունը, այն է՝ առարկային, խմբին, անհատին, ձեռնարկությանը տրվող գնահատություն: Հետևաբար հայերեն տարբերակի գործածությունը նախընտրելի է: Կամ՝ դիվանագիտական փաստաթղթերում ընդունված է ֆրանսերեն **ագրեման** (**agreement**) բառի գործածությունը. հայերեն համարժեքն է՝ **համաձայնություն:** Գործածության մեջ հայերենը արտահայտում է հասկացության բովանդակությունը, իմաստային որևէ շփոթ չի ստեղծում և, ի տարբերություն օտարալեզու տարբերակի, միանգամայն ընկալելի է հայ ընթերցողի համար: Ինչպես՝ «Դեսպանը նկալ երկրի կառավարությունը **ագրեմանի** (⇒**համաձայնության**) հարցումն ստանալուց հետո քննարկում է...», «Նստավայր պետությունը պարտավոր չէ հավատարմագրող պետությանը հայտնել **ագրեման** (⇒**համաձայնություն**) տալու մերժման դրդապատճառները»:

Մինչև վերջերս փոխառություն համարվող մի շարք բառեր այսօր արդեն դիտվում են որպես օտարաբանություններ, քանի որ ունեն իրենց հայերեն համարժեքները, օր.՝ **վգիտացիա** – քարոզչություն, **ամնիստիա** – համաներում, **դիվիդենդ** – շա-

հարաժին // շահութաբաժին, **իդենտիֆիկացիա** – նույնականացում, **ինաուգուրացիա** ձեռնադրում, պաշտոնակալում, երդմնակալություն են:

Հայերենը առավելապես փոխառու լեզու է: Սակայն այլ ժողովուրդների հետ ունեցած կապերի ու հարաբերությունների ընթացքում հայերենը ինքն է բառեր փոխանցել այլ լեզուների: Հ. Աճառյանի վկայությամբ՝ հայերի և կովկասյան մյուս ժողովուրդների լեզվում «հասարակաց» համարվող շուրջ 900 բառերի «մեծ մասը» հայերենից անցած բառեր են՝ պայմանավորված այդ ժողովուրդների վրա հայկական քաղաքակրթության ուժեղ ազդեցությամբ²¹: Հայերենից կամ հայերենի միջնորդությամբ այլ լեզուների (վրացերեն, քրդերեն, պարսկերեն, ռուսերեն, թուրք թաթարական լեզուներ են) փոխանցվել են հատկապես հայ կյանքը, կենցաղը, հավատալիքները բնորոշող բառեր՝ **աղյուս, ավել, գութան, գույն, գերան, գերանդի, եղան, խաչ, կաճ** (թաղիք), **կիր, մածուն, մանգաղ, յուղ, նուշ, պղինձ, տաճար, տաշտ, տափան, տավար** են:

Լեզվի բառապաշարի հիմնական շերտը կազմող ընդհանուր գործածական (համագործածական) բառերի կողքին առանձին խումբ են, այսպես կոչված, գործառական քիչ հաճախականություն ունեցող բառերը՝ **նորաբանություններ, հնաբանություններ, բարբառային-խոսակցական բառեր** են:

Ժամանակի ընթացքում լեզվի բառապաշարը հարստանում է նոր բառերով ու բառիմաստներով: Դրանք ունեն ընդհանուր անվանում՝ նորաբանություններ: Այլ կերպ ասած՝ նորաբանությունները և նոր ստեղծված բառերն են՝ **նորակազմությունները**, և արդեն գործածության մեջ եղած բառերի նոր իմաստները՝ **իմաստային նորաբանություններ**: Լայն առումով՝ նորաբանությունները ընդգրկում են նաև քերականական կառույցները:

Դժվար է հստակ սահման գծել ընդհանուր գործածական և նոր բառերի միջև: Նոր հայկազյան բառարանը («Նոր բառգիրք հայկազեան լեզուի»՝ 1836–1837) ներառում էր մոտ 51 000 բառ, Ստ. Մալխասյանցի բառարանը (1944–1945)՝ 120 000 բառ և դարձվածքային միավոր, իսկ Էդ. Աղայանի բացատրական բառարանը (1976)՝ 135 000 բառ և 11 000 դարձվածքային միավոր: Վերջին բառարանը մոտ 26 000–ով ավելի բառային միավոր է պարունակում, քան նախորդը: Եվ բառերի այդ քանակը ավելացել է ընդամենը չորս տասնամյակի ընթացքում: Իսկ վերջին երեք տասնամյակում հայոց լեզվի բառապաշարը հարստացել է տասնյակ հազարավոր նոր բառերով ու բառիմաստներով (չհաշված Էդ. Աղայանի բառարանում բաց թողած բառերը): Բառապաշարի արագ հարստացման հիմնական պատճառներն իհարկե քաղաքական ու տնտեսական զարգացումներն են, փոխադարձ շփումները այլ ժողովուրդների և այլ լեզուների հետ: Բայց դրա կարևոր նախապայմաններից է նաև լեզվի ներքին հնարավորությունների կիրառումը:

Նոր ստեղծված բառերը, եթե շատ են գործածվում, արագ հնանում են և անցնում ընդհանուր գործածական բառերի շարքը: Այդ իսկ պատճառով երբեմն դժվար է

²¹ Տես Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, Եր., 1973, էջ 206: Հարցի մասին ավելի մանրամասն տես Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993, էջ 174–176:

կողմնորոշվել՝ գործ ունենք նոր բառի հետ, թե՛ արդեն ընդհանուր գործածական բառի: Օր.²² մոտ անցյալում նորաբանություններ էին համարվում **գործընթաց, հայեցակարգ, հավելավճար, մարզահամալիր, նստաշրջան, շարժասանդուղք, ստուգայց, վարչակարգ, փոխվարչապետ** և նման բազմաթիվ այլ բառեր: Այսօր դժվար է պնդել, որ դրանք նորաբանություններ են: Ընդունված է դրանք կոչել **նոր բառեր**²²: Պայմանականորեն նորաբանություններ կարելի է դիտել վերջին մեկ-մեկուկես տասնամյակում ստեղծված և գործածության մեջ մտած բառերը:

Բ.1.4. Նորակազմություններ: Դրանք երբեմն անվանում են նաև **բառային նորաբանություններ**: Սակայն այս բնորոշումով սովորաբար նկատի են ունենում նաև փոխառյալ նորաբանությունները, մինչդեռ բուն նորակազմությունները իրենց արտաքին հնչյունական կազմով նոր բառերն են: Նորակազմությունների առաջացման աղբյուրները բազմազան են: Դրանք նախ և առաջ բառակազմական գործող կաղապարներն են՝ **բառաբարդում, ածանցում, հապավում, ինչպես նաև բառապատճենում**:

Բառաբարդում ասելով՝ հասկանում ենք արմատների կցումով կազմվող նոր բարդությունները: Այդ ճանապարհով այսօր առավելապես կազմվում են հողա-կապով բարդություններ կամ ընդհանրապես իսկական բարդություններ, նաև բարդ ածանցավոր բառեր, ինչպես՝ **գագաթաժողով, դատախոս, դատաձգաբանական, դիպաշար, պատկերամուտ** (սկաներ), **վեհաժողով, տեսաձայնագրառում, օգտատեր** ևն: Քիչ են կազմվում անհողակապ բարդություններ՝ **այլընտրանքային** (այլտերնատիվ), **անկարգել** (պարաշյուտ), **գործառնություն** (օպերացիա), **գործարկ** (օֆերտա), **դեսպանընկալ, թոչնախտ, հայօգուտ**:

Նոր բառերի ստեղծման մեջ առավել ակտիվ դեր ունի ածանցումը: Բնականաբար հիմնականում կիրառվում են գործուն կամ կենսունակ ածանցները՝ **ան-** (անդիմագիծ, անհայ), **համ(ա)-** (համընկալում, համաքաշ), **-անի** (վարչանի), **-անք** (արգելանք), **-ային** (ուժային), **-ական** (կառուցողական), **-իչ** (բազմարկիչ, կրիչ, դասիչ), **-որեն** (քրեորեն), **-ություն** (ինքնիրավչություն, համատիրություն), **-ուհի** (նախարարուհի, գեղալուղուհի), **-ույթ** (տեղեկույթ, հալույթ) ևն:

Ածանցումով շատ բառեր են կազմվում **նաև փոխառյալ բառահիմքերից**, օր.²² **ալերգ** + ա + բան, **լիբերալ** + ազ + ում, **լիզինգ** + ային, **լինգաֆոն** + ային, **լիցենզ** + ավոր + ել, **լոբբիստ** + ական, **հակա** + **կոռուպցիոն**, **մագիստրոս** + ական, **օֆշոր** + ային ևն: Բառաբարդման մի տեսակ է նաև **հապավումը**, որը վերջին տարիներին քաղաքական և տնտեսական նոր իրադրության պայմաններում լայն գործածություն ունեցավ, ինչպես՝ **Հայխնայրանկ, ՀայՌուսագազարդ, Եվրաբանկ, ԵԱՀԽ, ՀԱՊԿ** ևն:

Լեզվի բառապաշարը հարստանում է նաև բառապատճենման միջոցով, ինչպես՝ **биоприминология** (հուն. **bios** – կյանք + լատ. **crimen** – հանցագործություն + հուն. **logos** – գիտություն) ⇒ **կենսաքրեագիտություն** ևն: Բառապատճենումները ոչ միայն առանձին **բառեր** են (ամենագնաց – бездход, թեյավճար – чаевые, շուկայագիտություն – marketing), այլև **բառակապակցություններ** (զանգվածային տեղեկատվության միջոցներ – средства массовой информации, բանակցային

²² Տե՛ս Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:

գործընթաց – переговорный процесс, բջջային հեռախոս – сотовый телефон), **դարձվածքներ** (երրորդ աշխարհի երկրներ – страны третьего мира, փողերի լվացում – отмывание денег, լողացող կուրս – плавающий курс), **հապավումներ** (Եվրադատարան – Евросуд), Եվրախորհրդարան – Европарламент, Եվրամիություն – Евросоюз) ևն:

Իմաստային նորաբանություններ. արդեն գործածության մեջ եղած բառերի նոր իմաստներն են: Օր.[՝] **թափանցիկ** բառն ունի բառարանային 13 իմաստ՝ «Որի միջով լույսը թափանցում է, լուսանցիկ», «Որի միջով կարելի է տեսնել մյուս կողմի առարկաները», «Նոսր, նուրբ», «Զգայուն, տպավորվող», «Հստակ, վճիտ» ևն: Այս բոլորին, սակայն, վերջին շրջանում ավելացել է ևս մեկ իմաստ՝ «վերահսկելի, արդար», ինչպես՝ «Ամեն ինչ արվում է ընտրությունները **թափանցիկ** դարձնելու համար»:

Իմաստային նորաբանություններ են նաև՝ **ընթերցում** – նախնական դիտարկում, քննարկում (նախագիծն ընդունվեց առաջին **ընթերցմամբ**), **թիրախ** – գործունեության հիմնական ուղղություն, նպատակ (զարգացման հիմնական **թիրախ** ունենալ...), **խողովակ** – ուղի (դիվանագիտական **խողովակներ**), **պատուհան** – հարցի ամբողջական լուծում վարչական մեկ օղակում (մեկ **պատուհանի** քաղաքականություն) ևն:

Իրենց ծագմամբ նորաբանությունները լինում են **հանրական** և **անհատական** (կամ հեղինակային): Առաջինները ձևավորվում են նոր առարկաների, երևույթների, հասկացությունների երևան գալու հետևանքով՝ **անվաշղթա**, **առցանց**, **համացանց**, **ամրագուտի**, **ոտնձգում**, **պնակիտ**, **օդահեն** ևն: Երկրորդները ստեղծում են անհատական, ռճական նկատառումներով, ինչպես՝ **ամպրոպաշունչ**, **հրաբորբոք**, **մայրորեն**, **սիրամբմունջ** ևն:

Հասկանալի պատճառներով առաջին խմբի նորաբանությունները ավելի հաճախ են գործածվում և ավելի շուտ են անցնում համագործածական բառերի շարքը, դառնում ընդհանրական: Երկրորդները ընդհանրաճախ միտում կարող են և չունենալ, ստեղծվում են արտահայտչական նկատառումներով, կատարում են իրենց որոշակի արտահայտչական դերը, և հնարավոր է, որ այլևս չգործածվեն: Սակայն անհատական նորաբանությունների մի մասը (պոտենցիալ՝ ներունակ նորաբանություններ), եթե հաջող կազմություն է և ընդունվում է հասարակության կողմից, կարող է մտնել գործածության մեջ և դառնալ համագործածական: Օր.[՝] գրողների կողմից ստեղծված այդպիսի բազմաթիվ բառեր դարձել են ընդհանուր գործածական, ինչպես Գրիգոր Նարեկացու ստեղծած հետևյալ բառերը՝ **ամենազգաստ**, **անխախտ**, **անկասելի**, **անստեղծ**, **բարեխնամ** ևն:

Անհատական նորակազմությունների մյուս մասը ստեղծվում է ուղղակի նյութի անմիջական թելադրանքով, իրականացնում է հաղորդակցական կամ արտահայտչական գործառույթ և տեսականորեն նախադրյալ չունի դառնալու ընդհանուր գործածական: Այդպիսի լեզվական միավորները կոչվում են **դիպվածային**: Օր.[՝] ամենաբերձ (ԱԻ), սիրատրոփ, սիրաբուխ, սիրասուզ, սիրակայծ, բոցագես, մահադեմ (ՊԴ), անմարդապաշտ, մնացողիկ, սիրայծյամ (ՀՀ), խնդումադեմ, ամենագեղուհի, անձեռնպահ (ԶԽ), **կամ**՝ ակտիվիստուհի, ընտրա-

դաշինք, լրամշակում, իրավաբաններեն, համայնքապատկեր, մաքսամետ (նկատի ունի ԵՏՄ-ն), տոնավաճառք, քրեաթերթիկ, եթերադուլ (մամուլ) ևն:

Անհատական նորակազմությունների գործածությունը արդարացվում է, եթե դրանք ունեն արտահայտչականություն: Դրանց մի մասը ընդունվելու դեպքում անցնում է բառարան և ստանում ընդհանուր գործածության իրավունք, ինչպես հետևյալները՝ **ընտրադաշինք, ընտրախախտում, ընտրակաշառք, ընտրակեղծիք, համայնքապատկեր, ապակուսակցական, մաքսամետ, ոսկեհուր, ոսկեվառել, վշտակոծ** ևն:

Նոր բառեր ստեղծելու համար լեզվական ճաշակ ու զգացողություն է պետք: Հաճախ նոր ստեղծված ոչ միայն դիպվածային բառերը, այլև հանրական նորակազմությունները չեն գոհացնում հասարակության լեզվական պահանջները և դուրս են մնում գործածությունից: Օր.՝ ի տարբերություն Մ. Աբեղյանի ստեղծած մի շարք հաջող կազմությունների, այդպես էլ հայերենի բառապաշար չանցան նրա իսկ կերտած ռազմական առանձին տերմիններ՝ **ծիգ** (выстрел), **բաժնյակ** (дивизион), **ինքնեկ** (автомат), **մեկնագեն** (партизан): Անհաջող նորակազմություններ են նաև հետևյալները՝ **ավարտագիր** (= դիպլոմ), **կորիզաբան** (= ատոմագետ), **կորիզային բնագիտություն** (= միջուկային ֆիզիկա), **հանրակառք** (= տրամվայ), **հրասայլ / մարտասայլ** (= տանկ), **հրասայլավոր / հրասայլորդ** (= տանկիստ) ևն:

Բ.2. ՏԵՐՄԻՆՆԵՐ: Տերմինը (լատ. **terminus**՝ սահման, եզր) բառ կամ բառակապակցություն է, որը ճշտորեն արտահայտում է գիտության, տեխնիկայի, արվեստի, հասարակական կյանքի որևէ բնագավառի որոշակի հասկացություն: Ունի հետևյալ բնութագրական գծերը՝ 1. Հասկացության անուն է: 2. Իմաստը ճշգրտորեն սահմանելի է: 3. Բովանդակային պլանը միշտ ձգտում է մեն-իմաստության. տերմինների մեծ մասը մենիմաստ է: Ընդհանուր գործածական բառերի մի մասը բազմիմաստ է: 4. Հիմնականում գոյականական արտահայտություն ունի. կան խոսքի մասեր, որոնք տերմինային արժեք չեն կարող ստանալ, որովհետև հասկացություններ չեն, թերիմաստ կամ սպասարկու բառեր են (օր.՝ կապը, շաղկապը, վերաբերականը, ծայնարկությունը). բայական տերմինները ունեն գոյականացման միտում՝ լսել – **լսում**, ներել – **ներում**, մերժել – **մերժում**: 5. Ձերժ է հուզագգացական երանգավորումներից, իբրև կանոն՝ չի ունենում իր հոմանշային տարբերակը, սովորաբար չի գործածվում ոճական–արտահայտչական նշանակությամբ:

Տերմինները գործածվում են **տերմինային համակարգերում**: Դրանք ձևավորվում են ըստ գիտության և հասարակական կյանքի տարբեր բնագավառների՝ մշակույթ, միջազգային հարաբերություններ, քաղաքականություն, սպորտ, զանազան մասնագիտություններ ևն: Դրանցից յուրաքանչյուրն ունի տերմինաբանական իր ենթահամակարգերը՝ գիտության ամենատարբեր ճյուղերը, հասարակական կյանքի տարբեր ոլորտները ևն: Դրանց միջև, սակայն, խիստ անջրպետ չկա: Կան տերմիններ, որոնք գործածվում են ամենատարբեր ոլորտներում կամ տերմինաշերտերում: Օր.՝ **արմատ** բառը տերմինային զանազան

իմաստներով գործածվում է մաթեմատիկայում, լեզվաբանության մեջ, կենսաբանության որոշակի ճյուղերում, **սեռ** տերմինը՝ լեզվաբանության, մարդաբանության մեջ, **իմունիտետ**–ը՝ իրավագիտության, դիվանագիտության և բժշկագիտության մեջ, **նյութ**–ը՝ իրավաբանության մեջ, քիմիայում, լրագրության ասպարեզում և այլուր:

Ասվեց, որ տերմիններին բնորոշ է հոմանշությունը, և տերմինային հոմանշության մասին խոսելիս այն հստակորեն պիտի առանձնացնել ընդհանուր բառագիտական հոմանշությունից: «Իմաստային նրբություններով տարբերակում լինել չի կարող, որովհետև տերմինը պետք է որոշակիորեն տարբերակված հասկացություն արտահայտի հասկացությունների ամբողջ համակարգի մեջ. եթե տվյալ իմաստային տարբերությունը մի տարբեր հասկացություն է արտահայտում տվյալ տերմինահամակարգում, ապա մենք գործ ունենք ոչ թե իմաստային նրբերանգի հետ, ոչ թե տերմինային նույնիմաստության հետ, այլ պարզապես ունենք տարբեր տերմիններ»²³:

Այսպես, օրինակ՝ չկանոնարկված խոսքում **կողոպուտ**, **գողություն**, **ավազակություն** բառերը հոմանիշներ են: Ըստ հոմանիշների բառարանի՝ դրանք իրենց առաջին՝ հիմնական նշանակությամբ նույնիմաստ բառեր են. «**ԳՈՂՈՒԹՅՈՒՆ**. 1. **Կողոպուտ, թալան, կողոպտություն, հափշտակություն, ավազակություն**»²⁴: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգիրքը դրանց համար տալիս է իրարից էապես տարբեր ձևակերպումներ: Իսկ դա իր հերթին հանցագործության այդ տեսակների համար ենթադրում է միանգամայն տարբեր պատիժներ՝ տարբեր հոդվածներով: Պատկերացում տալու համար քրեական օրենսգրքից մեջբերենք հոդվածների առաջին մասերը.

Հոդված 175. Ավազակությունը

1. **Ավազակությունը՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը**, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Հոդված 176. Կողոպուտը

1. **Կողոպուտը՝ ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը**, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 177. Գողությունը

1. **Գողությունը՝ ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը**, զգալի չափերով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով²⁵:

²³ Է. Աղայան, Տերմինագիտություն, Եր., 1978, էջ 47:

²⁴ Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2009:

²⁵ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք», Եր., 2009, էջ 91–92:

Ինչպես տեսնում ենք, իրավաբանական տերմինային համակարգում նշված երեք բառերը ակնհայտորեն տարբեր տերմիններ են:

Տերմինների առաջացման ուղիները տարբեր են: Հայերենում կարելի է առանձնացնել հետևյալները.

1. **Բառակազմական միջոցներ:** Հայերենի տերմինաբանության հարստացման հիմնական աղբյուրն է: Բառակազմական գործող կաղապարներով հայերենում ստեղծվել են հազարավոր տերմիններ: Բերենք մեկ-երկու օրինակ: **Քրեագետ, քրեածին, քրեական, քրեաբանություն, քրեորեն** իրավաբանական տերմինները բառաբարդմամբ և կամ ածանցմամբ կազմվել են հնում գործածական **քուրայ** հիմք բառից, որը սկզբնապես նշանակել է «Հալոց. բովք. վառարան հնոցի», մետաղ հալեցնելու տեղ: Նմանապես՝ **իրավ (իրաւ)** բառակազմական հիմքից կազմվել են իրավաբանական տասնյակ տերմիններ. ծագել է **իր** (բան, մի բան) բառից, որի գրաբար գործիական հոլովն է **իրաւ** (հոգն. գործ.՝ **իրաւք (իրօք)**): Գրաբարում **իրաւ**-ը ուներ ինքնուրույն գործածություն և նշանակում էր **արդարացիորեն, հավաստյալ, իրավամբ** («Անիրաւն իբրեւ արժանի արդարացաւ, եւ իրաւն իբրեւ զախոյեան ստացաւ»): Այսօր գործածվում է **մակբայական** (իսկապես, արդարև) և **ածականական** (իսկական, արդար, արդարացի) նշանակություններով: Բառակազմական կենսունակ բաղադրիչ լինելով՝ դեռևս գրաբարում բաղադրել է բազմաթիվ բառեր՝ **իրաւաբանութիւն, իրաւաբեր, իրաւադատ, իրաւադատութիւն, իրաւագիտութիւն, իրաւական, իրաւախօս, իրաւարար, իրաւարարութիւն** ևն:

2. **Բառիմաստի փոփոխություն:** Համագործածական բառը վերածվում է տերմինի. տեղի է ունենում բառիմաստի նեղացում, օր.՝ **բազմություն, գիծ, կետ, հանում, հարթություն, շոշափող** (մաթեմատիկա), **ընտրություն, ժողով, խորհուրդ, կառավարում, ներկայացուցիչ** (քաղաքագիտություն), **ծառայություն, հյուրընկալ, նստավայր, սուրհանդակ, օղակ** (դիվանագիտություն), **բողոք, գողություն, գործ, ներում, վկա, վճիռ, սպանություն** (իրավագիտություն), **արծաթ, թթու, ջուր, մետաղ** (քիմիա) ևն: Տեղի է ունենում նաև հակառակ գործընթացը. իրենց հերթին տերմինները կարող են վերածվել համագործածական բառերի, ինչպես՝ **բռնարարք, ինքնիշխան, համակարգիչ, խճանկար, հեռախոս, հեռատեսություն, ռոմանտիկ, վայրէջք** ևն:

3. **Փոխառություններ:** Հայերենի տերմինային կազմի հարստացման հիմնական աղբյուրներից մեկն է: Հայերենը այլ լեզուներից փոխառել է գիտության տարբեր բնագավառներին վերաբերող հազարավոր տերմիններ՝ **ինտեգրալ, կիբեռնետիկա, կոնգրես, մարքսիզմ, նեոռոմանտիզմ, սենատ, վոլտ, քվանտ** ևն: Վերջին շրջանում փոխառված տերմիններ են՝ **ալյանս** (միություն, դաշինք), **ֆեյսբուք** (դիմագիրք), **կոալիցիա** (պետությունների, կուսակցությունների միավորում՝ ընդհանուր նպատակների շուրջ), **կոլեգիալ** (համավար), **կոնսենսուս** (միաձայնություն), **պարիտետ** (հավասարիրավություն) ևն:

4. **Գրաբարից և միջին հայերենից փոխանցված բառեր:** Հնից եկած բառերն ու բառաձևերը տերմինացման են ենթարկվում նույն իմաստներով կամ, որ ավելի հաճախադեպ է, իմաստափոխությամբ, ինչպես՝ **քարտեզ** նշանակել է մագաղաթի

կամ թղթի կտոր, նամակ, հրովարտակ, գիրք, մատյան, **արքանյակ՝** ժիր սպասավոր, պատանյակ, համբակ, ծառա, պաշտոնյա, **օղաչու՝** օղախաղաց, օղագնաց («որ չու է ընդ օղս»), **օղապարիկ՝** օղագնաց («Որ պարէ ընդ օղս»), **գնացք** («իբր ճնմելիք, ընթացք վարուց և գործոց») ևն:

5. **Բարբառային բառեր:** Դրանց տերմինացումը կենսունակ միջոց չէ և հիմնականում հանդիպում է որոշակի ոլորտներում՝ գյուղատնտեսություն, բժշկագիտություն, արհեստագործություն ևն՝ **այգեբաց, այգեէտ, աշնանացան, սղոց, գերանդի, մանգաղ, բահ, էտել, կանաչ կապ, դեղնախտ, կարմուկ, կարմիր քամի** ևն²⁶:

Բ.3. ԲԱՌԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՍԽԱԼ ԸՆԿԱԼՈՒՄ: Բառի սխալ գործածության պատճառ կարող է դառնալ բառի կազմության չիմացությունը՝ բառապատկերի անճիշտ ընկալումը: Այսպես՝ **սնանկանալ** բառը կազմվել է **սնանկ** ածականից (ստուգաբանորեն՝ **սին**–փուչ, դատարկ, **անկ**–ընկած) + **ան** + **ալ** բայականական կաղապարով և նշանակում է **սնանկ դառնալ**՝ նյութական միջոցներից զրկված լինել ևն: Բայականությունը այս դեպքում չի ուղեկցվում հնչյունափոխությամբ, հետևաբար՝ ոչ թե **սննկանալ**, այլ **սնանկանալ**:

Պատճեն բառի ն վերջնահնչյունը թյուրիմացաբար ընկալվում է իբրև որոշիչ հոդ, և բառը ստանում է **պատճե** սխալ ձևը: Նմանապես՝ **արդուկել**–ը դառնում է **հարթուկել** (կապվելով **հարթ** բառի հետ), **հոգաբարձու**–ն՝ **հոգեբարձու** (կապվելով **հոգի** բառի հետ), **մտացածին**–ը՝ **մտածածին** (կապվելով **մտածել** բայի հետ) ևն:

Այսօրինակ սխալի պատճառներից մեկն էլ մի բառի ձևի անհարկի նմանեցումն է (համաբանությունը) մեկ այլ բառի: **Տարեկան** բառի նմանողությամբ, որում առկա է **ի** + **ա** → **ե** հնչյունափոխությունը՝ **տարի** + **ական**, շատերը սխալ են կազմում և աղավաղված պատկերով են գործածում **ամիս** և **օր** բառերի՝ **–ական** ածանցով բաղադրված ձևերը՝ **ամսեկան, օրեկան**: Դրանցում, հասկանալի է, վերը նշված հնչյունափոխությունը բացառվում է: Հետևաբար ճիշտ ձևերն են՝ **ամսական** (= **ամիս** + **ական**), **օրական** (= **օր** + **ական**):

Ծան.1: Հայերեն **–ցի**, **–ացի**, **–եցի** ածանցներով կազմված տեղաբնակ նշանակող գոյական անունների զուգահեռ ձևերի մասին գրական հայերենում գործում են որոշակի կանոններ, որոնց համաձայն՝ *ճիշտ են համարվում սպորտ նշված փորձերականներից առաջինները՝ արևելցի*–արևելքցի, *աշտարակցի*–աշտարակեցի, *շիրակցի*–շիրակեցի, *եղեգնածորցի*–եղեգնածորեցի, *սևանցի*–սևանեցի, *ալժիրցի*–ալժիրեցի, *լատվիացի*–լատվացի, *կոլումբիացի*–կոլումբացի, *էջմիածնեցի*–էջմիածնիցի, *հաճնեցի*–հաճնիցի, *պերուեցի*–պերուցի, *սոմալիեցի*–սոմալացի ևն: Իսկ ներքոնշյալ ձևերից առաջարկվում է առավելություն տալ առաջիններին՝ **գորիսցի**–գորիսեցի, **ֆրանսիացի**–ֆրանսացի, **ավստրիացի**–ավստրացի, **փարիզցի**–փարիզեցի ևն: Ավանդական կազմությունները պահպանվում են՝ **Շիրակացի**,

²⁶ Տերմինների և տերմինաբանության մասին տե՛ս Էդ. Աղայան, Տերմինագիտություն, Եր., 1978: Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999:

Կողբացի, Օծնեցի, Սևանեցի, Խաչենեցի, Կապանեցի, Տաթևացի, Տարոնացի, Երուսաղեմացի ևն²⁷:

Ծան. 2: Անհողակապ բարդությունները երբեմն կարող են ունենալ շփոթության տեղիք տվող համանուն բառակապակցություններ՝ **այսօր** – **այս օր**, **կեսգիշեր** – **կես գիշեր**, **տանտեր** – **տան տեր**, **ոսկեօղ** – **ոսկե օղ**, **խորիմաստ** – **խոր իմաստ**, **ութանկյուն** – **ութ անկյուն**, **հեքիաթասաց** – **հեքիաթ ասաց**, **հինգհազարանոց** – **հինգ հազարանոց** ևն: Օր.՝ «Դե ինձ համար **մեծ արժեք** ունի», բայց՝ «Նրա մոտ գնաց **մեծարժեք** նվերներով»: «Բանկը թողարկել է **հինգ հարյուրանոց** և տասներկու հազարանոց հորեյանական մետաղադրամներ», բայց՝ «Թողարկվում են **հինգհարյուրանոց** նոր թղթադրամներ»: Այդ բարդությունների մի մասը համանուն գոյականական բառակապակցություններից առաջացած ածականներ են (քար սիրտ > քարսիրտ՝ «քար սիրտ ունեցող», մեծ արժեք > մեծարժեք՝ «մեծ արժեք ունեցող»):

Բ.4. ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: Ուսումնասիրում է բառի «կյանքը», այն է, թե բառը սկզբնապես ինչ կառուցվածք և իմաստ է ունեցել, հետագայում կառուցվածքային ինչպիսի գարգացումներ է ունեցել, բառակազմական և կամ իմաստային ինչ փոփոխություններ է կրել ևն: Բառի ստուգաբանական վերլուծությունը, բնականաբար, ավելի խոր գիտելիքներ է պահանջում: Շատ բառեր այսօրվա ընկալմամբ պարզ կազմություն ունեն, մինչդեռ ստուգաբանորեն բաղադրյալ են: Օր.՝ **անդունդ** < ան + դունդ (հատակ), **արահետ** < ար (տղամարդ) + հետ(ք), **արծազանգ** (արծազանք) < արծ (անծանոթ է) + գանգ (գանգյուն՝ ձայն, հնչյուն), **այժմ** < այս + ժամ, **դունչ** < ընդ + ունչ, **ընկեր** < ընդ (հետ, միասին) + կեր (ուտել), **ընտիր** < ըն(դ) + դիր (դնել), **թեկուզ** < եթե + կ + ուզե, **լուցկի** < լույց (վառիկ) + կի, **հրդեհ** < հր (հուր) + դեհ (կիզում, այրում), **չակերտ** < չ (չա) + կերտ, **սակայն** < սակ (պայման, սահմանված չափ, կարգ) + այն ևն:

Ստուգաբանությունը «բացահայտում է բառերի (ավելի ճիշտ՝ բառարմատների) նախնական ծագումը, որոշում, թե որ բառերն են, որ հնդեվրոպական հիմք լեզվից են սերում, որ բառերն են, որ այլ լեզուներից են փոխառվել, և որ բառերն են, որ դեռևս ճշտորեն չեն ստուգաբանվել»²⁸: Այսպես, օր.՝ ստուգաբանությունը պարզում է, որ **ատրճանակ** բառը իրանական փոխառություն է և կազմված է **ātur**՝ կրակ, և **jan**՝ զարկել, սպանել բաղադրիչներից, **երիտասարդ** բառը բաղադրված է պիլ. **rētak** (պատանի) և **sard** (տարի) բառերից, նմանապես՝ **դատախազ** < պիլ. դատ + խազ (անհայտ է), **դատավոր** (դատաստան կտրող, նաև իշխան, կառավարիչ) < պիլ. **dātavar**, **կապիտան** < լատ.՝ **capitaneus** (գլխին վերաբերող, գլխավոր), գերմ. **kapitän** (զորահրամանատար), **մայր** < լատ. **major**՝ ավելի մեծ: **Մարդ** (հնիս. **mrtó** ձևից) բառը բնիկ հայերեն բառ է. ստուգաբանորեն կապվում է մեռնել (նշանակում է «մահկանացու») բառի հետ: **Մայր**-ը բնիկ հայերեն բառ է, գալիս է հնիս. **māter** ձևից²⁹:

Ծան. 1: Օտար լեզուներով ստուգաբանվում են շատ տերմիններ: **Դիվանագետ**-ը առաջացել է պահլավերեն **dēvān** (արխիվ) բառից, որ պարսկերենում (**divan**) նշանակել է

²⁷ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 1988, էջ 315–318:

²⁸ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 30:

²⁹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I–IV, Եր., 1971–1979:

նաև ատյան, դատարան, խորհրդարան, նաև ժողովածու՝ «ժողովածոյ գիրք բանաստեղծական երգոց ու տաղից» (օր.՝ Ա. Չոպանեան, «Նահապետ Քուչակի **դիւանը**» (1902)): Գրաբարում գործածվել է դահլիճ (գործերի ընկության), արքունի սրահ, սենյակ, հրապարակ, ատյան, ինչպես նաև գրադարան՝ «Տուն մատենից եւ ուսմանց» նշանակություններով: Հնում գործածական են եղել **դիւան** բառով բաղադրված **դիւանագիր**, **դիւանապահ**, **դիւանապետ** և այլ բառեր: Հետագայում ծեռք է բերել այլևայլ իմաստներ՝ պետական գրագրությունները վարելու տեղ, ազգային կամ հասարակական ժողովի նախագահություն, դատ, արդարադատություն ևն³⁰: **Դիվանագետ**–ը համեմատաբար նոր կազմություն է, որ ժամանակակից հայերենում, իր տերմինային երկու նշանակություններից բացի («1. Կառավարության կողմից լիազորված պաշտոնական անձ՝ ուրիշ տերությունների հետ դիվանագիտական հարաբերություններ վարելու համար: 2. Դիվանագիտության մասնագետ»), ունի նաև փոխաբերական իմաստ՝ «Վարպետ՝ խորամանկ ու ծայրահեղորեն զգուշավոր մարդ, քաղաքագետ, դիպլոմատ»³¹:

Դեսպան (պիլ.՝ *dēspān*) բառը Հայկազյան բառարանում մեկնաբանվում է իբրև պատվիրակ, պատգամավոր երկու իշխանությունների միջև, «միջնորդ բանից ի մեջ տեղութեանց»: Հնում գործածական են եղել դրանով կազմված **դեսպանագնաց լինել**, **դեսպանութիւն**, նոր ժամանակներում՝ **դեսպանական**, **դեսպանատուն**, **դեսպանաժողով**, **դեսպանորդ** ևն: Արդի բառարաններով բացատրվում է որպես «1. Պետության դիվանագիտական ներկայացուցիչ մի այլ երկրում: 2. (հնց.): Պատգամախոս, պատգամավոր»: Ունի նաև փոխաբերական իմաստներ՝ միջնորդ, լրաբեր, սուրհանդակ:

Հյուպատոս (հնում՝ **հիւպատ**, **հիւպատոս**, **հիպատ**, **հիպատոս**, լատ.՝ *consul*, **կոնսուլ**). նշանակել է բղեշխ, իշխան, հրամանատար, փոխարքա, տարևոր (տարեկան, մեկ տարով) գործակալ կամ կուսակալ («Կացուցին հիւպատոս եւ զօրավարս»): Գործածական են եղել դրանով կազմված **հիւպատոսութիւն**, **հիւպատութիւն**, **հիւպատեան**, **հիւպատոսական** և այլ բառեր, համեմատաբար նոր ժամանակներում է ստեղծվել **փոխհյուպատոս**–ը: Արդի հայերենում **հյուպատոս** նշանակում է «Իր տերությունը ներկայացնող և տերության ու նրա քաղաքացիների շահերը պաշտպանող պաշտոնական անձ ուրիշ տերության մեջ»:

Ալիմենտ (< алимент < լատ. *alimentum*. **սնունդ**, **ապրուստի միջոց**), գ. (իրավք.): Ապրուստի միջոց՝ **սննդավճար**, որ ըստ օրենքի տրվում է ընտանիքի առանձին ապրող անաշխատունակ անդամներին խնամակալի կողմից (երեխաներին, կնոջը, ծնողներին):

Բյուջե (< бюджет < անգլ. *budget*. **պայուսակ**), գ. (տնտեսգ.): Հավասարակշռված նախահաշիվ՝ 1. Պետության դրամական եկամուտների և ծախսերի՝ հերթական ժամկետի համար կազմված գրանցում: 2. Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կամ առանձին անձանց եկամուտների և ծախսերի որոշակի ժամկետով ծրագիր:

Դիսպոզիցիա (< диспозиция < լատ. *disposito*. **քաշխում**, **բաժանում**), գ. (իրավք.): Իրավաբանական նորմի մասը՝ **նախադրույթ**, որը պարունակում է որոշակի կարգադրություն, արգելք:

Իմպիչմենտ (< импичмент < անգլ. *impeachment* < *impeach*. **մեղադրել**), գ. 1. Դատավարության կարգ, ըստ որի պատասխանատվության է ենթարկվում պետական հանցագործություն կամ զանցանք կատարած նախագահը (կամ բարձրաստիճան պաշտոնյան): 2. Պաշտոնազրկում:

³⁰ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Եր., հ. I, 1944:

³¹ Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

Լոբբի, լոբբիզմ (< лобби < անգլ. lobby.), գ.: ԱՄՆ–ում և այլ երկրներում օրենսդրական մարմիններին կից գրասենյակների և գործակալությունների համակարգ, որն ուղղակի ճնշում է գործադրում օրենսդիրների և պետական աստիճանավորների վրա՝ հանուն որոշակի շահերի, **շահախումբ**:

Կադաստր (< кадастр < ֆր. cadastre < միջին հուն. katastichon. **թերթ, ցուցակ**), գ.: 1. Մատյան՝ **գույքացուցակ**, որը տեղեկություններ է ներառում օբյեկտների (հողերի, տների, ձեռնարկությունների) գնահատման և միջին եկամտաբերության մասին, որոնք օգտագործվում են համապատասխան իրական հարկերի հաշվարկման համար: 2. (պատմ.): Հարկատուների ցուցակ Հին Հռոմում:

Կոալիցիա (< коалиция < լատ. coalitus. **միացյալ**), գ. (քղք.): Պետությունների՝ կուսակցությունների **միավորում**՝ ընդհանուր նպատակների հասնելու համար:

Օմբուդսմեն (< омбудсмен < շվեդ. ombudsman. ինչ–որ մեկի իրավունքների պաշտպան), գ. (քղք.): Մարդու իրավունքների պաշտպան՝ **իրավապաշտպան**³²:

Ծան. 2: Ծագումնաբանորեն իրար հետ կապվում են հետևյալ բառերը՝ **գաղջ** – **գոլ, գող** – **գաղտ** – (**գաղել**՝ **թաքցնել**), **դեղ** – **դեղձ, իրր** – **երբ, լույս** – **լույց, խարել** (այրել) – **խարույկ** – **խորով, ծաղր** – **ծիծաղ, ծածանել–տատանել, ծանոթ** – **ճանաչ, կեղև** – **կլեպ** – **կճեպ, կոր** – **կեռ, հագնել** – **զգեստ, շեղ** – **շիլ, ողորկ** – **լերկ, տարտամ** – **տրտում, փայլ** – **փողփողել** ևն³³:

Բ.5. ՀԱՊԱՎԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

1. Վանկի արժեք չունեցող տառային հապավումները կարդացվում են տառ առ տառ: Օր.՝ **ԱՊՀ** [ապըհը], **ԿԳՆ** [կըգընը], **ԱԳՆ** [ագընը]: Արևմտահայերենից վերցված այդպիսի տառային հապավումները հաճախ կարդացվում են տառերի անվանումներով: Օր.՝ **ՀՅԴ** [հոհիդա], **ՀՄԸՄ** [հոմենըթմեն]:

Օտար լեզուներից վերցված տառային հապավումները (հայագիր փոխառյալ հապավումներ), եթե կարդացվում են տառերի անվանումներով, հնչադարձվում են և գրվում յուրահատուկ ձևով՝ որպես վանկային հապավումներ և մասամբ մեծատառով, օր.՝ **ՍԻԵՆԵՆ, ԲԻԲԻՍԻ, ԷԲԻՍԻ**, իսկ եթե կարդացվում են որպես սովորական բառ, ապա գրադարձվում են և գրվում սովորական տառային հապավումների ձևով, օր.՝ **ՆԱՏՕ, ՅՈՒՆԵՍԿՕ, ԳՈՒԱՄ** ևն: Կարդացվում են և՛ թարգմանաբար, և՛ բնագրի լեզվով, ինչպես՝ **ՅՈՒՆԵՍԿՕ** – Կրթության, գիտության և մշակույթի հարցերով ՄԱԿ–ի կազմակերպություն / **UNESCO** – United Nations Educational, Scientific and Cultural Organization, **ՆԱՏՕ** – Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն / **NATO** – North Atlantic Treaty Organization, **զազս** – Քաղաքացիական կացության ակտերի գրանցում (**ՔՎԱԳ**): Հանդիպում են նաև հայագիր փոխառյալ վանկային հապավումներ՝ **«ԱրմենՏել», «Մեծգոսբանկ», «Ռոսնեֆտ»** ևն:

Ծան.: Հայերեն տեքստերում հանդիպում են նաև օտարագիր տառային հապավումներ՝ **AGBU** (անգլ.) – Armenian General Benevolent Union (= **ՀԲԸՄ** Հայկական բարեգործական

³² Տես **Ա. Մարգարյան, Ա. Հայրապետյան**, Օտար բառերի բացատրական բառարան, Եր., 2004: **Ս. Էլոյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:

³³ **Հր. Աճառյան**, Հիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Եր., 1957, էջ 33–53:

ընդհանուր միություն), **ASHB** (անգլ.) – Արդշինբանկ (= **ԱՇԲ**), **DM** (գերմ.) – Deutsche Mark (գերմանական մարկ), **HSBC** (անգլ.) – Էյչ–Էս–Բի–Սի բանկ են:

«Ուղիղ ձևով (առանց հոլովական վերջավորության) գործածվում են միայն հատկացուցչի պաշտոնում կիրառվող այն տառային հապավումները, որոնց բաղադրիչ տառերն արտասանվում են առանձին–առանձին (բաղաձայններն ուղեկցվում են չգրվող **ը** – ուլ)»³⁴, օր.՝ **ՀՀ** Ազգային ժողով, **Աժ** պատգամավոր, **ՀՀ** արտագործնախարարություն, **ՀՀԿ** խմբակցություն, **ԱՊՀ** երկրներ, **Աժ** նախագահ, **ՀԲԸՄ** վարժարաններում, **ՀՀ ԿԳ** նախարար, **ՊՆ** հայտարարությունը: Մյուս բոլոր դեպքերում, ըստ նույն որոշման, տառային հապավումները պետք է գործածել հոլովումներին հատուկ վերջավորություններով (կամ հոդերով), օր.՝ **ՄԱԿ–ի** Անվտանգության խորհուրդ, **ԱՄՆ–ի** և **ՌԴ–ի** միջև, **ՀՀ–ից** արտաքսված, **ՀԵԿ–ը** ակտիվացրել է գործունեությունը, **ՕԵԿ–ի** ներկայացուցիչը, **ՀՕՄ–ի** ծրագիրը, **ՀՀ ԿԲ–ն** հանդես է եկել նախաձեռնությամբ, այդ գործով զբաղվեց **ՊԱԿ–ը**, **ԱՄՆ–ում** Հայաստանի դեսպան:

Ծան.: Տերմինաբանական կոմիտեի հիշյալ որոշումից ենթադրվում է, որ **ԱՄՆ** հապավումի արտասանության ճիշտ տարբերակը իբր բաղադրիչ տարրերի (բաղաձայնների) առանց **ը**–երի արտասանությունն է, մինչդեռ այդ հապավման ճիշտ և ընդունված արտասանության մեջ բաղաձայնները ուղեկցվում են չգրվող **ը**–երով՝ **ԱՄ[ը]Ն[ը]**, ինչպես՝ **Զ[ը]Լ[ը]Մ[ը]**, **Հ[ը]Գ[ը]Մ[ը]**, **ԱԳ[ը]Ն[ը]**, **ՀԱՊ[ը]Կ[ը]**:

2. Համառոտագրություններ: Խնայողության նպատակով երբեմն հարկ է լինում հաճախ հանդիպող և ծանոթ բառերը, հատկապես անձնանունները գրել ոչ թե լրիվ, այլ համառոտ ձևով՝ կրճատելով դրանց որոշ մասը: Բառերի կրճատ գրությունը կոչվում է համառոտագրություն: Համառոտագրության մի քանի եղանակներ կան:

1. Գրվում է բառի սկզբնատառը, և կողքը կետ է դրվում, օր.՝ **Վ. Թալին** (Վերին Թալին), **մ. թ. ա.** (մեր թվարկությունից առաջ), **ն. ք.** (նախքան Քրիստոսը) կամ **ք. ա.** (Քրիստոսից առաջ), **ս. թ.** (սույն թվականի), **պ.** (պարոն):

Առանց կետի են գրվում չափի և կշռի որոշ միավորներ, օր.՝ **վ** (վոլտ), **մվ** (միլիվոլտ), **կվ** (կիլովոլտ), **կՎտ** (կիլովատտ), **ր** (րոպե), **լ** (լիտր), **գ** (գրամ), **մ³** (մետր խորանարդ), **մմ²** (միլիմետր քառակուսի), **մ/վ** (մետր/վայրկյան), **տ** (տոննա):

Ավելի հասկանալի լինելու համար երբեմն գրվում են բառի առաջին մի քանի տառերը՝ բաղաձայնից հետո ընկած մասի կրճատումով: Օր.՝ **Հովհ. Թումանյան** (Հովհաննես Թումանյան), **օր.** (օրինակ), **հազ.** (հազար), **գնդ.** (գնդապետ):

2. Գրվում են բառի միայն բաղաձայնները կամ դրանց մեծ մասը, օր.՝ **հմմտ.** (համեմատիր), **պրն** (պարոն), **արևմտ.** (արևմտյան), **թրգմ.** (թարգմանություն), **մսնգ.** (մասնագիտական), **հմ.** (համար), **հզվդ.** (հազվադեպ), **օտրբ.** (օտարաբանություն), **դվնգ.** (դիվանագիտական), **փխբ.** (փոխաբերական), **բժշկ.** (բժշկագիտական), **տնտսգ.** (տնտեսագիտական), **ժղ.** (ժողովրդական):

³⁴ «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 1988, էջ 311–312:

Եթե բառի վերջին բաղաձայնը գրվում է, ապա կետ չի դրվում, օր.՝ **մլն** (միլիոն), **մլրդ** (միլիարդ), **հվ** (հարավ), **ևն** (և այլն):

3. Գրվում են բառի առաջին և վերջին տառերը կամ սկիզբն ու վերջը՝ միության գծիկով միացած, օր.՝ **պ-ն** (պարոն), **դ-ր** (դոկտոր), **մ-ր** (մայոր), **գ-տ** (գնդապետ), **փ/գ-տ** (փոխգնդապետ), **գ-վ/գ-տ** (գեներալ-գնդապետ) ևն:

4. Չափուկ շղիմիավորների բաղադրյալանվանումների համառոտագրությունները գրվում են երկու (երբեմն՝ երեք) տառով (բաղադրիչների սկզբնատառերով), միասին և առանց կետի՝ նմանվելով փոքրատառով գրվող տառային հապավումների: Օր.՝ **կգ** (կիլոգրամ), **սմ** (սանտիմետր), **քմ** (քառակուսի մետր), **ՄԲ**³⁵ (մեգաբայթ), **ԳԲ** (գիգաբայթ) **դցմ** (դեցիմետր), **հա** (հեկտար), **ՄՇգ** (մեգահերց): Սրանք հապավում չեն (ինչպես **բուհ**-ը, **ջեկ**-ը), քանի որ նոր բառ չեն դարձել և կարդացվում են լրիվ ձևով:

5. Բառակապակցությունը կամ բարդությունը համառոտագրելիս երբեմն գրվում են բաղադրիչների սկզբնատառերը՝ թեք գծով և առանց կետերի, օր.՝ **ս/թ** (սույն թվի), **գ/Ֆ** (գեղարվեստական ֆիլմ), **գ/ծ** (գինձառայող), **գ/մ** (զորամաս):

Եթե համառոտագրվող բառը հոգնակի թվով է, ապա համառոտագրությունը կրկնվում է (առանց բացատի), օր.՝ **պրոֆ.պրոֆ.** (պրոֆեսորներ), **ընկ.ընկ.** (ընկերներ): Մեկ տառով համառոտագրությունները կրկնվելիս գրվում են միասին՝ մեկ ընդհանուր կետով, օր.՝ **թթ.** (թվականներ), **դդ.** (դարեր), **հհ.** (հատորներ), **պպ.** (պարոններ): Համառոտագրությունները փոքրատառով են գրվում, եթե հասարակ անուններ են (օր.՝ մ. թ. ա.), և մեծատառով, եթե հատուկ անուններ են (օր.՝ **Ա. Ս. Պոլշկին, Զ. ա., Զ. հ.**):

Ծան. 1: Երբեմն արագագրությամբ առանձին համառոտագրությունների բաղադրիչներ միացնում են իրար՝ կազմելով յուրօրինակ հապավումներ, որոնք գրական լեզվում հանձնարարելի չեն, քանի որ մթազնում են հասկացության իմաստը. **ՀՀ քրօր.** փոխ.՝ **ՀՀ քր. օր.** (ՀՀ քրեական օրենսգիրք), **ՀՀ քրդատ.**, փոխ.՝ **ՀՀ քր. դատ.** (ՀՀ քրեական դատավարություն), **ՀՀ քրօր.**, փոխ.՝ **ՀՀ քր. օր.** (ՀՀ ջրային օրենսգիրք):

Ծան. 2: Շփոթության աղիթ է ստեղծվում այն դեպքում, երբ համառոտագրությունը համընկնում է նույն կազմությամբ ամբողջական բառի հետ՝ **բանկ** // **բանկ.** = **բանկային, ֆինանս** // **ֆինանս.** = **ֆինանսական, իրավ** // **իրավ.** = **իրավաբանական** ևն: Կարելի է պահպանել տառերի առավելագույն քանակ, բայց ոչ ավելի, քան ընդունված է հասկանալի լինելու համար՝ **արտասահմ.** = **արտասահմանյան, ֆին.** = **ֆինանսական, իրավաբ.** // **իրավաբ.** (նախընտրելի) = **իրավաբանական**, բայց նաև՝ **ս. թ.** = սույն թվականի:

Բ.6. ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ: Լեզվի պատմական զարգացման ընթացքում բառերի իմաստները հաճախ ենթարկվում են փոփոխությունների: Դրանք սովորաբար լինում են երեք կարգի.

³⁵ Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը «Մեծությունների միավորների, չափումների... մասին», «ՀՀ ՊՏ», 2012, 10.03/48 (922). (էլ. հասցե՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=13340>)

1. Բառիմաստի ընդլայնում. իմաստափոխական այն երևույթն է, երբ բառը, պահպանելով կամ մթազնելով իր նախկին՝ սկզբնական իմաստը, ձեռք է բերում նոր՝ լրացական իմաստ(ներ): Օր.³⁶ **հարազատ** բառը նախապես նշանակել է «մէկ հօր զաւակ, եղբայր կամ քոյր», «նոյն հօրից և մօրից ծնուած, արիւնակից», ապա՝ «մտերիմ, ազգակից, սիրելի»: **Բարեկամ** սկզբնապես նշանակել է «բարիք կամեցող մէկին, բարեացակամ», ապա՝ «ազգական, մտերիմ մարդ, դիվանագիտական լավ հարաբերությունների մեջ գտնվող» են: **Կառավարել** բառը սկզբնապես նշանակել է «կառք վարել՝ քշել», հետագայում ձեռք է բերել ընդհանրապես ղեկավարելու, վարելու իմաստ՝ «1. Երկիր՝ պետություն ղեկավարել՝ գլխավորել: 2. Գործունեությունը ղեկավարել, վարել, տնօրինել: 3. Խնամել, հոգ տանել» են: **Կանգնել** (// կանգնիլ) գրաբարում նշանակել է «Կառուցանել, հաստատել, զարդարել, շէն պահել, նորոգել», նաև՝ «Ձկայ առնուլ, դադարել, հանդարտիլ»: Բառը թեև կորցրել է իր առաջնային՝ նախնական իմաստը, բայց արդի հայերենում գործածվում է քսանից ավելի **նոր իմաստներով**՝ վեր կենալ, անշարժ ոտքի վրա մնալ, անշարժ վիճակում գտնվել, հավասարակշռությունը պահել, տեղում մնալ, սպասել, գտնվել, տեղ գրավել, խոյանալ, վեր հառնել, միավորվել, հաստատվել, որևէ աշխատանքի լծվել, ընդդիմադիր լինել են: Այդպես իրենց իմաստներն ընդլայնել են բազմաթիվ բառեր՝ **բանավոր, աթոռ, ամբիոն, արջ, նկարել, լսել, սեղան, չար, աշխարհ, դաշտ, զամբյուղ, հոսք, ճյուղ** են: Բառիմաստի ընդլայնում է նաև հատուկ անվան՝ հասարակ անվան վերածվելը: Օր.³⁷ **հուղա** նշանակում է մատնիչ, դավաճան (Քրիստոսի աշակերտ ու մատնիչ Հուդայի անունից): Նմանապես՝ **խիկար** – իմաստուն, **կայսր** – արքա, թագավոր, **հերց** – պարբերական տատանումների հաճախականության միավոր, **նազար** – վախկոտ, բախտի բերմամբ մեծ բանի արժանացած, **նյուտոն** – ուժի միավոր, **պասկալ** – ճնշման միավոր, **ջոուլ** – աշխատանքի, էներգիայի և ջերմության քանակի միավոր, **վատտ** – էլեկտրական հոսանքի հզորությունը չափելու միավոր, **վեբեր** – մագնիսական հոսքի միավոր են:

2. Բառիմաստի նեղացում. բառը ժամանակի ընթացքում ձեռք է բերում ավելի նեղ՝ մասնավորված իմաստ(ներ)՝ պահելով կամ կորցնելով իր նախնական իմաստը: Օր.³⁸ **ատենախոս** բառը նախապես նշանակել է ատենաբան՝ «Ատենանում ճառող, հռետոր, հրապարակական տեղերում հասարակութեան առաջ մի հարցի մասին խօսող»³⁶, այժմ ունի «Գիտական աստիճան ստանալու համար գիտական թեզ պաշտպանող (դիսերտանտ)» իմաստը³⁷: **Ոստիկան** պահլավերեն բառը նշանակել է վերակացու, հրամանատար, հոգաբարձու, իշխան, կառավարող են: Նոր իմաստը՝ «կարգապահություն հսկող հասարակ քաղաքապահ»: **Վերարկու** բառը սկզբնապես նշանակել է առհասարակ արտահագուստ՝ «Ինչ որ վրայից ձգվում է: 1. Ծածկոյթ, ծածկոց: 2. Անկողնի ծածկոյթ: 3. Վերմակ: 4. Գլխի քող: 5. Կապերտ, օթոց: 6. Անասունների մորթի» են: Արդի հայերենում գործածվում է «Կոստյումի՝ զգեստի վրայից հագնելու երկար հագուստ» նշանակությամբ: **Համբակ** նշանակել է «1. Երախայ, նորածին մանուկ: 2. Տղայ, մանուկ: 3. Զաւակ, որդի: 4. Աշակերտ» են, հետագայում՝ **թերուս**: Իմաստի նեղացում են ունեցել **թոչուն** (սկզբնապես՝ «նա, որ թոչում է, ընդունակ է թոչելու..., արագասլաց»),

³⁶ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. I, Եր., 1944:

³⁷ Տե՛ս Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:

կաղ («որևիցե անդամով պակասաւոր, խեղ... այսպէս՝ «լեզուաւ կաղ»), **հեղինակ** («առաջնորդ, գլխավոր, վարիչ, ...պետ, իշխան»), **հոլով** («թաւալում, գլորում, շրջան»), **կարդալ** («ծայնել, գոչել, աղաղակել, հրաւիրել, կանչել, հորջորջել») և բազմաթիվ այլ բառեր:

Ծան. Բառիմաստի նեղացում կարելի է համարել նաև հասարակ անվան վերածվելը հատուկ անվան՝ **Ազատ, Ծաղիկ, Նարգիզ, Վարուժան, Վրեժ** ևն:

3. Բառիմաստի շրջում և վերաիմաստավորում. բառը, պահպանելով կամ կորցնելով նախնական իմաստը, ձեռք է բերում նախկին իմաստին հակառակ իմաստ կամ իմաստային այլևայլ նրբերանգներ: Օր.՝ **հանդես** նշանակել է հրապարակային քննություն, ատյան, դատ, ապացույց, տեսարան, հրապարակ, մրցարան, քաջագործություն, զորահամար ևն, այժմ՝ զանգվածային տոն, տոնախմբություն, մշակութային զանգվածային միջոցառում, պարբերական հրատարակություն ևն: **Հայց** նախապես՝ «1. Խնդրանք, աղաչանք: 2. Հարցումիործ, քննություն» (հայցել – խնդրել), այժմ նաև՝ «1. (Իրավք.). քաղաքացիական իրավունքների պաշտպանության պահանջով դատարանին ներկայացվող գործ»: **Իմաստակ** սկզբնապես նշանակել է «Այն՝ որ համարեալ է որպէս իմաստուն կամ իմաստասէր ոք և գրագէտ, ճարտասան» ևն, այժմ՝ թերուս, տգետ, բայց իրեն իբրև գիտուն ներկայացնող մարդ: Նմանապես՝ **հարուստ**՝ զորեղ, ուժով, գեր, ավագ, ազնվական > ունևոր, ունեցվածքի տեր, **պարապել**՝ պարապ լինել > մի գործով զբաղվել, մի բան սովորել, **ապրել**՝ ազատվել, փրկվել > կյանք վարել, կենցաղավարել, **նահատակ**՝ կովի մեջ առաջամարտիկ > վեհ գաղափարի համար կյանքը զոհած մարդ, զոհ, **աշխատել**՝ հոգնել, նեղություն կրել > գործ անել, զբաղվել, **սիրուն**՝ սեր ունեցող, սեր կրող > գեղեցիկ, դուրեկան, **տաղ**՝ խոսք, պատմություն > երգ, խաղ ևն:

Իմաստաբանության ոլորտում գրական լեզվի կանոններից շեղվելու պատճառ կարող է դառնալ բառի իմաստային նրբերանգների և կապակցական–կիրառական հնարավորությունների անտեսումը:

Բ.7. ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՇՓՈԹՈՒԹՅՈՒՆ: Իրար փոխարինող հոմանիշներից մեկը կամ մյուսը գործածելը ոճական խնդիր է, քանի որ դրանցից յուրաքանչյուրը յուրովի է երանգավորում խոսքը, դառնում որոշակի վերաբերմունքի արտահայտման միջոց: Իրար չփոխարինող հոմանիշների շփոթությունը պարզապես **բառագործածության սխալ** է, որ ստեղծում է անճիշտ խոսք: Հոմանիշները, ինչպես ասվեց, սովորաբար միմյանցից տարբերվում են իմաստային–ոճական նրբերանգներով և կամ կապակցելիության սահմանափակումներով: Հոմանիշ բառերը միշտ չէ, որ կարող են իրար փոխարինել խոսքային նույն կառուցում, քանի որ դրանք խոսքային միջավայրում երբեմն դրսևորում են **կապակցական անհամատեղելիություն**: Օր.՝ «Համերգը տեղափոխվել է մեկ ամսով»: Այստեղ խոսքը ժամկետի տեղափոխման մասին է, որն արտահայտվում է **հետաձգել** բառով: Ճիշտ ձևակերպումը հետևյալն է՝ «Համերգը **հետաձգվել է** մեկ ամսով»:

Բառակազմական հոմանիշները (ստացվել են բաղադրիչների տարբեր հավաքություններով՝ **լեզվային // լեզվական, տեղափոխել // փոխատեղել**) երբեմն

ունենում են կապակցական յուրահատկություններ, տարբերվում են այս կամ այն բառի հետ գործածվելու սահմանափակումով:

–**ական** և –**ային** ածանցներն ունեն վերաբերական կամ ստացական նշանակություն: Դրանք երբեմն, նույն գոյական հիմքի վրա դրվելով, կազմում են զուգահյոյս բառեր: Ունեն ընդհանուր–վերաբերական իմաստ՝ մի բանին վերաբերող, մի բանին հատուկ, սակայն նաև դրսևորում են իմաստային մասնակի տարբերություններ. –**ային**–ով կազմությունները ցույց են տալիս բառահիմք գոյականի բնույթից, էությունից բխող հատկանիշ, –**ական**–ով կազմությունները՝ այդ գոյականին առհասարակ հատուկ հատկանիշ կամ իրողություն:

Այսպես՝ **դրամային** բառը (որը, ի դեպ, նորակազմություն է) նշանակում է **դրամ**–ի բուն էությամբ ու բնույթով պայմանավորված, դրանից բխող, **դրամական**–ը՝ առհասարակ դրամի ոլորտին վերաբերող: Առաջինն ունի նեղ՝ տերմինային իմաստ՝ **դրամական** զանգվածի **դրամային** մաս, **դրամային** զանգված, երկրորդը՝ ավելի ընդհանրական–հատկացական (հատկացում ցույց տվող) նշանակություն՝ **դրամական** բազա, **դրամական** շուկա, **դրամական** բազմարկիչ:

Առևտրային նշանակում է առևտրին վերաբերող, առևտրից սերող՝ **առևտրային բանկ**, **առևտրային** գործարք, **առևտրային** կապիտալ: **Առևտրական**՝ առևտրին հատուկ, առևտրի ոլորտին վերաբերող՝ **առևտրական** գործակալություն, **առևտրական** ուղիներ:

Բ.8. ՀԱՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՇՓՈԹՈՒԹՅՈՒՆ: Հիշենք, որ հարանունները արտաքին հնչյունական կազմով մոտ կամ նման բառերն են: Իմաստային տեսակետից դրանք տարբեր կարգի հարաբերությունների մեջ են: Կան հարանուններ, որոնք ձևով տարբերվում են աննշան չափով, սակայն արտահայտում են նույն իմաստը: Դրանք նույն բառի տարբերակներ են և հավասարապես գործածելի են մեկը մյուսի փոխարեն, ինչպես՝ **անձնանվեր** – **անձնվեր**, **արտասվալի** – **արտասվալից**, **զագաթնաժողով** – **զագաթաժողով**, **թախծալի** – **թախծալից**, **մեքենաբար** – **մեքենայաբար**: Սրանք մի տեսակ միջին դիրք են գրավում հոմանիշների և հարանունների միջև:

Կան հարանուններ, որոնք ունեն իմաստային ընդհանրություններ, բայց նույն իմաստը չեն արտահայտում: Ինչպես՝ **անձնագիր** – **անցագիր**, **զանցանք** – **հանցանք**, **հետագա** – **ապագա**, **հրաձիգ** – **հրծիգ**, **միաժամանակ** – **միառժամանակ**, **քննել** – **զննել** ևն: Սրանք կոչում են **բուն հարանուններ**:

Հարանուններ կան, որոնք իմաստային որևէ կապ կամ առնչություն չունեն և ձևով իրար նման են պատահականորեն: Հասկանալի է՝ մեկը մյուսի փոխարեն դրանց գործածությունը սխալ է և անթույլատրելի, ինչպես՝ **վարկ** (հեղինակություն) – **վարզ** (ծիու համաչափ վազք) – **վարք** (կենսագրություն, պահվածք), **կարճել** (դատական գործը դադարեցնել, խափանել) – **կառչել** (բռնել, մի բանից կառչել), կամ՝ **գիրք** – **գիրզ** – **գիրկ**, **ծաղկել** – **ծաղկել**, **համառ** – **համար**, **վառել** – **վարել**, **հարթ** – **հարդ**, **հաղթել** – **մաղթել** ևն: Սրանք կոչում են **ձևային հարանուններ**:

Հարանունների ամենաբնորոշ հատկանիշը դրանց շփոթելիությունն է: Դա առավել հավանական է նույնարմատ հարանունների դեպքում: Օր.՝ «Խոսքը **բացարձակապես** (←**բացառապես**) երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների մասին է»:

Հարանունները հաճախ շփոթում են՝ առիթ տալով ուղղագրական սխալների: Ուստի հատուկ ուշադրություն պետք է դարձնել դրանց գրությանը՝ **ամենօրյա – ամանօրյա, վարք – վարկ, խոխոջյուն – խոխոջուն**: Հարանուն արմատների շփոթությունը կարող է նաև սխալ բառակազմության տեղիք տալ: Օր.՝ **վարկաբեկել** բառը սխալմամբ դառնում է **վարքաբեկել, անհարկի–ն՝ անհարգի** են:

Տնօրենություն բառը վերջերս է մտել շրջանառության մեջ և փոխարինում է ռուսերեն **дирекция** բառին: Մինչդեռ շատ հաճախ այդ բառը գրություններում հանիրաժի փոխարինվում է իր «նմանակով»՝ **տնօրինություն** բառով: Վերջինս իր հիմքում ունի **տնօրինել** բառի նշանակությունը, իսկ նախորդը՝ **տնօրեն**: Հասկանալի է՝ նշված բառերը իրար փոխարինել չեն կարող: Ճիշտ են հետևյալ կիրառությունները՝ «**Տնօրենությունը** կատարել է անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ»: «Նյութերը հանձնում են համապատասխան բաժանմունքի **տնօրինությանը**»:

Գործառություն բառը, որը հայերենում շուրջ երկուհարյուրամյա կենսագրություն ունի, վերջին տարիներին ձեռք է բերել նոր գործածություն՝ իբրև **функция** օտար բառի հայերեն համարժեք՝ «առարկայի կատարած դերը» իմաստով: **Գործառություն–ը** տերմինային նորաբանություն է, որը տնտեսագիտության (նաև իրավագիտության) ոլորտում գործածվում է **գործարք, գործողություն** (операция) նշանակությամբ: Այդ բառերը ճիշտ գործառույթ ունեն հետևյալ նախադասություններում. «Արտաքին **գործառությունների** սպասարկման կշռի մեծացումը կարելի է համարել...»: «Պասիվային **գործառությունների** մեծ մարժա»: «Այդ **գործառությունը** վերապահվում է հիշյալ բանկերի մասնաճյուղերին»:

Բ.9. ԲԱՌԱՅԻՆ ՉՈՒԳԱԿՑՈՒՄ (ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ). ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ, ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆ: Բառի տեղին և ճիշտ գործածության առաջին պայմանը բառի ստույգ իմաստի իմացությունն է: Բառիմաստի անճիշտ ընկալումը, բառերի նրբիմաստային տարբերությունների անտեսումը խոսքային անճշտությունների հիմնական պատճառներից են: Բառը ճիշտ գործածելու համար, սակայն, բավարար չէ միայն նրա իմաստի իմացությունը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել այլ բառերի հետ նրա զուգակցելի, համապատասխանելու հնարավորությունները: Բառերը, իրար հետ հաճախակի գործածվելով, ձեռք են բերում համատեղելիության կամ կապակցական որոշակի հատկանիշներ: Բառի կապակցական հնարավորությունների անտեսումը պատճառ կարող է դառնալ խոսքի սխալ կառուցման:

Բառընտրությունը անպայման պետք է նկատի ունենա հարաբերակից բառերի միջավայրում տվյալ բառի իմաստային գործառույթի հնարավոր և առարկայական

(օբյեկտիվ) տարբերակները: Բառի խոսքաշարային ավանդական առնչությունների նկատմամբ անուշադրությունը կարող է առիթ տալ բառի իմաստային աղավաղումների, հետևաբար նաև ոչ ճիշտ ընկալումների: Իր հերթին բառի իմաստային և ձևային յուրահատկությունների անտեսումը հանգեցնում է բառերի կապակցական անճշտությունների: Օր.՝ «գործավարության վարման մասին», «գործավարություն կատարել» կապակցություններում ընդգծված բառերը իրենց տեղում չեն, զբաղեցնում են **կազմակերպել** և **իրականացնել** բառերի տեղը՝ «գործավարության կազմակերպման մասին», «գործավարություն **իրականացնել**»: Ճիշտ է՝ բառարանները ընդգծված բառերի դիմաց արձանագրում են առաջարկվող բառերի իմաստներին մոտ իմաստներ, բայց պետք է նկատի ունենալ, որ հանդես գալով իրենց ուղղակի և առաջնային նշանակությամբ՝ իմաստով մոտ կամ նույնիմաստ (հոմանիշ) բառերը պաշտոնական գրություններում խիստ հազվադեպ են իրար փոխարինում: Հիշենք նաև, որ բացարձակ նույնիմաստ բառեր լեզվում գոյություն չունեն: Դրանք միշտ դրսևորում են նրբիմաստային, հետևաբար նաև՝ ոճական-կիրառական ինչ-ինչ տարբերություններ:

Լեզվագործածությունը կամ, ավելի ստույգ, բառագործածությունը ունի տարիներով, ինչու չէ, նաև դարերով հաստատված ավանդույթներ, մեր մտածողության մեջ հաճախ ամրակայված անբացատրելի սկզբունքներ, որոնք չի կարող անտեսել նորմատիվ լեզվով գրագրությունը: Ժամանակի ընթացքում, օր., **հրաման** բառի հետ կայուն կապակցություն է ստեղծել **արձակել** բառը՝ **հրաման արձակել**, որոշում բառի հետ՝ **կայացնել**-ը՝ **որոշում կայացնել**, **արձանագրություն** բառի հետ՝ **կազմել**-ը՝ **արձանագրություն կազմել**, կամ՝ **հրաման տալ**, **նամակ հղել**, **վճիռ արձակել**, **վճիռ կայացնել**, **ուղերձ հղել**, **հայց ներկայացնել**, **արմատ հանել**, **քառակուսի հավասարում կազմել**, **անկախություն հռչակել**, **գործարք կնքել** կամ **գործարք կատարել**, **գործը կարճել** ևն:

Իհարկե, կան բառեր, որոնք, հաճախակի գործածվելով որոշակի՝ հիմնականում տերմինային նշանակությամբ, ձեռք են բերում նոր իմաստներ, նվաճում իմաստային-գործառական նոր ոլորտներ և արձանագրվում բառարաններում՝ որպես իմաստային նորաբանություններ: Ահա մեր լեզվում եղած բառերի տերմինային նոր իմաստով գործածությունների օրինակներ՝ տնտեսական **դաշտ**, ֆինանսական հատվածի **առողջացում**, վարկային **ռիսկ**, պետության **կայացում**, ֆինանսական համակարգի **թափանցիկություն**, աշխատանքային **շուկա**, **բաց** բաժնետիրական ընկերություն, դրամավարկային **հատված**, ցուցանիշների **վարքագիծ**, տնտեսության **բացվածություն**, **հարթ** դինամիկա, գների ինդեքսի **կախվածություն**, << **նախագահ** ևն:

Սակայն կան բառեր էլ, որոնք, գործածվելով այլ բառերի փոխարեն, հանիրավի խլում են դրանց իմաստը և գործածության իրավունքը, փորձում են նվաճել նոր իմաստներ, որոնք անհարիր են այդ բառերի բուն նշանակությանը, առավել ևս դրանց կապակցական հնարավորություններին:

Բառերի անհամատեղելիությունը կարող է առնչվել անձ և ոչ անձ տարբերությանը: Երբեմն անձի հետ առնչվող բառը գործածվում է ոչ անձի համար և բնավ ոչ անձնավորման նպատակով: Բառի այդպիսի անհամապատասխան գործածությունը ստեղծում է իմաստային անճշտություն: Օր.՝ «Արդեն ժամանակն է, որ

գնամ **վաստակավոր** հանգստի»: **Վաստակավոր** լինում են անձերը՝ «գիտության վաստակավոր գործիչ», «վաստակավոր մանկավարժ»: Իսկ հանգիստը կարող է լինել **վաստակած**: Իմաստային անճշտություն է առաջացնում նաև հակառակ կարգի շփոթությունը, երբ անձի համար գործածվում է նրա հետ չառնչվող բառը: Օր.՝ «Իմ պաշտպանյալը **ճիշտ** է, և նրան ներկայացվող մեղադրանքները **իրավացի** չեն, **անարդար** են»: այս նախադասության մեջ իմաստային երեք անճշտություն կա: Ճշմարիտ կամ ճիշտ լինում են ոչ թե անձինք, այլ նրանց մտքերը, գաղափարները, խոսքերը, իսկ անձը կարող է լինել իրավացի, արդարացի, և հակառակը՝ իրավացի կամ անարդար չի կարող լինել մեղադրանքը:

Բառերի անհամատեղելիությունը հաճախ պայմանավորված է դրանց իմաստային յուրահատկություններով: Բառը իր այս կամ այն իմաստով համատեղելի է որոշակի բառերի կամ բաղմաստների հետ, և այդ հանգամանքի անտեսումը առաջ է բերում խոսքի անճշտություն: Այսպես՝ **մերձենալ** կարող են նյութեղեն իրերը, անձինք, իսկ կապերը կարող են **սերտանալ**: Հետևաբար ճիշտ չէ հետևյալ նախադասության մեջ **մերձենալ** բառի գործածությունը՝ «Դա նպաստեց երկու երկրների միջև կապերի **մերձեցմանը**»: Կամ՝ «**Մերժեցին** (**←հերքեցին, ժխտեցին**) անվստահություն ցուցաբերելու մասին մեղադրանքները»: «Թերահավատորեն **մոտեցավ** (**←վերաբերվեց**) նախարարի խոսքերին»:

–**երեն** ածանցով կազմությունները իմաստային քիչ առնչություն ունեն –**ական** ածանցով այն կազմությունների հետ, որոնք ցույց են տալիս ազգին, ժողովրդին կամ նրա մշակույթին բնորոշ հատկանիշ: Օր.՝ ըստ բացատրական բառարանների՝ **հայերեն**–ը 3–րդ իմաստով՝ որպես ածական, իմաստային կապ ունի **հայկական, հայացի** բառերի հետ: Սակայն երբ խոսքը լեզվին է վերաբերում կամ լեզվական միավորներին, **հայկական**–ը չի կարող գործածվել **հայերեն**–ի փոխարեն, կամ **Ֆրանսիական**–ը՝ **Ֆրանսերեն**–ի փոխարեն, ինչպես հետևյալ օրինակում՝ «**Վճռաբեկություն** տերմինը ծագել է **Ֆրանսիական** (**←Ֆրանսերեն**) *casser* բառից, որ նշանակում է ջարդել, այսինքն՝ վերացնել դատավճիռը»:

Խոսքի անճշտության պատճառ կարող է դառնալ նաև բառերի կամ բառաձևերի **քերականական անհամատեղելիությունը**: Օր.՝ հաճախ հոգնակի լրացյալի հետ գործածվելիս շփոթվում են **բոլոր** և **ողջ** դերանունները: Ըստ կանոնների՝ **բոլոր** դերանունը պահանջում է հոգնակի թվով որոշյալ, **ամբողջ**–ը՝ որոշյալ առումով եզակի թվով լրացյալ: Այսպես՝ **բոլոր** հաճախորդները, **բոլոր** տարածքները, **ամբողջ** ունեցվածքը: (**Ամբողջ**–ը մի վերաբերականի հետ կարող է ունենալ նաև անորոշ առումով լրացյալ՝ **ամբողջ մի** երկիր, **մի ամբողջ** տարի): Սխալ է՝ **ամբողջ** տարածքները, **ամբողջ** ունեցվածքները: Կամ՝ **յուրաքանչյուր**, **ամեն մի** դերանունների հետ սովորաբար քերականորեն անհամատեղելի են որոշյալ առումով լրացյալները՝ **ամեն մի հայցվորը**, **յուրաքանչյուր պաշտոնատար անձը** ևն (այս մասին ավելի մանրամասն տե՛ս քերականության բաժնում):

Բ.10. ԱՎԵԼՈՐԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԿՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ: Երբեմն խոսքում գործածվում են բառեր ու արտահայտություններ, որոնք, իմաստային ու ռճական որևէ դեր չունենալով, ծանրաբեռնում են խոսքը, առիթ տալիս իմաստային

անճշտությունների, դառնում խոսքի ավելորդ, մակաբույծ տարրեր (**ավելորդաբանություն**): Օր.՝ «Տնօրենը Ձեր ներկայացրած փաստաթղթի **տակ** արդեն ստորագրել է»։ այս նախադասության մեջ բոլորովին ավելորդ է **տակ** բառը, քանի որ **ստորագրել**-ը արդեն իսկ այդ իմաստը պարունակում է։ Ճիշտ է՝ «Տնօրենը Ձեր ներկայացրած փաստաթուղթը արդեն ստորագրել է»։ Կամ՝ «Կրած ֆինանսական վնասը հասնում է **մինչև 5** միլիարդ դրամի»։ ավելորդ է **մինչև** բառը։ Ճիշտ է նախադասության հետևյալ տարբերակը՝ «Կրած ֆինանսական վնասը հասնում է 5 միլիարդ դրամի»։ Այլ օրինակներ՝ **հետ** վերադարձնել (≡վերադարձնել), այդպիսի **ձևով** (≡այդպես), բնագրերի **տեքստում** (≡բնագրերում), **ավելի** նախընտրելի է (≡նախընտրելի է), **ապագա** կատարելիք (≡կատարելիք), առ **այն** մասին (≡առ այն), **զգալիորեն** վատթարացան (≡վատթարացան // զգալիորեն վատացան), պետք է դիտվի **որպես** շրջանառությունից դուրս (≡պետք է դիտվի շրջանառությունից դուրս) ևն։

Ավելորդաբանության մի տարատեսակ է **քերականական ավելորդաբանությունը**, որը հաճախ շփոթվում է քերականական ավելադրության հետ (վերջինս ոճական հնարք է)։ Ավելորդաբանություն է, երբ համապատասխան քերականական մասնիկը չի պահանջվում, սակայն դրվում է։ Օր.՝ **հինգ, վեց, յոթ, ութ** թվականների՝ **ը**-ով գործածությունը, երբ դրանք փոխանուն չեն՝ «**Վեցը** (≡Վեց) օրով հետաձգվել է վարկի տրամադրումը»։ Բայց՝ «**Վեցը** մեծ է **հինգից**»։ Կամ՝ ստացական հոդի և ստացական դերանվան համատեղ գործածությունը՝ «**Իմ** հաշվետվություն**ը**»։ Եվ կամ՝ քերականական նույնիմաստ ձևերի միաժամանակ կիրառությունը՝ «Դու մեր գործարքին վերաբերվիր **ոնց որ** առաջվա **պես** (≡առաջվա պես)» ևն։

Ծան.։ Ավելորդաբանության հետ չպետք է շփոթել **ավելադրությունը**, որը ոճական ձև է՝ առավելապես բնորոշ խոսակցական լեզվին, և խոսքում ունի շեշտողական նշանակություն, ինչպես՝ **երկուշաբթի օրը (երկուշաբթի), ընդհուպ մինչև (ընդհուպ / մինչև), սպիտակ գույնը (սպիտակը), ընտանյոք հանդերձ (ընտանյոք), կարևոր դեր ունեն կատարելու (կարևոր դեր ունեն), Երևան քաղաքը (երևանը), ապրիլ ամսին (ապրիլին), դուրս գալու ելք (ելք), ներս մտավ (մտավ)** ևն։

Հաճախ նախադասության մեջ որևէ հասկացություն անհարկի կրկնվում է նույն կամ տարբեր ձևավորումով (բացահայտ կամ թաքնված **կրկնաբանություն**): Օր.՝ «Տեղի ունեցածը Եվրախորհրդարանում ներկայացվել է որպես մարդու իրավունքների **ոտնահարման** կոպիտ **խախտում**»։ Այստեղ միմյանց կրկնում են **ոտնահարում** և **խախտում** մասնակի հոմանիշները, որոնցից մեկն ավելորդ է։ Ուղղված տարբերակներն են՝ «Տեղի ունեցածը Եվրախորհրդարանում ներկայացվել է որպես մարդու իրավունքների կոպիտ **խախտում**», կամ՝ «Տեղի ունեցածը Եվրախորհրդարանում ներկայացվել է որպես մարդու իրավունքների **ոտնահարում**»։

Նախադասության մեջ երբեմն հանդիպում են նույն, նույնիմաստ կամ իմաստով համընկնող բառերի կից անհարկի կիրառություններ։ Օր.՝ «Գործունեության **համար** անհրաժեշտ պայմաններ ապահովելու **համար** դիմեցին կառավարությանը»։ Դրանցից երկրորդը հեշտությամբ կարող է փոխարինվել հոմանշային տարբերակով, այսպես՝ «Գործունեության **համար** անհրաժեշտ պայմաններ ապահովելու **նպատակով** դիմեցին կառավարությանը»։ Այլ օրինակներ՝ «Մոից գրանցման **համարը** **համարվում** է նրա հերթական **համարը**»։ ≡ «Մոից գրանց-

ման համարը նրա հերթական **համարն է**»: Կամ՝ **համապատասխան համարժեք** (**←համարժեք**), **համատեղ համագործակցություն** (համագործակցություն), **ստանձնած հանձնառություններ** (հանձնառություններ), **հարցի հիմնական էությունը** (**←հարցի էությունը**), **առանցքային հիմնախնդիրներ** (**←հիմնախնդիրներ**):

Կրկնաբանության առաջացման պատճառ կարող է դառնալ լավ չհասկացված օտարաբանությունը: Օր.՝ «Տուժողը լրագրողին դատի է տվել՝ պահանջելով իրեն պատճառած բարոյական վնասը փոխհատուցել դրամական **կոմպենսացիայով**»: **Կոմպենսացիա**–ի հայերեն համարժեքն է **փոխհատուցում**–ը, որը բայի ձևով արդեն կա նախադասության մեջ: Օտար բառը միանգամայն անտեղի է գործածված: Սխալը ուղղել կարելի է հետևյալ տարբերակներով՝ «Տուժողը լրագրողին դատի է տվել՝ պահանջելով իրեն հասցված բարոյական վնասը **փոխհատուցել դրամով**»: // «Տուժողը լրագրողին դատի է տվել՝ պահանջելով իրեն հասցված բարոյական **վնասի դրամական փոխհատուցում**»: Կամ՝ «Շտապ պիտի զբաղվել առանձնատան ներքին **ինտերիերով**». ընդգծված բառը ֆրանսերենում (*intérieur*) նշանակում է «Շենքի ներսի ճարտարապետական և գեղարվեստական ձևավորումը», այսինքն՝ արդեն իսկ իր մեջ ունի **ներս**–ի իմաստը, հետևաբար դրա հետ համատեղ չի կարող գործածվել: Ծիշտ է՝ «Շտապ պիտի զբաղվել առանձնատան ներքին հարդարմամբ»:

Ծան.: Կրկնաբանության հետ չպետք է շփոթել ոճական–արտահայտչական արժեք ունեցող **կրկնությունները**:

Ավելորդաբանությունների և կրկնաբանությունների զգալի մասը հայերեն է մուտք գործել այլ լեզուների, մասնավորապես ռուսերենի ազդեցությամբ՝ ձևավորելով օտարաբանությունների կամ ավելորդությունների մի շարք, որը հարիր չէ հայ մարդու լեզվամտածողությանը և արդի հայերենի կանոնին ու ոգուն: Այդպիսի կառույցների պատճառով խոսքը դառնում է երկարաբան ու ոչ հստակ: Հայերենն ունի դրանց համապատասխան հայեցի ձևերը՝ զերծ ավելորդ բառերից ու արտահայտություններից, հարկ է միայն դրանք իմանալ և գործածել, ինչպես՝ **вопрос состоит в том** – հարցը կայանում է նրանում ⇒ հարցն այն է, **вопрос в том** – հարցը նրանումն է ⇒ հարցն այն է, **еще раз** – կրկին անգամ ⇒ կրկին // մեկ անգամ ևս, **повторять снова** – նորից կրկնել ⇒ կրկնել, **новая система, это...** – նոր համակարգը, դա... ⇒ նոր համակարգը..., **является ответственным** – պատասխանատու է հանդիսանում ⇒ պատասխանատու է, **вместе с заказчиком** – պատվիրատուի հետ միասին ⇒ պատվիրատուի հետ ևն:

Գ. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

Գ.1. ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ

Գ.1.1. Անձնակիշ և իրանիշ գոյականներ (58): **Գ.1.2.** Գոյականի հոգնակի թվի կազմության յուրահատկություններ (58): **Գ.1.3.** Հավաքական գոյականներ (62): **Գ.1.4.** Հոգնակերպ գոյականներ (62): **Գ.1.5.** Անեզական գոյականներ (62): **Գ.1.6.** Որոշյալ և անորոշ առումներ (63): **Գ.1.7.** Հոլովական տարբերակային ձևեր (64): **Գ.1.8.** Ածականի տարբերակային ձևեր (69): **Գ.1.9.** Թվականի տարբերակային ձևեր, թվականի ուղղագրությունը (69): **Գ.1.10.** Դերանական տարբերակային ձևեր (73): **Գ.1.11.** Դերանականական հոդեր (76):

Գ.1.12. Բայ (78): Գ.1.13. Մակբայների գործածության յուրահատկություններ (83): Գ.1.14. Կապերի գործածության յուրահատկություններ (83): Գ.1.15. Շաղկապների գործածության յուրահատկություններ (85): Գ.1.16. Վերաբերականների և ծայնարկությունների գործածության յուրահատկություններ (86):

Խոսքի քերականական ճշտությունը ենթադրում է խոսողության գործընթացում քերականական ձևերի և շարահյուսական կառույցների նորմերի պահպանում: Դրանք թերևս ավելի բազմաքանակ են, քան մյուս մակարդակներում սահմանված նորմերը: Մենք կանդրադառնանք հիմնականում այն կանոններին, որոնց գործածությամբ խոսքը ճիշտ է կառուցվում, և դրանցից շեղումները պատճառ են դառնում քերականական անճշտությունների:

Ձևաբանական նորմը ձևաբանական օրենքների ու օրինաչափությունների ամբողջությունն է: Ինչպես լեզվական նորմի մյուս տեսակները, ենթակա է փոփոխությունների ու զարգացման: Եթե բառագիտական և շարահյուսական մակարդակներում նորմի փոփոխության հիմնական գործոնները հասարակական կյանքի զարգացումներն են, օտար լեզուների ազդեցությունները, ապա ձևաբանական մակարդակում դրանք առավելապես պայմանավորված են լեզվի ներկառուցվածքային փոփոխություններով՝ գրական և խոսակցական լեզուների փոխհարաբերությամբ, բարբառների ազդեցությամբ, լեզվի գործառական տարբերակների զարգացմամբ ևն: Ձևաբանական նորմի զարգացումը ի վերջո հանգում է ձևաբանական զուգաձևություններից մեկի (երբեմն նաև տարբերակների) նախընտրությանը: Դա իր հերթին թելադրվում է որոշակի սկզբունքներով՝ տարբերակի բացարձակ գերակշռությունը գրական հայերենում, համապատասխանությունը հայերենի ձևաբանական կառուցվածքին, հարազատությունը ազգային լեզվամտածողությանը, հայերենի քերականական ձևերի միօրինակությանն ու զարգացմանը նպաստելը ևն³⁸:

Ձևաբանական նորմը պահպանելու և սխալներից խուսափելու համար պետք է իմանալ հետևյալը.

Գ.1.1. Անձնանիշ և իրանիշ գոյականներ: Քերականորեն տարբերվում են ուղիղ խնդիր ձևավորելիս, երբ անձնանիշ գոյականները լինում են տրականաձև՝ «Բերեցին մեղադրյալին», իսկ իրանիշները՝ ուղղականաձև՝ «Բերեցին փաստարկներ»: Հակառակը հնարավոր է, եթե իրանիշ գոյականները գործածվեն անձի առումով, ինչպես՝ «Շատ է սիրում իր խնամած փոքրիկ եղնիկին», կամ անձնանիշ գոյականները՝ իրի առումով՝ «Շատ է սիրում երեխաներ»: Անձնանիշ և իրանիշ գոյականները քերականորեն տարբերվում են նաև ներգոյական հոլովի կազմության ժամանակ: Անձնանիշ գոյականների ներգոյական (-ում-ով) հոլովաձևերը գործածական չեն: Դրանք փոխարինվում են սեռական-տրական հոլովաձևով և մեջ կապով բաղադրված նույնիմաստ կապակցությամբ՝ մարդու մեջ, բժիշկների մեջ, Արամի մեջ, անձերի մեջ:

Գ.1.2. Գոյականի հոգնակի թվի կազմության յուրահատկություններ: Գիտենք, որ եզակին նշանակում է մեկ առարկա, իսկ հոգնակին՝ նույն տեսակի մեկից

³⁸ Հարցի մասին ավելի մանրամասն տես Զ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007:

ավելի առարկաներ: Սովորաբար հոգնակի թիվ չեն ստանում որոշ **վերացական** (ազնվություն, կամք, վերացում, ճախր, ծաղր), **անհաշվելի** (օդ, նավթ, անագ), **հավաքական** (ամանեղեն, ուսանողություն, վառելիք, դեղորայք) առարկաներ նշանակող գոյականները, **հատուկ անունները** (Սահարա, Հակոբ, Մեծ Բրիտանիա) և մի շարք այլ գոյականներ (տիեզերք, մթնոլորտ, լուսին):

Հատուկ անունը հոգնակի թիվ ունենում է երկու առանձնահատուկ դեպքերում:

1. Միևնույն անունով մեկից ավելի անձ կամ իր նշանակելիս՝ «Եկան տեր և տիկին **Արամյանները**»: «Տիգրան Մեծի կառուցած երեք **Տիգրանակերտներն** էլ հայտնի քաղաքներ են եղել»: «Արարատ լեռը կազմված է Մեծ և Փոքր **Մասիսներից**»: «**Հովհաննեսներն** այսօր գործի չեն եկել»:

2. Տվյալ անձին կամ առարկային բնորոշ հատկանիշ անվանելիս՝ «**Մենք վարդաններ շատ ենք ունեցել**»: «Երիտասարդությունս անցել է **մոսկվաներում**»: «**Մեր նոր պատմության մեջ սումգաիթներ շատ են եղել**»: Այս դեպքում բառը գրվում է փոքրատառով՝ որպես հատկանիշ անվանող հասարակ գոյական:

Պետք է զգուշանալ երկու կամ ավելի միանման մասերից կազմված առարկաներ ցույց տվող գոյականների՝ **ակնոց, ականջակալ, տաբատ, զուգագուլպա, ձեռնաշղթա** ևն, հոգնակի ձևերը եզակիի իմաստով գործածելուց (ակնոցներ դնել): Միայն պատճառներից է այն, որ նման բառերը որոշ լեզուներում (ռուսերեն, անգլերեն) անեզական են:

Գոյականի, ինչպես նաև գոյականաբար գործածված այլ բառերի հոգնակի թիվը կազմվում է՝ ուղիղ ձևին՝ եզակիին, ավելացնելով **-եր** կամ **-ներ** վերջավորությունը: Բացառություն են **մարդ** և **կին** բառերը, որոնց հոգնակին է՝ **մարդիկ, կանայք**: **Տիկին, պարոն, անձ** բառերը, բացի կանոնավոր՝ **տիկիններ, պարոններ** և **անձեր** ձևերից, կարող են հոգնակի դառնալ նաև **տիկնայք, պարոնայք, անձիք** զուգաձևերով: (Երբեմն գործածվում է հնից ավանդված **տիա՛րք** հանդիսական դիմելաձևը):

Միավանկ բառերի (այդ թվում՝ փոխանուն ածականների) հոգնակին, ինչպես գիտենք, սովորաբար կազմվում է **-եր**, իսկ բազմավանկներինը՝ **-ներ** վերջավորությամբ՝ **տն-եր, տարր-եր, նյարդ-եր, շատ-եր, սեղան-ներ, կառավարություն-ներ, սիրամարգ-ներ, եկեղեցի-ներ**:

Միավանկ (ինչպես նաև գաղտնավանկով վերջացող երկվանկ՝ մեկուկեսվանկանի) վերջնաբաղադրիչով բազմավանկ գոյականների մի մասի հոգնակին կազմվում է **-եր** վերջավորությամբ՝ **ձեռագր-եր, դեղատն-եր, փաստաթղթ-եր, գաղթավայր-եր, բուժքույր-եր**: Դրանք այն բառերն են, որոնցում այդ վերջնաբաղադրիչը՝ որպես գոյական, պահպանում է իր բուն իմաստը, իր նախորդ բաղադրիչին համադաս է (սարուժորեր, հարցուփորձեր, թերուղեմեր) կամ նրա լրացյալն է և նրա հետ միասին ցույց է տալիս այդ բուն իմաստի տարատեսակը՝ **գիր - հեռագիր, լրագիր, ծրագիր, խորագիր, ճակատագիր, ցույց - նստացույց, քույր - հորաքույր, բուժքույր, այց - ստուգայց, համայց, զոր(ք) - հեծելազոր, կայազոր, թիկնազոր**: Սա նշանակում է, որ **ձեռագիր-ը, հեռագիր-ը, ծրագիր-ը** գրի տեսակներ են, **առանձնատուն-ը, թոնրատուն-ը, իջևանատուն-ը** տան

տեսակներ են, **միջնակետ**–ը, **ծայրակետ**–ը, **ստորակետ**–ը կետի տեսակներ են
 են: Այս բառերը մեծ մասամբ կարելի է արտահայտել բառակապակցությամբ,
 որի գերադաս անդամը (լրացյալը) հենց միավանկ վերջնաբաղադրիչն է, և
 բառակապակցությունը հոգնակի դարձնելիս –**եր** վերջավորությունն է ստանում
 հենց այդ բաղադրիչը՝ **խնդրագրքեր** – **խնդիրների գրքեր**, **ծեռագրեր** – **ծեռքի**
գրեր, **նստացույցեր** – **նստած ցույցեր**, **միջնակետեր** – **միջին կետեր**:

Այլ դեպքերում միավանկ վերջնաբաղադրիչով բառն ստանում է –**ներ** վերջա-
 վորությունը, ընդ որում՝ այդ վերջնաբաղադրիչը չի ենթարկվում հնչյունա-
 փոխության՝ **կենսագիր–ներ**, **վիպագիր–ներ**, **հարկահան–ներ**, **լուսանցք–ներ**
 են: Պատճառն այն է, որ այս դեպքում բաղադրյալ բառը իր միավանկ վերջնա-
 բաղադրիչի նշանակած երևույթի տարատեսակ ցույց չի տալիս, օրինակ՝
հաշվապահ նշանակում է ոչ թե «հաշվի պահ», այլ «հաշիվ պահող (անձ)»
 (նմանապես՝ **իրավապահ–ներ**, **թիկնապահ–ներ** են), **ժամկետ** նշանակում է ոչ
 թե «ժամանակի կետ», այլ «ժամանակահատված», **տեսակետ** նշանակում է ոչ
 թե «տեսնելու կետ», այլ «կարծիք, հայացք, մոտեցում», **լիազոր** նշանակում է ոչ
 թե «լրիվ զորք», այլ «բոլոր իրավունքներ ունեցող (անձ)»: Այսինքն՝ այս դեպքերում
 միավանկ բառը բաղադրյալ բառի կազմում իր գոյականական բուն իմաստով չէ,
 որ հանդես է գալիս, այլ մի նոր, մեծ մասամբ՝ բայական, երբեմն էլ՝ փոխաբերական
 իմաստով:

Միավանկ (ինչպես նաև գաղտնավանկով վերջացող երկվանկ) վերջնաբաղադրիչի՝
 ածական լինելու դեպքում բառն ստանում է –**եր** վերջավորություն, եթե, ըստ
 վերոհիշյալ կանոնի, այդ բաղադրիչը նույն իմաստն ունի, ինչ առանձին կիրա-
 ռության դեպքում՝ **մեծամեծերը**, **գերծանրերը**, **ամենափոքրերը**, **կիսաքաղցրերը**
 են, բայց՝ **սրտաբացները** են:

Այնուամենայնիվ, կան միավանկ վերջնաբաղադրիչով բառեր, որոնք շեղվում են
 կանոնից՝ **ծովահեն–ներ**, **օդահեն–ներ**, **մանրե–ներ**, **միրիալ–ներ**, **վերելք–ներ**,
 կամ ունեն երկձևություն՝ **երկրաշարժ–(ն)եր**, **լեռնանցք–(ն)եր**, **կայազոր(ն)եր**,
ջրանցք–(ն)եր, **ջրհոր–(ն)եր** են:

Հոգնակի թվի կազմության տարբերակներ: Հաճախ լեզվական կանոնը
 խախտելու պատճառ են դառնում որոշակի կազմություն ունեցող գոյականների
 թվակազմության յուրահատկությունները:

1. Գաղտնավանկով վերջացող մի շարք երկվանկ բառերի (այդ թվում՝ փոխանուն
 ածականների) հոգնակին կազմվում է –**եր** վերջավորությամբ՝ **ազդր–եր**, **ծանր–**
եր, **մանր–եր**, **տետր–եր**, **փոքր–եր** (դրանց **ներ**–ով ձևերը՝ **ծանր–ներ**, **մանր–**
ներ են, գրական չեն): Միայն **անգղ**, **արկղ**, **գամփռ** բառերի հոգնակին կարող է
 կազմվել ոչ միայն –**եր**, այլև –**ներ** վերջավորությամբ՝ **անգղ–(ն)եր**, **արկղ–(ն)եր**,
գամփռ–(ն)եր: Բարդ բառերի վերջնաբաղադրիչ դառնալու դեպքում նման
 բառերի հոգնակին ճիշտ է կազմել –**եր**–ով՝ **նոթատետրեր**, **բառատետրեր**,
խնայրամարկղեր, **տոմսարկղեր**, **այտուկրեր**, **փղոսկրեր**, **գանգոսկրեր**,
ծովեզրեր են: Գաղտնավանկով սկսվող երկվանկ գոյականների հոգնակին
 կազմվում է –**ներ** վերջավորությամբ՝ **շտաբ–ներ**, **սպի–ներ**, **սպա–ներ**, **սփյուռք–**
ներ, **ձգան–ներ**, **վկա–ներ** են:

2. Մի շարք միավանկ բառերի հոգնակին կազմվում է **-ներ** վերջավորությամբ (գրաբարում **ն** վերջնահնչյուն ունեցող բառերի մեծ մասը նոր հայերենում հոգնակի կազմելիս վերականգնում է այն՝ **ն + եր**)՝ **ծնկ-ն + եր**, **ծկ-ն + եր**, **մատ-ն + եր**, **հարս-ն + եր**, ինչպես նաև խոսակցական **ծեռ-ն + եր**, **ոտ-ն + եր** (**ծեռք-եր**, **ոտք-եր** գրական տարբերակներին զուգահեռ): Բացառություն է նաև **ռուս** բառի հոգնակին՝ **ռուս-ներ** (նախկինում՝ **ըռուս** // **ուռուս-ներ**): Այս շարքի բառերը՝ որպես բաղադրյալ բառերի վերջնաբաղադրիչներ, նույնպես ստանում են **-ն + եր**՝ **շողակներ**, **սառցալեռներ**, **շնածկներ**, **դաշտամկներ**, **բելոռուսներ**: Ող և **ռունգ** բառերի **ողներ**, **ռունգներ** ձևերն ակնհայտորեն հնացած են և անգործածական: Դրանց փոխարեն այժմ գործածվում են **ողեր**, **ռունգեր** ձևերը:

3. Ստեղն, եղեգն, բևեկն պարզ բազմավանկ բառերը, ինչպես նաև **-ազն**, **-եղն**, **-ակն**, **-ոտն** երկվանկ վերջնաբաղադրիչով բարդ բառերը ստանում են **-եր** վերջավորությունը՝ **ստեղն-եր**, **եղեգն-եր** (**եղեգ-եղեգներ**), **բևեկն-եր**, **արքա-յազն-եր**, **դյուցազն-եր**, **հետիոտն-եր** ևն:

Ծան. 1: Լինում են և հոգնակիի ձևերի՝ հիմքի տարբերության հետևանքով առաջացած հարանուններ, օրինակ՝ **մանրամասն-եր** «մանրամասնություններ» և **մանրամաս-եր** «մանրակներ, դետալներ»:

Ծան. 2: **-եր** վերջավորություն ստացող միավանկ ու որոշ բազմավանկ բառեր (ինչպես նաև հոգնակի թիվ չունեցող անորոշ դերբայը)՝ **-ներ** կարող են ստանալ ստացական հոգնակի կազմելիս՝ **աչքներս**, **տուններդ**, **վիզները**, **սանրներդ**, **բանուգործներս**, **գնալներդ**: Այդպես լինում է, երբ հոգը փոխարինում է անձնական դերանունների հոգնակի սեռականի ձևերին, ինչպես՝ **մեր աչքը** // **աչքներս**, **ձեր տները** // **տուններդ**, **իրենց խոսքերը** // **խոսքները**, **նրանց շուրջը** // **շուրջները**՝ նշանակելով, որ տվյալ առարկան (ները) կամ տվյալ տեղը վերաբերում է յուրաքանչյուրին:

4. Մատ և **հարս** բառերով վերջացող բաղադրյալ բառերը ստանում են **-եր** կամ **-ներ** վերջավորությունը՝ **ցուցամատ-(ն)եր**, **բթամատ-(ն)եր**, **նորահարս-(ն)եր**, **ջրահարս-(ն)եր**: Մատ-ով բաղադրվածների համար առավել սովորական է **-ներ**-ով, իսկ **հարս**-ով բաղադրվածների դեպքում՝ **-եր**-ով կազմությունը: («Խաղողի վագի ոստ» նշանակությամբ **մատ**-ը հոգնակին սովորաբար կազմում է **-եր**-ով՝ **խաղողի մատեր**):

5. **-պետ** և **-նիշ** գոյական վերջնաբաղադրիչով բառերի համար ճիշտ են **և՛ -եր**-ով, **և՛ -ներ**-ով կազմությունները՝ **քաղաքապետ-(ն)եր**, **ոստիկանապետ-(ն)եր**, **գնդապետ-(ն)եր**, **վարչապետ-(ն)եր**, **թաղապետ-(ն)եր**, **համարանիշ-(ն)եր**, **ուղենիշ-(ն)եր**, **դրամանիշ-(ն)եր**, **չափանիշ-(ն)եր** ևն:

6. Կան միավանկ վերջնաբաղադրիչով համանուններ, որոնցից մեկի հոգնակին կազմվում է **-եր**, մյուսինը՝ **-ներ** վերջավորությամբ՝ կախված իմաստից, օր.՝ **թթվասեր-եր** (թթվամշակված սերուցքներ) – **թթվասեր-ներ** (թթու սիրողներ), **հասակաչափ-եր** (հասակի չափը) – **հասակաչափ-ներ** (հասակը չափելու գործիք), **հուշագր-եր** (մեմորանդումներ) – **հուշագիրներ** (հուշ գրող հեղինակներ), **մատենագր-եր** (ծեռագիր մատյաններ) – **մատենագիր-ներ** (մատյան գրող հեղինակներ), **սառցահատ-եր** (սառույցի հատիկներ) – **սառցահատներ** (սառույց հատող նավեր), **սրտագիր-ներ** (սրտի աշխատանքը գրառող սարք) – **սրտագր-**

եր (սրտի աշխատանքի գրառումը), **քառատող-եր** (չորսական տողեր) – **քառատողներ** (չորս մասի բաժանողներ) են:

Ծան.: Կան միավանկ գոյականներ (և դրանցով բաղադրված բառեր), որոնց հոգնակին կազմվում է և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ հիմքերով: Մի մասի համար գրական լեզվում սովորական են հնչյունափոխված հիմքով ձևերը (**սրբեր, գնդեր, արնաբծեր, մենախցեր, հողաթմբեր, պարախմբեր** ևն), մյուսների համար՝ անհնչյունափոխ հիմքով-ները (**սուրճեր, թուխպեր, խունկեր, մարտացույցեր, զարդատուփեր** ևն): Դրանց գործածության մեջ կողմնորոշվելու համար դժվար է հստակ ուղեգիծ սահմանել. երկուսն էլ կազմված են լեզվական կանոնին համապատասխան: Թեև պիտի նկատել, որ զնալով տարածում են ստանում անհնչյունափոխ հիմքով ձևերը: Լեզվի զարգացման ընթացքում ի վերջո հաղթող կարող է ճանաչվել դրանցից մեկը³⁹:

Գ.1.3. Հավաքական գոյականներ: Մի շարք գոյականներ, ձևով եզակի լինելով, բովանդակությամբ «հոգնակի» են, այսինքն՝ ցույց են տալիս միատեսակ առարկաների բազմություն, հավաքականություն՝ **ամբոխ, ազգ, բնակչություն, զորք, բազմություն, նախիր**: Դրանք կոչվում են **հավաքական գոյականներ** կամ **հավաքական անուններ**: Այուս գոյականների նման կարող են դառնալ հոգնակի՝ **ամբոխներ, ժողովուրդներ, զորքեր, բազմություններ**: Հավաքական իմաստով է գործածվում նաև **մաս** բառը մի շարք կապակցություններում ու բաղադրություններում՝ **ներկաների մի մասը, նրանց մեծ մասը, բերքի գերակշռող մասը, մեծամասնությունը**: Եզակի թվով հավաքական գոյականները ենթակա լինելիս վերցնում են եզակի թվով ստորոգյալ՝ **Մեծ մասը** չմասնակցեց ժողովին: **Ժողովուրդը** հզոր ուժ է: **Ջորքը** շարժվեց առաջ:

Գ.1.4. Հոգնակերպ գոյականներ: Ձևով լինելով հոգնակի՝ բովանդակությամբ եզակի են, այսինքն՝ ունեն հոգնակերտ վերջավորություն, սակայն նշանակում են մեկ առարկա՝ եզակի թիվ են և ենթակա լինելիս վերցնում են եզակի թվով ստորոգյալ: Դրանք մեծ մասամբ աշխարհագրական անուններ են՝ **Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Արտեր (կղզի), Նիդերլանդներ, Տեղեր (գյուղ)**: Այսպիսի անունները հոգնակի թիվ չունեն: Սրանցից տարբեր են որոշ լեռնաշղթաների անուններ (Ալպեր, Կարպատներ, Անդեր, Ապենիններ, Պիրենեյներ, Հիմալայներ), որոնք թեև աշխարհագրական մեկ հասկացություն (անուն) են նշում, սակայն ունեն մերթ **հոգնակիի**՝ «լեռներ» իմաստը (Ալպյան լեռներ, Կարպատյան լեռներ), մերթ **եզակիի**՝ «լեռնաշղթա, լեռնահամակարգ» իմաստը (Ալպյան լեռնաշղթա, Կարպատյան լեռնահամակարգ): Հետևաբար դրանք վերցնում են մերթ հոգնակի թվով ստորոգյալ՝ Ալպերը շատ բարձր են, մերթ՝ եզակի թվով՝ Ալպերն ունի 1200 կմ երկարություն:

Գ.1.5. Անեզական գոյականներ: **–անք, –ենք, –ոնք, –ունք** ածանցներով կազմված անձնանիշ բառերը (Վարդանանք, Ծովինարենք, պապոնք, Բադունք) թեև չունեն հոգնակիի վերջավորություն, բայց արտահայտում են հոգնակի թիվ և ստորոգյալի կամ բացահայտիչի (բացահայտյալի) հետ գործածվելիս պահանջում

³⁹ Գոյականի հոգնակի թվի կազմության մասին տես նաև Դ. Գյուրջինյան, Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում (Քերականական քառարան–տեղեկատու), Եր., 2005:

են հոգնակի թվով համաձայնություն, օր.¹ Հրավիրված էին նաև **Մեծունք**: Արա-մենք՝ մեր ազգականները, ապրում են Վանաձորում: Դրանք եզակի թիվ չունեն:

Ծան.: Նույն ածանցներով իրանիշ բառերը գրական հայերենում արտահայտում են եզակի թիվ (**զրկանք, ուլունք, մասունք, իրավունք**): Դրանց մի մասը հոգնակի թիվ չի ունենում (**թշնամանք, զարթոնք, արթունք**):

Գ.1.6. Որոշյալ և անորոշ առումներ: Գոյականի որոշյալ առումը կազմվում է՝ ուղիղ ձևին՝ անորոշին (եզակի կամ հոգնակի թվով, ուղղական կամ սեռական-տրական հոլովով), ավելացնելով **-ը** կամ **-ն** վերջամասնիկը: Բացառություն է **Աստված** (նաև **Քրիստոս**) բառը, որը եզակի ուղղականում առանց վերջամասնիկի էլ կարող է որոշյալ առումով լինել՝ «**Աստված** ձեզ պահապան»: Հոգնակիում որոշիչ հոդ չեն ստանում **մարդիկ, կանայք, տիկնայք, պարոնայք, անձինք** բառերի, **-անք, -ենք, -ոնք, -ունք** ածանցներով անձնանիշ բառերի (Վարդանանք, Սուրենենք, պապոնք, Թելունք) ուղղականն ու սեռական-տրականը:

Որոշյալություն արտահայտող վերջամասնիկը կոչվում է **որոշիչ հոդ**: Ծագումնաբանորեն **ն**-ն ավելի հին է. **ը** հոդը առաջացել է վերջնահանգում՝ **ը** գաղտնավանկից՝ (**ը**) **ն** > **ը** զարգացումով. **ը** և **ն** մասնիկները որոշիչ հոդեր են: Իմաստային առումով տարբերություն չունեն: Ցույց են տալիս առարկայի հայտնի, ծանոթ լինելը: Կարող են ցույց տալ նաև առարկան իր ամբողջ ծավալով, երբ հատկապես դրվում են նյութ ցույց տվող գոյականների վրա՝ «**Ջուր** թափվեց հատակին» – «**Ջուրը** թափվեց հատակին», կամ առարկան որպես տեսակի հասկացություն՝ «**Շունը** մարդու բարեկամն է»: Ունեն կիրառական տարբերություններ. ծայնավորով վերջացող բառերը միայն **ն** հոդ են ստանում՝ Կարոն, առուն, այգին, Նարինեն: Բաղաձայնով վերջացող բառերը **ը** հոդ են ստանում բաղաձայնով (այդ թվում՝ **եյի**–ով և **ոյի**–ով) սկսվող բառերից առաջ՝ գործը կարճվեց, լուսինը երևաց, հրանոթները որոտացին:

Ը հոդը ծայնավորով (ինչպես նաև **սկ, ստ, սպ, սթ, սք, սփ, զգ, զդ, զք** տառակապակցություններով) սկսվող բառերից առաջ կարող է փոխարինվել **ն** հոդով՝ **նախագահը ընդունեց // նախագահն ընդունեց, Արամը ասաց // Արամն ասաց, գիրքը ընկավ // գիրքն ընկավ**: Այս փոխարինումը սովորաբար չի կատարվում այն դեպքում, երբ բանավոր խոսքում հոդ ստացած բառից հետո դադար է լինում (հատկապես թվարկման ժամանակ), որը գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով, բուրժով կամ տրոհության այլ նշանով՝ «Կարենը, Արամը և ես կգանք քեզ հետ»: «Մեր պատգամավորը՝ Ավագյանը, վերընտրվեց»:

Բաղաձայնով վերջացող բառերը օժանդակ բայից և **էլ** (նաև **ու**) շաղկապից առաջ միայն **ն** հոդ են ստանում՝ Գործն է կարևորը: Այդ հարցն էլ լուծվեց: Խոսքն ու գրույցը անպակաս են:

Կետադրական նշանը հաճախ առոգանական դադարի արտահայտություն է, հետևաբար **ն** հոդի առկայության դեպքում կետադրական նշան կարող է և չդրվել, ինչպես՝ «Խոսքն իհարկե դրա մասին է»: «Այդ հարցն անշուշտ մեզ հետաքրքրում է»:

Ծան.: Թյուր կարծիք կա, թե **հ**-ով սկսվող բառերից առաջ կարելի է գործածել **և** հոդը՝ հազար **ինն հարյուր**, լավ **գործն հիշվում** է: Սա գրական լեզվում չի հանձնարարվում:

Որոշյալ առման դեպքում **ը** և **ն** հոդերի փոխարեն կարող են գործածվել նաև **ս** և **դ** հոդերը՝ միաժամանակ արտահայտելով ստացականություն, դիմորոշություն կամ ցուցականություն՝ **ընկերս եկավ, գրությունդ կարդացի, ես՝ փաստաբանս, դուք՝ լրագրողներդ, վերջերս իմացա**:

Գ.1.7. Հոլովական տարբերակային ձևեր (զուգածկություններ): Հոլովական զուգածկությունները սովորաբար ունենում են գործառական-ոճական տարբեր արժեքներ: Երբեմն դրանցից մեկը լինում է առավել գրական, մյուս(ներ)ը՝ առավել խոսակցական: Երբեմն էլ դրանց տարբերությունը լինում է զուտ կապակցական: Որոշ դեպքերում տարբերակներից մեկը լինում է հնաբանություն կամ նորաբանություն:

Սովորաբար ներգոյականի **-ում** վերջավորություն չեն ստանում, ներգոյական հոլով չունեն անձերի և կենդանիների հատուկ և հասարակ անունները (մարդ, սեր, դասախոս, ավանդատու, Հակոբ, արջ, Չալո), ինչպես նաև **-ություն**, **-ում** ածանցներով վերացական գոյականները (լուծություն, նվիրում, զգուշացում): Այդ բառերի ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է սեռական-տրական հոլովածևի և **մեջ** կապի միջոցով՝ **մարդու մեջ, սիրո մեջ, լուծյան մեջ, նվիրումի մեջ, զգուշացման մեջ**: **Մեջ** կապով այսպիսի կազմությունները ներգոյական հոլովածևեր չեն:

1. **-ու** հոլովման պատկանող բառերից զուգահեռաբար նաև **-ի** հոլովման են ենթարկվում՝ **-ելի, -ալի, -անի** ածանցով մի քանի գոյականներ՝ **հայելիի, բանալիի, խինկալի, սպեղանիի** ևն, մի քանի հատուկ անուններ՝ **Էրեբունիի, Մուղնիի, Մեղրիի, Վեդիի, Աղասիի, Բաֆֆիի, Քենեդիի** ևն, մի շարք հասարակ անուններ՝ **այրիի, այրումիի, գերիի, կանաչիի, նարդիի, նավաստիի, օդիի, քեռիի, սոնիի** ևն: (Բաֆֆի գրողի անվան համար սովորական է **-ու**-ով ձևը՝ **Բաֆֆու** «Սամվել» վեպը):

Գյումրի և **Լոռի** բառերի վերաբերյալ կա տերմինաբանական կոմիտեի հատուկ որոշումը՝ դրանց համար հանձնարարելի համարել **ու**-ով կազմությունները՝ **Գյումրու, Լոռու**, հետևաբար՝ **Գյումրուց, Գյումրով, Գյումրում, Լոռով, Լոռուց** (փոխ.՝ **Գյումրի-ի, -ից, -ով, -ում, Լոռի-ի, -ից, -ով, -ում**): Ակնհայտորեն աղավաղվում է բառի պատկերը, նաև անբարեհունչ ձևեր են: Երկրորդները՝ **Գյումրիից, Գյումրիով, Լոռիից, Լոռիով** ևն, և բառապատկերը պահպանելու, և արտասանական առումով նախընտրելի են. որոշումը վերանայման կարիք ունի: **Գյումրի, Շուշի, Լոռի** բառերի **-վա**-ով կազմությունները (**Գյումրվա** ուտեստներ, **Շուշվա** բնություն, **Լոռվա** բնաշխարհ) այսօր հնացած են:

Տերմինաբանական կոմիտեի որոշմամբ, բացի **Թբիլիսի** բառից, վրացական մյուս տեղանունների համար պահպանվում են առանց **ի** վերջնահնչյունի ձևերը (**Բաթում, Բորժոմ, Ախալքալաք, Սուխում, Քութայիս** ևն). սրանց սեռական-տրականի ձևերը կկազմվեն **-ի** հոլովիչով՝ **Բաթում-ի (-ից, -ով, -ում), Սուխում-ի (-ից, -ով, -ում), Քութայիս-ի (-ից, -ով, -ում)** ևն: Ճիշտ է՝ **Թբիլիսի-ի, -ից, -ով,**

–**ում**: Կանոնը չի տարածվում **ի**–ով վերջացող այլ տեղանունների վրա՝ **Կախի, Գորի, Փոթի** ևն:

–**ելի, –ալի, –անի** ածանցներով ածականների, մի շարք հատուկ անունների, **թի, դի, դար** բառերի՝ ու հոլովմամբ ձևերը, ինչպես՝ **Շուշու, Անու, Բջնու, Արենու, Արտենու, Փարպու, Բերկրու, Սոչու, Նոր Գեղու, Նազելու, թիու, դիու, դարու, պիտանու, խղճալու, պատվելու, ածելու**, հնացած են կամ խոսակցական, ոչ գրական:

Անկողին, մարդ, ամուսին բառերի՝ –ի հոլովմամբ ձևերը՝ **անկող(ի)նի, մարդի, ամուս(ի)նի**, խոսակցական են, ոչ գրական: Կանոնական են՝ **անկողնու, մարդու, ամուսնու**:

Ծան.: Այս շարքում երբեմն նշվում է **կաշի** բառը (**կաշու, կաշուց**): Սրանք արդեն հնացած ձևեր են. **կաշի**–ն արդի գրական հայերենում ենթարկվում է –ի հոլովման՝ **կաշի–ի** (**–ից, –ով, –ում**):

2. –**վա** հոլովման պատկանող մի շարք ժամանականիշ բառեր (**օր–վա, առաջ–վա, գիշեր–վա, տար–վա, ցերեկ–վա, ժամ–վա** ևն) ոչ ժամանականիշ իմաստով գործածվելիս սովորաբար ենթարկվում են այլ հոլովման՝ **օրի, ժամի, ամսի, գիշերի, կեսօրի, կեսգիշերի, առավոտի, ժամանակի, տարու** ևն: Օր.՝ «Այս ինչ օրի ես հասել»: «Հանգուցյալ պապիս տարուն հավաքվել էին մեր բոլոր հարազատները»: «**Առավոտ**»–ի վերջին էջում հետաքրքիր լուր կար»: «**Ժամանակի** մեծ մասը նա անցկացնում էր տանը»: «Վերադարձավ ճիշտ **ժամանակին**»: «Այս ուշ **ժամին** ինչ եք անում այստեղ»: «**Ամսի 5**–ին կիրակի է»: «Գործարքը կնքվել է **կեսգիշերին**»:

–**վա** հոլովման պատկանող բառերի մեծ մասի բացառականը կարող է կազմվել ոչ միայն սեռական–տրականի (**ամսվան–ից, շաբաթվան–ից, գիշերվան–ից**), այլև ուղղականի ձևից (**ամս–ից, շաբաթ–ից, գիշեր–ից**):

Ժամանականիշ **վայրկյան, րոպե, դար, երեկո** բառերը ենթարկվում են –ի հոլովման՝ **վայրկյանի, րոպեի, դարի: Բոպե, դար, երեկո**, ինչպես նաև **այժմ** բառերի –**վա**–ով ձևերը համարվում են ոչ գրական:

–**վա** հոլովման պատկանող բառերը կարող են ունենալ նաև սեռական–տրականի ձևից կազմված բացառականի, գործիականի և ներգոյականի ձևեր՝ **օրվանով, օրվանում, վաղվանից, վաղվանով, վաղվանում**, որոնք իրականում փոխանուն հատկացուցիչի հոլովածներ են՝ **Վաղվա** ծրագիրն ավելի գրավիչ է, քան այսօրվանը. **վաղվանում** հետաքրքիր համերգներ կան, իսկ **այսօրվանում**՝ ոչ:

3. –**ան** մասնիկ եզակի սեռականում սովորաբար ստանում են –**ում** վերջածանցով գոյականները՝ **շարժման, ուսման, լարման, հարցման**, գործիականում ունենում են –**ք**՝ **շարժմամք, ուսմամք, լարմամք, հարցմամք**: Գործածական են նաև դրանց –ի հոլովմամբ ձևերը՝ **շարժումի, ուսումի, լարումի, հարցումի**, և այդ դեպքում գործիականը կազմվում է ոչ թե –**ք**, այլ ընդհանրական –**ով** վերջավորությամբ՝ **շարժումով, ուսումով, լարումով, հարցումով**: Առաջինները գրական–գրքային կազմություններ են, երկրորդները բնորոշ են խոսակցական լեզվին:

Ծան.։ **Դիմում** բառը ենթարկվում է միայն **-ի** հոլովման։ **-ում** ածանցով վերջացող առանձին գոյականների համար սովորական է **-ի**-ով ձևը՝ **շահում-ի, տեղում-ի, վատնում-ի, ապրում-ի, պատում-ի, այցելում-ի**։ Դրանցում առարկայական իմաստը առավել ընդգծված է։

Մահ բառը սեռական-տրականում ունենում է ոչ թե **-վա**, այլ **-վան** հոլովիչը՝ **մահվան, մահվանից, մահվանով** // **մահվամբ**։ **Մահ** բառը ենթարկվում է նաև **-ի** հոլովման՝ **մահի, մահից, մահով**՝ «Մահը մերն է, մենք՝ մահինը»։ «Գլուխը մահի տալ»։ Սրանք ունեն որոշ խոսակցական երանգ։ Հանդիպում է նաև **մահու** ձևը՝ որպես հնաբանություն՝ կենաց և **մահու** պայքար, **մահու** հրեշտակ։

Բեռ, գառ, եգ, թռռ, ծոռ, լեռ, ծունկ, բուռ, մանուկ բառերը, **-ան** հոլովման ձևերից բացի (բեռ-ան, գառ-ան, թռռ-ան), ունեն նաև **-ի** հոլովիչով ձևեր՝ **բեռի, գառի, եգի, թռռի, ծոռի, լեռի, ծ(ու)նկի, բռի, մանուկի**, որոնք ունեն խոսակցական երանգ։ **Մանուկ** հատուկ անունը ենթարկվում է միայն **-ի** հոլովման՝ **Մանուկի**։

Ամառ, ծմեռ բառերը ենթարկվում են նաև **-վա** հոլովման՝ **ամռան** // **ամառվա, ծմռան** // **ծմեռվա**։ **Գարուն, աշուն** բառերի բացառականը և գործիականը, ինչպես նաև **ամառ, ծմեռ** բառերի միայն գործիականը հիմքային զուգաձևություն ունեն։ Դրանք կարող են կազմվել ոչ միայն ուղղականի՝ **գարուն-ից, աշուն-ից, գարուն-ով, աշուն-ով, ամառ-ով, ծմեռ-ով**, այլև սեռական-տրականի ձևից՝ **գարնան-ից, աշնան-ից, ամռան-ից, ծմռան-ից, գարնան-ով, աշնան-ով, ամռան-ով, ծմռան-ով**։ **Ամառ, ծմեռ** բառերի բացառականը կարող է կազմվել ոչ միայն **-ան՝ ամռանից, ծմռանից**, այլև **-վա** հոլովման ձևով՝ **ամառվան-ից, ծմեռվան-ից**։

-ի հոլովման ենթարկվող **հիմք** բառի սեռական-տրականը (հիմքի) ունի նաև **-ան** հոլովման պատկանող զուգահեռ ձև՝ **հիման**։ քարացած ձև է՝ **վրա** կապի հետ սահմանափակ կիրառությամբ՝ նյութերի **հիման վրա**, փաստերի **հիման վրա** ևն։ Ուղղականի **հիմ, հիմեր** // **հիմներ** և գործիականի **հիմամբ** ձևերը ներկայումս գործածական չեն։

Ծունկի, ծնկի և ծնկան տարբերակներից գործածական են առաջին երկուսը։ վերջինը աստիճանաբար դուրս է մղվում։

4. -ոջ հոլովման են պատկանում անձնանիշ **քույր, ընկեր, տեր, կին, աներ, սկեսուր, տալ, տեգր** բառերը և դրանցով կազմված այն բարդությունները, որոնցում դրանք վերջնաբաղադրիչ են՝ **քրոջ, ընկերոջ, տիրոջ, կնոջ, աներոջ, սկեսրոջ, տալոջ, գործընկերոջ**։ **Քույր** բառը «բուժքույր» իմաստով կիրառվելիս կարող է ենթարկվել նաև **-ի** հոլովման՝ **քույրի, քույրից, քույրով, բուժքույրի, բուժքույրից, բուժքույրով**։

Սկեսուր, տալ, տեգր բառերը ենթարկվում են նաև **-ի** հոլովման՝ **սկեսուրի, տալի, տեգրի**, որոնք գնալով ավելի գործածական են դառնում։ Ավելին՝ **սկեսուր, տալ, տեգր** բառերի բացառական և գործիական հոլովների **-ոջ**-ով ձևերը՝ **սկեսրոջից, սկեսրոջով, տալոջից, տեգրոջով**, այժմ խոսակցական են։ Խոսակցական է նաև **տեգոր** ձևը։ Դրանց գրական համարժեքները կազմվում են ուղղականի ձևից՝ **սկեսուր-ով, սկեսուր-ից, տալ-ով, տալ-ից, տեգր-ով, տեգր-ից**։

Հոյսով և հուսով տարբերակներից առաջինը գործածվում է առանձնաբար՝ «**Հոյսով** սպասելու եմ ձեզ», երկրորդը՝ սովորաբար **եմ**-ի հետ զուգակցված՝ «**Հուսով եմ**»: Սխալ չէ՝ **հոյսով եմ**:

Ծան. Մի քանի գոյականներ (**անկյուն, հրապարակ, խաչմերուկ, փողոց** ևն) ներգոյականի իմաստով գործածվում են **վրա** կապով զուգորդված՝ **անկյունի վրա, փողոցի վրա** ևն: Դա բնորոշ է խոսակցականին և գրական լեզվի կանոնով հանձնարարելի չէ:

Տեր վերջնաբաղադրիչով **տերտեր** բառը ենթարկվում է **-ի** հոլովման, **տանտեր** բառը՝ **թեմ -ի, թեմ -ոջ** հոլովման, **տանտեր**-ը՝ միայն **-ոջ՝ տանտիրոջ**:

5. -ց հոլովման պատկանող **-անք, -ենք, -ոնք, -ունք** ածանցներով կազմված անձնանիշ բառերն ունեն միայն հոգնակիի իմաստ՝ **Հայկենք, Հայկենց, Հայկենցից, Հայկենցով**:

6. ա ներքին հոլովման պատկանող **ծյուն, սյուն, անկյուն, արյուն, անուն** բառերը (**ծյան, սյան, անկյան, արյան, անվան. անուն** բառի դեպքում **ա** հոլովիչը ոչ թե փոխարինում է արմատի **ու** հնչյունին, այլ ավելանում է նրանից հետո, իսկ **ու**-ն դառնում է **վ**) կարող են ենթարկվել նաև **-ի** հոլովման՝ **ծյունի, սյունի, անկյունի, արյունի, անունի**, և այդ դեպքում **արյուն, անուն** բառերի գործիականը կազմվում է ոչ թե **-բ** (միությանը, արյամբ, անվամբ), այլ ընդհանրական **-ով** վերջավորությամբ՝ **արյունով, անունով**: Եվ սեռական-տրականի, և գործիականի այս ձևերը (անունի, անունով) խոսակցական երանգ ունեն:

-ություն ածանցով բառերի՝ գործիականի կանոնական **-բ** վերջավորությամբ ձևերին զուգահեռ **-ով**-ով կազմությունները ունեն խոսակցական երանգ և գրական լեզվում հանձնարարելի չեն (միությամբ – միությունով, ցնծությամբ – ցնծությունով, պետությամբ – պետությունով):

Տուն, շուն բառերի բացառականը կարող է կազմվել ոչ միայն հնչյունափոխված ուղղականի (տն-ից, շն-ից), այլև սեռական-տրականի ձևից (տան-ից, շան-ից): **Հարություն** անձնանունը ենթարկվում է միայն **ի** հոլովման՝ **Հարությունի**:

7. ո հոլովման պատկանող անձնանիշ **հայր, մայր, եղբայր** բառերը և դրանցով կազմված անձնանիշ բարդությունները (նախահայր, տիրամայր, հորեղբայր ևն) հոլովական զուգածնություններ չունեն՝ **հոր, մոր, եղբոր, նախահոր, տիրամոր, հորեղբոր** (բայց՝ **տառամայրի, պտուտակամայրի**):

8. Այլաձև հոլովման պատկանող գոյականներից **սեր** բառը սեռական-տրականում ունի տարբերակային ձև՝ **սիրո / սիրուն** (երզը նվիրված է քո **սիրուն**), **սիրուց, սիրով**: Վերջինիս հետ չպետք է շփոթել համանուն **սեր** (սերուցք) բառը, որը պատկանում է **-ի** հոլովման՝ **սերի, սերից, սերով, սերում**:

Կայսր, դուստր, հույս, լույս, սուգ, հուր, պատիվ, խնդիր, մամուլ, ծնունդ, գալուստ, հանգիստ, կորուստ բառերը, բացի ընդհանրական **-ի** հոլովման ձևերից (կայսրի, դուստրի, հույսի, լույսի, ս(ու)գի, հրի, պատվի, խնդրի, մամուլի, ծն(ու)նդի, գալ(ու)ստի, հանգստի, կոր(ու)ստի), սեռական-տրականում ունեն նաև մեծ մասամբ քարացած կամ հնաձև կազմություններում հանդիպող անկանոն ձևեր՝

կայսեր, դստեր, հուսո, լուսո, սգո, հրո, պատվո, խնդրո, մամլո, ծննդյան, գալստյան, հանգստյան, կորստյան:

Աստված բառը սեռական–տրականում, բացի սովորական – **ու** հոլովման ձևից (աստծու), ունի նաև գրաբարից փոխանցված **աստծո** զուգաձևը: **Գալուստ** անձնանունը ենթարկվում է միայն –**ի** հոլովման՝ **Գալուստի:**

9. Հոլովման հնչյունափոխական զուգաձևությունները բնորոշ են արդի գրական հայերենին: –**ու** հոլովման պատկանող մի շարք բառեր գործիականում և ներգոյականում ունեն հիմքային տարբերակներ՝ **այգ(հ)ով, այգ(հ)ում, գին(հ)ով (գինով** ձևը ունի նաև **գինովցած** իմաստը), **Գյումր(հ)ով, Գյումր(հ)ում, գոլորշ(հ)ով, ընկուզեն(հ)ով, Լոռ(հ)ով, Լոռ(հ)ում, լուցկ(հ)ով, խճուղ(հ)ով, որդ(հ)ով, ոսկ(հ)ով, պատան(հ)ով, տար(հ)ով, տար(հ)ում, ուղ(հ)ով, ուղ(հ)ում** ևն: Թեքված ձևերում հիմքային տարբերակներ ունեն նաև –**ի**–ով հոլովվող մի շարք գոյականներ՝ **խորհ(ու) րդի / խորհ(ու)րդից / խորհ(ու)րդով / խորհ(ու)րդում** ևն, կամ՝ **բազմարկ(ի)չի, բացահայտ(ի)չի, խեցգետն(ի)նի, ծաղ(ի)կի, կոշ(ի) կի, համակարգ(ի)չի, հրահանգ(ի)չի, նվագարկ(ի)չի, ոճ(ի)րի, ուսուց(ի)չի** ևն: Դրանց մի մասի համար անհնչյունափոխ հիմքով ձևերը ակնհայտ խոսակցական երանգ ունեն, ինչպես՝ **թարգմանիչի, խորհրդանիշի, խորհուրդի, գիտ-խորհուրդի, ուսուցիչի, ոսկերիչի, տափաշիչի** ևն: Մյուս մասի համար նախընտրելի են անհնչյունափոխ ձևերը՝ **ախտանիշի, բազմարկիչի, ըմբիշի, կոշիկի, մանդարինի, մարգարինի, նիկոտինի, ոճիրի, ուղենիշի, քննիչի** ևն, քանի որ առավել ամբողջական են պահում բառի պատկերը, ընկալումը ավելի դյուրին է դառնում: Մի շարք գոյականների դեպքում հանձնարարվում են անհնչյունափոխ հիմքով տարբերակները՝ **ասպիրինի, բաղադրիչի, բեմադրիչի, դարչինի, դելֆինի, ընդունիչի, կրակայրիչի, հոլովիչի, պարաֆինի, պինգվինի, վարիչի, տպագրիչի, ցրիչի** ևն: Վստահաբար դժվար է ասել, թե այս դեպքում ինչ կանոններ են գործում: Օրինակներից ելնելով՝ թերևս կարելի է ենթադրել, որ անհնչյունափոխ հիմքով գործածվելու միտում են դրսևորում հատկապես փոխառյալ բառերը, մասամբ նաև գրական–գրքային ծագում ունեցողները: Բայց վստահաբար կարելի է ասել, որ արդի գրական հայերենում ձևակազմության մեջ չհնչյունափոխվելու միտումը որոշակի է⁴⁰:

10. Փողոցների և հրապարակների բաղադրյալ հատուկ անունների՝ գոյականով արտահայտված լրացումը լրացյալի հետ, որպես կանոն, գործածվում է սեռական–տրական հոլովածևում: Օր.՝ **Ծերեթելու փողոց, Տիգրան Մեծի պողոտա, Գարեգին Նժդեհի հրապարակ, Մայիսի 9–ի փողոց, Հանրապետության հրապարակ, Արցախի փողոց, Տպագրիչների փողոց** ևն: Սակայն եթե լրացումը –յան կամ –յանց ածանցով է կազմված, ապա լրացյալի հետ գործածվում է ուղղական հոլովածևում: Օր.՝ **Մոսկովյան փողոց, Արմյան փողոց, Ալեք Մանուկյան փողոց, Մարշալ Բաղդամյան պողոտա** ևն:

Տարբեր հոլովածևներ խոսքի մեջ կատարում են տարբեր դերեր՝ պաշտոններ՝ ձևավորելով նախադասության տարբեր անդամներ:

⁴⁰ Տե՛ս Պ. Բեդիրյան, Հայ լեզուն և մեր խոսքը, Եր., 1999:

4.1.8. Ածականի տարբերակային ձևեր: Համեմատելի հատկություն նշանակող ածականները (որակական ածականներ) կարող են ունենալ համեմատության աստիճաններ, որոնք ցույց են տալիս տվյալ առարկայի հատկության առավել կամ պակաս լինելը այլ առարկա(ներ)ի նույն հատկության համեմատ, այսինքն՝ առարկայի հատկանիշի չափը: Հիշենք, որ ածականն ունի համեմատության երեք աստիճան՝ **դրական, բաղդատական, գերադրական:**

1. **Դրական աստիճանը** նշանակում է տվյալ առարկայի հատկանիշը ինքնին՝ առանց համեմատելու այլ առարկաների հետ:

2. **Բաղդատական աստիճանը** ցույց է տալիս առարկայի հատկանիշի ավելի, պակաս կամ հավասար լինելը այլ առարկա(ներ)ի նույն հատկանիշի համեմատ: Կազմվում է՝ ածականի ուղիղ ձևին ավելացվելով **ավելի (առավել), պակաս (նվազ)** կամ **նույնքան** բառը՝ **ավելի մեծ, առավել իմաստուն, պակաս քաղցր, նվազ ծանր, նույնքան գործունյա:** Ունի երեք տարատեսակ՝ առավելական, նվազական և հավասարական: Բաղդատական աստիճանի նշանակությամբ գործածվում են նաև շարահյուսական մի քանի կառույցներ. «Մայրամուտը լուսաբացից գեղեցիկ է»: «Ծիրանենին երկարակյաց է, քան դեղձենին»: «Վանա լճի ջուրը Կապուտանի ջրի չափ աղի չէ»: «Երազի պես (նման) մեր մանկությունը անցավ»:

Գերադրական աստիճանը ցույց է տալիս առարկայի հատկանիշի գերազանց լինելը համեմատվող մյուս բոլոր առարկաների նույն հատկանիշից: Կազմվում է՝ ածականի դրական աստիճանին ավելացվելով **ամենից (բոլորից)** բառը կամ **ամենա-** նախածանցը կամ էլ **-(ա)գույն վերջածանցը՝ ամենից մեծ, բոլորից խելոք, ամենաքաղցր, նվազագույն,** իսկ համեմատվող առարկան լինում է որոշյալ առումով՝ **ամենաքաղցր (պտուղ), նվազագույն (աշխատավարձ), ամենից լավ (տունը), մեծագույն (նվաճումը): Ամենից (բոլորից)** բառով կամ **ամենա-** նախածանցով գերադրական աստիճան կարելի է կազմել համեմատելի հատկություն նշանակող բոլոր որակական ածականներից, իսկ **-գույն** վերջածանցով՝ ոչ բոլորից:

-գույն նախածանցով կազմվում են նաև **բացարձակ գերադրական** ածականներ, որոնք գործածվում են անորոշ առումով գոյականի հետ և ցույց են տալիս առարկայի տվյալ հատկանիշի բարձր կամ ցածր աստիճանը՝ անկախ ուրիշ առարկաներից՝ «Սա **մեծագույն** նվաճում է»: «Ստանում եմ **նվազագույն** աշխատավարձ»:

Նույն ածականի վրա չի կարելի միաժամանակ ավելացնել **ամենա-** և **-գույն** ածանցները՝ **ամենաբարձրագույն, ամենաուժեղագույն:** (Թույլատրելի է գործածել որպես մարզական տերմին՝ **ամենաթեթևագույն**):

4.1.9. Թվականի տարբերակային ձևեր: Թվականների մեջ կան արմատա-տարբերակներ՝ **եր-** // **եռ-** (երկրորդ տարբերակը բուն թվականների մեջ չի գործածվում. **երեք, եռակի**), **չոր-** // **քառ-** (չորրորդ, քառասունչորս), **հի-** // **հինգ (հիսունհինգ)**, **վեց** // **վաթ-** (վաթսունվեց), **յոթ** // **յոթան-** (վերջինը գրաբարյան հոլովածն է. **յոթանասունյոթ**):

Ըստ իմաստի, ինչպես գիտենք, թվականները բաժանվում են չորս խմբի.
 1. **Քանակական թվականներ** (կոչվում են նաև **բացարձակ**). Նշանակում են թիվ կամ առարկաների որոշակի քանակ՝ **մեկ, տասը, քառասունյոթ, չորս հարյուր ութ**: Խոսքիմասային հատուկ (բնորոշ) ձև չունեն: 2. **Կոտորակային թվականներ** (համարվում են նաև քանակականների տեսակ). մատնանշում են ամբողջի մասերը՝ **մեկ վեցերորդ, մեկ հարյուրերորդական, հինգ ամբողջ վեց տասնորդական**: 3. **Դասական թվականներ**. Նշանակում են առարկայի թվային կարգ՝ **առաջին, երկրորդ, քսաներորդ**: 4. **Բաշխական թվականներ**. Նշանակում են առարկաների հավասար քանակական բաշխում՝ **հինգական, երեք-երեք**:

Թվականը քերականորեն չի ձևափոխվում: Միայն գոյականաբար գործածվելիս կարող է հոլովվել:

Թվականներն ըստ կազմության լինում են՝ **պարզ՝ մեկ, հինգ, քսան, և բաղադրյալ՝ հինգերորդ, երեսուն, քսանհինգ, տասական, մեկ քառորդ**: Մեկ թվականն ունի նաև **մի** տարբերակը, որը համանուն է **մի** անորոշ դերանվանը: Թվականակերտ ածանցները վերջածանցներ են՝ **երկ-րորդ, հինգ-երորդ, ութ-սուն, հնգ-ական-րորդ, և -երորդ** ածանցները քանակական թվականներից կազմում են դասական թվականներ, ինչպես նաև **քառորդ** կոտորակային թվականը: **-րորդ**-ը գործածվում է միայն **երկրորդ, երրորդ, չորրորդ** կազմություններում: Մեկ քանակական թվականից նշված ածանցներով դասական թվական չի կազմվում: Դրա փոխարեն գործածվում է **առաջին** բառը:

Մեկ, երկու, երեք, չորս թվականները բաղադրյալ թվականի վերջին բաղադրիչ լինելու դեպքում ստանում են **-երորդ** ածանցը՝ **քսանմեկերորդ, երեսուն-երկուերորդ, իննսուներեքերորդ, հարյուրչորսերորդ**:

-սուն ածանցը միավոր նշանակող **երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը** պարզ թվականներից կազմում է տասնավոր նշանակող թվականներ՝ **քառասուն, ութսուն, իննսուն**: **երե-սուն, հի-սուն, վաթ-սուն, յոթան-ա-սուն** կազմությունների դեպքում հիմքը համապատասխան արմատների անկանոն տարբերակներ են: **-ական** ածանցը քանակական թվականներից կազմում է բաշխական թվականներ՝ **երեքական, քսանմեկական**: Կա բաշխական թվականների կազմության մեկ այլ՝ հոմանիշ եղանակ՝ քանակական թվականի կրկնությամբ՝ **երեք-երեք, տասնհինգ-տասնհինգ**:

Ինը և **տասը** թվականները ունեն **ը** կամ **ն** վերջնահնչյուն, որը փոխանվանական կիրառության դեպքում կատարում է նաև որոշիչ հոդի դեր: **Տասը** բառը երբեմն կարող է լինել **տաս** ձևով՝ «Իննից **տաս** է պակաս»: Բաղադրություններում հանդես է գալիս **ն** հոդով (տասներորդ, տասնամյակ, տասնապատիկ, տասնվեց), երբեմն էլ՝ անհոդ (տասհարկանի, տաստոննանոց, տասնետրանոց): **Ինը** թվականը միշտ պահպանում է իր **ը** կամ **ն** վերջնահնչյունը՝ **տասնինը, իննսուն, իննանիշ, իննհատորյակ, իննհարկանի, իններորդ, իննից, իններ**:

Երկու թվականը գոյականաբար հոլովվում է **երկուս- հիմքով՝ երկուսը, երկուսի(ն), երկուսով, երկուսից, երկուսներ, երկուսս, երկուսներդ** ևն: Սակայն ուղիղ ձևը առանց հոդի գործածվելիս կարող է լինել թե՛ **ս-ով**, թե՛ առանց **ս-ի**՝ «Մատյանում քանի **երկու(ս)** կա»:

Մեկից բարձր քանակական թվականի լրացյալը կարող է լինել թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով:

1. Սովորաբար եզակի է լինում, եթե՝ 1. չափի միավոր է կամ առնվում է իբրև այդպիսին՝ «Մեկնարկին մնացել է **15 օր**»: «Լույսը 1 վ-ում անցնում է **300 000 կմ**»: «Եկել էին քսան **հոգով**»: «**Հինգ մասնակցից** ոչ մեկը չկա», 2. անորոշ առումով է, և տրամաբանական շեշտը (խոսողի ուշադրությունը) թվականով արտահայտված քանակի վրա է՝ «Դահլիճում **երեք** ազատ **տեղ** է մնացել»:

2. Սովորաբար հոգնակի է լինում, եթե՝ 1. որոշյալ առումով է՝ «Մեր **երեք գործընկերներն** էլ գործուղման մեջ են», 2. թվարկվող առարկաները նկատի են առնվում առանձին-առանձին՝ «Հաղթեց **երեք մարզիկների**», 3. թվական որոշիչի և դրա որոշյալի միջև մեկ այլ որոշիչ կա՝ «Մրցությանը կմասնակցեն տասնվեց **ուժեղագույն** մարզիկներ»: Բայց նաև՝ «Առգրավվել է երկու **ինքնաշեն** ատրճանակ»:

3. Թվական որոշիչ ունեցող ենթական՝ ա. եթե հոգնակի է, ապա ստորոգյալն էլ հոգնակի է լինում՝ «Երեք գուսաններ մրցում **էին**», բ. եթե եզակի է, ապա ստորոգյալը կարող է լինել թե՛ եզակի, ինչպես՝ «Այդ օրն ընդամենը **երկու հոգի եկավ**», թե՛ հոգնակի՝ «Այդ օրն ընդամենը **երկու հոգի եկան**», գ. եթե փոխանուն թվական է, ապա ստորոգյալը **մեկ**-ի դեպքում լինում է եզակի՝ «Մեկն ինձ **դուր եկավ**», մյուս ամբողջ թվերի դեպքում՝ հոգնակի՝ «**Երեքն** էլ **կորան**», կոտորակի դեպքում՝ սովորաբար եզակի՝ «**Մեկ երրորդը** այրվել է»:

Եզակի ենթակայի ստորոգյալը դրվում է հոգնակի թվով, եթե ունի որոշիչ, որը ցույց է տալիս գործողության փոխադարձություն կամ հոգնակիություն՝ «**Իրար/միմյանց բախվեցին** երկու **մեքենա**»:

Թվականի ուղղագրությունը: Քանակական թվականները՝ **մեկ**-ից մինչև հարյուր-ը, պարզ բառեր են կամ բաղադրյալ համադրական կազմություններ, հարյուր **մեկ**-ից սկսած՝ բաղադրյալ հարադրական կազմություններ են (բացի հազար-ից, միլիոն-ից, միլիարդ-ից են), գրվում են առանձին բաղադրիչներով՝ երկու հազար **վեց** հարյուր **քառասունյոթ**, **մեկ** **միլիոն**, **երեք** **տրիլիոն** **վեց** հարյուր **միլիարդ** **չորս** **հարյուր** **քսան** **միլիոն** **յոթ** **հարյուր** **քսանհինգ** **հազար** **ինը** **հարյուր** **ութսունութ**:

Կոտորակային թվականները հարադրական կազմություններ են. բաղադրիչները գրվում են առանձին-առանձին՝ **չորս հինգերորդ**, **երեք հազարերորդ**, **մեկ ամբողջ հինգ տասնորդական**: Բացառություն են **քառորդ** բառը՝ որպես **մեկ քառորդ** (// **մեկ չորրորդ**) դասական թվականի հոմանիշ, և **կես** բառը՝ որպես **մեկ երկրորդ** կոտորակային թվականի հոմանիշ (**մեկ երկրորդ** // **կես** // 1/2 // 0,5 = **գրո ամբողջ հինգ տասնորդական**), ինչպես նաև **կես**-ով մի շարք կազմություններ՝ **մեկուկես**, **յոթուկես**, **տասուկես** են:

Կոտորակային թվականի համարիչը ամբողջ թիվ նշանակող թվական է, իսկ հայտարարը՝ դասական թվական՝ **-ական** ածանցով կամ առանց դրա՝ **մեկ երկրորդ(ական)**, **տասնմեկ հարյուրերորդ(ական)**: Եթե հայտարարը 1 թիվն է, ապա կարդացվում է **մեկերորդ(ական)** ձևով՝ **երկու մեկերորդ** կամ **երկու**

մեկերորդական: Եթե հայտարար է դառնում տասը թվականը, ապա կարդացվում է երեք ձևով՝ **մեկ տասներորդ, մեկ տասներորդական, մեկ տասնորդական**. սովորական գործածության մեջ նախընտրելի է առաջին տարբերակը, մաթեմատիկայում՝ վերջինը՝ **մեկ տասնորդական, երկու տասնորդական** ևն:

Բաշխական թվականների կրկնավոր տարբերակները գրվում են միության գծիկով՝ **յոթ-յոթ, քսանմեկ-քսանմեկ**:

Եթե **դասական** թվականը կազմված է երկուսից ավելի բաղադրիչ ունեցող հարադրական քանակական թվականից, ապա հարադրական բարդություն է, այսինքն՝ գրվում է առանձին բաղադրիչներով՝ բացառությամբ վերջին երկու թվական բաղադրիչների՝ **երկու հարյուր տասնվեցերորդ, երեք հազար երկու հարյուր տասնմեկերորդ**: Հակիրճության համար այսպիսի դասականները սովորաբար գրվում են թվերով (վերջում կցվում է **-րդ** մասնիկը), ինչպես՝ **3211-րդ, 25 875-րդ**:

Թվականները, տառերով (որպես հնչյունագիր) գրվելուց բացի, ունեն նաև իրենց **գաղափարագիր նշանները**: Դրանք կամ արաբական թվանշաններ են, կամ այբուբենի տառերը՝ հատուկ թվային արժեքներով:

Արաբական թվանշանները և դրանց համակցությունները նշանակում են քանակական թվականներ: Դրանցից բաշխական և դասական թվականներ կազմելիս համապատասխան արաբական թվանշանին միության գծիկով կցվում է **-ական, -ին** կամ **-րդ՝ 1-ական, 1-ին, 2-րդ, 78-րդ**: Կոտորակային թվականների դեպքում տառերով գրվող այդպիսի կցումներ չեն արվում՝ **1/2, 0,5**:

Դասական թվականների՝ առանց նշված մասնիկների գործածությունը թույլատրելի է համարվում միայն հետադաս կիրառության դեպքում՝ **հոդված 3** (կարդացվում է՝ **հոդված երրորդ**), **հոդված 78** (= **հոդված յոթանասուներորդ**), **կետ 1** (= **կետ առաջին**), **մաս 5** (= **մաս հինգերորդ**) ևն:

Թվարկումների ժամանակ դասական թվականների **-ին-ի** և **-րդ-ի** փոխարեն կարող է դրվել միջակետ կամ աջ փակագիծ՝ **1., 2., 3., 4., կամ 1), 2), 3), 4)**:

Հետադաս դիրքում անթույլատրելի է համարվում «դասականի իմաստ արտահայտող թվանշանները և տառերը հոլովված ձևերով և հոդերով գործածելը, այսինքն՝ գրել ոչ թե **կետ 1-ի, գլուխ II-ով, բաժին 4-րդի, նկար 5-ը, սյունակ VI-ը** և այլն, այլ **1-ին կետի, II գլխով, 4 մասից, 4-րդ բաժնի, 5-րդ նկարը, VI սյունակը** և այլն»⁴¹:

Հայերենի այբուբենի տառերը և դրանց համակցությունները սովորաբար նշանակում են քանակական թվականներ, եթե մեծատառերով են (**Ա, ԺԲ, ՌՋԿԷ**), և դասական թվականներ, եթե փոքրատառերով են (**բ, իգ, մլե**): Տառերի թվային արժեքը որոշվում է հետևյալ աղյուսակով.

⁴¹ Տե՛ս «Հայոց լեզվի կանոններ (գերատեսչական նորմատիվ ակտեր)», Եր., 2004:

Ա – 1	Ժ – 10	Ճ – 100	Ռ – 1000
Բ – 2	Ի – 20	Մ – 200	Ս – 2000
Գ – 3	Լ – 30	Յ – 300	Վ – 3000
Դ – 4	Խ – 40	Ն – 400	Տ – 4000
Ե – 5	Ծ – 50	Շ – 500	Ր – 5000
Զ – 6	Կ – 60	Ո – 600	Ց – 6000
Է – 7	Հ – 70	Չ – 700	Ի – 7000 ⁴²
Ը – 8	Ձ – 80	Պ – 800	Փ – 8000
Թ – 9	Ղ – 90	Ջ – 900	Ք – 9000

Հոմեական թվանշանները (լատինական այբուբենի մեծատառերը) և դրանց համակցությունները նշանակում են դասական թվականներ՝ I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XX (20–րդ), XXX (30–րդ), XL (40–րդ), L (50–րդ), LX (60–րդ), XC (90–րդ), C (100– րդ), CD (400–րդ), D (500–րդ), DC (600–րդ), CM (900–րդ), M (1000–րդ):

Գ.1.10. Դերանվան տարբերակային ձևեր: Դերանունը առարկա կամ հատկանիշ նշանակող խոսքի մասի (գոյականի, ածականի, թվականի կամ մակբայի) փոխարեն գործածվող բառ է: Ըստ այդմ՝ դերանուն համարվող բառերը լինում են՝ **գոյականական** (ես, մենք, սա, ինքը, միմյանց, ով, ամեն ոք, ոչ ոք, ոչինչ, ինչ են), **ածականական** (որ, այսպիսի, նման, ոմն, մի, սույն, միևնույն, այս, ոչ մի, ինչ–ինչ, որք են), **թվականական** (այսքան, ինչքան, որքան, այսչափ, նույնչափ, ինչչափ են), **մակբայական** (ուր, երբ, որտեղ, ինչու, ինչպես, այսպես, այսքան են):

1. Ինքս (ինքդ, ինքը) դերանունը **ես** (դու, նա)–ի սաստկականն է, ավելի է շեշտում մասնակցի հատկապես դեմքը, այդ պատճառով էլ հաճախ կիրառվում է նրա հետ միասին՝ **ես ինքս** (դու ինքդ, նա ինքը) (առանց որևէ կետադրության), 3–րդ դեմքում՝ նաև գոյականի հետ միասին՝ «Գործատուն **ինքը** պիտի որոշի»: **Ինքս** սաստկականը հոլովվում է միայն 3–րդ դեմքում (ինքը), ինչպես նաև ունի հոգնակիի երեք դեմք՝ **ինքներս, ինքներդ, իրենք** կամ **ինքները** (իզվ.՝ նրանք **ինքները**):

2. Տարահիմք գուգաձևեր կան 1–ին և 2–րդ դեմքերի բացառական, գործիական, ներգոյական հոլովներում՝ **ինձնից – ինձանից, քեզնով – քեզանով, մեզնում – մեզանում** են: Գրական լեզվին առավել բնորոշ են երկրորդները: Ըստ որում՝ անձնական դերանունների ներգոյականի ձևերը՝ **մեզնում // մեզանում, ձեզնում // ձեզանում, քեզնում // քեզանում** են, գրական լեզվի նորմերի սահմաններում են, բայց գործածվում են հազվադեպ: Գործածական որոշ հաճախականություն ունի **մեզանում** ձևը (որոշ իմաստափոխություն է կրել. նշանակում է նաև **մեր միջավայրում, Հայաստանում** են), մյուսները աստիճանաբար դուրս են մղվում գրական լեզվից (դրանց փոխարինում են **մեջ** կապով կառույցները՝ **մեր մեջ, քո մեջ** են):

⁴² Տեքմինաբանական կոմիտեի որոշմամբ՝ Ի(ւ)–ի թվային արժեքով այժմ գործածվում է ՌԻ տառը:

3. **Ինքը** դերանունը որպես հատկացուցիչ (**իր** խոսքը, **իր** դեմքով) կամ կապի խնդիր (**իր** համար, **իր** մասին, **իր** մոտ, **իր** վրա, **իր** կողմից) օգտագործվում է **իր** (սեռականի) ձևով և ոչ թե **իրեն** (տրականի). չպետք է շփոթել **իրեն** ձևի հետ, որը գործածվում է որպես ուղիղ խնդիր՝ **իրեն** չի սիրում, խնամում է **իրեն**, կամ հանգման խնդիր՝ **իրեն** կտամ, մոտեցա **իրեն**:

4. Անձնական դերանվան 2-րդ դեմքի հոգնակիի ձևերը կարելի է կիրառել նաև եզակիի նշանակությամբ: Այդպիսի կիրառությունը կոչվում է **քաղաքավարական հոգնակի**: Քաղաքավարական հոգնակիի ձևերը գրվում են մեծատառով՝ **Դուք, Ձեր, Ձեզ, Ձեզնից, Ձեզնով, Ձեզանում, (Դուք) Ինքներդ** ևն:

5. Հանձնարարելի է **միևնույն** դերանվան գործածությունը որոշիչ հոդով՝ որպես փոխանունություն: Ճիշտ կիրառություններ են՝ «Ինձ համար **միևնույնն** է (**միևնույնը** չէ), թե դու ուր կգնաս»: «Ես, **միևնույնն** է, քեզ չեմ հավատում»:

6. **Նա** ցուցական դերանունը համանուն է **նա** անձնական դերանվանը և, ի տարբերություն նրա, կարող է մատնացույց անել ոչ միայն **անձ** (ինչպես՝ «Սա ավագ եղբայրն է, դա՝ միջնեկը, իսկ **նա**՝ կրտսերը»), այլև **ոչ անձ** («Սրանք գեղարվեստական գրքերն են, դրանք՝ գիտականները, իսկ **նրանք**՝ գիտահանրամատչելիները»), և բնավ կարիք չկա **նա** ցուցական դերանունը անտեղի փոխարինելու **այն** դերանվամբ: Հանձնարարելի չէ **դա** դերանվան փոխարեն **նա**–ի գործածությունը, եթե խոսքը ոչ անձի մասին է, ինչպես՝ «Խաղողենին և **նրա** խնամքը»: Ճիշտ ձևեր են՝ «Հոմանիշները և **դրանց** ոճական կիրառությունը»: «Երիտասարդ թուրքերը և **նրանց** ոճագործությունները»:

7. **Ի՞նչ** դերանունը իրանիշ է և ենթարկվում է ի հոլովման՝ **ի՞նչ(ը), ինչի՞(ն), ինչի՞ց, ինչո՞վ, ինչո՞ւմ, ինչե՞ր(ը)** ևն: Հաճախ գործածվում է նաև որպես ածականական դերանուն՝ «**ինչպիսի՞**», «**ո՞ր**» իմաստով՝ «**Ի՞նչ** խոսքերով երգեմ քեզ»: «Սա **ի՞նչ** սարք է»: «**Ի՞նչ** նշումներ պիտի արվեն»: Այս դեպքում նրա լրացյալը սովորաբար լինում է անորոշ առումով՝ «**Ինչ մարդ** ես դու», երբեմն՝ որոշյալ՝ «Իմ ինչ **գործն** է»:

8. Մակբայական **ե՞րբ** դերանունը արտահայտում է հարցում գործողության կամ եղելության ժամանակի մասին և ենթարկվում է –վա հոլովման միայն եզակի թվով՝ **երբվա՞, երբվանի՞ց**: Գործիական և ներգոյական հոլովներ չունի:

9. **Որտե՞ղ** դերանունը արտահայտում է հարցում գործողության կատարման կամ եղելության տեղի մասին: Ներգոյական հոլովածնը չի գործածվում: Իսկ **ո՞ւր** դերանունը արտահայտում է հարցում գործողության ուղղության մասին և չի հոլովվում: Հետևաբար՝ «**Որտե՞ղ** է գտնվում»: «**Ո՞ւր** է առաքվում»: «**Որտե՞ղ** հանդիպեցիք»:

10. **Ինչո՞ւ** դերանվանը հաճախ համարժեք է **ինչի՞ համար** կապակցությունը՝ «**Ինչո՞ւ** (= ինչի՞ համար) ես բերել այդ գործիքը»: Ուստի սխալ է **ինչո՞ւ** դերանվան գործածությունը **համար** կապի հետ: Հանձնարարելի չեն նաև ռուսաբան **ինչո՞ւմն է բանը // հարցը (բանը // հարցն ինչո՞ւմն է)** կապակցությունը (որը նշանակում է «ինչ է պատահել, ինչ խնդիր կա, խնդիրը որն է») և դրա պատասխանը՝ **բանը // հարցը նրանում(ն) է**:

11. Ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, ամենայն ածականական դերանունները գործածվում են անորոշ առումով լրացյալի հետ՝ **ամեն մարդ**, **ամեն մի ուսանող**, **յուրաքանչյուր քաղաքացի**, **ամենայն ցանկություն**, իսկ **բոլոր** դերանունը՝ որոշյալ առումով՝ **բոլոր գրքերը**:

12. Ողջ, ամբողջ, համայն դերանունները սովորաբար պահանջում են որոշյալ առումով լրացյալ՝ **ողջ աշխարհը**, **ամբողջ օրը**, **համայն մարդկությունը**, սակայն **մի** անորոշ դերանվան հետ զուգակցվելով՝ պահանջում են անորոշ առումով լրացյալ՝ **մի ամբողջ տիեզերք**, **մի ողջ ժողովուրդ**:

13. Հաճախ հոգնակի լրացյալի հետ գործածվելիս շփոթվում են **բոլոր** և **ամբողջ** դերանունները: Ըստ կանոնների՝ պետք է ասել **ամբողջ օրը** (գիրքը, սենյակը, երկիրը, տարածքը, աշխարհը ևն), բայց՝ **բոլոր օրերը** (գրքերը, սենյակները, երկրները, տարածքները, աշխարհները, գույները ևն): Միայն առանձին դեպքերում **ամբողջ**-ը կարող է գործածվել հոգնակի լրացյալի հետ, օրինակ՝ «Նա **ամբողջ օրերով** բացակայում էր տնից»:

14. Յուրաքանչյուրը, ամեն մեկը դերանուններով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի երրորդ դեմքով: Օր.՝ «**Յուրաքանչյուրն** իր գործն է **անում**»: «**Ամեն մեկը** մի բան է **ասում**»: Եթե այդ նույն դերանուններով արտահայտված ենթական ունենում է դիմորոշ հոգ՝ **յուրաքանչյուրս, ամեն մեկս, յուրաքանչյուրդ, ամեն մեկդ**, ապա ստորոգյալը կարող է **առաջին կամ երկրորդ** դեմքով լինել, եթե հոգնակի թվով է՝ «**Յուրաքանչյուրս մի առանձին գործ ենք անում**»: «**Ամեն մեկդ ձեր անելիքն իմացեք**», կամ էլ երրորդ դեմքով լինել, եթե եզակի թվով է՝ «**Յուրաքանչյուրս մի առանձին գործ է անում**»: «**Ամեն մեկդ պիտի իմանա իր անելիքը**»:

15. Ոմն դերանունը եզակի թվով գոյականաբար չի գործածվում և չի հոլովվում: Ոմնի միայն որոշչային կիրառություն՝ **ոմն** Գրիգոր, **ոմն** քաղաքական գործիչ:

16. Մի քանի դերանունը հոլովվում է **քանի՞** հարցական դերանվան նման միայն եզակի թվով (մի քանիսը, մի քանիսի(ն), մի քանիսից, մի քանիսով, մի քանիսում), սակայն ենթակա լինելիս գործածվում է հոգնակի ստորոգյալի հետ՝ **մի քանիսը եկան**, **մի քանիսով ճանապարհ ընկան**:

17. Որոշ դերանվան գոյականաբար գործածությունը և հոգնակի թվով հոլովումը (**որոշները, որոշներից** ևն) խոսակցական բնույթ ունի և բնորոշ չէ գրական լեզվին:

18. Այլ դերանունը գոյականաբար երբեմն, իբրև հնաբանություն, գործածվում է միայն հոգնակի ուղղականում՝ **այլք (այլոք** ձևը սխալ կազմություն է), և սեռական-տրականում՝ **այլոց**:

19. Ածականական անորոշ դերանունները գործածվում են անորոշ առումով լրացյալի հետ (բացի **այսինչ, այնինչ** դերանուններից)՝ ինչ-որ **բան**, ինչ-ինչ **խնդիրներ**, ոմն **Սարգսյան**, մի **քառյակ**, ուրիշ **հարցեր**, այլ **դեպքեր**, որոշ **պայմաններ**, որևէ **խոչընդոտ**, որևիցե **պատճառ**, բայց՝ **այսինչ մարդը**, **այսինչ-այսինչ նկատառումները**: Դրանց հետ միայն փոխանուն թվականները երբեմն

կարող են գործածվել որոշիչ հոդով՝ ինչ-որ **մեկը**, ոմն **մեկը**, ուրիշ **երկուսը**, այլ **մեկը**, որևէ **մեկը**, որևիցե **մեկը**:

20. Եթե **մի**-ի լրացյալը որոշիչ հոդով է՝ «**Մի տողը** մոռացել եմ», ուրեմն **մի**-ն տվյալ դեպքում ոչ թե դերանուն է, այլ թվական անուն: Հակառակ դեպքում կարող է ընկալվել և՛ որպես թվական, և՛ որպես դերանուն, ինչպես՝ «**Մի տող** մոռացել եմ»:

21. Ածականական **ոմն**, **մի**, **որևէ**, **որևիցե** դերանունները գործածվում են միայն եզակի թվով լրացյալի հետ՝ ոմն **արվեստագետ**, մի **մարդ**, որևէ **խնդիր**, որևիցե **խոչընդոտ**, իսկ **ինչ-ինչ**, **որոշ** դերանունները՝ միայն հոգնակի թվով լրացյալի հետ՝ ինչ-ինչ **հանգամանքներ**, որոշ **դեպքեր**:

22. **Ոչ մի** դերանունը եզակի թվով որոշյալ և ստորոգյալ է պահանջում նույնիսկ որոշյալի բազմակի լինելու դեպքում՝ «**Ոչ մի** տերև, ոչ **մի** ծաղիկ **չէր շարժվում** քամուց»:

23. Հոգնակի **մեր**, **ձեր**, **իրենց** կամ **նրանց** ձևերի փոխարեն գործածված ստացական հոդից առաջ **-եր** հոգնակերտ մասնիկը կարող է փոխարինվել **-ներ** մասնիկով՝ «**Ձեռքներդ** հեռու»: = «**Ձեր** ձեռքերը հեռու»: «**Աչքներս** լույս»: = «**Մեր** աչքը լույս»: «**Մտքները** փոխել են»: = «**Իրենց** մտքերը փոխել են»: «**Հագներին** շոր չունեին»: = «**Իրենց** հագին շոր չունեին»: «**Մոտները** փող չկա»: = «**Նրանց** մոտ փող չկա»: Հոգնակիի այսպիսի արտահայտությունը, որը բնորոշ է գերազանցապես միավանկ գոյականներին, կոչվում է **ստացական հոգնակի**՝ նշանակելով, որ տվյալ առարկան(երը) կամ տվյալ տեղը վերաբերում է յուրաքանչյուրին: Բնորոշ է խոսակցական լեզվին:

24. Անձնական դերանվան սեռական հոլովի և ստացական հոդի համատեղ (միաժամանակյա) գործածությունը արևելահայերենում թույլատրելի չէ: Դա բնորոշ է արևմտահայ գրական լեզվին՝ **իմ գիրքս**, **քու մանչդ**: Դիմորոշ հոդի և անձնական դերանվան համատեղ (միաժամանակյա) գործածությունը թույլատրելի է՝ **մենք**, աշակերտներս, **դուք**, մասնակիցներդ:

25. Ցուցական մի քանի դերանունների հոգնակին կազմվում է և՛ **-ք**, և՛ **-ներ** մասնիկների միջոցով՝ **այդպիսիք-այդպիսիները**, **ինչպիսիք-ինչպիսիները**, **որպիսիք-որպիսիները** ևն: Առաջինները առավել հատուկ են գրական-գրքային խոսքին և համեմատաբար քիչ են գործածվում:

Գ.1.11. Դերանվանական հոդեր: Որոշ դերանուններ կարող են փոխարինվել **ս**, **դ**, **ն(ը)** վերջամասնիկներով, որոնք կոչվում են **հոդեր** կամ **դերանվանական հոդեր**: Հոդ ստանում են գոյականները՝ **գիրքս**, **աղջիկդ**, **կյանքը**, գոյականական որոշ դերանուններ՝ **ինքդ**, **ամենքս**, **մեկը**, **ամեն մեկդ**, **մեկնումեկս**, ոչ **մեկը**: Մյուս բառերը հոդ ստանում են միայն գոյականաբար գործածվելիս՝ **մեծը**, **գյուղականը**, **երկուսս**, **քնածը**, **գնալուցդ**, **թուրոս**, **այսքանդ**, **ո՛րս**, **ինչպիսի՞ն**, **յուրաքանչյուրս**, **ամբողջը**, **այսինչը**, **մոտս**, **վրադ**, **վրայովս** ևն:

Ըստ դերանվանական նշանակության՝ տարբերում են հոդի չորս տեսակ՝ ստացական, դիմորոշ, ցուցական և որոշիչ:

Ստացական հոդ: Փոխարինում է անձնական դերանվան սեռական հոլովին՝ **իմ, քո, նրա, իր,** և մատնացույց է անում, թե խոսքի մասնակիցներից ում է պատկանում կամ վերաբերում տվյալ առարկան: Ստացական հոդ ունեցող բառը նախադասության մեջ փաստորեն համատեղում է հատկացյալի և հատկացուցիչի դերերը: Որպես ստացական՝ գործածվում են **ս, դ** հոդերը: Առաջին դեմքի **իմ (մեր)** դերանվանը կարող է փոխարինել **ս** հոդը՝ «Գործս (= իմ գործը) ավարտել եմ»: «Գործիս (= իմ գործի) տեղը փոխվել է»: «Գործիցս (= իմ գործից) մի խոսեք»: «Գործովս (= իմ գործով) հպարտանում եմ»: «Մտքումս (= իմ մտքում) ուրիշ ծրագրեր են»: «Խոսքերիս (= իմ խոսքերին) հավատացե՛ք»: Երկրորդ դեմքի **քո (ձեր)** դերանվանը կարող է փոխարինել **դ** հոդը՝ «Խնդրանքդ (= քո խնդրանքը) կատարել եմ»:

Դիմորոշ հոդ: Փոխարինում է անձնական դերանվան առաջին և երկրորդ դեմքերին՝ **ես, դու,** և մատնացույց է անում, թե տվյալ առարկան խոսողն է, թե խոսակիցը: Սովորաբար դրվում է անձնանիշ բառերի վրա: Ուղղական հոլովով բառի վրա դրվելիս միշտ դեմքով համաձայնում է ստորոգյալի հետ՝ կրկնելով նրա դեմքը:

Որպես դիմորոշ՝ գործածվում են **ս** և **դ** հոդերը: Անձնական դերանվան առաջին դեմքի **ես (մենք)** ձևին և դրա թեք հոլովաձևերին կարող է փոխարինել **ս** հոդը՝ մասնակիցս = ես՝ մասնակիցս, մասնակցիս = իմ՝ մասնակցիս կամ ինձ՝ մասնակցիս, մասնակցիցս = ինձնից՝ մասնակցիցս, մասնակցովս = ինձնով՝ մասնակցովս, ներքոստորագրյալներս = մենք՝ ներքոստորագրյալներս ևն:

Անձնական դերանվան երկրորդ դեմքի **դու (դուք)** ձևին և դրա թեք հոլովաձևերին կարող է փոխարինել **դ** հոդը՝ ամենքդ = դուք՝ ամենքդ, ձեզանից յուրաքանչյուրդ = յուրաքանչյուրդ (սխալ է՝ ձեզանից յուրաքանչյուրդ), ամենքիցդ = ձեզանից՝ ամենքիցդ ևն, օր.՝ «**Շերտսիդ** (= քեզ) գնդակ երբեք չի դիպչի»:

Երրորդ դեմքում դիմորոշ հոդը նույնանում է որոշիչ **ը(ն)** հոդին: Դիմորոշ հոդի և անձնական դերանվան համատեղ (միաժամանակյա) գործածությունը թույլատրելի է (**մենք**՝ աշակերտներս, **դուք**՝ մասնակիցներդ):

Ցուցական հոդ: Որպես ցուցական՝ գործածվում է **ս** հոդը: Փոխարինում է ցուցական **այս** դերանվանը և մատնացույց է անում առարկայի՝ ժամանակի կամ տարածության մեջ խոսողին մոտ լինելը՝ «Օրերս (= այս օրերին) տեղի ունեցան կարևոր իրադարձություններ»: «Աշխարհումս (= այս աշխարհում) ախ չեմ քաշի»: «Վերջերս (= այս վերջին ժամանակներում) լրջացել ես»: Առանձին գործածություններում **ս**-ն երկիմաստություն է դրսևորում՝ «**Կյանքս** (= այս կյանքը // իմ կյանքը) հոգսաշատ է դարձել»: «**Գիշերս** (= այս գիշերը // իմ գիշերը) լի էր երազներով»:

Որոշիչ հոդ: Որպես որոշիչ հոդ՝ գործածվում է **ն(ը)**-ն: Արտահայտում է առարկայի՝ խոսողին և կամ խոսակցին ծանոթ, հայտնի լինելը, խոսքում արդեն հիշատակված լինելը: Իրեն փոխարինող որոշյալ դերանուն չունի: Բայց անորոշ առման դեպքում կարող է փոխարինվել **մի** կամ **ինչ-որ** դերանվամբ՝ *Տղան եկավ – Մի փղա եկավ:*

Ինչ-որ տղաներ եկան: Որոշիչ հոդ ստանում են միայն ուղղական (ճամփորդը) և սեռական-տրական (ճամփորդներին) հոլովածները:

Գ.1.12. Բայ: Գիտեք, որ բայերը գործողություն կամ եղելություն նշանակող բառեր են: Բայն ունի իր բնորոշ ձևը՝ ուղիղ ձևում՝ **ել** կամ **ալ** ածանց-վերջավորությունը: Բայը կարող է ձևափոխվել ըստ դեմքի, թվի, ժամանակի, եղանակի՝ կազմելով դիմավոր ձևեր: Բայի այդպիսի ձևափոխությունը կոչվում է **խոնարհում**: Բայի բոլոր դրական ձևերն ունեն իրենց ժխտական հակաբառերը, որոնք կազմվում են համապատասխան դրական ձևերից՝ **գրեցի** – **չգրեցի**, **ասում են** – **չեն ասում**, **գնա՛** – **մի՛ գնա** ևն:

Բայի գործածության մեջ ընդունված կանոններից չշեղվելու, խոսքը ճիշտ կառուցելու համար պիտի իմանալ հետևյալը.

1. Կան բայեր, որոնք միմյանցից տարբերվում են միայն խոնարհիչով՝ **աղել** – **աղալ**, **մխել** – **մխալ**, **գնել** – **գնալ**, **թվել** – **թվալ**, **ծխել** – **ծխալ**, **ծպտել** – **ծպտալ** ևն: Դրանք կարող են լինել բառային տարբերակներ (**ոստոստել** // **ոստոստալ**) կամ առանձին բառային միավորներ (**գնել** / **գնալ**):

2. **չ**– սոսկածանցով բայերը թվով քիչ են և անկայուն, թեև շատ գործածական են: Դրանցից **դիպչել**, **թռչել**, **կորչել**, **կայչել**, **փախչել**, **հանգչել** բայերը գրական լեզվում պահպանել են **չ**– ներածանցով բայի հատկանիշները: Խոսակցական լեզվում հանդիպող **դիպչեցի**, **դիպչեց** և նման ձևերը գրական լեզվում գրեթե գործածություն չունեն և չեն հանձնարարվում: Երկու բայեր՝ **սառչել**, **ուռչել**, հանդիպում են զուգաձևություններով: **Ուռչել** բայի անցյալ կատարյալի արմատական ձևերը՝ **ուռա**, **ուռար** ևն, որոնք կանոնական են համարվում, գործածությունից դուրս են մղվում. ակնհայտորեն տարածում ունեն այդ բայի ցոյական ձևերը՝ **ուռեցի**, **ուռեցիր** ևն: Անկատար ներկայում և անցյալում զուգահեռ գործածություն ունեն **ուռում** և **ուռչում** տարբերակները: **Սառչել** բայի համար ևս գործածվող տարբերակային ձևեր են՝ **սառեցի** // **սառչեցի**, **սառչում եմ** // **սառում եմ**: Գրական լեզվում հանձնարարելի են առաջինները: **Հալչել**, **փլչել**–ը ունեն նաև **վ**– ածանցով կրկնասեռ տարբերակներ (**հալվել**, **փլվել**), որոնք կանոնական են և ավելի տարածված:

3. Սովորաբար հավելյուրդային է լինում պատճառական ածանցի և **տալ** բայի համատեղումը՝ **խոսեցնել տալ**, **հիշեցնել տալ**, **զգացնել տալ**: Պատճառական ածանցի և **տալ** բայի համատեղումը հնարավոր է, եթե չեզոք բայից կազմվում է ոչ միայն պատճառակերպ ներգործական բայ, այլև դրան տրվում է **պատճառական** բայի նշանակություն: Օր.՝ «Հայերի ապստամբության առաջնորդ Գրիգոր Մամիկոնյանը **կուրացնել տվեց** Աշոտ Բագրատունի իշխանին՝ իրենց չմիանալու համար»: «Ձանգեցի տեսուչին և մեր անջատված հոսանքը **միացնել տվեցի**»:

Ծան.: **Տալ** բայը անորոշ դերբայի սեռական-տրական հոլովածի անորոշ աոման հետ նշանակում է «ձևացնել, տպավորություն ստեղծել»՝ «Շատ մեծ ամոթ էր, որ գիտեի, սակայն **չիմանալու էի տալիս** լսածներս»: Կամ՝ «Ուրեմն, ինչպես, հեղեղներն արյան Թողնել, որ ծածկի մոռացման փոշին, Խլացնել սիրտը, չզգալ, չընդվզել, **Մոռանալու՛ տալ**, անգամ մոռանալ...» (ՍԿ):

4. • **-եցն-** ածանց ստանում են **ե** խոնարհման պարզ, ինչպես նաև **-են-** սոսկածանց ունեցող բայերը՝ **խմել - խմեցնել**, **հագենալ - հագեցնել**, • **-ացն-** ածանցը ստանում են **ա** խոնարհման պարզ և **-ան-** սոսկածանց ունեցող բայերը՝ **խաղալ - խաղացնել**, **հեռանալ - հեռացնել**, • **-ցն-** ածանցը ստանում են **-ն** և **-չ-** սոսկածանց ունեցող բայերը՝ **հասնել - հասցնել**, **տեսնել - տեսցնել** (խսկց.), **թոչել - թոցնել**, **կորչել - կորցնել**՝ բացառությամբ մի քանի դեպքի՝ **պրծնել - պրծացնել** (խսկց.), **իջնել - իջեցնել**, **հալչել - հալեցնել**, **սառչել - սառեցնել**, **ուռչել - ուռեցնել**: Սխալ են պատճառական ածանցով բայերի անցյալ կատարյալի ավելորդ **-եց-**ով կեղծ գրական ձևերը՝ **խաղացրեցի, թոցրեցի, մոտեցրեցի**: Ճիշտ ձևերն են՝ **խաղացրի, թոցրի, մոտեցրի**:

Խոսակցական լեզվում **ե** խոնարհման պարզ բայերից հաճախ պատճառական են կազմում ոչ թե **-եցն-** ածանցով՝ **խոսեցնել, քնեցնել, բռնեցնել, գժվեցնել, հաչեցնել, երգեցնել** ևն, այլ **-ացն-** ածանցով (խոսացնել, քնացնել, հարմարացնել, հաջողացնել, ծաղկացնել, վազացնել, հիշացնել, խմացնել, երգացնել ևն), որոնք սխալ, մերժելի ձևեր են: Դրան հակառակ՝ **-ան-** սոսկածանցով բայերից **-եցն-** ածանցով երբեմն կազմում են կեղծ գրական ձևեր՝ մզանալ > մզեցնել (<մզացնել), հնանալ > հնեցնել (<հնացնել): Սխալ ձևեր են նաև՝ մոտացնել (<մոտեցնել < մոտենալ), վախացնել (<վախեցնել < վախենալ), սառացնել (<սառեցնել < սառչել), հալացնել (<հալեցնել < հալչել // հալվել), ուտացնել (<կերցնել // ուտեցնել < ուտել) ևն:

Ծան.: Կան դեպքեր, երբ **-եցն-** և **-ացն-** ածանցներով հոմանիշ բայահիմքերից կազմվում են զուգաձևեր՝ **սպիտակեցնել** (< սպիտակել) և **սպիտակացնել** (< սպիտականալ), **նիհարեցնել** (< նիհարել) և **նիհարացնել** (< նիհարանալ), **հարթեցնել** (< հարթել) և **հարթացնել** (< հարթանալ): Երկրորդ տարբերակները հնարավոր է դիտել նաև որպես սխալակազմություններ՝ **սպիտակել, նիհարել, հարթել** ձևերից:

Սովորաբար պատճառական բայերի պես են խոնարհվում **հարցնել, լցնել, եզրակացնել** բայերը (հարցրի, հարցրիր, հարցրեց, հարցրինք, հարցրիք, հարցրին), որոնք պատճառական ածանց չեն պարունակում և միայն արտաքուստ են նման պատճառական բայերին՝ **պատճառակերպ** բայեր են:

5. Մի շարք բայերի ենթակայականի ձևեր վերածվել են նաև գոյականների՝ **ուսանող, ծնող, ընտրող, հարբեցող, մատուցող, ասմունքող, գրող, ուրացող**: Մի շարք դեպքերում **-ող-**ը պարզապես գոյականակերտ ածանց է՝ **լրագրող, ռադիոլսող, հեռուստադիտող, կինոսիրող** ևն:

Մի շարք բայերի հարակատարի ձևեր վերածվել են նաև գոյականների՝ **արարած, կոտորած, հարված, հատված, խորոված, նշանած, հավելված**, կամ ածականների՝ **սոված, նեխած, ցնդած, զինված**: Մի շարք դեպքերում **-ած-**ը վերածվել է գոյականակերտ ածանցի՝ **դիպված, առեղծված, վարկած, հողված, զանգված, սոխառած, արկած, հասարակած**:

6. Վիճակ, հետևանք ցույց տվող որոշ թվով կրավորական բայերի հարակատար դերբայը (**մաշված, կառուցված, ավարտված, հնձված** ևն) երբեմն գործածվում է որպես ձևաբայ՝ օժանդակ բայի հատկապես 3-րդ դեմքի հետ կազմելով, այսպես կոչված, հարակատար ժամանակ: Օր.՝ «Այդ մասին ոչինչ **չի գրված**»:

Դրան համարժեք է բաղադրյալ ստորոգյալով կառույցը՝ «Այդ մասին ոչինչ **գրված է**», որտեղ նույն հարակատար դերբայը ստորոգելի է: Առաջինը գրական լեզվում հանձնարարելի չէ:

7. Համակատար դերբայի փոխարեն խոսակցական լեզվում հաճախ գործածվում է անորոշի բացառական հոլովածը («Տուն **գնալիս** (< **գնալուց**) հանդիպեցի նրան»): Գրական լեզվում սա մերժելի երևույթ է:

8. Հարկադրական եղանակի բայածների ժխտականում չ մասնիկը սովորաբար դրվում է **պիտի** (**պետք է**) եղանակիչի վրա՝ **չպիտի** երգեմ, **չպետք է** ասի, բայց կարող է դրվել նաև բայածնի հիմնական մասի վրա՝ **պիտի չերգեմ**, **պետք է չասի**:

9. Հրամայական եղանակի ժխտականը՝ արգելական հրամայականը կազմելիս **մի՛** ժխտական մասնիկն ավելանում է բոլոր բայերի դրական հրամայականի ձևերի վրա՝ **գրի՛ր – մի՛ գրիր, կարդա՛ – մի՛ կարդա, հագի՛ր – մի՛ հագիր, կարդացե՛ք – մի՛ կարդացեք, խոսեցրե՛ք – մի՛ խոսեցրեք** ևն: Հաճախ արգելական հրամայականի համար նշվում են զուգաձևեր, որոնք հնացած են և գործածությունից աստիճանաբար դուրս են մղվում, ինչպես՝ **մի՛ կարդար, մի՛ կարդաք, մի՛ հագնիր, մի՛ հագնեք, մի՛ մոտենար, մի՛ մոտենաք, մի՛ լվար, մի՛ լվաք** ևն:

Ե խոնարհման պարզ և կրավորական բայերի հրամայականի դրական խոնարհման հոգնակիում **–(եց)եք**-ով վերջացող ձևերը՝ **գրե՛ք** կամ **գրեցե՛ք**, արգելականում ունենում են **–եք** վերջավորությունը՝ **մի՛ գրեք, մի՛ խաբվեք**: Սխալ են ավելորդ **–եց**-ով ձևերը՝ **մի՛ գրեցեք, մի՛ խաբվեցեք**:

10. Հարադիր բայերի խոնարհման հարացույցում անվանական մասը միշտ մնում է անփոփոխ (**լաց** եղա, **լաց** կլինի, **լաց** լինող): Բաղադրյալ ժամանակաձևերի օժանդակ բայը և արգելական **մի՛** մասնիկը սովորաբար միջադասվում են հարադիր բային՝ վեր **եմ** կենում, **լաց եմ** եղել, թույլ **չենք** տա, մայր **չի** մտնի, դուրս **մի՛** արի (բացառություն է **մի՛ վեր կաց** ձևը): **Պիտի** (**պետք է**) եղանակիչը կարող է լինել թե՛ միջադաս, թե՛ առաջադաս՝ վեր **պիտի** կենամ, **պիտի** վեր կենամ, **լաց պետք է** լինի, **պետք է** **լաց** լինի:

Որպես կանոն՝ զուգահեռաբար խոնարհվում են զուգադրական բայերի երկու բաղադրիչներն էլ՝ **կերավ–խմեց, կտանի–կբերի, ասե՛ք–խոսե՛ք**:

Հարակատար և ենթակայական դերբայների թեք (հոլովված) ձևերը սովորաբար կազմվում են միայն երկրորդ բաղադրիչի փոփոխությամբ՝ **բերող–տանողները, բերած–տարածի, բերող–տանողից, բերած–տարածից**, իսկ անորոշ դերբայի դեպքում առաջին բաղադրիչը նույնպես կարող է թեքվել՝ **ասել(ով)–խոսելով, ասել(ու)–խոսելու, ասել(ուց)–խոսելուց, ասել(ում)–խոսելում**:

Համակատար դերբայով զուգադրական բայերից (ասելիս–խոսելիս) առաջինը կարող է լինել առանց **–իս–ի**, որը երկու բայի համար դառնում է ընդհանուր մասնիկ՝ **ասել–խոսելիս**:

Ձուգադրական բայերի բաղադրյալ ժամանակաձևերի դրական խոնարհման օժանդակ բայը ուղիղ շարադասությամբ լինում է վերջադաս (ելնում–գնում է), իսկ շրջուն շարադասությամբ՝ առաջադաս (նա է եկել–գնացել), երբեմն՝ միջադաս (ելնում է–գնում է): **Պիտի (պետք է)** եղանակիչը լինում է միայն առաջադաս՝ **պիտի ելնեմ–գնամ, չպետք է ասես–խոսես**: Օժանդակ բայի ժխտականը, **մի՛, կ** և **չ** մասնիկները կարող են «ընդհանուր հանվել» և դրվել միայն առաջին բաղադրիչի վրա (չեմ թողել գնացել, մի՛ թող գնա, կթողնի գնա, չելնեմ–գնամ) կամ էլ կրկնվել երկու բաղադրիչների վրա միաժամանակ (չեմ ասում–չեմ խոսում, չի ասի–չի խոսի, մի՛ թող մի՛ գնա, կթողնի կգնա, չմեռա չպրծա): Միջադաս և կրկնվող մասնիկի դեպքում երկու բայերի կապը թուլանում է, զուգադրական բայը կարծես քանդվում է:

11. Բայի խոնարհման համակարգում առանձնացվում են նաև, այսպես կոչված, **բաղադրյալ երկրորդական ժամանակաձևեր**, որոնք կազմվում են հարակատար, համակատար, ապակատար դերբայներով և **լինել** օժանդակ բայի խոնարհված ձևերով՝ **մասնակցած է եղել, մասնակցելիս է եղել, մասնակցելու է եղել** ևն: Ժամանակակից արևելահայերենում համեմատաբար գործածական են հարակատարով կազմությունները: Մյուսները աստիճանաբար դուրս են մղվում լեզվից:

12. **Անկանոն բայեր**: **Բանալ, բառնալ** բայերը ներկայումս հնացած են և անգործածական: Դրանց փոխարեն գործածվում են **բացել, բարձել** բայերը, որոնցից երկրորդը կանոնավոր է:

Գիտենալ և **կենալ** բայերի ուղիղ և թեք ձևերը դուրս են մղվել գործածությունից և գրական լեզվում փոխարինվել են համապատասխանաբար **իմանալ** և **մնալ** բայերի ուղիղ և թեք ձևերով, ոչ թե՛ **գիտեցել, գիտեցած, գիտեցի՛ր // գիտցի՛ր, մի՛ գիտեցիր // մի՛ գիտցիր, մի՛ գիտենաք // մի՛ գիտեցեք** ևն, այլ՝ **իմանալ, իմացած, իմացի՛ր, մի՛ իմացիր, մի՛ իմացեք** ևն, ոչ թե՛ **կա՛ց, կեցի՛ր, կացե՛ք, մի՛ կաց, այլ՝ մնա՛, մնացե՛ք, մի՛ մնա**: Նմանապես **զարկել** բայը աստիճանաբար իր տեղը զիջում է **խփել**–ին:

Մի շարք անկանոն և պակասավոր բայերի անցյալ կատարյալի զուգաձևերից (**ասացի // ասի, արեցի // արի, բացեցի // բացի, բերեցի // բերի, դրեցի // դրի, թողեցի // թողի, լացեցի // լացի, տվեցի // տվի**) գրական լեզվում գործածական և հանձնարարելի են առաջինները՝ անցյալի ցոյական հիմքից կազմված ձևերը: Երկրորդները հնացած են և ունեն ընդգծված խոսակցական երանգ:

Անկանոն և պակասավոր բայերի խոնարհման ընդհանուր պատկերը անցյալ կատարյալում և հրամայականում այսպիսին է⁴³:

⁴³ Անկանոն ձևերն ընդգծված են: Խոսակցական երանգ ունեցող ձևերը նշված են մեկ աստղանիշով (*), հնացած ձևերը՝ երկու (**):

						Ե խոնարհման			
						պարզ			
պարզ ժամանակաձևեր	սահման. եղանակ	անցյալ կատարյալ	եզակի	I դ.	1	ասացի, ասի*	կերա	զարկեցի, զարկի*	բացեցի, բացի*
				II դ.	2	ասացիր, ասիր*	կերար	զարկեցիր, զարկիր*	բացեցիր, բացիր*
				III դ.	3	ասաց	կերավ	զարկեց	բացեց
			հոգնակի	I դ.	4	ասացինք, ասինք*	կերանք	զարկեցինք, զարկինք*	բացեցինք, բացինք*
				II դ.	5	ասացիք, ասիք*	կերաք	զարկեցիք, զարկիք*	բացեցիք, բացիք*
				III դ.	6	ասացին, ասին*	կերան	զարկեցին, զարկին*	բացեցին, բացին*
	հրամայական եղանակ	դրական		եզ.	7	ասա՛	կե՛ր	զարկի՛ր, զա՛րկ*	բացի՛ր, բա՛ց*
				հոգ.	8	ասե՛ք, ասացե՛ք**	կերե՛ք	զարկե՛ք, զարկեցե՛ք**	բացե՛ք
		արգելական		եզ.	9	մի՛ ասա	մի՛ կեր, մի՛ ուտիր**	մի՛ զարկիր, մի՛ զարկ*	մի՛ բացիր, մի՛ բա՛ց*
				հոգ.	10	մի՛ ասեք	մի՛ կերեք, մի՛ ուտեք**	մի՛ զարկեք	մի՛ բացեք

	Ե խոն.	Ա խոնարհման		Ե խոնարհման	
		պարզ		-ն- սոսկածանցով	
1	բերեցի, բերի*	եկա	լացեցի, լացի*	տվեցի, տվի*	արեցի, արի*
2	բերեցիր, բերիր*	եկար	լացեցիր, լացիր*	տվեցիր, տվիր*	արեցիր, արիր*
3	բերեց	եկավ	լացեց	տվեց	արեց
4	բերեցինք բերինք*	եկանք	լացեցինք, լացինք*	տվեցինք, տվինք*	արեցինք, արինք*
5	բերեցիք, բերիք*	եկաք	լացեցիք, լացիք*	տվեցիք, տվիք*	արեցիք, արիք*
6	բերեցին, բերին*	եկան	լացեցին, լացին*	տվեցին, տվին*	արեցին, արին*
7	բեր	արի՛, ե՛կ*	լաց	տուր	արա՛
8	բերե՛ք	եկե՛ք	լացե՛ք	տվե՛ք	արե՛ք
9	մի՛ բեր	մի՛ արի, մի՛ եկ*, մի՛ գա**	մի՛ լաց, մի՛ լա**, մի՛ լար*, մի՛ լացիր*	մի՛ տուր	մի՛ արա, մի՛ անիր **
10	մի՛ բերեք	մի՛ եկեք*, մի՛ գաք**	մի՛ լացեք, մի՛ լաք**	մի՛ տվեք	մի՛ արեք, մի՛ անեք**

	Ե խոնարհման					
	-ն- սոսկածանցով					
1	տարա	առա	ելա	տեսա	թողեցի, թողի*	եղա
2	տարար	առար	ելար	տեսար	թողեցիր, թողիր*	եղար
3	տարավ	առավ	ելավ	տեսավ	թողեց	եղավ
4	տարանք	առանք	ելանք	տեսանք	թողեցինք, թողինք*	եղանք
5	տարաք	առաք	ելաք	տեսաք	թողեցիք, թողիք*	եղաք
6	տարան	առան	ելան	տեսան	թողեցին, թողին*	եղան
7	տա՛ր	ա՛ռ	ել՛, ելի՛ր **	տե՛ս	թո՛ղ	եղի՛ր
8	տարե՛ք	առե՛ք	ելե՛ք	տեսե՛ք	թողե՛ք	եղե՛ք
9	մի՛ տար, մի տանիր**	մի՛ առ, մի առնիր**	մի՛ ել, մի ելիր** , մի ելնիր**	մի՛ տես, մի տեսնիր **	մի՛ թող, մի թողնիր**	մի՛ եղիր, մի լինիր**
10	մի՛ տարեք, մի տանեք**	մի՛ առեք, մի առնեք**	մի՛ ելեք, մի ելնեք**	մի՛ տեսեք, մի տեսնեք **	մի՛ թողեք, մի թողնեք**	մի՛ եղեք, մի լինեք**

Գ.1.13. Մակբայների գործածության յուրահատկություններ: 1. **Ամենևին, բնավ, բոլորովին, դուպն-ինչ, երբեք, էլ** մակբայները գործածվում են միայն ժխտական բայերի հետ՝ **ամենևին հարկ չկա, բոլորովին հարմար չէ** ևն:

Ծան.: Թվարկված մակբայներից է նաև **այլևս**–ը՝ «Այլևս չգաք, մեզ չանհանգստացնեք»: Արևմտահայերենում այս մակբայը **արդեն** իմաստով գործածվում է նաև դրական խոնարհման բայերի հետ՝ «Ես և իմ քույրս **այլևս** Հայկազեան կը սորվինք»: Հավանաբար այդ ազդեցությամբ արևելահայերենում սկսել ենք գործածել նաև **այլևս + դրական** խոնարհում կառույցը՝ «Դա **այլևս** կատարված իրողություն է»: Գրական արևելահայերենում այս գործածությունը հանձնարարելի չէ:

2. Որոշ մակբայներ կարող են հոլովվել՝ **հեռվից, մոտիկից, երեկվանից, վաղը չէ մյուս օրից, այսօրվա, ներսում** ևն:

3. Մակբայների մի մասը կարող է գործածվել ածականաբար՝ կատարելով որոշչի դեր՝ **բավական եկամուտ, միաձայն որոշում, ցմահ բանտարկություն, շտապ օգնություն, եռակի հերոս, շտապ եզրակացություն, արագ ընթացք** ևն:

4. Մակբայների մի մասը կարող է լինել ոչ միայն բայով արտահայտված անդամի լրացում, այլև ածականով, մակբայով, իսկ չափի որոշ մակբայներ՝ նաև թվականով՝ **ներկայումս գործազուրկ, ներքուստ հպարտ, մասամբ հայտնի, մոտավորապես վաթսուն, գրեթե հարյուր, հազիվ երկու** ևն:

Գ.1.14. Կապերի գործածության յուրահատկություններ: 1. **Շնորհիվ, արդյունքում, պատճառով և հետևանքով** կապերն ու կապական բառերը, նշելով հիմունքի, պատճառի, հետևանքի իմաստներ, միաժամանակ վերաբերմունք են արտահայտում. առաջին երկուսը՝ դրական, վերջին երկուսը՝ չեզոք կամ բացասական: Մեկը մյուսի փոխարեն գործածվելիս առաջանում է իմաստային անճշտություն: Անճիշտ են հետևյալ նախադասությունները՝ «Երկու երկրների

միջև քաղաքական առճակատումն ավելի խորացավ, որի **արդյունքում** լարված իրավիճակ ստեղծվեց սահմանամերձ շրջաններում»։ Ընդգծված բառի փոխարեն պետք է գործածվեր **հետևանքով** հոմանիշը։ Այլ օրինակներ՝ «Անկազմակերպ աշխատանքի **շնորհիվ** (←պատճառով)»։ «Հրամանի արձակման **պատճառը** (←հիմքը)»։ «Ճգնաժամի **արդյունքում** (←հետևանքով) ռուսական ռուբլու արժեզրկման տեմպերը հանգեցրին դրամի փոխարժեքի արժեզրկման» ևն։

2. Հետ, մոտ, վրա, պես, նման կապերը **ես, դու, մենք, դուք** դերանունների հետ կապակցվում են ոչ թե սեռական, այլ տրական հոլովաձևերով՝ **ինձ նման, մեզ պես, քեզ հետ, ձեզ վրա** ևն։ **Մոտ, վրա** կապերի թեք ձևերի հետ նշված դերանունները լինում են սեռական հոլովով՝ **իմ մոտից, ձեր վրայով** ևն։

3. Մի շարք կապեր և կապական բառեր՝ **առաջ, բացի, ի վեր, իբրև, ինչպես, որպես, հետո, անց**, պահանջում են տարբեր հոլովներով կապվող բառ՝ մեկ **ժամ** առաջ / դռան առաջ, **օրեր** անց / **քսանից** անց, **փողոցն** ի վեր / **նրան** տեսնելուց ի վեր ևն։

4. Թեք հոլովներով կապվող բառ պահանջող մի շարք կապեր և կապական բառեր (**առանց, առթիվ, չափ, նախքան, որպես, չհաշված, մասին, բացի, ժամանակ** ևն) գործածվում են **այս, այդ, այն** ցուցական դերանունների նաև ուղիղ ձևերի հետ՝ **բացի այդ, այն մասին, առանց այդ էլ, այն ժամանակ**։

5. Հանձինս կապը պահանջում է **հոգնակի թվով խնդիր** կամ **կապի բազմակի խնդիր՝ հանձինս** աշխատակիցների, **հանձինս** տնօրենի և փոխտնօրենի, իսկ **հանձին** կապը՝ **եզակի թվով** կապի խնդիր՝ **հանձին** տնօրենի։

6. Ի թիվս կապը պահանջում է **հոգնակի թվով** կապի խնդիր՝ **ի թիվս սովորողների, ի թիվս այլոց**։

7. Կապերի մեծ մասը տրոհում չի պահանջում։ Հիմունքի և զիջման կապերով (ըստ, համաձայն, նայած, չնայած, հակառակ) ձևավորված անդամները նախադասության մյուս անդամներից սովորաբար տրոհվում են միջադաս դիրքում ստորակետերով, առաջադաս և վերջադաս դիրքերում՝ բուլթով՝ «**Մենք, համաձայն** պայմանավորվածության, մեկնեցինք վաղ առավոտյան»։ «**Ըստ** պայմանավորվածության՝ մեկնեցինք վաղ առավոտյան»։ Այդպես կարող են տրոհվել նաև բացառման որոշ կապերով (առանց, բացառությամբ, բացի, փոխանակ) ձևավորված անդամները։ **Բացի** կապով ձևավորված անդամները կարելի է ստորակետով տրոհել ցանկացած դիրքում՝ «**Բացի քեզնից**, ոչ մեկի չեմ ճանաչում»։ «**Չեմ ճանաչում** ոչ մեկի, **քեզնից բացի**»։ «**Ես, քեզնից բացի**, ոչ մեկի չեմ ճանաչում»։ Առաջադաս և վերջադաս դիրքերում նախընտրելի է բուլթով տրոհումը։

8. Ի դեմս կապը գործածվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով (բայց միայն անձնանիշ կամ անձի առումով վերցված) գոյականների հետ՝ **ի դեմս գործընկերների // ի դեմս գործընկերոջ**, բայց ոչ՝ **ի դեմս հրամանագրի**։ (**Ի թիվս, ի փառս, ի հեճուկս, ի դեմս** կապերը չունեն առանց ս վերջնամասնիկի ձևեր)։

9. Հետ կապը **ծանոթանալ** բառի հետ գործածվելիս արտահայտում է փոխադարձության իմաստ: Եթե կապվող բառը իրի անուն է, ապա, պարզ է, փոխադարձության մասին խոսք լինել չի կարող: Հետևաբար այդ դեպքում գոյականը պետք է գործածել միայն տրական հոլովով՝ առանց հետ կապի՝ «ծանոթանալ փաստաթղթերի հետ» ⇐ «ծանոթանալ փաստաթղթերին», «Իրենք, համաձայնելով ՀՀ նախագահի և արտգործնախարարի վարած արտաքին քաղաքականության հետ (⇐քաղաքականությանը), մնում են ընդդիմություն»:

10. Բացի կապը պահանջում է բացառականով կապվող բառ, դրվում է և՛ դրանից առաջ, և՛ հետո՝ **բացի նշվածից // նշվածից բացի**:

11. Առանց կապը պահանջում է տրական հոլովով կապվող բառ՝ **առանց պատասխանի, առանց զգուշացման** կամ **զգուշացնելու** (սխալ է՝ առանց պատասխան, առանց զգուշացնել):

Գ.1.15. Շաղկապների գործածության յուրահատկություններ: 1. Նախադասության մեջ հաճախ իրար կողքի կարող են հայտնվել համադասական և ստորադասական կամ երկու ստորադասական շաղկապներ՝ «Գիտեի, որ եթե բոլորը գան, նստելու տեղ չի լինի»: Այսպիսի դեպքերում շաղկապների միջև կարելի է ստորակետ դնել՝ «Զարթնեցի և, որովհետև շատ շուտ էր, նորից քնեցի»:

Կրկնադիր շաղկապներով կապակցված համագոր անդամներն իրարից անջատվում են ստորակետով, բացի այն դեպքից, երբ կապված են նաև և կամ ու շաղկապով. կրկնադիր շաղկապները ստանում են շեշտ՝ «Այդ մասին չգիտեմ ո՛չ վկաները, ո՛չ տուժողը և ո՛չ էլ մեղադրյալը»:

2. **Թե և թե չէ** շաղկապները և՛ համադասական են, և՛ ստորադասական. **թե** համադասական շաղկապը գործածվում է երկընտրական կապակցություններում՝ «Գնալ, **թե՛** մնալ», կամ որպես միավորիչ շաղկապ՝ «Մեծ **թե** փոքր աշխատում էին»: **Թե չէ** ստորադասականը ունի **հենց** շաղկապի իմաստ՝ «Տեսավ **թե չէ**, վրդովվեց»: **Թե չէ** համադասականը տրոհական իմաստով է գործածվում՝ «Խոսիր, **թե չէ** հետո ուշ կլինի»: Ինչպես տեսնում եք, կա նաև դիրքային տարբերություն:

3. **Թե, որ** հոմանիշ շաղկապներից **որ**-ը հաստատական նշանակություն ունի, օր.՝ «Պարզվեց, **որ** նա անմեղ է», **թե**-ն՝ առավելապես կասկածական, ենթադրական՝ «Կարծում էի, **թե** դրանով գործը կավարտվի»: Հարցական դերանուն պարունակող երկրորդական նախադասությունը գլխավորին կապվում է **թե** շաղկապով՝ «Չեմ կարող ասել, **թե** նա ինչով է զբաղված»: Չի հանձնարարվում՝ «Ասաց, **թե** գալու է»:

4. **Որ և որպեսզի** շաղկապները իրար կարող են փոխարինել միայն այն դեպքում, երբ գլխավորին են կապում նպատակի պարագա երկրորդական նախադասություն՝ «Ներկայացուցիչներ են եկել, **որ** (= **որպեսզի**) հարցի քննարկումը նախապատրաստեն»: Այլ դեպքերում **որպեսզի**-ն չի կարող փոխարինել **որ**-ին, ինչպես՝ «Առաջարկություն է եղել (ինչի), **որպեսզի** (⇐**որ**) նախագծի քննարկումը տեղափոխվի հաջորդ եռօրյա»: «Անհրաժեշտ է (ինչ), **որպեսզի** (⇐**որ**) ակտիվ մասնակցություն ապահովվեք»:

5. **Ոչ թե... այլ, ոչ միայն... այլև** զուգադիր շաղկապներն ունեն իմաստային և կիրառական տարբերություններ: Դրանց երկրորդ բաղադրիչները (**այլ, այլև**) երբեք չեն կարող իրար փոխարինել: Հետևաբար պիտի գրել՝ «**Ոչ թե** անել են դեպոզիտները, **այլ** նվազել»: Բայց ոչ երբեք՝ «**Ոչ թե** անել են դեպոզիտները, **այլև** նվազել»: Կամ՝ «**Ոչ միայն** մասնակցել է գործողություններին, **այլև** ակտիվություն է դրսևորել»: Բայց ոչ երբեք՝ «**Ոչ միայն** մասնակցել է գործողություններին, **այլ** ակտիվություն է դրսևորել»: (Հիշենք նաև, որ ճիշտ չէ **ոչ թե... այլ** շաղկապի **այլ** բաղադրիչի վրա բույժ դնելը):

6. Ստորադասական շաղկապները կարող են զեղչվել: **Որ, թե, եթե, ինչ** շաղկապների զեղչման դեպքում գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև բույժ է դրվում՝ անկախ դրանց շարադասությունից: Օր.՝ «Չպարզեցի՝ ինչ պիտի անեմ»: «Որևէ պայման խախտես՝ պայմանագիրը կդադարեցվի»:

7. Երբեմն **սակայն** շաղկապը վերաբերականի նշանակություն է ստանում, երբ լինում է միջադաս դիրքում և ստորակետերով տրոհվում է որպես միջանկյալ բառ՝ «Բոլորին հրավիրատոմս էր ուղարկվել: Ոչ ոք, **սակայն**, հրավերքին չմասնակցեց»:

Գ.1.16. Վերաբերականների և ծայնարկությունների գործածության յուրահատկություններ: 1. Հաճախ որպես վերաբերական գործածվում են նաև մի շարք այլ բառաձևեր ու կապակցություններ՝ **ասենք թե, հասկանալի է (որ), հաճելի է (որ), ցանկալի է (որ), ասում են (թե), ասվում է (որ), նշվում է (որ), հարց չկա, ոչ մի խնդիր, բայց և այնպես, չի կարող պատահել (որ), ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի** ևն:

2. Նախադասության մեկ անդամի նշանակությունը եղանակավորող վերաբերականները չեն տրոհվում՝ «Դու **կարծես** լավ չես զգում քեզ»: «**Հենց** դա էի ուզում»: Ամբողջ նախադասության իմաստը եղանակավորողները մեծ մասամբ տրոհվում են՝ իբրև միջանկյալ բառեր՝ «Դուք, **իհարկե**, պատասխան կստանաք»: «Ի **դեպ**, ես այդ մասին գիտեի»:

3. **Մի՞թե, չլինի՞ (թե), չէ՞ որ, ի՞նչ արած, ինչպե՞ս չէ** վերաբերականները միշտ գրվում են հարցական նշանով, իսկ **այո՛, ո՛չ, չէ՛, ա՛յ, դե՛հ** վերաբերականները՝ շեշտով:

4. Մեկնական որոշ վերաբերականներ սկզբից տրոհվում են ստորակետով, վերջից՝ բույթով՝ **մի խոսքով, ասենք, ավելի ճիշտ** (երբեմն էլ՝ **այսպես ասած**):

5. Սաստկական **այն էլ** վերաբերականը (երբեմն էլ՝ **մանավանդ, նամանավանդ, անգամ, մինչև անգամ, մինչև իսկ, նույնիսկ**) ստորակետով է տրոհվում միայն սկզբից՝ «Իհարկե եկել էր, **այն էլ** շքախմբով»:

6. Վերաբերականի արժեք ունեն նաև որոշ կարգի խոսքային բանաձևեր՝ **ողջո՛յն, բարի լո՛յս, շնորհակալություն, ներողություն**, հուզական արտահայտություններ՝ **կեցցե՛ս, Աստվա՛ծ իմ, գրո՛ղը տանի**:

7. Զգացական ծայնարկությունների ճշգրիտ նշանակությունը դրսևորվում է միայն խոսքաշարում: Օր.՝ **վա՛յ** ծայնարկությունը կարող է արտահայտել մերթ ցավ («**Վա՛յ**, ցավում է ոտքս»), մերթ վախ («**Վա՛յ**, չբարձրանաս, հանկարծ

կընկնես»), մերթ **զարմանք** («Վա՛յ, դու որտեղից հայտնվեցիր»), մերթ **դժգոհություն** («Վա՛յ, այս ինչ արիր, ամեն ինչ փչացրիր»), մերթ **հանդիմանություն** («Վա՛յ քեզ, այսպես ես սովորել դասդ»), **սպառնալիք** («Վա՛յ նրան, ով կհամարձակվի ծպտուն հանել»):

8. Տևական արտասանվող ձայնարկության երկարացվող հնչյունը կարող է գրվել երկու կամ ավելի տառերով՝ **ճը՛ռռ, էհեեե՛յ**:

9. Ձայնարկությունը սովորաբար ստորակետերով անջատվում է նախադասությունից՝ «Է՛յ, փոքրիկ, արի՛ այստեղ»: «Ա՛, հասկացա...»: Եթե ձայնարկությունը կոչականին է վերաբերում, ապա նրանից չի տրոհվում և նրա հետ միասին ստանում է մեկ ընդհանուր առոգանության նշան՝ «Ա՛յ սիրելիս, այս ինչ ես անում»:

10. Ձայնարկությունը կարող է ունենալ լրացումներ՝ դառնալով յուրատեսակ միջանկյալ բառակապակցության գերադաս անդամը՝ «Վու՛շ-վո՛ւշ, Անո՛ւշ, վու՛շ-վո՛ւշ, քուրիկ, Վո՛ւշ քու սերին, քու յարին...»:

11. Նմանաձայնություններից ածանցներով կարող են կազմվել բայեր, գոյականներ, ածականներ՝ **տը՛զզ** – տզզալ, տզզոց, տզզան, **գըր՛նգ** – գրնգալ, գրնգոց, գրնգան, գրնգուն:

12. Ձայնարկությունները ավելի շատ գործածվում են խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ, վերաբերականները՝ գիտական գրականության մեջ:

Գ.2. ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅԱՆ ԱՆՊԱՄՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Գ.2.1. Համաձայնություն (87): Գ.2.2. Խնդրառություն (90): Գ.2.3. Առդրություն (91): Գ.2.4. Շարադասություն (91):

Գ.2.1. Համաձայնություն: Կապակցվող անդամները փոխադարձաբար պայմանավորում են միմյանց քերականական ձևը: Այդպես են կապակցվում.

ա) ենթական և ստորոգյալը. համաձայնում են **թվով, նաև դեմքով**: Ստորոգյալը եզակի թվով է դրվում, եթե ենթական եզակի է, այդ թվում՝ հավաքական կամ հոգնակերպ գոյական՝ «Ժողովուրդն է իրական ուժը»: «Միացյալ Նահանգները ներխուժել է Իրաք»:

Եթե եզակի թվով ենթական ունի մեկից մեծ թվականով կամ թվականական դերանունով արտահայտված որոշիչ, ապա ստորոգյալը կարող է լինել և՛ հոգնակի թվով՝ «Հանձնաժողովում քննարկման են դրվելու երկու հարց», և՛ եզակի՝ «Հանձնաժողովում քննարկման է դրվելու երկու հարց»:

Ստորոգյալը հոգնակի թվով է, եթե ենթական՝ • **հոգնակի է՝** «Պետությունները «սառնասիրտ հրեշներ են», • **բազմակի է՝** «Ո՛չ ԲՀԿ-ն և ո՛չ էլ ՀՅՄ-ն Ազգային ժողովի արտահերթ նիստին չեն մասնակցել»:

Բազմակի ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի թվով, եթե՝

- Ենթականներն իմաստով հարաբերակից են և միասին արտահայտում են մեկ հասկացություն՝ «Քննարկման ավարտից հետո **հարց ու պատասխան** չինչեց»:
- Ենթականներն ունեն **յուրաքանչյուր, ամեն (մի), ոչ մի** դերանուններով արտահայտված ընդհանուր որոշիչ՝ «Դատական քննության **յուրաքանչյուր** մաս, հատված ունի իր բովանդակությունը և նշանակությունը»: «**Ոչ մի** արարք, հանցանք այնքան քստմենլի չէ, որքան հոգեկան հանցանքը»:
- Նույն դեմքով ենթակաները կապված են «**կամ**», «**կա՛մ ... , կա՛մ**», «**ոչ թե ... , այլ**» շաղկապներից որևէ մեկով՝ «Կատարվածի համար պատժվելու է կամ «BMW»-ի վարորդը, կամ «Mercedes Benz»-ի»:
- Ենթականներից մեկը՝ նախորդում, մյուսը հաջորդում է ստորոգյալին՝ «Այդ ամենից ջինջ հիշողություն է մնացել և մի կսկիծ»: «Թե՛ գինվորն է պատասխան տալու կատարվածի համար, թե՛ հրամանատարը»:

Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ գոյականով (կամ փոխանվանաբար գործածված բառով) արտահայտված ստորոգելին սովորաբար լինում է հոգնակի թվով («Դրանք քննարկման ենթակա **ծրագրեր** են»), բայց կարող է լինել նաև եզակի թվով, եթե՝ • Ենթական հարգական հոգնակի նշանակող անձնական դերանուն է՝ «Դուք, պարոն դեսպան, չարաշահում եք **Ձեր** լիազորությունները»: • Ստորոգելին գնահատող իմաստ ունի և անհոգնական կամ անհաշվելի է՝ «Երիտասարդները մեր երկրի **ապագան** են»: • Ստորոգելին շեշտում է իր արտահայտած առարկայի ոչ թե քանակը, այլ տեսակը՝ դրվելով անորոշ առումով՝ «Քո ցույց տված բոլոր ծառերը **կաղնի** էին»:

Դիմային համաձայնությունը արտահայտվում է բայի դիմային վերջավորություններով կամ հոդերով: 1-ին կամ 2-րդ դեմքի անձնական դերանունով արտահայտված կամ դիմորոշ հոդ (**ս** կամ **դ**) ունեցող ենթակայի հետ ստորոգյալը լինում է համապատասխանաբար 1-ին կամ 2-րդ դեմքով՝ «**(Ես)** Մտավորականս, չեմ կարող չմասնակցել այդ շարժմանը»: «**Ի՛նքդ** փորձիր կողմնորոշվել»: Մնացած դեպքերում ստորոգյալը լինում է 3-րդ դեմքով՝ «Մեկ վկա նշանակում է ոչ մի վկա»:

Ծան.: 1-ին և 2-րդ դեմքի անձնական դերանուն ստորոգելի դեպքում հանգույցը դեմքով համաձայնում է դրան՝ «Այդ ամենի կազմակերպիչը **դու ես**»:

Տարբեր դեմքերով բազմակի ենթակաների դեպքում ստորոգյալը համաձայնում է առաջին դեմքի ենթակայի հետ («**Ես**, դու, նա կմեկնենք»), դրա բացակայության դեպքում՝ երկրորդ դեմքի ենթակայի հետ («**Դու** և նա իրար **նման** եք»), նաև վերջինիս բացակայության դեպքում դրվում է երրորդ դեմքով («Որոշ չգրված օրենքներ ավելի **զորեղ են** գրվածներից»):

բ) Բուն բացահայտիչը և բացահայտյալը համաձայնում են թվով, հոլովով, դեմքով, հաճախ նաև առումով՝ «**Մեզ՝ մասնակիցներին**, պարգևատրելու են»: Դիմային համաձայնությունը կատարվում է անձնական դերանուններով և կամ դիմորոշ հոդերով: Օր.՝ «**Ձեզ՝** այլախոհներիդ, շատերը հանդուրժել չեն կարողա-

նում»: «Ես՝ երկրի անվտանգության երաշխավորս, իրավունք չունեմ չհարգելու այդ երկիրը, նրա արժեքները, նրա ժողովրդին»: «Մարզիկներիդ՝ մեր երկրի պատիվը բարձրացնողներիդ, ցավոք, պատշաճ ուշադրություն չի դարձվում»:

Բացահայտիչն ու բացահայտյալը երբեմն կարող են չհամաձայնել՝

- թվով. «Ամենայն հոգատարությամբ պետք է վերաբերվենք **երեխաներին՝** մեր երկրի **ապագային**»: «Զրկվեցինք մեր ամենամեծ **արժեքից՝** մեր նախնիների **տարածքներից**»:

- հոլովով. «Ռենե Դեկարտը մեծ հաջողություններ է ունեցել գիտության ամենատարբեր **ոլորտներում՝ փիլիսոփայություն, բնագիտություն, մաթեմատիկա** ևն»: «Մեր ընտանիքը բաղկացած է չորս **հոգուց՝** **ես, մայրս, հայրս ու եղբայրս**»: «Վարչության երեք **աշխատակիցներից՝** Վահանյան, Աբրահամյան, Նազարյան, հաշվետվություն է ներկայացրել միայն մեկը»:

- դեմքով. «Արցախի ազատագրության համար **պայքարողներդ՝** մեր նոր կյանքի **կերտողն ու ապավենը,** մշտապես և բոլոր ժամանակներում պիտի գնահատված լինեք»:

- առումով. «Հայաստանի բոլոր **քաղաքները՝ Վան, Բազավան, Կարին, Վաղարշապատ,** բռնված էին պարսից զորքերով»: «Ռազմաճակատ մեկնեցին **բոլորը՝ կին թե տղամարդ**»:

Ծան.: Հոլովով չհամաձայնած բացահայտիչը չպետք է շփոթել բարդ համադասական նախադասության բաղադրիչ անվանական անդամ նախադասության հետ՝ «Դուրս եկա փողոց. մարդիկ, մեքենաներ, անասելի աղմուկ և իրարանցում»:

Մասնական բացահայտիչը (բացահայտյալին է միանում **որպես** կամ **իբրև** կապով և մասամբ է բացահայտում լրացյալի ով կամ ինչ լինելը՝ «**Չարենցը՝ որպես գրող,** հանրաճանաչ է») բացահայտյալի հետ սովորաբար համաձայնում է թվով, հոլովով և որոշիչ հոդ չի ընդունում. «**Վահանյանին՝ որպես հմուտ ղեկավարի,** պարգևատրեցին»: Մասնական բացահայտիչը բացահայտյալի նկատմամբ կարող է լինել նախադաս. «**Որպես կենսաթոշակառու՝** նա օգտվում է մի շարք արտոնություններից»: Այս դեպքում բուրժուազիական դրվում է բացահայտիչի վրա:

Ծան.: **Որպես** կամ **իբրև** կապով ձևավորված անդամը, եթե լրացնում է ստորոգյալին, չի տրոհվում՝ «Դիվանագիտական գործակալը պարտավոր չէ ցուցմունքներ տալ **որպես** վկա»: Նույն կապերով կարող են ձևավորվել նաև այլ անդամներ՝ *սփորոգելի՝* «Աշխատում է **որպես լրագրող,** *ձևի պարագա՝* «**Որպես արծիվ** խոյացավ թշնամու վրա»:

Մասնավորող պարագայական բացահայտիչը (ոչ թե գոյականական, այլ պարագայական անդամի լրացում է և մասնավորեցնում, ճշգրտում է լրացյալի ցույց տված որևէ պարագայական հատկանիշ՝ բայական որևէ անդամի ցույց տված գործողության կամ եղելության տեղը, ժամանակը) և բացահայտյալը հոլովով և թվով կարող են համաձայնել, եթե երկուսն էլ արտահայտված են գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ այլ բառով՝ «Ընտրական տեղամասեր կլինեն բոլոր **բնակավայրերում՝** դպրոցական **շենքերում**»: «Հյու-

րերը կժամանեն մոտ մեկ **շաբաթից՝ վեց օրից**»։ Բայց կարող են և չհամաձայնել՝ «Հանդիպեցին **սահմանագծին՝ խրամատներում**»։

Մասնավորող պարագայական բացահայտիչը, ինչպես և բուն բացահայտիչը, կարող են լինել ոչ միայն բազմակի, այլև կրկնակի, եռակի ևն, այսինքն՝ բացահայտիչն իր հերթին կարող է ունենալ բացահայտիչ՝ «Հերթական ժողովը կկայանա հաջորդ **շաբաթ՝ հինգշաբթի օրը՝ աշխատանքից հետո՝ ժամը վեցին**»։

գ) Հարաբերյալն ու հարաբերական բառը, որոնք կապակցում են գերադաս և ստորադաս նախադասություններ. սովորաբար համաձայնում են թվով՝ «Խոսեցի **նրանց** հետ, **ովքեր** ներկա էին»։

դ) Որոշիչն ու որոշյալը թվով համաձայնում են հետևյալ դեպքերում. • գոյական որոշիչը բազմակի որոշյալի դեպքում լինում է հոգնակի, օր.՝ «**Պատգամավորներ** Եսայանն ու Պետրոսյանը հանդես եկան համատեղ հայտարարությամբ», • մի շարք դերանուն որոշիչներ որոշյալից պահանջում են միայն եզակի կամ միայն հոգնակի թիվ, օր.՝ «**Այս ու այն** կուսակցությունից...», «**Բոլոր** մարդիկ...», **Որոշ** տվյալներ...», «**Ինչ-ինչ** նկատառումներ...»։

Գ.2.2. Խնդրառություն (հոլովառություն, կառավարում)։ Կապակցվող անդամներից մեկը պայմանավորում է մյուսի քերականական ձևը։ Այդպես են կապակցվում՝ • **խնդիրն ու լրացյալ բայը**՝ «**Տեսա երազ մի վառ**», • **անվանական պարագան ու ստորոգյալը**՝ «**Անցա փողոցով**», • **հատկացուցիչն ու հատկացյալը**՝ «**Մեր պատասխանը սա է**», • **կապն ու կապի խնդիրը**՝ «**Քեզ նման է մտածում**»։

Առանձին բայերի համար արդի հայերենում առաջ են եկել խնդրառական զուգաձևեր՝ **կարոտել հայրենիքին // հայրենիքը, դավանել սկզբունք // սկզբունքի, ձեռնարկել գործ // գործի, կրակել մեկի վրա // մեկին, մեկից // մեկին հինգ է պակաս, կառչել բազրիքից // բազրիքին, կառչել խոսքերից // խոսքերին, կախել պատին // պատից, տիրել երկրին // երկիրը, խոչընդոտել զարգացումը // զարգացմանը, ուրախ եմ քո գալու համար // գալուն, բավարարել պահանջները // պահանջներին, խթանել զարգացումը // զարգացմանը** ևն։ Դրանցից մի քանիսը խոսակցական երանգ ունեն՝ **խոչընդոտել զարգացմանը, ուրախ եմ քո գալուն** ևն։

Մի շարք բայեր (ծանոթանալ, մտերմանալ, բարեկամանալ, ընկերանալ, թշնամանալ, հաշտվել, գժտվել, վիճել, կռվել, խորհրդակցել) կամ դրանց հիմքով կազմված բաղադրյալ ստորոգյալներ (ծանոթ ենք, ընկեր են, համամիտ եմ ևն) հանգման խնդիր են պահանջում **հետ** կապով կամ էլ միայն փոխադարձ դերանունով (իրար, միմյանց, մեկմեկու), եթե առկա է փոխադարձության հարաբերություն անձերի (կամ անձնավորված իրերի) միջև։ Օր.՝ «Նոր տնօրենը սկսել է **ծանոթանալ աշխատակիցների հետ**»։ «Անպայման կխորհրդակցեք **իրար հետ**»։ «Մենք **իրար** թշնամի չենք»։ Եթե հարաբերությունը փոխադարձ չէ (սովորաբար այդպես է, երբ խնդիրը անձ չէ), ապա հանգման խնդիրը լինում է առանց **հետ** կապի («Ծանոթ եմ քո **կարծիքին**»)։

Անորոշ դերբայով արտահայտված հետադաս հանգման և անջատման խնդիրները («Տրամադրված եմ **աշխատելու**»: «Հրաժարվում է **ցուցմունք տալուց**») կարող են դրվել նաև ուղղական-հայցական հոլովով («Տրամադրված եմ **աշխատել**»: «Հրաժարվում է **ցուցմունք տալ**»): Հանձնարարելի են սեռական-տրականով ձևերը:

4.2.3. Առդրություն: Կապակցվող անդամներից որևէ մեկը չի պայմանավորում մյուսի քերականական ձևը. անդամները կապակցվում են սոսկ իմաստով:

Այդպես են կապակցվում.

- **Որոշիչն ու որոշյալը՝ եվրոպական դատարան** (այլ մոտեցմամբ՝ գոյական որոշիչ-որոշյալի կապը համարվում է խնդրառություն՝ «Ներս մտավ **ձեռնափայտով մի մարդ**»):

- **Մակբայական** (ածականական, դերբայական) **պարագան ու ստորոգյալը՝ «խնդիրը դժվար/շուտ/կազմակերպված լուծվեց**»:

- **Համադասական հարաբերությամբ միացած բազմակի անդամները՝ «Վարուժանը, Սիամանթոն, Թեքեյանը** արևմտահայ բանաստեղծներ են»:

Կա առդրության մի տարատեսակ, երբ լրացումն իր լրացյալին պարտադրում է որոշակի թիվ: Դա կոչվում է **թվային կախում**: Այսպես՝ **խումբ-խումբ, զույգ-զույգ, բազմաթիվ, մեծաքանակ** ածականները, **բոլոր, ինչ-ինչ** դերանունները պահանջում են հոգնակի թիվ ունեցող որոշյալ՝ **բոլոր մարդիկ, բազմաթիվ գրքեր**:

Յուրաքանչյուր, ամբողջ, որևէ, որևիցե, ամեն, ամեն մի, մի դերանունները, **ցանկացած** ածականը պահանջում են եզակի թիվ ունեցող որոշյալ՝ **ամբողջ աշխարհը, որևէ մեկը, յուրաքանչյուր մասնակից, ցանկացած գործ, մի մարդ**:

4.2.4. Շարադասություն: Նախադասության մեջ բառերի դասավորության կարգն է: Նախադասության որոշ անդամների դասավորությունը կայուն է, անշրջելի: Այդպես է բացահայտյալի և բուն բացահայտիչի շարադասությունը (**«Մենք՝ ներքոստորագրյալներս, համաձայն չենք»**), ինչպես նաև կապերի մեծ մասի և կապվող բառի շարադասությունը (**«Խոսիր իմ փոխարեն: Փոխանակ գնայիր»**): Որոշ անդամների շարադասությունը թեև որոշակի է, բայց շրջելի է: Այդպես՝ որոշիչի և որոշյալի, հատկացուցիչի և հատկացյալի հակառակ շարադասությունը թույլատրելի է որոշ պայմաններում և կոչվում է **շրջուն՝** ի տարբերություն սովորական շարադասության, օր.՝ **«Արձանագրություն ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի համար 5 նիստի»**:

Որոշ անդամների շարադասությունը ազատ է, այսինքն՝ հավասարապես թույլատրելի է ցանկացած հերթականությամբ: Օր.՝ ստորոգյալի և ժամանակի պարագայի շարադասությունը՝ **«Կմեկնենք երեկոյան»**: // **«Երեկոյան կմեկնենք**»:

Շրջուն և ազատ շարադասության դեպքում կարևոր դեր է ստանձնում տրամաբանական շեշտը:

Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը: Ուղիղ շարադասության դեպքում ենթական սովորաբար նախորդում է ստորոգյալին՝ «Ընտրություններն սկսվել են»: Այսպիսի կառույցներում ենթակայի և ստորոգյալի հակառակ շարադասությունը շրջուն է և կարող է հանդիպել միայն տրամաբանական շեշտի ազդեցությամբ կամ բանաստեղծական խոսքում՝ «Սկսվել են ընտրությունները»: Երբ հանգույցը մի դեպքում առկա է, մի այլ դեպքում՝ զեղչված, ապա ենթական կարող է լինել հետադաս՝ «Օդը այնքան ցինջ է, որ տեսանելի է դիմացի լեռան ծաղկած մասրենին, և **լսելի**՝ ծաղիկների մեջ մոլորված մեղվի հանդարտ **բզզոցը**»:

Կան կառույցներ, որոնցում ուղիղ շարադասությամբ՝ ենթական հաջորդում է ստորոգյալին: Դա բնորոշ է հատկապես անորոշ առումով ենթակա պարունակող նախադասությանը. այսպիսի դեպքերում ենթակայի նախադաս դիրքն է շրջուն. «Քարոզարշավ է մեկնարկելու վաղ առավոտից»: Ենթական պարտադիր հետադաս է լինում մեջքերվող խոսքի նկատմամբ միջադաս կամ վերջադաս հեղինակային խոսքում՝ ««Մի դատիր, որ չդատվես»,– ասում է Սուրբ գիրքը»:

Որոշիչը որոշյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս, բայց շրջուն շարադասությամբ կարող է լինել նաև հետադաս՝ «Հոգնեցրին ինձ արդեն օրերը **լայն ու նեղ...**»: Երբ հետադաս որոշիչը ծավալուն է կամ բազմակի, ապա իր որոշյալից տրոհվում է բուֆով, իսկ նախադասության այլ անդամներից՝ ստորակետով՝ «Այդ հսկա քաղաքը՝ **մարդաշատ և աղմկոտ**, ապրելու տեղ չէ»:

Եթե բազմակի որոշիչներից մեկը արտահայտված է որակական ածականով, իսկ մյուսը՝ հարաբերական, ապա վերջինս նախորդում է առաջինին՝ «**Փայտե դեղին** քանոնս կոտրվել է»: Այսպիսի տարաբնույթ բազմակի որոշիչները միմյանցից չեն տրոհվում և չեն կապակցվում **և, ու, կամ, թե** շաղկապներով:

Տարաբնույթ (տարադաս) բազմակի որոշիչների սովորական շարադասության նախընտրելի կարգը հետևյալն է. գոյական որոշիչ + դերբայ որոշիչ + ածականական դերանուն որոշիչ + հարաբերական ածական որոշիչ + թվական (կամ թվականական դերանուն կամ թվանիշ ածական) որոշիչ + որակական ածական որոշիչ + որոշյալ: Օր.՝ ««Կարմիր գրքում» տեղ **գտած անտառային ո՞ր երեք գիշատիչ** գազանների մասին էր երեկվա դասը»: «Իմ **ծեղքի փչացած ոսկյա** ժամացույցը վաճառել եմ»: Շարադասության նշված կարգը կարող է խախտվել՝

1. Հետադաս բազմակի որոշիչի դեպքում (Դա մի փոքրամարմին կին էր՝ **տարօրինակ, ծեր, առողջությունից զրկված, անհրապույր տեսքով և խորհրդավոր**: Այսպիսի հետադաս որոշիչները միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով):

2. Այն դեպքում, երբ առկա է որոշիչ–որոշյալի կայուն կապակցություն՝ տերմինի արժեքով (**ելից մատյան, խոսքի մաս, սեղանի թենիս, բացման խոսք, քրեական դատավարություն** ևն), որին նախորդում են մյուս բոլոր ազատ որոշիչներն ընդունված կարգով («Մեզ ներկայացրե՞ք **նոր ելից մատյանը**»: «**Բոլոր քրեական գործերը** քննվում են նախ առաջին աստիանի դատարանում»):

3. Այն դեպքում, երբ բազմակի որոշյալներից ամեն մեկն ունի իր որոշիչը, իսկ բոլորը միասին ունեն ևս մի ընդհանուր որոշիչ, որը, անկախ իր արտահայ-

տությոնից, նախորդում է մյուս բոլորին («Գրքում տեղ են գտել **բազմաթիվ** դաշ-
նամուրային մանրանվագներ, մանկական երգեր, ժողովրդական խմբերգեր»):

Հատկացուցիչը հատկացյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս,
բայց շրջոն շարահասությամբ կարող է լինել նաև հետադաս. «Գիրք ճանա-
պարհի»: Հատկացուցիչը կարող է պարտադրված շրջոն շարահասություն
ունենալ, եթե ունի որոշիչ ստորադաս նախադասություն առանց հարաբերյալի:
Օր.՝ «Դա **պարտականությունն** է յուրաքանչյուր **մարդու**, ով մտահոգ է երկրի
ճակատագրով»:

Ծան. Միտում է նկատվում անորոշ դերբայի սեռական–տրական հոլովածնով արտա-
հայտված հետադաս հատկացուցիչը ուղղականով գործածելու՝ «Ժամանակ չունեմ **մտածել**
(**←մտածելու**)»: «Կարիք չկա **հիշեցնել** (**←հիշեցնելու**)»: Հանձնարարելի են սեռական–
տրականով ձևերը:

Եթե հատկացուցիչի և հատկացյալի միջև լինում է գոյականով կամ գոյականաբար
գործածված որևէ բառով արտահայտված (կամ էլ իր կազմում գոյական ունեցող)
այլ անդամ, որը կարող է սխալմամբ ընկալվել իբրև հատկացյալ, ապա իմաստային
հնարավոր շփոթը կանխելու համար հատկացուցիչի վրա բույժ է դրվում՝
«Փավստոս մատենագիրը դժգոհ էր **Պապի՝** եկեղեցու դեմ գործած վարմունք-
ներից»:

Ծան. Հատկացուցիչի և հատկացյալի միջև եղած գոյականական դերանունը թեև
իմաստային շփոթ չի առաջացնում, սակայն այդ դեպքում ևս թույլատրվում է հատկացուցիչի
վրա բույժ դնել՝ իբրև զուգածնություն՝ «Տնօրենության (՝) մեզ ուղարկած նամակի պատաս-
խանը պատրաստ է»:

Երբ միևնույն լրացյալն ունենում է թե՛ որոշիչ(ներ), թե՛ հատկացուցիչ, ապա
հատկացուցիչը նախորդում է որոշիչ(ներ)ին՝ «**Օրենքի բուն** բովանդակությունը
այլ է»: Դերանունով արտահայտված հատկացուցիչը շրջոն շարահասությամբ
երբեմն կարող է հաջորդել որոշիչին՝ «Սողում են դանդաղ օրերը անձիր, Կորած
է մթնում **մուլոր իմ** ուղին...»:

Բացահայտիչը բացահայտյալի նկատմամբ սովորաբար լինում է հետադաս: Եթե
դրանց տեղերը փոխենք, ապա կփոխվեն նաև պաշտոնները՝ «Երևանը՝
Հայաստանի մայրաքաղաքը»: > «Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևանը»:

Բազմակի բացահայտյալը կարող է ունենալ մեկ բառով արտահայտված բացա-
հայտիչ, որը նրա ամփոփումն է որոշյալ կամ ժխտական դերանունով, և որի հետ
էլ թվով համաձայնում է ստորոգյալը: Օր.՝ «Գարունը, արևը, ծաղիկների բույրը,
ամպերի պայծառ գույները՝ **այդ ամենը** նրա սիրտը **վրդովեց** անհանգիստ հույ-
զերով»: Եվ հակառակը՝ մեկ բառով արտահայտված բացահայտյալը կարող է
ունենալ բազմակի անդամներով արտահայտված բացահայտիչ, որի հետ էլ թվով
համաձայնում է ստորոգյալը՝ «**Ոչ ոք՝** ոչ ծնողները, ոչ կինը, ոչ երեխաները, ոչ
ընկերները, նրան **չներեցին**»:

Բացահայտյալը և բացահայտիչը երբեմն կապակցվում են **այսինքն, այն է** և այս
կարգի՝ բացահայտման նշանակություն արտահայտող մեկնական բառերի միջո-
ցով: Ավելի է ճշգրտվում ու որոշակի դառնում բացահայտիչը՝ «Սեպտեմբերի 21–

ին, **այսինքն՝** Անկախության օրը, կնքվելու է նոր պայմանագիր»: «Մեր բոլոր ջանքերը պիտի ծառայեն մեկ և նույն նպատակին, **այն է՝** անաղարտ պահել մայրենին»:

Բացահայտիչը և բացահայտյալը կարող են ընդմիջված լինել ստորոգյալով և այլ անդամներով՝ «Դա միայն նա **կարող էր արած լինել՝** մեր նախկին աշխատակիցը»:

Շարադասության թույլատրելի և նպատակահարմար կարգից շեղումները կոչվում են **շարադասության խախտումներ**: Երբեմն շարադասության խախտումները լինում են ոչ այնքան նկատելի, թեև խաթարում են խոսքի տրամաբանվածությունը: Ուստի պետք է նկատի ունենալ հետևյալը:

1. Նախադասության բազմակի անդամների ընդհանուր լրացումը կամ լրացյալը պետք է լինի այնպիսի դիրքում, որ չվերագրվի միայն մեկին: Օր.՝ «Երևանի բնակչության կտրուկ ավելացումը պայմանավորված է ոչ թե **հիմնականում** բնական, այլ մեխանիկական աճով»: Այստեղ բազմակի անդամներն են **բնական (աճով)** և **մեխանիկական աճով** կապակցությունները, որոնց համար ընդհանուր լրացում է **հիմնականում** բառը, ուստի այն պետք է լինի ընդհանուր անդամները կապակցող **ոչ թե...** **այլ** զուգադրական շաղկապից առաջ, այսպես՝ «...պայմանավորված է **հիմնականում** ոչ թե բնական, այլ մեխանիկական աճով»:

2. Չուգադրական շաղկապի մասերը համադաս նախադասություններ կապակցելիս պետք է լինեն դրանց այն մասերի սկզբում, որոնք հակադրվում են միմյանց: Դրանց կարող են նախորդել նախադասությունների միայն ընդհանուր անդամները: Օր.՝ «Գործն ուղարկվելու է **ոչ թե** Վճռաբեկ դատարան, **այլ** քննվելու է վերաքննիչ դատարանում». այստեղ շաղկապի **ոչ թե** մասը պետք է լինի **ուղարկվելու** է ստորոգյալից առաջ, այսպես՝ «Գործը **ոչ թե** ուղարկվելու է Վճռաբեկ դատարան, **այլ** քննվելու է վերաքննիչ դատարանում»:

Չհիմնավորված շրջումը հաճախ ուղղակի պատճառ է դառնում լեզվական սխալ կառույցի՝ **սխալ շարադասության**: Օր.՝ «Երկրորդ կիսամյակի առաջին ամիսներին շարունակեց պահպանվել **առաջին կիսամյակում ձևավորված** դրամավարկային քաղաքականության իրականացման **դաշտը**»: Որոշիչ դերբայական դարձվածի (ընդգծված բառակապակցությունը) այս շարադասությամբ հասկացվում է՝ իբր առաջին կիսամյակում ձևավորվածը դրամավարկային քաղաքականությունն է, մինչդեռ խոսքաշարը ենթադրում է, որ խոսքը այդ քաղաքականության իրականացման՝ առաջին կիսամյակում ձևավորված դաշտի մասին է: Այդ նախադասության անդամների ճիշտ շարադասությունը հետևյալն է՝ «Երկրորդ կիսամյակի առաջին ամիսներին շարունակեց պահպանվել դրամավարկային քաղաքականության՝ **առաջին կիսամյակում ձևավորված դաշտը**»:

Սխալ շարադասությունը հաճախ հանգեցնում է արտառոց ու անհեթեթ մտքերի, ինչպես հետևյալ նախադասության մեջ. «Իրավասու մարմին առանց փաստաթղթերի **բերման ենթարկված** Սահմանադրական դատարանի անդամը պետք է անմիջապես ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո»: Այս շարադասությամբ՝ ընդգծված բառակապակցությունը լրացնում է ոչ թե **անդամը** բառին, ինչպես ենթադրվում է շարադրանքից, կամ ինչպես մտածել է հեղինակը, այլ **Սահմանադրական դատարանին**. ունենում ենք **բերման ենթարկված**

Սահմանադրական դատարան: Ճիշտը հետևյալն է՝ «Սահմանադրական դատարանի՝ իրավասու մարմին առանց փաստաթղթերի բերման ենթարկված անդամը պետք է անմիջապես ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո», կամ, որ ավելի սահուն է ու հասկանալի, հետևյալ տարբերակը. «Սահմանադրական դատարանի անդամը, որ առանց փաստաթղթերի բերման է ենթարկվում իրավասու մարմին, պետք է անմիջապես ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո»:

Միշտ էլ կարելի է ընտրել նախադասության անդամների այնպիսի դասավորություն, որը բոլորի կողմից կընկալվի որպես սովորական, ճիշտ, ռեականորոն չեզոք:

3.2. ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

3.2.1. Բովանդակության հարստություն և տեղեկատվականություն (95): **3.2.2. Հնչյունական (ձայնական) հարստություն (96):** **3.2.3. Բառային կազմի հարստություն:** Բառապաշար, բառի բազմիմաստություն, համանուններ, բառախաղ, բառային հոմանշություն, հականշություն, հարանունություն, բառակազմության ռեական հնարավորություններ. նորաբանություններ, հնաբանությունների տեղին գործածություն, բառային զուգակցում, դարձվածքներ (98): **3.2.4. Խոսքի քերականական հարստություն և բազմազանություն.** խոսքի մասերի ռեական կիրառություններ (քերականական զուգածներ, ժամանակածների փոփոխություն, դիմափոխություն ևն), շարահյուսական կառույցների բազմազանություն (շարահյուսական համանշություն՝ դրական և ժխտական կառույցներ, ուղղակի և անուղղակի խոսք, կրավորական և ներգործական կառույցներ ևն) (106): **3.2.5. Արտահայտչամիջոցներ (110):**

3.2.1. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Խոսքի հարստության կարևոր պայմաններից մեկը բովանդակության հարստությունն է կամ պարզապես **բովանդակայնությունը:** Սա նշանակում է, որ ասելիքը նախ և առաջ պետք է պարունակի **նոր և կարևոր միտք:** Նորը հեշտ չի ծնվում և մանավանդ հաճախ չի ծնվում: Հայտնի պատմություն կա. էյնշտեյնին հարցնում են, թե ինչու գրի չի առնում իր հանճարեղ մտքերը, մեծ գիտնականը պատասխանում է. «Դրանք այնքան շատ չեն, որ մոռանամ»:

Երբեմն հնչում են երկար-բարակ ելույթներ, բայց ոչ մի նոր միտք, ասելիք չեն պարունակում, կրկնվում են հայտնի ճշմարտություններ: Նույնիսկ եթե խոսքը գեղեցիկ է կառուցվում, միևնույնն է, ասելիքի, նոր գաղափարի բացակայությունը խոսքը դարձնում է անշուք ու անբովանդակ: Ահա այդպիսի խոսքի օրինակ, որտեղ խոսքային զանազան կառույցներով ձևակերպվում են միևնույն մտքի «տարբերակներ».

Փետրվարյան **հեղափոխությունը ծառայեց քեմալականների շահերին. պատերազմը ընթանում էր հայերի միջև, իսկ դա շատ ձեռնտու էր քեմալականներին:** Մարդկային կորուստների առումով նույնպես կարող ենք համաձայնել այն տեսակետին, որ **թուրքերի համար կարևորը հայերի կոտորածն էր, իսկ այս դեպքում հայն էր թափում հայի արյունը, եղբայրն էր սպանում եղբորը. դա միանգամայն համապատասխանում էր քեմալական թուրքերի ծրագրերին:** Հայ ժողովրդի զավակների կորստի առումով ապստամբությունը ջուր լցրեց **թուրքերի ջրաղացին:**

Կրկնվում են նույնիմաստ բառեր ու արտահայտություններ, կրկնվում է նաև միտքը. չկա գաղափարի զարգացում, ընթացք: Այսպիսի դեպքերում ճիշտ կլինի հետևել Դեյլ Քարնեգիի խորհրդին. «Կրկնե՛ք Ձեր գլխավոր մտքերը, սակայն մի կրկնե՛ք և երկրորդ անգամ մի գործածե՛ք միևնույն արտահայտությունները: Տարբերակե՛ք Ձեր նախադասությունները և Ձեր միտքը կրկնելիս հնարավորություն մի տվե՛ք ունենդրին նկատելու դա»:

Բովանդակությամբ հարուստ խոսքը հագեցած է լինում **տեղեկատվությամբ**: Լսարանի ուշադրությունը անմիջապես գրավում են նոր կարևոր լուրը, փաստի հաղորդումը, հասարակական հնչեղություն ունեցող իրադարձությունների արձանագրումը: Դա կարող է վերաբերել ամենատարբեր բնագավառների՝ պայմանավորված խոսքի բովանդակությամբ: Հիմնական պայմանն այն է, որ լուրը, տեղեկույթը լսարանին հետաքրքրեն, նորություն լինեն լսողի կամ ընթերցողի համար: «Ստեղծագործական ամեն մի խոսքի (գիտական և գեղարվեստական ստեղծագործություններ, ճառ, զեկուցում ևն) արժեքը որոշվում է նրանով, թե ինչ գյուտ կա նրա մեջ, ինչ բովանդակություն ունի, ինչ արժեքի ինֆորմացիա է պարունակում, ինչ ընդհանրացումներ ունի, որքանով են դրանք հասարակայնորեն կամ անհատապես անհրաժեշտ կամ օգտակար, նորությո՞ւն են, թե՞ ոչ, ...որքանով են ինքնատիպ»⁴⁴:

Նոր գաղափար, նոր մոտեցում առաջարկելը, ինչպես ասվեց, հեշտ չի տրվում: Դա տաղանդի, շնորհքի, բարձր ինտելեկտի արգասիք է: Բայց կարելի է նաև հայտնի իրողությունը, փաստը նոր տեսանկյունով կամ մի նոր հայացքով դիտարկել և կամ դրան ինքնատիպ ու յուրօրինակ մեկնաբանություն տալ, ինքնուրույն խոսք ասել: Արդեն հայտնի միտքը պետք է զարգացնել: Հակառակ դեպքում՝ նախընտրելի է լռելը: Ի վերջո, ստեղծագործական մտքի բոլոր կրողներն էլ սկսում են ազդեցություններից: Հաջողության է հասնում նա, ով կարողանում է հաղթահարել այդ ազդեցությունները, դառնալ ինքնատիպ ու ինքնուրույն: Ինքնուրույնությունը այս դեպքում վերաբերում է և՛ խոսքի բովանդակությանը, և՛ արտահայտվելու ձևին: Դանիել Վարուժանը այս առիթով շատ հստակ ձևակերպում ունի. «Ինքնուրույնությունը բանը առանձնահատուկ կերպով ասելու, գաղափարը նոր ձևով ցայտեցնելու մեջ է»:

Խոսքի հարստության հետ անհամատեղելի է **խոսքի միօրինակությունը**: Դրա պատճառը ոչ միայն բովանդակային տարրերի անհարկի կրկնություններն են, այլև արտահայտության ձևերի անտեղի գործածությունը և բառաշատությունը: Խոսքին միօրինակություն հաղորդող տարրերից են **ավելադրությունը** և **կրկնաբանությունը**:

3.2.2. ՀԼՁՅՈՒՆԱԿԱՆ (ՁԱՅՆԱԿԱՆ) ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ: Լեզուներն ինքնին ունեն հնչյունական համակարգերի օբյեկտիվորեն գոյություն ունեցող հատկանիշներ, որոնք պայմանավորում են խոսքի հնչյունական կառուցվածքի առանձնահատկությունները: Դրանք են տվյալ խոսքաշարում ծայնավոր և բաղաձայն

⁴⁴ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Եր., 1990, էջ 281:

հնչյունների կիրառական հաճախականությունը, ծայնավորների բազմազանության աստիճանը, տվյալ լեզվում վանկարար հնչյունների հնարավոր քանակը (վանկում բաղաձայն և ծայնավոր հնչյունների քանակը), հնչյունների կազմությունը, դրանց արտաբերության եղանակը, լեզվի շեշտը, առոգանությունը ևն: Տվյալ լեզվի բարեհնչությունը մեծ չափով պայմանավորված է ծայնավոր և բաղաձայն հնչյունների զուգորդության ներդաշնակությամբ և ծայնավորների հարստությամբ:

Բաղաձայնը բաղաձայնին և ծայնավորը ծայնավորին հանդիպադրվելիս արտասանական որոշակի դժվարություններ են առաջանում: Առավել ևս, երբ հանդիպադրվում են նույն կամ նման հնչյուններ: Վնասվում է խոսքի ծայնային ներդաշնակությունը: Օր.՝ դժվար է սահուն ու ներդաշնակ արտասանել հետևյալ բառերն ու բառակապակցությունները ընդգծված հնչյունների կից արտասանության պատճառով՝ «վարժ շարժումներ», «հանցակցի ցուցմունքը», «համոզիչ չէ», «փորձառու ու ուշադիր», «գինու ու օղու արտադրությունը»: Հատկապես բանավոր խոսքում պետք է խուսափել հնչյունների նման զուգորդություններից:

Ձայնավորների և բաղաձայնների զուգորդելիությամբ և առհասարակ ձայնական հարստության հատկանիշներով (հայերենում առկա է ձայնավորների ու բաղաձայնների 30/6 հարաբերակցություն՝ 5:1) և նվագայնությամբ, ըստ լեզվաբանության տվյալների (հարցով զբաղվել են երաժիշտ-լեզվաբան Գրիգոր Վանցյանը, Հրաչյա Աճառյանը և այլք), հայերենը ունի երաժշտականության բարձր տվյալներ, «եթե նվագայնությամբ զիջում է իտալերենին ու ճապոներենին, ապա առաջ է գերմանական ու սլավոնական լեզուներից...»⁴⁵:

Խոսքի ներդաշնակության ու բազմազանության պայման է նաև երկար բառերի (վեցից ավելի վանկերից կազմված) հաճախադեպ գործածությունից խուսափելը: Հասկանալի է՝ խոսքի առանձին տեսակներում (գիտական, պաշտոնական ևն) երկար բառերի գործածությունը անխուսափելի է: Դրանք ոչ միայն ճշգրտություն են հաղորդում խոսքին, քանի որ առավելապես մասնագիտական բառեր են, այլև որոշ հանդիսավորություն, պաշտոնականություն: Սակայն բոլոր այն դեպքերում, երբ դրանց գործածության անհրաժեշտությունը չկա, երբ խոսքի նշված հատկանիշները չեն վնասվում, պետք է խուսափել երկար բառեր գործածելուց. կարելի է համադրական կազմությունների փոխարեն գործածել վերլուծական համարժեքներ, երկար բառի փոխարեն՝ նրա հոմանշային կարճ տարբերակը ևն: Օր.՝ **վերլուծականություն-վերլուծական բնույթ (որակ), ամենատարատեսակ-տարատեսակ, համագործակցություն-գործակցություն:**

Կարճ բառերը խոսքին հաղորդում են շարժման, ընթացքի տպավորություն, խոսքը դառնում է դինամիկ, աշխույժ ու բազմազան: Ավելի դյուրին է լինում խոսակցին լսելն ու ընկալելը:

Խոսքի օբյեկտիվ հատկանիշներից է նաև տվյալ լեզվին բնորոշ **հնչերանգը՝** առոգանությունը, արագությունը, ելևէջումը ևն: Այս բնութագրումներով ևս հայոց լեզուն միջին որակներ ու հատկանիշներ ունի: Ասել է թե, հայերենն իր հնչյունական համակարգի օբյեկտիվ բնույթով բարեհունչ լեզու է:

⁴⁵ Տես Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 127:

Խոսքի հնչյունական կառուցման մեջ էական դեր են կատարում նաև այսպես կոչված սուբյեկտիվ գործոնները՝ հեղինակի անհատական հատկանիշները, հեղինակային նպատակադրումը, խոսքի գործառման ոլորտները, իրադրությունը, խոսքի նյութը կամ թեման ևն: Դա արտահայտվում է լեզվին բնորոշ հատկանիշների անհատական կիրառության մեջ: Խոսքի հնչյունական համակարգի կառուցման այսպես կոչված անհատական բաղադրիչներից են **բաղաձայնությո՞ւթը** և **առձայնությո՞ւթը**: Դրանք՝ որպես արտահայտչամիջոցներ, գործածվում են գերազանցապես բանաստեղծության մեջ:

3.2.3. ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ: ԲԱՌԱՊԱՇԱՐ: Հայտնի է, որ արդի հայերենի բառերի թիվը անցնում է 300 000-ից: Հիշենք նաև, որ առօրյա հաղորդակցման համար մարդուն բավարարում է որևէ լեզվի բառապաշարի ընդամենը 2%-ի իմացությունը: (Ժամանակակից մարդու գործածական կամ ակտիվ բառապաշարը մոտ 7–8 հազար բառ է, այլ հաշվարկներով՝ 10–12 հազար): Սակայն գեղեցիկ և հարուստ խոսք կառուցելու համար այդքանը բնականաբար բավարար չէ: Շատ բառերի իմացությունը և տեղին գործածությունը վկայում են լեզվական լուրջ կարողությունների և լեզվաիմացության մասին, հարստացնում են խոսքը, այն դարձնում բազմազան:

Բառապաշարի աղքատությունը անմիջապես աչքի է զարնում, քանի որ դա հանգեցնում է խոսքային թերությունների կամ անհարթությունների: Ինչպես, օրինակ՝ ներդրյալ միավորների անտեղի գործածություն (**ներողություն, որոշ տեսակետից, ուրեմն**), ավելորդ դերանունների, մակբայների գործածություն (**նրա պատասխանը, դա..., այս դեպքում, հազիվ թե**), հերթապահ բառերի ու արտահայտությունների անտեղի կրկնություն (**այսինքն, այսպես ասած, հասկանում եք, այո՛, հա՛, պարզ է չէ, գիտեք որ, ասեմ ձեզ, խոսքի, չգիտեմ, ճիշտը որ ասեմ**) ևն: Անհրաժեշտ չափով բառապաշար չունենալը ստիպում է խոսողին երկարաբանել, կրկնել արտահայտություններ, ավելորդ բացատրություններ տալ՝ միտքը տեղ հասցնելու համար:

Ծան.: Բառապաշարի հարստության հետ չպետք է շփոթել **բառաշատությունը**, որը անհամատեղելի է բովանդակության հարստության հետ: Վերջինը ավելի հաճախ հենց բառապաշարի աղքատության հետևանք է:

Լեզվի բառապաշարի հարստության առաջին ցուցանիշներից է բազմիմաստ բառերի առատությունը՝ **բազմիմաստությունը**: Այն կարող է հանդես գալ որպես տվյալ բառագործածության օբյեկտիվ հատկանիշ: Այսպես՝ **անպայման** բառն ունի մի քանի իմաստներ (ըստ տարբեր բառարանների՝ 2–4 իմաստ): Ժամանակակից հայերենում ավելի հաճախ գործածվում է **անշուշտ, առանց այլևայլության** նշանակությամբ՝ որպես եղանակավորող բառ՝ «Արդյունքների մասին **անպայման** կտեղեկացնենք»: Բառն ունի նաև փոքր-ինչ հնացած՝ ածականական իմաստ՝ **պայման՝ պահանջ չդնող, որևէ պայմանով չսահմանափակված**: Բառի այս իմաստով գործածությունը յուրահատուկ ու տպավորիչ է դարձնում խոսքը. «Դա իմ անձեռնմխելի և **անպայման** իրավունքն է», կամ՝ «Տվե՛ք ինձ երեխաներին, կտամ ձեզ **անպայման** ազատություն»: Այս բառիմաստը

ունի նաև տերմինային կիրառություն՝ **անպայման ռեֆլեքսներ** = կենդանի մարմնի բնածին ռեֆլեքսներ:

Բազմիմաստությունը ավելի հաճախ հանդես է գալիս որպես բառի փոխաբերական իմաստ(ներ)ով պայմանավորված սուբյեկտիվ գործառույթ: Դա տվյալ համատեքստում, տվյալ գործածության մեջ բառի նվաճած իմաստն է: Դրա արտահայտչական ուժը մեծ չափով բխում է իրական կյանքի հարաբերություններից: «Բազմիմաստությունը ինչ–որ աստիճանով արտացոլում է այն բարդ հարաբերությունները, որոնք գոյություն ունեն իրականության մեջ: Այսպես՝ եթե առարկաների միջև հայտնաբերվում են ներքին ընդհանրություններ, կամ նրանց հատուկ է ինչ–որ թաքնված ընդհանուր հատկանիշ, եթե նրանք ինչ–որ բանի վերաբերմամբ ունեն նույն կարգի հարաբերություններ, ապա մի առարկայի անվանումը կարող է դառնալ նաև մյուսինը»⁴⁶: Օր.՝ **ճկուն** բառը իր բուն՝ հիմնական իմաստով նշանակում է «Էշտ ճկվող, դյուրաթեք»՝ մետաղյա **ճկուն ձող**, **ճկուն մարմին**, **ճկուն փայտ**: **Ճկուն** բառի բուն իմաստի հետ ներքին ընդհանրություններ ունեն մարդու որոշակի տեսակի որոշակի որակներ՝ կյանքում հարմարվող, համակերպվող լինելը, նաև հմուտ դիվանագիտությամբ՝ հանգամանքներին համապատասխան փոփոխվելը, ուստի այդ որակները ազատ կարող են բնորոշվել նաև **ճկուն** բառով՝ **ճկուն մարդ**: Մեկ այլ նշանակությամբ, որը դարձյալ ածանցվում է բառի հիմնական իմաստից, **ճկուն**–ը ունի նաև *կողմնորոշվելու և իրադրություններն ըմբռնելու ընդունակ* իմաստը՝ **ճկուն միտք**:

Բազմիմաստության արտահայտչական արժեքը կարող է դրսևվորվել ոչ միայն առանձնաբար, այլև բառի իմաստային տարբերակների համատեղ կիրառությամբ: Այս դեպքում ավելի ընդգծվում ու ցայտուն է դառնում բազմիմաստ բառի ռճական արժեքը: Ռճական գործածության յուրահատուկ հնարք է համագործածական բառի փոխաբերական կիրառության այն եղանակը, երբ միևնույն բառը հանդես է գալիս և ուղիղ, և անուղղակի իմաստներով: Նման դեպքերում առաջին հայացքից դժվար է բառի փոխաբերական իմաստն ընկալել, բայց հենց դա էլ լարում է խոսակցի (ընթերցողի) ուշադրությունը: Օր.՝ **գնալ** բառի ուղիղ և փոխաբերական իմաստների համատեղ կիրառությամբ ուշագրավ երկխոսություն է ստեղծվել հետևյալ դրվագում. հերթական հանրահավաքին հաջորդած երթի ժամանակ մասնակիցներից մեկը, նկատի ունենալով հանրահավաքի կազմակերպիչների քաղաքական հերթական քայլը, հարցնում է մյուսին. «Հիմա էսպես հիր **ենք գնում**»: Մյուսը պատասխանում է. «Դուք՝ չգիտեմ, բայց ես **գնում եմ** մետրո...»: Կամ՝ **տրամադրություն** բառի երկու տարբեր իմաստների հիմքի վրա է ստեղծված հետևյալ զավեշտալի խոսքը. «Նա հայտնվել է կադրերի **տրամադրության** տակ, բայց կադրերն առայժմ **տրամադրություն** չունեն»: **Լույս** բառի ուղիղ և փոխաբերական իմաստների զուգահեռությամբ է ստեղծված մեծարենցյան հետևյալ պատկերը՝ «Ցնծագին գիշեր է **լույս** ու **լուսին**՝ Բայց **լույսն** իմ հոգվոյս քիչ քիչ կը մաշի...»: Կամ՝ «Մտքի օրոցքից երբ **աշխարհի** մտա, **Աշխարհում՝ աշխարհի** մոր սերը գտա» (<Շ), «Գթասիրտ եղեք, եղեք ողորմած, **Մարդու** նկատմամբ **մա՛րդ** եղեք, **մարդիկ**» (ՊՍ):

⁴⁶ Л. Введенская, Л. Павлова, Е. Катаева, Русский язык и культура речи, М., 2005, с. 117.

Խոսքի հարստության կարևոր աղբյուր են բառապաշարի ձևաիմաստային խմբերը՝ **հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ**: Դրանցից յուրաքանչյուրը, ըստ իր գործառական-ոճական հատկանիշների, որոշակի երանգ է հաղորդում խոսքին:

Բառակազմության ոճական հնարավորություններ. նորաբանություններ: Լեզվի հարստության ցուցանիշներից մեկը բառակազմական միջոցների հարստությունն է: Հայերենը աչքի է ընկնում կենսունակ ածանցների առատությամբ, բառաբարդումների լայն հնարավորություններով: Դրանք ապահովում են բառապաշարի ընդհանուր հարստությունը: Խոսքին որոշակի երանգներ են հաղորդում նույն հիմքով բաղադրված ածանցավոր բառերը, ինչպես՝ **հետևաբար/հետևապես, մարմարյա/մարմարե, զորավոր/զորեղ, ամբողջովին/ամբողջապես/ամբողջաբար, հաստատապես/հաստատորեն/հաստատաբար** ևն: Տարբերակներից համեմատաբար քիչ գործածականները՝ **հետևապես, ամբողջաբար, հաստատորեն, հայրորեն** ևն, նկատելի թարմություն են բերում տեքստ: Մյուս կողմից, սակայն, պետք է զգուշանալ դրանց հաճախակի գործածությունից, քանի որ այդ դեպքում խոսքը դառնում է արհեստական ու աններդաշնակ:

Խոսքին արտահայտչական նրբերանգներ հաղորդելու հատկանիշ ունեն **փոքրացուցիչ-փաղաքշական, նվաստական-արհամարհական** մասնիկներով կազմությունները՝ **մանկիկ, մանչուկ, աչիկ, աչուկ, անուշիկ, սիրունիկ, համովիկ, ծագուկ**, կամ՝ **գիտունիկ, անգետիկ, գրչակ, իմաստակ, խելոքիկ, խղճուկ, անհասիկ** ևն: Որոշ լեզուների (օր.՝ ռուսերենի) համեմատությամբ՝ հայերենը կարծես հարուստ չէ դրանցով (գործածում է բառային այլ միավորներ), սակայն դրանք նկատելի ակտիվություն ունեն առօրյա խոսքում. առաջինները հաղորդում են մտերմության երանգ, անմիջականություն, երկրորդները՝ հեզմանք, հանդիմանություն:

Նորաբանությունների գործածությունը առավելապես պայմանավորված է նյութով: Եթե խոսքը նոր երևույթի կամ նոր իրողության մասին է, ապա այն անհրաժեշտաբար ենթադրում է նորաբանությունների կիրառություն: Սակայն դա հիմնականում իրականացնում է լրատվական, հաղորդակցական գործառույթ՝ որոշակի թարմություն հաղորդելով խոսքին, օր.՝ «**Հանձնախումբը** (= հանձնաժողովը) հանգել է այնպիսի եզրակացությունների, որոնք նպաստավոր չեն Հայաստանի համար», «Մենք իրականացնում ենք **կարգավարական** (= դիսպետչերական) հսկողություն», «Սենյակում **օդորակիչ** պետք է տեղադրել»:

Նորաբանությունների գործածությունը մեծ չափով պայմանավորված է նաև հեղինակի անհատականությամբ: Խոսքը անհատական նորակազմությունների մասին է: Եթե դրանք հորինված են անհրաժեշտ լեզվազգացողությամբ ու ճաշակով, ապա զգալի արտահայտչականություն կարող են հաղորդել խոսքին. տպավորիչ են դարձնում, ուշադրություն են գրավում: Օր.՝ «Պարզ դարձավ, որ աշխատակարգով նախատեսված չէր դեսպանի **ճեպայցը**», «Քննարկման է ներկայացված պետական **կրթակարգի** նոր նախագիծը», «Ձեր **անտրամադրությունը** ճշում է բոլորիս»:

Իրենց յուրօրինակությամբ խոսքին անսովոր թարմություն են հաղորդում հատկապես հաջող «ընտրված» **դիպվածային բառերը**: Օր.՝ «Ազգային ժողովի պատգամավորների **չընտրությունները** մեկ անգամ ևս ապացուցեցին ընտրական օրենսգիրքը վերանայելու անհրաժեշտությունը», «Ադրբեջանի վարչապետը **ժպտալույով** դեմքով մոտեցավ ողջունելու ՌԴ նախագահին»:

Նորաբանությունները (հատկապես դիպվածային նորակազմությունները) զանազան վերաբերմունք արտահայտելու միջոց են, խոսքի առարկայի վերաբերյալ կարող են դրսևորել հեգնանք, արհամարհանք, ծաղր: Օր.՝ «Ամբաստանյալներից մեկը հացադուլ է հայտարարել, իսկ մյուսը՝ **խոսադուլ**», «Աժ փոխխոսնակի հարցումին ի պատասխան՝ խմբակցության ղեկավարը տեղից նույն հանգով **ցածրաձայնեց**....»:

Գեղարվեստական խոսքում նոր բառերը, եթե հաջող են ստեղծված, կարող են հաղորդել նաև զգալի բանաստեղծականություն, ինչպես՝ «Մարդը մարմնով է անցողիկ, **մնացողիկ է հոգին**» (ՀՀ), «Պիտի դառնորեն դարձի գան դարձյալ, հորինեն հայերեն, Ապրեն **հայօրեն**» (ՊՍ):

Հնաբանություններ: Հիշենք, որ հնաբանությունները (պատմաբառեր և հնաբառեր) հնից փոխանցված և ընդհանուր գործածությունից դուրս մնացած բառերն են: Սխալ է կարծել, թե դրանք ընդհանրապես չգործածվող բառեր են: Ընդհակառակը, պատկանելով բառապաշարի ոչ գործուն բառաշերտին՝ հնաբանությունները կիրառվելիս դրսևորում են ուշագրավ ոճական-արտահայտչական նրբերանգներ և խոսքի կառուցման մեջ ունեն ընդգծված ոճական երանգ: Ի տարբերություն համագործածական բառերի՝ դրսևորման ոլորտով և գործածության հաճախականությամբ պարզապես ունեն սահմանափակ կիրառություն: Մեծ չափով պայմանավորում են խոսքի հարստությունը և արտահայտչականությունը: Դա առավելապես հատուկ է **հնաբառերին** (պատմաբառերը հիմնականում կատարում են անվանողական դեր):

ա) Ստեղծում են պատմական միջավայր: Այս կիրառությունը հատուկ է պատմավեպերին, առհասարակ բոլոր այն նյութերին, որոնց թեման այս կամ այն կերպ առնչվում է պատմությանը կամ կապ ունի եկեղեցու՝ հոգևոր աշխարհի հետ: «Պատմության քառուղիներով» պոեմում, օրինակ, խոսելով 18-րդ դարի գործիչներ Իսրայել Օրու և Մինաս Վարդապետի քաղաքական կողմնորոշումների մասին՝ Չարենցը գործածում է գրաբարին բնորոշ լեզվատարրեր (բառեր, բառաձևեր), լրացում-լրացյալների՝ գրաբարին հատուկ շարադասություն. հնացած լեզվատարրերով ստեղծվում է դարաշրջանին բնորոշ միջավայր. «Իսկ **նոքա՞**, որ եկել են իշխաններից հետո, - Վերջին **ասպետները** մեր **խեղճության խորին**...»: Հեռուստահաղորդումներից մեկում Ջատիկի տոնի առիթով տրված ռեպորտաժի տեքստը հազեցած էր հնաբանություններով՝ **երեկո**-ի փոխարեն՝ **ճրագալույց, ձեռքով** բառաձևի փոխարեն՝ **ձեռամբ, լույսի** փոխարեն՝ **լուսո**: Խոսքի ընթացքը ուղեկցվում էր նաև Աստվածաշնչից մեջբերումներով: Դա ակնհայտորեն որոշակի մթնոլորտ ու տրամադրություն ստեղծեց: Ավելին՝ երբ հաղորդման հաջորդ հատվածում խոսվում էր Արցախի ազատամարտի զոհերի և եռաբլուրում հանգչող ազատամարտիկների մասին, շատ տեղին էր գրաբարյան **աստ հանգչի**-ն: Այսպիսով՝ հնաբանությունների օգնությամբ ստեղծվեց անհրաժեշտ պատմական-

հոգևոր մթնոլորտ, և լսարանի վրա խոսքի ներգործությունը մեծ չափով ապահովվեց հենց դրանով:

բ) Տիպականացնում են կերպարի խոսքը: Ընդգծվում է գրական հերոսի սոցիալական և պատմական նկարագիրը: Ոճական այդ ձևը դարձյալ բնորոշ է պատմական բնույթի գործերին, առավելապես՝ գեղարվեստական գրականությանը: Հավաստի երևալու համար պատմական հերոսը պետք է ներկայանա ժամանակի լեզվամտածողությամբ և, իհարկե, համապատասխան լեզվով: Ահա թե ինչպես է Ստ. Զորյանը «Պապ թագավոր» պատմավեպում ոճավորում իր հերոսներից մեկի խոսքը. «Քո ցանկությունը, **արքա՛**, զորացնել **զորությունը մեր, սիրելի է ինձ: Բոլորեքյան**, կարծում եմ, պիտի հավանեն և սիրեն **առաջարկը քո** և կատարեն սիրահոժար: Ես իմ կողմից հայտնում եմ **ահավասիկ՝** իմ բոլոր մարզերը քեզ, **արքա՛**, **երիվարները** քեզ... Եթե չլիներ **բանակը հայոց արքունի**, ես այսօր կլինեի անտուն և **անօգ** մուրացիկ...»:

գ) Խոսքին հաղորդում են հանդիսավորություն, վեհություն, հնավանդ ոգի: Այս դերով գործածվում են հատկապես հնաբառերը (նաև քերականական հնաբանությունները). հանդիպում են պաշտոնական խոսքում. գրագրության առանձին տեսակներում՝ դիվանագիտական ուղերձ, հրաման, արձանագրություն, հայտագիր ևն, դրանք անփոխարինելի լեզվական միջոցներ են և ծառայում են խոսքը առավել ազդեցիկ ու պաշտոնական հնչեցնելուն, ինչպես՝ «**Ի լրումն** հրամանագրի 5-րդ կետի», «**Սույն** պայմանագրով նախատեսվում է...», «**<< Ղես-պանությունը վերստին իր հարգանաց հավաստիքն է հայտնում Եգիպտոսի կառավարությանը՝ հայ զբոսաշրջիկների անվտանգությունն ապահովելու համար**», «**Ներքաղաքական խնդիրներ առաջադրելիս զգոն լինենք, քանզի դա է այսօրվա հրամայականը**»:

դ) Զորացնում են տեքստի գեղարվեստականությունը: Հատուկ են քնարական ոտանավորներին և առհասարակ չափածո գործերին. «Գիշեր-ցերեկ նույն երգն է իմ **ունկերում**, Զայնի տեղակ ծուփ է ելնում այդ երգից...» (ՍԿ), «Օ՛, Սուլամիթա... Դու չես կամենում, որ ամբողջ գիշեր Քնարը հնչի, Որ իմ մատները **ողջ գիշերն ի լույս** Սաղմոսներ երգեն...» (ՊՍ):

ե) Որոշակի վերաբերմունքի դրսևորման միջոց են: Ստեղծում են հեզնանք, արհամարհանք, ծաղր. «Պետական **այրերի** անհեռատես քաղաքականությունը լուրջ վտանգ կարող էր ստեղծել երկրի ապագայի համար», «Հարցի քննարկումը այս էլ որերորդ անգամ կատարում է **դարձ ի շրջանս յուր**»: Արտահայտում են նաև դրական վերաբերմունք («Եվ **այդ մի՛** Մաշտոց անուն») կամ պարզապես տպավորիչ են դարձնում ասելիքը. «...Եվ ամենապատասխանատու պահին «**լիդեր**» կոչվող այդ գաղափարականը կարող է մի կողմ քաշվել ու գոչել Պիղատոսի **հանգույն**. «Ես ձեռքերս լվանում եմ այս անմեղի արյունից»»:

Բառային զուգակցում (համապատասխանություն): Գիտեք, որ բառերի իմաստային, բառապաշարային և քերականական համատեղելիությունը խոսքը ճիշտ կառուցելու նախապայման է: Այդ համապատասխանության մտածված խախտումները խոսքին կարող են հաղորդել ակնհայտ արտահայտչականություն, դինամիզմ. խոսքը դառնում է անսովոր և դրանով իսկ՝ առավել ազդեցիկ: Օր.

դատապարտել բառը տերմինային որոշակի համակարգում ենթադրում է պատիժ սահմանել, ինչ–որ վատ բանի համար տույժի ենթարկել, բայց խոսքային անհամասեռ միջավայրում դիպուկ գործածությամբ ստեղծում է սուր խոսք. «Ես նորապսակներին **դատապարտում եմ** հավերժական երջանկության», կամ՝ «Մենք մանկությունից ենք ճանաչում իրար և **դատապարտված ենք** հավատարմորեն ու ընդմիշտ ընկերություն անելու»:

Ամուսնանալ և **շարունակել** բառերը անհամատեղելի միավորներ են, սակայն հմուտ զուգադրությամբ դառնում են հետաքրքիր պատկերի հիմք, ինչպես՝ «Շարունակեք ամուսնանալ» (կինոնկարի վերնագիր): Կամ՝ «**շարունակել ապրել**»–ը սովորական արտահայտություն է. այդ բառերի զուգակցումը բնական է ու դրանով, սակայն, ավելի քիչ ազդեցիկ, քան, օրինակ, «**շարունակել մեռնել**»–ը. հետևյալ նախադասության մեջ այն ստեղծում է հեզնանք, անվստահություն, նաև սուր ծաղր. «Նրա քաղաքական կարիերան ավարտված է. նա **շարունակում է անվերադարձ մեռնել**»:

խոսքին առանձնահատուկ գրավչություն և բազմազանություն են հաղորդում **դարձվածքները**: Տարբեր սերում ունեցող դարձվածքները խոսքը ոճավորում են տարբեր առումներով:

ա) Ժողովրդական ծագում ունեցող դարձվածքների գերակշռող մասը խոսքին հաղորդում է ժողովրդային երանգ. գործածվում են առօրյա բանավոր խոսքում, հաճախ նաև՝ գեղարվեստական գրականության մեջ և ՀԼՄ–ներում՝ ոճավորման նպատակով. «Իմ ցավն էն է, որ էդքան մարդու ներկայությամբ **շուն–շանոր–դություն արի...** Բաժակ առա իմ ձեռքն, ելա ոտքի, իմ մտածածին հակառակ խոսեցի: Ամոթ... ցավն էն է, որ ես իմ **հոգին ծախեցի**: Ամոթ...» (ՄԳ), «Դուք ժամանակ եք խնդրում ոչ թե ըստ ամենայնի քննարկման համար, այլ ուզում եք՝ ուղղակի **զցեք–բռնեք**, թե ինչ օգուտ կքաղեք դրանից»:

բ) Գրական–գրքային ծագում ունեցողները խոսքին տալիս են հանդիսավորություն, որոշ վերամբարձություն: Սովորաբար գործածվում են գրավոր խոսքում, դրա պաշտոնական և գիտական տարբերակներում: Օր.՝ «Տեղին էր այն դիտարկումը, որ հակամարտող կողմերի հանդիպումը հիմնախնդրի լուծման համար այս անգամ էլ **փրկության դուռ** չէր բացելու», «Նույնիսկ դիվանագիտական այսպիսի զարգացումների դեպքում առայժմ զգուշություն է պետք. չարժե **կամուրջներն այրել** հիմնավորապես», «Ներքաղաքական խնդիրները լուծելու միջոցներից է նաև **կլոր սեղանի** տարբերակը»:

գ) Կատարում են առավելապես գնահատողական դեր: Առհասարակ գնահատողականությունը դարձվածքների մեծ մասի իմաստային կառուցվածքի հիմնական հատկանիշն է: Փոխաբերական իմաստի շնորհիվ գնահատողական երանգը ավելի է ընդգծվում, շեշտվում: Օր.՝ «Բաքուն խիստ քննադատաբար է արտահայտվել Բաքու–Թբիլիսի–Ախալքալաք–Կարս երկաթգծի կառուցման մասին՝ նշելով, որ վրացական իշխանությունները զբաղված են **օդային ամրոցներ կառուցելով**», «Ներքաղաքական **ֆորսմաժորային իրավիճակը** որքանով է ձեռնառու ներկա պահին», «Ընթացիկ տարվա բյուջեն **դանայան տակառի** վերջին «հանգրվանն» է», «Թեև **հին գայլ** է, բայց երբեմն նա էլ է թակարդն ընկնում»:

դ) Գործածվում են **խոսքը մեղմացնելու համար**: Իրավիճակներ կան, երբ ուղիղ խոսքը կարող է հնչել ոչ տեղին, անբարեկիրթ: Դարձվածքային փոխաբերական առումը մեղմում է խոսքի այդ երանգը, ընդ որում՝ ավելի հարստացնելով խոսքը: Օր.՝ «Իհարկե, մեծ է Ձեր ներդրումն այս գործում, բայց նաև ժամանակն է, որ **անցնեք վաստակած հանգստի**» (⇒թոշակի գնաք), «Նա իր մահկանացուն կնքեց տարիներ առաջ Արցախի հերոսամարտում» (⇒մահացավ), «Հայտնվեց **Ադամի զգեստով**» (մերկ):

ե) Գործածվում են **որպես պատրաստի համեմատություններ**: Առահասարակ դարձվածքային միավորների մեծ մասը կառուցված է երկույթների փոխաբերական համեմատության հիմքով: Այդ համեմատություն–համադրության մեջ առավել տեսանելի են դառնում պատկերներն ու երկույթները. **քարից կակուղ, կարմիր թելի պես անցնել, աչքի լույսի պես պահել, շան օրը զցել** ևն:

Դարձվածքները միջոց են խոսքի արտահայտչականության նաև այլ դրսևորումների համար. խոսքը դարձնում են ավելի սեղմ, ստեղծում են հակադրույթ, կարող են դառնալ օբսիմորոնի (նրբաբանության) կառուցման բաղադրիչ տարր ևն: (Դրանք քննարկվում են համապատասխան բաժիններում):

Անսովոր թարմություն են հաղորդում խոսքին և զանազան վերաբերմունքների արտահայտման միջոց են դառնում **դարձվածքների հեղինակային փոփոխությունները**.

ա) Դարձվածքի ուղիղ իմաստով գործածություն, որը ստեղծում է հումոր կամ սրամիտ խոսք. «Իզուր ես այդքան ջանասիրաբար **ծեղքերդ լվանում**. առանց քեզ մեր գործը գլուխ չի գա»: Ուղիղ իմաստով է գործածվում բաղադրիչներից մեկը, այսպես՝ ներկայացվում է **կենդանի կատարում**. մրցատյանի (ժյուրիի) անդամներից մեկը, նկատի ունենալով երգի խիստ անհաջող կատարումը, դարձվածքային բաղադրիչը գործածում է իր ուղղակի իմաստով՝ ստեղծելով հեգնական սրամիտ խոսք. «**Կենդանին** կա (ակնարկում է երգողին — Յու. Ա.), կատարումը չկա»:

բ) Դարձվածքային բաղադրիչ(ներ)ի փոփոխություն՝ «եկա, տեսա, **մնացի**» (հայրենիք վերադարձած սիրիահայ գործարարի խոսքից է), «**աղվեսի** բաժին դառնալ», «նահանջ **երգով**», «իրենց **պապերից** ավելի կաթոլիկ լինել», «Բոլոր ճանապարհները տանում են **Բաղրամյան 26**»:

գ) Դարձվածքի բաղադրիչների միջարկումը խոսքի այլ տարրերով. հավելվում են բառեր կամ բառակապակցություններ. ընդլայնվում է դարձվածքի նշանակությունը. «Աշխարհի բկին **չարով** մի չոքի», «Հին օրերի **տխուր** երգը երգել», «Թեմիսի **անխոնջ** սպասավոր», «Նա սիրում է կրակի հետ **ժամանակ առ ժամանակ** խաղալ», «Նրա երգը **վաղուց** երգված է», «**Երկու** ոտքը կախ զցել», «Մեր քարը **շատ** ծանր է», «Խաչն իմն է, **բայց ես անգոր եմ**», «Դուքիկոն ու **Ամազոն** անցնել»:

դ) Դարձվածքային միավորի ոչ անմիջական՝ կողմնակի գործածություն. նրա բաղադրիչ տարրերը նույն համատեքստում կիրառվում են առանձնաբար՝ հուշելով այդ դարձվածքի գոյության մասին. «Ցավ զգացի, որ պատերազմի

Ժամանակ ավանդ ունեցող մարդը կարող է այդքան տարանջատվել ժողովրդից ու **կառավարվել** իշխանության **դուդուկով**» (մեկի դուդուկի տակ պարել), «Նույնիսկ **Պյուռոսը** շատ կնախանձեր այդ տեսակ **հաղթանակի**» (պյուռոսյան հաղթանակ), «Թույլ մի տվեք Ձեր ականջներին **լսել** այն, ինչ չեն **տեսել** Ձեր աչքերը» (լավ է մեկ անգամ տեսնել, քան տասն անգամ լսել), «Ես նրա **գործությունը գիտեմ**. **խաչն իմն է**» (խաչն իմն է, գործությունը ես գիտեմ), «**ընդդիմության ընդդիմությունը** իշխանության **բարեկամն է**» (իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է), «Նրա իմացած բոլոր **ուժ երգերը** իր **մասին են**» (արջը **յոթ երգ** գիտի, **յոթն էլ մեղրի մասին են**):

ե) Ընդհանրական դարձվածքի համաբանությամբ կամ նմանողությամբ դարձվածքային նոր միավորի ստեղծում: Ըստ որում, պարտադիր չէ ուղղակի պատճենումը կամ մոդելավորումը: Կարող են վերցվել բաղադրիչ տարրերը: Այս դեպքում հաճախ կատարվում է **բաղարկություն** (կոնտամինացիա). միախառնվում են տարրեր դարձվածքների բաղադրիչները, որոնք այս կամ այն կերպ առնչակից են. «Քեզ չեն դատի. դու հաղթող ես» ⇐ «Մի՛դատիր, որ չդատվես» + «Հաղթողներին չեն դատում»:

զ) Դարձվածքի երկակի իմաստների ակտիվացում. դարձվածքի այնպիսի գործածություն, որի դեպքում զուգահեռ ընկալելի դառնան ուղիղ և փոխաբերական իմաստները: Օր.՝ «**Փոս փորելիս** զգո՛ւյշ եղիր. հնարավոր է՝ պատահմամբ դո՛ւ ընկնես այնտեղ», «Եթե Ձեզ ասեն, որ Ձեր **գնացքը արդեն գնացել է**, հիշե՛ք, որ տեղ հասնելու համար դեռ կան ինքնաթիռ ու զբոսանավ»:

է) Դարձվածքի՝ անորոշ ձևով բայական բաղադրիչի գործածությունը խոնարհված ձևով՝ «Մեր ազգային բաղաքականության ծանրության կենտրոնը **սխալ տեղ դրին**»: «Անոնք իրենց **մանելիք բուրդը ունին**»:

ը) Բարբառային կամ խոսակցական բաղադրիչի փոխարինումը գրական–գրքային որևէ համարժեքով, կամ հակառակը՝ գրական–գրքայինը՝ բարբառայինով կամ խոսակցականով՝ աչքի **ընկնել** – աչքի **զարնել**, **մեռած** հոգիներ – **ննջեցյալ** հոգիներ, **մարմանդ** գետ – **հանդարտ** գետ: Ներդարձվածքային այս կարգի փոփոխությունները հաճախ ամրակայում են լեզվում՝ որպես բառարանային միավորներ՝ տարբերակային դարձվածքներ՝ աչքի **զարկել** / **աչքի զարնել**, **լեղին պատռել** / **լեղին ջուր դառնալ**, **ճամփեն թեքել** / **ճամփեն ծռել** ևն:

թ) Բաղադրիչների շարադասության փոփոխություն՝ «**Ձեր հաղթանակը պյուռոսյան էր**» (⇐պյուռոսյան հաղթանակ):

ժ) Փոփոխություն, այսպես կոչված, դարձվածքային հավելումներով. իմաստային նոր նրբերանգներ են ավելանում ավանդական իմաստին՝ «Հայրենիքը սկսվում է սահմաններից, ...հայրենիքը նաև **կորսվում է** սահմաններից»: «Հաղթողներին չեն դատում... **գուցե, առայժմ**»: «**Ձուկ են որսում իրենց պղտորած ջրում**»:

Դարձվածքները կայուն կապակցություններ են, իսկ դա նշանակում է, որ նրա բաղադրիչները միմյանց հետ սերտ կապի և միասնության մեջ են: Դարձվածքային ամեն մի փոփոխություն պետք է լինի ճիշտ և նպատակային: Ներդարձվածքային փոփոխություն կատարելիս հեղինակից պահանջվում են ձիրք, նուրբ լեզվա-

զգացողություն, ճաշակ: Դարձվածքային անհաջող փոփոխությունները խստորեն թուլացնում են խոսքի ուժը: Այդպիսիք են, օրինակ՝ • **Ավելորդ բառի ներմուծումը**. «Հայտնվել բանտի ճաղերի հետևում». **հայտնվել ճաղերի հետևում** արտահայտությունը արդեն իսկ նշանակում է հայտնվել բանտում, հետևաբար միանգամայն ավելորդ է **բանտ բառի** հավելումը: • **Դարձվածքով անհարկի անձնավորումը**. «Փաստաթուղթը ոտքից գլուխ տոգորված է կեղծավորությամբ»: • **Դարձվածքների բառային կազմի աղավաղումը**. «...ժողովուրդը այրվում է գիշերային ցրտից և շարունակ տեղացող **անձրևից**». այրվել թերևս կարելի է նաև ցրտից (սովորական է՝ **այրվել շոգից**), բայց ակնհայտորեն տեղին չէ **անձրևից այրվել**-ը, կամ՝ «Բնակիչները փորձել են նրա նկատմամբ **Լինչի դատարան կիրառել**» (փոխ.՝ **Լինչի դատաստան տեսնել**՝ պատժել, հաշվեհարդար լինել), «Կրոնական այդ ուսմունքի հետևորդները մոլորության մեջ են դնում» (←գցում, կամ՝ մոլորեցնում են) իրենց շրջապատի մարդկանց»: • **Քերականական անհարկի փոփոխությունները՝ հոգնակի թվի փոխարինումը եզակիով կամ հակառակը՝ «Ձեռքը» (←ձեռքերը) լվաց և մի կողմ քաշվեց**»: • **Կապերի անտեղի փոփոխությունը**. «Եզան **կողքը** (←տակ) հորթ եք փնտրում»:

3.2.4. ԽՈՍՔԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ:

Խոսքի հարստություն ասելով՝ հասկանում ենք նաև կիրառվող քերականական ձևերի և կառուցվածքների բազմազանություն: Խոսքի գործառական տարբերակը հաճախ պարտադրում է որոշակի ձևերի գործածություն: Այս դեպքում ընտրության ու բազմազանության մասին խոսք լինել չի կարող: Օր.՝ պաշտոնական լեզուն ունի հստակ, որոշարկված վերաբերմունք. նախապատվություն է տալիս, իսկ գրագրության առանձին ձևերում (հրաման, ուղերձ, արձանագրություն, հրահանգ) բացառապես դիմում է գրական–գրքային տարբերակներին, ինչպես՝ **անձանց** (անձերի), **պարոնայք** (պարոններ), **գործողությամբ** (գործողությունով), **օրերս** (այս օրերին), **վերջինս** (այս վերջինը), **դրեցին** (դրին), **պարզագույն** (պարզից էլ պարզ), **արժե** (արժի) ևն:

Ձևերի բազմազանությունը, իհարկե, չպետք է շփոթել նաև քերականական զուգահեռ ձևերի ոչ նպատակային և խառը գործածության հետ: Օր.՝ միևնույն տեքստում գրական և խոսակցական զուգահեռ ձևերի (**մեզնից** // **մեզանից**, **օրից** // **օրվանից**, **գրե՞ք** // **գրեցե՞ք**, **իմ համար** // **ինձ համար**, ևն) չպատճառաբանված գործածությունը ակնհայտորեն խանգարելու է ընկալմանը: Խոսքը տարբերակային այն ձևերի կամ կառույցների նախընտրության մասին է, որոնք տվյալ շարադրանքում հնարավոր են, ոճականորեն համարժեք միավորներ են և առանձնապես աչքի չեն ընկնում խոսակցական ու գրական–գրքային հակադիր երանգավորումներով: Դրանց՝ ըստ անհրաժեշտության փոխնիփոխ գործածությունը նպաստում է խոսքի բազմազան և հարուստ լինելուն:

Ձևաբանական մակարդակում բնականաբար ձևերի բազմազանությունը և դրանց ընտրության հնարավորությունը մեծ են այն խոսքի մասերի պարագայում, որոնք հարուստ են քերականական հատկանիշներով:

Գոյականի հոլովման համակարգում, օրինակ, սեռական–տրական կամ գործիական հոլովածների (**կազմման, անկման, հանձնման, կոչման**) համատեղ հաճախակի գործածությունը, առանձին դեպքերում կուտակումը ստեղծում են անբարեհունչ խոսք, խիստ արհեստական կառույցներ, շարադրանքը դարձնում են միօրինակ ու անհրապույր: Օր.՝ «Համակարգի նպատակն է ծառայողական փաստաթղթերի **կազմման, ձևակերպման, պատրաստման**, շրջանառության **հաշվառման, կատարման**, հսկողության **իրականացման** և գործերում դրանց **խմբավորման** ճշգրիտ աշխատանքների ընթացքի ապահովումը»: Սա հատկապես գրավոր խոսքում տարածված լուրջ թերություն է: Դրանից խուսափելու մի քանի ճանապարհ կա: **Առաջին՝** գրքային ձևերը կարելի է փոխարինել խոսակցական զուգաձևերով, եթե տեքստի բովանդակությունը և բնույթը այդ հնարավորությունը տալիս են՝ **շարժման–շարժումի, կոչման–կոչումի** ևն: Երկրորդ՝ տեքստի ընձեռած հնարավորության շրջանակներում կարելի է փոխել նախադասության կառուցվածքը՝ միաժամանակ բայանուն գոյականների թեք ձևերը դարձնելով ուղիղ՝ **հանման–հանումը, ստուգման–ստուգումը** ևն: Եվ **երրորդ**, որ առավել կանոնական և հանձնարարելի տարբերակ է. բայանուն գոյականները ուղիղ և թեք ձևերում փոխարինել անորոշ դերբայի համապատասխան ձևերով՝ դերբայական կառույցներով՝ հսկողության **իրականացման–հսկողություն** **իրականացնելու**: Վերը բերված նախադասությունը կունենա հետևյալ պատկերը. «Համակարգը նպատակ ունի **ձևավորելու** գործավարության միասնական ընթացքը, որը կապահովի ծառայողական փաստաթղթերի **կազմումը, ձևակերպումը, շրջանառությունն ու հաշվառումը**, հսկողության **իրականացումը** և գործերում դրանց **խմբավորումը**»: Դժվար չէ նկատել, որ երկրորդ դեպքում խոսքն ավելի բնական է, ասելիքն ավելի պարզ է ու հասկանալի, և չկա սեռական–տրականի ձևերի անհարկի կուտակում:

Այլ օրինակներ՝ «պետք է աջակցել այդ **հիմնահարցի լուծմանը**» ⇔ «պետք է աջակցել այդ **հիմնահարցը լուծելուն**», «ծրարներն առանց **բացման** և **ստուգման** հանձնվում են» ⇔ «ծրարներն առանց **բացելու** և **ստուգելու** հանձնում են», «**փաստաթղթերի պակասի** կամ **վնասման** դեպքում» ⇔ «**փաստաթղթերը պակաս լինելու** կամ **վնասվելու** դեպքում»:

Միօրինակությունը չպետք է շփոթել այս կամ այն ոճին բնորոշ կաղապարային ձևերի կրկնության, նույն բառերի և արտահայտությունների հաճախակի գործածությունների հետ, որոնց մասին խոսվել է:

Ժամանակաձևերի փոփոխություն: Նույն ժամանակաձևով երկար շարադրանքը ստեղծում է միօրինակություն, դանդաղում է նաև խոսքի տեմպը: Ժամանակաձևերի փոփոխությունը ակտիվացնում է խոսքը, ստեղծում է աշխուժություն, շեշտվում է շարժման, ընթացքի տպավորությունը: Այդ երևույթը, որը ընդունված է անվանել ժամանակաձևերի համաձայնություն, իրականացվում է ըստ եղանակի և ժամանակի, եթե խոսքի առարկան չի փոխվում: Օր.՝ ստորև բերված շարադրանքի հիմքում անցյալ ժամանակն է, այսինքն՝ համաձայնությունը ժամանակով է. «ՄԱԿ–ի ստեղծման գաղափարը **ծագել** է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ (1939–1945 թթ.): Այդ կազմակերպությունը պաշտոնապես **ստեղծվել** է 1945 թ. հոկտեմբերի 24–ին: «ՄԱԿ» անվանումն **առաջարկել** է ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը: Անվանումն առաջին անգամ պաշտոնապես **օգտագործվել**

է 1942 թ., երբ 26 երկրի ներկայացուցիչներ ստորագրեցին ՄԱԿ-ի հռչակագիրը: 1946 թ. Գլխավոր ասամբլեան Լոնդոնում առաջին հավաքի ժամանակ **որոշել է** ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակը տեղակայել Միացյալ Նահանգներում»:

Երբ փոխվում է խոսքի առարկան, կարող ենք փոխել եղանակը կամ ժամանակը. դա խոսքին հաղորդում է որոշ ակտիվություն, հուզականություն: Օր.՝ «Ամեն օր ԱՄՆ-ում **տպվում է** 635 մլն դոլար՝ չհաշված կեղծվածները: Դոլարի գույնը **ստեղծել է** ամերիկահայ Քրիստափոր Տեր-Սերոբյանը 1854 թ.: Նրան՝ որպես երիտասարդ, խելացի քիմիկոսի, Ստամբուլից **հրավիրում են** ԱՄՆ՝ սովորելու: Ուսման տարիներին երիտասարդին **հաջողվում է** ստեղծել մի գույն, որն այլևս հնարավոր **չէր կեղծել**: Իր կարևոր գյուտի դիմաց նա **ստանում է** ընդամենը 6000 դոլար»: «Եղանակաձևերի և ժամանակաձևերի միախառնումը կամ բարեխառնումը խոսքն ազատում է միակերպության ծանծրալիությունից և նրան տալիս բազմազանության հաճելիություն» (Պ. Պողոսյան):

Ժամանակաձևերը խոսքաշարում կարող են արտահայտել նաև այլ իմաստներ՝ երբեմն փոխարինելով միմյանց ոճական յուրահատուկ նրբերանգներով: Օր.՝ սահմանական եղանակի ներկա ժամանակը կարող է նշանակել՝ 1. անցյալում կատարված-ավարտված գործողություն՝ **պատմական ներկա** («Այնուհետև Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը **սկսում են** «Աստվածաշնչի» հայերեն թարգմանությունը»), 2. մոտ ապագայում կատարվելիք գործողություն. խոսքին հաղորդում է հավաստիություն («Երկու օրից **մեկնում են** գործուղման»), 3. ընդհանուր կարծիքներ, հայտնի ճշմարիտ խոսքեր («Դեմքը հոգու հայելին է»), 4. ընդհանրապես կատարվող գործողություն՝ **ընդհանրական ներկա** («Գիտնականներն **ասում են**, թե Հայկական լեռնաշխարհում 400 երկրների կլիմա **կա**») ևն:

Դիմափոխություն: Խոսքին բազմազանություն հաղորդող քերականական ձև է: Ձևերից յուրաքանչյուրն ունի ոճական որոշակի երանգավորվածություն և խոսքին տալիս է առավելապես խոսակցական նրբերանգներ: Դա հատկապես բնորոշ է երկխոսություններին: Առանձնացվում են դիմափոխության հետևյալ ձևերը.

1. **Եզակի երկրորդ դեմքի բայաձևը գործածվում է եզակիի առաջին դեմքի փոխարեն.** սա առավելապես հանդիպում է ներքին խոսքում, երբ խոսողն ինքն իր հետ է խոսում, ինչպես՝ «Ասում **ես**, չի լինում, **չես** ասում, էլի չի լինում, ինչ **անես՝ չգիտես**»:

2. **Երկրորդ դեմքի բայաձևը գործածվում է ընդհանրական իմաստով.** առավել բնորոշ է խրատական խոսքին, առածին, ասացվածքին, ինչպես՝ «Եթե պիտի **խոսքդ** ճիշտ չընկալվի, ավելի լավ է **լռես**»: Երբեմն գործածվում է հոգնակի թվով՝ «Եթե **Աստված եք, փչեցե՛ք** նրանց բոլոր մոմերը....» (ՊՍ): Գործածվում է նաև առաջին դեմքի իմաստով: Ամբողջությամբ վերոհիշյալ սկզբունքով է կառուցված, օրինակ, Պեպոյի հայտնի մենախոսությունը Գ. Սունդուկյանի համանուն ստեղծագործության մեջ:

3. **Եզակի երրորդ դեմքը՝ առաջին դեմքի նշանակությամբ.** սովորաբար գործածվում է այնպիսի երկխոսություններում, որոնցում խոսողը խոսակցի հետ կամ նրա դիրքերից իր մասին է խոսում՝ հաճախ ուղղակի դիմելով հենց խոսակցին: Սա հաճախ կիրառվող ձև է հրապարակային խոսքում կամ ներքին

խոսքում: Դրանով խոսքը դառնում է ավելի համոզիչ ու կենդանի: Իր հիսնամյակին նվիրված երեկոյաններից մեկում Հ. Թումանյանը այսպես է խոսում իր մասին. «Միտք եմ անում, միտք եմ անում և չեմ կարողանում գլխի ընկնել, թե էս ինչ բան է, էս ինչու են տոնում Թումանյանի հիսնամյակը, ինչ մեծ բան է, նոր եմ գլխի ընկնում, որ հայ ժողովրդին քեֆ է հարկավոր, բռնել է խեղճ Թումանյանի յախիցը»:

4. Երկրորդ դեմքը՝ երրորդ դեմքի նշանակությամբ. խոսողը դիմում է բացակա անձին, նրան դարձնում իր խոսակիցը, ինչպես՝ «Զարմանալի մարդ է Արշակը... Այնքան զբաղված ես, որ չե՛ս կարող մի քանի բառով մեզ տրամադրել»:

5. Երրորդ դեմքը՝ երկրորդ դեմքի նշանակությամբ. այս դեպքում խոսողը դիմացինին տալիս է առավել հարգական նշանակություն, ինչպես՝ «Դիմելով իր աշխատակցին՝ Վահանյանին՝ տնօրենը հարցրեց. «Դա պարոն Վահանյանի վերջնական որոշումն է»»:

6. Հոգնակի առաջին դեմքը՝ երկրորդ դեմքի նշանակությամբ. ունի մտերմական, փաղաքշական իմաստ. «Վահան, հոր ենք այդպես շտապում» (հարցնում ենք անակնկալ հանդիպած և ինչ-որ տեղ աճապարող մեր ընկերոջը), «Այսօր ինչպես ենք մեզ զգում» (հարցնում է բժիշկը հիվանդին)⁴⁷:

Թվի փոփոխություն: Եզակի թվով հանդես եկող գոյականը հաճախ անվանում է նաև առարկայի տեսակն ընդհանրապես: Այս կիրառությունը ավելի հատուկ է գիտական ոճին (օր.՝ «**Հնչյունը** լեզվի ծայնային նվազագույն միավորն է»): Վերացական գոյականների (ինչպես նաև իբրև գոյական առնված բառերի) հոգնակի թվով գործածությունը սովորական չէ: Նպատակային կիրառության դեպքում դրանք սաստկացնում են տվյալ բառի իմաստը, օր.՝ «**Հեռուներից** է գալիս», «**Հիասթափություններից** աչք չենք բացում», «**Անցյալներում** սխալներ շատ է ունեցել», «Գալիք հաջողությունների **հույսերով** է ապրում»: Որոշ գոյականների հոգնակի թիվը արտահայտում է մոտավոր կամ տևական ժամանակի իմաստ, ինչպես՝ «2010-ի **սկզբներին**», «Շատ **գարուններ** ապրեց նա», «**Անձրևների** շրջանն սկսվում է»:

Գիտական գրականության մեջ ընդունված է եզակի առաջին դեմքի հոգնակի թվով գործածությունը (տես **Գիտական ոճ**): Հատուկ է նաև հրապարակային խոսքին: Եզակի ձևով գործածությունը հանձնարարվում է, եթե միտում կա ընդգծելու եզակիության իմաստը. «**Ես** այն համոզումն **ունեմ**, որ...»: Եզակի առաջին դեմքի հոգնակի թվով գործածությունը բնորոշ է նաև այն դեպքերին, երբ խոսողը, միայն իրեն նկատի ունենալով, ցանկանում է ընդգծել իր գերազանցությունը կամ առավելությունը խոսակցի նկատմամբ, օր.՝ «Դու ինքդ քեզ որոշումներ ես կայացնում: Բա **մեզ** չէ՛իր կարող գոնե տեղյակ պահել». առավելապես հատուկ է խոսակցական լեզվին:

⁴⁷ Տես նաև Ռ. Մկրտչյան, Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Եր., 1992, էջ 238:

Քաղաքավարական **Դուք**-ի գործածությունը թեև բուն իմաստով թվի փոփոխությանը չի առնչվում, սակայն ոճական հետաքրքիր ձև է՝ խոսքին յուրօրինակ բազմազանություն հաղորդելու առումով:

Խոսքի հարստության կարևոր պայմաններից մեկը **շարահյուսական կառույցների բազմազանությունն է**: Այդպիսի դրսևորումներից է նախադասության **հնչերանգային տեսակների՝ մեկը մյուսի փոխարեն գործածությունը**: Այդ տեսակներից յուրաքանչյուրն ունի ստորոգյալի արտահայտության իր յուրահատկությունը: Այս առումով առանձնանում է **հրամայական** հնչերանգով նախադասությունը, որի ստորոգյալը, մեծ մասամբ արտահայտվելով հրամայական եղանակի դրական և ժխտական ժամանակաձևերով, խոսքային իրադրությամբ պայմանավորված, կարող է դրսևորվել նաև ըղձական, ենթադրական եղանակների որոշակի ժամանակաձևերով՝ յուրաքանչյուր դեպքում, իհարկե, արտահայտելով իմաստային-ոճական որոշակի նրբերանգներ՝ կոչ, հորդոր, խնդրանք, հանձնարարություն, առաջարկ, կարգադրություն ևն:

Յուրահատուկ բազմազանություն են հաղորդում խոսքին **նախադասությունների տարբերակային ձևերը** (պարզ և բարդ նախադասություններ՝ իրենց տարատեսակներով), **համանիշ շարահյուսական կառույցները** (բարդ ստորադասական նախադասություն և դերբայական դարձվածով պարզ նախադասություն, ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք ևն): Դրանցից յուրաքանչյուրը արտահայտչական որոշակի նրբերանգ հաղորդելու միջոց է, և դրանց փոխնիփոխ կիրառությունը, իհարկե խոսքային միջավայրով, նյութով և արտաբերվական այլ գործոններով պայմանավորված, հարստացնում է խոսքը, բազմազան դարձնում արտահայտության միօրինակ ու անշարժ կերպը:

3.2.5. ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐ: Խոսքը հարստացնում, բազմազան են դարձնում նաև զանազան արտահայտչամիջոցները (պատկերավորման և արտահայտչական միջոցները), որոնց մասին կխոսվի հետագա շարադրանքում:

3.3. ԾԵԳՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՍԱԿՈՒԹՅՈՒՆ

3.3.1. Խոսքի առարկայի իմացություն (111): 3.3.2. Բառնկրություն և բառագործածություն (111). 3.3.2.1. Հոմանիշների ընկրություն (112), 3.3.2.2. Բազմիմաստ բառեր և համանուններ (113), 3.3.2.3. Ժամանակավիպություն (113), 3.3.2.4. Տերմիններ (114), 3.3.2.5. Օտար բառեր (114), 3.3.2.6. Բարբառայնություններ և ժարգոնային բառեր (115): 3.3.3. Տրամաբանականություն (116): 3.3.4. Խոսքի ճշգրտության այլ հատկանիշներ (116): 3.3.4.1. Հնչերանգ և տրամաբանական շեշտ (116), 3.3.4.2. Բառակազմության և ձևակազմության ճշգրտություն (117), 3.3.4.3. Շարահյուսական կառույցների հստակություն (118):

Խոսքը ճշգրիտ է, երբ տարընթերցումների տեղիք չի տալիս, միանշանակ է ու հստակ: **Ճշգրտությունը արտահայտման լիակատար համապատասխանությունն է հաղորդվող մտքին:**

Կարծիք կա, որ ճշգրտությունը և հստակությունը խոսքի տարբեր որակներ են և չպետք է նույնացվեն: Դրանց միջև եղած տարբերությունը ուսումնասիրողները պայմանավորում են խոսքի նկատմամբ հաղորդակցվող կողմերի վերաբերմունքով. հստակությունը մեծ չափով կախված է լսողի (կամ կարդացողի) պատրաստվածության աստիճանից. օր.⁴⁸ կենսաքիմիայի դասագիրքը, իր ամբողջ ճշգրտությամբ հանդերձ, անպատրաստ մեկին կարող է թվալ բոլորովին անհասկանալի: Մինչդեռ խոսքի ճշգրտությամբ մտահոգ է նախ և առաջ խոսքի հեղինակը՝ խոսողը կամ գրողը: Բոլոր դեպքերում, խոսքի նշված երկու հատկանիշները սերտորեն կապված են միմյանց. ճշգրտությունը խոսքին հաղորդում է հստակություն, և խոսքը ճշգրիտ է, երբ խոսողը կամ գրողը միտքը (կամ զգացմունքը) հաղորդում է հստակ ու հասկանալի: Խոսքի ճշգրտության հիմնական հատկանիշներ են առանձնացվում **առարկայի իմացությունը, բառընտրությունը և բառագործածությունը** (անհրաժեշտ բառը գտնելու ունակությունը), **տրամաբանականությունը**⁴⁹: Առանձնացվում են նաև այլ հատկանիշներ՝ **հնչերանգ և տրամաբանական շեշտ, ձևակազմության ճշգրտություն, շարահյուսական կառույցների հստակություն** ևն:

3.3.1. ԽՈՍՔԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ: Խոսքի հեղինակը պետք է խորությամբ ուսումնասիրի երևույթը, ճանաչի այն իր բոլոր կողմերով, որպեսզի համապատասխան լեզվամիջոցներով ճշգրտորեն սահմանի կամ ձևակերպի այն: Ընդունված է առանձնացնել ոչ ճշգրիտ խոսքի երկու տեսակ՝ **առարկայական և հասկացական**:

Առաջինը վերաբերում է հենց խոսքի առարկայի չիմացությանը. խոսողը լավ չի պատկերացնում այն առարկան, որի մասին խոսում է: Օր.⁴⁸ եթե այնդում է արվում այն մասին, որ 5-րդ դարում Հայաստանում քրեական գործերով չէր թույլատրվում ինքնադատաստանը, և դրանով զբաղվում էին բացառապես դատական մարմինները, ապա գործ ունենք առարկայական ոչ ճշգրիտ խոսքի հետ, քանի որ 5-րդ դարի մատենագիրներից, օրինակ, Եզնիկ Կողբացին, քննարկելով չարի ու բարու հիմնախնդիրները, հստակորեն ակնարկում է ինքնադատաստանի մասին⁴⁹: «Խոսքը պետք է բխի ու զարգանա առարկայի իմացությունից: Իսկ եթե հոգետորն այն չի ըմբռնել ու չի ուսումնասիրել, ապա ամեն մի պերճախոսություն ապարդյուն է, մանկական ճիգ» (Ցիցերոն):

Երկրորդի՝ **հասկացական անճշգրտության** պատճառը բառի անհաջող կամ սխալ ընտրությունն է, որը աղավաղում է խոսքի բովանդակությունը, խեղաթյուրում է միտքը: Այս դեպքում ճշգրտությունը մասամբ նույնանում է խոսքի ճշտության հետ:

3.3.2. ԲԱՌԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ: Անհրաժեշտ բառի ընտրությունը ստեղծագործական դժվարին աշխատանք է և պահանջում է

⁴⁸ Տե՛ս Ս. Введенская, Л. Павлова, Е. Катаева, указ. соч., с. 90–92:

⁴⁹ Տե՛ս Գ. Ղազինյան, Ա. Վաղարշյան, Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը, Եր., 2014, էջ 51–52:

համապատասխան գիտելիքներ: Խոսողը (կամ գրողը) ոչ միայն պետք է լավ իմանա, ճանաչի խոսքի առարկան, այլև պետք է տիրապետի նաև բառերի նորբիմաստներին, ունենա անհրաժեշտ լեզվագագացողություն, հարուստ բառապաշար, որպեսզի չձախողվի բառընտրության մեջ: Այս ոլորտում խոսքի ճշգրտությունը ապահովում են բառապաշարի տարբեր շերտերին ու խմբերին պատկանող բառերի (հոմանիշներ, բազմիմաստ բառեր, տերմիններ, օտար և բարբառային բառեր, ժարգոնային արտահայտություններ ևն) ճիշտ ընտրությունը և գործածությունը⁵⁰:

3.3.2.1. Հոմանիշների ընտրություն: Ճիշտ բառընտրությունը խոսքի ճշգրիտ ձևակերպման կարևոր պայման է: Օր.՝ **կապակցություն** բառի գործիական հոլովով ձևը նշանակում է **առիթով** և գործածության մեջ էլ փոխարինում է այդ բառին: Կարելի է ասել՝ պարզևատրել ինչ–որ իրադարձության (տոնի, հորեյլանի, հանդիսության) **առիթով**, ինչ–որ բանի **կապակցությամբ** («Պարզևատրվեց ՀՀ անկախության 20–ամյակի **կապակցությամբ**»), բայց եթե անձը (կազմակերպությունը, խումբը) պարզևատրվում է իր կատարած աշխատանքի համար, ապա այստեղ **կապակցությամբ** կամ **առթիվ** (**առիթով**) բառերը բոլորովին անտեղի են: Պարզևատրել ոչ թե մասնագիտական պատշաճ պատրաստվածություն դրսևորելու **կապակցությամբ** (կամ՝ **առիթով** // **առթիվ**), այլ մասնագիտական պատշաճ պատրաստվածություն դրսևորելու **համար**:

(**Չի**) **կարելի** և **հնարավոր** (չէ) արտահայտությունները իմաստային տարբերություններ ունեն. առաջինն արտահայտում է **մերժելի է**, **արգելված է**, **անթույլատրելի է** իմաստը, երկրորդը՝ **անհնար**, **անկարելի լինելու**: Առաջինը հաճախ գործածվում է այնտեղ, որտեղ, ըստ կանոնի և խոսքի տրամաբանական կառույցի, պետք է լիներ երկրորդը, և հակառակը, ինչպես՝ «Նա երկու ամիս առաջ մահացել է. նրան **չի կարելի** հարցաքննել». ընդգծված բառը ենթադրել է տալիս մի արտառոց և անհեթեթ միտք. մեռած մարդուն քննելու տարբերակ կա, պարզապես ինչ–ինչ պատճառներով **չի կարելի** դա իրականացնել: Ճիշտ ընկալվելու համար խոսքի հեղինակը **չի կարելի**–ի փոխարեն պիտի գործածեր **անհնար է** կամ **հնարավոր չէ** արտահայտությունը: Այլ դեպքերում այդ արտահայտությունների շփոթությունը կարող է տարընթերցումների տեղիք տալ: Օր.՝ «**Չի կարելի** այդ ճանապարհով հասնել հաջողության» նախադասությունը լեզվական նորմի տեսակետից ճիշտ է կառուցված, բովանդակային առումով ճիշտ է այն դեպքում, եթե հեղինակը մերժում է խարդախությամբ, կեղծիքով կամ անընդունելի այլ ձևերով հաջողության հասնելու գաղափարը: Բայց եթե նկատի է առնվում այդ գործողությունը կատարելու անհնարինությունը (ոչ թե թույլատրելի կամ անթույլատրելի լինելը), ապա նախադասությունը պետք է ձևակերպվեր այսպես՝ «**Անհնար է** այդ ճանապարհով հասնել հաջողության»: Այլ օրինակներ՝ «**Չի կարելի** (≡Հնարավոր չէ // Անհնար է) մարդուն սովորեցնել երջանիկ լինել, բայց նրան դաստիարակել այնպես, որ նա երջանիկ լինի, **կարելի** (≡հնարավոր) է», «**Չի կարելի** (≡Հնարավոր չէ // Անհնար է) այդքան դժվարություններ հաղթահարել»:

⁵⁰ Տե՛ս նաև Լ. Եզեկյան, Խոսքի ճշգրտություն, «Բանքեր Երևանի համալսարանի», Եր., 2013, № 2:

Գրողների ստեղծագործական լաբորատորիայի ուսումնասիրությունը, ձեռագրերի լեզվական քննությունը բացառիկ ուշագրավ տեղեկություններ են տալիս հոմանշային տարբերակների նրբմաստային յուրահատկությունները հաշվի առնելու և բառընտրության դժվարությունների մասին: Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի վերնագիրը այդպիսի բառընտրության ուշագրավ օրինակ է: Այն նախապես վերնագրված է եղել «Վարձակը»: Բառարանները այդ երկու բառերի վերաբերյալ տալիս են հետևյալ բացատրությունները. «**ՀԱՐՃ, ի, գ., 1. (պատմ.):** Օրինական կնոջ հետ պահվող կին-սիրուհի: 2. Տարփուհի, սիրուհի», «**ՎԱՐՁԱԿ, ի., գ. (պատմ.):** 1. Հարճ: 2. Խնջույքներում, զանազան կարգի զվարճավայրերում և այլն պարող կին, պարուհի: 3. Անբարոյական կին, պոռնիկ»⁵¹: Ըստ Հայկազյան բառարանի՝ **հարճ**-ը ունի **երկրորդական կին** իմաստը, իսկ **վարձակ**-ը՝ **պարուհի** («Կին երգեցիկ՝ երաժիշտ. և կաքաիչ ևի խնջոյս և ևի թատրոնս...») և երկրորդաբար՝ **անբարո կին**⁵²: **Վարձակ**-ը առաջին իմաստով համընկնում է **հարճ**-ի հետ, բայց, ինչպես տեսանք, ունի նաև լրացական իմաստներ, որոնցից երկրորդը (**պարուհի**-ն), ի տարբերություն **հարճ**-ի, պոեմի հերոսուհու՝ Նազենիկի մասին տալիս է լրացուցիչ բնութագրություն, բայց երրորդը էապես հակասում է Վարուժանի պոեմի ընդհանուր ոգուն ու զաղափարին և, իհարկե, նաև Նազենիկի ներքին էությանը. Վարուժանի հերոսուհին գեղեցկության, ազատ ու անկաշկանդ սիրո խորհրդանիշ է, վայելքի աղբյուր, նաև մաքուր զգացումի փառաբանություն, բայց ոչ երբեք՝ **անբարո կին**: Եվ, ի վերջո, **Հարճը** փոփոխակը անհամեմատ բանաստեղծական է ու բարեհունչ և նյութի պատմականությանը առավել ներդաշնակ: Ըստ էության, այս մտածումներով էլ հեղինակը «**Վարձակը**» դարձրել է «**Հարճը**»:

3.3.2.2. Բազմիմաստ բառեր և համանուններ: Արտահայտության անհստակությունը կարող է առաջանալ նաև բազմիմաստ բառերի և համանունների գործածության դեպքում, եթե տեքստը դրսևորի հեղինակի կողմից չնախատեսված նշանակություն: Օր.՝ հիմնարկության աշխատանքային տեղեկագրում կարդում ենք՝ «Ընթացիկ տարում մենք, ցավոք, այլևայլ պատճառներով **կորցրինք** երեք աշխատակիցների»: Ձևակերպումը ենթադրել է տալիս այդ աշխատակիցների մահացած՝ կյանքից հեռացած լինելու մասին: Մինչդեռ խոսքը վերաբերում է երեք մասնագետների՝ իրենց դիմումի համաձայն աշխատանքից ազատված լինելուն: Բառը ակնհայտորեն սխալ է ընտրված. միտքը պետք է ձևակերպվի այլ կերպ՝ ճշգրիտ: Սովորաբար այսպես է ստացվում հեղինակի անուշադրության կամ խոսքի ցածր մշակույթ ունենալու պատճառով: Բայց երբեմն հեղինակն ինքն է դիմում այս կամ այն արտահայտությանը՝ ասելիքի բացասական իմաստը քողարկելու համար, օր.՝ **վատ է** ասելու փոխարեն՝ ասվում է **լավ չէ**, կամ՝ **հազիվ թե լավ է** (տես **Մեղմասություն**):

3.3.2.3. Ժամանակավրիպություն: Միայլ բառընտրությունը կարող է հետևանք լինել նաև ժամանակավրիպության. դա որևէ դարաշրջանի վերաբերյալ երևույթների կամ փաստերի, ինչպես նաև լեզվական իրողությունների տեղափոխումն է այլ դարաշրջան: Օր.՝ հայտնի իրողություն է, որ «Սամվել» պատմավեպում, որտեղ նկարագրվում են 4-րդ դարի դեպքերը, Ռաֆֆին մի տեղ խոսում է մասիսի

⁵¹ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

⁵² «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Եր., հ. 2, 1986:

լանջին բացված փոսի մասին, սակայն հայտնի է, որ այդ փոսն առաջացել է շատ ավելի ուշ՝ 19-րդ դարի առաջին կեսերին (1840 թ. հունիս), երբ երկրաշարժի պատճառով սարալանջը փլվել ու տակնուվրա է արել Ակոռի գյուղը:

Կամ՝ ժամանակավրիպություն է 10-րդ դարին վերաբերող երկերում քաղաքավարական **Դուք**-ի գործածությունը, քանի որ այդ ձևը հայերենում գործածության մեջ է մտել 19-րդ դարի կեսերից: Կամ էլ ժամանակավրիպություն է, եթե խոսվում է իբրև թե կես դար առաջ՝ 20-րդ դարի 50-ականներին, հայերենում այնպիսի բառերի գործածության կամ դրանցով նշանակվող առարկաների ու երևույթների մասին, ինչպիսիք են՝ **համացանց**, **բջջային (հեռախոս)**, **այլընտրանք**, **«Արդշին-բանկ»**, **«Հ նախագահ**, **վարչապետ**, **Ազգային ժողով**, **ԵՏՄ**, **ԵՄ** ևն: Քերականորեն ճիշտ է, սակայն բովանդակության և լեզվագործածության տեսակետից ճիշտ և ճշգրիտ չէ հետևյալ նախադասությունը. «ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակը 1961 թ. մարտին պաշտոնական այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն»:

Ժամանակավրիպությունը՝ որպես խոսքի թերություն, առավելապես հանդիպում է հեռավոր անցյալին վերաբերող երկերում, ֆիլմերում, հոդվածներում. պետք է ուշադիր լինել, հակառակ դեպքում կհայտնվենք մի իրավիճակում, երբ Պապ թագավորի ճաշասեղանին կարող է հայտնվել «Արարատ» կոնյակի գործարանի տեսականին:

3.3.2.4. Տերմիններ: Իբրև ճշգրտորեն սահմանելի հասկացություն արտահայտող բառեր կամ բառակապակցություններ՝ խոսքին համապատասխան որակներ հաղորդող կարևոր միավորներ են: Պատահական չէ, որ գործառական որոշ ոճերում (գիտական, պաշտոնական) դրանք ունեն պարտադիր գործառույթ: Ճշգրիտ խոսք կազմելիս դրանց ոչ տեղին կիրառությունը խոսքային որոշակի միջավայրում կարող է տարընթերցումների առիթ դառնալ կամ շփոթությունների ու սխալների տեղիք տալ: Օր.՝ «Դա **ոստնձգում** է հասարակական անվտանգության դեմ»։ ընդգծված բառի մեջ այնքան է շեշտված գործողության իմաստը, որ կարող է ընկալվել իր բայական՝ **ոստնձգություն է անում** իմաստով և մթազնել նախադասության միտքը: Ճշգրիտ է՝ «Դա **ոստնձգություն** է հասարակական անվտանգության դեմ»:

3.3.2.5. Օտար բառեր: Փոխառյալ տերմինային միավորների կիրառությունը թեև երբեմն չի նպաստում հաղորդվող նյութի հասկանալիությանը, մատչելի լինելուն, սակայն, ինչ խոսք, հաղորդակցման առանձին ձևերում (հաշվետվություն, պայմանագիր, օրենքներ) խոսքը ճշգրիտ ձևակերպելու առումով ուղղակի անխուսափելի է: Օր.՝ «Հանցագործության **սուրբեկտ** կարող է լինել...» կայուն կապակցության մեջ ընդգծված բառը չի կարող փոխարինվել հայերեն **ենթակա** կամ **անձ** համարժեքներով, ինչպես սովորական գործածության համար հանձնարարվում է բացատրական բառարաններով⁵³, քանի որ կապակցությունը ակնհայտորեն կարող է տարընթերցումի առիթ տալ և հասկացվել հանցագործության ենթակա լինելու՝ ենթարկվելու իմաստով, ինչպես՝ «Հանցագործության **ենթակա** կարող է լինել...»: Իսկ **հանցագործության անձ** հասկացությունը տերմինային

⁵³ Տես Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Եր., հ. IV, 1980:

իմաստ չունի և անհասկանալի բառակապակցություն է: Այլ օրինակներ՝ «Վիեննայի **կոնվենցիայի** 3-րդ հոդվածի համաձայն...», «**Իմունիտետից** օգտվող դիվանագիտական գործակալը...», «**էկզեկվատորա** տալ հյուպատոսական պաշտոնատար անձին»:

Օտար բառերը հայերեն համարժեքների համեմատությամբ երբեմն ավելի պաշտոնական, հանդիսավոր են: Սակայն դա հիմնավոր պատճառ չէ օտարաբանությունների գործածության: Այլ հարց է, երբ օտար համարժեքն ունենում է նրբիմաստներ, որոնք կարևոր են տեքստի, խոսքի ճշգրտության համար: Այս դեպքում օտար բառի ընտրությունն արդարացվում է: Օր.՝ **իմիջ** (image) բառի հայերեն համարժեքը, ըստ ՀՀ լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի որոշման⁵⁴, **կերպար**-ն է: Սակայն վերջինս ոչ բոլոր գործածություններում կարող է փոխարինել անգլերեն տարբերակին, որն ունի բնագրային 5-ից ավելի նրբիմաստներ՝ **հեղինակություն, համբավ, ոճ, գործելակերպ, կազմակերպության նկարագիր, երկրի համարում** ևն, իսկ իբրև տնտեսագիտական տերմին՝ նաև «Մարդկանց գիտակցության մեջ՝ ապրանքների կամ ծառայությունների մասին ձևավորված պատկերացում»⁵⁵:

3.3.2.6. Բարբառայնություններ և ժարգոնային բառեր: Գրական լեզվի նորմերի տեսանկյունից գրական գրավոր կամ բանավոր խոսքում բարբառային և առավել ևս ժարգոնային բառերի գործածությունը անընդունելի է: Սակայն խիստ հազվադեպ, երբ խոսքը միանշանակ և ճշգրիտ կառուցելու անհրաժեշտություն կա, շրջանառության մեջ են դրվում **բարբառային** այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնց իմաստային համարժեքը գրական լեզվում չկա, կամ գրական համարժեքը ամբողջ խորությամբ չի արտահայտում հասկացությունը: Բառային այդպիսի միավորները սովորաբար գրվում են չակերտների մեջ, ինչպես, օրինակ, հետևյալ դեպքերում՝ «...դիմողների **«փոշմանելը»** Սահմանադրական դատարան դիմելու հարցում միանշանակ հիմք չէ...», «...երբ տուժողի չեզոք, նույնիսկ օգտակար արարքը կամ **«թարս»** հայացքը հիմք է տալիս հանցավորին բռնություն գործադրելու նրա նկատմամբ...»:

Բարբառային կամ խոսակցական բառերն ու արտահայտությունները ավելի հաճախ անփոխարինելի միավորներ են խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ, և դա ոչ միայն խոսքին պատկերավորություն ու գեղարվեստականություն հաղորդելու տեսանկյունից, այլև խոսքի բովանդակային կողմը չխաթարելու, ասելիքը ճշգրիտ ձևակերպելու առումներով: Օր.՝ «**Հավես** (= հավաս) չունեմ այդ գործով զբաղվելու» նախադասության մեջ դժվար է գտնել ընդգծված բառի գրական համարժեքը (**տրամադրություն, ցանկություն** հոմանիշները չեն ծածկում քննարկվող բառի իմաստային դաշտը): Կամ՝ «Հոգնեցրին ինձ արդեն Տխրությունն այս **ցանցառ** եվ կարոտներն այս խեղճ» (ՌԴ) տողում գրական որևէ փոխարինիչի (փոխ.՝ խնեթավուն, անիմաստ, անմիտ, հիմար) գործածությունը կպակասեցնի խոսքի բովանդակային կողմը:

⁵⁴ «Հայոց լեզվի կանոններ» (գերատեսչական նորմատիվ ակտեր), Եր., 2003, էջ 22 (30.10.1996 № 254):

⁵⁵ Տես **Գ. Կիրակոսյան, Հ. Ղուչյան, Ի. Տիգրանյան**, Տնտեսագիտական բացատրական բառարան, Եր., 1999, էջ 183:

Մեկ այլ օրինակ՝ «**Յարաբ** խմեց, **յարաբ** հովցավ Վառվաճ սիրտը իմ **յարի**, **Յարաբ** հովցավ, **յարաբ** անցավ, Անքուն ցավը **ջիգյարի**», «Ամպի տակից ջուր է գալիս, **Դոշ** է տալիս, փրփրում» (ՀԹ): Գրական համարժեքներով դժվար փոխարինվող բառեր են ընդգծվածները, նաև հետևյալ հասարակաբանությունները (խոսակցական լեզվին հատուկ ցածր ոճի բառեր)՝ **թիթիգ**, **կստվել**, **լոպազ**, **աբուռ**, **նամարդ**, **զահլա**, **զահրումար** ևն:

Ժարգոնային–ծածկալեզվային բառերը պատկանում են, այսպես կոչված, ցածր ոճին և մտնում են խոսակցական բառապաշարի մեջ: Գրական լեզվի զարգացման տեսակետից դիտվում են որպես բացասական երևույթ և մերժելի են: Բնորոշ են հասարակական որոշակի խավերին, սոցիալական այնպիսի խմբերին, որոնք ձգտում են հաղորդակցման ժամանակ մեկուսանալ կամ նույնիսկ անհասկանալի դառնալ շրջապատին և կամ պարզապես արտաոռց, առանձնահատուկ երևալ: Խոսքում (գեղարվեստական գրականության մեջ, պարբերական մամուլում և այլուր) կարող են գործածվել ոճական–արտահայտչական նպատակներով: Շատ հազվադեպ կիրառվում են խոսքի ճշգրտությունը ապահովելու համար, ինչպես արցախյան ազատամարտիկի հետևյալ խոսքում, որը հարցազրույցի վերնագիր է. «Մեզ **դուխ** էր պետք, մեզ **դուխ** տվող էր պետք». **ոգի**, **ներշնչանք** և նման համարժեքները ոչ միայն հավաստի չէին հնչի ազատամարտիկի խոսքում, այլև հազիվ թե ճշգրիտ արտահայտեին հայրենի հողի ազատագրության համար կռվի ելած հայ ֆիդայու ոգու մղումը:

3.3.3. ՏՐԱՄԱՐԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Խոսքի ճշգրտությունը ապահովող վերը թվարկված հատկանիշների մի զգալի մասը սերտորեն կապված է խոսքի տրամաբանականությանը: Խոսքի առարկայի չիմացությունը, անճիշտ բառընտրությունը և բառագործածությունը հաճախ կարող են պատճառ դառնալ ոչ միայն անհստակության ու անճշգրտության, այլև անտրամաբանականության և թյուրընկալման: Իսկ եթե խախտվում է մտքի տրամաբանական ընթացքը, խոսքը ճշգրիտ լինել չի կարող: Օր.՝ «Գրությանը պետք է **ուղղակի** պատասխանել մեկերկու հիմնավորումով». նախադասության ընդգծված բառը «վկայում է», որ խոսքը ոչ միջնորդավորված՝ անմիջաբար, ուղղակի, պատասխանի մասին է, սակայն նյութի ընդհանուր բովանդակությունը բոլորովին այլ իմաստ է թելադրում. խոսքը ոչ թե **անմիջաբար պատասխանել**–ու մասին է, այլ **պարզապես պատասխանել**–ու, որը **ուղղակի** բառի երկրորդական իմաստներից է և բնորոշ է խոսակցական լեզվին. նախադասության ճշգրիտ տարբերակը կլինի այսպես՝ «Գրությանը **պարզապես** պետք է պատասխանել մեկ–երկու հիմնավորումով»:

3.3.4. ԽՈՍՔԻ ՃՇԳՐՏՈՒԹՅԱՆ ԱՅՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ: Դրանք են՝ հնչերանգ և տրամաբանական շեշտ, բառակազմության և ձևակազմության ճշգրտություն, շարահյուսական կառույցների հստակություն:

3.3.4.1. Հնչերանգ և տրամաբանական շեշտ: Հնչերանգը ընդգծում է գլխավոր ասելիքը, որը կատարվում է ուժգնության շեշտի միջոցով («Սա **ի՛մ** գիրքն է»),

ծայնի բարձրացմամբ («Արա՛մը եկավ») կամ էլ տևական շեշտով («Ես շա՛տ եմ քեզ սպասել»)։ Այսպիսի դեպքերում խոսքի ճշգրտությունը ապահովելու համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել շեշտադրությանը։

Խոսքը ճշգրիտ ձևակերպելու համար հնչերանգային միջոցներից կարևոր է նաև **տրամաբանական դադարի դերը**։ դա խոսքի արտաբերման ընդմիջում է, որը կապված է մտքի հետ։ Սովորաբար կիրառվում է այն դեպքերում, երբ նախադասությունները երկիմաստ կամ երկդիմի են լինում։ Իմաստային շփոթից խուսափելու համար բանավոր խոսքում պետք է ճիշտ ընտրվի դադարը, իսկ գրավորում դա պետք է արտահայտվի համապատասխան կետադրությամբ։ Այդ երևույթը հաճախակի է հանդիպում որոշակի կառույցներում։

Հիշենք, որ խոսքը ճշգրտվում է բանավոր խոսքում տրամաբանական դադարով, գրավորում՝ կետադրությամբ։

Խոսքի ճշգրտությունը երբեմն ապահովվում է **տրամաբանական շեշտով**։ Շարադասությամբ ընդգծելիս կարևոր դեր ունի օժանդակ բայը կամ հանգույցը, որը սովորաբար լինում է տրամաբանական շեշտ կրող անդամից հետո. «Արցախի անկախության **հարցն է** այսօրվա քննարկման առարկան»։ Հեռուստագովազում հնչում է այսպիսի նախադասություն. «Ընտրի՛ր նոր **ուղի՛**»։ տրամաբանական շեշտը սխալ է դրված. պետք է շեշտվի ոչ թե **ուղու**, այլ դրա **նոր** լինելու գաղափարը՝ «Ընտրի՛ր **նոր** ուղի»։

3.3.4.2. Բառակազմության և ձևակազմության ճշգրտություն։ Խոսքը բառային տարբերակների և քերականական ձևերի ճշգրիտ ընտրության մասին է։ Բառային տարբերակները կարող են լինել ուղղագրական, հնչյունափոխական, բառակազմական ևն։ Առաջինները (**մոթմոթալ // մրթմրթալ, օր առ օր // օրաօր, մերթ ընդ մերթ // մերթընդմերթ** ևն) խոսքի ճշգրտության կամ հստակության ցուցիչներ չեն։ Մյուս երկուսի (**քառասնամյա // քառասունամյա, գազաթաժողով // գազաթնաժողով, արյունաներկ // արնաներկ** ևն) հարմար տարբերակն ընտրելու դեպքում կարող են նպաստել խոսքի հստակությանը, քանի որ ոչ միայն ռճական–գործառական առումով սովորաբար համարժեք չեն, այլև անհնչյունափոխ հիմքերով կազմությունները երբեմն ավելի հստակ են պահում բառի պատկերը՝ հմտո.՝ **փոխարկիչի // փոխարկչի, մարզիչի // մարզչի, կիսաեզրափակիչում // կիսաեզրափակչում** ևն։

Խոսքի ճշգրտությունը խաթարելու տեսակետից առավել վտանգավոր են այն դեպքերը, երբ բառակազմական տարբերակները ժամանակի ընթացքում, իմաստային տարբերություններ ձեռք բերելով, երբեմն դառնում են ինքնուրույն բառեր և թյուրիմացաբար գործածվում են մեկը մյուսի փոխարեն։ Օր.՝ **արջորս – արջ որսացող և արջաորս – արջի որս** ևն։ (Սրանց հետ չպետք է շփոթել բառային սխալ կազմությունները՝ **տարեկետում, սննկանալ, անձեռնամխելի, ձեռնատու, ներեղություն** ևն)։

Ուշադիր պետք է լինել հատկապես դերանունների գործածության դեպքում։ Չտարբերակված իմաստ արտահայտելու հատկանիշը դժվարացնում է դերանունների գործածությունը, եթե խոսքային կառույցում հստակ չէ, թե ում կամ ինչի մասին է խոսքը։ Օր.՝ «Եթե գյուղացիները հարկ եղածի չափով չզբաղվեն կովերի

խնամքով, նրանք կոչնչացվեն»։ Խստակ չէ՝ ում է վերաբերում ընդգծված դերանունը՝ **կովերի՜ն**, թե՛ **գյուղացիներին**։ Կամ՝ «Շինարարը խնդրեց տանտիրոջը ավելացած շինանյութը տեղափոխել **իր** մոտ»։ ու՛մ մոտ՝ տանտիրոջ, թե՛ շինարարի։

3.3.4.3. Շարահյուսական կառույցների Խստակություն։ Խոսքի ճշգրտությունը և Խստակությունը մեծ չափով պայմանավորված են շարահյուսական կառույցների ճիշտ ընտրությամբ, բառակապակցություններում բառերի ճիշտ դասավորությամբ։ Անխտակության հիմնական պատճառներից մեկը բառերի ոչ համապատասխան դասավորությունն է։ Օր.՝ «Ստուգաբանությունը ուսումնասիրում է **բառերի** նախնական **իմաստները**, **դրանց** կրած իմաստային փոփոխությունները»։ Նախադասության մեջ ընդգծված դերանունը քերականորեն վերաբերում է **իմաստները** բառին, մինչդեռ հեղինակը նկատի է ունեցել **բառերի**-ն, և ստացվել է ոչ ճշգրիտ խոսք՝ **բառերի իմաստների իմաստային փոփոխությունները**։ «**Վահանի նկարը**»։ Վահանի նկարած նկարը, թե՛ Վահանին պատկերող նկարը, «**ղեկավարի նշանակումը**»։ Նոր ղեկավարի նշանակումը, թե՛ ղեկավարի կատարած նշանակումը։

Շատ բնորոշ է չեխովյան կատակի հայտնի օրինակը. «Ցանկանում եմ Ձեզ ամեն տեսակի դժբախտություններ, անհաջողություններ հեշտությամբ ու թեթևորեն հաղթահարել»։ այս նախադասության «վնասներից» խուսափելու համար ընդամենը պետք է նախադասությունը կառուցել ճիշտ (= ճշգրիտ) շարադասությամբ և մասնակի փոփոխություններով. «Ցանկանում եմ, որ Դուք հեշտությամբ ու թեթևորեն հաղթահարեք ցանկացած դժբախտություն ու անհաջողություն», կամ՝ «Ցանկանում եմ Ձեզ հեշտությամբ ու թեթևորեն հաղթահարել ցանկացած դժբախտություն ու անհաջողություն»։

3.4. ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

3.4.1. Մատչելի բառապաշար (119)։ 3.4.2. Քերականական ձևերի և կառույցների ճիշտ ընտրություն (120)։

Խոսքը սովորաբար ուղղված է լինում որոշակի լսարանի, ունենում է հասցեատեր, որը կարող է լինել անհատը կամ խումբը։ Խոսքի հեղինակը բնականաբար մշտապես շահագրգռված է, որ այդ հասցեատերը հասկանա իր ասելիքը, և խոսքը այնպես պիտի կազմի, որ նա ընկալի դրանում արտացոլված տեղեկույթը։ Խոսքը մատչելի է, եթե նրա լեզվական կառուցվածքը հեշտացնում է տեղեկատվության ընկալումը։ Մատչելիությունը ենթադրում է խոսքի պարզություն։ Դա էլ իր հերթին հարաբերական հասկացություն է։ Հասկանալի պատճառներով նույն խոսքը բոլորի համար չի կարող հավասարապես մատչելի լինել։ Օր.՝ տնտեսական ճգնաժամի պատճառների վերաբերյալ դասախոսությունը ամբողջությամբ չէ, որ կարող է ընկալել տարասեռ (ոչ մասնագիտական) լսարանը։ Խոսքը, իհարկե, մատուցվող տեղեկույթի բարդության մասին չէ, այլ ընտրված լեզվական միջոցների անհասկանալիության՝ նեղ մասնագիտական տերմիններ, մտքի բարդ ձևակերպումներ, շարահյուսական բազմաբարդ կառույցներ ևն։

3.4.1. ՄԱՏՉԵԼԻ ԲԱՌԱՊԱՇԱՐ: Ըստ հետազոտողների՝ խոսքի մատչելիությունը նախ և առաջ պայմանավորված է **լեզվական միջոցների ընտրությամբ**: Սա ամենից առաջ վերաբերում է **բառապաշարին**: Հայտնի է, որ լեզվի բառապաշարում սովորաբար առանձնացվում են երկու խումբ բառեր՝ **համագործածական**, որոնք լեզվի ընդհանուր գործածական բառերն են և հասկանալի են տվյալ լեզվով խոսող հանրությանը, և **սահմանափակ կիրառության**՝ որոշակի ոլորտներում գործածվող բառեր, որոնք հասկանալի են մասնագիտական որոշակի խմբերի կամ հանրության որոշակի հատվածների, ինչպես՝ տերմինները, բարբառային բառերը, ժարգոնային արտահայտությունները, օտար բառերը ևն: Բնականաբար, երկրորդ խմբի բառերի գործածության դեպքում անպայման պիտի հաշվի առնել լսարանի սոցիալական և կրթական որակները, մասնագիտական առանձնահատկությունները: Օր.՝ տերմիններով հարուստ մասնագիտական խոսքը, բնականաբար, մատչելի չի կարող լինել ոչ մասնագիտական լսարանին: Դրանք հնարավորին չափ պետք է պակասեցվեն, առավել քիչ գործածականները, որպես կանոն, պիտի բացատրվեն: Այդպես պիտի վերաբերվել նաև անծանոթ հապավումների, բարբառային և օտար բառերի գործածությանը:

Վերջին շրջանում հայերենը հաճախ է դիմում եվրոպական լեզուներին՝ հատկապես մասնագիտական բառեր փոխառելու համար: Դրանց մի մասը, սակայն, նոր-նոր է մուտք գործում լեզու և տակավին ծեռք չի բերել, այսպես կոչված, քաղաքացիության իրավունք: Հետևաբար տարասեռ (ոչ մասնագիտական) լսարանին ուղղված տեքստերում խոսքի մատչելիությունը ապահովելու համար նպատակահարմար է փակագծերի մեջ տալ այս կարգի բառերի բացատրությունները: Ինչպես՝ «Մեքենայական կրիչների թվին կարող են դասվել **դիսկետները** (ճկուն մագնիսական սկավառակներ՝ պնակիտներ), **վինչեսթերները** (կոշտ մագնիսական սկավառակներ), **CD-ները** (լազերային սկավառակներ), **սթրիմերները** (կասետային մագնիսական ժապավեններ) և տեխնիկական այլ միջոցներ...»:

Օտար բառերը արտահայտչական ինչ-ինչ նպատակներով գործածելիս հեղինակը համոզված պետք է լինի, որ դրանք հասկանալի են ընթերցողին (կամ լսողին), հակառակ դեպքում խոսքը սպասված ազդեցությունը չի ունենա, հեղինակը չի հասնի իր նպատակին: Ստորև բերվածը տերմիններով և օտարաբանություններով խճողված խոսքի բնորոշ օրինակ է՝ քաղված համացանցից.

Հայաստանում վերջին տարիներին քլիրինգային և ինվեստիցիոն ոչ կոոեկտ քաղաքականության հետևանքով էկոնոմիկայում ուժեղացավ կոռուպցիան՝ ստեղծելով ստագնացիոն կոնյունկտուրա, ինֆլյացիա, վալյուտային ռեսուրսների կոնվերսիա, բյուջեի դեֆիցիտ, վաուչերների ու սերտիֆիկատների դեֆլյացիա, էկոնոմիկայի դիվերսիֆիկացիոն լեգիտիմ քաղաքականություն, ստվերային բիզնեսի մաքսիմիզացիա, որը նաև մարկետինգի և մենեջմենտի թույլ դրսևորման հետևանք է:

3.4.2. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՒ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՃԻՇՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ:

Խոսքի հասկանալիության և մատչելիության հարցում պակաս կարևոր դեր չի կատարում **քերականական ձևերի ու կառույցների ճիշտ ընտրությունը**: Անհարկի շրջումը, շարահյուսական բարդ կամ անհստակ կառույցների նախընտրությունը, երբեմն նույնիսկ նորմատիվ, բայց ոչ նախընտրելի բառաձևի գործածությունը (օր.՝ **Լողում**←**Լողիում**) խճողում են խոսքը, դարձնում անհստակ ու դժվարընկալ: Օր.՝ «Ճյուղը կուտրեց քամին» (փոխ.՝ «Քամին կուտրեց ճյուղը») նախադասության մեջ շարադասական անհարթությունը խանգարում է մտքի արագ ընկալմանը և մատչելիությանը: Կամ՝ «Տնտեսության առաջընթացը խոչընդոտում է բանկային համակարգի ոչ կայուն գործունեությունը», փոխ.՝ «Բանկային համակարգի ոչ կայուն գործունեությունը խոչընդոտում է տնտեսության առաջընթացը»:

Կրավորական կառույցը հայերենում գործուն չէ: Եվ եթե հատուկ նպատակ չկա կրավորական կառույցի ոճական հնարավորությունները (գործողություն կատարողի անորոշություն, չեզոք վերաբերմունք գործողության նկատմամբ ևն) օգտագործելու, ապա խոսքի պարզության համար նախընտրություն պիտի տալ ներգործական կառուցվածքի նախադասություններին: Օր.՝ «Դա պաշտոնական Անկարայի կողմից ձեռնարկված քաղաքական խաղերից է»←«Դա պաշտոնական Անկարայի ձեռնարկած քաղաքական խաղերից է»:

Եթե խոսքի բնույթը և բովանդակությունը չեն պարտադրում շարահյուսական բարդ կառույցներ (ինչպես դա նկատվում է, օրինակ, գիտական կամ պաշտոնական խոսքում), ապա խոսքի մատչելիության տեսակետից միանգամայն նախընտրելի են պարզերը: Նույնիսկ սկզբնապես մտքում ձևակերպված կամ թղթին հանձնված բարդ կառույցները հեշտությամբ կարելի է փոխարինել մատչելի ձևերով, և խոսքը կլինի ավելի պարզ ու հասկանալի: Դրան կարելի է հասնել նաև որոշ անհարկի կրկնություններից խուսափելու և զեղչումների ճանապարհով: Հանրությանը հասցեագրված խոսքը, լինի դա օրենք, հրաման, որոշում, սահմանադրության հոդված և այլն, պիտի ձևակերպված լինի ոչ միայն ճշգրիտ, այլև պարզ ու հասկանալի:

3.5. ՍԵՂՄՈՒԹՅՈՒՆ (ԿԱՐՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

3.5.1. «Սեղմ» բառապաշար (121): 3.5.2. Դարձվածքներ, ասույթներ, թևավոր խոսքեր (122): 3.5.3. Հապավումներ և համառոտագրություններ (123): 3.5.4. Քերականական կարճ ձևեր և կառույցներ (124):

Դժվար է կառուցել սեղմ և արտահայտիչ խոսք, գտնել բառերի ու ձևերի այն անհրաժեշտ նվազագույնը, որը կարտահայտի մեր միտքը ամբողջությամբ և հակիրճ: Դրան հասնելու համար հաճախ պահանջվում է համառ և ուշադիր աշխատանք: Այս առիթով հաճախ է հիշատակվում ֆրանսիացի գիտնական, փիլիսոփա և գրող **Ք. Պասկալի** դիպուկ արտահայտությունը. «Ես գրում եմ երկար, որովհետև կարճ գրելու ժամանակ չունեմ»: Երբ խոսքը սեղմ է, **ավելի արագ է ընկալվում և առավել ազդեցիկ է**:

3.5.1. ՍԵՂՄ ԲԱՌԱՊԱՇԱՐ: Սեղմության առաջին պայմանը **բառաշատությունից խուսափելն է:** Դրան հասնելու համար մի քանի ճանապարհ կա:

ա) Չգործածել բառ կամ արտահայտություն, որը որևէ լրացական իմաստ չի հավելում ասվածին, պարզապես ավելորդ է: Օր.¹ «ՀՀ-ն մինչև օրս շարունակում է իր մասնակցությունը (**մասնակցում է**) Կոսովոյում խաղաղապահ գործողությունը», «Ինչը էապես խոչընդոտում է երկրի **առաջընթաց** զարգացումը», «Պայմանները ընդհանուր են բոլորի համար՝ անկախ **նրանց** տարիքից», «Որքան էլ **որ**» ևն:

Երբեմն անհրաժեշտ է լինում զուգահեռ կատարել նաև քերականական մասնակի փոփոխություններ, մանավանդ օտարաբան կառույցներում, ինչպես՝ «**Իրենից ներկայացնում է** յուրօրինակ մի համակարգ» «յուրօրինակ մի համակարգ է», «**Գտնվում են** կապի մեջ»«Կապի մեջ են», «Հիմք է կիրառման **համար**»«Կիրառման հիմք է»:

Անհարկի գործածված սպասարկու բառ(եր)ը կարելի է դուրս թողնել շարադասական փոփոխությամբ, օր.¹ «**Հիմք են հանդիսանում** դրա առավել մանրամասն կարգավորման **համար**» ««Դրա առավել մանրամասն կարգավորման **հիմք են**»:

բ) Խուսափել բառերի ու արտահայտությունների անհարկի կրկնություններից: Խոսքը անտեղի ծանրաբեռնում են նաև **կրկնաբանությունները**. շատ տարածված է որևէ հասկացության տարբեր ձևավորումով կրկնությունը (թաքնված կրկնաբանություն), ինչպես, ասենք՝ չհասկացված օտարաբանության և հայերեն համարժեքի համատեղ գործածությունը, օր.¹ «Մեր ազգային **մտածողությանը և մենթալիտետին** խորթ են բարոյականության այդ կարգի **նորմերն ու կանոնները**»:

գ) Նույնիմաստ բառերի կուտակումը փոխարինել ճիշտ ընտրված մեկ բառով: Օր.¹ «Հարցի վերաբերյալ կա **կարծիքների և տեսակետների բազմազանություն, տարատեսակություն**». ընդգծված բառերի փոխարեն կարելի է գործածել **տարակարծություն բառը**. ասելիքը կդառնա ոչ միայն սեղմ ու հստակ, այլև դիպուկ ու ճշգրիտ. «Հարցի վերաբերյալ կան **տարակարծություններ**»:

դ) Բառը կամ արտահայտությունը փոխարինել հոմանշային կարճ ձևով կամ տարբերակով: Օր.¹ «Անձին պատկանող նյութական արժեքները **պետք է հետ վերադարձվեն նրան**» ««Անձին պատկանող նյութական արժեքները **ենթակա են վերադարձման**»//«...պետք է վերադարձվեն»:

ե) Բառակապակցությունը փոխարինել համապատասխան դերանվամբ, օր.¹ «Հարցը քննարկման առարկա է դարձել պատշաճ իրավական ընթացակարգի պայմաններում: Պատշաճ իրավական ընթացակարգը ենթադրում է...»«...Դա ենթադրում է...», «...ուստի այդպիսի զարգացումից...»«...ուստի դրանից»:

զ) Կրկնվող բառը գործածել փոխանվանաբար, ինչպես՝ «Նշված հատկանիշները բնութագրում էին..., իսկ մյուս հատկանիշները (մյուսները**)...», «Ի**

տարբերություն նախկին քրեական օրենսգրքի՝ («նախկինի/նախորդի») ՀՀ գործող քրեական օրենսգիրքը....»:

է) **Վերլուծական կազմությունները փոխարինել համադրականով:** Կան դեպքեր, երբ խոսքի սեղմությունը, հակիրճությունը պահանջում են գործածել բառային միավորը և ոչ թե բառակապակցությունը, ինչպես՝ փոխադարձ ըմբռնում – **փոխըմբռնում**, վերջին ժամանակներս – **վերջերս**, աշխատանքային կազմ – **աշխատակազմ**, փոխադարձ հարաբերություններ – **փոխհարաբերություններ**: Կամ՝ «գնումների ցուցակ»←«**գնացուցակ**», «ռազմական բեմ»←«**ռազմաբեմ**», «փոխանակում կատարել» ←«**փոխանակել**», «համեմատություն կատարել»←«**համեմատել**»:

Ծան.: Առհասարակ պետք է խուսափել երկար բառեր անհարկի գործածելուց. երկար բառերը համեմատաբար դժվար են արտասանվում և ընկալվում: Խոսքի պարզության և մատչելիության սկզբունքներից ելնելով՝ դրանք կարելի է կամ փոխարինել նույնիմաստ բառակապակցություններով՝ վերլուծական կառույցներով, կամ էլ հոմանշային տարբերակներով: Օր.՝ սահմանաքանակ ⇒ **սահմանված քանակ**, առևտրամիավոր ⇒ **առևտրի միավոր**, ապրանքահագեցվածություն ⇒ **ապրանքային հագեցվածություն**, աշխատանքաբաժանում ⇒ **աշխատանքի բաժանում**, առևտրաներկայացուցիչ ⇒ **առևտրի ներկայացուցիչ**:

ը) **Կապային կառույցները փոխարինել հոլովածներով,** եթե խոսքի բնույթը և բովանդակությունը այդ հնարավորությունը տալիս են. «Երկու օրվա **ընթացքում** պատրաստվեց»←«Երկու **օրում** պատրաստվեց», «խոսել կատարվածի **մասին**»←«խոսել **կատարվածից**», «առնչվում է դրա **հետ**» «առնչվում է **դրան**»:

3.5.2. ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ, ԱՍՈՒՅԹՆԵՐ, ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔԵՐ: Խոսքի հակիրճությունը ապահովում են նաև տեղին գործածված **դարձվածքը, ասույթը, թևավոր խոսքը** (աֆորիզմ, վճռակ) ևն: Օր.՝ «**ջրերն ընկնել**» դարձվածքի փոփոխված գործածությունը հետևյալ նախադասության մեջ էապես խտացնում է ասելիքը. «**Մի՛ գցեք նրան ձեր ջրերը**. Նա այդ ջրերում լողալ չի կարող» (մի՛ ստեղծեք վտանգավոր իրավիճակ): Լավ ձևակերպված խրատական մեկ խոսքը, մանավանդ եթե այն հնչում է հայտնի մարդու շուրթերից, կարող է փոխարինել մի ամբողջ երկարուձիգ նկարագրության կամ բառաշատ խրատաբանության: Հայոց ազգային կենսափիլիսոփայության հզոր դեմքերից մեկի՝ **Գարեգին Նժդեհի** խոսքը սեղմ էր ու հատու՝ զերծ հռետորաբանական կեղծ ու փքուն ձևերից: Ինքը՝ Նժդեհը, չէր սիրում երկարաբանել և նախընտրում էր մտքերը **աֆորիզմներով** արտահայտել: Ահա նրա խորիմաստ մտքերից մի քանի պատահիկներ.

«Երբեմն ժամն աշխատում է վատերի համար, իսկ ժամանակը՝ միշտ էլ և բացառաբար՝ արժանավորի», «Մեր պատմությունը հետ այսու աղետալի սխալների կրկնությունը չպետք է լինի, այլ սրբագրությունը», «Մեր անձի վրա տարած հաղթանակը՝ ահա՛ հիմքը մեր այլ կարգի հաղթանակների», «Ուժը չի պակասում քեզ, այլ ուժեղ լինելու կամքը», «Ինչ որ ընտրողներն են, այն էլ ընտրյալները», «Բախտը նախազգուշացնում է մեզ դավաճանելով», «Աշխատիր, որ փառքը ստվերի պես ընթանա ետևեդ, բայց երբեք՝ առջևեդ», «Դարձար ոչխար՝ պատրաստ են գայլերը»:

Ասույթների, թևավոր խոսքերի այլ օրինակներ՝ «Մարդու սիրտ տանող ամենասուույգ ուղին նրա հետ զրույցն է այն մասին, ինչը նա ամենից շատ է գնահատում», «Հարգանքով վերաբերվեք Ձեր զրուցակցի կարծիքին: Երբեք մի ասեք, որ նա իրավացի չէ», «Որևէ մեկի հետ զրուցելիս խոսակցությունը մի սկսեք այն հարցերի քննարկումով, որոնցում ձեր կարծիքները չեն համընկնում», «Հիշեք, որ մարդու անունը իր համար ամենաքաղցր և ամենակարևոր բանն է ցանկացած լեզվում», «Անկեղծորեն հետաքրքրվեք ուրիշներով» (**Դ. Քարնեգի**), «Մի ջանացեք ապացուցել ավելին, եթե կարելի է բավարարվել քչով. հարկ չկա բարդացնելու խնդիրը» (**Պ. Պորոխովչիկով**), «Ավելի լավ է ոչինչ չասել, քան ասել ոչինչ» (**Ա. Կոնի**), «Խոսքը կիսով չափ ասողինն է, կիսով չափ՝ լսողինը» (**Ս. Քոչարյան**), «Ունկնդիրն ուզում է ոչ միայն հասկանալ բառերի իմաստը, այլև զգալ մարդկային շփումը» (**Հ. Լիմբրան**), «Չի կարելի հարց տալ մի բանի մասին, ինչն ինքնին պարզ է» (**Արիստոտել**), «Չափից ավելի ժամանակ մի վատնեք տարհամոզելու թերահավատներին, մի շփվեք նրանց հետ, ովքեր ձեզ լսելու ցանկություն չունեն» (**Ջ. Սքոթ**), «Բանակցություններին հարկավոր է վերաբերվել, ինչպես խմիչքին. չի կարելի չափից դուրս ճնշել դիմացինին» (**Ջ. Նիրենբերգ**), «Դու ապրես հետաքրքիր ժամանակներում» (**չինական անեծք**), «Դու ինձ հարց ես տալիս, թե՞ անցնում ես նոր դատողության» (**Սոկրատես**), «Փոքր եկեղեցում էլ կարելի է մեծ պատարագ մատուցել» (**Հ. Աբելյան**), «Մարդկային հիշողությունը սարսափելի պարզ է» (**Ս. Ցվայգ**), «Մրցակցությունը սնունդ է հանճարի համար» (**Վոլտեր**), «Կոստյումն է, որ պիտի գեղեցկացնի քեզ» («**Հարսնացու հյուսիսից**» ֆիլմից), «Մոսկվան արցունքների չի հավատում» (ֆիլմի վերնագիր), «Էլ ինչ արահետ, որ տաճար չի տանում» (**Ժող.**) ևն⁵⁶:

3.5.3. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Խոսքին սեղմություն են հաղորդում **հապավումներն** ու **համառոտագրությունները**: Դրանք ստեղծվում են հայերենի ուղղագրության և ուղղախոսության կանոններին համապատասխան: Գործածվում են առավելապես գրավոր խոսքում: Առանձին դեպքերում, խոսքի ճշգրտությամբ և հստակությամբ պայմանավորված, դրանց գործածությունը չի հանձնարարվում հեռուստալեզվում: Հապավումների և համառոտագրությունների առաջացումը թելադրվել է հենց խոսքի սեղմությամբ: Որքան ճապաղ ու ձգձգված խոսք կստացվեր, օրինակ, եթե ԵԱՀԽ-ի մասին գրելիս անընդհատ բացվեր հապավումը՝ **Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհուրդ**: Մյուս կողմից՝ եթե շարադրանքը ծավալուն է, միայն հապավումներով ներկայացնելը միօրինակություն է հաղորդում խոսքին: Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին հոդված գրողը, օրինակ, կարող է ըստ հարմարության գործածել ոչ միայն հապավումը՝ **ԱՄՆ**, այլև **Միացյալ Նահանգներ** կրճատ ձևը, իսկ խոսքային իրադրությամբ պայմանավորված՝ նաև **Նահանգներ** հակիրճ տարբերակը: Ըստ որում, առաջին անգամ գործածելիս խորհուրդ է տրվում հապավումը բացել, մանավանդ եթե այն հանրահայտ չէ:

⁵⁶ Տե՛ս նաև **Վ. Միրզոյան**, Ճարտասանություն, Եր., 2004: **Ա. Միքայելյան**, **Մ. Մարդումյան**, Մտքի հրավառություն, Եր., 2002:

Գրագրության առանձին ձևերում (հաշվետվություն, տեղեկագիր, օրենսգիրք, արձանագրություն ևն), գիտական ենթաոճերում և այլուր **համառոտագրությունները** պարզապես անփոխարինելի գործառույթ ունեն։ Տվյալ հաստատությունը, կազմակերպությունը կամ իրավական այլ անձ անվանելու համար պետք է ընտրել համառոտագրության՝ դրանց իսկ կողմից ընդունված ձևը։ Եվ առհասարակ, համառոտագրությունները հասկանալի պետք է լինեն ընթերցողին (հասցեատիրոջը), երկիմաստություն չպետք է ստեղծեն։

3.5.4. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐՃ ՁԵՎԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ։ Խոսքի սեղմության նշաններից է նաև **քերականական զուգաձևերից կարճերին նախապատվություն տալը** (**գրեցե՛ք<գրե՛ք, ինձանից<ինձնից, ամառվանից<ամռանից** ևն), կապային կառույցների փոխարեն դերբայական ձևերի գործածությունը (**քաղաքական որոշում կայացնելու ժամանակ<... կայացնելիս, աշխատանք կատարելու ընթացքում<...աշխատելիս** ևն), շարահյուսական սեղմ, հակիրճ կառույցների գործածությունը՝ միակազմ նախադասություններ («Ես առաջարկում եմ այդ մասին հարցում անցկացնել և արդյունքների մասին տեղեկացնել») < «Հարցում անցկացնել, արդյունքների մասին տեղեկացնել»), բառ-նախադասություններ («- Դուք վստահ եք, որ այդ հարցին կարող եք լուծում տալ»։ «- Համոզված եմ, որ կարող եմ լուծում տալ այդ հարցին» < «Այո»), շարահարությամբ և գեղչումով կազմված նախադասություններ («Մեկնում է և կվերադառնա մեկ շաբաթից» < «Մեկնում է. կվերադառնա մեկ շաբաթից» ևն)։

Խոսքին սեղմություն է հաղորդում նաև **փոխանունությունը**՝ լավ նմուշները = **լավերը**, ԱՄՆ պաշտպանության նախարարությունը = **Պենտագոնը**, Երևանի բնակչությունը = **Երևանը** ևն։

Խոսքը սեղմ ու հակիրճ է դառնում, երբ հարուստ է լինում հավաստի փաստերով, թվերով, տեղեկություններով, օրինակներով։ Տեղին բերված օրինակը մտքին տալիս է ոչ միայն համոզականություն, այլև հակիրճություն. անհրաժեշտություն չի առաջանում ավելորդ նկարագրությունների։ Միևնույն ժամանակ, սակայն, օրինակների կամ փաստերի անհարկի առատությունը թուլացնում է խոսքի ուժը, հոգնեցնում է լսարանին։ Դրանք պետք է ընտրված լինեն տեղին և չափավոր։ «Չի կարելի սեփական միտքը թաղել դատարկ շատախոսության հեղեղում, եթե, իհարկե, հենց դա չէ Ձեր խոսքի նպատակը» (Ջ. Չեստարա)։ Խոսքի հակիրճությունը չպետք է կառուցվի ի հաշիվ խոսքի պարզության։ «Ճատախոսությունը մտքի աղքատության նշան է։ Իսկ հակիրճությունն էլ լավ է, երբ զուգակցվում է պարզության հետ, որը խոսքի գլխավոր արժանիքն է»⁵⁷։

⁵⁷ Հ. Բաղդասարյան, Հոստոթական խոսքի ուժը, Եր., 1987, էջ 134։

3.6. ՏՐԱՄԱՔԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.6.1. Տեքստի կառուցվածքային և իմաստային բաղադրիչների սերտ կապի ապահովում (125): **3.6.2. Տրամաբանության օրենքների պահպանում (126):** **3.6.3. Տրամաբանական սխալներ (128):**

Խոսքի տրամաբանականությունը հիմնվում է մարդու (լեզվակիրառողի) կենսափորձի և մտածական կարողությունների, ինչպես նաև այն ունակության վրա, որովնա կարողանում է ճիշտ կողմնորոշվել երևույթների պատճառահետևանքային կապերում. կարողանում է դրանք ոչ միայն կռահել ու կանխագգալ, այլև բացատրել: Խոսքի տրամաբանականությունը ապահովող կարևորագույն գործոններ են՝ տեքստի կառուցվածքային և իմաստային բաղադրիչների սերտ կապի ապահովումը, տրամաբանության օրենքների իմացությունը և դրանց գործնական իրացումը, բառընտրության և բառագործածության հմտություններին տիրապետելը: Դրանցից մեկի կամ մյուսի բացակայությունը հաճախ ծնում է տրամաբանական սխալներ:

3.6.1. ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՍԵՐՏ ԿԱՊԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ: Խոսքը պետք է ունենա կուտ կառուցվածք, որը ենթադրում է շարադրանքի կառուցվածքային և իմաստային բաղադրիչների սերտ կապ: Այդ բաղադրիչ տարրերից յուրաքանչյուրը պետք է տրամաբանորեն բխի նախորդից, պայմանավորված լինի նախորդով: Ընտրվում է գլխավոր նյութը, հիմնական թեման, և խոսքի հետագա ամբողջ ընթացքը կառուցվում է դրա շուրջը, ամբողջ ուշադրությունը կենտրոնացվում է դրա վրա: Այսպես կոչված՝ հարակից հարցերը, որոնք այս կամ այն կերպ, այս կամ այն չափով քննարկվում են խոսքում, ի վերջո դարձյալ պիտի ծառայեն հիմնական գաղափարի հաստատմանը, սերտ միասնության մեջ լինեն դրա հետ: Հակառակ դեպքում՝ խախտվում է մտքի բնական ընթացքը, խոսքը դառնում է անհետևողական ու ձգձգված:

Խոսքի կառուցվածքային և իմաստային բաղադրիչների սերտ կապը ապահովելու համար անհրաժեշտ է հետևել տեքստի կառուցման մի քանի կարևոր սկզբունքների.

ա) Պահպանել տեքստի կառուցվածքային բաղադրիչների հերթագայության ընդունված կարգը՝ ներածական մաս (մուտք), հիմնական (միջին) մաս և եզրափակիչ մաս: **Ներածական մասում** պետք է ներկայացվեն այն հիմնական հարցադրումները, որոնց մասին խոսվելու է: Գլխավոր մտքերը պիտի հնչեն կամ ելույթի հիմնական մասի սկզբում, կամ էլ վերջում, քանի որ **միջին մասում** ասվածը սովորաբար մնում է աննկատ՝ միախառնվելով ընդհանուր դիտարկումներին: Մտապահման հոգեբանական օրենքով («фактор края»)՝ այսպիսի դասավորությունը արդյունավետ է: **Եզրափակիչ մասում** տրվում են տրամաբանական ընդհանրացումներն ու եզրակացությունները: Դա ելույթի ամենատպալորիչ հատվածն է, ուստի նպատակահարմար է այդ մասում վերստին անդրադառ-

նալ գլխավոր մտքերին: Այդ հատվածը պետք է լինի կարճ և համոզիչ: **Եզրակացությունը տեքստի «ուժեղ դիրքն է», «վերջին ակորդը»** (Անատոլի Կոնի)⁵⁸:

Խոսքի ճիշտ կառուցման տրամաբանությունը թելադրում է տեքստի մասնատում **պարբերությունների**: Դրանցից յուրաքանչյուրը մի որոշակի փոքրիկ թեմայի ամփոփում է, շարահյուսական ուրույն կառույց: Մասնատումը պիտի լինի նպատակային ու պատճառաբանված: Անհաջող մասնատումը էապես դժվարացնում է նյութի ընկալումը, քանի որ խախտվում է պարբերության թեմատիկ-կառուցվածքային, հետևաբար նաև տրամաբանական ամբողջականությունը: Խորհուրդ է տրվում գործածել համեմատաբար ոչ ծավալուն պարբերություններ: Դրանք ավելի հեշտ են ընկալվում:

բ) Ապահովել տեքստի բովանդակային ամբողջականությունը: Շարադրանքի տրամաբանությունը չպետք է խախտվի, խոսքի ընթացքը չպետք է ընդմիջվի հավելյալ անհարկի մտքերով: Բաղադրիչ նախադասությունները պիտի պահպանեն իմաստային կապը, որը իրականացվում է լեզվական զանազան միջոցներով՝ նախորդ նախադասության բառերի-կրկնություններով, մակբայների, ցուցական և անձնական դերանունների գործածությամբ (**այստեղ, հետո, այդ ժամանակ, վերջապես** ևն), կապերով (**բացի, նման** ևն), միջարկություններով (**ինչպես արդեն ասվել է, վերն ասվածի համաձայն** ևն), նախադասության մեջ բառերի դասավորությամբ, դադարներով, հնչերանգային ելևէջումներով ևն: Օր.՝ ստորև բերվածները քերականորեն ճիշտ նախադասություններ են, բայց դրանցում մտքի տրամաբանական ընթացքը խաթարված է շաղկապների սխալ կիրառության պատճառով. «Վաղը Երևանում սպասվում է 14–16 աստիճան տաքություն, **իսկ** Արմավիրում նույնպես մոտ 14–16 աստիճան տաքություն է», կամ՝ «Ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել բուժանձնակազմի ղեկավարին: Նա այն բացառիկ մարդկանցից է, ովքեր հաճախ ժպտում են, **բայց** և մասնագիտական հմուտ կարողություններ ունեն»:

3.6.2. ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ: Տրամաբանական խոսք կառուցելու համար պետք է **պահպանել նաև տրամաբանության օրենքները**. «Խոսքը պետք է համապատասխանի տրամաբանության օրենքներին» (Արիստոտել): Դրանք չորսն են:

1. Նույնության օրենք: Մի դատողության կամ վերլուծության շրջանակներում **խոսքի առարկան պետք է մնա նույնը**: Խոսելու ընթացքում մի հասկացությունը չպետք է փոխարինել մեկ ուրիշով, մի դատողությունը՝ մյուսով: Հիմնական միտքը կամ առարկան պետք է անցնի խոսքի բոլոր հատվածներով: Մտքերի հետևողական, սահուն ընթացքը խոսքին տալիս է պարզություն, խոսքը դառնում է բնական ու գրավիչ: Եվ հակառակը. եթե մի առարկայից չպատճառաբանված անցում է կատարվում այլ առարկայի, մի թեմայից մեկ այլ թեմայի (կատարվում է **գաղտնափոխում**), ապա շեղվում է մտքի բնական՝ տրամաբանական ուղին, թերի է մնում քննարկման առարկան: Առօրյա հաղորդակցման ժամանակ, օրինակ, զրույցը երբեմն չի կաշում այն պարզ պատճառով, որ կողմերը խոսում

⁵⁸ Տե՛ս www.mgavm.ru/upload/medialibrary/bc6/tyebiactgcf%204.doc

են տարբեր բաներից: Այդպիսի դեպքերում հաճախ են հնչում «Խոսքդ մի՛ փոխիր», «Խոսքդ փոխեցիր», «Խոսքդ կտուրը մի՛ գցիր» արտահայտությունները:

Նույնության օրենքի խախտման բնորոշ օրինակ է հետևյալը: Հայերենի նոր ուղղագրության կողմնակիցների այն պնդմանը, թե հին ուղղագրությունը համեմատաբար դժվար է, վերջինիս պաշտպաններից մեկը, փորձելով հերքել իր ընդդիմախոսներին, արծազանքում է մոտավորապես հետևյալ կերպ. «Ասում են՝ հին ուղղագրությունը դժվար է: Դա բնավ էլ այդպես չէ...», և բերում է ինչ-ինչ փաստարկներ իր պնդումը ապացուցելու համար: Բացահայտորեն խախտվում է նույնության օրենքի պահանջը, թույլ է տրվում գաղտնափոխում. իրականում ոչ ոք չի ասում, թե հին ուղղագրությունը դժվար է, այլ ասվում է, որ հինը դժվար է նորից, իսկ դրանք ակնհայտորեն տարբեր բաներ են: Մի դրույթը փոխելով մեկ ուրիշ՝ ավելի հեշտ հերքելի դրույթով՝ հին ուղղագրության պաշտպանը գիտությամբ թե անգիտությամբ իր համար ստեղծում է ավելի նպաստավոր պայմաններ: Սակայն սկզբնական միտքը գաղտնափոխվում է այլ մտքով, խախտվում է խոսքի տրամաբանական կապը: Նման դեպքերում խզում է առաջանում հաղորդակցվողների միջև: Կորչում է վստահությունը խոսողի նկատմամբ: Դա վկայում է խոսքի անհետևողականության, մտքի անորոշության մասին: Նույնության օրենքը ապահովում է մեր մտքերի **որոշակիությունը**⁵⁹:

Գաղտնափոխումը կարող է կատարվել միտումնավոր՝ սրամիտ խոսք կառուցելու համար: Օր.՝ մի անգամ Անգլիայի դեսպանը, տեսնելով ԱՄՆ նախագահ Աբրահամ Լինկոլնին կոշիկները մաքրելիս, զարմացած հարցնում է. «Այդ ինչպե՞ս. Դուք մաքրում եք Ձեր կոշիկները»: Լինկոլնը պատասխանում է. «Իսկ Դուք հմ կոշիկներն եք մաքրում»: Դեսպանի հարցի իմաստն ակնհայտ է. ինչո՞ւ է Լինկոլն ինքը մաքրում իր կոշիկները (փոխանակ ուրիշները մաքրեն): Լինկոլնը միտումնավոր փոխում է հարցադրման իմաստը (ուշ. դարձրեք պարույկի տեղափոխությանը). կատարում է տրամաբանական սխալ՝ հարցման գաղտնափոխում, որն էլ հիմք է տալիս նրան սրամտելու:

Խոսքի առարկան հաճախ է փոփոխվում բանավիճային խոսքում. այստեղ կարևորություն են ստանում ոչ միայն տրամաբանական, այլև զգացմունքային փաստարկները, և լուրջ բանավեճից խուսափելու միջոց է դառնում անցումը ընդդիմախոսի հայացքների քննադատությունից նրա անձի քննադատության:

2. Հակասության օրենք: Նույն իրողության վերաբերյալ երկու **հակադիր** դատողություններ չեն կարող միաժամանակ ճշմարիտ լինել: «Հավաքվել էին նախորդ տարիների **բոլոր շրջանավարտները**: Չէին եկել մի քանիսը, հիմնականում նրանք, ովքեր տեղեկացված չէին»: Կա տրամաբանական հակասություն. ասվում է, որ եկել էին բոլորը, ապա ավելացվում է, որ մեկ-երկուսը ինչ-ինչ պատճառներով բացակայում էին: Կամ՝ «Դա հայ մանրանկարչության **բացառիկ** նմուշներից մեկն է: Այն **եզակի** երևույթ է». չի կարող եզակի լինել մի բան, որը միաժամանակ ինչ-որ բաներից մեկն է: Մեկ ուրիշ օրինակ՝ «**Լավագույն** արդյունքներ գրանցեց Ռուսաստանի ներկայացուցիչը: Նրանից իրենց ցուցանիշներով հետ չէին մնում նաև մեր երկու մարզիկները»:

⁵⁹ Տե՛ս Գ. Բրուսյան, Տրամաբանության դասընթաց, Եր., 1976, էջ 148:

Հակասության օրենքը գործում է նույնության օրենքի առկայության դեպքում, քանի որ խոսքը պետք է վերաբերի միևնույն առարկային, նույն ժամանակին և հարաբերությանը:

3. Երրորդի բացառման օրենք: Սերտորեն կապվում է երկրորդ օրենքի հետ. կարելի է համարել դրա դրսևորումներից մեկը: Եթե նույն առարկայի մասին կան երկու **հակասող** դատողություններ, ապա դրանցից մեկը ճիշտ է, մյուսը՝ կեղծ: «**Բոլոր** եռանկյունիները հավասարակողմ են» և «**Ոչ բոլոր** եռանկյունիներն են հավասարակողմ»: այս դատողություններից մեկը՝ երկրորդը, ճիշտ է, քանի որ փորձով ապացուցված է, որ այն համապատասխանում է օբյեկտիվ իրականությանը: **Երկու հակադիր** դատողություններ կարող են միաժամանակ սխալ լինել: Օր.՝ «Բոլոր եռանկյունիները հավասարակողմ են»//«Ոչ մի եռանկյունի հավասարակողմ չէ»:

4. Բավարար հիմքի առկայության օրենք: Դատողությունը պետք է ունենա բավարար հիմնավորվածություն, փաստարկում: Այն համարվում է ճշմարիտ, եթե նրա ճշմարտացիությունը ապացուցված է: Լսողը պետք է համոզվի, որ ասվածը ճշմարիտ է: Հիմնավորում(ներ)ը պետք է լինի (լինեն) ավարտուն և ամբողջական: Չպետք է լինի այնքան հակիրճ, որ լավ չհասկացվի, ոչ էլ երկարաբան, որ հիմնական ասելիքը ստվերի: Օր.՝ «Բառագիտությունը լեզվաբանության բաժին է, որն զբաղվում է **բառապաշարի իմաստային և ծագումնաբանական շերտերի** ուսումնասիրությամբ»։ այս դատողությունը բավարար հիմնավորում չունի, քանի որ նեղացված է բնութագրվող հասկացության բովանդակությունը. բառագիտությունը ունի ուսումնասիրության նաև այլ ոլորտներ՝ բառակազմություն, բառարանագիտություն, դարձվածքաբանություն ևն:

Բավարար հիմքի առկայությունը ենթադրում է լեզվական ու արտալեզվական ամենատարբեր միջոցների կիրառություն՝ փաստեր ու փաստարկներ, հղումներ հեղինակավոր աղբյուրներին, վավերագրեր, թվային տվյալներ, սեփական փորձից կամ հայտնի մարդկանց կենսափորձից բերված օրինակներ, լսարանի տրամադրության, նրա խղճի ու զգացմունքների վրա ներազդելու միջոցներ, հեղինակությունների վկայակոչում ևն:

Տրամաբանության այս օրենքը մտածված խախտելով՝ ըստ իրադրության կարելի է ստեղծել հումորային խոսք կամ անմտություն. ֆուտբոլի խաղից առաջ մեկին հարցնում են. «Դեմը» կհաղթի, թե՞ «Բարսելոնան»: Պատ.՝ «Իհարկե «Բարսելոնան»», և «հիմնավորումը» (բավարար հիմքը). «Որովհետև ես եղել եմ Բարսելոնացիում. Բարսելոնան ավելի սիրուն քաղաք է»:

3.6.3. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ: Որպեսզի հեշտությամբ կարողանանք հետևել սեփական խոսքի տրամաբանականությանը, պետք է իմանանք, թե հատկապես ինչ պատճառներով և որ դեպքերում են առաջանում սխալները: Դրանք առավելապես հանդիպում են **բառագործածության մեջ և շարահյուսական կառույցներում**⁶⁰:

⁶⁰ Հմմտ.՝ **И. Голуб**, Русский язык и культура речи, М., 2007, էջ 332–347:

ա) Տարաբնույթ հասկացությունների համադրություն կամ հասկացությունների շփոթ: Համեմատվող կամ հակադրվող երևույթները տարբեր բնույթի են՝ տարասեռ: Օր.՝ «Չարենցի ստեղծագործական որոնումների ուղին տարբեր է իր ժամանակակիցներից». ուղի հասկացությունը հանդիպադրվում է Չարենցի ժամանակակից գրողներին և ոչ թե նրանց անցած ուղուն կամ ճանապարհին: Կամ՝ «ՀՀ գիտակրթական համակարգի զարգացման տեմպերը ակնհայտորեն գերազանցում են հարևան երկրներին՝ Վրաստանին և Ադրբեջանին». գերազանցում են ոչ թե այդ երկրներին, այլ այդ երկրների նույն համակարգերի զարգացման տեմպերին: «Սիրիայի հայկական կրթօջախների քանակը մի քանի անգամ գերազանցել է Լիբանանի կրթօջախները (←կրթօջախների քանակը)»:

Մի հասկացությունը թուրիմացաբար գործածվում է մյուսի փոխարեն, օր.՝ «Անհամբեր սպասում եմ իմ ծննդյան օրվա մոտենալուն» (ոչ թե մոտենալուն, այլ օրվան), «Մեծ թիվ է (←են) կազմում հոգեմետ դեղերի և թմրանյութի հայտնաբերումը (ոչ թե հայտնաբերումը, այլ հայտնաբերման դեպքերը)», «Որքանի՞վ է նպատակահարմար շտեմարանների գոյության հարցը» (ոչ թե հարցը, այլ գոյությունը):

Հասկացությունների շփոթը հաճախ առաջանում է բառը բաց թողնելու կամ խոսքը ոչ լիարժեք ձևակերպելու հետևանքով: Օր.՝ «Հայաստան–Վրաստան սահմանագծում երկու հայ ձերբակալվել են թմրանյութի պատճառով». ձերբակալվել են ոչ թե թմրանյութի, այլ թմրանյութ տեղափոխելու (կամ օգտագործելու) պատճառով:

բ) Բառիմաստի չիմացություն կամ սխալ բառագործածություն: Օր.՝ «Ռուսական ռազմաբազայում խնդիրներ կան, որոնք պետք է բուժել». ընդգծված բառը ակնհայտորեն իր տեղում չէ, քանի որ խնդիրը լուծվում է և ոչ թե բուժվում: Կամ՝ «Մենք այցելեցինք հանգուցյալների հարազատներին և ավետեցինք մեր ցավակցությունը», «Թշնամուն ամեն գնով պետք է սանձազերծել և թույլ չտալ, որ անցնի ակտիվ գործողությունների», «Նրանք հասան իրենց նպատակին, իրականացան նրանց ծրագրերը. ասել է թե՛ նրանց բոլոր հույսերն ի դերև ելան», «Լավ չէ, որ մեր գիտաշխատողների մեծ մասը գրեթե չի զբաղվում գիտությամբ և ստեպ–ստեպ է հանդես գալիս գիտական հոդվածներով», «Եղեռնը առիթ դարձավ Սփյուռքի ձևավորման». այս մտքերի հեղինակները ակնհայտորեն չգիտեն ընդգծված բառերի իմաստները և դրանք գործածել են հակառակ նշանակությամբ կամ պարզապես այլ բառերի փոխարեն: Ստեղծվում է տրամաբանական անճշտություն. մի դատողությունը հակասում է մյուսին: Տեղին է հիշել Լև Տոլստոյի անկեղծ խոսքը, որ եթե ինքը միապետ լիներ, կընդուներ օրենք, ըստ որի՝ այն գրողը, որը իր գործածած բառերի նշանակությունը չի կարողանում բացատրել, պետք է զրկվի գրելու իրավունքից և ստանա մտրակի հարյուր հարված:

գ) Միմյանց «ներառող» հասկացությունների համատեղ գործածություն: Օր.՝ «Պետք է խթանել մշակույթի, գիտության, գրականության և արվեստի զանազան տեսակների զարգացումը». մշակույթ–ը արդեն իսկ ներառում է արվեստի զանազան տեսակներ–ը, և հարկ չկար բնավ դրանք առանձնաբար ընդգծելու: Այդ շարքում կարող էր չհիշատակվել նաև գրականություն բառը: Մեկ այլ օրինակ՝ «Հոմանիշները ունեն իմաստային, նրբերանգային և կիրառական այլ տարբերու-

թյուններ»։ Նախադասությունը այնպես է ձևակերպված, որ թվում է, թե **իմաստային և նրբերանգային** տարբերությունները կիրառական տարբերության տեսակներ են, որը ոչ միայն տրամաբանական չէ, այլև սխալ է։ Նախադասությունը կարող էր ձևակերպվել այսպես՝ «Հոմանիշները ունեն իմաստային (կամ՝ նրբիմաստային) և կիրառական (կամ՝ գործառական) տարբերություններ», կամ՝ «Հոմանիշները ունեն իմաստային, կիրառական և այլ տարբերություններ»։

դ) Տարասեռ դասակարգում։ Դասակարգվող, համեմատվող կամ հակադրվող երևույթները նույն բնույթի չեն։ Օր.՝ հայ քերականագիտության մեջ երբեմն քննադատության է արժանանում դերանունների ներխոսքիմասային դասակարգման ընդունված ձևը, ըստ որի՝ դերանուն կոչվող բառերի մի խումբը բնորոշվում է հնչերանգով (հարցական դերանուններ), մյուսը՝ անձ ցույց տալու հատկանիշով (անձնական դերանուններ), երրորդները՝ ժխտման հարաբերությամբ (ժխտական դերանուններ) ևն։ Չի պահպանվում դասակարգման սկզբունքի միասնականությունը. եթե կան ժխտական դերանուններ, ապա մյուս խումբը պետք է լինի ոչ ժխտական (դրական), կամ եթե մի խումբը բնորոշվում է անձ ցույց տալու հատկանիշով, մյուսը նույն տրամաբանությամբ պետք է բնութագրվի ոչ անձ (չանձ) ցույց տալու հատկությամբ, և այսպես շարունակ։

Կամ՝ «Մեր գինվորների պատասխան արձագանքը եղել է մի տեղ շատ **արագ և կտրուկ**, մեկ այլ տեղ՝ **որոշ զոհերի գնով**»։ դատողության առաջին մասը ենթադրել է տալիս, որ **մեկ այլ տեղ**–ին պիտի հաջորդեր նույն որակի բնորոշում, ասենք, օրինակ՝ **դանդաղ, որոշ ուշացումով**։ **Որոշ զոհերի գնով**–ը համասեռ կողմ չէ։ Այլ օրինակ՝ «Հայ մարդուն հավասարապես հոգեհարազատ են հույն Սոֆոկլեսը և իտալացի Դանթեն, ռուս Տուրգենևը և գերմանացի Հայնեն, **Սերվանտեսը և Շեքսպիրը**»։ քերականորեն ճիշտ ձևակերպված այս նախադասության մեջ տրամաբանական անճշտություն կա. թվարկվող առաջին չորս հեղինակները բնութագրվում են որոշակի հատկանիշով (ազգությամբ), մյուս երկուսը՝ ոչ։ Մինչդեռ խոսքի տրամաբանությունը կառուցված է գաղափարական հենց այդ հենքի վրա, այն է՝ համաշխարհային գրականության բոլոր մեծերն էլ, անկախ ազգությունից, իրենց արվեստի ուժով հոգեհարազատ են հայ մարդուն։

ե) Սխալ շարադասություն։ Օր.՝ «Շեքսպիրի երկերը թարգմանվել են բազում **լեզուներով, որոնք** ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ, սրտամոտ են շատերին»։ **որոնք**–ը լրացնում է **լեզուներ**–ին. մտքի տրամաբանական ընթացքը խաթարվում է։ Ճիշտ է՝ «Շեքսպիրի երկերը թարգմանվել են բազում **լեզուներով**։ Ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ, սրտամոտ են շատերին»։

Անտրամաբանականությունը երբեմն գործածում են որպես ոճական հնարանք՝ **կոմիկական տպավորություն կամ սրամիտ ու բովանդակալից խոսք ստեղծելու համար**։ Տարիներ առաջ Երևանում Գ. Սունդուկյանի արձանի բացման առիթով դերասան Միեր Մկրտչյանին հարցնում են՝ նման է արդյոք արձանը իր բնօրինակին, դերասանը պատասխանում է. «Այո, շատ. մանավանդ **ծայնը**»։ Բնորոշ օրինակ է Համաստեղի տված բնութագրությունը իր պատմվածքի գյուղացի հերոսներից մեկին. միմյանց հետ որևէ առնչակցություն չունեցող հասկացություններ իրար կողքի են դրվում որպես համարժեքներ. «Թորիկ Դուկաս մյուս բենճպերներուն պես շատ զբաղում չէր։ Գիշերը ցորենին խառնելու

չափ գործ չունեն։ Ուներ երեք արտ, երկու եզ, **մեկ կին** և **մեկ աչք**. ահա բոլորը»։ Այլ օրինակներ՝ «Ունեմ երկու ընկեր. **մեկը** մասնագիտությամբ **մաթեմատիկոս է, մյուսը՝ երգվյալ ամուրի**», «Այդ աղջիկն օժտված էր **սուր հումորով** և **հարուստ հարազատներով**», «Ունի **ավտոմեքենա, առանձնատուն** և քաղաքական կայուն **հայացքներ**»։

Բարդ շարահյուսական կառույցով ձևակերպված տրամաբանական խոսքի դասական օրինակ է Հուլիոս Կեսարի գնահատականը Ցիցերոնին. «Նրա հաղթանակն ու փառքի պսակները առավել արժանավոր են զորավարի հաղթանակից ու փառքի պսակներից, որովհետև հռոմեական ոգու սահմաններն ընդարձակողը նախապատվելի է նրանից, ով ընդարձակել է հռոմեական տիրապետության սահմանները»։

3.7. ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ–ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

3.7.1. Հեջերանգ (132): 3.7.2. Հոմանշություն (135): 3.7.3. Աստիճանավորում (138): 3.7.4. Համանունություն (139): 3.7.5. Հարանունություն (140): 3.7.6. Հականշություն և հակադրություն (140): 3.7.7. Բառախաղ (143): 3.7.8. Շրջասույթ (145): 3.7.9. Ավելադրություն և կրկնաբանություն (147): 3.7.10. Նախադասության փոքրերակային ձևեր կամ փոխակերպ (148): 3.7.11. Համանիշ շարահյուսական կառույցներ (151): 3.7.12. Անշաղկապություն (156): 3.7.13. Բազմաշաղկապություն (156): 3.7.14. Չեղջում (157): 3.7.15. Մասնաբաժանում (պարզեցացիա) (157): 3.7.16. Ճարտասանական հարց (158): 3.7.17. Ճարտասանական բացականչություն (158): 3.7.18. Չուղադրություն (159): 3.7.19. Խաչաձևում (159): 3.7.20. Մեղմասություն (159): 3.7.21. Չափազանցություն (162): 3.7.22. Նվազաբանություն (162): 3.7.23. Նրբաբանություն (163): 3.7.24. Շրջադասություն (164): 3.7.25. Հեգնանք (164): 3.7.26. Պարադոքս (165): 3.7.27. Համեմատություն (166): 3.7.28. Փոխաբերություն (167): 3.7.29. Մակդիր (169): 3.7.30. Անձնավորում (170): 3.7.31. Փոխանունություն (171): 3.7.32. Համըմբում (172): 3.7.33. Փոխարկում (172):

Արտահայտիչ, պատկերավոր խոսքը անհամեմատ ազդեցիկ է, ուժեղ, հարստացնում է խոսքի բովանդակությունը, զորացնում է արդյունավետությունը։ Ոչ միայն ներագծում է մտքի վրա, այլև արթնացնում է նորանոր զգացումներ, վառում է երևակայությունը։ Դրանով խոսքի առարկան լսարանի համար դառնում է ավելի հետաքրքիր, իսկ հաղորդվող միտքը՝ ավելի ընկալելի։

Խոսքի արտահայտչականությունը պայմանավորող լեզվական միջոցները սովորաբար տարանջատում են պատկերավորման և արտահայտչական տեսակների⁶¹։ Առաջինների բնորոշ հատկանիշը համարվում է պատկերի ստեղծումը. դրանք առավելապես **դարձույթներն են** (համեմատություն, փոխաբերություն, փոխանունություն, հեգնանք, չափազանցություն, մակդիր, անձնավորում, խորհրդանիշ ևն)։ Երկրորդների համար իբրև տարբերակիչ հատկանիշ է առանձնացվում սովորական չեզոք խոսքից հուզականությամբ կամ արտահայտչական այլ նրբե-

⁶¹ Տես Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984: Ա. Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000: Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2007: Թ. Շահվերդյան, Ոճագիտություն, Եր., 2010 ևն։

րանգներով տարբերվելը. դրանք առավելապես **բանադարձումներն են** (հարանունություն, աստիճանավորում, կրկնաբերություն, հակադրություն, բազմաշակապություն, զեղչում, բառախաղ, ճարտասանական հարց, շրջասույթ, շրջադասություն ևն):

Այլ մոտեցմամբ, որը վերջին շրջանում առավել ընդունված է, այդ տեսակները դիտարկվում են միասնաբար՝ որպես պատկերավորման կամ արտահայտչական կամ պարզապես՝ պատկերավորման-արտահայտչական միջոցներ: Բոլոր դեպքերում, տարաբնույթ անվանումներից ու դասակարգումներից լեզվական այդ միջոցների բնույթն ու բովանդակությունը և դրանց նկարագրությունը չեն փոխվում:

Դարձույթներն ու բանադարձումները, այսինքն՝ խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցները, դրսևորվում են լեզվի բոլոր մակարդակների միավորներով՝ հնչյունաբանությունից մինչև շարահյուսություն:

3.7.1. ՀՆԶԵՐԱՆԳ (լատ.՝ *intonare*՝ բարձր արտասանել): Բանավոր խոսքի կարևորագույն տարրերից է, պայմանավորվում է մի շարք գործոններով՝ խոսողի անհատականությունը, հաղորդման տեսակը, իրադրությունը, խոսողի հոգեվիճակը, խոսքի կառուցվածքը, լսարանի (խոսակցի կամ խոսակիցների) սոցիալ-հոգեբանական կազմը ևն: Ունի իր դրսևորման կոնկրետ ձևերը՝ արտասանական ավելի փոքր տարրերը՝ **ձայնի տոնը, տեմպը** կամ **արագությունը, ելևէջումը, դադարը** ևն:

Ձայնի տոնը (հուն.՝ *tonos*՝ բարձրացում, շեշտ): Ձայնի բարձր և ցածր լինելն է: Դա էլ իր հերթին պայմանավորված է համապատասխան իրավիճակով՝ գաղտնիությունը, լսարանին հասուլինելու հնարավորությունները, հանդիսավորությունը, հուզված վիճակը ևն: Բնական է, օրինակ, որ հանդիսությունների ժամանակ, պաշտոնական արարողություններում, դատարանում կամ պարզապես մեծ լսարանի առաջ խոսողի ձայնը հնչի որոշակի բարձր տոնով: Խոսքի կարևոր պահերին կարելի է խոսել դանդաղ և փոքր-ինչ բարձր՝ որոշ հուզական երանգ տալով խոսքին: (Չարդարացված հուզականությունը, կեղծ ներշնչանքը կամ ոգևորությունը ակնհայտորեն թուլացնում են խոսքի ուժը): Անհարկի բարձրախոսությունը անբարենրթության նշան է: Ձայնը պետք է հարմարեցնել լսարանին, իրադրությանը, ունկնդիրների քանակին, նյութի բովանդակությանը. պետք է կարողանալ տիրապետել ձայնին: Բայց մյուս կողմից՝ անտեղի ցածր խոսելը թուլացնում է մտքի ընկալումը, ստեղծում է լարվածություն և հոգնեցնում է խոսակցին:

Ձայնի կամ խոսքի **տեմպը** (խ.՝ < *tempo* < լատ.՝ *tempos*՝ ժամանակ) կամ **արագությունը**: Խոսքի միջին արագությունը ընդհանուր 120–140 բառ է: Բառը կամ նախադասությունը, սակայն, կարող է արտասանվել արագ կամ դանդաղ՝ պայմանավորված զանազան հանգամանքներով: Օր.՝ բանավիճային խոսքը արագ է, կարևոր լուրը կամ հիմնական միտքը, ամփոփիչ խոսքը հաղորդվում են համեմատաբար դանդաղ, գիտահանրամատչելի հաղորդման համար նույնպես նախընտրելի է խոսքի դանդաղ ընթացքը ևն: Չպատճառաբանված դանդաղ կամ արագ

խոսքը հոգնեցուցիչ է, թուլանում է ընկալման ուժը. ստեղծվում է տհաճ տպավորություն:

Ելևէջումը լայն առումով ներառում է տրամաբանական շեշտը, նախադասության հնչերանգները (պատմողական, հարցական, հրամայական, բացականչական), խոսքի հուզական-զգացական տատանումները, որոնք կարող են արտահայտել ամենատարբեր նրբիմաստներ՝ ցավ, ափսոսանք, ուրախություն, սպանալիք, հանդիմանություն, կարգադրություն ևն: Օր.՝ «Արցախի⁽¹⁾ հարցը, անցնելով երկա⁽²⁾ թուժի՞գ քննարկումների ճանապարհ, վերջապե⁽³⁾ս գտնելու⁽⁴⁾ է իր լուծումը»: Ձայնի բարձրացումը և ցածրացումը բազմազան են դարձնում խոսքի հնչողությունը: Բայց դա պետք է կատարվի զգուշորեն՝ խոսքի թեմային, իրավիճակին, հանգամանքներին և դրանց փոփոխությանը համապատասխան ու համահունչ:

Ռիթմը (հուն. *rhythmos*՝ **հոսել** բառից) խոսքի ներդաշնակ ընթացքն է, որ ուղղված է գաղափարի տրամաբանական զարգացմանը, միտքը հետևողականորեն կառուցելուն: Իբրև այդպիսին՝ այն բնականաբար հատուկ է խոսքի ցանկացած տեսակի, լինի դա բանավոր թե գրավոր, արձակ թե չափածո: Օր.՝ խոսքի ռիթմը պահպանելու նշաններ են ելույթի կամ զրույցի ժամանակ այս կամ այն երևույթը պայմանավորող զանազան գործոնների հետևողական ու պարբերական քննարկումները տարբեր տեսանկյուններից:

Չափածո խոսքում ռիթմը տաղաչափական հնար է, որը ռիթմական տարրերի (ոտքերի, հատաձևերի, տողերի) համաչափ կրկնությամբ երաժշտականություն է հաղորդում ստեղծագործությանը, ինչպես հետևյալ երկտողում՝

Ես եկել եմ / դարերից / ու գնում եմ / հաղթական
Դեպի դարերը / նորից՝ / դեպի վառվող / Ապագան (ԵԶ):

Դադար: Խոսքի հնչյունական շղթայում որոշակի հատվածների՝ հնչաբառ, հնչանախադասություն, հնչաշարույթ ևն, առանձնացումն է այս կամ այն նպատակով: Ընդունված է տարբերակել դադարի երկու հիմնական տեսակ՝ **հոգեբանական և տրամաբանական**:

ա) Հոգեբանական դադար: Ասվածի հանդեպ զանազան վերաբերմունք արտահայտելու հնչյունական միջոց է. հարստացնում է խոսքը. ուշադրություն է գրավում («Այդ կազմակերպության աշխատանքը **ան...արդյունավետ** է»), հանդիսավորություն է հաղորդում («Ես... այս պահին... ուզում եմ... ի լուր ամենքի... հայտարարել... որ վայր եմ դնում լիազորություններս»), հուզական է դարձնում խոսքը կամ պարզապես գեղարվեստականություն է հաղորդում դրան («Պատմության քառուղիներով մենք քայլել ենք երկար, Անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար» (ԵԶ):

բ) Տրամաբանական դադար: Սա հնչերանգի օբյեկտիվ դրսևորումներից է, շեշտում է մտքի ավարտվածությունը և հաջորդում է հնչաշարույթին՝ բառակապակցությանը, պարբերույթին կամ նախադասությանը: Առավելաբար վերաբերում է խոսքի ճշտությանը և ճշգրտությանը:

Օր.[՝] եթե հատկացուցիչի և հատկացյալի միջև լինում է գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ բառով արտահայտված այլ անդամ, որը կարող է ընկալվել իբրև հատկացյալ, ապա իմաստային հնարավոր շփոթը կանխելու համար բանավոր խոսքում որոշակի դադար է տրվում, որը գրավոր խոսքում արտահայտվում է բութով. «**Վարչապետի՝** տնտեսական հանձնաժողովի նիստում արտասանած **ճառը...**», «**Օմբուդսմենի՝** դրամաշորթության վերաբերյալ ներկայացրած **տվյալները...**», «**Պողոսյանի՝** թերթերից մեկին տված **հարցազրույցը...**»: Ի դեպ, խոսքը առավել սահուն հնչեցնելու համար այս կառույցները կարելի է ձևակերպել այլ շարադասությամբ, ինչպես՝ «Տնտեսական հանձնաժողովի նիստում **վարչապետի** արտասանած **ճառը...**», «Դրամաշորթության վերաբերյալ **օմբուդսմենի** ներկայացրած **տվյալները...**», «**Պողոսյանի** տված **հարցազրույցը** թերթերից մեկին ...»:

Խոսքը որոշակի դադարով է արտասանվում նաև այն դեպքում, երբ հատկացուցիչի և հատկացյալի միջև լինում է ներգործական սեռի բայի հարակատար դերբայով արտահայտված անդամ, որը կարող է հատկացուցիչի հետ միասին ընկալվել իբրև դերբայական դարձված (գրավոր խոսքում դրվում է բութ). «Մեղադրող **կողմի՝** մոռացության մատնված **հայցադիմումը...**», «**Գործի՝** միայն այդ հանգամանքներով պայմանավորված **քննությունը...**»: Այս կառույցների հոմանշային տարբերակներն են՝ «Մեղադրող կողմի հայցադիմումը, որը վաղուց մոռացության է մատնվել, ...», «Գործի քննությունը, որը միայն այդ հանգամանքներով է պայմանավորված, ...»:

Տրամաբանական դադար է տրվում մտքի շփոթից խուսափելու համար: Օր.[՝] հարանունների կամ հնչակառուցվածքով մոտ բառերի (պահպանել–պաշտպանել, հրծիգ–հրածիգ, կարճել–կառչել, պատվեր–պատվար, վարկ–վարգ–վարք, գիրք–գիրկ)՝ առանց անհրաժեշտ դադարի արտասանությունը կարող է տարընթերցման պատճառ դառնալ: Նույնիսկ գրավոր խոսքում անուշադրության պատճառով շփոթություն կարող է ստեղծվել արտասանությամբ մոտ կամ հարանուն հատուկ անունների դեպքում՝ **Ավստրիա / Ավստրալիա, Արմենիա** (Հայաստան) / **Արմինիա** (Հայաստան կամ Արմինիա վարչական շրջան), **Արտաշատ** (<< քաղաք) / **Արտաշար** (գյուղ << Արմավիրի մարզում), **Բերկի** (գյուղ Արմ. Հայաստանում) / **Բերկրի** (գավառ Արմ. Հայաստանում), **Կարիկ** (անձնանուն) / **Գարիկ** (անձնանուն) ևն:

Իմաստային անճշտություն է առաջանում նաև այն դեպքում, երբ իրար հաջորդում են բառեր, որոնցից մեկի վերջը հնչյունական կազմով նույնանում է մյուսի սկզբին՝ **հմայիչ չէ – հմայիչ է, հարցեր – հարց էր, վկաներ – վկան էր:**

Շարահյուսորեն տրոհված կառույցները բանավոր խոսքում ընկալելի դառնալու համար արտասանվում են որոշակի դադարով: Օր.[՝] քաղաքական մեկնաբանը հեռուստատեսությամբ հնչեցնում է հետևյալ նախադասությունը. «[Թուրքիան փորձում է իր հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել],– Օքսֆորդի համալսարանում] հայտարարեց Թուրքիայի արտգործնախարարը»: Եթե այս նախադասության՝ փակագծերում առնված հատվածը արտասանվի առանց դադարի՝ միասին, ապա կստացվի, որ Թուրքիան այդ հարաբերու-

թյունները հաստատում է հիշյալ համալսարանում, որը բովանդակային անճշտություն է կամ գոնե ոչ ճշգրիտ խոսք:

Արտասանության ժամանակ տրվող դադարը, որը գրավոր խոսքում արտահայտվում է բութով, ճշգրտում է նախադասության իմաստը նաև այն դեպքում, երբ միմյանց հաջորդող կամ իրար մոտիկ գտնվող բառերը, իրար հետ իմաստային առնչություն ունենալով, ստեղծում են երկիմաստություն, օր.⁶² «Դիմեք մի ուրիշ՝ **հայտնի** փաստաբանի» և «Դիմեք մի ուրիշ **հայտնի** փաստաբանի» նախադասությունները իմաստով էապես տարբերվում են միմյանցից: Առաջինը նկատի ունի հայտնի փաստաբանի դիմելու հանգամանքը, երկրորդը՝ դարձյալ հայտնի, բայց ուրիշ փաստաբանի:

Հոգեբանական դադարի ձևերից մեկը **մասնատումն է** (պարզեցացիան):

3.7.2. ՀՈՄԱՆՇՈՒԹՅՈՒՆ: Իմաստով համարժեք կամ հարաբերակից լեզվական միջոցների (հոմանիշների) ամբողջությունն է: Խոսքի արտահայտչական և պատկերային որակները բարձրացնելու լեզվական հիմնական միջոցներից է⁶²:

1. Հոմանիշների գործածությունը խոսքին հաղորդում է բազմազանություն. նույն բառը շարադրանքում չկրկնելու և խոսքի միօրինակությունից խուսափելու համար հաճախ դիմում ենք ոչ միայն փոխարինող բառերի (օր.⁶² դերանունների, փոխանունների) օգնությանը, այլև գործածում ենք բառի հոմանշային տարբերակ(ներ)ը: Օր.⁶² «Ակնհայտ է, որ հորիզոնի վրա, որ(ը) (**←ինչը**) խորհրդանշում է...», «**Իհարկե**, երևույթը մեզանում սկսում է տարածվել, և դրա հետագոտության անհրաժեշտությունն **իհարկե** (**←անշուշտ**) կար»:

Ծավալուն շարադրանքում միօրինակությունից խուսափելու համար համագործական բառերի փոխարեն կարելի է կիրառել դրանց չեզոք տարբերակները (առթիվ // առիթով // կապակցությամբ, վստահաբար // վստահորեն, որովհետև // քանի որ, իրոք // իսկապես, քանի անգամ // շատ անգամ), իսկ ոճական լիցք ունեցողների փոխարեն՝ դրանց ոճական համարժեքները (հանուն // ի շահ, քանիցս // երիցս // բազմիցս, քանզի // զի, իրավ // իրավամբ // հիրավի, բնավ // բոլորովին):

Հոմանշային տարբերակը, ինչպես գիտենք, կարող է արտահայտված լինել նաև բառակապակցությամբ: Օր.⁶² «ՀՀ վարչապետը երեկ հանդիպում ունեցավ Ֆրանսիայի վարչապետի (**←իր պաշտոնակցի**) հետ», «ՀՀ արտգործնախարարը (**←Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը**) հանդես եկավ մամուլի ասուլիսով»:

2. Հոմանշային անհրաժեշտ տարբերակի ընտրությունը խոսքը դարձնում է ճշգրիտ ու համոզիչ: Տարբերակը ընտրելիս հեղինակը առանձնահատուկ կարևորություն է տալիս դրա բովանդակային և արտահայտչական նրբերանգներին. ընտրված տարբերակը որքանով է համոզիչ կամ ավելի մոտ նկարագրվող

⁶² Բառապաշարի իմաստային խմբերի արտահայտչականությունը հմնտ. **Л. Богданова, Стилистика русского языка и культура речи, М., 2011:**

երևույթին, ինչ չափով է արտահայտում նրա բուն էությունը: Օր.[՝] **կերտել, արարել, ստեղծել, հորինել, հնարել, ծնել, երկնել** հոմանշային շարքից հետևյալ նախադասության մեջ ամենահարմարը **կերտել** բառի գործածությունն է. «Մարդը բանական արարած է, և ինքն է **կերտում** իր կյանքը»: այս նախադասության մեջ **արարել**-ը վերամբարձ է, **ստեղծել**-ը՝ պարզունակ, **հորինել**-ը և **հնարել**-ը՝ իմաստային առումներով անճիշտ, **ծնել**-ը և **երկնել**-ը՝ **կյանք**-ի հետ անկապակցելի: Կամ՝ **ծագել, ստեղծվել, ձևավորվել, առաջանալ, առաջ գալ**. «Քննարկման ժամանակ սկսված վիճաբանությունը **ծագել էր** կարծիքների թերընկալումներից»:

«Անուշ»-ում որդեկորույս մոր ծանր վշտի նկարագրությունը Հ. Թումանյանը սկզբնապես ներկայացրել է հետևյալ կերպ. «Մեռած իգիթի ծեր մայրիկն է նա, Հավար է կանչում, բարձրածայն լալիս...»: Ակնհայտորեն թույլ է պատկերը. բնավ չես զգում վշտահար մոր ծանր ցավի ողբերգականությունը. **մեռած իգիթ, ծեր մայրիկ, հավար կանչել, բարձրածայն լալ**՝ սովորական տող ու բառեր են: Բոլորովին այլ բան է ասում մշակված տարբերակը. «Մեռած չորանի պառավ նանն է նա, Ցավից խելագար բառաչում, լալիս...»: **Իգիթ**-ը դարձել է **չորան, ծեր մայրիկ**-ը՝ **պառավ նան**. շատ ավելի տեսանելի է դառնում նահապետական, ավանդական կյանքի ջերմությամբ ու սիրով լցված մոր և որդու անբաժան կապը: Եվ խոսքի այս շղթայում տրամաբանական է հնչում ոչ թե սոսկ **հավար կանչել**-ը կամ **բարձրածայն լալ**-ը, այլ վշտի ցավից արդեն խելագար ու խելակորույս մոր բնագլորեն ու կենդանաբար **բառաչել**-ը:

3. Հոմանշային տարբերակի ճիշտ ընտրությամբ ստեղծվում է ձևաբովանդակային համապատասխանություն: Օր.[՝] տարբեր տեքստերում Թումանյանը գործածում է նույն հասկացության գրական, բարբառային և օտարալեզու տարբերակը՝ ընտրությունը պայմանավորելով նյութի բովանդակությամբ և նկարագրվող երևույթի հատկանիշներով, ինչպես՝ «Բաց արին տեսան գրած **զակոնում**, Թե չորան Չատին Սիբիր է գնում». ցարական Ռուսաստանի վարած քաղաքականության մասին է խոսքը. տեղին է հոմանշային օտար՝ ռուսերեն տարբերակի գործածությունը: «**Աղաթ** կա, սակայն, էն մութ ծորերում...». դարերով հաստատված ժողովրդական ավանդույթի մասին է խոսքը: «**Ոչ օրենք** գիտի, ոչ **կարգն** ու **լեզուն**, Բերանը կապած սարի անասուն...» (ՀԹ). հերոսի շփումը օրենքի մարդկանց հետ է, ուստի տեղին է գրական բառի գործածությունը: Այլ օրինակներ՝ «Ապա կատաղած՝ հանդուգն անեծքով Նա **հարձակվեցավ** երկնքի դիմաց...» «Ու նա կատաղած հանդուգն անեծքով **Ծառս եղավ** դուշման երկնքի դիմաց» (ՀԹ), «Ու **կոհ՛վ, կոհ՛վ, կոհ՛վ** (= պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր) երգեցի» (ԴՎ):

4. Հոմանիշների համատեղ գործածությունը ամբողջական և համակողմանիորեն է բնութագրում առարկան: Հոմանշային շարքի յուրաքանչյուր անդամ մի տեսակ առանձնացնում, բնութագրում է առարկայի կամ գործողության մի որոշակի հատկանիշը, առանձնահատուկ որևէ նրբերանգր: Դրանով ոչ միայն հարստանում է խոսքը, այլև առավել ճշգրիտ է դառնում նկարագրությունը: Այս դեպքում իրար կողքի կարող են հայտնվել և լեզվական, և խոսքային հոմանիշներ. «Բեկում կարելի է մտցնել միայն **կտրուկ, վճռական, արմատական** փոփոխություններով», «Իսկ Ձեր օրենքը ինչ է նախատեսում **խեղճ, թշվառ, անօգնական**

և բանկավարկային ֆանտաստիկ տոկոսադրույքներից **անտուն** մնացած գյուղացու համար»:

5. Տարբեր կողմերից բնութագրելով երևույթը՝ խոսողը հոմանիշների միջոցով դրսևորում է իր անհատական վերաբերմունքը: Նույն երևույթը տարբեր մարդիկ կամ հասարակական տարբեր խմբեր տարբեր կերպ կարող են ընկալել և գնահատել: Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո (1990–ականներին) Հայաստանում ծավալված **ազատագրական շարժումը** Կրեմլի կողմից որակվեց իբրև **էքստրեմիզմ** (ծայրահեղականություն), իսկ դրան հաջորդող **հանրահավաքներն ու ցույցերը**՝ սադրիչ գործողություններ: Սրանք հակադիր հասկացություններ են, որոնք՝ որպես նույն երևույթի գնահատման տարբերակներ, ընկալվում են իբրև խոսքային հոմանիշներ: Կամ՝ ստորև բերված նախադասության մեջ ընդգծված բառերը անհատական վերաբերմունքի արտահայտություններ են՝ կառուցված հոմանշային տարբերակների իմաստային նրբերանգների հիմքի վրա. «Այն, ինչ կատարվում է Իրաքում քրդերի նկատմամբ, սովորական **տեղահանություն** չէ կամ **հալածանք**, այլ պարզապես **եղեն**»: Այսպիսի գնահատումներում դրսևորվում է ոչ միայն հեղինակի անհատական վերաբերմունքը, այլև մտածական կարողությունները, իմացությունը, փորձը, լեզվազգացողությունը ևն: Կամ՝ «Բոլոր հյուրերին **հրավիրե՛ք** ներս: **Կանչե՛ք** նաև սպասավորներին»:

6. Հոմանիշ բառերի նրբիմաստային տարբերությունների ընդգծումով հոմանշային եզրերը հակադրական նշանակություն են արտահայտում. շեշտվում են նման երևույթների, առարկաների տարբերակիչ գծերը, նրբերանգները, հատկանիշները ևն: Օր.՝ «Գուցե **տագնա՛յ** կա իմ այս խոսքերի մեջ: Գուցե: Բայց դա ընդամենը **տագնապ** է և ոչ թե **խուճապ**» (ՊՍ), «Ես նա եմ նաև, Որ տարբերում է **պաչը համբույրից**, Ինչպես **սիրողին՝ սիրահարվածից**, և **մահացումը՝ մեռնելուց**, ...**ճիշտը՝ ճշմարտից** ու **ճշգրիտից**» (ՊՍ): Իմաստային ընդհանրություններ ունեցող բառերի իմաստային հակադրությամբ խտանում է բովանդակությունը՝ «**Նորից** չեն սիրում, սիրում են **կրկին**» (ՊՍ), «**Վախենալ** պետք չէ. **պետք է սարսափել**»:

7. Հոմանշությունը խոսքին հաղորդում է բանաստեղծականություն և ներդաշնակություն. «Այդ միտքը **նորի՛ց–կրկի՛ն–վերստի՛ն** ճշում է իմ փակ երակների մեջ» (ՊՍ), **թարմություն.** «Ստիպված եմ **դարձյալ ու վերստին** հիշեցնել Ձեզ մեր համատեղ կնքած պայմանագրի այդ կետը»:

8. Հոմանիշների գործածությամբ հաճախ բացատրվում են անհասկանալի կամ քիչ ծանոթ բառը կամ արտահայտությունը (օտարաբանություններ, փոխառություններ, տերմիններ, նոր բառեր ևն): Այս դեպքում հոմանիշի գործածությունը բնականաբար արտահայտչական դեր չի կատարում և ունի հաղորդակցական արժեք: Օր.՝ «Կիլիկիայի քաղաքներում ապրող ջենովացիները և վենետիկցիները ունեին իրենց հյուպատոսներն ու դատարանները, որոնք կոչվում էին **կուրիաներ**՝ պայլական կամ հյուպատոսական (**կոնսուլական**) դատարաններ»: Կամ՝ «Իրավական այդ համակարգի մյուս առանձնահատկությունը **մասնատվածությունն էր՝ պարտիկուլյարիզմը**», «Կողմնորոշման հարցում մեծ դեր ունի ինտուիցիան՝ **ներհայեցողությունը**» ևն:

9. Հոմանշային շարքի յուրաքանչյուր հաջորդ միավորը հավելական իմաստով աստիճանաբար զորացնում է (կամ նվազեցնում) արտահայտված իմաստը, հարստանում է խոսքը, ամբողջանում է առարկայի բնութագիրը՝ նրա տարբեր հատկանիշներով. ստեղծվում է **աստիճանավորում** (գրադացիա) կոչվող ոճական միջոցը:

Ավելացնենք, որ հոմանիշների անհարկի կուտակումը, մանավանդ հուզական-գնահատողական հոմանիշների հաճախակի գործածությունը, չափազանց զգացական գնահատականները թուլացնում են խոսքի ուժը, զրկում են հոմանիշներին իրենց արտահայտչական դերից, լսարանի վրա ունենում են հակառակ ազդեցություն:

3.7.3. ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄ: Ինչպես հայտնի է, իմաստով մոտ բառերը հաճախ զուգահղվում են՝ խոսքի բովանդակությունը ուժեղացնելու կամ թուլացնելու համար: Այդ երևույթը համարվում է աստիճանավորում, եթե դրա արտահայտած հատկանիշը ուժեղանում կամ թուլանում է: Ըստ այդմ՝ աստիճանավորումը լինում է երկու տեսակ:

1. Բարձրացող աստիճանավորում. յուրաքանչյուր հաջորդ արտահայտություն (բառ, բառակապակցություն, դարձվածք ևն) ավելի հագեցած է իմաստով, ավելի ուժգին և արտահայտիչ է, քան նախորդը, օր.՝ «**Ջարդեցին** իրար, **Ջնջեցին** իրար, **Կորան**, **գնացին** Գետնին հավասար» (ՀԹ), «Այսինքն թե՛ հայերն իրենց Արշակ թագավորին **ասացին**, շատ **ասացին**, **հորդորեցին**, **պահանջեցին**, **հուսադրեցին**, **խաբեցին**, **շտապեցրին**, **հրեցին** դեպի Շապուհը, թե՛ «մարդավարի գրույցի է կանչում, գնա տես՝ ինչ է ասում» (ՀՄ), «Հավաքված կանայք **գանգատվում էին** նախագծից, **բողոքում**, **զայրացած սպառնում էին** ներկայացուցչին»:

2. Իջնող աստիճանավորում. յուրաքանչյուր հաջորդ արտահայտություն ավելի թույլ է, քան նախորդը. յուրաքանչյուր հաջորդ արտահայտություն տանում է մեծից փոքրը, բարձրից ցածրը, ուժեղից թույլը ևն, օր.՝ «Թող **չաղմկեն**, **լռեն**, **հանդարտվեն**, **քաշվեն** իրենց տները»: Երբեմն աստիճանավորման այդ երկու դրսևորումները գործածվում են համատեղ՝ առավել բազմազան և հետաքրքիր դարձնելով խոսքը. օր.՝ «**5000 տարվա, 500 տարվա և 50 տարվա Պատմություն** ունի այդ **ջարդ-սպանդը, նախճիր-եղեռնը**, Որ չի ավարտվել ու չի ավարտվում...» (ՊՍ), «Էլ ինչո՞ւ միայն նա երգե – Թող երգեն, **ինչքան մարդ որ կա, Թող աշխարհը ամբողջ երգե, Զրնգա, Զնգա, Զնգա...**» (ԵՉ):

Ավելի հաճախ հանդիպում է բարձրացող աստիճանավորումը: Ի դեպ, աստիճանավորումը «կառուցվում է» քերականորեն և տրամաբանորեն համասեռ շարքերի, թվարկումների միջոցով: Հակառակ դեպքում վրիպումն անխուսափելի է: Կարդանք հետևյալ օրինակը. «Աչքերիս մեջ գարնան օրեր, Ճամփեմ դեպի աստղերն անմեռ. Ինձ ելնելու **քարեր** կան դեռ, Ինձ ելնելու **սարեր** կան դեռ, **Քարե՛ր, սարե՛ր, դարե՛ր** կան դեռ...» (ՀԸ): Առաջին հայացքից թվում է, թե գործ ունենք աստիճանավորման հետ: Սակայն ընդգծված բառերը միևնույն գաղափարի տարբեր աստիճանավորումները չեն՝ **թույլ – ուժեղ, ցածր – բարձր, փոքր**

- **մեծ** ևն: Տարբեր հասկացություններ են: Իսկ դրանց համադրությամբ աստիճանավորում չի կարող ստեղծվել:

Աստիճանավորում ստեղծելիս հեղինակը պետք է հետևողական լինի. հոմանիշների ոչ ճիշտ դասավորությունը, իմաստային նրբերանգների շփոթը, մեկնական ավելորդ բառերը ստեղծում են անտրամաբանական խոսք, փլուզվում է աստիճանավորումը: Օր.՝ «Իրական կորուստների քանակը անհնար է թաքցնել, միանշանակ բացառում եմ, հազիվ թե դա հնարավոր է»։ անվերապահ պնդումին հաջորդում է գիջողական խոսք, նահանջ իր սեփական հաստատումից. դատողության ուժը թուլանում է, խոսքը դառնում է անհամոզիչ:

3.7.4. ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ: Տարիմաստ լեզվական միավորների ձևային նույնությունն է: Արտահայտչականությունը ձևավորվում է հիմնականում համանունների համատեղ գործածությամբ: Հաճախ գործածվող հնարք է հրապարակային խոսքում, գովազդներում, գեղարվեստական գրականության մեջ, մասնավորապես չափածոյում: Հանդիպում է նաև բանահյուսական խոսքում:

Համանունները՝ մասնակի թե լիակատար, իբրև համանունական շարքի անդամներ, խոսքային մակարդակում առհասարակ քիչ են կիրառելի և ունեն արտահայտչական սահմանափակ հնարավորություններ. մասնակցում են հանգակերտմանը, խոսքի ռիթմին և բարեհնչությանը («Կյանքից հարբած **անցավոր**, Ահա դարձյալ **անցավ օր**, Դու վազում ես դեպի մահ – Մահը բռնում **հանցավոր**» (ՀԹ)), իսկ լեզվական համապատասխան միջավայրում գործածվելու դեպքում՝ խոսքի բովանդակային կողմի խորացմանը:

Առանձնահատուկ թարմություն և ուժ են հաղորդում խոսքին այսպես կոչված **անհատական-հեղինակային համանունները**. սրամիտ խոսքի կառուցման շատ հաջող տարբերակ է, երբ հայտնի բառի իմաստը մեկնաբանվում է կարծեցյալ համանունությամբ, ինչպես՝ **նախագահ** բառը մեկնաբանվում է **նախ ազահ** նշանակությամբ (փոխ.՝ **նախա-գահ**), կամ **սառուսա** օտարաբանությունը հումորային մեկնաբանությամբ համանունություն է դիտվում հայերեն **սա ու նա** կապակցության հետ, **սկեսուր** բառի (որը ստուգաբանորեն պարզ արմատական բառ է) **կիսուր** խոսակցական տարբերակը «ստուգաբանվում է» **կեսն ո՞ր է՝ կես + ուր** (իբր սկեսուրը հարսին հարցնելով ականարկում է եփածի **կեսը** թափելու կամ եղած-չեղածի **կեսը** հոր տուն տանելու մասին) ևն:

Համանունների անարվեստ կիրառությունը երբեմն ստեղծում է անարտահայտիչ, արհեստական խոսք, ինչպես Միսաք Մեծարենցի հետևյալ հեզնական ոտանավորում՝

...ծայն մ'ըսավ **ներսես** –
 Ու սըպրդեցա նոր դուռեն **ներս ես**,
 ...Ես մեկ հորդումով ծածկեմ **ավազ, ակ**.
 Ինձմե է գողցեր ամենն... **ավազակ** (ՄՄ):

3.7.5. ՀԱՐԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ: Ձևով նման արտահայտությունների կամ բառերի (հարանունների) զուգորդումն է խոսքի նույն հատվածում՝ առանց իմաստային խադի կամ իմաստի սաստկացման: Ոճական-արտահայտչական որոշակի արժեք ունեն գեղարվեստական խոսքում, մասնավորապես՝ չափածոյում, առօրյա-խոսակցական ոճում, հրապարակային խոսքում: Նպաստում են խոսքի բարեհնչությանը, ներդաշնակությանը, պահպանում են ներքին հանգը և ռիթմը, ծառայում են տաղաչափական այլևայլ խնդիրների լուծմանը: Օր.՝ «Որպես թաքուն թախիծ, Տերևներիդ **խորքում** ես կփայլեմ տխուր Ու կմտնեմ **խոր քուն**» (ՌԴ), «Այն **վանքը** ողբամ, Որ վեր է ածվել բողկի պահեստի: Այն **վանկը** ողբամ, այն վանկը, որին Ջրկում են միակ իր ծայնավորից...» (ՊՍ):

Եթե արտաքին-հնչյունական նմանությունից զատ՝ գործածվում են իմաստային առնչակցությամբ, ապա կարող են իրենց վրա կրել խոսքի բովանդակային կողմի ինչ-ինչ առումներ, ստեղծել իմաստային ուշագրավ անցումներ: Այդպիսի մտածմամբ են կիրառված, օրինակ, ընդգծված հարանունները հետևյալ նախադասություններում. «Լավ, **հավատք** չունեք, **հավատա՛մք** էլ չունեք», «Գովերգում եմ և այն լուսե **գաղափարը**, Որ չի դառնում նեղ **կաղապար**» (ՊՍ), «Իմ **բանջարը** քո **հանճարին** վնաս չէ» (Զ):

Հարանունների հակադրությամբ կամ համադրությամբ խոսքի հեղինակը երբեմն ճշգրտում է դրանցից մեկի կամ մյուսի իմաստը: Սա հաճախ է հանդիպում այն դեպքերում, երբ խոսքի առարկան բուն համանուններն են, որոնք, ինչպես գիտենք, ունեն իմաստային առնչակցություն: Այս կիրառությունը չունի արտահայտչական արժեք. դա պարզապես ի ցույց է դնում առնչակից հասկացությունների իմաստային տարբերությունները: Օր.՝ «Այդ հանցանքի համար նրան ենթարկել են ոչ թե **պաշտոնական**, այլ **պաշտոնեական**, այսինքն՝ ծառայողական տույժի»:

Հարանունների գործածությամբ ստեղծվում է երգիծական խոսք: Օր.՝ «Թե՛գ էրա, Ալե՛ք, ճամփեն երկար չէ, **Հոռոմ** ենք գնում և ոչ թե **Հոռոմ**» (ԽԴ): Հարանունների վարպետ գործածությունը կարող է դառնալ երգիծական իրավիճակի (դրության կոմիկմի) ստեղծման միջոց: Օր.՝ հանրահայտ «Միմիո» ֆիլմում **Թելավի** (քաղաք Վրաստանում) և **Թել-Ավիլ** (մայրաքաղաք Իսրայելում) տեղանունների թյուրընկալման պատճառով առաջանում է շփոթ, ինչը հանգեցնում է խոսքի ու դրության կոմիկմի:

Հարանունության արտահայտչականությունը զորանում է, երբ ուղեկցվում է նաև հականշությամբ. «**Ահեկ** ու **ջահեկ** իրարով անցան», «Չկա **չարիք** առանց **բարիքի**»:

3.7.6. ՀԱԿԱՆՇՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Հականիշ բառերի ոճական կիրառությունը կամ առհասարակ հականշությունը (լեզվական միավորների իմաստային հակադրականությունը) իմացական-ճանաչողական գործընթաց է կամ դրա արգասիք, քանի որ պայմանավորված է իրականության մեր ընկալումներով: Ինչ իրավիճակներում և ինչ նպատակներով ենք դիմում հականիշներին:

1. Հականիշների գործածությունը քնորոշ է ժողովրդական խոսքին. շատ առածների ու ասացվածքների լեզվական հիմքն է և սուր ու դիպուկ է դարձնում

խոսքը, ինչպես՝ «Փորձված թանը անփորձ մածնից լավ ա», «Ինչ ցանես, էն կինձես», «Խոսքը՝ մեծին, ջուրը՝ փոքրին» ևն:

2. Հականիշները գործածվում են նաև **երևույթը իր հնարավոր բոլոր երեսներով, նաև հակասական կողմերով ներկայացնելու համար**: Օր.՝ «Թող ինձ չար կոչեն հենց միայն **բարի** լինելու համար», «Այդ օրը փողոց էին դուրս եկել բոլորը՝ **ահել թե ջահել, կին թե տղամարդ**», «Ո՛ր են վազում **ծեր ու ջահել**, Մարդկանց այս ինչ է պատահել...» (ՌԴ): Նման հականշային զույգեր են՝ *լավ թե վատ, անցյալում թե ներկայում, հին թե նոր, հիմնավոր թե անհիմն, գիտությամբ թե անգիտությամբ* ևն: Սովորաբար գործածվում են կրկնադիր շաղկապներով կամ այլ տիպի կառույցներով՝ *և՛..., և՛..., սկսած ...-ից մինչև ..., ... թե...* ևն: Համադասական շաղկապների կիրառությամբ հաճախ մեղմվում է հականիշներին բնորոշ ընդգծված հակադրության երանգը, ինչպես՝ «Երբ **գայլ ու գառնուկ** սիրով կ'արածին...» (ՌՍ), «Մտավորականությունը իր երկրի **տերն է ու նաև ծառան**», «Նույն արժիճից են ծուլվում **գնդակն ու բառը**» (ԳԷ):

3. Ոճական հատուկ **հնարք է բառի գործածությունը իր հակառակ նշանակությամբ. ստեղծում է հեզնական վերաբերմունք**, օր.՝ «Դատելով գործարարության ասպարեզում ունեցած Ձեր **հաջողություններից՝ վրանգի տակ է** Ձեր ամբողջ ունեցվածքը», «**Բարերարներու** սերունդ մը ունինք մեր մեջ, որ բավական *չարիք* հասուցած է մեր գլխին» (ԵՕ), «Արագընթաց **բարեփոխումների** միջոցով ունենք էական *ծեղքերում* արտագաղթի 8% աճ»:

4. Հականիշները գործածվում են, երբ նպատակ կա **հակադրությամբ առանձնացնելու, շեշտելու այս կամ այն երևույթը, իրողությունը**: Օր.՝ «Պայքարել է պետք և ոչ թե **վիատվել**», հականիշ եզրի գործածությունը զորացնում է հակադրությունը. ուժեղանում է պայքարի գաղափարը: Անհամեմատ թույլ է, օրինակ, առանց դրա կառույցը՝ «Պետք է պայքարել»: Ավելի սեղմ է, բայց նվազ ազդեցիկ: Նմանապես՝ «**Չարը պիտի մեռնի, և բարին ապրի**» (ԱԻ), կամ՝ «**Մի՛ նստիր, վե՛ր կաց**», «**Կառուցել է** պետք և ոչ թե **քանդել**»:

5. Հականիշներին ենք դիմում երբեմն **անվանելու համար այնպիսի հասկացություն կամ երևույթ, որը որոշակի անվանում չունի, ոչ այս է, ոչ այն**. միջին օղակ է. իսկ ինչպես նկատված է լեզվաբանության մեջ, հակադրության նշածողի միջին որակները մի տեսակ աղքատ են ներկայացված լեզվական մակարդակում: Այս դեպքում խոսքի հեղինակը դիմում է միաժամանակ երկու ծայրահեղ նշանակիչների ժխտմանը. դրան նա հասնում է կրկնակի ժխտման միջոցով. «եզրային» գնահատականները չեզոքանում են, բերվում են միջինացված նորմի⁶³ «Գրում է ոչ լավ, ոչ վատ», «Կյանքի ու մահվան մեջտեղում», «Ոչ կուշտ եմ, ոչ սոված»:

6. Յուրահատուկ արտահայտչականություն ունի այսպես կոչված՝ **ներքին հականշությունը, որը ձևավորվում է բազմիմաստ բառի հակադիր իմաստներով**: Օր.՝ «Գործարանը իր արտադրանքով **դուրս է մրցակցությունից**» (չունի՞ իրեն հավասարը, թե՞ անկարող է մրցել), «Նա **վերադարձել է** աշխատանքի»

⁶³ Տե՛ս նույն տեղը, էջ 164:

(գնացել է, թե՛ եկել է), «Նա դավաճանի անուն **Ժառանգեց**» (Ժառանգությունն ստացավ, թե՛ իբրև ժառանգություն ավանդեց):

7. Հականիշների զուգահեռ գործածությամբ կարող է նաև երգիծական խոսք ստեղծվել: Օր.՝ «Հորս ձեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փետ կար» (ՀԹ): Կարող է առաջանալ իմաստային խաղ. «Չարյաց փոքրագույնի մեծագույն վտանգը», «Հանճար չեն ծնվում, հանճար մահանում են», «Ունչի անընդունակ մարդը ընդունակ է ամեն ինչի»:

Ընդունված է ասել, որ հականիշների արտահայտչականությունը դրսևորվում է հականիշ բառերի համատեղ կիրառության մեջ: Դա, իհարկե, այդպես է: Բայց անկասկած է նաև այն, որ հակադրական իմաստ արտահայտող բառերը սերտորեն կապված են իրար հետ. մեկի գործածությունը խոսքում ենթագիտակցորեն կամ ինքնաբերաբար հիշեցնում է մյուսին, և այդ հակադրություն–զուգահեռության մեջ ընկալումը դառնում է ավելի ուժեղ. **բարի** բառի իմաստը հոգեբանորեն տպավորվող է **չար**–ի հակադրությամբ, **երջանիկ կյանքը** ամբողջ խորությամբ ընկալելի է **դաժան ու բիրտ կյանքի** հակա– կամ զուգապատկերի մեջ: Հետաքրքիր է Սիլվա Կապուտիկյանի բանաստեղծական մի դիտարկումը. «Մեջս իրենց հունն ունեն Բառերն՝ ինձնից էլ թաքուն, «Արդարություն» են ասում՝ ես որք իմ Վանն եմ հիշում...»: Ռուս հետազոտողներից Լ. Բոգդանովան հականշության այդ յուրահատուկ բնույթը բացատրում է հետևյալ կերպ. ինչպես շաբաթվա կամ ամսվա օրերը մեր գիտակցության մեջ ներկայանում են կարծես մի «փաթեթի» մեջ, այնպես էլ գոյություն չունեն հականշային հակադրության մեկուսացված անդամներ. «Հականիշները ոչ միայն փոխադարձորեն ժխտում, այլև ենթադրել են տալիս միմյանց»⁶⁴:

Հականիշների համատեղ գործածությամբ ստեղծվում են **հակադրություն, օքսիմորոն** և այլ ոճական դարձույթներ:

Հակադրությունը կամ **հակադրույթը** (հուն.՝ antithesis – հակադրում) իմաստով հակադիր արտահայտությունների կամ բառերի (հականիշների) զուգորդումն է խոսքի նույն հատվածում: Հակադրույթը ձևավորվում է **հականիշների բոլոր տեսակներով**:

ա) **Լեզվական հականիշներով** հակադրություն. ընդգծում է հիմնական գաղափարը: Այս հնարքը հաճախ է գործածվում գեղարվեստական գրականության մեջ, ԶԼՄ–ների լեզվում, բանավիճային խոսքում: Դրանով հաճախ կազմում են նաև վերնագրեր՝ «Ապրելու ժամանակը և մեռնելու ժամանակը», «Պատերազմ և խաղաղություն», «Նախընտրական հարցումներ, թե՛ հետընտրական հարցախույզ»: Հակադրության այս տեսակը **որոշ ընդհանրություն ունի համեմատության հետ**, սակայն այստեղ ընդգծվում են համեմատության եզրերի ոչ թե ընդհանրությունները, այլ տարբերությունները, որոնք հակադրական բնույթ ունեն, ինչպես՝ «Դու լույս ես ու հույս, Իսկ ես՝ խավար ու խենթ... Դու՝ բարձրյալ ազատ՝ կարիքներից զերծ, Իսկ ես՝ ենթակա տաժանքի, վշտի, Դու՝ վեր երկրային կրքերից բոլոր, Իսկ ես՝ կավ անարգ ու գարշելի....» (ԳՆ):

⁶⁴ Л. Богданова, Стилистика русского языка и культура речи, М., 2011, с. 159.

Եթե հատուկ միտում կա առավել ընդգծելու հակադրականությունը, ապա խոսողը կամ գրողը դիմում է **նույնարմատ հականիշների** օգնությանը. այդպիսով շեշտվում է կրկնվող բաղադրիչի իմաստը: Օր.՝ «Օ՛, չի սոսկաք երբ անպատմելի պատմությունս ձեզի պատմեմ» (Ս), «Որովհետև այն, որ պիտի գա, պիտի ըլլա օտար, բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղան, մեղան Արարատին» (ՇՇ):

բ) **Խոսքային կամ համատեքստային հականիշներով** (բառային անսովոր զուգորդումներ՝ փոխաբերության հիմքով) հակադրություն. արտառոց ու տպավորիչ է դարձնում խոսքը, ուշադրություն գրավում, օր.՝ «Եթե մարդը ընկնելուց հետո ոտքի է կանգնում, դա **Ֆիզիկա** չէ. **բնավորություն** է»: Կամ՝ «Եկեք միասին չհարգենք նրանց, Ովքեր սերտում են և ոչ թե դատում, **Ճառո՛ւմ** են – բնավ չեն **կշռադատում**. Ովքեր չեն ջոկում ճշ թացը չորից, Ո՛չ էլ տարբերում **անդունդը ձորից**. Ովքեր **գրածի տառն** են ընթերցում, Ովքեր **քնածին մեռած** են կարծում» (ՊՍ): Վերջին օրինակում որպես խոսքային հականիշներ են հանդես եկել նույնիսկ իմաստով առնչակից բառերը՝ **անդունդ**–ը և **ձոր**–ը:

գ) **Բառի բազմիմաստության հիմքով** ստեղծված հակադրություն. իրար են հակադրվում միևնույն բառի հակադիր կամ տարբեր իմաստները, օր.՝ «Բարեխոս եղիր **իմ** և **ի՛մ** միջև» (ՊՍ), «Թող **մարդերը** հասկնան **մարդուն** ոճիրը **մարդուն** դեմ» (Ս), կամ՝ «**Մարդ** էլ կա, **մարդ** էլ...» (ՊՍ):

դ) **Շարահյուսական** հակադրություն. դրական խոնարհմամբ կառույցը գործածվում է (սովորաբար հատուկ հնչերանգով) ժխտական նշանակությամբ: Ստեղծվում է հեզնանք կամ բացասական վերաբերմունք՝ «Շատ գեղեցիկ է»: = «Տգեղ է», «Կհաղթեք, ինչպե՛ս չէ»: = «Չեք հաղթի», «Վաղը կավարտե՛ք որ»: = «Վաղը չեք ավարտի», «Շատ կուզեի հավատալ ձեզ»: = «Չեմ հավատում ձեզ»: Ոճագիտության մեջ այլ կերպ սա կոչվում է **շարահյուսական ժխտում**:

3.7.7. ԲԱՌԱՆԱՂ: Կառուցվում է իմաստով տարբեր բառերի կամ բառակապակցությունների արտաքին հնչյունական նույնության կամ նմանության (համանունության կամ հարանունության) հիման վրա կամ նույն բառի տարբեր իմաստների (բազմիմաստության) օգտագործումով: Արտաքուստ նույնացվում են տարբեր գաղափարներ՝ իմաստային յուրահատուկ անցումներով սրամիտ խոսք ստեղծելու նպատակով: Նրա կարևոր հատկանիշը բառերի իմաստային խաղ՝ **սրամտություն ստեղծելն է**: Օր.՝ «Առաջ՝ **հաց**, հետո՝ **հարց**», «Երկու **ահը** մի **մահ** է», «Արտը՝ **խախուտ**, մահանան՝ **կարկուտ**», «Սևին սապոնն ինչ կանի, **խևին**՝ խրատը»:

Ավելի հաճախ բառախաղերը ստեղծվում են քերականական կամ բառաքերականական համանունության հիմքի վրա, երբ համանունության եզրերը քերականական ձևեր են, կամ մի եզրը բառ (բառերի կապակցություն) է, մյուսը՝ քերականական ձև, ինչպես՝ **անցավ** (առանց ցավի) և **անցավ** (**անցնել** բայի անցյալ կատարյալը). «Ա՛խ, մեր սերը **անցավ**, Բայց ոչ **անցավ** **անցավ**»:

Բառախաղը համանունների, հարանունների և բազմիմաստ բառերի սովորական գործածություններից տարբերվում է նրանով, որ այս դեպքում ստեղծվում է

բառերի իմաստների խաղ, սրամտություն: Այսպես՝ «Աշուն է, **անծրև**... Ստվերներն **անծև** Դողում են դանդաղ... Պաղ, միապաղաղ, Անծրև ու անծրև...» (ՎՏ): Կա հարանունություն՝ **անծրև** և **անծև**, բայց չկա բառախաղ, քանի որ հեղինակի նպատակը սրամիտ խոսք ստեղծելը չէ:

Բառախաղը այնպես պիտի կառուցել, որ դա ընկալվի խոսակցի կողմից: Երբեմն բազմիմաստությամբ կառուցված բառախաղը կարող է թյուրընկալումների առիթ տալ, երբ ճշգրիտ հաշվարկված չեն նրբիմաստները, երբ գրուցակիցները միևնույն բառը ընկալում են տարբեր իմաստներով: Օր.՝ եթե «Այսօր մենք հոգեհանգստի **պաշտոն** կատարեցինք» նախադասության մեջ ընդգծված բառի իմաստը հստակ է (ծառայություն աստծուն, առ աստված ծառայությունների կատարում), ապա հետևյալ նախադասության մեջ նույն բառի երկիմաստությունը ստեղծում է թյուրընկալում կամ անորոշություն. «Նոր եք **պաշտոն** ստացել, բայց արդեն սկսել եք Ձեր հարազատներին **պաշտոն** մատուցանել»: Ընդգծված երկրորդ բառը կարելի է հասկանալ երկու իմաստով՝ **գործ**, **աշխատանք** տալ և **մեծարանք**, **հարգանք**, **ծառայություն** մատուցել: Նման գործածությունը արդարացված է, եթե խոսողի նպատակը հենց բառախաղով երկիմաստություն ստեղծելն է:

Թյուրընկալման պատճառ կարող է դառնալ նաև այն, երբ հաղորդակցվող կողմերից մեկը չի ընկալում բառի իրական իմաստը: Դրա պատճառով կարող է ստեղծվել երգիծական հետաքրքիր խոսքային իրավիճակ: Այդպիսի հնարքով է իր հերոսի անգիտությունը մեծ վարպետությամբ ծաղրում Հ. Պարոնյանը. Աբիսողոմ աղային այցելած բանաստեղծը խոստանում է նոր ոտանավոր գրել, եթե իր **մուսան** գա: Աբիսողոմը չի հասկանում **մուսա** բառի իմաստը, և ծավալվում է այսպիսի երկխոսություն.

Բ.—...Ոտանավոր կարդալը դյուրին է, բայց գրելը՝ դժվար: Գեղեցիկ ոտանավորի մը համար քիչ են, քիչ, երկու ամիս պետք է: **Ա.**— Ինչ կ'ըսեք... **Բ.**— Այո, բայց և կ'աշխատիմ ամիսե մը լմնցնել: **Ա.**— Ատ ինչ դժվար բան է եղեր: **Բ.**— Ինչ կարծեցիք հապա. երկու ամիս պիտի սպասեմ, որ **մուսաս** գա և ներշնչե ինձի, որպեսզի գրեմ. առանց **մուսայի** ոտանավոր չգրվիր: **Ա.**— Եթե այդ **մուսան** գալու չ'ըլլա... **Բ.**— Անպատճառ կու գա: **Ա.**— Չկրնար ըլլալ, որ նամակ գրես և աղաչես իրեն, որ շուտ մը գա, և դուն ալ երկու ամիս չսպասես: **Բ.**— Անիկա ինքնիրեն կու գա, նամակի պետք չունի, մեծապատիվ տեր: **Ա.**— Ո՛ր կը նստի... շատ հեռու է: **Բ.**— Այո, շատ հեռու է, բայց կու գա: **Ա.**— Յամաքեն, թե՛ ծովեն: **Բ.**— Չէ, մեծապատիվ տեր, չէ: **Ա.**— Ո՛վ է ուրեմն սա գետնին տակ անցնելուն մարդը... ուսկի՞ց պիտի գա... ըսե, որ ճամբա մը մտմտանք ու բերել տանք... Եթե մեկ-երկու ոսկի տանք, այս շաբաթ կու գա: **Բ.**— Այո, երկու ոսկի տալուդ պես գործը կը դյուրանա, և **մուսաս** այս շաբաթ վազելով կու գա, — պատասխանեց անմուսա բանաստեղծը ոսկի բառը լսելուն պես: **Ա.**— Գրե՛ ուրեմն իրեն, իմ կողմես ալ հատուկ բարևներ ըրե՛ և ըսե՛, որ Աբիսողոմ աղան քեզ տեսնել կ'ուզե: **Բ.**— Գլխուս վրա... («Մեծապատիվ մուրացկաններ»):

Լավ կառուցված բառախաղը շատ հարմար միջոց է ենթատեքստով խոսելու, ասելու միտք, որը կարող է և ցանկալի է, որ դիմացինի կողմից ընկալվի ոչ

միանշանակ: Օր.՝ «Տղաս տուն եկավ ուշ գիշերին: Հարցրի՝ որտեղ էիր, **ծայն** չիանեց: **Զայնը** հետո էր լսվելու...»:

Բառախաղը հաճախ է գործածվում առօրյա խոսքում, գեղարվեստական գրականության մեջ, ՁԼՄ-ների լեզվում: Աշխուժություն և թարմություն է հաղորդում խոսքին: Օր.՝ գյուղնախարարի հարցին, թե ինչ վիճակում է ծիրանի բերքը, հասնել է, թե ոչ, գյուղացին պատասխանում է. «- Որ **հասնի**, **Ձեզ էլ կհասնի**», կամ՝ «Ա. - Դուք փաստորեն նախագահի **մարդը** չեք: Բ. - Տասը տարվա իմ պատգամավորական գործունեության ընթացքում ես չեմ եղել և ոչ մեկի **մարդը**: Ես իմ կնոջ **մարդն** եմ մշտապես»:

3.7.8. ՇՐՋԱՍՈՒՅԹ (հուն.՝ **periphrasis**–**peri** – շուրջը, **phrasis** – խոսում եմ, ասում եմ): Հաճախ առարկան կամ երևույթը անվանելու փոխարեն ուղղակիորեն կամ փոխաբերաբար բնութագրվում է նկարագրական բառակապակցությամբ կամ դարձվածքով, թևավոր խոսքով: Օր.՝ «Խրատներ է կարդում խորհրդային տարիների քաղաքական կյանքի **վերջին մոհիկանի** իրավունքով...», «Բարձրահասակ ֆուտբոլիստ է՝ 1,85 սմ, և **երկրորդ հարկում** կարողանում է հաջողությամբ դրսևորել իրեն»:

Լինում են նաև բառ-շրջասույթներ՝ հիմնված փոխանունության, երբեմն էլ փոխաբերության վրա: Բառային մակարդակում այն առնչություն ունի հոմանշության հետ: Օր.՝ **ծուռթաթ** (արջ), **հողեղեն** (մարդ), **փետրավոր** (թռչուն), **երկաթախաղ** (ծանրամարտ), **հանգստարան** (գերեզմանոց), **միհոգավոր** (գրուցակիցներին լավ հայտնի անհամակրելի անձ), **պատմահայր** (<Երրորդտոս, Մովսես Խորենացի), **Արևելք** (Ասիա), **Արևմուտք** (Եվրոպա և Ամերիկա):

Շրջասույթի արտահայտչականության աղբյուրն այն է, որ այլաբանորեն կամ իմաստային այլևայլ դրսևորումներով (ներքին համեմատություն, փոխանունություն ևն) բացահայտում է անվանվող առարկայի, երևույթի ներքին բովանդակությունը, էությունը: Շրջասույթների ձևավորման համար աղբյուր են հանդիսանում հայտնի անձանց՝ պետական գործիչների, գրողների, դերասանների, գիտնականների, մարզիկների անունները, ինչպես՝ **փոքրիկ կորսիկացի** (Նապոլեոն), **առաջին ռակետ** (Ն. Ջոկովիչ), **ամենայն հայոց բանաստեղծ** (< Թումանյան), **ծիծաղի արքա** (Չ. Զապին), **հայ երգի վարպետ** (Կոմիտաս) ևն, հաճախ նաև տեղանունները՝ **Բուրգերի երկիր** (Եգիպտոս), **Կակաշների երկիր** (<Ուլանդիա), **Ծագող արևի երկիր** (Ճապոնիա), **Երաժշտության մայրաքաղաք** (Վիեննա), **Սև աշխարհամաս** (Աֆրիկա) ևն: Բնույթով լինում են **նկարագրական-գնահատողական** (Նոյի ժամանակներից//Նոյի թվից) – շատ հին), **պատկերավոր** կամ **փոխաբերական**. հիմնված են այլաբերության վրա (**սպիտակ ագռավ** – վարքով կամ արժեհամակարգով ընդհանուրից տարբերվող անձ, **երկաթե տիկին** – ուժեղ կամք ունեցող կին, **սպիտակ ջարդ** – ծուլում), **տրամաբանական**. հիմնված են բառերի ուղիղ ճշգրիտ իմաստների վրա. կատարում են առավելապես անվանողական դեր՝ «**Համլետ**»–ի **հեղինակը** (Շեքսպիրը), **երկրի ղեկավարը** (նախագահը), **կառավարության առաջին դեմքը** (վարչապետը), **ՀՀ օրենսդիր մարմինը** (Ազգային ժողովը), **հայոց հոգևոր առաջնորդը** (կաթողիկոսը):

Հաճախ են գործածվում ՁԼՄ-ների լեզվում, բանավոր հրապարակային ելույթներում, գեղարվեստական գրականության մեջ:

Շրջասույթները խոսքին հաղորդում են արտահայտչական մի քանի հիմնական հատկանիշներ.

ա) Զորացնում են խոսքի արտահայտչականությունը, խոսքը դարձնում են բազմազան ու հարուստ: Նարեկացու Մատյանը հեղեղված է գեղարվեստական շրջասույթներով, որից նրա բանաստեղծական խոսքը դառնում է աննախադեպ բազմաճիւղ և հուզական: Ահա հատվածներ պոեմից՝ «Տեր պարզևատու, ինքնաբուն բարի», «Տեր անոխակալ ու երկայնամիտ», «Լույսի ճառագայթ», «Արքա երկնավոր, գովյալ անպատում», «Որդի միածին անճառ Աստծո, բարձրյալ բարեգութ, կյանքի ապավեն», «Շնորհատու հայր, բարի, ողորմած» ևն: Շրջասույթները հնարավորություն են տալիս խուսափելու կրկնություններից, մի տեսակ փոխարինող դեր են կատարում: Օր.¹ **Կոմիտաս**–ի փոխարեն՝ Սևակը գործածում է նաև **հայ երգի Մեսրոպ Մաշտոց, այր իմաստուն, կամ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահ**–ի փոխարեն՝ գործածում ենք **պետության երկրորդ դեմք** (նաև ԱԺ խոսնակ) արտահայտությունը, **սահման**–ի փոխարեն՝ **շփման գիծ, Տրոյայի երգիչ** (Հոմերոս) ևն:

բ) Գնահատում են առարկան, երևույթը՝ «հայ երգի վարպետ» (Կոմիտաս), «ազատության մեծ երգիչ» (Մ. Նալբանդյան), «անտառի գեղեցկուհի» (սկյուռ), «սև ոսկի» (նավթ), «ճերմակ մահ» (աղ), «համար առաջին ոմբարկու» (Լ. Մեսսի), «արդարության սպասավոր» (դատավոր) ևն:

գ) Հաղորդակցվող կողմերի միջև կատարում են կարգավորող դեր: Դրանք յուրահատուկ շրջասույթ–մեղմասություններ են, որոնք հնարավորություն են տալիս խուսափելու զանազան անհարկի արտահայտություններից ու գնահատականներից՝ «Հայտնվեցինք շատ **հետաքրքիր իրավիճակում**» (անհարմար կացության մեջ գտնվելը), «Զկարողացա մի քանի **քաղցր խոսքով** չհիշել նրա անցավորներին» (անպատվել, հայիոյել), «**Կամելիազարդ տիկինը**» (անբարո կին) ևն:

դ) Խոսքը դառնում է երգիծական (հեգնական): Այդ դերով սովորաբար հանդես են գալիս հանրահայտ շրջասույթները՝ փոփոխված կամ ուղիղ ձևով՝ երկու դեպքում էլ փոխառված նշանակությամբ. «Այդ օրվանից նա ինքն իրեն հոչակել է **ամենայն հայոց քաղաքագետ**», «Նա մեր սովերային տնտեսության **առաջին ջութակն է**»:

ե) Բացատրում են քիչ ծանոթ բառը, հասկացությունը, երևույթը կամ առարկան: Խոսքը դառնում է ավելի մատչելի ու պարզ: Շրջասության այս դրսևորումը ոճաբանական գրականության մեջ անվանում են նաև **պարզաբանում** (հուն.² exegesis). «Քուչակը՝ **միջնադարի մեծ քնարերգուն...**»: Սա առավելապես անվանողական գործառույթ է: Այս դերով շրջասույթները գործածվում է գիտական ոճում, ուսումնական գրականության մեջ սահմանումներ ու բնորոշումներ տալու համար:

Հաճախակի են գործածվում ՁԼՄ-ների լեզվում՝ իրականացնելով վերը նշված գործառնությունները և կատարելով համապատասխան արտահայտչական դեր:

Շրջասույթը հաճախ շփոթվում է փոխաբերության և համըմբռնման հետ:

3.7.9. ԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ (ՀԱՎԵԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ԿՐԿՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: Հիշենք, որ ավելադրությունը խոսքային նույն հատվածում համարժեք կամ լրացուցիչ լեզվատարրերի գործածությունն է՝ արտահայտչական նպատակներով: Ավելադրության առկայությունը ապացուցելի է, եթե հնարավոր է վերականգնել առանց դրա տարբերակը: Օր.՝ «Ես **գիտեի, գիտեի**, որ այդպես է լինելու»։ բառի ավելադրական կրկնությունը խստացնում է իմաստը, շեշտում է հուզականությունը: Օր.՝ «**ընդհուպ մինչև ձմեռ**», «**աչքովս եմ տեսել**», «Լոս Անջելես **քաղաքի** արվարձաններում», «2014 **թվականի** զարնանը», «մարտ **ամսին**»: Նույնպիսի նշանակություն ունեն նաև քերականական ավելադրության մի շարք դեպքեր՝ «պատվիրատուի հետ **միասին**», «ընկերներով **հանդերձ**» ևն:

Դրանց մի մասը, ինչպես ասվել է, տրամաբանորեն ավելորդ է. գաղափարը ոչ մի նրբիմաստով չի հարստացնում և երբեմն խոսքում առիթ է տալիս ռճական սխալ կառույցների ձևավորման. խոսքը դառնում է երկարաբան ու ճապաղ (տես **Ավելորդաբանություն**):

Ռճական կամ քերականական ավելադրության տարատեսակներից մեկը **թարմատարն** է. կան բառեր, որոնք գործածվում են այլ բառերի հետ՝ առանց նոր կամ լրացական իմաստ հաղորդելու արդեն ասվածին: Օր.՝ «Ինչը **որ** Ձեզ չի հետաքրքրում, բացառեք»։ ընդգծված բառը գրական լեզվի նորմերի սահմաններում է, բայց խոսքի հակիրճության, սեղմության տեսակետից միանգամայն ավելորդ է: Կամ՝ որը **որ, ով որ, որտեղ էլ որ, երբ որ, կարծես թե, որքան էլ որ, ուր էլ որ, ինչ էլ** ևն: Գիտական կամ պաշտոնական խոսքում հաճախ են գործածում, օրինակ, **այլ նաև** հարադրավոր շաղկապը: Կանոնական ձև է: Չի հակասում գրական հայերենի նորմերին: Բայց ակնհայտորեն երկարաբան է, անհակիրճ, ինչու չէ, նաև իր մի մասով՝ **այլև**–ի համեմատությամբ ավելորդ. «Հայտնում են ոչ միայն կատարվածի, **այլ նաև** (<այլև) սպասվելիք դեպքերի մասին»:

Ավելադրությունը բնորոշ է ժողովրդական լեզվամտածողությանը և հաճախ է հանդիպում խոսակցական լեզվում: Գրական լեզվում պիտի խուսափել դրանց գործածությունից, մանավանդ երբ ուզում եք, որ Ձեր խոսքը լինի հարուստ, անմիօրինակ, հակիրճ և ազդեցիկ:

Կրկնաբերությունը բառի, դարձվածքի կամ բառակապակցության, երբեմն էլ նախադասության կրկնությունն է շեշտողական կամ հուզական նշանակությամբ. «**Երգը** բնության մասին էր... **Երգը** կանաչ վարոցներով հոտաղների մասին էր և բանջարի ելած նախշուն գոգնոցներով աղջիկների... **Երգը** բնության ու սիրո մասին էր...» (ՄԳ):

Հարուստ ու բազմազան է դարձնում խոսքը: Ունի հետևյալ դրսևորումները. 1. Նախադասության լրացում առնող որևէ անդամ կրկնվում է, սակայն կրկնվում է

առնվազն մեկ (երբեմն՝ շատ) լրացումով հանդերձ, որով նախադասության այդ անդամի իմաստն ավելի է ընդգծվում, բացատրվում, կարևորություն է ստանում. «Ես սպասել եմ քեզ **յուրաքանչյուր վայրկյան**, Եվ երազել, որ երթս երազվի քեզ, **Յուրաքանչյուր վայրում, յուրաքանչյուր վայրկյան**, Կնոջական ցնորք **իմ, իմ** Նավգիկե...» (Ե2), «Մեզ համար **կարևոր, շատ կարևոր** են Ձեր դիտարկումները»:
 2. Կրկնվող անդամը ստանում է երկրորդական նախադասությամբ արտահայտված լրացում. «Ես ընդամենը ներկայացնում եմ **փաստեր, փաստեր**, որոնք, իմ համոզմամբ, ապացուցում են իմ պաշտպանյալի անվիճելի անմեղությունը»:
 3. Օժանդակ բայը կրկնվում է միևնույն ենթակային վերագրվող բայ-ստորոգյալների կազմում, թեև դրանցից մեկը բավական է ստորոգման գործառույթն իրականացնելու համար. «Քննարկվում **էր**, անընդհատ քննարկվում **էր**, վերլուծվում ու շահարկվում **էր** նույն հարցը»:

Կրկնաբերության տարատեսակներ են **նույնասկիզբը, նույնավերջը, հանգույցը, կցուրդը**: Բնորոշ են առավելապես գեղարվեստական գրականությանը, գործածական են նաև ճարտասանական խոսքում:

Լեզվական նույն միավորների անհարկի կրկնությունը խոսքը դարձնում է միօրինակ (տես **Կրկնաբանություն**):

Ծան.: Երբեմն, մասնավորապես մասնագիտական տեքստերում անհնար է խուսափել նույնարմատ բառերի համատեղ գործածությունից կամ բառի կրկնությունից, ինչպես՝ «**Քննչական** մարմինները հետաքննություն անցկացրին», «Օտար **բառերի** բացատրական **բառարան**», «Ֆրանսիայի ԱԳՆ-ում գործող երկրորդ գլխավոր **վարչությունը** կոչվում է միջազգային համագործակցության և զարգացման **վարչություն**»:

3.7.10. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԱՑԻՆ ՁԵՎԵՐ ԿԱՄ ՏԵՍԱԿՆԵՐ: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր ոճական արժեքը: **Պարզ նախադասություններն** առավել հատուկ են ժողովրդական խոսքին. պարզ, հստակ, ճշգրիտ ձևակերպումների համար ունեն անփոխարինելի դեր: Երբ անհրաժեշտություն կա խոսքը դարձնելու բազմաբովանդակ և տարողունակ, բարդ կառույցների նշանակությունն անփոխարինելի է: **Երկկազմ նախադասություններն** ապահովում են մտքի ճշգրտությունը, հստակությունը, տեղ չեն թողնում այլասացության: Հաճախ են գործածվում գիտական և պաշտոնական ոճերում: Մինչդեռ **միակազմ նախադասություններն** այս տեսակետից «կաղում են»: Բայց դրանք էլ ունեն իրենց առավելությունը. հնարավորություն են ստեղծում հստակ, համառոտ, հակիրճ խոսքի: Հաճախակի կիրառություն ունեն խոսակցական ոճում և ՁԼՄ-ների լեզվում: **Բարդ ստորադասական նախադասությունները** լավագույն միջոց են դատողություններ, եզրահանգումներ, երևույթների պատճառահետևանքային կապերն ու փոխադասականավորվածությունը արտահայտելու, խոսակցին համոզելու համար: **Բարդ համադասականները** խոսքին հաղորդում են որոշ հանդիսավորություն, միօրինակություն, ներդաշնակություն, ավելի մատչելի են, հարմար միջոց են միտքը ծավալելու համար: Միայն կամ գերազանցապես բարդ նախադասություններով կազմված խոսքը վերամբարձ է, երբեմն՝ ծանրաշունչ, դժվար ընկալելի, թեև թվում է ավելի լուրջ ու ազդեցիկ: Եվ հակառակը, միայն պարզ նախադասություններով կազմվածները լինում են դյուրըմբռնելի, հստակ, բայց

հանդիսավորությունից զուրկ, հաճախ էլ՝ պարզունակ: Լավագույնը դրանց ներդաշնակ համատեղումն է՝ ըստ խոսքի բովանդակության, ձևի, հրապարակվող նյութի, իրադրության, կողմերի փոխհարաբերության, նպատակադրման ևն:

Նախադասության հաղորդակցական-հնչերանգային տեսակները: Նախադասությունները արտահայտում են ոչ միայն միտք, այլև վերաբերմունք իրենց հաղորդած մտքի, տեղեկության նկատմամբ: Այդ վերաբերմունքը կարող է արտահայտվել տարբեր միջոցներով՝ վերաբերականներով ու ծայնարկություններով, հոմանիշների ընտրությամբ, պատկերավորման-արտահայտչական միջոցներով, նախադասության կառուցվածքով, հնչերանգով ևն: Այդ միջոցներից է նախադասության հաղորդակցական-հնչերանգային տեսակի ընտրությունը: Այդ տեսակները, ինչպես գիտենք, չորսն են՝ **պատմողական, հարցական, հրամայական և բացականչական:**

Դրանցից որևէ մեկի ընտրությունը կախված է խոսքային իրադրությունից: Հաղորդակցման միևնույն նպատակն ունենալով՝ խոսողն ընտրում է այդ տեսակներից որևէ մեկը՝ հաշվի առնելով խոսակիցների առկայությունը և կազմը, իր և խոսակիցների հարաբերությունը և շատ այլ հանգամանքներ: Օր.՝ եթե ուզում եք իմանալ համագործակցության համար Ձեր կողմից կատարված առաջարկները մերժելու պատճառները, կարող եք Ձեր գործընկերոջը դիմել հետևյալ տարբերակներով՝ 1. «Ցանկալի կլիներ իմանալ մերժման պատճառները»: 2. «Շատ կցանկանայինք մեր համագործակցությունը խոչընդոտող պատճառների մասին տեղեկանալ»: 3. «Հարգաթան գործընկեր, չէի՞ք ասի՝ ինչ հիմնական պատճառներից դրդված եք մերժել համագործակցության մեր առաջարկները»: 4. «Հիմնավորե՞ք մերժումը»:

Այս տարբերակներից ամեն մեկն ունի իր հնչերանգային առանձնահատկությունը: Առաջին նախադասությունը պատմողական է. այն հնչերանգի առումով չեզոք է, չկան հատուկ ձևով շեշտված բառեր: Երկրորդը բացականչական է. նրանում կա տևական (բացականչական) շեշտով արտասանվող բառ: Երրորդը հարցական է. նրանում կա բարձրացող (հարցական) շեշտով բառ, կա նաև հորդոր: Չորրորդը հրամայական է. նրանում կա սուր (հրամայական) շեշտով արտասանվող բառ:

Նախադասությունների հնչերանգային տեսակները տարբերվում են նաև ստորոգյալի արտահայտությամբ՝ բայի եղանակով և ժամանակով: Լրացուցիչ դեր ունի նաև վերաբերականների, ծայնարկությունների առկայությունը: Ի դեպ, նախադասության բնույթը չի փոխում կոչականը, որը սովորաբար ունենում է հատուկ շեշտադրում:

Պատմողական նախադասություն: Չեզոք հնչերանգով նախադասություն է: Նպատակն է՝ հաղորդել, պատմել, նկարագրել որևէ բան, դատողություն անել, միտք հաղորդել: Հնչերանգը հանդարտ է, առանց հատուկ (հարցական, տևական կամ սուր) շեշտի: Պատմողական նախադասության ստորոգյալը կարող է արտահայտվել բոլոր եղանակների դրական կամ ժխտական բայաձևերով՝ բացի հրամայականից՝ «Հայտնի է, որ դարեր շարունակ ֆրանսերենը եղել է գերիշխող լեզու դիվանագիտական պաշտոնական շփումների ժամանակ»: «Գնացքը մեկնում է Երեկոյան, պիտի շտապենք»: Պատմողական նախադասությունը

կարող է լինել նաև միակազմ՝ «Բաժին 4. հատուկ հանձնարարականներ»։ Պատմողական նախադասություններում կարող են լինել հաստատական, ժխտական, երկբայական, սաստկական, զիջական, անջատական, մեկնական և այլ վերաբերականներ՝ «**Մի խոսքով**, մեկնում ենք»։ «**Անշուշտ**, սա առաջին փորձն է»։ «**Թերևս** լավ ստացվի»։

Հարցական նախադասություն։ Հարցական հնչերանգով նախադասությունն է։ Նպատակն է՝ հարցի միջոցով տեղեկություն կամ վերաբերմունք ակնկալել, արտահայտել մեղմ խնդրանք, շեշտել որևէ փաստ, իրողություն՝ առանց պատասխան ակնկալելու (ճարտասանական հարց), ինչպես՝ «Ինչն է Ձեզ հատկապես մտահոգում»։ «Ո՞վ չգիտի, թե նա ինչ հետին նպատակներ ունի»։ «Չէիք ասի՝ ինչպես հասնեմ քաղաք»։

Հնչերանգին բնորոշ է հարցական շեշտը, որ սովորաբար դրվում է բայի կամ հարցական դերանվան, իսկ երբեմն՝ այլ բառի վրա՝ «**Դա՛** է հիմնական պատճառը»։ «**Կարո՞ղ եմ** արդյոք խոսել օրենքի մասին, երբ զինված եմ»։ «**Չե՞ք** խոսելու»։ Եթե բազմակի անդամները միացած են **թե** երկրնտրական շաղկապով, ապա վերջինս սովորաբար վերցնում է իրեն հաջորդող անդամի հարցական շեշտը՝ «Հարցը այսօր է քննարկվելու, **թե՛** վաղը»։ Հարցական նախադասությունը երբեմն կարող է լինել միակազմ՝ «Ներել, ինչի՞ համար»։

Բացականչական նախադասություն։ Բացականչական հնչերանգով նախադասությունն է։ Նպատակն է՝ արտահայտել զգացմունք, հուզական վերաբերմունք, մասնավորապես՝ զարմանք, հիացմունք, ցնծություն, սարսափ, ցավ, ափսոսանք, ցանկություն, ինչպես նաև մաղթանք, ողջույն, կոչ, հանդիմանություն և այլն՝ «Ինչ դժբախտություն է չունենալ Աստված»։ «Որքան շատ են ճշմարտության թշնամիները»։ «Էլ ինչ արահետ, որ տաճար չի տանում»։ «Ա՛յ քեզ բան... Ամո՞թ քեզ...»։

Հնչերանգին բնորոշ է տևական (բացականչական) շեշտը, որը գրավոր խոսքում նշանակվում է երկարացման նշանով՝ «Սև գիշեր, և հուշեր, և խոհեր անհամար...»։ Բացականչական նախադասությունը շատ հաճախ լինում է միակազմ. «Տարիներ, տարիներ...»։

Հրամայական նախադասություն։ Հրամայական հնչերանգով նախադասությունն է։ Նպատակն է՝ արտահայտել հրաման, կոչ, հորդոր, խնդրանք, կարգադրություն, ցուցում, առաջադրանք, թելադրանք, արգելք՝ «Ստեղծեք քիչ օրենքներ, բայց հետևեք, որ դրանք կատարվեն»։ «Ոչ մեկին մի՛ ենթարկվիր, բայց և ոչ մեկին էլ քեզ մի՛ ենթարկիր»։ «Եթե դուք ցանկանում եք, որ ձեր գրությունը կարդան, գրե՛ք այն մեկ էջի վրա»։

Հնչերանգին բնորոշ է սուր շեշտը՝ «Մի՛ վախեցեք կատարելությունից. դուք դրան չեք հասնի»։ Ստորոգյալը մեծ մասամբ արտահայտվում է հրամայական եղանակի դրական և արգելական ժամանակաձևերով՝ «**Մոտեցի՛ր** ինձ»։ «Երբեք **մի՛ գործածիր** այն բառը, որի իմաստը չգիտես»։ Կարող է արտահայտվել նաև հետևյալ ժամանակաձևերով.

• **Ենթադրական եղանակի ապառնիի երկրորդ դեմքի դրական կամ ժխտական ձևերով՝** «Վաղը կհանդիպե՞ք, կայայմանավորվե՞ք հետագա անելիքների մասին»: «Չե՞ք պատասխանի որևէ հարցի»:

• **Ըղծական եղանակի ապառնիի երկրորդ դեմքի ժխտական ձևերով՝** «Զմիջամտե՛ք գործարքին»:

• **Սահմանական եղանակի ապառնիի երկրորդ դեմքով՝** արտահայտելով մեղմ հրաման, **կարգադրություն՝** ««Գնալու եք և մասնակցելու եք այդ արարողությանը», – կարգադրեց աշխատակազմի ղեկավարը»:

• **Ըղծական եղանակի ապառնիի առաջին դեմքով՝** արտահայտելով կարգադրություն, հրաման թե՛ խոսակցին, թե՛ իրեն՝ խոսողին՝ «Իսկ այժմ **անցնե՛նք** մտքերի փոխանակության, այնուհետև՝ քվեարկության»:

• **Սահմանական եղանակի ներկայի երկրորդ դեմքով՝** հորդոր. ունի խոսակցական երանգ՝ «Վաղը հանդիպում ես գործատուի հետ, ճշտում մեր անելիքները»:

Հրամայական նախադասությունները հաճախ լինում են միակազմ՝ «Լռել»: «Դուրս այստեղից»: Հրամայական նախադասություններին բնորոշ են կոչականը, կոչական ծայնարկությունները, **այո՛, ո՛չ, չե՛** և այլ վերաբերականներ՝ «Այո՛, սկսիր»: «Ո՛չ, մի՛ գնա»: «Է՛յ, մի՛ աղմկեք»:

Ծան.: Ոմանք ընդունում են նաև նախադասության հնչերանգային **ըղծական** տեսակ՝ «Տամ պարանոցս կարոտին այն երկնուղեշ Ու օրորվեմ եղերական ու անբասիր» (ԵԶ):

Խառը բնույթի նախադասություններ: Երբեմն միևնույն նախադասության մեջ համատեղվում են տարբեր բնույթի նախադասությունների տարրեր՝ «Ծնվեցիր՝ ծնիր՝ կարգն է բնության»: «Ինչ գեղեցկություն. երբևէ տեսել ես այսպիսի բան»: Այդ տարրերից որևէ մեկը սովորաբար լինում է գերիշխող և որոշում է նախադասության հաղորդակցական–հնչերանգային տեսակը:

3.7.11. ՀԱՄԱՆԻՇ ԵԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ: 1. Դրական և ժխտական նախադասություններ: Ժխտումը հաճախ հնչում է կտրուկ և կոշտ. համապատասխան դրական բնույթի նախադասությունը մեղմացնում է խոսքի այդ երանգը, խոսքի բովանդակային կողմը նկատելիորեն հարստանում է, որովհետև վերաբերմունքային ինչ–ինչ նրբերանգներ են հավելվում հաղորդվող մտքին: «Դատողությունը ճիշտ չէ»: – «Դատողությունը սխալ է». երկրորդը առավել ժխտողական երանգ ունի: «Նա խելոք է» և «Նա հիմարներից չէ» զուգահեռ կառույցներից երկրորդը արտահայտում է հավելական իմաստ. ակնարկում է խոսքի առարկայի՝ խելոք լինելուց բացի նաև այլ հատկանիշներ (ճարպկություն, խորամանկություն ևն) ունենալու հանգամանքը: Սովորական խոսքում դրանք ունեն ռճական–արտահայտչական արժեք, իսկ խոսքի դրսևորման այլ ձևերում (օր.՝ պաշտոնականում) դրանցից մեկի կամ մյուսի ընտրությունը թելադրվում է խոսքի ճշգրտությամբ, ինչպես, օրինակ՝ «Նման դեպքերում հանցակցության ինստիտուտը **առկա չէ** (⇒բացակայում է)», «Հակառակ դեպքում հանցակազմը **առկա չէ** (⇒բացակայում է)»:

Կան ժխտումով կազմվող ձևեր, որոնց տրվող և՛ դրական, և՛ բացասական պատասխանները հանգում են միևնույն պատասխանին՝ օր.՝ «Դեմ չեք, որ Ղրիմը մտնի Ռուսաստանի կազմի մեջ» (Ո՛չ (= Դեմ չեմ): Այո՛ (= Դեմ չեմ)), «Այդ խնդիրը չի լուծվում» (Ո՛չ (= Չի լուծվում): Այո՛ (= Չի լուծվում)):

Ավելի հաճախ ժխտումը արտահայտվում է հարցով («Բա սա գրո՞ծ է»: = «Գործ չէ»): Հաստատումը կարող է արտահայտվել ժխտական նախադասությամբ՝ ճարտասանական հարցով («Այդ մասին ռի՞ չգիտի»: = «Այդ մասին բոլորը գիտեն»): Դրական համանիշներ ունենան պատմողական նախադասությունները («Լավ է զգում իրեն»: = «Վատ չի զգում իրեն»): Խոսքին բազմազանություն է հաղորդում նաև կրկնակի ժխտումը. «Այդ գործը չկատարելը չի խրախուսվում»: = «Այդ գործը կատարելը խրախուսվում է»: «Դուք չեք կարող չխոսել» = «Դուք պիտի խոսեք»: Կրկնակի ժխտումով կարելի է արտահայտել խորիմաստ միտք. «Խոսեք ոչ թե այնպես, որ դատավորը կարողանա Ձեզ հասկանալ, այլ այնպես, որ նա չկարողանա Ձեզ չհասկանալ» (Պ. Պորոխովչիկով):

2. Նախադասության անդամների համանիշ ձևեր: Նախադասության նույն անդամի արտահայտությունը՝

• **նույն խոսքի մասի տարբեր ձևերով՝** իմաստային և ոճական նրբերանգներ են հավելվում՝ «Կախված է պատիճ»//«Կախված է», «Տասից հինգ է պակաս»//«Տասին հինգ է պակաս»,

• **հոլովով և կապային կառույցով.** առանց կապի՝ միայն հոլովներով ձևերը, ինչպես ասվել է, ավելի համառոտ են, սեղմ, հակիրճ, կապային կառույցները, որպես կանոն, ավելի հստակ են արտահայտում հարաբերությունը, ասելիքը դարձնում ավելի որոշակի՝ հավելելով փոքր-ինչ խոսակցական նրբերանգներ. «Ուշադրություն մի դարձրեք այդ **հանգամանքին**»//«Ուշադրություն մի դարձրեք այդ **հանգամանքի վրա**», «Մեր տնից մինչև համալսարան հինգ րոպեի ճանապարհ է»//«Մեր տնից համալսարան հինգ րոպեի ճանապարհ է». երբեմն հավելում են այլ նրբիմաստներ, օր.՝ «Հանդիպեցի իմ **գործընկերոջը**»//«Հանդիպեցի իմ **գործընկերոջ հետ**». առաջինը կարող է նշանակել նաև մի տեսակ պատահական և կարճ հանդիպում, երկրորդը՝ կապային կառույցով կազմությունը, ենթադրում է նաև նախնական պայմանավորվածություն, զրույց, միգուցե նաև փոքր-ինչ տևական հանդիպում ևն,

• **տարբեր կապերով.** կապի բառային հատկանիշներով (գնահատողականություն, գործածականություն, ծագումնաբանական որակներ ևն) պայմանավորված՝ խոսքը ձեռք է բերում համապատասխան երանգներ՝ «Հարցի վերաբերյալ կարծիք»//«Հարցի մասին կարծիք», «Այն մասին, որ...»//«Առ այն, ...», «Հանդիպման առիթով (առթիվ)»//«Հանդիպման կապակցությամբ» ևն:

3. Շաղկապական և անշաղկապ բարդ նախադասություններ: Առաջինները խոսքին տալիս են ճշգրտություն, ավելի որոշակի են դարձնում խոսքային միավորների հարաբերությունը: Երբ նպատակ կա ընդգծելու դատողությունների պատճառահետևանքային կապը, անելու ընդհանրացումներ և եզրակացություններ, շաղկապները պարտադիր գործածվում են: Այդ իսկ պատճառով դրանք հաճախակի են հանդիպում գիտական և պաշտոնական ոճերում, մասնավորապես

իրավաբանական ենթադրում: Ստեղծում են հանդիսավոր ու համեմատաբար ծանր ոճ, դանդաղում է խոսքի տեմպը, հատուկ են գրավոր-գրքային խոսքին. ասելիքը դառնում է ավելի պատճառաբանված, հետևողական, ինչպես՝ «Սփյուռքը մեր ամենամեծ ողբերգության հետևանքն է, ուստի դեռ հարց է այն, թե պետք է ցավել նրա գոյությամբ, թե՛ պետք է հպարտանալ և դիտարկել այն որպես մեր պատմության «լավագույն» ձեռքբերում, քանզի տասնամյակներ է, ինչ Սփյուռքը ամուր կանգնած է մեր կողքին և մշտապես ձեռք է մեկնում մայր հայրենիքին»:

Երկրորդները ձևավորում են արագ խոսք, հատուկ են ժողովրդական մտածողությանը, ուղեկցվում են հատուկ հնչերանգով, որը նրանց տալիս է հուզականություն, սրություն, ստեղծվում է լարվածություն. «Հիմա գնում եմ՝ հանդիպեմ նախարարին, ներկայացնեմ մեր ծրագիրը, փորձեմ շփման այլ եզրեր գտնել, հնարավորինս քննարկենք խնդիրը. հավանության դեպքում բանակցությունները կշարունակենք, գուցե ինչ-ինչ զիջումների գնանք, հակառակ դեպքում կգործենք մեր պլանի համաձայն»: Անշաղկապ կառույցները ազդեցիկ են խոսքի եզրափակիչ մասում. «Ավարտին պատշաճում են անշաղկապ արտահայտությունները, որպեսզի դա վերջաբան լինի, այլ ոչ թե ճառ» (Արիստոտել):

4. Ներգործական և կրավորական կառույցներ: Առաջինները սովորական՝ չեզոք կառույցներ են և որքան էլ շատ գործածվեն, միևնույնն է, խոսքը միօրինակ չեն կարող դարձնել: Երկրորդները ոճականորեն ակտիվ են. որոշ վերամբարձություն են հաղորդում խոսքին, հանդիսավորություն են ստեղծում, ուստի առօրյա խոսքում հաճախակի կիրառություն չունեն: Հակառակ դեպքում խոսքը կդառնա միօրինակ: Ներգործական կառույցը երբեմն կարող է ընդմիջվել կրավորականով, եթե խոսողը նպատակ ունի չշեշտելու տրամաբանական ենթակայի դերը, կամ երբ անհրաժեշտություն կա խոսքի առարկայի նկատմամբ դրսևորելու չեզոք վերաբերմունք: «Կրավորական կառուցվածքի դեպքում վերանում է նաև խոսողի հոգեբանական միջամտությունը իր ներկայացրած պատումի մեջ, ասելիքն ասվում է ուրիշի կողմից, խոսքը դառնում է մի տեսակ չեզոք, խոսողը կարծես թե իրեն ապահովագրում է պատմածի բովանդակության համար պատասխանատվությունից»⁶⁵: Օր.՝ գործողություն կատարողին չանվանելու կամ դրա անորոշությունը՝ անհայտ լինելը շեշտելու և կամ խոսքային այս իրադրության մեջ իրեն ապահովագրելու նպատակով խոսքի հեղինակը իր միտքը արտահայտում է հետևյալ կառույցով. «Նրա հետ խոսելուց հետո ես հասկացա, որ **խաբվել եմ**». խաբվածությունը բացահայտվում է զրույցից հետո, բայց ով է խաբողը. **նա՞ն**, թե ուրիշ մեկը. երկրորդ նախադասության կառուցվածքը հարցի պատասխանը հստակ չի տալիս: Այլ օրինակներ՝ «Հարցը քննարկվեց»//«Քննարկեցին հարցը», «ՀՀ կառավարության կողմից ծրագրվել են մի շարք միջոցառումներ»//«ՀՀ կառավարությունը ծրագրել է մի շարք միջոցառումներ»:

5. Դերբայական դարձված և երկրորդական նախադասություն. առաջինները նպաստում են խոսքի հակիրճությանը, համատեղում են զուգընթաց գործողությունների նկարագրություններ, խոսքը դառնում է ավելի տարողունակ: Օր.՝ «Հրաժարվելով հարցի համատեղ քննարկումից, խնդրի լուծումը թողնելով առ-

⁶⁵ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Եր., 1990, էջ 255:

կախ՝ ըստ էության կողմերը ստեղծել են բաց փակուղի՝ չմտածելով հետագա բարդությունների մասին»:

Դերբայական դարձվածների հաճախակի գործածությունը կամ կուտակումը հատուկ չէ հայերենին և առաջ է բերում խոսքի արհեստականություն, անհստակություն: Եթե խոսքի կառույցը տալիս է հնարավորություն, ապա երբեմն նպատակահարմար է դերբայական դարձվածները կամ դրանց մի մասը փոխարինել երկրորդական նախադասություններով: Դիմավոր բայի առկայությունը խոսքին հաղորդում է հստակություն և դինամիզմ: Օր.՝ «Արձակուրդ գնալիս, երկարատև գործուղման մեկնելիս կամ այլ պատճառներով բացակայելիս աշխատողը պարտավոր է իր մոտ եղած փաստաթղթերը հանձնել **իրեն փոխարինող անձին**» «Արձակուրդ գնալիս, երկարատև գործուղման մեկնելիս կամ այլ պատճառներով բացակայելիս աշխատողը պարտավոր է իր մոտ եղած փաստաթղթերը հանձնել **այն անձին, ով փոխարինելու է իրեն**»:

Ծան. Միշտ չէ, որ կարելի է գործածել դերբայական դարձված: Սովորաբար դա հնարավոր է դառնում միայն այն դեպքում, երբ գործողությունը, որ արտահայտվում է դերբայով և ստորոգյալով, իրականացնում է միևնույն անձը (առարկան): Հակառակ դեպքում ստացվում է երկիմաստություն կամ պարզապես անիմաստություն: Օր.՝ «Հեռագրերը մատյանով հանձնվում են համապատասխան ծառայությունների օգնական-ռեֆերենտին՝ նշելով ընդունման ամսաթիվը և ժամը» (ստացվում է՝ հեռագրերն են նշում ամսաթիվը): Կամ հետևյալ օրինակները՝ «Հեռագրերի ընդունումը կատարվում է շրջանառության բաժնում՝ նշելով() ամսաթիվը»: «Հաշվի առնելով 1999 թ. բյուջեի պակասուրդի անհամաչափ բնույթը՝ հրատապ է դառնում () ծախսերի ու եկամուտների համաչափության ապահովումը»: Այս կարգի սխալներից խուսափելու համար կամ դերբայական դարձվածը փոխարինվում է առանձին նախադասությամբ («Հեռագրերի ընդունումը կատարվում է շրջանառության բաժնում. նշվում է ամսաթիվը»), կամ փոխվում է գլխավոր նախադասության կառուցվածքը («Հեռագրերն ընդունում է շրջանառության բաժինը՝ նշելով ամսաթիվը»):

Դերբայական դարձվածով նախադասությունների կուտակումը, այսպիսով, ստեղծում է միօրինակություն, իսկ երկրորդական նախադասությունների առատությունը ծանրացնում է ոճը: Վերջինները, սակայն, անփոխարինելի դեր են կատարում դատողական խոսքի կառուցման մեջ, պատճառահետևանքային երևույթները նկարագրելիս ու բացատրելիս՝ «Ձեզ պարտավորված մի զգացեք հարցին պատասխանելու լոկ այն պատճառով, որ այն տրվել է: Եթե հարցը չի առնչվում Ձեր ասելիքին, ապա փոխեք գրույցի ուղղվածությունը, որպեսզի ուրվագծվեն Ձեր լուսաբանելիք թեմաները: Դա կարելի է անել, զորօրինակ, այսպես՝ «Դուք հետաքրքրական խնդիր շոշափեցիք, սակայն ինձ թվում է, թե այս իրավիճակում առավել կարևոր է...»» (Դ. Լյուիս):

Այդ երկուսի պատճառաբանված համատեղ գործածությունը ակնհայտորեն հարստացնում է խոսքը, այն դարձնում է բազմազան ու հետաքրքիր: Ինչպես, օրինակ՝ հետևյալ հատվածներում.

Ձեր խոսքը պետք է ստույգ արտահայտի այն, ինչ դուք ցանկանում եք ասել: Եթե Դուք այս կամ այն բառը կամ արտահայտությունը դժվարանում եք ըմբռնելի արտասանել, ապա գտե՛ք դրանց փոխարինողները: Զանազան, որ նախադասությունները միշտ լինեն կարճ, հասկանալի ու պարզ: Հիշե՛ք, որ Ձեր խնդիրն ամենևին այն չէ, որ լսարանին ցուցադրեք,

թե ի վիճակի եք գործածելու դժվարարտասանելի բառեր ու շարահյուսական բարդ կառույցներ (եթե Ձեր նպատակը միայն սեփական կրթվածությունն ու խելքը ի ցույց դնելը չէ), այլ այն, որ Ձեր ունկնդիրները միանգամայն ճիշտ ըմբռնեն այն, ինչ Դուք ցանկանում եք նրանց ասել (Զ. Չեստարա):

6. Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք: Ընդունված է ասել, որ շարահյուսական այս կառույցների արտահայտչականությունը պայմանավորված է նրանով, որ առաջինները խոսքին հաղորդում են ճշգրտություն և հավաստիություն, երկրորդները՝ պատմողական երանգներ՝ երկրորդաբար պահպանելով առաջիններին հատուկ գծերը: Ուսումնասիրողները, սակայն, առանձնացնում են արտահայտչական նաև այլ հատկանիշներ⁶⁶: Բառացիորեն բերված ուրիշի ուղղակի խոսքը, որը կոչվում է **ուղղակի մեջբերում**, խոսքաշարում կատարում է որոշակի դեր, որը ունի և դրական, և բացասական կողմեր: Հաճախակի մեջբերումները նախ թուլացնում են հեղինակային խոսքի ուժը. խոսողի կարծիքը մի տեսակ կորչում է մեջբերումների հորձանքում, հստակ չեն տարանջատվում հեղինակի և մեջբերվող խոսքերը: Բացի այդ՝ մեջբերումներով առատ խոսքը հնչում է միօրինակ ու անհետաքրքիր: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ոչ միայն ընտրողաբար վերաբերվել դրանց՝ օգտվելով միայն շատ վառ, տպավորիչ, հետաքրքիր ու իմաստալից մեջբերումներից, այլև խոսքում հստակ սահմանազատումներ տալ մեջբերվող խոսքի վերաբերյալ, օրինակ, ասենք՝ բանավոր խոսքում մեջբերման սկիզբը կարելի է ազդարարել **մեջբերում**, իսկ վերջը՝ **մեջբերման ավարտը** բառերով: Գրավոր խոսքում դա պարտադիր արտահայտվում է համապատասխան կետադրությամբ:

Ուղղակի մեջբերումը կատարվում է առանց փոփոխության. չպետք է փոխել բառերը, քերականական ձևերը, նույնիսկ կետադրությունը: Մեջբերումը չպետք է կտրել համատեքստից կամ կատարել տարբեր հատվածների արհեստական միացում: Բանավոր խոսքում ցանկալի է մեջբերման հեղինակի անունը նշել սկզբից: Դրանով խոսքը դառնում է ավելի հետաքրքիր, գրավիչ, մանավանդ, եթե հեղինակը հայտնի անձնավորություն է: Խոսքին աշխուժություն ու կենդանություն է հաղորդում նաև անուղղակի խոսքով մեջբերումը (**անուղղակի մեջբերում**):

Առավել արդյունավետ ձև է, երբ մեջբերվող խոսքի երկու տեսակները գործածվում են միաժամանակ: Դա բազմազանություն է հաղորդում խոսքին: Խոսքը դառնում է ավելի աշխույժ, երբ խոսողը (գրողը) բանավիճում է մեջբերվող մտքի հետ՝ դիպուկ փաստարկումներով հերքելով կամ հաստատելով այն: Ահա այդպիսի խոսքի մի օրինակ բանավիճային ելույթից.

Ես բնավ համաձայն չեմ առաջին նախագահի այն որակումներին, թե «միայն հիմարը կամ իրեն հիմարի տեղ դնողը կհավատա ու կփորձի մյուսներին էլ հավատացնել, որ վարչախումբն այդ փոփոխությունները նախաձեռնել է երկրի ու ժողովրդի բարօրության համար»: Կարծում եմ՝ առաջին նախագահն ինքը պետք է հետևի իր հորդորին, երբ ասում է՝ **քաղաքական բառապաշարը պետք է փոխվի**: Այդ տեսակետից օգտագործված բառապաշարը

⁶⁶ Տե՛ս Л. Введенская, Л. Павлова, Е. Катаева, Русский язык и культура речи, М., 2005, էջ 129–132:

ոչ միայն նպատակահարմար չէ, այլև վկայում է, որ որոշ մարդիկ խորամուխ չեն եղել սահմանադրական փոփոխությունների բովանդակության մեջ:

Ծան. Շարահյուսական առանձին կառույցներ փոխառվում կամ պատճենվում են օտար լեզուներից: Դրանք ոչ միայն ստեղծում են լեզվական անճշտություններ, խրթին են դարձնում նյութի հաղորդումը, այլև խորթ են հայ մարդու լեզվամտածողությանը: Օր.՝ «Ինչ կարելի է հասկանալ համակարգչային տեղեկատվության տակ» նախադասությունը հայերենում կձևակերպվի այսպես՝ «Ինչ է նշանակում համակարգչային տեղեկատվություն»: Կամ՝ «Կառավարման համակարգի տակ պետք է հասկանալ...» «Կառավարման համակարգ ասելով՝ պետք է հասկանալ»: «Հանրորեն վտանգավոր արարքը բնութագրվում է հետևյալ պարտադիր հատկանիշների առկայությամբ» «Հանրորեն վտանգավոր արարքը բնութագրվում է հետևյալ պարտադիր հատկանիշներով»:

3.7.12. ԱՆՇԱՂԱԿԱԴՈՒԹՅՈՒՆ: Շաղկապը կամ շաղկապները միտումնավոր բաց են թողնում՝ խոսքին արագություն, տեմպ, անընդհատ շարժման տպավորություն հաղորդելու համար. խոսքը դառնում է ավելի սեղմ ու հատու: Առավել բնորոշ է ժողովրդական խոսքին և բանավոր հաղորդակցմանը: Ձեռքվում են առավելապես համադասական շաղկապները: Մտքով հիմնականում հնարավոր է վերականգնել բաց թողնված շաղկապը: Օր.՝ «Հողն արյունի էր ծարավ, (Իսկ) Ինքը ծարավ էր հողի...» (ԴՎ), «Ընկերություն անողը՝ շատ, (Իսկ) ընկերը՝ քիչ» (Ժող.), «Լավը չես, խեղճ ես, լավը չես, զավակս, որդիս, առաջնեկս, իմ հրկյսս, իմ թանկս, լավը չես. (որովհետև) մեջդ վրեժ չկա» (ՀՄ), «Խենթի պես, նրանց դիակների վրայով քշեց իր ձին, Այրեց, ջարդեց, թափեց, քանդեց, քանդեց, Գյուղը դաշտ դարձրեց կարմիր հնձի» (ԵԶ):

3.7.13. ԲԱԶՄԱՇԱՂԱԿԱԴՈՒԹՅՈՒՆ: Սովորաբար բնորոշվում է որպես խոսքի որոշակի հատվածում միավորիչ շաղկապների (շաղկապական բառերի) առատություն կամ միևնույն շաղկապի (շաղկապական բառի) բազմակի կրկնություն: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ բազմաշաղկապությունը շաղկապների անսովոր առատությունը կամ շաղկապների սոսկական կուտակումը չէ: Շաղկապների կրկնությունը կամ կուտակումը ոճական դարձույթ է դառնում այն դեպքում, երբ, խոսքում հատուկ կապակցական կամ բովանդակային դեր չկատարելով հանդերձ, ծառայում է խոսքի արտահայտչականությանը. խոսքը դարձնում է հանդիսավոր ու վեհ, գործողությունները՝ հանդարտ ու դանդաղընթաց, ստեղծում է որոշակի ռիթմ ու երաժշտականություն: Օր.՝ «Չլինի, որ երկնեմ ես, և չձնեմ, / Ողբամ՝ և չարտասվեմ, խորհեմ՝ և չհառաչեմ, / Ամպեմ, և չանձրևեմ, ընթանամ՝ և չհասնեմ, / Ես ծայն տամ, և դու չլսես, պաղատեմ՝ և անտես մնամ» (ԳՆ):

Բազմաշաղկապությունը չպետք է շփոթել կրկնադիր շաղկապի գործածության հետ՝ թե՛..., թե՛..., և՛..., և՛..., կա՛մ..., կա՛մ...: Ինչպես՝ «Ո՛չ օրենքների կապանքի մեջ ես, Ո՛չ կաշկանդված ես ինչ–որ կանոնով, Ո՛չ նվաղությամբ ես արգելափակված, Ո՛չ խոնարհված ես հպատակությամբ» (ԳՆ):

3.7.14. ԶԵՂՉՈՒՄ: Ինչպես հայտնի է, կրկնություններից խուսափելու կամ հուզական խոսքի երանգ ստեղծելու նպատակով խոսքաշարից որևէ խոսքային միավոր (բառ, բառակապակցություն, դարձվածք են) բաց է թողնվում: Ոճական նպատակներով կատարված զեղչումը, որ անվանում են նաև ճարտասանական զեղչում, չպետք է շփոթել քերականական զեղչման հետ, որի դեպքում զեղչվում են շաղկապը, հանգույցը, ստորոգյալը ևն: Այսպես՝ «Ասում են՝ նոր նախագիծը քննարկման փուլում է» նախադասության մեջ զեղչված է **թե** շաղկապը: Գործ ունենք քերականական զեղչման հետ: Կամ՝ «Փորձեցի համոզել, (բայց) ոչ ոք չուզեց ինձ լսել», «Մենք դրսում էինք սպասում, նրանք՝ (սպասում էին) տանը» ևն:

Ճարտասանական զեղչման դեպքում հնարավոր չէ ճշգրիտ վերականգնել զեղչված բառը, արտահայտությունը: այս դեպքում զեղչումը մեկից ավելի հոմանշային տարբերակների վերականգնման հնարավորություն է տալիս: Խոսքը դառնում է սեղմ, կտրուկ, նաև հուզական ուժգնություն է հաղորդվում գաղափարին: Ինչպես՝ «Արդ, սրա նման պիտի վերստին Կրկնեմ և բազում այլ ավաղումներ... Անողորքելի հայրական ցասում՝ դառնացած որդուս, Մեղսամած մարմնիս՝ աննորոգելի ապականություն, Ախտավոր հոգուն չարիք գտնողիս՝ նոր կշտամբանքներ...» (ԳՆ), «Ես ձեր անհայրենիք հերն անիծեմ, ես ձեր վնասարար, ես ձեր անսիրտ, անհոգի, վայրենի...» (ՀՄ), «- Իմ հորն են սպանել, քու հորը չեն սպանել, Լևոն, գնա՛: Դե գնա՛, ես քու,- և հրացանով հրեց Լևոնի ծունկը» (ՀՄ):

Զեղչման տեսակ է նաև դարձվածքի կամ արտահայտության մի մասի բացթողումը, որը հաճախ է հանդիպում ժողովրդական խոսքում, ինչպես՝ «Վերև՝ աստված, ներքևը՝ դու», «Խելոքին՝ մեկ, անխելքին՝ հազար ու մեկ», «Ինձ շատ է բարկացրել. ես նրա...», «Դուք ինձ՝ ինֆորմացիա, ես Ձեզ՝ ազատություն», «Նախ՝ հայրենիքիս, հետո՝ մարդկությանը», «Ամռան փուլը՝ ծմռան նույնը»:

Քերականական զեղչումն էլ վերջին հաշվով ոճական արժեք ունի: Շատ տարածված է ժողովրդական խոսքում: Հրապարակային կամ բանավիճային խոսքը դարձնում է սեղմ, ազդու, հուզական:

3.7.15. ՄԱՍՆԱՏՈՒՄ (պարոցելյացիա. իտալ.՝ **pacella**–մասնիկ, լատ.՝ **particula**): Նախադասության անդամների, հատկապես կարևոր բառի, արտասանական առանձնացումն է (ինքնուրույն արտասանական հնչերանգով նախադասության ձևավորումը) կամ տողատումը: Որպես դադարի ոճական յուրահատուկ միջոց՝ կարևորագույն շարահյուսական հնար է. ստեղծում է լարում, հույզ, տրամադրությունների աստիճանական կուտակում, հատու և կտրուկ խոսք և, իհարկե, համապատասխան ոլթմ ու համընթաց շարժման տոնայնություն, միաժամանակ շեշտադրում է նախադասության այս կամ այն անդամի բովանդակային կողմը: Գրավոր խոսքում դա սովորաբար արտահայտվում է վերջակետով: Մասնատումը համեմատաբար նոր երևույթ է խոսքում: Արևելահայ բանաստեղծության մեջ մասնատման բնորոշ օրինակներ է տալիս Ե. Չարենցը՝ «Ձեռքը խփեց սեղանին խմբապետ Շավարշը, Հողը դողաց: Խփեց ու խմեց: Նորից խմեց: Մոայլ: Ու ոչ մի բառ չասաց»: Այլ օրինակներ պարբերական մամուլից՝ «Երբեք նրան չէին վիրա-

վորել: Այդպես: Դաժանորեն: Անգթաբար», «Դա պետք է արվի այսօր: Առանց հապաղելու: Արագ: Անսխալ»:

Հրապարակային խոսքում ոճական այդ ձևի գործածությունը ենթադրում է ճարտասանական որոշակի հմտություններ, խոսքարվեստին տիրապետելու փորձառություն: Ահա քաղաքական ելույթից մի հատված՝ այդ հնարքի կիրառմամբ.

Քաղաքագետների մեծ մասը վստահ է՝ Ուկրաինայում տեղի ունեցած վերջին իրադարձությունները իրենց արտահայտությունն են ունենալու նաև Հարավային Կովկասում: Քաղաքագետների մեծ մասը չի սխալվում. այդ կանխատեսումներն իրականանում են օր օրի: Առնվազն՝ Հայաստանում: Հայաստանում ու Հայաստանի շուրջ: Իրականանում են ամենակեղտոտ ու ամենաստոր մեթոդներով: Արևելյան մեթոդներով: Արևելյան մեթոդներով՝ նաև հայերի կատարմամբ:

Պարզեցյացիան ուղեկցվում է նաև ոճական այլ հնարքներով՝ անշաղկապություն, զեղչում, կրկնության յուրահատուկ ձևեր: Դրանց համատեղ գործածությունը խոսքը դարձնում է առավել կտրուկ, դիմիկ, ազդեցիկ:

3.7.16. ՃԱՐՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՀԱՐՑ: Պատասխան չպահանջող կամ արդեն իսկ պատասխան պարունակող հարցն է, որը սովորաբար չի ուղղվում որոշակի խոսակցի, օր.՝ «– Էդ իմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»: «Լեզուդ փոխիր, հավատդ ուրացիր, էլ ընչի՞վ կարես ասիլ, թե որ ազգիցն ես» (ԽԱ): «Ո՛վ կարող էր հետը խոսել Կամ աչքերի միջից քաղել բոց մի դալուկ... Ֆեդայու կին՝ գյուղի պատիվ ու հիշատակ շատ սրբագին» (ԿԶ):

Ճարտասանության մեջ կիրառվող հնարքներից է ճարտասանական հարց ու պատասխանի միջոցով մենախոսական ելույթին երբեմն այսպես կոչված երկխոսական բնույթ տալը. ելույթ ունեցողը հնչեցնում է հարցը, և ինքն էլ տալիս է դրա պատասխանը: Մենախոսությունը ծեռք է բերում մի տեսակ երկխոսական բնույթ: Այս միջոցը կիրառելի է հատկապես բանավիճային խոսքում, կամ երբ խոսողը լսարանի առջև քննարկում է վիճելի խնդիր, որը ակնհայտորեն կարող է տարակուսանք ու նաև հարցումներ առաջացնել: Փորձելով կանխել խոսակցի կամ լսարանի այդ քայլը և ընդառաջ գնալով նրանց այդ ցանկությանը՝ ելույթ ունեցողը ձևակերպում է և՛ հարցը, և՛ պատասխանը: Ակնհայտորեն ակտիվանում է խոսքի ազդեցությունը. այն դառնում է աշխույժ ու բազմազան: Օր.՝ «Իհարկե, իմ է դեմ, բոլորս էլ համաձայն ենք, որ քաղաքական հայացքների համար մարդիկ չպետք է կալանավորվեն: Մնում է ապացուցել՝ տվյալ դեպքում մարդը քաղաքական հայացքների համար է կալանավորված, թե՞ ոչ: Հարց է ծագում իսկ իմ պետք է այդ բանն ապացուցի: Իհարկե Դուք, մարդու իրավունքների հարգելի պաշտպան, մինչև հիմա չե՞ք հասկացել, որ դա հենց Ձեր անմիջական գործն է, որ հենց դրա համար եք Դուք հարկատուներից փող ստանում, և որ Դուք պետք է դա ապացուցեք»:

3.7.17. ՃԱՐՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԲԱՑԱԿԱՆՉՈՒԹՅՈՒՆ: Սա, ինչպես հայտնի է, նախադասությունը կամ խոսքի հատվածը բացականչական հնչերանգով արտասանելն է

հուզական կամ շեշտողական նպատակով: Օր.՝ «Ինչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չքուսավ էս հողին... Ինչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տվողին...» (ՀԹ):

Ճարտասանական բացականչությունը նույն ճարտասանական հարցը չէ՝ բացականչական հնչերանգով, ինչպես երբեմն ներկայացվում է: Այն շատ այլ տարատեսակներ ունի, ինչպես՝ «Այնքան եմ կարոտել քեզ...», «Հրանջ...» կամ՝ «Ո՛հ, ինչ անուշ և ինչպես զով Առավոտուց փչես, հովիկ» (ՄՊ), «Հաղթում է ուժեղը և ոչ թե արդարը: Վայ թույլերին» (ԳՆ), «Երանի՛ նրան, ում համար կյանքում Ծիածանը լոկ... յոթը գույն ունի» (ԳԷ):

3.7.18. ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ժողովրդական բանահյուսությունից (խաղիկներ, տաղեր, կատակերգեր ևն) գրական լեզվին անցած արտահայտչական հնարք է, երբ մի քանի երևույթներ համադրվում–նկարագրվում են զուգահեռաբար: Նկարագրություններում ու պատկերներում կրկնվում–զուգադրվում են բառեր (հնչյունական զուգադր.), շարահյուսական նույնատիպ կառուցվածքներ (շարահյուսական զուգադր.), թեմաներ (թեմատիկ զուգադր.): Զուգադրվող մասերը հանդես են գալիս որպես խոսքի հարևան հատվածներ: Զուգադրությունը զորացնում է խոսքի ուժը: Օր.՝ «Մանգաղս քարին եկավ. – Յարս յար ունի – Քարեն լորիկը թռավ: – Լե՛րդս կ’արյունի» (ԴՎ): «Ամպել ա, ձուն չի գալիս, Շողեր ջան, Սարիցը տուն չի գալիս, Շողեր ջան» (Ժող.): Գործածվում են նաև ԶԼՄ–ի լեզվում, գեղարվեստական տեքստերում, բանավեճերում:

3.7.19. ԽԱՉԱՁԵՎՈՒՄ: Հիշենք, որ խաչաձևման դեպքում երկու կից խոսքային միավորներից երկրորդը իր շարադասությամբ կամ բովանդակությամբ հակադրվում է առաջինին. շրջվում է շարահյուսական կառուցվածքը, օր.՝ «Չարենցը շատ էր տարեց երիտասարդ ժամանակ և շատ էր երիտասարդ տարեց ժամանակ» (ՊՍ), «Միտքը մեռցնում է զգացմունքը: Զգացմունքը մեռցնում է միտքը» (ԱԻ), «Պետք է ուտել ապրելու համար, ոչ թե ապրել ուտելու համար» (Ցիցերոն), «Կյանքը երազ է, երազն էլ՝ մի կյանք, Երկուսն էլ՝ անցվոր, երկուսն էլ՝ պատրանք» (ՀԹ), «Աշխատելու համար ապրել է պետք, ապրելու համար՝ աշխատել» (Ժող.), «Շատ մի սիրի, ատել կա, շատ մի ատիր, սիրել կա» (Ժող.), «Ճշմարիտ խոսքերը գեղեցիկ չեն, գեղեցիկ խոսքերը ճշմարիտ չեն»: Կամ՝ Ա. – Պապի, ասկյարն ինչ է: Բ. – Ասկյար սալդատ է: Ա. – Բա սալդատն ինչ է: Բ. – Սալդատ ասկյար է» (ՄԳ):

Խաչաձևումը հակադրության տեսակ է: Հաճախ գործածվող հնարք է պատկերավոր խոսքում. «Նարեկացին նման է հորիզոնի. որքան հեռանում ես նրանից, այնքան մոտենում է քեզ, որքան մոտենում ես նրան, այնքան հեռանում է քեզանից»:

3.7.20. ՄԵՂՄԱՍՈՒԹՅՈՒՆ (հուն.՝ **euphemi. eu** – լավ, **phemi** – խոսում եմ)⁶⁷. տիպ, կոպիտ բառերի ու արտահայտությունների փոխարինումն է վայելուչ հա-

⁶⁷ Հմմտ.՝ **Л. Богданова**, *Стилистика русского языка и культура речи*, М., 2011:

մարվող հոմանիշներով կամ կտրուկ խոսքի փոխարինումը ավելի բարեկիրթ՝ մեղմացված համանշային տարբերակով: Ըստ այդմ՝ գործածվում է **երկու որոշակի նպատակով**.

ա) Հաղորդակցումը բարեկիրթ մակարդակում պահելու համար. խոսքի առարկայի իրական բնութագիրը կամ անվանումը հնչեցվում է պարկեշտ կամ ոչ կոպիտ: Օր.՝ «Նա անշնորհքի մեկն է» ասելու փոխարեն՝ ասվում է՝ «Նա բարեկիրթ մարդկանցից չէ», կամ՝ «Մեր պահանջները չկատարելու դեպքում Դուք խստորեն կպատժվեք» ասելու փոխարեն՝ գործընկերոջը բարեկիրթ երևալու, հարգալից ներկայանալու համար ասվում է՝ «Մեր պահանջները չկատարելու դեպքում Դուք խնդիրներ կունենաք»: Կամ՝ «խիստ պահպանողական» (հետամնաց), «խմելու հետ հավես ունի» (Հարբեցող է), «մայրության նպաստ» (հղիության նպաստ), «ոչ այնքան երջանիկ» (դժբախտ), «Չեմ կարծում, որ դուք այդ հարցում ճիշտ եք» (Սխալվում եք), «տեխնիկական սպասարկման անձնակազմ» (սպասավոր/ուհի, հավաքարար/ուհի) ևն:

Նման մեղմասությունները նվազեցնում են անցանկալի ելքի, վատ տեղեկության տպավորությունը, մեղմում են լսարանի վրա հնարավոր ծանր ազդեցությունը: Պատահական չէ, որ մահվան կամ թաղման հետ կապված գործողությունները լեզվական տեսակետից իրացվում են գրեթե բացառապես մեղմասությունների միջոցով՝ «հրաժեշտ տալ կյանքին» (մեռնել), «ննջեցյալ» (մեռել), «սգո հանդիսություն» (թաղման արարողություն), «սգո ծառայություններ» (թաղման արարողությունների սպասարկում), «Ո՛ւմ աճյունն է հանգչում Օշականում» («Ո՛ւ է թաղված Օշականում»):

Կա նաև հակառակ երևույթը, երբ համեմատաբար կիրթ, մեղմ խոսքի փոխարեն՝ գործածվում է ավելի խիստ արտահայտություն: Օր.՝ «Դուք կարծես չեք հասկանում»: – «Դեռ շատ հաց ու պանիր պիտի ուտեք, որ հասկանաք»: – «Դա Ձեր վտիտ ուղեղի բանը չէ», «Անտեղյակ է»: – «Ուղտի ականջում քնած է»:

բ) Երևույթի բուն էությունը քողարկելու նպատակով: Սա ավելի հաճախ հանդիպում է այնպիսի իրողություններ ներկայացնելիս, որոնց մասին սովորաբար լուրն ենք կամ հրապարակավ շատ չենք խոսում: Մեղմասությամբ ականարկ է արվում. լսարանին վերապահվում է կռահել, հասկանալ խոսքի ամբողջ բովանդակությունը: Մասնագիտական յուրաքանչյուր բնագավառ, հասարակական կյանքի ոլորտ ունի այդպիսի քողարկող մեղմասություններ, որոնք խոսքին առանձնահատուկ նրբերանգներ են հաղորդում: Այսպես, օրինակ՝ ՀՀ-ում 2014-ի նոյեմբերին դրամի անսպասելի արժեզրկումը մեծ շփոթ առաջացրեց հասարակության մեջ, և կենտրոնական բանկը, խուսափելու համար **արժեզրկում** տերմինից, անմիջապես շրջանառության մեջ դրեց **ճշգրտում** հասկացությունը. «Դրամի **արժեզրկում**»/«Դրամի **փոխարժեքի նվազում**»«Դրամի **փոխարժեքի ճշգրտում**»:

Պետական–քաղաքական գործունեության մեջ կամ ռազմական ոլորտում, օրինակ, որոշակի նպատակներից ելնելով, մեղմում են իրողության կամ երևույթի տպավորությունը, առանձին դեպքերում՝ սքոլում կատարվածը, ինչպես՝ «դիմել ծայրահեղ քայլերի» (պատժել, ոչնչացնել), «բարձրագույն պատիժ սահմանել»

(դատապարտել մահվան), «անկանխատեսելի հետևանքներ» (ընդհարում, մահ), «սահմանադրական կարգի հաստատում» (պատերազմ, պատերազմական գործողություններ), «էթնիկական զտում» (այն անձանց տեղահանում կամ ոչնչացում, որոնք չեն պատկանում տվյալ տարածքում գերիշխող ազգին), «խաղաղապահ գործերի տեղակայում» (ռազմական միջամտություն), «առճակատում» (պատերազմ) ևն:

Քաղաքական մեղմասությունները երբեմն որպես միջոց են գործածվում ապակողմնորոշելու հասարակական կարծիքը, երկակի ստանդարտներով գնահատելու իրավիճակը կամ իրողությունները: Ամերիկացի լեզվաբան Չ. Օսգուդը գրում է, որ նույն **պարտիզան** կոչվողները կարող են անվանվել **ազատամարտիկ**, **խռովարար** կամ **ահաբեկիչ՝** պայմանավորված նրանով, թե մենք ինչպես ենք ցանկանում, որ մարդիկ վերաբերվեն նրանց⁶⁸: Հայաստան-Ադրբեջան հակամարտությունների առիթով ՀՀ նախկին արտգործնախարարներից մեկի անզգույշ արտահայտությունը (ԼՂՀ **ազալագրված տարածքներ**-ի փոխարեն՝ **գրավյալ տարածքներ**) արժանացավ հանրության խիստ գնահատականին: Կամ՝ ուկրաինական հայտնի դեպքերի ժամանակ այդ երկիր մուտք գործող շարասյունը ամենատարբեր որակումներ ստացավ՝ պայմանավորված տարբեր քաղաքական ուժերի և հակամարտող կողմերի վերաբերմունքով՝ «հումանիտար օգնություն» – «զուտ մարդասիրական առաքելություն» – «ռուսական լայնամասշտաբ միջամտություն» – «անմիջական ներխուժում»:

Բերված խոսքային տարբերակները բոլորն էլ ըստ էության արտահայտում են նույն բովանդակությունը, բայց տարբեր ձևակերպումներով:

Մեղմասությունը օգնում է նաև խուսափելու անհարկի որոշակիությունից (կոնկրետությունից): Այս դեպքում խոսքը հնչում է որպես **ակնհարկություն**. հաճախ են գործածվում անորոշ դերանուններ, վերացական բառեր ու արտահայտություններ: Օր.՝ «Եթե ինչ-որ մեկը այդ առիթով որևէ բան ունի ասելու կամ ինչ-ինչ պատճառներով ոմանցից վիրավորված է, ապա կարող է այդ մասին բարձրաձայնել», «ինքներդ էլ հիշում եք, թե ինչն ինչոց է, այսուհանդերձ, ձեր թույլտվությամբ՝ ես հարկ եմ համարում վերստին հիշեցնել...»:

Մեղմասության մի տեսակ է **տարակուսանքը**: Ասվում է ակնհայտ ճշմարտություն. սակայն փոքր-ինչ վարանում ու տարակուսանք ցուցադրելով՝ խոսողը ոչ միայն դրանով դրսևորում է իր հարգանքն ու պատասխանատվությունը լսարանի հանդեպ, այլև նրբորեն խուսափում է իր ելույթին խրատական երանգներ տալուց: Օր.՝ «Կարծում եմ՝ ճիշտ կլիներ, որ պահպանեիք վարվեցողության տարրական կանոնները», «Իմ ունեցած տեղեկություններով, իսկ դրանք չեմ կարծում, որ հավաստի չեն, պայմանագիրը դեռ չի ստորագրվել»: Այլ կաղապարներ՝ «Եթե սխալվեմ, ինձ ուղղեք», «Մենք մտահոգվելու հիմք ունենք», «Անկեղծ ասած՝ լավ չեմ հասկանում...», «Մտածելու տեղիք է տալիս»:

Մեղմասությունների գործածությունը մեծ չափով պայմանավորված է **սոցիալական միջավայրով**: Այն, ինչ ընդունելի է սոցիալական մի միջավայրում և համարվում է բարեկիրթ, այլ միջավայրում կարող է միանգամայն անընդունելի լինել:

⁶⁸ Sbu Л. Богданова, Стилистика русского языка и культура речи, М., 2011, էջ 135.

Դա առավել զգալի է, երբ խոսքը վերաբերում է գրական լեզվով հաղորդակցվողներին՝ մի կողմից, մյուս կողմից՝ նրանց, որոնց համար հաղորդակցման միակ կամ հիմնական միջոցը իրենց բարբառն է կամ խոսակցական լեզուն⁶⁹։ Առաջինների միջավայրում գործածվող մեղմասությունը կարող է նույնիսկ ծիծաղելի հնչել երկրորդների միջավայրում կամ պարզապես չընկալվել։ Այս իմաստով շատ բնորոշ է, օրինակ, Գրիգոր Նարեկացուն տրված բնութագրությունը, արևմտահայ գրաքննադատ Արշակ Չոպանյանը գրում է. «Նարեկացին Աստուած տեսած է»։ Մերօրյա քննադատը, խոսելով այն մասին, որ միջնադարի մեծ բանաստեղծը շատ իրական ու վառ գույներով է նկարագրում կնոջ արտաքինը, կանացի կենդանի հմայքները և ակնարկելով Նարեկացու՝ կին արարածի հետ մտերիմ շփում ունենալու հանգամանքը, գրում է. «Նարեկացին նաև **կին տեսած է**»։

Մեր օրերում, երբ խոսքային հաղորդակցումը գործնական կարևոր նշանակություն է ձեռք բերում, մեղմասության ձևերին տիրապետելը նախապայման կարող է դառնալ հաղորդակցման արդյունավետությունը ապահովելու համար։ Մեղմասությունը խստորեն պիտի պայմանավորված լինի խոսքի բովանդակությամբ և հաղորդակցվող կողմերի փոխհարաբերությամբ։

3.7.21. ՉԱՓԱՋԱՆՑՈՒԹՅՈՒՆ։ Հատկանիշը կամ երևույթը ներկայացվում է սովորականից առավել չափով, օր.՝ «Վառվում էր վիթխարի մի մայրամուտ Հեռու հորիզոնից մինչև անտառ» (ՆԶ)։ Չափազանցումը նպատակ ունի տպավորությունը ուժեղացնելու միջոցով հաղորդակցվող կողմին համոզելու։ Իսկ եթե դա վարպետորեն է արվում, այլևս չի հնչում անհավանական, ընդհակառակը՝ ընկալվում է ավելի իրական, քան սովորական խոսքը։ «Չափազանցությունը մեծացնում է ճշմարտությունը, որպեսզի դրա մասին տա լավագույն պատկերացում» (Ժան դը Լամբրյուներ)։

Տարածված ոճական ձև է դատավարական խոսքում, ներբողականներում, շնորհավորանքներում, բաժակաճառերում, հանրահավաքային խոսքում և այլուր։ Խոսքին հաղորդում է տոնականություն և հանդիսավորություն։ «Իսկ առտնին խոսքում թեպետ չափազանցությունը հաճախադեպ է մտքին և հույզին ուժգնություն հաղորդելու նպատակով («միլիոն անգամ ասել եմ», «մեռա բացատրելով», «հազար տարի իրար չենք տեսել», «հարյուր ժամ է՝ սպասում եմ» ևն), սակայն սովորաբար չի ընկալվում իբրև այդպիսին և գրեթե չի կատարում դարձույթի իր դերը»⁷⁰։ Հաճախ համընկնում է մակդիրին կամ փոխաբերությանը։

3.7.22. ՆՎԱՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ։ Հատկանիշը կամ երևույթը ներկայացվում է սովորականից փոքր, թույլ չափով։ Օր.՝ «Եվ ձեռքերը կրծքին ծալած՝ նա կույզ եկավ, դարձավ մի բուռ, հնազանդ, ճնշված, խեղճ, խելոք, լսող, անլեզու և ճորտ», «Էստեղ՝ էս գյուղի տեղը, հարյուր տարի առաջ որ արել են, մի էսքան տեղ է եղել, մի ձվի չափ» (ՀՄ), «Ժամանակը իր վախճանին կհասնի, եվ արևը մի բուռ

⁶⁹ Տե՛ս www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/lingvistika/EVFEMIZM.html

⁷⁰ Տե՛ս Վ. Միրզոյան, Ճարտասանություն, Եր., 2004, էջ 219։

մոխիր կդառնա...» (ԱԻ): Խոսակցական լեզվում հաճախ հանդիպող ոճական ձև է՝ «Մի բուռ ժողովուրդ ենք», «Մի կտոր հաց չունի ուտելու», «Շունչ քաշելու ժամանակ չունեմ»: Օգնում է երևույթի ամբողջական նկարագրությանը. «Եվրոպան և Ամերիկան այս դեպքում դրսևորում են հիմնականում ծայրահեղ երեսպաշտություն, ցինիզմ, լավագույն դեպքում՝ **անտարբերություն**»:

Կարող է համընկնել մակդիրին ու փոխաբերությանը:

3.7.23. ՆՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (օքսիմորոն. հուն.՝ **oxymoron.** բառացի՝ սրամիտ անմտություն):

Առաջանում է երկու միմյանց ժխտող ու հակադիր հասկացություններ կապակցելու միջոցով: Տրամաբանորեն անհամադրելի իմաստային միավորների համադրությամբ ցույց են տրվում երևույթի, առարկայի, իրավիճակի անսովորությունը, բարդությունը, հակասականությունը: Հանդես է գալիս բառային մակարդակում՝ ի տարբերություն պարադոքսի, որ շարահյուսական կառուցվածքի վրա հիմնված բանադարձում է: Նրբաբանության դեպքում լրացումը բառական իմաստով հակադրվում է իր լրացյալին՝ ստեղծելով իմաստային գաղափար, օր.՝ **պարտված հաղթանակ, անհամեստ համեստություն, բարդ պարզություն, խավար արշալույս, անխիղճ գութ, անօգուտ օգնություն, համր աղմուկ, հաջողակ ձախորդություն** ևն:

Առաջին հայացքից՝ ստեղծվում է անտրամաբանական խոսք, սակայն համապատասխան միջավայրում այն հնչում է միանգամայն բնական ու արտահայտիչ: Ոճական այդ ձևի բաղադրիչ տարրեր են դառնում ոչ միայն հականիշները (լեզվական կամ խոսքային), այլև այս կամ այն չափով հակադրության տարրեր պարունակող բառերը, բառաձևերն ու կապակցությունները՝ ածական + գոյական՝ **սիրագուրկ սիրահար, ուրախ թախիծ, սառը ջերմություն, սիրուն խրտվիլակ, չար հրեշտակ** (սրանք հաճախ են հանդիպում որպես գրական երկերի, կինոնկարների վերնագրեր, լրագրային նյութերի վերնագրեր՝ «Դժբախտ երջանկություն», «Կույր ականատեսը»), գոյական + գոյական՝ հատկացուցիչ–հատկացյալ հարաբերությամբ՝ **հարսանիքի թափոր, լուռության ձայն, ածական + ածական՝ անմեղ մեղավոր, հարազատ թշնամի**:

Նախադասություններում կամ համատեքստում, ինչպես և ենթադրվում է, նրբաբանության արտահայտչականությունը առավել տեսանելի է դառնում. խոսքը բնորոշվում է չսպասված թարմությամբ. «Ինչ տենդով պատմեմ Մեր **անանցյալ անցյալը**» (ԵԶ), «Սոցիալիզմը ապահովում է **արդար անարդարություն**, իսկ կապիտալիզմը՝ **անարդար արդարություն**», «**Աննյութականո՞ղ նյութական** դարձար, մարդացար նորից», «Թուրքիայում ՀՀ նախագահին ընդունեցին **սառը ջերմությամբ**»:

Նրբաբանությամբ ստեղծվում է նաև նուրբ հեգնանք. «**Երիտասարդը** արդեն վաղուց **երիտասարդ չէ**», կամ սուր ծաղր. «Նա մեզ բոլորիս կտանջի իր **անգիտակից գիտակցությամբ**», «Հաշվի առնելով Ձեր կազմակերպության մատուցած ծառայությունների որակը՝ առաջարկում եմ այն անվանել «FX» սահմանափակ **անպատասխանատու պատասխանատվության** ընկերություն»:

3.7.24. ՇՐՋԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (շրջուն շարադասություն կամ շրջում, լատ.՝ **inversio** – տեղափոխություն, շրջում): Նախադասության մեջ բառերի այնպիսի դասավորություն է, որ հակասում է ընդունված կարգին՝ սովորական շարադասությանը: Հայերենում նախադասության անդամների դասավորության ընդունված կարգը հետևյալն է. լրացումների մի մասը (որոշիչ, հատկացուցիչ, որոշ պարագաներ) նախորդում է լրացյալին (լրացվողին), ենթական մեծ մասամբ նախորդում է ստորոգյալին, ինչպես՝ «արագ ընթացք», «բոլոր մարդիկ», «պաշտամունքի առարկա է», «իմ գործը», «ես գնացի» ևն: Շրջուն շարադասությամբ, այսինքն՝ շրջադասությամբ սրանք կլինեն այսպես՝ «ընթացք արագ», «մարդիկ բոլոր», «առարկա է պաշտամունքի», «գործը իմ», «գնացի ես» ևն:

Շրջադասությունը պետք է միշտ հիմնավորված լինի քերականական կանոններով: Շրջադասությունը խոսքին հաղորդում է՝ **ա) բանաստեղծականություն**. Նախադասության անդամների ոչ սովորական դասավորությունը ստեղծում է յուրահատուկ լեզվական միջավայր, որը հուզականություն է հաղորդում խոսքին («Մի փոքրիկ ամա՛ թափանցիկ ու անձև, լողում էր երկնքում» (ԱԲ)), **բ) հնության երանգ**. գրաբարում որոշիչ–որոշյալ, հատկացուցիչ–հատկացյալ և նախադասության մի շարք այլ անդամների դասավորության կարգը այսօրվա շրջուն շարադասությունն է, հետևաբար դարձը դեպի գրաբարի շարադասություն բնականաբար խոսքին գրաբարյան շունչ պիտի հաղորդի («Եվ այր մի՛ Մաշտոց անուն», «Գիրք ճանապարհի», «Երկիր կորուսյալ, թե՛ ապագայի»), **գ) անդիսավորություն**. ոճական այդ նշանակությամբ հաճախ է հանդիպում պաշտոնական գրագրության որոշ տեսակներում, դիվանագիտական փաստաթղթերում, ինչպես՝ «Արձանագրություն ... նիստի», «Կարծիք ... ատենախոսության մասին», «Որոշում ... հարցի վերաբերյալ» ևն, **դ) ճշգրտություն**. Նախադասության անդամների դասավորությունը միջոց է դառնում հեղինակային վերաբերմունքի դրսևորման. տրամաբանական շեշտի փոփոխությամբ՝ ճշգրտվում ու շեշտվում է այս կամ այն նրբիմաստը:

3.7.25. ՀԵԳՆԱՆՔ: Դրական իմաստ կամ իմաստային երանգ ունեցող բառը կամ արտահայտությունը գործածվում է բացասական կամ ժխտական նշանակությամբ. երբեմն առարկային, իսկ սովորաբար մարդկանց վերագրվում են այնպիսի դրական հատկանիշներ, որոնցից նա զուրկ է, օր.՝ «Ութը տարիներե հետո կ'ուղղե յուր աշխարհաբարը, զոր ֆրանսացի մը ավելի շատ կը հասկնա այսօր, քան հայ մը» (ՀՊ): Կամ՝ «Արմեն **հայրենասեր** Վարդանյան»: Բանավոր խոսքում այն ուղեկցվում է հեզնական հնչերանգով, իսկ գրավոր խոսքում հեզնանք արտահայտող բառը, արտահայտությունը հաճախ առնվում են չակերտների մեջ, որպեսզի ուղղակի նշանակությամբ չըմբռնվեն, օր.՝ «Ինչ **«հայրենասեր»** մարդ է. Արցախի տեղը չգիտի», «Ազգային ժողովի վեցերորդ նստաշրջանի առաջին նիստը նշանավորվեց լրագրողների նկատմամբ պատգամավորների **«սիրո»** և **«հարգանքի»** հերթական դրսևորումներով»:

Ոճական այս հնարանքը կոչվում է նաև **հակաբերություն**: Հիմնականում ստեղծվում է՝ ուղղակիորեն անհրաժեշտ բառը իր հականիշով փոխարինելով: Հականիշների հեգնական, ծաղրական գործածությունները կարող են ընդհանրական արժեք ձեռք բերել և նույնիսկ դարձվածքների վերածվել: Օր.՝ **խելքի պուտուկ՝ «անխելք», արկադյան սոխակ՝ «էշ, ավանակ», նազար՝ «վախկոտ», Բաքուի տաճար՝ «գինետուն», բարի պտուղ՝ «չար, անարժան, անպետք մարդ»:**

Հեգնանքով քննադատությունը ավելի ազդեցիկ է, քանի որ այլաբանորեն է ասվում և ավելի խոր բովանդակություն ունի, քան ուղղակի ասվածը: Հաճախակի հանդիպող հնարք է գեղարվեստական խոսքում, ճարտասանության մեջ, բանավիճային խոսքում: Սակայն ամենից շատ կիրառվում է բանավոր հաղորդակցման ժամանակ, որտեղ հեգնանքի արտահայտման լրացուցիչ միջոցներ են դառնում նաև ծայնի հնչերանգը, դիմախաղը, շարժումները, արտալեզվական այլևայլ գործոններ: Խոսքի վարպետները առանձնապես շեշտում են հեգնական խոսքում չափը պահպանելու հանգամանքը՝ պայմանավորված խոսակիցների հարաբերությամբ, իրավիճակով, լսարանով ևն:

3.7.26. ՊԱՐԱԴՈՔՍ (հուն.՝ **paradoxos**–անսպասելի): Առաջին հայացքից ընկալվում է որպես տարօրինակ ու անսովոր բովանդակությամբ արտահայտություն: Խոսքի տրամաբանական հիմքը կարծես խախտված է, սակայն թվացյալ այդ անհեթեթության ներքո հաճախ թաքնված են խորիմաստ մտքեր, իմաստային նուրբ երանգներ, տարողունակ դատողություններ: Կամ կարող է միտքը արտաքինապես ճիշտ թվալ, բայց ներքնապես՝ բովանդակային առումով, պարունակել հակասություն: Առաջին հայացքից բառերի անհեթեթ խաղ է թվում, օրինակ, «Ազատության օրենքներն անհարիր են օրենքների ազատությանը» խոսքը: Մինչդեռ իրականում ունենք կարճ և պատկերավոր խորհուրդ՝ ազատ և օրինավոր կյանքի ու ամենաթողության անհամատեղելիության մասին:

Այլ օրինակներ՝ «Ես միայն մի բան գիտեմ՝ այն, որ ոչինչ չգիտեմ» (Սոկրատես), «– Պատերազմը պետք է լինի, որ խաղաղությունը լինի,– ասաց Շուշանիկը» (ԴԴ), «Դանդաղ գնաս, շատ կգնաս», «Թանկից էժանր չկա» (Ժող.), «Շարժման սկիզբը անշարժությունն է», «Որտեղ՝ երաշխիք, այնտեղ՝ փորձանք», «Ձեր մասին այնքան հերյուրանքներ եմ լսել, որ որևէ կասկած չունեմ. Դուք հիասքանչ մարդ եք» (Օ. Ուայլդ), «Սիրուց բացի՝ էլ ոչինչ չէր կարող այսքան ատելություն կուտակել» (Բ. Շոու), «Ես սիրում եմ մեծ արհամարհողներին, որովհետև նրանք ամենամեծ հարգողներն են» (Ֆ. Նիցշե), «Ես չեմ սիրում այն մարդկանց, ովքեր չեն ծիծաղում. նրանք լուրջ մարդիկ չեն» (Վ. Մոցարտ):

Պարադոքս կարող է ստեղծվել նաև բառախաղի միջոցով. ոճական այդ դարձույթին բնորոշ սկզբունքով ստեղծվում է հեգնախառն սրամիտ խոսք, ինչպես՝ «Որտեղ է սկիզբը այն վերջի, որտեղ վերջանում է սկիզբը», «Չինացիները նույնպես Չինաստանից են», «Որոշել եմ ապրել մինչև մեռնելս»: Կամ՝ «Հագիր իմ հին կոշիկները. դրանք տակավին նոր են»,– ասում է Դոստոևսկու հերոսներից մեկը:

Պարադոքսի հիմքով հաճախ ստեղծվում են **պարադոքսային խնդիրներ**: Օր.¹ Երեխային կուլ տված կոկորդիլոսը երեխայի հորն ասում է. «Կվերդարձնեմ երեխային, եթե դու կարողանաս ճիշտ կռահել՝ ես կվերադարձնեմ նրան, թե՛ ոչ»: Ինչ պիտի պատասխանի հայրը իր երեխային վերադարձնելու համար: (Պատ.¹ «Չես վերադարձնի»):

Կառուցվածքային ընդհանրություն ունեն պարադոքսը և խաչաձևումը. տարբերակիչ հիմնական հատկանիշն այն է, որ խաչաձևման դեպքում շրջվում է շարահյուսական կառուցվածքը:

3.7.27. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ: Երկու կամ ավելի առարկաների կամ երևույթների համադրումն է դրանցից մեկի կամ մյուսի նմանությամբ կամ տարբերությամբ: Համեմատությունը կազմող երկու կողմերից կամ եզրերից (համեմատելի և համեմատյալ) բացի՝ կա նաև համեմատության հիմք. դա այն հատկանիշն է, որի հիման վրա կատարվում է համեմատությունը: Վերջինս խոսքում հաճախ բացակայում է, չի արտահայտվում, այսպես՝ «Ամպրոպի պես թափվեցին գլխին»: = «Ամպրոպի պես **անակնկալ (հուժկու)** թափվեցին գլխին»:

Քանի որ համեմատության կառուցվածքում առկա են կողմեր, որոնք լրացնում են միմյանց, ապա երևույթի նկարագրությունը դառնում է առավել ամբողջական ու հավաստի: Համեմատությունը չպետք է լինի ինքնանպատակ: Պետք է թելադրված լինի նյութի բովանդակությամբ և իրավիճակով: «Համեմատությունը այն դեպքում է հաջողված, երբ կենսականորեն կապված է բովանդակության հետ, երբ չի մթազնում խոսքի իմաստը, այլ հստակեցնում է այն, դարձնում ավելի պարզ»⁷¹:

Շատ գործածվելու հետևանքով իրենց արտահայտչականությունը կորցրած, այսպես կոչված՝ մարած համեմատությունները (ինչպես՝ «կարմիր թելի պես անցնում է ամբողջ ստեղծագործության միջով...», «սոխակի պես դայլայլում է», «կապույտ, ինչպես երկինքը», «երկաթի պես ամուր») տպավորություն չեն գործում, չեն հարստացնում խոսքի պատկերային համակարգը: Լսողը կամ ընթերցողը դրանք հաճախ նույնիսկ չի էլ «նկատում»: Արտահայտիչ են ու ազդեցիկ անսովոր համեմատությունները, առաջին հայացքից անհամեմատելի երևույթների զուգորդումները: «Որքան մեծ են համեմատվող առարկաների միջև եղած տարբերությունները, այնքան անսպասելի են համընկնող գծերը, այնքան ավելի լավ է համեմատությունը» (Պ. Պորոխովչիկով):

Հայտնի է, որ համեմատությունները սովորաբար ձևավորվում են **ասես, զերդ, իբրև, ինչպես, կարծես թե, հանգույն, հանց, նման, ոնց որ, որպես, պես, քան, ոչ նման, տարբեր, ի տարբերություն, հակառակ** և նման բառերով: Օր.¹ «Իմ օրերի վերջում, **իբրև** անհուն ընծա, Ինձ ժպտալու ես դու, իմ Նավգիլե...» (ԵՉ), «Պատժամիջոցները **նման** են բնական միջավայրի աղտոտման. դրանք դժվարացնում են դիվանագետների աշխատանքը»:

⁷¹ Л. Введенская, Л. Павлова, Е. Катаева, Русский язык и культура речи, М., 2005, с. 120.

Համեմատություն կարող է ստեղծվել նաև առանց վերը նշված բառային միջոցների (**թաքնված** համեմատություն), ինչպես՝ «Հիվանդ գառան համար լաց եք լինում, սիրուն համար լաց եք լինում. ձեր փորում տղամարդու սիրտ է, թե՛ սազը ձեռին աշուղ» (ՀՄ), «Համարի՜ր աղոթք մի մշտամատույց Թախծանվազ իմ ողբամատյանի Նորընծա տաղերն այս ողորմաղերս» (ԳՆ), «Մերթ երենյա մարմնով եգիպտոսի դարձած՝ Հմայել է հեռվից իմ Նավգիկեն» (ԵԶ):

Համեմատությունները լինում են **հաստատական** և **ժխտական**. համեմատությունը ժխտական է, եթե ժխտվում է համեմատության եզրերի ընդհանրությունը, համեմատելիի մեջ ժխտվում է համեմատյալի հատկանիշը, օր.՝ «Այս լուսավորության վրա կես ժամ չանցավ, և Աբիսողոմ աղային ներկայացավ երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանավորի ալ չէր նմաներ, արհեստավորի ալ չէր նմաներ, գործավորի ալ չէր նմաներ և վերջապես անանկ բանի մը կը նմաներ, որուն նմանը չկա» (ՀՊ), «Խմիկ Խաթունը աստված չէր, որ ջուր ստեղծեր ու հիանար ստեղծածով» (ՌՀ):

Լինում են նաև **ծավալուն** համեմատություններ. համեմատելին ու համեմատյալն արտահայտված են առանձին ամբողջական նախադասություններով. «Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ծյուն, Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն» (ՎՏ), «Իհարկե հեքիաթի է նման, երբ խոշորագույն գործարարը, ում ուղեկցում է արտասովոր հաջողությունը, հանկարծ լքում է ամեն ինչ, իր հետևում այրում բոլոր կամուրջները միայն նրա համար, որ քայլի մանկության երազանքների ճանապարհով»:

Համեմատության միջոցով շատ ավելի են ընդգծվում հաղորդակցվող կողմերի մտքերը, ասելիքը դառնում է առարկայական, շոշափելի: Օր.՝ ելույթ ունեցողը խոսում է այն մասին, որ գիտությունը համակարգ է, չի կարող յուրացվել կամ ուսուցանվել կիսով չափ («չպիտի լինի այնպես, որ սովորենք ամբողջի մի մասը, հետո պատեհ առիթի դեպքում՝ նաև մյուս մասը»), և իր խոսքը համոզիչ դարձնելու համար բերում է հետևյալ համեմատությունը. «Այդ նույն է, թե օդաչուին թռիչքի ուղարկելիս սովորեցնենք միայն թռչելու արվեստը, իսկ վայրէջքինը թողնենք հետագային»:

Գործածվում է բոլոր ոճերում. գիտական գրականության մեջ ավելի հավաստի ու համոզիչ է դարձնում դատողությունը, գեղարվեստական խոսքին հաղորդում է պատկերավորություն, ԶԼՄ-ների լեզվին՝ ամենատարբեր արտահայտչական նրբերանգներ՝ հստակություն, հավաստիություն, գեղարվեստականություն, այս կամ այն հատկանիշի առանձնաբար ընդգծում, պաշտոնական խոսքին՝ ճշգրտություն, առարկայականություն ևն (տե՛ս համապատասխան բաժինները):

3.7.28. ՓՈԽԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ: Մի բառի (բառակապակցության) գործածությունն է մեկ այլ բառի իմաստով և նրա փոխարեն՝ հիմնված դրանց արտահայտած առարկաների (հատկանիշների, գործողությունների) նմանության կամ համեմատելի լինելու վրա: Ժողովրդական խոսքը հարուստ է փոխաբերություններով՝ դարձվածքներ (ձեռքից գնալ, օր ու արև չտալ), կենդանիների և դրանց մարմնի

մասերի անվանումների փոխաբերական գործածություն (ճանկ – ծեռք, աղվես – խորամանկ) ևն:

Տարբերում են մի կողմից՝ **պարզ** և **ծավալուն**, մյուս կողմից՝ **անհատական** (խոսքային) և **ընդհանրական** (համալեզվական) փոխաբերություններ:

Պարզ փոխաբերությունը կազմված է լինում մեկ բառից («Արկածներիս կարմիր կարոտներում փնտրած», «անապատի դեղին լույթուն»), ծավալունը՝ մի քանի բառերից, բառակապակցություններից, նախադասություններից («Փղոսկրե անիվներով հեռանում է բախտն օրեցօր» (ՌԴ), «Սովորույթը սովորույթ է, նրան լուսամուտից դուրս չես նետի: Հարկավոր է սովորույթին քայլ առ քայլ հրապուրելով դուրս հանել տնից» (Մարկ Տվեն)): «Ծավալուն փոխաբերություններում իմաստի փոխաբերականությունը զարգանում և ծավալվում է առանձին բանատողերում կամ ամբողջական նախադասություններում և հաճախ ամբողջ համատեքստում»⁷²: Ամբողջությամբ փոխաբերության հիմքով են ստեղծված, օրինակ, Միսաք Մեծաբենցի «Մեղուները», «Նավակները», «Իրիկունը», Եղիշե Չարենցի «Վահագն», «Մահվան տեսիլ», Հրանտ Մաթևոսյանի «Ծառերը», Համո Սահյանի «Քարափը», «Մասրենին» գործերը:

Անհատականները ստեղծագործող հեղինակների, մեծ մասամբ գրողների կողմից կերտված փոխաբերություններն են, որոնք ունեն ընդգծված անհատական բնույթ, ինքնատիպ մտածողության արգասիք են, ինչպես՝ «Մահը փակեց տան դուռը», «Ալիքներեն ծեծված մենավոր ապառաժ ըն» (Նապոլեոնի մասին է) (ՌՍ):

Ընդհանրական են այն փոխաբերությունները, որոնք լայն տարածում ունեն, ծանոթ են այդ լեզվով խոսող հանրությանը կամ նրա մեծ հատվածներին: Օր.՝ **ծանր լույթուն**, **բարի աչքով նայել**, **քաղաքական կոշտ դիրքորոշում ունենալ** ևն:

Փոխաբերությունը խոսքում կատարում է մի քանի կարևոր գործառույթ.

ա) Ստեղծում է պատկերավորություն. գեղարվեստականացնում, զարդարում է խոսքը, այլ կերպ ասած՝ կատարում է գեղագիտական գործառույթ: Օր.՝ «Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան Եվ արևոտ միգում ճարճատում են դեռ» (ԵՉ), «Իսկ երբ սայթաքես, մուճակիդ փոշին մեծ մարդ է դառնում և քեզ հարվածում» (ԱԻ): Կամ՝ «Ձեր երազանքի նավակները բախվել են իրականության ժայռերին ու ջարդուփշուր եղել»:

բ) Հնարավորություն է տալիս միտքը հաղորդելու այլաբանորեն՝ ենթատեքստով՝ քողարկելով հիմնական ասելիքը: Օր.՝ «Ծանոթ, շները չեն հաչում վրադ, ծանոթ մարդիկ են հաչում քո վրա» (ԱԻ), «Փոքր մարդը ո՛չ կարող է ընկնել, ո՛չ էլ վնասվածք ստանալ»: Փոխաբերորեն վերցված խոսքի շնորհիվ գրուցակիցը կարող է հմտորեն խուսանավել հարցման ուղիղ պատասխանից՝ միաժամանակ ակնարկելով այլևայլ իմաստներ: Օր.՝ «Դու նրա հետ երջանիկ ես» տղամարդու հարցումին ի պատասխան հնչում է նախկին կնոջ հետևյալ երկիմաստ խոսքը. «Ես նրա հետ լաց չեմ լինում»:

⁷² Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1980, էջ 78:

գ) Գործածվում է բացատրելու համար երևույթներ կամ իրողություններ, որոնք անմիջական, ուղղակի ընկալմամբ մնում են անհասկանալի: Օր.¹ «Այն ժամանակ Արցախում հրամանատար թե շարքային, իշխանավոր թե հասարակ ժողովուրդ, բոլորս նույն վիճակի մեջ էինք. **մենք կիսում էինք մեր մահը և հացը**»: «Ճգնաժամից պաշտպանվելու համար տնտեսությունը պետք է պահեստային ռեսուրսներ ունենա. **դրանք անվտանգության բարձիկներ** են մեզ համար»: Փոխաբերությունը այս դերով հաճախ է օգտագործվում գիտաուսումնական գրականության մեջ:

դ) Կատարում են գնահատողական դեր: Գնահատողականությունը ձևավորվում է նմանության, համաբանության, համեմատության հիմքի վրա: Առավել տարածում ունեն բացասական բնույթի գնահատողական փոխաբերությունները՝ **աղվես, կոճղ, գիշատիչ, խոտակեր, քայլամ** ևն: Օր.² «Նրան դժվար է ըմբռնել ու հասկանալ կամ կռահել նրա քայլերը. նա իսկական **դև է**»:

Փոխաբերության արտահայտչական նշանակությունը դիպուկ է բնութագրել Ֆիցերոնը. «Խոսքի մեջ հատկապես շատ պիտի լինեն ամեն տեսակի փոխաբերական արտահայտություններ, քանի որ դրանք, մերձեցնելով երկու առարկաներ, ուշադրությունը տեղափոխում են մի առարկայից մյուսին և հակառակ ուղղությամբ, շարժման մեջ են դնում ունկնդրի մտքերը, իսկ մտքի այդպիսի շարժումն ինքնին գրավիչ է»:

3.7.29. ՄԱԿԴԻՐ: Բառ կամ բառակապակցություն է, որ արտահայտչորեն և փոխաբերորեն բնորոշում է առարկան կամ երևույթը: Երբեմն իրար են հակադրում կամ համադրում որոշիչը և մակդիրը: Դրանք լեզվական տարբեր մակարդակների իրակություններ են. առաջինը շարահյուսական միավոր է, երկրորդը՝ պատկերային, առաջինը ցույց է տալիս առարկայի ուղղակի (ներհատուկ, նրա էությունից բխող) հատկանիշը, երկրորդը փոխաբերորեն և հուզականորեն է բնութագրում առարկան, հանդես է գալիս այլաբերական գործածությամբ, ինչպես՝ **քինոտ** մարդ – **քինոտ** դաշույն, **հետաքրքիր** հուշեր – **ոսկեշթա** հուշեր, **դեղին** արտ – **ոսկի** արտ, **մանր** ավազ – **թավշե** ավազ, **կանաչ** անտառ – **արթուն** անտառ, **հորդ** անձրև – **արծաթ** անձրև, **սարսափազդու** խավար – **լուսադբյուր** խավար ևն:

Մակդիր կարող են դառնալ նյութական իմաստ ունեցող բոլոր խոսքի մասերը՝ **ածական՝ ապերասան** փոթորիկ, **անվախճան** ճշմարտություն, **գոյական՝ լույսի** պար, **հրաշք** աղջիկ, **մակբայ՝ քաղցրորեն** մկրտվում է լուսնկան, **հավերժորեն** խմում են, **դերբայ՝ աղոթող** անտառներ, **ծաղկած** փշալարեր:

Մակդիրը կարող է արտահայտվել նաև **բառակապակցությամբ**, ինչպես՝ **հողից հոգնած ուտեր**, ռահվիրաները **մարմարեղեն Հույսի**, **քո վերք դարձած նայվածքներիդ...**, **վրեժից սառած արյուն**, **մեր Մեսրոպ Մաշտոց աստվածը**, **հաղթանակների ծարավից գինով արծիվներ** ևն:

Մակդիրի տարբերակիչ հատկանիշներից մեկը նաև այն է, որ կարող է արտահայտչորեն բնութագրել նաև գործողությունը, այսինքն՝ դառնալ գործողության

մակդիր, ինչպես՝ *հոսում է ջուրը երակ առ երակ, աղավնիներն անմեղությամբ կը մեռնին, մկաժուներս քեզի կու գան հրավարսամ*:

Ըստ իրենց գործածության, կազմության, դիրքի և այլ հատկանիշների՝ մակդիրները բաժանվում են տարբեր խմբերի՝ **պարզ** և **բաղադրյալ**, **նախադաս** և **հետադաս**, կամ ըստ բովանդակության լինում են **նկարագրական**, **քնարական**, **գունային**, **համեմատական** ևն: Վերջինները երբեմն դժվար է հստակորեն իրարից սահմանազատել:

Ծան.: Առանձին գրքերում տարբերակում են նաև մակդիրի ուղղակի և փոխաբերական տեսակներ: Այս նույն տրամաբանությամբ՝ գրականագիտության մեջ մակդիրի սահմանները հաճախ ընդլայնում են՝ ներառելով հուզական երանգավորում ունեցող ցանկացած որոշիչ: Բայց այդ դեպքում անհնար է տարբերակել որոշիչն ու մակդիրը: Հետևաբար չպետք է առաջնորդվել այս մոտեցմամբ և մակդիր համարել, օրինակ, հետևյալ բառակապակցությունների ընդգծված որոշիչները՝ **ճերմակ վարդեր**, **խորոտիկ յար**, **գեղանի օրհորդ**, **կեռ հոնքեր**, **ոլոր ճամփա**, **դալուկ դեմք**, **ոլորուն մորուք**, **անճարտար նկարիչ**, **խոտոր արահեպ**:

Մակդիրը խոսքին հաղորդում է անսովոր թարմություն, գեղարվեստականություն: Այդ իսկ պատճառով առավելապես գործածվում է գեղարվեստական խոսքում:

3.7.30. ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄ: Փոխաբերության տեսակ է. առարկաներին և երևույթներին վերագրվում են մարդկային կամ շնչավոր էակների հատկանիշներ, օր.՝ «Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր եւ ծովն ծիրանի. Երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղէգնիկ...» (Գողթան երգերից), «Արյուն կը ծորե չափազանց հասուն Փոշոտ մորենին» (ԴՎ), «Ու կը դառնան ջրանիվներ ծերունի» (ՄՄ):

Անձնավորումը արտահայտվում է ոչ միայն բայ-ստորոգյալով («Սիրո սարսուռից հովերն **արթնացան**» (ՀՍ)), ինչպես հաճախ թյուրիմացաբար ընկալվում է, այլև քերականական ամենաբազմազան միջոցներով, օր.՝ ստորոգելով («Գիշերն է **լուռ**, լիճը՝ **տրտում**» (ՌՍ)), որոշիչով (**ծերուկ** եղրևանի, **լեզու առած** ծառեր, **շնչող** անտառ), հատկացյալով (ըմբոստանքներն **համբույրի**), բացահայտիչով («Մենք՝ **մեռելներս**, ծեզի հետ ենք» (Ս)), խնդիրներով («Աքասիաներ... մաքուր **շունչ մը կը հևան**», «**Տրտմություն** մը կը ցանե բիլ եղրևանին» (ՄՄ)), պարազաներով («Կարապները... **հուսահատորեն** գաղթեցին» (Ս)), կոչականով («**Լռությա՛ն երկինք**, խոսիր դու ինձ հետ...» (ԱԻ)) ևն:

Պետք է նկատի ունենալ, որ հատկապես որոշիչով արտահայտված անձնավորումը նույնանում է մակդիրի հետ, ինչպես՝ **լռությունը խաժնող լուտանք**, **լեզու առած** քարեր, **հեզանազ** ուռենի, **որբուկ** երազներ, **սարսափահար** հորիզոններ, **բազկատարած** ծառ ևն:

Հաճախակի կիրառություն ունի գեղարվեստական չափածոյում («Հետո հարբեց Շավարշը. **գայլը** արյունով է **հարբում**» (ԵԶ)): Բանավիճային կամ հրապարակային խոսքում քիչ գործածություն ունենալով՝ յուրահատուկ գրավչություն է հաղորդում խոսքին. կենդանի ու աշխույժ է դառնում խոսքը. զուգահեռաբար կարող է ստեղծվել նաև հեգնանք, օր.՝ «Այո, **պարո՛ն նախարարություն**, **Ձեր** որոշումները,

ցավոք, դատապարտված են թղթի վրա մնալու անհեռանկարին»: Կամ՝ «Ես հաստատում եմ, որ, այո՛, **ոտքս անցել է ինքնապաշտպանության անհրաժեշտ սահմանները**»: Անհարկի անձնավորումը խոսքի թերություն է, օր.⁷³ «Այդ փաստարկները վերջին շրջանում կարևորություն են **ձեռք բերում** (←ստանում)»:

3.7.31. ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ: Պետք է նկատի ունենալ, որ փոխանունությունը ձևավորվում է ստորադասական բառակապակցություններում. կապակցության անդամներից մեկը՝ լրացումը, փոխարինում է մյուսին՝ լրացյալին, որը զեղչվում է, ինչպես՝ «**Աներով, սներով** կպատեմ, Իմ սիրտը, իմ սերը շորորուն...» (ՎՏ): Փոխանունությունը հիմնված է առարկաների, երևույթների և հատկանիշների զանազան կապերի ու հարաբերությունների և ոչ թե դրանց ներքին կամ արտաքին նմանությունների վրա:

Որպես բառի բազմիմաստության տեսակ՝ փոխանունությունները արտահայտում են զանազան հարաբերություններ. ցույց են տալիս՝ 1. պարունակողը պարունակյալի փոխարեն՝ «**Մի գավաթ** (օր.⁷³ սուրճ) ըմպեցի»: «**Դահլիճը** համակ ուշադրությամբ լսում էր բանախոսին», 2. գործողությունը՝ արդյունքի կամ հակառակը՝ արդյունքը՝ գործողության փոխարեն՝ «**Հրամանը** իր գործը կատարեց», 3. հեղինակը՝ ստեղծագործության փոխարեն՝ «Կարդում եմ **Չարեց**»: «Հաճախ եմ լսում **Կոմիտաս**», 4. տեղանունը՝ կառավարող մարմնի, կազմակերպության, հաստատության և այլնի փոխարեն՝ **Սպիտակ տուն** – ԱՄՆ նախագահի նստավայր, **Ելիսեյան պալատ** – Ֆրանսիայի նախագահի նստավայր, **Downing Street (Դաունինգ Սթրիթ)** – Անգլիայի արտաքին գործերի նախարարություն, **Վաշինգտոն** – Միացյալ Նահանգներ, **Մոսկվա** – Ռուսաստանի Դաշնություն, **Կրեմլ** – Ռուսաստանի կառավարություն և իշխանություններ, **Պենտագոն** – ԱՄՆ պաշտպանության նախարարություն կամ ԱՄՆ ռազմական ուժեր, **Բադրամյան 26** – ՀՀ նախագահի նստավայր, 5. նյութը նրանից պատրաստված առարկայի փոխարեն՝ «Վերջին օլիմպիադայում հայ մարզիկները երկու **ոսկի** ստացան, երեք **արծաթ**» ևն:

Փոխանունության հիմնական գործառույթները:

1. **Մեծապես նպաստում է խոսքի սեղմությանը**: Խոսքը դառնում է ավելի արագ, շարժուն: Իմաստային կորուստ չենք ունենում, բայց ծավալը սեղմելով՝ ակտիվացնում ենք խոսքը: Օր.⁷³ «Սիրում էր այդ պանդոկում տաք սուրճ ըմպել. մի **գավաթ** խմեց և վեր կացավ», «**Պենտագոնը** հանդես եկավ հայտարարությամբ»:

2. **Շեշտադրում է արվում հաղորդվող նյութի հիմնական հատկանիշների վրա**: Փոխանունությունը կրճատում է՝ իր տեսակի մեջ ասվածի յուրահատուկ հապավում, որում խտացումով դուրս է թողնվում այն ամենը, ինչը ինքնին ենթադրվում է, և կենտրոնացվում է տեղեկատվական առումով գլխավորը⁷³: Օր.⁷³ «Դիզենսին հարցրին, թե գազաններից որոնք են ամենից վտանգավորները, և նա ասաց՝ վայրենիներից՝ օձը, ընտանիներից՝ **շողոքորթը** (= շողոքորթ մարդը)». ընդգծված փոխանունները շեշտում են իրենցով անվանվող առարկաներին հեղինակի կող-

⁷³ См. Л. Богданова, Стилистика русского языка и культура речи, М., 2011, էջ 181:

մից վերագրվող հատկանիշները. այդպիսով լսողի կամ կարդացողի ուշադրությունը բևեռվում է հենց այդ հատկանիշների վրա:

3. Ստեղծում է հաղորդվող երևույթի որոշ «իմաստային անորոշություն», որը լարում է լսարանի ուշադրությունը, խթանում է ընկալումը: Օր.⁷⁴ «Նախագծի վերաբերյալ անհամաձայնություն են հայտնել և իշխանամետ ուժերը, և ընդդիմության ներկայացուցիչները: Առաջինների դիրքորոշումը եղել է առավել սկզբունքային ու անզիջում»։ Ընդգծված փոխանվան իմաստը առարկայական չէ, և դա լսարանին ստիպում է վերստին անդրադառնալ խոսքում հիշատակվող կողմերին, խորանալ նյութի բովանդակության մեջ:

Հաճախ է գործածվում խոսակցականում, ՁԼՄ-ների լեզվում, գեղարվեստական գրականության մեջ, մասամբ պաշտոնական խոսքում:

3.7.32. ՀԱՄԸՄԲՈՆՈՒՄ (հուն.⁷⁵ **synekdoche** – միասին հասկացվել, միասին ըմբռնվել): Ընդհանրություններ և բովանդակային նույնություն ունի փոխանունություն կոչվող արտահայտչամիջոցի հետ: Երկու դեպքում էլ արտահայտչամիջոցի կառուցման հիմքում մի բառի գործածությունն է մեկ այլ բառի փոխարեն: Բայց համըմբռնումը առաջանում է երևույթների, առարկաների միայն **քանակական հարաբերությունների** հիմքի վրա. այս դեպքում գործածվում է մասը ամբողջի, մասնավորը՝ ընդհանուրի, եզակին՝ հոգնակիի փոխարեն կամ հակառակը՝ ի տարբերություն փոխանունության, որում այդ հարաբերությունները խիստ բազմազան են: Բացի այդ՝ համըմբռնման դեպքում, դարձյալ ի տարբերություն փոխանունության, լրացյալի գեղչում կարող է չլինել: Օր.⁷⁶ «Եվ նրա խորաթափանց ոգին ճանաչեց **մարդուն** (= մարդկանց)...)» (ԱԻ), «Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի, Ոչ մի **սուվեր** (= մարդ) կախաղանին թող մոտ չգա...» (ԵԶ), «**Հայը** (= հայ ազգը) դիպյումատիայի մեջ մի բանում է շատ հոգաձու – անկեղծ լինել: Այնքան անկեղծ և միամիտ է, որ անկասկածելի խորամանկի և կեղծավորի է նմանում» (ԴԴ):

Ոճաբանական ձեռնարկներում համըմբռնումը հաճախ պարզապես նշվում է որպես փոխանունության տեսակ կամ իր զանազան դրսևորումներով ներկայացվում է փոխանունության մեջ:

Ինչպես փոխանունությունը, ոճական այս դարձույթը ևս ծառայում է խոսքի սեղմությանը, բազմազանությանը: Գործածվում է բոլոր ոճերում՝ յուրաքանչյուրում դրսևորելով յուրահատկություններ:

3.7.33. ՓՈՆԱՐԿՈՒՄ (լատ.⁷⁷ **conversio** – փոփոխություն, մի բանից մեկ այլ բանի վերածվելը): Լեզվաբանության մեջ սովորաբար առանձնացվում են **բառային** և **քերականական** փոխարկումներ⁷⁴: Առավել տարածված տեսակը **քերականական** փոխարկումներն են: Օր.⁷⁵ ներգործական կառույցի վերածումը կրավորականի.

⁷⁴ Հմմտ. Л. Богданова, նշվ. աշխ., էջ 170–177:

«Նա կատարել է որոշակի աշխատանք»: – «Որոշակի աշխատանք է կատարվել նրա կողմից»: Առաջին տարբերակում ավելի շատ տեղեկություն է տրվում մեզ նրա կատարած աշխատանքի մասին, երկրորդում՝ աշխատանքը կատարվելու մասին: Քերականական փոխարկումը կապված է օբյեկտի և սուբյեկտի արտահայտման քերականական տարբեր միջոցների հետ՝ ուրիշի ուղղակի խոսքի փոխարկումը անուղղակիի, դերբայական դարձվածով պարզ նախադասությունը՝ բարդ ստորադասական նախադասության են:

Բառայինը ներկայանում է ոչ թե նույն բառի քերականական տարբեր ձևերով, այլ տարբեր բառերով, այսինքն՝ որպես փոխարկիչներ հանդես են գալիս բառերը, որոնք ցույց են տալիս միևնույն իրողությունը տարբեր տեսանկյուններից՝ շրջելով այն տարբեր կողմեր: Օր.՝ «Չարենցը կրել է Տերյանի գրական ազդեցությունը»: – «Տերյանը գրական ազդեցություն է ունեցել Չարենցի վրա»:

Հաճախ այս երևույթը նույնացվում է հոմանիշների և հականիշների հետ: Մինչդեռ հոմանիշների դեպքում իբրև փոխարկիչներ հանդես են գալիս հոմանշային միավորները, իսկ փոխարկման դեպքում նկարագրվող առարկաները տեղերով փոխվում են, հնարավոր է նաև նախադասության կառուցվածքի փոփոխություն: Հմմտ.՝ «Նա լավ մասնագետ է»: – «Նա **հմուտ** մասնագետ է» (հոմ.): «Նա լավ է տիրապետում իր մասնագիտությանը»: – «Նա իր մասնագիտության մեջ հմուտ է» (փոխարկում): Ինչ վերաբերում է հականշությանը, ապա, ի տարբերություն դրանց, փոխարկիչները ոչ թե իրար հակադրվում են որպես հակառակ հասկացություններ արտահայտող բառեր, այլ ունեն հակադարձ կառուցվածք: Բացի այդ՝ հականիշները ցույց են տալիս հակառակ իրավիճակներ, իսկ փոխարկիչներն ու հոմանիշները՝ նույն իրավիճակը: Հմմտ.՝ «Հայաստանը **արտահանում է** խմիչք»: – «Հայաստանը **ներկրում է** խմիչք» (հակ.): Բայց՝ «Հայաստանը խմիչք արտահանող երկիր է» (փոխ.): Բայց՝ «Գործարանը տալիս է **ցածր** որակի արտադրանք»: – «Գործարանը տալիս է **բարձրորակ** արտադրանք» (հակ.): Բայց՝ «Գործարանը ապահովում է արտադրանքի բարձր որակ» (փոխ.): «Հանդիպումը տեղի ունեցավ հարցաքննությունից **հետո**»: – «Հանդիպումը տեղի ունեցավ հարցաքննությունից **առաջ**» (հակ.): Բայց՝ «Հարցաքննությունը տեղի ունեցավ հանդիպումից առաջ» (փոխ.):

Փոխարկումը խոսքային հաղորդակցման մեջ ունի մի շարք գործառույթներ:

1. **Ծառայում է մի ձևակերպումը մեկ այլ ձևակերպմամբ փոխարինելուն.** պայմանավորված խոսքի բովանդակությամբ՝ խոսքի հեղինակը արտահայտում է իր վերաբերմունքը ներկայացվող իրավիճակին: Առանձնացվում են խոսողի տեսանկյունից առավել կարևոր շեշտադրումները, տրվում է իրավիճակի գնահատականը: Օր.՝ «Գնացքը մեկնեց մեր հանդիպումից կես ժամ **հետո**»: – «Մեր հանդիպումը տեղի ունեցավ գնացքի մեկնելուց կես ժամ **առաջ**». առաջին տարբերակում շեշտադրվում է գնացքի երբ մեկնելու գաղափարը, երկրորդում՝ հանդիպման երբ տեղի ունենալը: Այլ օրինակներ՝ «Թղթապանակը դրված էր գրքի **տակ**»: – «Գիրքը դրված էր թղթապանակի **վրա**», «Հայ մարզիկը **հաղթեց** չինացուն»: – «Չինացին **պարտություն կրեց** հայ մարզիկից», «Մենք **գնել ենք** այդ տունը»: – «Այդ տունը **վաճառել են** մեզ», «Քննարկումը **հետաձգվեց, քանի որ** առանձին մասնակիցներ բացակայում էին»: – «Առանձին մասնակիցներ

բացակայում էին, **ուստի և քննարկումը հետաձգվեց**»։ «Ատենախոսության վերնագիրը մասամբ չի համապատասխանում բովանդակությանը»։ – «Ատենախոսության բովանդակությունը մասամբ չի համապատասխանում վերնագրին»։

2. Արտահայտում է խոսողին հայտնի որոշակիություն կամ անորոշություն. «Այրիվանքը կառուցվել է ավելի վաղ, քան Վաղարշապատի Սուրբ Գայանե եկեղեցին» / «Վաղարշապատի Սուրբ Գայանե եկեղեցին կառուցվել է ավելի ուշ, քան Այրիվանքը»։ Ակնհայտ է, որ առաջին տարբերակում խոսքի առարկան նախ եղել է **Այրիվանքը**. խոսողներին նախապես հայտնի է եղել նախ նա, ապա՝ Գայանեն։ Երկրորդը ցույց է տալիս, որ մինչ այդ խոսվել է **Գայանեի** մասին, խոսքի ելակետը եղել է **Գայանե** եկեղեցին։

3. Կարող է նպաստել խոսքը առավել բարեկիրթ և տեղին կառուցելուն. նույնանում է մեղմասությանը. «Ուզում եմ զանգահարել. **տվե՛ք ինձ Ձեր հեռախոսը // կարո՞ղ եք ինձ տրամադրել Ձեր հեռախոսը // թույլ կտա՞ք օգտվել Ձեր հեռախոսից**»։

Ծան. Առանձնացվում են արտահայտչականության նաև այլ միջոցներ. դրանք սովորաբար կիրառվում են որոշակի գործառական ոճերում.

Այլաբանություն: Որևէ առարկա կամ երևույթ նկարագրվում է կամ ներկայացվում այլ առարկայի կամ երևույթի միջոցով։ Առակների հիմքը այլաբանությունն է։ Այլաբանությամբ են ստեղծվում, օրինակ, գրական գործեր, հոդվածների վերնագրեր, թևավոր խոսքեր, առած-ասացվածքներ՝ «Հայոց լեռներում» (ՀԹ), «Մասրենին» (ՀՍ), «Ծաղկած փշալարեր» (ԳՄ), «Գնացքից թռչելու ժամանակը», «Տասը չափիր, մեկ կտրիր», «Առանց կրակ ծուխ չի լինում», «Մի՛ դատիր, որ չդատվես»։ Ճիշտ է նկատված, որ այս դարձույթի էությունը պատկերավոր կարելի է արտահայտել ժողովրդական հայտնի առածի միջոցով. «Կո՛ւժ, քեզ եմ ասում, կուպ՝ դու լսիր»։

Առարկայացում: Իրերին ու կենդանիներին բնորոշ հատկանիշները վերագրվում են մարդուն («Մինարթթից հնչող **կաղկանձը** ծանր արծազանքեց լուսադեմի համր լուռության մեջ»), կամ թանձրացական գոյականներին բնորոշ հատկանիշները՝ վերացականներին («Եվ թողեց, որ **կասկածը** մինչև լույս տանջի Եվ **ուստի** իր սիրտը.... Ու նրանց աչքերում **պսպղում էր քաղցը**՝ Անասնական, անեզրական, անեզր...» (ԵՂ)). խոսքը դառնում է դիպուկ և առարկայական։

Բանաշրջում: Տերմինային մի համակարգին պատկանող միավորների գործածությունն է տերմինային մեկ այլ համակարգում կամ լեզվական անհամասեռ միջավայրում։ Բնորոշ է գեղարվեստական խոսքին և ՁԼՄ-ների լեզվին։ Օր.՝ «Երկրի տնտեսությունը հայտնվել է **վիրահատության սեղանին**», կամ՝ «**Անհավասարակողմ եռանկյունի**». քաղաքական բովանդակությամբ հոդվածի վերնագիր է։ Գործածվում է խոսքը ռճավորելու, խոսքին բազմազանություն հաղորդելու նպատակով։

Խորհրդանիշ: Բառային միավորներ կամ բառակապակցություններ են, որոնք գործածվում են այս կամ այն գաղափարի փոխարեն՝ որպես պայմանական անվանումներ։ Օր.՝ **Արարատը** Հայաստանի խորհրդանիշն է, **հողը**՝ հայրենիքի, **խաչը**՝ քրիստոնեական հավատքի, **արևը**՝ կյանքի ու կենսունակության, **աղավնին**՝ խաղաղության, **հայոց լեզուն**՝ հայ ինքնության, **առյուծը**՝ ուժի, **վարդը**՝ սիրո ու գեղեցկության, **հայոց եռագույնը, գինանշանը և հայկական հիմներգը**՝ հայոց պետականության և այլն։ Խորհրդանիշները

խոսքին հաղորդում են սեղմություն, գրավչություն, բովանդակային խորք և բազմազանություն: Վերացական, ոչ իրական երևույթները դառնում են տեսանելի, կոնկրետ⁷⁵:

3.8. ԽՈՍՔԻ ԱՅԼ ԱՐԺԱՆԻՔՆԵՐ

ա) Մաքրություն. չկան անհարկի գործածված օտարաբանություններ, բարբառային և խոսակցական բառեր, հասարակաբանություններ, կաղապարային արտահայտություններ, ժարգոնային բառեր, անհարկի ներդրյալ միավորներ, ավելորդ բառեր ու արտահայտություններ (**դե, հասկանալի է, հա, այսինքն, այսպես ասած** ևն). զերծ է բարոյական նորմերի տեսակետից մերժելի լեզվատարրերից ևն. դա ի վերջո հանգում է խոսքի ճշտության հատկանիշին՝ գրական լեզվի նորմերի պահպանմանը:

բ) Տեղինություն. հաղորդակցման նպատակին և պայմաններին համապատասխանությունն է, որում կարևոր գործոններ են խոսքի բովանդակությունը, խոսքային իրադրությունը, ժամանակը, հանգամանքները, հաղորդակցվողների հոգեբանական վիճակը, տրամադրվածությունը (անհատական–հոգեբանական տեղինություն), գործառական միջավայրը (ոճական տեղինություն) ևն. թևավոր խոսք կա. «խոսքը տեղին արժի հազար ոսկի դեղին»: Եվ այստեղ միանգամայն տեղին է հիշել Ցիցերոնի հայտնի խոսքը. «Չկա առավել դժվար բան, քան նկատել, թե ինչն է տեղին»:

գ) Հանդիսավորություն. առավել հատուկ է լեզվի գործառական որոշակի տեսակների՝ պաշտոնական, մասնավորապես դիվանագիտական գրագրության ձևեր, հրապարակային խոսքի ինչ–ինչ տեսակներ, ծիսական արարողություններում հնչած խոսք, հայտարարություն:

դ) Չափավորություն. արտահայտչական և պատկերավորման միջոցների նպատակային, հիմնավորված և չափավոր գործածությունն է. դրանց բացակայությունը սովորական, բնական խոսքից շեղումներ են, և երբ չի պահպանվում դրանց գործածության չափը, խոսքը դառնում է անբնական ու շինծու, վանում է կարդացողին կամ լսողին («Չի կարելի չարաշահել ճարտասանական հնարքները» (Դեմեթրիոս)) ևն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:
2. Աղայան Էդ., Տերմինագիտություն, Եր., 1978:
3. Աղաջանյան Չ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007:
4. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, 2-րդ հրատ., հ. I–IV, Եր., 1971–1979:
5. Բաղդասարյան Հ., Հոնտորական խոսքի ուժը, Եր., 1987:
6. Բեդիրյան Պ., Հայ լեզուն և մեր խոսքը, Եր., 1999:
7. Բրուսյան Գ., Տրամաբանության դասընթաց, Եր., 1976:

⁷⁵ Տե՛ս Ֆ. Խլղաթյան, Ոճաբանական բառարան, Եր., 2000: Վ. Միրզոյան, Ճարտասանություն, Եր., 2004: Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2007: Դ. Գյուրջինյան, Հայոց լեզու: Խոսքարվեստի դասագիրք, Եր., 2015 ևն:

8. Գյուլգինյան Դ., Հայոց լեզու. Խոսքարվեստի դասագիրք, Եր., 2015:
9. Գևորգյան Հ., Բաղդասարյան Վ., Տրամաբանություն, Եր., 2015:
10. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Եր., 2002:
11. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2007:
12. Եզեկյան Լ., Խոսքի ճշգրտություն, «ԲԵՀ», Եր., 2013, № 2:
13. Էդյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1980:
14. Էդյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:
15. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Եր., հ. I-IV, 1979 - 1980:
16. Խյղաթյան Ֆ., Ոճաբանական բառարան, Եր., 2000:
17. Կիրակոսյան Գ., Ղուշյան Հ., Տիգրանյան Ի., Տնտեսագիտական բացատրական բառարան, Եր., 1999:
18. ՀՀ կառավարության որոշումը «Մեծությունների միավորների, չափումների... մասին», «ՀՀ ՊՏ», 2012, 10.03/48 (922):
19. Հովհաննիսյան Հ., Փաստարկում և հոետորություն, Եր., 2015:
20. Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը, Եր., 2014:
21. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Եր., հ. I, 1944:
22. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990:
23. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993:
24. Մարգարյան Ա., Հայրապետյան Ա., Օտար բառերի բացատրական բառարան, Եր., 2004:
25. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000:
26. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984:
27. Միջայնյան Ա., Մարդումյան Մ., Մտքի հրավառություն, Եր., 2002:
28. Միրզոյան Վ., Ճարտասանություն, Եր., 2004:
29. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987:
30. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Եր., 1990, գիրք երկրորդ, 1991:
31. Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Եր., 1992:
32. «Նոր բառեր. Ա պրակ», Եր., 2015:
33. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Եր., 1986:
34. Շահվերդյան Թ., Ոճագիտություն, Եր., 2010:
35. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999:
36. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2009:
37. «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 1988:
38. «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006:
39. Քարենզի Դ., Ինչպես ձեռք բերել բարեկամներ և ազդել մարդկանց վրա, Եր., 1991:
40. Богданова Л., Стилистика русского языка и культура речи, М., 2011.
41. Введенская Л., Павлова Л., Катаева Е., Русский язык и культура речи, М., 2005.
42. Голуб И., Русский язык и культура речи, М., 2007.
43. Радугин А., Русский язык и культура речи, М., 2004.
44. Зверева Е., Основы культуры речи, М., 2008.
45. www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/lingvistika/EVFEMIZM.html
46. www.mgavm.ru/upload/medialibrary/bc6/tyebiactgcf%204.doc
47. www.mgavm.ru/upload/medialibrary/bc6/tyebiactgcf%204.doc

ՄԱՍ 4.

ԽՈՍՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

4.1. Գիտական ոճ (178): 4.2. Պաշտոնական ոճ (191): 4.3. Խոսակցական ոճ (204): 4.4. Գեղարվեստական ոճ (211): 4.5. Ձանգվածային լրատվության միջոցների լեզուն (224): 4.6. Գովազդի լեզուն (237):

Խոսքի արժանիքների իմացությունը կամ դրանք տեսականորեն յուրացնելը դեռ չի նշանակում խոսքի մշակույթի արվեստին տիրապետել: Կարևոր են նաև լեզվի գործառական տարբերակների յուրահատկությունների իմացությունը և դրանց համապատասխան՝ արժանիքները գործնականում կիրառելը:

Գոյություն ունեն ոճերի դասակարգման տարբեր սկզբունքներ: Առավել տարածված է և ընդունելի ոճերի այսպես կոչված **գործառական** (ֆունկցիոնալ) դասակարգումը: Դասակարգելիս հաշվի են առնվում երկու հիմնական գործոն՝ **ա) արտալեզվական**. հասարակական կյանքի և գործունեության այն ոլորտները, որոնք առանձնանում են հատկանիշների որոշակի ամբողջությամբ՝ գիտություն, պարբերական մամուլ, պաշտոնական և հրապարակային գործունեություն, առօրյա հաղորդակցում, **բ) լեզվական**. այդ ոլորտներում գործառվող լեզվի առանձնահատկությունները, որոնք մեծ չափով պայմանավորված են առաջին (արտալեզվական) գործոնով:

Ընդունված է առանձնացնել գործառական (ֆունկցիոնալ) ոճերի հինգ տեսակ՝ **պաշտոնական կամ վարչա-գործարարական, գիտական, գեղարվեստական, առօրյա-խոսակցական, լրագրային-հրապարակախոսական (ՁԼԲ-ների լեզուն)**⁷⁶:

Գործառական ոճերից յուրաքանչյուրն ունի որոշակի նպատակ: Դա էլ մեծ չափով պայմանավորում է դրանց լեզվական յուրահատկությունները: Գեղարվեստական ոճը, օրինակ, առավելապես իրականացնում է **գեղագիտական** գործառույթ (ձևավորում է գեղագիտական ճաշակ, դաստիարակում է), ուստի այդ ոճին հատուկ են պատկերավորման և արտահայտչական միջոցների բազմազանությունը և հարստությունը: Գիտական ոճը առավելապես **ճանաչողական** դեր է կատարում, համոզում է և ապացուցում, ուստի այն ճշգրիտ է և տրամաբանված: Լրագրային-հրապարակախոսական ոճը համատեղում է հաղորդող և ներգործող լեզվատարրեր, քանի որ կոչված է ոչ միայն տեղեկույթ հաղորդելու, այլև **ներագ-**

⁷⁶ Առանձին դեպքերում մեր շարադրանքի մեջ **ոճ**-ի փոխարեն **խոսք** կամ **լեզու** տերմինի գործածությունը նպատակ ունի ընդգծելու լեզվի գործառական տարբերակների ոչ միայն լեզվաոճական, արտահայտչական կողմը, այլև դրանց կառուցվածքային ու ձևային բոլոր յուրահատկությունները միասին վերցրած:

դելու լսարանի վրա (իրականացնում է կազմակերպական, քարոզչական, դաստիարակչական և այլ գործառույթներ): Առօրյա-խոսակցական ոճի հիմնական նպատակը պարզ, հասկանալի, սեղմ լեզվով **հաղորդակցում ապահովելն է**: Պաշտոնական ոճը **տեղեկացնում է, համոզում, կազմակերպում**, այդ իսկ պատճառով այս ոճում հաճախ են գործածվում տեղեկատվական և գնահատողական լեզվատարրեր. պաշտոնական ոճի հատկանիշների հիմքում ընկած են ճշգրտությունը, տրամաբանականությունը, երևույթների միջև եղած պատճառահետևանքային կապերը:

Դրանցից յուրաքանչյուրը ունի խոսքային հաղորդակցության իր օրենքները, որոնք ստեղծում են տվյալ գործառական ոճին բնորոշ համակարգ, որն ընդունված է կոչել **ոճական նորմ**: Այն, ինչ ընդունելի է մեկի համար, կարող է միանգամայն անընդունելի լինել մյուսի դեպքում կամ պարզապես բնորոշ չլինել դրան: Օր.՝ պատկերավորությունը և հուզականությունը գեղարվեստական ոճի բնորոշ գծերն են, մինչդեռ նույն հատկանիշները բնավ հատուկ չեն պաշտոնական խոսքին: Ավելին՝ ավելորդ հուզականությունը, ենթատեքստը, փոխաբերական զանազան առումները խաթարում են պաշտոնական խոսքի նորմը՝ միանշանակությունը, ճշգրտությունը ևն: Եվ հակառակը, կաղապարը պաշտոնական, մասամբ նաև գիտական խոսքի հատկանիշ է, բայց այն մերժելի է գեղարվեստական տեքստի համար:

Լեզվի գործառական տեսակներից են նաև **հրապարակային խոսքը** և **գովազդի լեզուն**, որոնք, ընդհանրություններ ունենալով ՁԼՄ-ների լեզվի հետ, միաժամանակ առանձնանում են մի շարք բնորոշ հատկանիշներով, որոնց մասին խոսք կլինի համապատասխան բաժիններում:

4.1. ԳԻՏԱԿԱՆ ՈՃ

4.1.1. Ընդհանուր հարկանիշներ (178): 4.1.2. Բառապաշար (180): 4.1.3. Քերականական առանձնահատկություններ (184): 4.1.4. Ենթաոճեր և ժանրեր (187): 4.1.5. Գիտական աշխարհանքների կառուցվածքը (189): 4.1.6. Աշխարհանքների ձևավորումը (190):

4.1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏՎԱՆԻՇՆԵՐ: Ժամանակակից աշխարհում մարդկային գործունեության կարևորագույն բնագավառներից մեկը գիտությունն է: Գիտությունը հասարակական գիտակցության՝ մարդու կողմից իրեն շրջապատող աշխարհը ճանաչելու և բացատրելու ձևերից է և դրսևորվում է տեսական-վերացական մտածողության, տրամաբանական կատեգորիաների միջոցով:

Հանրային կյանքի այս կարևորագույն ոլորտի սպասարկմանն է ծառայում գրական լեզվի գործառական տարբերակներից մեկը՝ գիտական ոճը կամ գիտական խոսքը:

Որևէ լեզվի գիտական ոճի զարգացման աստիճանը պայմանավորված է այդ լեզուն կրող ժողովրդի գիտական մտածողության, նրա ստեղծած և յուրացրած գիտական ավանդույթի մակարդակով: Պարզ է, որ գրավոր ավանդույթ չունեցող լեզուն զուրկ է գիտական (և ոչ միայն) ոճից: Այս առումով հարկ է արձանագրել,

որ հայոց լեզուն գիտական մշակման բազմադարյա մի պատկառելի շրջան է անցել և այսօր ի զորու է գիտության ամենաբազմապիսի ոլորտների արդիական նվաճումները համարժեքորեն արտացոլելու:

Ընդհանրապես գիտական խոսքը կոչված է իրագործելու գիտության առաքելությունը մարդու կյանքում. դա իրականության տարբեր ոլորտների մասին նոր գիտելիքի հաղորդումն է և դրա ճշմարտացիության ապացուցումը: Սրանով էլ թելադրվում են գիտական ոճի լեզվական առանձնահատկությունները:

Գործառական ոճերի շարքում գիտական ոճը թերևս ամենից ավելի է առանձնանում տարբերակային ձևերի առատությամբ, քանի որ այդպիսին է իր արտացոլման առարկան: Գիտությունը նախ բաժանում են երեք խոշոր բնագավառների՝ բնական, հասարակական (հումանիտար) և տեխնիկական, սրանք էլ ունեն իրենց ոլորտները, ճյուղերը, ենթաճյուղերը⁷⁷:

Բնական է, որ գիտության լեզուն նույնպես միատարր լինել չի կարող. լեզվական որակի ու կազմի առումով էապես տարբեր պիտի լինեն, ասենք, մաթեմատիկական, կենսաբանական, լեզվաբանական, պատմագիտական աշխատությունները: Համեմատության համար ներկայացնենք մեկական նմուշ մաթեմատիկական և պատմագիտական բնագրերից:

ա) Անհավասարումները, որոնց ծախս և աջ մասերը X փոփոխականի նկատմամբ առաջին աստիճանի բազմանդամներ կամ թվեր են, անվանում են X մեկ անհայտով գծային անհավասարումներ: ...Գծային անհավասարման ծախս և աջ մասերում գտնվող բազմանդամների անդամները անվանվում են այդ անհավասարության անդամներ:

բ) Անօրինակ հերոսական էր Մուշի ինքնապաշտպանությունը: Դաշտի բնակիչներին տեղահանելուց ու կոտորելուց հետո թուրքական զորքերը հարձակվում են Մուշի վրա, պաշարում քաղաքը և սկսում ոմբակոծել: 1915 թ. հուլիսի 11-ին և 12-ին արյունահեղ մարտեր են տեղի ունենում հատկապես Վերին և Ձորի թաղերում:

Ակնառու տարբերություններով հանդերձ՝ գիտական բնագրերը ունեն նաև ընդհանուր շատ գծեր. դրանք բոլորը շարադրված են արդի գրական հայերենով, ներկայացնում են նրա գործառական տարբերակներից մեկը: Գիտական ոճը գործառական մյուս ոճերի հետ ունի և՛ ընդհանուր, և՛ տարբերակիչ գծեր: Այն առավել չափով մոտ է պաշտոնական, մասամբ հրապարակախոսական և հակադրվում է գեղարվեստական ու առօրյա-խոսակցական ոճերին:

Ամենակարևոր հատկանիշներից մեկը գիտական ոճի **ընդհանրական ու վերացական** բնույթն է՝ պայմանավորված գիտական մտածողության յուրահատկությամբ: Գիտական ոճում գոյականները, օրինակ, հանդես են գալիս իրենց ընդհանուր նշանակությամբ. դրանք սովորաբար ցույց են տալիս ոչ թե կոնկրետ առարկա, այլ տվյալ դասի (տեսակի) առարկան ընդհանրապես, մինչդեռ, ասենք,

⁷⁷ Գիտությունը նույնպես հանդես է գալիս որպես ուսումնասիրության առարկա հատուկ գիտության՝ գիտաբանության համար:

գեղարվեստական ոճում գոյականի առարկայական վերաբերությունը մեծ մասամբ կոնկրետ է: Եթե գեղարվեստական գրականության գեղագիտական արժեքը որոշվում է պատկերի կոնկրետ, անկրկնելի, անհատական (թեև հաճախ տիպականացված) էությամբ, ապա գիտության մեջ կոնկրետ երևույթը կամ փաստը հանդես է գալիս որպես երևույթների տվյալ ընդհանրության՝ դասի կամ խմբի օրինակ կամ նմուշ և դրանով էլ արժեք է ստանում գիտության համար: Գիտության մեջ եզակին հանդես է գալիս ընդհանուր ձևով, արվեստի մեջ ընդհանուրը՝ եզակիի, կոնկրետի տեսքով⁷⁸:

Որպես օրինակ բերենք **գայլ** գոյականի երկու կիրառությունները՝ գիտական և գեղարվեստական բնագրերում:

...Տունդրային գայլը ավելի բաց գույնի է, ծմռանը գրեթե սպիտակ, անտառայինը՝ մուգ, անապատայինը՝ գորշ շիկակարմիր (ՀՄՀ):

Գայլն աչքերը կտրեց նրա գունատ աչքերից, գլուխը թեքեց և աչքերով ծնափոշի արավ. նա միամտացնում էր այդ երեխային, որ ցատկի, բայց երեխան գիտեր, որ իրեն միամտացնում են, և գայլին ընդառաջ էր գնում դանդաղ ու մահալի պես պինդ. գայլը մոռացավ, որ ինքը գայլ է, կլանչոցով ետ թռավ (ՀՄ):

Գիտական բնագրում **գայլ** բառը նշանակում է կենդանու այդ տեսակը, գեղարվեստական ոճում նկարագրված է այդ տեսակի մի կոնկրետ առանձնյակ: Եվ դա բնական է. չէ որ գիտությունը կոչված է բացահայտելու բնության և հասարակության մեջ գործող ընդհանուր օրինաչափությունները: Սակայն սա չի նշանակում, թե գիտությունը չի անդրադառնում մասնավոր կամ կոնկրետ իրողությունների. ընդհանրականության աստիճանը պայմանավորված է գիտական երկի ժանրով, նրա կոնկրետ նպատակադրմամբ:

Վերացականության և ընդհանրականության հետ մեկտեղ գիտական ոճին ներհատուկ են նաև **ճշգրտությունը, տրամաբանական հետևողականությունը, ապացուցականությունը, գրական նորմի շրջանակների խստիվ պահպանումը**: Այդ հատկանիշները (կամ դրանց մեծ մասը) հատուկ են նաև պաշտոնական խոսքին, մի մասը՝ նաև հրապարակախոսական ոճին և ընդհանրապես հայոց լեզվի կանոնական (նորմատիվ) կիրառությանը:

Այժմ տեսնենք, թե ինչպես են դրսևորվում գիտական ոճի առանձնահատուկ գծերը տարբեր մակարդակներում՝ բառապաշարի և քերականության մեջ:

4.1.2. ԲԱՌԱՊԱՇԱՐ: Գիտական խոսքի բառապաշարի ամենաբնորոշ տարրերը **տերմիններն են**: Տերմինները գիտական (նաև այլ կարգի մասնագիտական արհեստների, արտադրության և այլնի) հասկացություններ արտահայտող բառեր կամ բառակապակցություններ են, որոնք բնութագրվում են իմաստի ընդհանրականությամբ և միանշանակությամբ. սրանցով են հիմնականում ապահովվում գիտական ոճի ընդհանրականությունը և վերացականությունը, ճշգրտությունն ու

⁷⁸ Տե՛ս **М. Кожина**, О речевой системности научного стиля сравнительно с некоторыми другими, Пермь, 1972, էջ 69:

հստակությունը: Տերմինները սովորաբար կազմում են գիտական ոճի բառապաշարի 15–20%–ը: Իհարկե, տերմինների գործածությունը միայն գիտական ոճի մենաշնորհը չէ. ճշգրիտ սահմանելի հասկացությունները դրանցով են արտահայտվում նաև այլ ոճերում:

Տերմինային արժեքով կարող են կիրառվել լեզվի բառապաշարի՝ հասկացություն արտահայտող միավորները (այսինքն՝ Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը). **կապերը, շաղկապները, վերաբերականներն ու ձայնարկությունները** տերմին չեն դառնում: Նյութական իմաստով օժտված բառերից էլ տերմինային կիրառության առումով բացարձակ գերակշռություն ունի գոյականը, առավել սակավ գործածվում են ածականներն ու բայերը. դերանուններին ու մակբայներին ևս տերմինային կիրառությունները բնորոշ չեն: Եթե նկատի ունենանք, որ ածականները տերմինային արժեքով հանդես են գալիս հիմնականում գոյականական բառակապակցության կազմում կամ էլ, ինքնուրույնաբար գործածվելով, վերածվում են գոյականների (ինչպես՝ **ածական, վանական, բանակային, կուր-սային**), ապա տերմինային բառապաշարի մեջ գոյական անվան գերակայությունն ավելի ակնհայտ կդառնա: Պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք ևս: Տերմինները լեզվի բառապաշարի առանձին շերտ են ներկայացնում, սակայն սովորական երևույթ են դրա և բառապաշարի այլ շերտերի փոխադարձ ներթափանցումները. համագործածական բառաշերտի միավորը կարող է գործածվել նաև տերմինային արժեքով (օր.՝ **ջուր** – քիմիական, **ականջ** – կազմախոսական, **թուփ** – բուսաբանական ևն): Հնարավոր է նաև հակառակ երևույթը, այսինքն՝ մասնագիտական տերմինները կարող են ներթափանցել համագործածական բառաշերտ (սա առավել քիչ է հանդիպում. օր.՝ **մոլեկուլ, թթվածին** ևն): Ինչպես նշում է Էդ. Աղայանը, «...մի փոքր չափազանցություն թույլ տալով՝ կարելի է ասել, թե ամեն մի գոյական անուն տերմին է կամ տերմինային բառ: Նույնիսկ այնպիսի սովորական բառեր, ինչպիսիք են **թուղթ, գրիչ, թանաք, ապակի, փայտ, քար** ևն, տերմինային բառեր են արտադրության զանազան ճյուղերում, արհեստների, հրատարակչական գործի և այլ բնագավառներում»⁷⁹:

Ինքնին հասկանալի է, որ գիտության տարբեր բնագավառներն ու ճյուղերն սպասարկող տերմինները իրենց կազմով էապես տարբեր պիտի լինեն, սակայն այս հանգամանքը չի խանգարում, «որ գիտական տերմինաբանությամբ հագեցվածությունն ընդհանրապես համարվի գիտական ոճի բնորոշ հատկանիշ, քանի որ տերմինաբանությունն առհասարակ գիտական խոսքի անհրաժեշտ ու պարտադիր բաղադրիչ է, և դա բխում է այդ ոճի էությունից»⁸⁰:

Տերմինային կազմի զգալի տարբերություններ են ունենում ոչ միայն գիտության ոչ այնքան մերձավոր ճյուղերի (ասենք, բժշկագիտություն, մաթեմատիկա, լեզվաբանություն ևն), այլև գիտության միևնույն առարկային վերաբերող, սակայն գիտական ոճի տարբեր ենթաոճերին պատկանող բնագրերը: Գիտության լեզվի բառապաշարային այս կարևոր շերտի իմաստային նկարագրի վերաբերյալ պետք է նկատի ունենալ հետևյալը:

⁷⁹ Էդ. Աղայան, Տերմինագիտություն, Եր., 1978, էջ 17–18:

⁸⁰ Ս. Աբրահամյան, Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները, «ԲԵՀ», 1982, № 3, էջ 15:

Դառնալով որևէ գիտության տերմինային համակարգի միավոր՝ բառը ձեռք է բերում տերմինային իմաստ, որը, ի տարբերություն բառի ոչ տերմինային իմաստի, արտահայտում է գիտության կամ որևէ այլ բնագավառի բնորոշ կոնկրետ հասկացություն և որպես այդպիսին տրվում է գիտական ճշգրիտ սահմանման: Կարելի է արդյոք ասել, որ տերմիններին ընդհանրապես հատուկ չեն բազմիմաստության, հոմանիշության և համանունության իմաստաբանական կարգերը: Իհարկե, այս երևույթները առկա են նաև տերմինային միավորների միջև, սակայն ունեն դրսևորման յուրահատկություններ: Տերմինային բազմիմաստությունը խրախուսելի չէ գիտության միևնույն ճյուղին վերաբերող տերմինահամակարգում (այսպես կոչված **ներհամակարգային բազմիմաստություն**), սակայն սովորական են տարբեր տերմինահամակարգերում գործածվող միևնույն բառային միավորները՝ որպես **արտահամակարգային բազմիմաստության** դրսևորումներ: Այսպես՝ **սեռ** տերմինը կիրառվում է գրականագիտության, կենսաբանության, լեզվաբանության, **կուրս** բառը՝ քաղաքագիտության, տնտեսագիտության, ուսումնական և այլ տերմինահամակարգերում բոլորովին տարբեր նշանակություններով: Սա յուրատեսակ **տերմինային համանունություն** է՝ գիտության լեզվում բավական տարածված իրողություն: Այուս կողմից՝ նշված տերմինների գործածությունը միևնույն նեղ տերմինահամակարգում կարող է տեղիք տալ մտքի խճողման, անցանկալի կրկնաբանությունների: Օր.՝ **կուրս** բառը միևնույն՝ ուսումնական բնագավառում **լսարան** և **դասընթաց** իմաստներով գործածելիս կարող է առիթ տալ «Երրորդ **կուրսում** ավարտվում է փոխսոփայության **կուրսը**» և այս կարգի անհաջող ձևակերպումների: Ներհամակարգային այսպիսի տերմինային բազմիմաստությունը լեզուն հաղթահարում է՝ տերմինային իմաստներից մեկի համար բառային կամ բառակապակցական մեկ այլ միավոր հատկացնելով: Որպես գիտական տերմինաբանության մեջ գործող ընդհանուր օրինաչափություն ընդունված է «մեկ տերմինին՝ մեկ իմաստ տվյալ տերմինահամակարգում» սկզբունքը⁸¹:

Ինչ վերաբերում է տերմինային հոմանշության երևույթին, ապա պետք է նկատի առնել, որ հոմանիշ բառերի՝ իբրև միմյանցից նրբիմաստներով կամ ոճակաւորեն տարբերվող միավորների սահմանումն արդեն իսկ հակասում է տերմինային իմաստի ճշգրտության սկզբունքին: Տերմինների մեջ հանդիպում են միևնույն հասկացությունն արտահայտող նույնիմաստ (նույնանիշ) բառեր, որոնք կոչվում են **բազմանուններ** (օր.՝ խնդրառություն – կառավարում – կառավարություն, ուսնծգում – ուսնծություն, բորսա – բիրժա ևն): Ժամանակի ընթացքում տվյալ տերմինահամակարգում սովորաբար կայունանում է բազմանուններից որևէ մեկը:

Ընդունված է, որ գիտական խոսքի բնութագրական գծերը՝ տրամաբանական հետևողականություն, ճշգրտություն, հասկանալիություն ևն, տեղ չեն թողնում նրանում պատկերավորման միջոցների (փոխաբերություն, չափազանցություն ևն) գործածության, հեղինակի սուբյեկտիվ–հուզական վերաբերմունքի դրսևորման համար: Ընդհանուր առմամբ ճշմարիտ այս պնդումը, սակայն, չի նշանակում, թե գիտական ցանկացած բնագիր լիովին զուրկ պետք է լինի պատկերավորման–արտահայտչական միջոցներից կամ հուզական որոշակի գունավորումից:

⁸¹ Հմմտ. Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 44–45:

Նշվածների առկայությունը պայմանավորված է նախ նրանով, թե գիտական ոճի որ ենթաոճին կամ ժանրին է վերաբերում տվյալ բնագիրը, ապա և ոչ սակավ չափով՝ հեղինակի անհատականությամբ: Բնական է, որ հումանիտար (առավելապես գրականագիտական, պատմագիտական, արվեստագիտական և այլ) բնագրերում, ինչպես նաև ընդհանրապես գիտահանրամատչելի երկերում այնքան էլ սակավադեպ չեն պատկերավոր մտածողություն դրսևորող լեզվական միջոցները: Ահա մի օրինակ ֆիզիկային վերաբերող հանրամատչելի գիտական շարադրանքից.

Ապշեցուցիչ բաներ են այդ ֆոտոնները: Նրանց համար անհնարին է այլ արագություն, քան վայրկյանում 300 հազար կիլոմետրը, երբ նրանք թռչում են նյութից զերծ տարածության մեջ: Նրանք հայտնվում են ճառագայթման աղբյուրից, ինչպես նոր դուրս եկած կենդանածին ձկնիկներ՝ միանգամայն ավարտուն, լիովին ձևավորված: Նրանց էներգիա-մասսան աստիճանական աճման կարիք չունի, նրանք չպետք է տևական մանկություն ունենան, նրանց համար կարծես գոյություն չունի ժամանակ. հենց իրենց առաջացման պահին նրանք ձեռք են բերում այն ամենը, ինչ ընդհանրապես կարող են ունենալ: Մենք հենց նոր կարեկցեցինք նրանց, իսկ նրանք, պարզվում է, չտեսնված հաջողակներ են (Դ. Դանին):

Ընդհանրապես գիտական ոճի բնագրերում սովորական են բառերի՝ լեզվի մեջ արմատավորված փոխաբերական գործածության դեպքերը (ընդհանրական-ավարտուն փոխաբերությունները): «Գիտության համարյա բոլոր բնագավառներում փոխաբերական իմաստով գործածվում են մի քանի բառեր, որոնք հանդես են գալիս տարբեր լրացումների հետ: Դրանցից են՝ **աղբյուր** (վարակի, տաքացման, ջերմության, լույսի, զգացմունքների, ուրախության, երջանկության, հակասությունների, ճառագայթման, շարժման, ծայնի, հաղորդման... են), **օջախ** (բորբոքային, գինեգործության, ճառագայթման, մշակութային... են), **մթնոլորտ** (հոգեբանական, շիկացած, գրական, կործանարար, հեղձուցիչ... են), **բանալի** (զաղտնիքների բացահայտման, հարցի լուծման, ուսումնասիրության են), **շտեմարան** (...քարի, ձկան, վարժությունների են), **գոտի** (սևահողային, խաղողագործական, արևադարձային... են)»⁸²:

Առանձին քննության նյութ կարող են դառնալ գիտության լեզվի տերմինային բառապաշարի հարստացման, նոր տերմինների կերտման (տերմինաշինության), տերմինների փոխառության հարցերը: Այս առումով նշենք միայն, որ հայոց լեզվի բառակազմական ճկունությունն ու գիտական մշակման հարուստ ավանդույթը հնարավորություն են տալիս հայոց լեզվով հաջողությամբ արտահայտելու գիտության անընդհատ նորացող հասկացությունները:

Դրան նպաստում են նաև հայերենի կառուցվածքային-տիպաբանական յուրահատկությունները. դրանցից մեկի մասին հետաքրքիր է Գ. Ջահուկյանի դիտարկումը. «Հայերենի կառուցվածքը հնարավորություն է տալիս գրեթե յուրաքանչյուր բայից կազմել բայանվանական և անորոշ-դերբայական ձևեր: Եթե այս առումով տիպաբանական զուգահեռ անցկացնենք հայերենի և այլ լեզուների

⁸² Օ. Բաբայան, Փոխաբերությունը արդի հայերենում, Եր., 1998, էջ 85:

միջև, կարելի է տեսնել, որ մի շարք լեզուներում (արաբերեն, վրացերեն ևն) ընդհանրապես բացակայում է անորոշը, մի շարք այլ լեզուներում (ռուսերեն, լատիներեն ևն) անորոշը չի հիշվում ևն: Հայերենի այս առանձնահատկությունը հնարավորություն է տալիս բայական բոլոր ձևերը գոյականաբար գործածելու, որ կարևոր նշանակություն ունի տերմինակազմության առումով:

Վերջին ժամանակներս արևելահայ գրական լեզվում լայն տարածում է ստացել անորոշի փոխարեն բուն գոյական անունների գործածությունը՝ ոչ առանց ռուսերենի ազդեցության: Այս բանը հանգեցնում է վերացական արտահայտության հնարավորությունների ուժեղացման և, հասկանալի պատճառներով, առանձնապես լայն չափեր է ընդունում գիտական և պաշտոնական-գործարարական ոճերում»⁸³:

Մեր լեզվում, իրոք, սովորական է միևնույն բայահիմքից տարբեր իմաստներ արտահայտող տերմինների կազմությունը՝ **մշակել**, **մշակություն**, **մշակույթ**, **մշակաբույս**, **մշակում** ևն, **խոսել**, **խոսք**, **խոսույթ**, **խոսողություն**, **ասել**, **ասույթ**, **ասություն**, **ասք**, **ասացող**, **ասացվածք**, **բանասաց** ևն, **ավանդել**, **ավանդույթ**, **ավանդություն**, **ավանդավեպ** ևն:

Տերմինաշինության լայն հնարավորություններին զուգահեռ՝ հայերենը, սակայն, աշխարհի շատ լեզուների պես չի խորշում միջազգային ընդունված տերմինների գործածությունից, եթե, իհարկե, չկան կամ առայժմ գտնված չեն դրանց համարժեք հայերեն այնպիսի ձևեր, որոնք բնականորեն կընդունի լեզվական համակարգը:

4.1.3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Գիտական ոճի առանձնահատուկ որակը ձևավորում են նաև **քերականական** իրողությունները, որոնց կիրառությունը ևս պայմանավորված կարող է լինել գիտական խոսքի գործառության ոլորտով կամ գիտական բնագրի այս կամ այն ժանրով: Որպես ընդհանուր բնութագրական գիծ նշվեց արդեն **գոյական խոսքի մասի** գերակա դերակատարությունը՝ որպես տերմինային բառաշերտի առաջնային բաղադրատարրի: Ածականները (նաև թվականները ոչ մաթեմատիկական բնագրերում) հիմնականում հանդես են գալիս բաղադրյալ տերմիններում՝ որպես լրացական անդամ (որոշիչ) (օր.՝ **պարզ ստորոգյալ**, **հարյուրամյա պատերազմ**, **առաջին դեմք** ևն):

Բայի խոսքաստեղծիչ դերը, բնականաբար, հատուկ է նաև գիտական ոճին: Բայական քերականական կարգերն այստեղ դրսևորում են կիրառական որոշ յուրահատկություններ: Ամենից հաճախված են, անշուշտ, սահմանական եղանակի ներկա ժամանակի երրորդ դեմքի ձևերը. ներկա ժամանակն էլ, որպես կանոն, հանդես է գալիս իր ոչ բուն նշանակությամբ, այլ որպես **ընդհանրական ներկա** («Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը», «Ձկներն ապրում են վտառներով», «Բարդ բառը կազմվում է մեկից ավելի արմատներով»), կամ էլ հաճախ որպես **պատմական ներկա** («Ինքնապաշտպանական ուժերի կազմում կռվում են նաև

⁸³ Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 506:

աշխարհագրայիններ», «Աբրահամյանը կատարում է խոսքի մասերի դասակարգում»):

Պարզ է, որ այս կիրառություններն էլ ծառայում են գիտական խոսքի ընդհանրականությանն ու վերացականությանը: Բայի (նաև դերանվան) **երկրորդ դեմքը** գիտական խոսքում ամենից սակավադեպն է. առավելապես հանդես է գալիս գիտաուսումնական բնագրերում գործնական բնույթի հանձնարարականներ ձևակերպելիս, երբեմն էլ՝ գիտահանրամատչելի երկերում՝ պատումին երկխոսական-մտերմիկ բնույթ հաղորդելու նպատակով: Սրա համեմատ հաճախ է գործածվում **առաջին դեմքը**, որը սովորաբար նշում է երկի հեղինակին և առավելապես արտահայտվում է հոգնակի թվով (հեղինակային **մենք**): Օր.՝ «Սույն աշխատության մեջ **մենք** անդրադառնում ենք...», «**Հուսով ենք**, որ այս գիրքն իր նպաստը կբերի...» ևն:

Հոգնակի թվի առաջին դեմքի բայով (սովորաբար ըղծական եղանակի ապառնի ժամանակով) ձևավորվում են նաև ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություններ (դարձյալ առավելապես գիտաուսումնական ենթաոճում): Օր.՝ «**Լուծենք** հավասարումը», «**Մի պահ վերանանք** բառերի կոնկրետ իմաստներից» ևն:

Բայի **եղանակային ձևերից** գիտական ոճում գրեթե բացառվում է հրամայական եղանակը, եթե նկատի չառնենք ուսումնական գործնական առաջադրանքների ձևակերպումները («**Առանձնացրե՛ք** ածանցավոր բառերը»): սրանք էլ ավելի հաճախ արտահայտվում են անորոշ դերբայով («**Առանձնացնել...**»):

Գիտական մտածողության համարժեք արտահայտման պահանջով գիտական ոճում շատ են կիրառվում ոչ նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը՝ կապերը (**համար, պատճառով, մասին, կապակցությամբ, համաձայն, ըստ** ևն), շաղկապները (**եթե..., ապա, չնայած (որ), որովհետև, քանի որ, ուստի, այնպես որ, թեև**), վերաբերականները (**անշուշտ, իհարկե, երբեք, անտարակույս, թերևս, երևի** ևն): Զայնարկությունները գիտական ոճում, որպես կանոն, բացակայում են:

Շարահյուսական կառույցներից գիտական ոճին առավել բնորոշ են **գոյականական բառակապակցությունները** (որոնց մեծ մասը՝ տերմինային արժեքով):

Պարզ **նախադասությունները** գերազանցապես երկկազմ են: Գիտական ոճում, առավել քան գործառական մյուս ոճերում, շատ են գործածվում **բարդ նախադասությունները**՝ հիմնականում շաղկապավոր, ինչպես նաև բազմաբաղադրիչ (գերազանցապես ստորադասական տիպի): Դրանց բաղադրիչների շարահյուսական հարաբերություններից ամենատարածվածը **պատճառահետևանքային կապն** է՝ դրսևորված պատճառի, պայմանի, հիմունքի պարագա կամ հետևանքի երկրորդական նախադասություններով: Սա պայմանավորված է գիտական մտածողության առանձնահատկությամբ, տրամաբանական կաղապարների (դատողություն, մտահանգում ևն) լեզվական ճշգրիտ արտացոլման պահանջով: Սակայն գիտական ոճին բնավ խորթ չեն նաև **դերբայական դարձվածներով** կառույցները, որոնք, բարդ նախադասությունների հետ զուգորդվելով, որոշակիորեն մեղմում են գիտական խոսքին պարտադրված միօրինակությունը: Այս

առիթով պետք է նշել նաև, որ գիտական խոսքը որոշակի միօրինակությամբ հաճախ «տառապում է» անխուսափելիորեն՝ ի նպաստ շարադրանքի ճշտության ու տրամաբանական անհակասականության: Սա էլ, ինչպես նշվել է, չի նշանակում, թե գիտական ոճում լիովին բացառվում են հեղինակի անհատականության կամ անձնական վերաբերմունքի դրսևորումները (հատկապես հումանիտար ոլորտին վերաբերող երկերում)⁸⁴:

Գիտական խոսքում դիտելի է շարահյուսական մի յուրահատկություն ևս, որը կրկին թելադրված է գիտական մտածողության յուրահատկությամբ: Գիտական երկի հեղինակը շատ հաճախ խուսափում է առաջին պլան մղել իր կամ տվյալ հարցով զբաղված այլ գիտնականների անձը՝ ընդգծելով հատկապես նրանց կատարածը: Այս նպատակն իրագործելուն առավել չափով հարմար են գալիս **կրավորական կառուցվածքի** նախադասությունները (օր.՝ «Ուսումնասիրվել է Հայաստանի տնտեսության փորձը», «Կիրառվել են քննության նորագույն մեթոդներ»), ինչպես նաև **միակազմ նախադասության ընդհանրական դիմավոր** կոչված տեսակը (օր.՝ «Առանձնացնում են լեզվի զարգացման հետևյալ փուլերը», «Թերերնը ապացուցում են երկու եղանակով»): Շատ են հանդիպում նաև «**Պետք է (կարելի է, անհրաժեշտ է, ցանկալի է...) + անորոշ դերբայ**» կառուցվածքի միակազմ նախադասությունները (սրանք որոշ հետազոտողներ համարում են երկկազմ):

Գիտական ոճում սակավադեպ չեն (իսկ որոշ բնագրերում էլ շատ սովորական են) **ներդրյալ միավորները**՝ բառեր, բառակապակցություններ կամ նախադասություններ, որոնք լրացուցիչ տեղեկատվություն հաղորդելու, այսպես կոչված տեղեկանքային բացահայտչի կամ էլ հեղինակային վերաբերմունքի դրսևորման գործառույթ ունեն և սովորաբար առնվում են փակագծերի մեջ: Օր.

Գլխավոր զեկուցումը կազմված էր տարբեր ազգությունների պատկանող վեց գիտնականների՝ Տ. Ա. Բերտազակի, Յու. Դ. Դեշերիկի (ղեկավար), Ի. Ի. Իսանի, Վ. Ի. Լիտկինի, Ս. Գ. Հայդակովի, Ա. Ն. Շահիրովի կողմից», «Ինչ վերաբերում է ոչ եվրոպական, հատկապես ասիական մի շարք լեզուների, ապա նրանց մի զգալի մասը գրեթե բոլոր, իսկ երբեմն՝ ուղղակի բոլոր այդ բառերի դիմաց ունի սեփական անվանումները (համոզվելու համար պետք է միայն բաց անել, ասենք, կորեերենի, վիետնամերենի, չինարենի, հնդկական, ինդոնեզական կամ բիրմայական լեզուների բառարանները)» (Ռ. Իշխանյան):

Նախադասության հնչերանգային տեսակներից գիտական ոճում բացարձակ գերակշռություն ունի, բնականաբար, **պատմողական տիպը**, որ բխում է գիտական խոսքի առաքելությունից: Բացականչական և հրամայական բնույթի նախադասություններ գրեթե չեն հանդիպում, սակայն **հարցական բնույթի** նախադասությունները այնքան էլ խորթ չեն գիտական խոսքին. դրանք (մասնավորապես դրանց ճարտասանական տարբերակը) գործածվում են շարադրանքին որոշ կենդանի երանգ հաղորդելու նպատակով: Այս առումով հատկանշական է, օրինակ, Գ. Զահուկյանի «Ձրույցներ հայոց լեզվի մասին» գրքույկը, որի բոլոր վերնագրերը հարցական նախադասություններ են՝ «Ինչ լեզուների

⁸⁴ Հմմտ. Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 235-236:

հետ է շփվել հայերենը նախքան հայ գրերի գյուտը»: «Գրաբարը եղել է արդյոք խոսակցական լեզու»: «Ինչքան բարբառ ունի հայերենը» ևն:

4.1.4. ԵՆԹԱՈՃԵՐ ԵՎ ԺԱՆՐԵՐ: Նախ՝ գիտական խոսքը, ինչպես և խոսքն ընդհանրապես, ունի դրսևորման երկու ձև՝ **բանավոր և գրավոր**:

Գիտական խոսքի ենթաոճերը հիմնականում տարբերվում են նրանով, թե հանրության որ խմբին է հասցեագրվում տվյալ գիտական շարադրանքը և ինչ նպատակ է հետապնդում: Ըստ այսմ՝ տարբերում են **մասնագիտական, գիտաուսումնական, գիտահանրամատչելի** ենթաոճեր:

Մասնագիտական ենթաոճով գրված երկերը նախատեսված են գիտության տվյալ ոլորտի նեղ մասնագետների համար և չեն կարող ընկալվել կամ յուրացվել առանց հատուկ պատրաստության: Սրանցից գիտատեխնիկական բնագրերը հասցեագրվում են հատկապես գիտական և տեխնիկական մշակումներով ծեռք բերված արդյունքների գործնական կիրառությամբ զբաղվող մասնագետներին և դարձյալ կարող են մատչելի չլինել մասնագիտական պատրաստություն չունեցողներին: **Գիտահանրամատչելի** երկերը գիտելիքի պարզեցված շարադրանք են՝ հասցեագրված գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ հատուկ մասնագիտական պատրաստություն չունեցողներին: **Գիտաուսումնական** ենթաոճով գրվածները նախատեսված են գիտության տվյալ ոլորտի ապագա մասնագետների համար. սա դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսուցողական բնույթի այլևայլ աշխատանքներին հատուկ լեզվական որակն է:

Գիտական ոճի ենթաոճերի՝ վերևում նկարագրված լեզվական որակների տարբերությունները առավել ակներև ներկայացնելու համար բերենք մի քանի նմուշներ մասնագիտական և հանրամատչելի բնագրերից:

1. Մասնագիտական բնագրեր

ա) մաթեմատիկայից

Այն հարթությունը, որը գնդային մակերևույթի հետ ունի միայն մեկ ընդհանուր կետ, կոչվում է շոշափող հարթություն: Շոշափող հարթությունը կարելի է դիտել որպես հատող հարթության սահմանային դիրք, երբ գնդի կենտրոնից ունեցած նրա հեռավորությունը ձգտում է շառավղին (Մ. Աբրամովիչ):

բ) ֆիզիկայից

Եթե մարմինն օժտված է որևէ կարգի առանցքային համաչափությամբ, ապա իներցիայի կենտրոնը կգտնվի այդ առանցքի վրա: Նրա հետ կհամընկնի նաև իներցիայի գլխավոր առանցքներից մեկը, իսկ մյուս երկուսը կլինեն նրանց ուղղահայաց: Ըստ որում, եթե առանցքային համաչափության կարգը երկուսից մեծ է, ապա մարմինը **սիմետրիկ հոլ** է (Լ. Լանդաու, Ե. Լիֆշից):

գ) կենդանաբանությունից

Թռչուններն անկասկած առաջացել են սողուններից: Դա հաստատվում է բազմաթիվ փաստերով: Սողունների և թռչունների կազմության մեջ ընդհանուր շատ բան կա՝ չոր մաշկ, նմանություն թեփուկների և փետուրների զարգացման մեջ, մեկ հոդելուատով զանգի հոդավորում ողնաշարի հետ, ինտերտարսալ հոդավորում, զարկերակային արյուն կրող աորտայի աջ աղեղ, կոնքային երիկամ, սաղմային թաղանթներ են: Թռչունների շատ օրգաններ նման չեն սողունների համապատասխան օրգաններին, բայց նրանք զարգացել են վերջիններիս բարդացման հետևանքով (Ե. Լուկին):

դ) լեզվաբանությունից

Ընդհանրական քերականության մեջ պետք է հստակորեն առանձնացվեն արտահայտության և բովանդակության պլանները, մի բան, որ գրեթե հնարավոր չէ և նպատակահարմար չէ առանձնական քերականությունների դեպքում. այստեղ տվյալ իմաստը միշտ ձևավորված է տվյալ միջոցներով: Եթե ընդհանրական քերականության մեջ արտահայտության և բովանդակության պլանները դրվում են իրար կողքի, ապա առանձնական քերականության մեջ դրանք կապվում են փոխհաջորդմամբ՝ մակարդակից մակարդակ և աստիճանից աստիճան անցումով: Եթե առանձին լեզուների դեպքում արտահայտելի և արտահայտիչի (իմաստի և ձևավորման) բացարձակ տարբերակումը գրեթե անհնար է..., ապա իդեալական վիճակով այդ լիովին թույլատրելի է և անհրաժեշտ (Գ. Զահուկյան):

2. Հանրամատչելի բնագրեր**ա) ֆիզիկայից**

Տիեզերքը կազմող մատերիան գոյություն ունի ոչ միայն որպես նյութ: Լույսը կամ ռադիոալիքները նյութական չեն, բայց մատերիական են: Եթե դրանք **ոչինչ** լինեին, միթե պետք կլիներ ինչ-որ բան ծախսել դրանց ստեղծման համար: Ինչու էլեկտրականները պետք է ածուխ կլանեն, իսկ հնադարյան լապտերները՝ ձեթ:

Խորասուզվելով էլեմենտար մասնիկների աշխարհը՝ տեսնում ես, որ այնտեղ ուղղակի հրաշքներ են տեղի ունենում. նյութի հատիկներն ամբողջությամբ, առանց մնացորդի վերածվում են ճառագայթման: Իհարկե, այդպիսի դեպքերը զարմանալի են թվում, սակայն դրանց մեջ զարմանահրաշ ինչ կա (Դ. Դանին):

բ) լեզվաբանությունից

Հարցնել, թե ինչ ծագում ունի այս կամ այն լեզուն, նույնն է՝ հարցնել, թե որ լեզվաընտանիքին է այն պատկանում: Վիճակը ճիշտ այնպես է, ինչպես այն դեպքում, երբ մենք ուզում ենք իմանալ այս կամ այն մարդու ծագումը. հարցնել, թե ինչ ծագում ունի Գրիգորյանը, նշանակում է պարզել, թե ինչ ընտանիքի, լայն առումով՝ տոհմի, ցեղի է նա պատկանում:

Գիտության զարգացման արդի վիճակով կասկած չկա, որ հայերենը հնդեվրոպական ծագում ունի, այսինքն՝ պատկանում է այն լեզվաընտանիքին, որ պայմա-

նականորեն կոչվում է հնդեվրոպական. հնդեվրոպական լեզուները հնում տարածված էին Հնդկաստանից մինչև Եվրոպա, հետագայում տարածվում են նաև այլ վայրերում (Գ. Զահուկյան):

Գիտական ոճի նշված տարբերակային ձևերը իրենց հերթին կարող են դրսևորվել տարբեր ժանրերի (տեսակների) միջոցով: Սրանցից կարևորներն են **մենագրությունը, գիտական հոդվածը, ատենախոսությունը, դասագիրքը, ձեռնարկը, գեկուցումը** ևն:

Գիտական ոճի ժանրերից են նաև բուհական ուսումնառության ընթացքում ուսանողների կողմից կատարվող գիտական հետազոտությունները՝ **ռեֆերատ, կուրսային, ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզ** ևն:

Գիտական յուրաքանչյուր շարադրանք պետք է ունենա որոշակի՝ այդ կարգի աշխատանքների համար ընդունված կառուցվածք և ձևավորված լինի գիտական աշխատանքների համար մշակված հատուկ կանոններով ու սկզբունքներով: Գիտահետազոտական աշխատանքի առաջին փորձերին ձեռնամուխ լինելուց առաջ համառոտակի ծանոթանանք դրա **կառուցման** ու **ձևավորման** ընդունված պահանջներին ու սկզբունքներին⁸⁵:

4.1.5. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Գիտահետազոտական աշխատանքը, անկախ դրա ծավալից, պետք է բաղկացած լինի կառուցվածքային երեք մասերից՝ **ներածություն, հիմնական բովանդակություն, եզրակացություն(ներ)**: Համեմատաբար մեծ ծավալ ունեցող աշխատանքներում (դիպլոմային աշխատանք, մագիստրոսական թեզ ևն) այդ բաժանումները ունենում են առանձին վերնագրեր, կարող են ունենալ **ենթաբաժիններ**, նաև կարճ **Առաջաբան** (կամ «Երկու խոսք»):

Ներածության մեջ պետք է ներկայացվեն հետազոտության մեջ քննարկվող հարցերն ընդհանուր գծերով, դրանց քննության կարևորության, նպատակի, ակնկալվող արդյունքների, ուսումնասիրության մեթոդի մասին տեղեկությունները: Այս բաժնում սովորաբար գետեղվում է նաև այսպես կոչված «հարցի պատմությունը»՝ թեմայի վերաբերյալ եղած գրականությունը, դրա մեջ արտահայտված տարբեր կարծիքները, հարցի ուսումնասիրված լինելու աստիճանը ևն:

Բովանդակության մեջ արդեն պետք է ներկայացվեն հետազոտողի կատարած աշխատանքի (լաբորատոր փորձերի, այլ կարգի փորձարարական աշխատանքների, եթե այդպիսիք արված են) արդյունքները, դրանք հիմնավորվեն, կատարվեն յուրաքանչյուր դեպքում առանձին եզրահանգումներ, փաստարկումներ, հաստատվեն հեղինակի նախապես առաջադրած կանխադրույթները, անդրադարձ կատարվի հակադիր կամ հաստատող կարծիքներին, կատարվեն ընդհանրացումներ:

⁸⁵ Այս հատվածը հմմտ.՝ Վ. Գաբրիելյան, Գրավոր խոսք, Եր., 2004, էջ 41-53:

Եզրակացությունը փաստորեն ամփոփում է հիմնական բովանդակության շարադրանքը՝ առանձին կետերով ներկայացնելով ստացված եզրահանգումներն ու կոնկրետ արդյունքները:

Աշխատանքի վերջում դրվում է օգտագործված գրականության (անհրաժեշտ դեպքերում նաև սկզբնաղբյուրների, համառոտագրությունների) ցանկը: Որոշ կարգի աշխատանքներ ըստ անհրաժեշտության կարող են ունենալ նաև հավելվածներ:

4.1.6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԱՎՈՐՈՒՄԸ: Կուրսային, ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, ռեֆերատները, ատենախոսությունները կազմվում են հետևյալ կառուցվածքով. **Անվանաթերթ** (էջ 1), որի վրա առանձին տողերով վերևից նշվում են նախ՝ բուհի և ամբիոնի անվանումները, ապա՝ գլխատառերով՝ աշխատանքի տեսակը (ասենք՝ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ), այնուհետև առանձին տողով նշվում են հեղինակի անուն–ազգանունը (կուրսայինի կամ ռեֆերատի դեպքում՝ նաև կուրսը և խումբը), ղեկավարի անվան սկզբնատառն ու ազգանունը, գիտական աստիճանն ու կոչումը:

Բովանդակություն: Այս վերնագրի տակ անվանաթերթին հաջորդող էջում (2-րդ) հերթական համարակալումով և էջերի նշումով տրվում են աշխատանքի մասերը՝ **Ներածություն, հիմնական մասի վերնագրերը, Եզրակացություն, Օգտագործված գրականության ցանկ, Հավելված(ներ)** (եթե կան):

Ներածությունը սկսվում է աշխատանքի 3-րդ էջից: **Հիմնական** մասը հաջորդում է **ներածությանը**՝ նոր էջից: Եթե այս մասը բաժանված է առանձին գլուխների, դրանք նույնպես սկսվում են նոր էջից: Հիմնական մասին հաջորդում է **Եզրակացությունը** (նոր էջից), իսկ վերջում՝ **Օգտագործված գրականության ցանկը**, որտեղ առանձին տողերով նշվում են (համարակալումով) այն աշխատանքները, որոնցից օգտվել է հետազոտության հեղինակը և հիշատակել իր աշխատանքում: Այս շարքում պետք է նշել հեղինակը, ստեղծագործության անվանումը, հրատարակության տեղն ու տարեթիվը:

Հղումների և ծանոթագրությունների կարգը: Գիտական աշխատանքի հեղինակը հաճախ քաղվածքներ ու մեջբերումներ է անում այլոց ուսումնասիրություններից: Դրանք բերվում են կամ բառացի, կամ պատմողաբար՝ վերաշարադրումով: Բառացի մեջբերվող խոսքը առնվում է չակերտների մեջ, իսկ անուղղակի մեջբերվող խոսքը տրվում է առանց չակերտների: Չակերտներով մեջբերվող խոսքն սկսվում է մեծատառով (բացի այն դեպքերից, երբ մեջբերվող խոսքը ներկայացվում է որպես հեղինակային խոսքի շարունակություն. օր.՝ «Աթոլյանը ցավով է տեսնում, որ «էլ հայի գիրք ձեռքն առնող, էլ հայի լեզուն խոսող քիչ ա գտնվում»), վերջում՝ փակվող չակերտի վրա (անուղղակի խոսքի դեպքում՝ վերջին բառի վրա) դրվում է մեջբերման թվահամարը և նույն թվահամարով էջի ներքևում՝ վերջին տողից հետո, գրվում է **հղումը**: Հղումի մեջ նշվում են մեջբերվող խոսքի հեղինակի անվան (անհրաժեշտության դեպքում՝ նաև հայրանվան) սկզբնատառը, ազգանունը (ընդգծված), աշխատության վերնագիրը, հրատարակության տեղը, տարեթիվը, համապատասխան էջը (օր.՝ 1. **Խ. Աթոլյան**, Վերք Հայաս-

տանի, Երևան, 1981, էջ 46): Նույն էջում նույն աղբյուրից այլ հղում տալու դեպքում երկրորդ անգամ հղումը չի կրկնվում, այլ նշվում է՝ **Նույն տեղում** (անուղղակի հղումի դեպքում՝ **Տե՛ս նույն տեղը**): Եթե նույն աղբյուրին հղում է տրվում այլ էջերում, ապա՝ հեղինակի ազգանունը, և գրքի վերնագրի փոխարեն՝ **նշվ. աշխ.** և էջը:

Ընդունված է նաև հղումների այլ կարգ. շարադրանքի մեջ՝ մեջբերված խոսքից անմիջապես հետո, փակագծերում նշվում են աշխատության համարը, որը գրականության ցանկում տվյալ աշխատանքի թվահամարն է, և էջը (օր.՝ 35, 124): (Այս ձևը առավել ընդունելի է ծավալուն աշխատանքների համար՝ մագիստրոսական թեզ, ատենախոսություն, մենագրություն ևն):

Այլ աշխատություններից մեջբերումները նշող հղումներից բացի՝ հեղինակը կարող է տեքստից դուրս՝ տողատակում, լրացուցիչ որևէ տեղեկություն, բացատրություն կամ մեկնաբանություն անել շարադրանքի որևէ բառի, դարձվածի, դրույթի վերաբերյալ: Սրանք **ծանոթագրություններ** են, որոնք տեքստում կարող են համարակալվել կամ նշվել աստղանիշով:

4.2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՃ

4.2.1. Ընդհանուր հարկանիշներ (191): 4.2.2. Բառապաշար (193): 4.2.3. Քերականական հարկանիշներ (195): 4.2.3.1. Ձևաբանական առանձնահատկություններ (195): 4.2.3.2. Շարահյուսական առանձնահատկություններ (196): 4.2.4. Պաշտոնական ոճի ենթատեսակները (199): 4.2.4.1. Իրավաբանական ենթաոճ (199): 4.2.4.2. Դիվանագիտական ենթաոճ (201):

4.2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ: Շրջանառության մեջ են քննարկվող հասկացության տարբեր անվանումներ՝ **պաշտոնական լեզու, վարչագործարարական** կամ **վարչագրասենյակային ոճ, պաշտոնական-վարչական ոճ** ևն: Այս անվանումները սկզբունքային տարբերություններ չունեն հասկացության ընդգրկման, գործառման ոլորտների և նպատակների առումներով: Նախընտրելի է, սակայն, **պաշտոնական** անվանումը, որը «ընդհանրական ընդգրկում ունի այդ ոճի բոլոր դրսևորումների, տարատեսակների համար և հակիրճ է»⁸⁶:

Պաշտոնական ոճի գործառման ոլորտը պետաիրավական հարաբերություններն են, պաշտոնական գործունեությունը, գործարարությունը: Այդ ոճով են շարադրվում նշված ոլորտում գործառվող գրագրության բոլոր ձևերը՝ սկսած պետական օրենսդրական ակտերից մինչև գործնական նամակներ, հաշվապահական տեղեկագրեր և այլ տիպի փաստաթղթեր:

Պաշտոնական գրագրությունների լեզվական նյութը գրական լեզուն է՝ իր բառապաշարով ու քերականությամբ: Խստորեն **կանոնակարգված է**: Դա էապես սահմանափակում է լեզվական միավորի գործածության շրջանակները: Որոշակի լեզվատարբեր օբյեկտիվորեն դուրս են մնում գործածությունից

⁸⁶ Ս. Աբրահամյան, Պաշտոնական ոճը և նրա առանձնահատկությունները, «Հայոց լեզու և գրականություն», Եր., 1983, պրակ 1-2, էջ 71:

(օր.՝ ծայնարկությունները, ոճական երանգ ունեցող բառերը) կամ գործածվում են շատ հազվադեպ: Եվ հակառակը, տեղի է ունենում որոշակի լեզվատարրերի կենտրոնացում ու վերարտադրություն. հաճախ են գործածվում, այսպես կոչված, կամք, հորդոր, հրաման արտահայտող բառերը (**որոշել, հրամայել, տեղյակ պահել, չեղյալ հայտարարել** ևն) կամ կոչում, աստիճան, պաշտոն, մասնագիտություն, ժամանակ նշանակող գոյականները (**նախագահ, փոխտնօրեն, բաժնի վարիչ, եռամսյակ**), գոյականի սեռական հոլովածները (**հարցման, ստուգման, տեղազննության**) ևն: Ստեղծվում են պատրաստի լեզվական կառույցներ, կրկնվող բառածներ, որոնք կողմերը պայմանականորեն ընդունում են որպես նյութի շարադրման մշակված բանածներ՝ **կաղապարներ**: Ինչպես՝ «Ուժը կորցրած ճանաչել...», «Հայրը բավարարել մասնակիորեն», «Արգելանքի տակ պահել...», «Քրեական պատասխանատվության ենթարկել...», «Ձեռնարկված օպերատիվ գործողությունների շնորհիվ...» ևն:

Լեզվական այսօրինակ կաղապարների կրկնությունը գրագրության լեզվին հաղորդում է որոշ **միօրինակություն**: Հեղինակն այս դեպքում ստիպված է լինում գործել ի վնաս ոճի գեղեցկության: Խոսքը դառնում է կաղապարված, որոշ չափով արհեստական: Նման կանոնակարգումը խոսում է ոճի մշակվածության մասին և ունի առավելություններ. լեզվակաղապարները ժամանակի ընթացքում «հարմարվում են» նյութին՝ արագ և հստակ հաղորդելու համար տեղեկություններ, հնարավորություն են տալիս ժամանակ չվատնելու ձևակերպումների, բնութագրությունների վրա: Պաշտոնական խոսքում իր տեղում գործածված կաղապարը նույնքան անհրաժեշտ է, որքան արտահայտչամիջոցը՝ գեղարվեստական խոսքում⁸⁷:

Պաշտոնական խոսքը ունի առավելապես հաղորդակցական–կազմակերպական նպատակ: Դրանով պայմանավորված՝ շարադրանքի անհրաժեշտ որակներ են սահմանվում **տեղեկույթի ամբողջական և ավարտուն բնույթը, հակիրճությունը, սեղմությունը**: Փաստաթուղթը կազմողի հիմնական խնդիրն է առավելագույնս **սեղմ և հստակ** արտահայտել իրավական ուժ ունեցող տեղեկությունները: Պետք է տնտեսել ժամանակը և խուսափել լեզվական միջոցների ավելորդ կիրառումից:

Պաշտոնական խոսքն ուղղվում է հանրությանը կամ որոշակի մասնագիտական լսարանի (անձի կամ կազմակերպության): Հետևաբար շարադրվում է հնարավորինս **մատչելի, հասկանալի լեզվով, դիպուկ և պարզ**: Պարզ, բայց ոչ պարզունակ: Քանի որ հակառակ դեպքում շարադրանքը կզրկվի պաշտոնական խոսքին հատուկ մյուս կարևոր հատկանիշներից՝ **պաշտոնականություն, հանդիսավորություն, որոշ վերամբարձություն** ևն, որոնք կոչված են լսարանի վրա որոշակի ազդեցություն ապահովելու:

Պաշտոնական խոսքը, լինի դա վճիռ, կազմակերպական գրագրության ձև, ծավալուն հաշվետվություն թե սեղմ հրահանգ, հաշվապահական վավերաթուղթ թե հավատարմագիր, **պետք է ձևակերպված լինի ճշգրիտ**: Դա վերաբերում է տեքստի թե՛ բովանդակային մասին, թե՛ լեզվին: «Արտահայտման մեկ միավորից

⁸⁷ Տե՛ս Լ. Բախմանին, Стилистика деловой речи и редеактивирование служебных документов, Москва, 1998, էջ 23–24:

մինչև ամենաստորին տարրը՝ տառը և կետադրության նշանը հասնող լեզվաբաղադրիչների իմաստային և կիրառական ճշտության պահանջը պաշտոնական ոճի որակական կարևորագույն հատկանիշն է»⁸⁸։ Ասելիքը պետք է լինի հստակ, որ այլ կարծիքների կամ տարընթերցումների տեղիք չտա։ Սխալ դրված կետադրական նշանը կամ մեկ բառի իմաստային ոչ ճիշտ գործածությունը ամբողջությամբ կարող է խաթարել շարադրանքի իրական բովանդակությունը։ Այդ իմաստով պաշտոնական ոճը մոտ է գիտականին։ Նրա դրսևորման որոշ ձևեր (օրենքներ, սահմանադրություն ևն) գիտական բնույթ ունեն։

Նշված հատկանիշները այս ոճով գրված նյութերին հաղորդում են կառուցվածքային բարդություն, որոշ ձգձգվածություն, միօրինակություն։ Բայց դա դարձյալ պետք է դիտել որպես այս ոճի առանձնահատկություն։

Պաշտոնական խոսքում հուզական-սուբյեկտիվ (կամային) վերաբերմունքը գրեթե բացառվում է։ Անհատի տրամադրությունը, հույզը այստեղ դեր չունեն։ Նյութի շարադրանքը պետք է լինի խիստ առարկայական (օբյեկտիվ), պետք է ունենա տեղեկատվական և զուտ գործնական բնույթ։ «Շարադրանքի չեզոք տոնը պաշտոնական վարվելակերպի նորմ է» (Լ. Ռախմանին)։ Փաստաթղթերի առանձին տեսակներում կարող է արտահայտվել խնդրանք կամ շնորհակալություն, պահանջ, հորդոր կամ հրաման։

Պաշտոնական լեզվի **ինչյունական համակարգի** հիմնական յուրահատկությունն այն է, որ այստեղ գործում են գրական լեզվի արտասանական-ուղղախոսական կանոնը և հայերենի արդի ուղղագրությունը։

Ծան.։ «Դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերի ու հաղորդագրությունների մեջ, Հայոց եկեղեցու պաշտոնական լեզվում, հեղինակային վերաբերմունքի՝ քաղաքավարական և մեծարման ոճերում թույլատրվում է մեծատառերի ազատ գործածություն՝ ըստ ընդունված կարգի» (տես «Հայոց լեզվի կանոններ» (գերատեսչական նորմատիվ ակտեր), Եր., 2003, էջ 11)։

4.2.2. ԲԱՌԱՊԱՇԱՐ։ Բառի ճիշտ ընտրությունը և տեղին գործածությունը խոսքի կառուցման կարևորագույն պայմաններ են լեզվի գործառական բոլոր տարբերակներում։ Պաշտոնական խոսքում բառի այդ դերը երիցս կարևորվում է, քանի որ նշված հատկանիշները անհրաժեշտ գործոններ են՝ հստակ, ճշգրիտ, միանշանակ հաղորդակցում ապահովելու համար։ Բառն այստեղ գործածվում է (կամ իբրև պարտադիր նորմ պետք է գործածվի) **ուղղակի նշանակությամբ**։ Բազմիմաստ բառերը, որոնք ցանկացած լեզվի բառապաշարում որոշակի թիվ են կազմում, խոսքաշարում (լինի դա նամակ, հրահանգ, հայտագիր թե հաշվետվություն) պետք է կիրառվեն և ընկալվեն իրենց մեկ՝ հիմնականում առաջնային նշանակությամբ։ Դա ապահովում է փաստաթղթի գործնական, ինչպես նաև իրավական արժեքը։

⁸⁸ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Եր., 1991, էջ 226։

Պաշտոնական ոճում ճշգրտություն, միօրինակություն են ապահովում նաև **տերմինները**: Դրանց լայն գործածությունը պաշտոնական ոճի հատկանիշն է: Մտքի տպավորիչ ձևակերպման համար փաստաթղթերի առանձին տեսակներում գործածվում են **լեզվական փոխաբերություններ**: Դրանք հանուրին հասկանալի և ըստ էության իրենց փոխաբերականությունը կորցրած կայուն կապակցություններ են և գործածվում են առավելապես անվանողական՝ զուտ տերմինային նշանակությամբ: Օր.[՝] **ծանրացնող հանգամանք, արտաքին հարաբերություններ, դրամավարկային քաղաքականության գործիքներ, ներքին ֆինանսական շուկա, բանկային օր, ուժը կորցրած ճանաչել, ֆինանսական հոսք, վարկերի ծանր բեռ** ևն:

Բառիմաստի գործառական դրսևորումներից **փոխանունությունը** համեմատաբար հաճախ է գործածվում քաղաքացիական գործառությունների տեքստերում՝ պայմանագիր, լիազորագիր, համաձայնագիր, պարտավորագիր, նվիրատվություն: Օր.[՝] ««Ա բանկ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ «Բանկ»)՝ մի կողմից, գործելով համաձայն բանկի կանոնադրության, և «Բ» բանկի երևանի մասնաճյուղը (այսուհետև՝ «Ավանդատու»)՝ մյուս կողմից, գործելով համաձայն իր կանոնադրության, կնքեցին սույն պայմանագիրը...»: Պաշտոնական ոճի մյուս դրսևորումներում փոխանունության այս տիպը քիչ հանդիպող երևույթ է: Սակայն խոսքի համառոտության տեսակետից այն ունի կիրառական խիստ կարևոր նշանակություն, ինչպես՝ «Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ակնհայտորեն խախտվել են **հայցվորի** իրավունքները», «**Պատասխանողի** պատճառաբանությունն այն մասին, որ...», «**Կողմերի**» համաձայնության գալու դեպքում...»:

Պաշտոնական գրագրության բառապաշարը բնութագրվում է **բարդ բառերի** հաճախակի գործածությամբ: **Հապավական բարդությունները** հնարավորություն են տալիս տնտեսելու ինչպես ժամանակը, այնպես էլ տեղը, միջոց են խուսափելու կրկնություններից: Խոսքի մատչելիության պահանջից ելնելով՝ առաջին գործածության դեպքում պետք է «բացել» հապավումը:

Գրագրության ձևերի մեծ մասում չի բացառվում, իսկ առանձին փաստաթղթերում, պայմանավորված շարադրանքի նյութով, նպատակով, հանձնարարելի է **հնաբանությունների** գործածությունը՝ խոսքին հանդիսավորություն և պաշտոնականություն հաղորդելու համար, ինչպես՝ «Դեսպանությունը **վերստին** իր **հարգանաց հավաստիքն** է հայտնում...», «**Ի լրումն** հրամանագրի հինգերորդ կետի...», «...այսուհետև՝ «Գնորդ»՝ **ի դեմս** Սահակ Հակոբյանի...», «Թղթակցությունները կհամարվեն **վավեր** (= ստույգ, վավերական)»:

Պաշտոնական գրագրության մեջ գործաբանական որոշ սահմանափակություն ունեն **նորաբանությունները**: Դրանք սկզբնապես պետք է տրվեն մինչ այդ գործածված և հանրահայտ օտար բառին զուգահեռ՝ վերջինս նշելով փակագծերում:

Պաշտոնական ոճին նկատելի թարմություն են հաղորդում նաև **իմաստային նորաբանությունները**՝ դատվածության **հանում**, ֆինանսական **հոսք**, բյուջեի **ճեղքվածք** ևն: Տարասեռ (ոչ մասնագիտական) լսարանին ուղղված տեքստերում նպատակահարմար է փակագծերի մեջ տալ **փոխառյալ նորաբանությունների** բացատրությունները, ինչպես՝ «<< քր. օր.-ի հոդված 190-ի **դիսպոզիցիայի** (=

նախապատրաստական մասի) համաձայն՝ հանցագործության առարկա կարող են լինել...», «...կողմերի մրցակցությունը պարզապես դառնում է **սուբսիդիար** (= երկրորդական)», «Պետք է հաշվի առնել տեղեկատվության **մոդիֆիկացիան** (= փոփոխությունը)»...»:

Պաշտոնական խոսքում բառակրկնությունը հաճախ արդարացված է խոսքի ճշգրտության և միանշանակության առումներով. «Դիվանագիտական **անձ-նակազմի անդամներ** են *ներկայացուցչության անձնակազմի այն անդամները*, որոնք ունեն դիվանագիտական աստիճան»: Հայտնի է, որ դերանունների տեղին կիրառությունը խոսքը փրկում է միօրինակությունից: Ընդգծված կապակցության փոխարեն **նրանք** դերանվան գործածությունը թեև որոշ չափով կարող էր կատարել այդ դերը, սակայն դատողությունը այս դեպքում կդառնար անստույգ կամ պարզապես սխալ:

Այսպիսով՝ պաշտոնական գրագրության բառապաշարի միջուկը գրական-գրքային բառերն են, որոնք իրենց իմաստային-գործառական հատկանիշներով և բառակազմորեն համապատասխանում են գրական լեզվի նորմին, ավանդական են պաշտոնական խոսքի համար, չեն խախտում դրա ոճական միակերպությունը:

4.2.3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ: Պաշտոնական ոճը քերականական ընդգծված հատկանիշներով աչքի չի ընկնում. հիմնական առանձնահատկությունը թերևս այն է, որ պայմանավորված գրագրության տեսակով՝ նախապատվություն է տրվում քերականական այս կամ այն զուգածնությանը, համանշային այս կամ այն կառույցին:

4.2.3.1. Ձևաբանական առանձնահատկություններ: Պաշտոնական գրագրության ձևաբանական նյութը գրական լեզվի կանոնական ձևերն են՝ հոլովման, խոնարհման, հոգնակիակազմության, հոդառության կանոնարկված տարբերակները:

Չուգահեռ ձևերի ընտրություն-գործածությունից բացի՝ պաշտոնական փաստաթղթերի լեզվում առանձնանում են ձևաբանական **իրողություններ, որոնք ունեն կազմության և գործածության դժվարություններ**: Նույնատիպ բառերի ու բառաձևերի գործածությունը պաշտոնական ոճի բնորոշ հատկանիշներից է: Ըստ վիճակագրական հաշվարկների, որ կատարել է Ս. Աբրահամյանը 1983 թ., պաշտոնական խոսքում բացարձակ գերակշռություն ունեն գոյականական բառակապակցությունները. իբրև ընտրանք վերցված երկու օրենքների բուն շարադրանքի 853 բառագործածություններից գոյական են 509-ը (59,7%), ածական՝ 116-ը, բայ՝ 52 (6,1%) ևն. եղանակավորող բառեր և ծայնարկություններ առհասարակ գործածված չեն: Առավել ուշագրավ է այն փաստը, որ գոյականների նշված 509 գործածություններից 344-ը, այսինքն՝ 67,6%-ը, դրված են սեռական հոլովով⁸⁹: Ահա, օրինակ, սեփականության իրավունքի վկայականի անվանումը՝ «**ՎԱՍՅԱԿԱՆ** անշարժ **գույքի սեփականության իրավունքի (օգտագործման) գրանցման**». նախադասության յոթ անդամներից հինգը սեռական հոլովով են:

⁸⁹ Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 81:

Սա պաշտոնական ոճի հատկանիշ է, բայց ոչ թերություն: Մինչդեռ որոշ բառաձևերի հաճախակի գործածությունը, առանձին դեպքերում՝ կուտակումը, ստեղծում են անբարեհունչ խոսք, խիստ արհեստական կառույցներ, որոնք շարադրանքը դարձնում են խրթին ու անհրապույր:

Պաշտոնական գրություններում ոճական նշանակության յուրահատկություն ունի անձնական դերանունների գործածությունը (կամ բացթողումը): Այսպես՝ խոսքի դարձվածքային տիպերը (**խնդրում ենք, պահանջում եմ, առաջարկում եմ** ստուգել) արտահայտում են կտրական պահանջներ: Անձնական դերանունների ներմուծումը այդպիսի կառույցներ մեղմում է պահանջը՝ «խնդրում եմ Ձեզ ճշտել...», «Առաջարկում եմ Ձեզ քննարկման դնել...»:

Հեղինակային **ես, մենք** դերանունների գործածությունը նույնպես մեղմում է հնչերանգի կտրական բնույթը՝ «Պահանջում ենք...»//«**Մենք** պահանջում ենք...», «Այն կարծիքին ենք...»// «**Մենք** այն կարծիքին ենք...»: Գրագրության առանձին ձևերում, որոնցում գործածվում են հաճախասական արտահայտություններ (նամակ, հայտագիր ևն), նպատակահարմար է ոչ թե ստացական հոդի, այլ համապատասխան ստացական դերանվան գործածությունը, այսպես՝ «խնդրում եմ ընդունել **իմ** խորին **հարգանքի** հավաստիքը»«խնդրում եմ ընդունել խորին **հարգանքիս** հավաստիքը»:

Փաստաթղթերի առանձին տեսակներ ունեն իրենց **հատուկ ժամանակաձևերը**: Հրահանգներում գործածական է անկատար ներկան, քանի որ ցույց է տալիս ընթացքի մեջ եղող և հաստատապես կատարվող գործողություն, ունի կտրական բնույթ, սահմանում է նորմեր, ինչպես՝ «Վարման կարգը սահմանվում է հատուկ հրահանգով»: Հաշվետվություններում գերիշխում են վաղակատարով կազմությունները, որոնք ցույց են տալիս անցյալ անորոշ մի ժամանակում կամ ժամանակակետից առաջ ավարտված գործողություն. դա միջնորդավորված խոսք է՝ ի տարբերություն անցյալ կատարյալի, որը ականատեսի խոսք է, բայց ունի ստույգ կատարված գործողության իմաստ («Սակագների նվազում է գրանցվել միայն Հրազդանում»): Որոշումներում և հրամաններում իշխող կառույցներ են անորոշ դերբայով կազմությունները, քանի որ արտահայտում են մեղմ հրաման, առավել պաշտոնական են հնչում, քան բուն հրամայականով ձևերը, ինչպես՝ ... «Խորհուրդը որոշում է. 1. Հաստատել...: 2. Հանձնարարել...: 3. Պատասխանատվությունը դնել...»:

4.2.3.2. Շարահյուսական առանձնահատկություններ: Պաշտոնական ոճին հատուկ է բազմաբաղադրիչ կապակցությունների գործածությունը: Բաղադրիչների թիվը երբեմն անցնում է մեկ տասնյակից: Դրանք հիմնականում գոյական գերադաս անդամով կապակցություններ են, ինչպես, օրինակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից բերված հետևյալ հատվածում.

Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կիրառելու, չհեռանալու մասին ստորագրություն վերցնելու կամ վարչական տույժի ենթարկելու հետևանքով քաղաքացուն պատճառված վնասները հատուցելու հետ կապված աշխատանքային և այլ իրավունք-

ները վերականգնելու, գույքը կամ դրա արժեքը վերադարձնելու վերաբերյալ հայցը կարող է հարուցվել հայցվորի բնակության վայրի դատարան:

Կապային կառույցների զուգաձևերից գրքային բնույթ ունեցողները, հասկանալի է, բնորոշ են պաշտոնական լեզվին՝ **դրա հետ մեկտեղ**←**դրանով հանդերձ, իբրև պատասխան**←**ի պատասխան, հովանավորության տակ**←**հովանավորության ներքո, պաշտոնի բերումով**←**ի պաշտոնե, ըստ ինձ** ←**ըստ իս** ևն: Թեև պետք է նկատի ունենալ, որ առաջին եզրերի գործածությունը խոսքը ավելի կենդանի է դարձնում և այս իմաստով գրագրությունների որոշ տեսակներում (նամակ, հրահանգ, հաշվետվություն) հանձնարարելի է:

Կապային կազմությունները արտահայտում են ավելի որոշակի նշանակություն. խոսքը դառնում է առավել ճշգրիտ, ինչպես՝ **պայմանագիրը ստորագրելիս = պայմանագիրը ստորագրելու ժամանակ // ստորագրելու պահին // ստորագրելու ընթացքում:**

Պաշտոնական խոսքում գործածական են **զոդվածով** (շաղկապով կամ հարաբերական բառով) կապակցությունները՝ «...այնքան, որքան...», «**եթե...**, **ապա...**», «**քանի որ...**, **ուստի...**», «...այն..., ինչ...» ևն:

Այս ոճում գերակշռում են **բարդ ստորադասական նախադասությունները**՝ հատկապես պատճառի, հետևանքի, հիմունքի և նպատակի պարագա երկրորդականներով: Երբ անհրաժեշտություն կա խոսքը դարձնելու բազմաբովանդակ և տեղեկույթով հագեցած, բարդ կառույցների նշանակությունն ուղղակի անփոխարինելի է:

Գործնական գրագրություններում հաճախ հանդիպող շարահյուսական կառույցներ են թվարկման հնչերանգով իրար հետ կապված և պարբերությամբ արտահայտվող **անդեմ նախադասությունները**, որոնք գրագրության առանձին ձևերում (օր.՝ որոշումներում, հրամանագրերում) երբեմն հասնում են մի քանի տասնյակի: Դրանցից յուրաքանչյուրն իր հերթին կարող է պարունակել առանձին նախադասություններ: Բայական անդեմ նախադասությունները խոսքը դարձնում են միօրինակ, բայց ստեղծում են ուրիշ: Եվ հրամանի, հրահանգի, որոշման ազդեցությունը հաճախ շեշտվում է հենց այդ միօրինակության ուրիշով: **Լրիվ նախադասությունների** գործածությունը պաշտոնական գրագրության մեջ պարտադիր պայման է: Ճիշտ է, թերի նախադասությունները հնարավորություն են տալիս խուսափելու երկարաբանություններից (մանավանդ երկխոսություններում), սակայն պաշտոնական փաստաթղթերում կրկնվող նախադասության մեջ այս կամ այն բառի բացակայությունը կարող է այլընթերցումների առիթ տալ:

Մտքի դատողական գործունեությունը դրսևորվում է **պատմողական նախադասություններով**: Դրանցով են արտահայտվում մտահանգումները, եզրակացությունները: Դա է պատճառը, որ պաշտոնական գրագրության մեջ ընդունված է նախադասությունների այդ տիպը: Պաշտոնական տեքստը չի հանդուրժում **բացականչական նախադասություններ**: **Հարցական կառույցները**, հատկապես անուղղակի հարցում արտահայտողները, փոքր-ինչ գործուն են նամակի մեջ: **Հրամայական նախադասության** հնչերանգից է կախված այն հանգամանքը, թե հրամանը կտրական պահանջ է արտահայտում, ցանկություն, թե

խնդրանք: Ցավոք, գրավոր խոսքը չունի բանավորին հատուկ հնչերանգային այդ բազմազանությունը և անհրաժեշտության դեպքում փորձում է այդ «բացը» լրացնել լեզվական այլ միջոցներով: Գործնական գրագրության մեջ սովորաբար հրամայականի ձևերը (դրական և արգելական) փոխարինվում են մեղմ հրաման արտահայտող այլ քերականական ձևերով՝ անորոշ դերբայով կամ անորոշ դերբայ ունեցող կազմություններով՝ **տեղյակ պահել, ընթացք տալ, ստուգել, կազմակերպել, բացել և վարել հաշիվներ, ուժը կորցրած ճանաչել** ևն:

Պաշտոնական ոճի դրսևորման կարևոր պայմաններից մեկը **շարահյուսական համանշային կառույցների** ճիշտ ընտրությունն է: Գործնական գրագրության մեջ **ուղղակի խոսքը** գործածվում է բացառիկ դեպքերում, երբ հատկապես անհրաժեշտություն է առաջանում ասվածը նույնությամբ ներկայացնելու: **Կրավորական կառույցները** ընդգծում են խոսքի պաշտոնականությունը և խիստ տարածված են փաստաթղթերի լեզվում, ինչպես՝ «Մենք քննարկել ենք առաջարկը»/«Առաջարկը քննարկվել է մեր կողմից»: **Դերբայական դարձված(ներ)ով** նախադասությունները խոսքին տալիս են որոշ միօրինակություն, բայց հարմար միջոց են զուգահեռ կատարվող գործողություններ մատնանշելու համար: Պաշտոնական ոճում դերբայական դարձվածների կուտակումը անխուսափելի է: Հնարավորության դեպքում պետք է նվազեցնել դրանց գործածությունը: **Դրական և ժխտական կառույցներից** մեկի կամ մյուսի ընտրությունը պաշտոնական խոսքում թելադրվում է խոսքի ճշգրտությամբ:

Նախադասությունների՝ վերը նշված ոճական հատկանիշների իմացությունը փաստաթղթերի հեղինակներին կօգնի ըստ նպատակահարմարության օգտվելու դրանցից:

Կան **շարահյուսական հատուկ կառույցներ**, որոնք հաճախակի գործածություն ունեն պաշտոնական լեզվում: Այդպիսիք են, օրինակ, անորոշ դերբայի գործիական հոլովով դերբայական կապակցությունները (քերականական այդ ձևով են սկսվում, օրինակ, «Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի» նախապատրաստական մասի բոլոր հինգ պարբերությունները. այսպես՝ «Սույն կոնվենցիայի կողմերը հանդիսացող պետությունները. – **նշելով**, որ..., – **ուշադրության առնելով**, որ..., – **համոզված լինելով**, որ..., – **գիտակցելով**, որ..., **հաստատելով**, որ..., համաձայնեցին ներքոհիշյալի մասին»), կամ միակազմ գլխավոր նախադասությամբ բարդ ստորադասական նախադասությունները («Հարկ է նշել, որ...», «Պետք է ավելացնել, որ...», «Անհրաժեշտ է, որ...»), կամ էլ սեռական-տրական հոլովածևով մի քանի բաղադրիչներից կազմված անվանական բառակապակցությունները, կրավորական կառույցները ևն:

Պաշտոնական և գործնական գրագրության մեջ **պարբերությունը** հաճախ համընկնում է համարագրումներին, որոնք տրվում են կամ արաբական թվանշաններով, կամ խառը եղանակով՝ արաբական, հռոմեական, հայերեն տառերով, գծիկով ևն: Դրանք նույնպես միջոց են իրենց կարևորությամբ առանձնացող հարցերի վրա ընթերցողի հատուկ ուշադրությունը հրավիրելու:

Պաշտոնական խոսքը առարկայական (օբյեկտիվ) խոսք է: Սա նշանակում է նաև, որ նախադասությունը բաղադրող անդամները խոսքում պահպանում են

ընդունված դասավորությունը՝ **շարադասությունը**: Պաշտոնական կամ գործնական գրագրության մեջ շրջումը գործառնող ոճական հնարանք է՝ իմաստային որոշակիացման համար. շարադասության դերը մեծանում է, քանի որ այստեղ՝ գրավոր խոսքում, պակասում է այնպիսի կարևոր լեզվական միջոց, ինչպիսին հնչերանգն է: Բացի այդ՝ գրողը զրկված է վերաբերմունքային բառեր ընտրելու հնարավորությունից: Մտածված շրջումը թույլ է տալիս կատարողի ուշադրությունը հրավիրել այս կամ այն մտքի վրա և դրանով ընդգծել փաստաթղթի բովանդակության կարևոր հատվածները, պահերը: Մյուս կողմից՝ չպատճառաբանված ամեն մի շրջում առաջացնում է երկիմաստություն, դժվարացնում ընկալումը, առիթ է տալիս տարընթերցումների:

4.2.4. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՃԻ ԵՆԹԱՏԵՍԱԿՆԵՐԸ (ԵՆԹԱՈՃԵՐ): Պաշտոնական ոճը, ինչպես տեսանք, ունի շրջանառման բազմազան ոլորտներ՝ դիվանագիտական հարաբերություններ, տնտեսավարում, գործարարություն, պետաիրավական համակարգ, օրենսդրական գործունեություն, բանկային գործ են: Ոլորտների այս տարատեսակությունը ենթադրում է գրագրության տարաբնույթ ձևերի գործածություն և խոսքի բազմազանություն: Նշված գործոնները պաշտոնական ոճի համակարգում ձևավորում են ենթահամակարգեր՝ խոսքի ենթատեսակներ կամ ենթաոճեր՝ **իրավաբանական, դիվանագիտական, գրասենյակային, հաշվապահական** են:

4.2.4.1. Իրավաբանական ենթաոճ: Կիրարկման ոլորտը հիմնականում օրենսդրական փաստաթղթերն են: Ներառում է պետական, քաղաքացիական, քրեական իրավունքի, աշխատանքային գործունեության, ամուսնության և ընտանիքի մասին օրենքների և պետաիրավական այլ փաստաթղթերի բառապաշարը, քերականական համակարգը, արտահայտչական միջոցները: Ընդգրկման բնագավառները խիստ բազմազան են՝ հասարակական հարաբերություններից մինչև ընտանիք, հողային ու գույքային իրավունք, տնտեսական ու միջազգային հարաբերություններ են: Սա պայմանավորել է այս ենթաոճի ինչպես ընդհանուր հատկանիշների բազմազանությունը, այնպես էլ տերմինային համակարգի տարասեռությունը:

Այստեղ համատեղվում են մի քանի գիտաճյուղերի **տերմիններ**: Ստեղծվում են որոշակի տերմինային ենթախմբեր կամ ենթահամակարգեր, որոնք աչքի են ընկնում իմաստային–գործառական ընդգծված սահմանափակությամբ: Դա դրսևորվում է տերմինների և խոսքային կաղապարների տեղին գործածությամբ: Այս ենթաոճում տերմինային նշանակությամբ են գործածվում նաև բազմաթիվ համագործածական բառեր, ինչպես՝ **անգործություն, կողմ, բռնություն, վնաս, գործ, չարաշահել, անփութություն, բողոքել, խարդախություն, նախադրյալ, պատիժ** են: Իրավաբանական տերմինաբանությունը աննախադեպ աճ ունեցավ վերջին տարիներին՝ պայմանավորված հասարակական նոր հարաբերությունների ձևավորմամբ: Բազմաթիվ նոր բառեր փոխառվեցին օտար լեզուներից, մասնավորապես անգլերենից՝ **կլեպտոմանիա, արստինենցիա, ռեմիսիա, օբլիգատիվ, էքսցես** են: Հայերենի բառակազմական միջոցներով ստեղծվեցին նորերը՝ **անիրավունակություն, ընդդատություն, հակաիրավականություն,**

համապարտադիր, հանրավտանգ ևն: Գործածական են օտար բառակազմական հիմքով և ածանցումով բաղադրված տերմինները՝ **լատենտ + ային, դիսպոզիտիվ + ություն, կոլեգիալ + ություն** ևն: Դրանք զետեղված են վերջին տարիներին հրատարակված իրավաբանական բառարաններում⁹⁰:

Իրավաբանական ենթաոճին, հատկապես նրա դրսևորման առանձին ձևերին (որոշում, դատավճիռ, մեղադրական եզրակացություն), առավել հատուկ են **խստությունը, պարտադրողական հնչերանգը**: Այս հատկանիշներն ավելի են ընդգծվում տիպային փաստաթղթերը ձևավորելու համար սահմանվող հատուկ պահանջների կիրառությամբ: Իրավաբանական ենթաոճով շարադրված խոսքի բնորոշ օրինակ է **դատավճիռը**:

Իրավաբանական ենթաոճի մասին խոսելիս հատկապես պետք է առանձնացնել նրա դրսևորման յուրահատուկ ձևերից մեկը՝ **դատական խոսքը**, քանի որ վերջինս երբեմն չի բնութագրվում այն ընդհանուր հատկանիշներով, որոնք բնորոշ են իրավաբանական ենթաոճին կամ պաշտոնական ոճին առհասարակ: Դատական խոսքը միօրինակ չէ, կառուցվածքային և ոճական առումներով բազմաշերտ է. ներառում է դատական գործընթացի բոլոր մասնակիցների խոսքը՝ դատախազի կամ պետական մեղադրողի խոսք, դատավորի՝ դատական վճիռներ կայացնող անձի խոսք, փաստաբանի՝ դատարանում մեղադրյալի շահերը կամ որևէ հայց պաշտպանողի խոսք, ինչպես նաև մեղադրյալի, վկաների, փորձագետի և այլոց խոսքերը: Դրանք լեզվաոճական հատկանիշներով իրարից շատ տարբեր են: Դատավորի խոսքը սեղմ է, հակիրճ, ազդու, ճշգրիտ, ձևակերպումները միանշանակ են: Այն կարելի է համարել պաշտոնական ոճի տիպար օրինակ: Պետական մեղադրողի և փաստաբանի խոսքերը կառուցվածքային և ոճական հատկանիշներով նման են միմյանց: «Ընդհանուր առմամբ դատական ճառի **կառուցվածքի** որևէ մշտական, կայուն ձև գոյություն չունի: Այս հարցում էական դեր ունեն ստեղծված իրավիճակը, ելույթ ունեցողի ինքնատիպ մտածելակերպն ու անհատական որակները, նրա ստեղծագործական երևակայությունը»⁹¹: Սովորաբար դատական ճառը բաղկացած է լինում **երեք մասից՝ ընդհանուր դրույթներ** (մուտք), **հիմնական մաս** և **ավարտ** (ամփոփիչ մաս): **Առաջին մասում** շատ հակիրճ, առանց ավելորդ հուզումի, սեղմ ոճով ներկայացվում է նյութը՝ ընդհանուր հատկանիշներով և հիմնական հարցադրումներով: (խոսքի առարկան կարող է ներկայացվել նաև փոքր-ինչ հանգամանորեն՝ ըստ նպատակադրման և հանգամանքների): **Հիմնական մասում** բացատրություններ են տրվում վիճելի կետերի մասին, իրական և հավանական փաստերի միջոցով հետևողականորեն հերքվում կամ հաստատվում են արտահայտված մտքերը, կատարվում են ընդհանրացումներ: Այստեղ շատ կարևոր է պահպանել խոսքի բնականությունը և շարադրման տրամաբանական ընթացքը: Բուն՝ **ամփոփիչ մասում** տրվում են կամ հիմնական կետերի վերաբերյալ համառոտ եզրա-

⁹⁰ Տե՛ս Լ. Պետրոսյան, Արդի ուս-հայերեն իրավաբանական բառարան, Եր., 1998: Ա. Սարգսյան, Ռ. Հակոբյան, Իրավաբանական տերմինների և շրջատյուծների ուս-հայերեն բառարան, Եր., 2005: «Անգլերեն-հայերեն-անգլերեն իրավաբանական տերմինների բացատրական բառարան», Եր., 2008 ևն:

⁹¹ Տե՛ս Ս. Արևշատյան, Հռետորական արվեստի հիմունքները, Եր., 1961, էջ 136: Հ. Հովհաննիսյան, Փաստարկում և հետտրոպություն, Եր., 2015, էջ 159:

կացություններ, կամ ընդհանուր եզրակացությունը: Ավարտը կարող է լինել պարզ կամ հասարակ, հանդիսավոր կամ հուզական և կամ կարող է կառուցվել վերջին երկուսի համադրությամբ:

Դատական խոսքի դրսևորման այս ձևերը բնութագրվում են արտահայտչական զանազան միջոցների գործածությամբ. **համեմատությունը** ավելի համոզիչ ու ընկալելի է դարձնում նկարագրությունը, **կրկնությունը** խոսքին հաղորդում է կիրք, ստեղծում է շարժման տպավորություն, **բառախաղը** ուշադրություն է գրավում (իսկ ուշադիր լսելիս հեշտ ես հասկանում և հավատում ես), **ճարտասանական հարցը և դիմումը** հուզականություն են ստեղծում (ավելորդ հուզականությունը թուլացնում է խոսքի ուժը), **ընդմիջումը** (ելույթի կարևոր պահին դադար տալը) լարում և հետաքրքրություն է առաջացնում: Հաճախ կիրառվող ճարտասանական ձևեր են նաև **համաձայնությունը** (երբ խոսողը զիջում է զրուցակցին այն բանում, ինչում կարող էր հակաճառել, որպեսզի իր համար ավելի հեշտ լինի պաշտպանել առավել կարևոր մի միտք), **ուղղումը** (ելույթի սկզբնամասում միտումնավոր ընտրվում են այսպես կոչված թույլ բառեր, մտքեր, որպեսզի հետո դրանք փոխարինվեն առավել ազդեցիկներով), **կոնսենսուսի սկզբունքը** (իր ուժերին շատ վստահ հռետորը հայտնում է այն, ինչ, թվում է, պիտի թաքցնեն, նույնիսկ մեղադրում է իր պաշտպանյալին, բայց ոչ կարևոր հարցում. դրանով իր և իր ասածի նկատմամբ ստեղծում է վստահություն), **մեղմացումը** (մտքի տպավորությունը թուլացնելու համար ընտրվում են արտաքուստ մեղմ թվացող ձևակերպումներ) ևն:

Տարակարծություններ կան դատական խոսքի **արտահայտչականության** արդյունավետության վերաբերյալ: Իհարկե, միշտ չէ, որ դատարանում հնչող գեղեցիկ խոսքը կարող է ծառայել իր նպատակին, մանավանդ եթե այն չի մնում ոճին բնորոշ հատկանիշների շրջանակներում: Սակայն բոլոր այն իրավիճակներում, երբ առկա է համոզելու, խոսքի գեղեցկությամբ կարծիք ձևավորելու հնարավորություն, անշուշտ, արտահայտիչ խոսքը կարող է ոչ միայն սոսկ տպավորություն թողնել, այլև կարծիք փոխել: Հայտնի է, որ խիստ տրամաբանական և միաժամանակ արտահայտիչ հակափաստարկը նույնքան ազդեցիկ է, որքան հավաստի փաստը:

4.2.4.2. Դիվանագիտական ենթաոճ: Գործառվում է դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունների ոլորտում, դիվանագիտական գրագրությունների լեզվում: Խոսքի այս տեսակին առանձնապես բնորոշ են **պաշտոնականությունը, հանդիսավորությունը, հաճախ նաև՝ որոշ վերամբարձությունը**: Պաշտոն, կոչում, աստիճան նշանակող անվանակարգային բառեր ու արտահայտություններ կան, որոնք բնորոշ են միայն այս ոճով շարադրված գրագրությանը կամ, ինչպես ընդունված է ասել, թղթակցության ձևերին, օր.¹ **փոխդեսպան, արտակարգ և լիազոր դեսպան, գործերի հավատարմատար, առաջին դասի առաջին քարտուղարի աստիճան, դեսպանընկալ պետություն, նստավայր պետություն** ևն:

Պաշտոնական ենթաոճերից դիվանագիտականը առավել չափով **ընդհանրություններ ունի այլ լեզուների համապատասխան ոճերի հետ**: Դա պայմանավորված է նրանով, որ անհրաժեշտություն կա բոլոր լեզուներով մատչելի ու միանշանակ արտահայտելու պետությունների դիվանագիտական հարա-

բերություններին վերաբերող խոսքը (պայմանագիր, վերջնագիր, ուղերձ ևն), միջազգային կազմակերպությունների որոշումները, այլ կարգի պաշտոնական խոսքերը⁹²:

Այդ ընդհանրության դրսևորումներից է, օրինակ, դիվանագիտական փաստաթղթերում, այսպես կոչված, **միջազգային բնույթ ունեցող բառերի ու արտահայտությունների**, հատկապես այդ ոլորտին բնորոշ **քարացած լեզվամիավորների գործածությունը**: Դրանց մի մասը գրավոր խոսքում երբեմն զետեղվում է հենց բնագրային տարբերակով: Օր.՝ դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի (Վիեննա, 1961 թ.) հոդված 9-ում կարդում ենք. «...դիվանագիտական անձնակազմի որևէ անդամ հանդիսանում է **persona non grata**... Այս կամ այն անձը կարող է **non grata** կամ անընդունելի հայտարարվել մինչև նստավայր պետության տարածք ժամանելը»:

Ավելի հաճախ այդպիսի արտահայտությունները գործածվում են հայերենի հետ համատեղ, ինչպես՝ «...դա նշանակում է, որ դեսպանի կամ դեսպանորդի պաշտոնին հավակնող թեկնածուն նստավայր երկրի համար «ընդունելի անձ» (*persona grata*) է: Իսկ եթե համաձայնության մերժում է ստացվում, ...այդ դեպքում նա համարվում է «անընդունելի անձ» (*persona non grata*)»: Կամ՝ «Այդ որոշմամբ երկրի ղեկավարը ստացավ գործելու անսահմանափակ ազատություն՝ *carte blanche*...»: Օտարալեզու արտահայտությունների գործածությունը բնորոշ է նաև իրավաբանական ենթաոճին, սակայն այստեղ հայերեն բացատրությունները որպես կանոն տրվում են, ինչպես՝ «ԵՄ Խորհուրդը ձևավորվում է Եվրոպական միության խորհրդի նախագահից, Գլխավոր քարտուղարությունից, Մշտական ներկայացուցիչների կոմիտեից (**COREPER**) և բազմաթիվ աշխատանքային խմբերից»:

Դիվանագիտական պրակտիկայում ընդունված ավանդույթ է այցեքարտերի վրա (այցեքարտ ունենում են դիվանագիտական ներկայացուցչությունների բոլոր աշխատակիցները) օգտագործել տարբեր խորհրդանիշներ, որոնք նշվում են այցեքարտի ձախ անկյունում. գրվում են ֆրանսերեն նշանակությամբ, լատինատառ հապավումներով, ինչպես՝ **P. R. (pour remercier)** – շնորհակալություն հայտնելիս, **P. F. (pour feter)** – շնորհավորելիս, **P. P. (pour presentation)** – ներկայանալիս ևն⁹³:

Դիվանագիտական խոսքին բնորոշ **հանդիսավորությունը** սովորաբար ստեղծվում է գրական–գրքային բարձր ոճի բառերի և հատկապես բառային ու քերականական հնաբանությունների գործածության շնորհիվ: Թղթակցությունների առանձին ձևերում (միջազգային նամակ, հայտագիր, հուշագիր ևն) դրանք ունեն գրեթե պարտադիր գործառույթ, ինչպես, օրինակ, միջազգային կոնվենցիայից բերված հետևյալ ձևակերպումը. «Ի կատարումն որի՝ **ներքոստորագրյալները**, կառավարությունների կողմից **պատշաճ** կերպով լիազորված, ստորագրեցին **սույն** կոնվենցիան»:

⁹² Տես Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 84:

⁹³ Տես Ն. Չալոմյան, Դիվանագիտական և հյուպատոսական ծառայություն և իրավունք, Եր., 2005, էջ 94:

Պաշտոնական թղթակցություններին առանձնահատուկ հանդիսավորություն և յուրօրինակություն են հաղորդում նաև, այսպես կոչված, **հաճոյախոսության ձևակերպումները**, որոնք կապվում են վարվելակերպի կանոնակարգի (էթիկետի) հետ, ինչպես՝ «Պատիվ ունեմ հայտնելու...», «Ձերո՞ Գերազանցություն», «Մեծահարգ պարոն Դեսպան», «Նորին Գերազանցություն», «Մեծարգո գործընկեր...», «...կանխավ ընդունե՞ք մեր հարգանաց հավաստիքը»: Սրանք պարտադիր գործառույթ ունեն գրագրության առանձին ձևերում: Օր.⁹⁴ վերբալ հայտագիրը սկսվում և ավարտվում է հաճոյախոսության ձևակերպումներով: Դրանք չեն տրվում միայն հատուկ դեպքերում. եթե հայտագիրն ունի բողոքի կամ ցավակցական բովանդակություն, տեղեկացնում է դժբախտ պատահարի, երկրում սուգ հայտարարելու կամ նման այլ իրավիճակների մասին և կամ եթե տրվում է կառավարության անունից:

Հաճոյախոսական ձևակերպումները պարտադիր են նաև դիվանագիտական ծառայության մեջ հաճախ կիրառվող թղթակցության այնպիսի ձևերում, ինչպիսիք են՝ անձնական հայտագիրը, անձնական նամակը ևն: «Դիվանագիտական փաստաթղթերի կազմման պահանջներից մեկը, – գրում է Նուբար Չալմյանը, – հաճոյախոսական ձևակերպումների գործածումն է, որոնք վկայում են հարգանքի, ինչպես նաև գործընկերների միջև հավասարության սկզբունքի մասին: Եթե կողմերից մեկը հրաժարվում է հաճոյախոսության կամ քաղաքավարի վարվեցողության ձևակերպումներ օգտագործելուց, ապա մյուս կողմը նույն կերպ է վարվում: Սա դիվանագիտության մեջ ընդունված իրողություն է»⁹⁴:

Ծան.: Դիվանագիտական պրակտիկայում «օգտվելով առիթից» արտահայտությունը երբեմն տեղին չի գործածվում, հատկապես երբ խոսքը սգո արարողության կամ դիվանագիտական ոչ պատշաճ վարքագծի մասին է: Եթե փաստաթուղթը ունի, օրինակ, ցավակցական բովանդակություն, չի կարելի ընդունված կարգի համաձայն վերջում հավելել «Օգտվելով առիթից՝ վերստին մեր հարգանքի հավաստիքն ենք հայտնում...»:

Դիվանագիտական փաստաթղթերի լեզվին օտար չեն **արտահայտչականության տարրերը**: Իբրև դրա օրինակ՝ իրավացիորեն նշվում է մայրաքաղաքի, փողոցի կամ շենքի անվան **փոխանուն գործածությունը**՝ անվանելու համար համապատասխան երկիրը, պետությունը կամ արտաքին գործերի կառույցները: Օր.⁹⁴ **Quai d'Orsay** – Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարություն, **Downing Street** – Անգլիայի արտաքին գործերի նախարարություն:

Դիվանագիտական ենթաոճին արտահայտչականության առանձին երանգ են հավելում նաև **փոխաբերական իմաստով բառակապակցությունները**, որոնք ձեռք են բերել դարձվածքային նշանակություն, ինչպես՝ **սպառազինությունների մրցավազք, սառը հակամարտություն, դիվանագիտական հարաբերությունների սառեցում, անցանկալի անձ** ևն:

Պաշտոնական ոճի մյուս տարատեսակները բնորոշվում են ընդհանուր հատկանիշներով և լեզվական ընդգծված յուրահատկություններ գրեթե չեն դրսևորում. **վարչագրասենյակային խոսքին** բնորոշ են տեղեկատվականությունը, հաղորդումը, լրատվական լեզվամիջոցների և գրասենյակաբանությունների ակտիվ

⁹⁴ Նույն տեղում, էջ 93:

գործառույթը, **հաշվապահական խոսքը** ավելի միօրինակ է, աչքի է ընկնում խիստ կաղապարված լեզվակառույցների և վիճակագրական տեղեկությունների կիրառությամբ, **կենցաղային-գործնական գրագրությունների լեզուն** է դրսևորում ընդհանուր հատկանիշներից տարբերակվող յուրահատկություններ՝ պայմանավորված գրագրության ձևով, հաղորդման նպատակով, բովանդակությամբ և արտալեզվական այլ գործոններով:

4.3. ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՃ

4.3.1. *Ընդհանուր հատկանիշներ (204):* 4.3.2. *Հնչյունական առանձնահատկություններ (205):* 4.3.3. *Բառապաշար (206):* 4.3.4. *Քերականական հատկանիշներ (208):* 4.3.4.1. *Ձևաբանական առանձնահատկություններ (208):* 4.3.4.2. *Շարահյուսական առանձնահատկություններ (209):*

4.3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ: Խոսակցական լեզուն բանավոր հաղորդակցման միջոց է, որը ձևավորվում է խոսելու պահին: Ունի կիրառության լայն ոլորտ: Լեզվական որոշակի համակարգ է, որը հակադրվում է պաշտոնական, գրքային խոսքին իր անմիջականությամբ և ոչ պաշտոնական բնույթով: Խոսակցական լեզուն կատարում է հաղորդակցական դեր, որով էլ հիմնականում պայմանավորված են նրա ոճական առանձնահատկությունները: Խոսակցական ոճին հատուկ են հանպատրաստից ձևավորումը, լեզվական միջոցների խնայողությունը, պատկերավորությունը, սեղմությունն ու հակիրճությունը: Դրանք պայմանավորված են խոսքային իրավիճակով և դրսևորվում են լեզվի բոլոր մակարդակներում: Խոսակցական լեզուն **ինքնաբերական է, արագ է փոփոխվում:** Հաճախակի են բառային կրկնությունները: Շարահյուսական կառույցները պարզ են: Խոսքն **ամբողջական չէ. հաճախ մնում է անավարտ**⁹⁵:

«Խոսակցականը համաժողովրդական է իր հասկանալիությամբ, գործածականությամբ, ազգային լեզվամտածողությամբ, որոշ իմաստով գրական լեզվի հենարանն է, հիմքը և դրանով իսկ լեզվի ժողովրդայնությունն ապահովող հիմնական միջոցն է»⁹⁶:

Այն համեմատաբար **անկայուն համակարգ է**, արագորեն արձագանքում է հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, մշակութային, ինչպես նաև քաղաքական փոփոխություններին՝ դառնալով այդ զարգացումների առաջին արտացոլողներից մեկը:

Բանավոր հաղորդակցման ժամանակ կարևոր դեր է խաղում **ինչերանգը**: Այն հիմնականում արտահայտվում է տրամաբանական շեշտի միջոցով և ծառայում է մտքի ճիշտ կամ ճշգրիտ արտահայտմանը: Հուզականությունը, զգացմունքների բազմազանությունը հաճախ դրսևորվում են միայն **ինչերանգով**:

⁹⁵ Տե՛ս «Разговорная речь в системе функциональных стилей современного русского литературного языка», Саратов, 1992, էջ 312:

⁹⁶ Հ. **Հարությունյան**, Գեղարվեստական խոսք, Եր., 1986, էջ 252:

Խոսակցական լեզվում հաղորդակցական մեծ դեր ունեն **շարժումները** (ժեստերը), որոնք կենդանի խոսքում ընդգծում, ասվածից առանձնացնում են այս կամ այն իմաստը՝ ուշադրությունը հրավիրելով դրա վրա, կամ ուժեղացնում են խոսքի զգացական կողմը, լրացնում և ամբողջացնում ասվածի իմաստը: Ձեռքերի շարժումներից բացի՝ զգալի դեր են կատարում նաև գլխի շարժումներն ու աչքերի, դեմքի արտահայտությունը:

Շարժումները խոսքի կազմակերպման մեջ կատարում են հնչերանգի դեր. պահպանում են խոսքի ռիթմը, ուժեղացնում են արտահայտչականությունը: Օր.՝ ձեռքի շարժումը կարող է արտահայտել տարակուսանք, վրդովմունք, զայրույթ, հիացմունք, ուրախություն: Կան շարժումներ, որոնք իրենց նշանակությամբ ընդհանուր են տարբեր ժողովուրդների համար: Այդպիսի շարժումներից են, օրինակ, ողջույնի ու հրաժեշտի ժամանակ ձեռքսեղմումը, ձեռքը բարձրացրած թափահարելը ևն:

Մեծ նշանակություն ունեն **նկարագրական շարժումները**, որոնցով ցույց են տրվում տվյալ գործողության կամ տվյալ առարկայի բնորոշ էական կողմերը, չափերը, ձևերը, դիրքը: Բանավոր խոսքում որևէ մեկի արտաքինի՝ բառերով նկարագրությունը սովորաբար ուղեկցվում է ձեռքերի, դեմքի զանազան շարժումներով⁹⁷:

4.3.2. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Անկաշկանդ խոսքը սովորաբար ավելի արագ տեմպ ունի: Խոսքի արագ տեմպում հնչյունական սղումները երբեմն կարող են այն աստիճանի հասնել, որ բառից մնա միայն մի փոքր նյութական արտահայտություն՝ բառի ռիթմային կմախքը: Խոսքի շղթայում որոշ հնչյուններ կարող են իրենց որակը փոխել, թուլանալ կամ բոլորովին սղվել, որոշ հնչյուններ (նույնիսկ վանկեր)՝ չարտասանվել: Առօրյա խոսակցության ժամանակ խոսողն իրեն թույլ է տալիս որոշ ազատություն. «բարենպաստ» պայմաններ են ստեղծվում հնչյունական սղումների և զանազան ազդեցությունների համար:

Խոսակցական ոճում ծայնավորները մի շարք դեպքերում, ի տարբերություն գրական արտասանության, կորցնում են իրենց հնչյունական հատկանիշները՝ վերածվելով անորոշ, անհստակ անցումային տարրերի, ինչպես՝ 1) սղվում է կից վանկերի նույնական ծայնավորներից մեկը՝ **իմիջիայլոց-իմիջայլոց**, 2) սղվում է **ը** ծայնավորը՝ **խորի[ը]դակցել-խորդակցել**, 3) **ը**-ն կարող է տեղափոխվել՝ **ծեռ[ը]նպահ-ծեռն[ը]պահ**, **գտն[ը]վել-գտ[ը]նվել**, 4) **ը**-ն կարող է հավելվել՝ **հաշտ[ը]վել**, **պարտ[ը]վել**, **վերց[ը]նել**, 5) փոխառյալ բառերում ռուսերենի նմանողությամբ **ե**-ն հնչում է **ի՝** **պենիցիլին-պ[ի]նիցիլին**, **ինտելիգենտ-ինտ[ի]լի-գենտ**, 6) որոշ փոխառյալ բառերի վերջնավանկի **ո**-ն արտասանվում է **ը՝** **օպերատ[ը]ր**, **տրակտ[ը]ր**, **տրանսպ[ը]րտ**, 7) **ո(օ)**-ն արտասանվում է **ա՝** **Մ[ա]սկվա**, **Դ[ա]ստ[ա]լսկի**:

⁹⁷ Տե՛ս «Русская разговорная речь», М., 1973, էջ 465: Տե՛ս նաև Ե. Գևորգյան, Հայոց շարժումային լեզվի քաղաքական քաղաքան, Եր., 2003:

Խոսքի արագ արտաբերման ժամանակ կից հնչյունների փոխազդեցությունը ուժեղանում է: Կից ձայնավորները հաճախ վերածվում են երկհնչյունի՝ **քվեարկել-քվյալրկել, միայն-մյալն, ծրիակեր-ծրլալկեր, Ուկրաինա-Ուկր[ալ]նա**: Երկհնչյունները վերածվում են ձայնավորների՝ **ձայն-ձ[ե]ն, հայր-հ[ե]ր, զգույշ-զգուշ, աշխույժ-աշխուժ**:

Արտասանական շղթայում բաղաձայնները ավելի թույլ ու անհստակ են արտասանվում: Խոսակցական լեզվին բնորոշ է **հ-ի** անկումը՝ **խորուրդ, հայոյել, հաշվապա, նախագա, հերթապա**: Մի շարք դեպքերում կարող են չհնչել **ր-ն (եկրորդ, գրի՛ (գրի՛ր-ի փոխարեն))** և **ն-ն (առաջի, վերջի)**: **Բ-ի** փոխարեն երբեմն արտասանվում է **ո՝ Գե[ո]մանիա, վե[ո]նագիր, ե[ո]եսուն**: Տարածված է բառի մեջ նոր, ավելորդ հնչյունի կամ հնչյունակապակցության հավելումը, որից բառիմաստը չի փոխվում՝ **կանա[ն]չ, սան[դ]ր, ֆիդայի[ն], ութ[անա]սուն**:

Հաճախ կրճատվում են բառերը, հատկապես հատուկ անունները: Օր.՝ **հաջողություն-հաջող, Հովհաննես-Հովիկ/Հովո, Խաչատուր-Խաչիկ/Խաչո/Խչո, Սարգիս/Սաքո**:

Մեր առօրյա խոսքի արտասանությունը, ի տարբերություն գրական լեզվի նորմավորված արտասանության, ավելի հաճախ է փոփոխվում՝ պայմանավորված խոսակցական լեզվի ընդհանուր բնույթով:

4.3.3. ԲԱՌԱՊԱՇԱՐ: Խոսակցական ոճը աչքի է ընկնում իր հարուստ և բազմապիսի բառապաշարով, որի ընտրությունն ու գործածությունը պայմանավորված են այս ոճին հատուկ անմիջականությամբ, ոչ մշակվածությամբ, հուզական երանգավորում ունեցող բառերի ու արտահայտությունների առատությամբ: Հաճախ են հանդիպում բառերի բարբառային տարբերակներ, օտարաբանություններ, դիպվածային բառեր, դարձվածքներ: Բառապաշարը ճկուն, բաց համակարգ է. արձագանքում է հասարակական տեղաշարժերին և համալրվում նորանոր բառերով ու արտահայտություններով: Խոսակցական ոճի բառերը հիմնականում ունեն հոմանշային տարբերակներ գրական լեզվում, օր.՝ **վռազ (շտապ), զոռով (բռնի), հանաք (կատակ), հալ (վիճակ), վախտ (ժամանակ)**:

Ավելի մեծ կիրառություն ունեն կազմությամբ պարզ բառերը: Հիմնականում կենցաղային առարկաների, մարդուն անմիջականորեն շրջապատող իրերի, երևույթների անվանումներ են:

Բարդություններից խոսակցական լեզվում գործածական են՝ ա) հարադրավոր բայերը՝ **աչքով անել, դաս առնել, մեջ ընկնել, խելքի բերել**, բ) կրկնավորները, որոնց բաղադրիչներից մեկը կարող է հնչյունափոխված լինել՝ **կես-կես, ինչ-ինչ, քիչ-միչ, մանր-մունր**, գ) զուգադրական բարդությունները՝ **եփել-թափել, չափել-ձևել, տանել-բերել, ծել-ծաղկել**, դ) պատճառական հարադիր բայերը՝ **ավելե տալ, երգել տալ, բերել տալ**:

Խոսակցական ոճի բառապաշարում հաճախակի գործածություն ունեն դարձվածքները, բարբառայնությունները, ժարգոնային բառերը, հասարակաբանությունները, օտարաբանությունները, նորաբանությունները: 1. **Դարձվածքները և բարբառային բառերը** սեղմություն, հակիրճություն, ժողովրդական երանգ են հաղորդում խոսքին՝ **բերանը ջուր առնել, դանակը ոսկորին հասնել, կույզ գալ, դարուփոս, ջան:** 2. **Ժարգոնային** բառերը կիրառվում են որոշակի ոլորտներում ու գործածական են սոցիալական որոշակի խմբերի կողմից, ինչպես՝ **լովել** – մնալ, **խփնվել** – իրեն կորցնել, **ֆազերը գցել** – խիստ բարկանալ, **հոգնած** – ձեռքից գնացած, ոչ պիտանի: Դրանք երբեմն ռուսերեն կամ անգլերեն բառերի աղավաղված տարբերակներ են՝ **մալադոյ** – նորակոչիկ, **գոլոտ** – լավին մոտ, **պրաստոյ** – հասարակ:

3. **Հասարակաբանությունները**՝ որպես ցածր ոճի հուզարտահայտչական երանգ ունեցող բառեր, խոսակցական լեզվում հաճախ ընդգծված բացասական, նաև ծաղրական իմաստ են արտահայտում և խոսակցին կշտամբելու կամ տվյալ երևույթը քննադատելու միտում ունեն՝ **զահլա, ախմախ, թիթիզություն:**

4. **Օտարաբանություններ:** Գերիշխում են արևելյան լեզուներից և ռուսերենից թափանցած օտար բառերը՝ **գիբիլ, խաբար, արադ, դաստա, բոյ, ազիզ,** կամ՝ **ռուչկա, պրոբլեմ, պրոցես, կորպուս** ևն: Երբեմն աղավաղվում է օտար բառի արտաքին տեսքը՝ հնչյունական կազմը՝ **պաոյեզդ, պեչենի, մառոժնի, կուխնի:** Պատահում է նաև, որ աղավաղվում է նաև բառիմաստը, այսինքն՝ օտար բառի նոր ձեռք բերած իմաստը որոշ չափով հեռանում է իր հիմնական իմաստից. **մանիկյուր** հայերենում նշանակում է եղունգներին քսվող հարդարանքի միջոց, ռուսերենում՝ ձեռքի եղունգները մշակելու գործընթաց: Կենցաղային առարկաների հայերեն անվանումների փոխարեն հաճախ գործածվում են դրանց օտարալեզու տարբերակները՝ **վեդրո** (դույլ), **դուշ** (ցնցուղ), **զանափեսկա** (վարագույր), **մեբել** (կահույք): Վերջին շրջանում ակտիվացել է անգլերենից անցած բառերի գործածությունը՝ **օքեյ** (լավ), **բայ** (ցտեսություն), **օֆիս** (գրասենյակ), **շեյփինգ** (մարզանք):

5. **Նորաբանությունները** դժվարությամբ են մուտք գործում խոսակցական լեզու. նախապատվությունը տրվում է օտարաբանություններին՝ **դեֆեկտ** (←արատ), **ռեկլամ** (գովազդ), **սայթ** (կայքէջ): Խոսելու պահին հաճախ ծնվում են դիպվածային բառեր՝ **սովորելացավ, տոկոսախեղդ, սրճամուլ, կյանքակեր:**

Երբեմն հաղորդակցման ժամանակ ավելացվում են բառեր և արտահայտություններ (ավելորդաբանություններ), որոնք ծանրաբեռնում են խոսքը, օր.՝ **նորից վերապատմել, նորից վերհիշել, կրկին անգամ, քանիցս անգամ, հետ նահանջել:**

Բանավոր խոսքում շատ են կիրառվում նաև բառեր և արտահայտություններ, որոնք գործածվում են ժամանակ շահելու, խոսքի ընթացքում առաջացած դադարը լցնելու նպատակով՝ **դե, բան, այ քեզ բան, ուրեմն, հետո, դե ինչ ասեմ, խոսքի, օրինակի համար, ասենք թե** ևն:

Բառապաշարի ընտրության և գործածության վրա մեծապես ազդում են խոսողի տարիքը, զբաղմունքը, միջավայրը, հասարակության մեջ գրաված դիրքը և այլ գործոններ⁹⁸:

4.3.4. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ: Ընդհանուր առանձնահատկությունն այն է, որ խոսակցական լեզուն համանշային տարբերակներից «նախընտրում է» խոսակցական քերականական ձևերն ու կազմությունները:

4.3.4.1. Ձևաբանական առանձնահատկություններ: Լեզվի միօրինակացման միտումը դրսևորվում է առաջին հերթին խոսակցական լեզվում: Ձևաբանական տարբերակներ առաջանում են հենց այդ միտումի ազդեցությամբ. լեզվում գործող անկանոն շատ ձևեր կամ կաղապարներ դուրս են մղվում:

Խոսակցական լեզվում հաճախակի են կիրառվում դերանունները (հատկապես ցուցական ու հարցական) և եղանակավորող բառերն ու ծայնարկությունները: Ստացականություն արտահայտելու համար **իմ, քո** ստացական դերանունների հետ հաճախ գործածում են նաև նույն իմաստն արտահայտող **ս, դ** հոդերը՝ **իմ ընկերս, քո երգը**:

Հաճախակի են նաև ածականի և թվականի փոխանվանական կիրառությունները, օր.՝ «**Հինգը** գնացին, **չորսը** մնացին», «**Մեծերին** լսել է պետք»: Բնորոշ է ածականի գերադրական աստիճանի՝ **ամենա-** և **-գույն** մասնիկների համատեղ գործածությունը՝ **ամենալավագույն**:

Խոսակցական լեզուն գրականից ունի տարբերություններ նաև գոյականի հոլովման համակարգում: 1. Գոյականի **ի** հոլովումը, շատ դեպքերում զուգահեռաբար գործածվելով մյուս հոլովումների փոխարեն, աստիճանաբար լայն տարածում է ստանում՝ **ծագման – ծագումի, սկեսրոջ – սկեսուրի, անկյան – անկունի**: 2. Հաճախ են գործածվում հոլովական ձևերի անհնչյունափոխ տարբերակներ՝ **բջիջի, հովիտի, թռչունի, պտուղի, նարինջի**: 3. **Տատ, պապ, տղա, երեխա** ձևերը սովորաբար ու հոլովմամբ են հոլովվում՝ **տատու, պապու, տղու, էրեխու**: 4. Գործիական հոլովում –**բ**-ի փոխարեն հիմնականում կիրառվում է –**ով**-ը՝ **ուրախությամբ – ուրախությունով, վատությամբ – վատությունով, ուսմամբ – ուսումով**: Տարածված են նաև հին հայերենից պահպանված –**ք** հոգնակերտի կիրառություններ՝ **քաղաքացիք, տղերք, երեխեք, աղջկերք**: Խոսակցականին հատուկ են հավաքական –**ենք** մասնիկով ձևերը (**Լուսիկենք, Հակոբենք, մամայենք**), –**ք** մասնիկի անկումով կազմված –**ներ**-ով հոգնակիները (**ոտներ, ձեռներ**): Գրական տարբերակներին զուգահեռ՝ խոսակցականում կիրառվում են նաև հոգնակի թվի հետևյալ ձևերը՝ **թմեր, աշխատավարձներ, հորաքույրներ**: Գործածական է ստացական հոգնակին՝ **աչքներս, ձեռքներս, ասելներս, գնալներդ**:

Խոսակցական լեզվում բայն ունի գործածության մեծ հաճախականություն: Բայական զուգաձևերից տարածված են կամ խոսակցական կազմությունները

⁹⁸ Տե՛ս «Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն», Եր., 1981, էջ 186–201:

(**ասեցի** // **ասի, բերի, տվի, դրի, թողի** ևն), կամ պարզապես բարբառներից խոսակցականին անցած սխալ կազմությունները (**փախնել, վազացնել, ուտացնել, սովորացնել, խոսալ, էթալ, գրի (գրեցի** իմաստով) ևն): Ամենից հաճախ գործածվում է բայի ներկա ժամանակը, երբեմն՝ այլ ժամանակների նշանակությամբ, օր.՝ «Եկող տարի **վերադառնում եմ**» (ապառնիի իմաստով), «**Գնում եմ** տուն. ինչ տեսնեմ...» (անցյալ ժամանակի իմաստով): Եզակի երրորդ դեմքում է-ի փոխարեն սովորական է **ա** օժանդակ բայի գործածությունը (**ասում ա, գրում ա**):

4.3.4.2. Շարահյուսական առանձնակատկություններ: Խոսակցական լեզվի տարբերությունը գրականից առավել հստակ է երևում շարահյուսության մեջ: Շարահյուսական ամենաբնորոշ հատկանիշը կառուցվածքային բազմազանությունն է: Գերակշռում են շարահյուսական պարզ միավորները, հատկապես թերի և միակազմ նախադասությունները՝ «**Բացատրեց. հասկացա**», միակազմ՝ «**Տրտեց**», «**Լուսացավ**»: Դրանք խոսքը դարձնում են ավելի սեղմ և դիպուկ: Նախադասությունները շատ հաճախ ավարտուն և ամբողջական չեն. շատ դեպքերում, ինչպես ասվեց, միտքը լրացվում է ձեռքի և դեմքի շարժումներով:

Բաղադրյալ ստորոգյալի **չէ** հանգույցի փոխարեն գործածվում է **չի-ն**՝ «տանը **չի**», «պետք **չի**»: Հաճախակի գործածություն ունեն եղանակավորող բառերով, ծայնարկություններով արտահայտված **բառ-նախադասությունները**՝ «**Հա՛**»: «**Չէ՛**»: «**Ո՛չ**»: «**Գուցե**»:

Նախադասության անդամների շարահյուսության ընդունված կարգը հաճախ չի պահպանվում, և առաջին պլան է մղվում նախադասության այն անդամը, որը խոսողի համար առավել կարևոր է. այդ բառը դրվում է նախադասության սկզբում՝ անկախ նախադասության մեջ նրա ունեցած պաշտոնից, օր.՝ «Արմոյին, Արմոյին կանչեք»: Խոսքի սահուն ընթացքը հաճախ ընդմիջվում է միջանկյալ նախադասություններով: Դա հանգեցնում է իմաստային կապերի թուլացման, օր.՝ «**Վաղը, ես ուրախ եմ**, պիտի գնաս գյուղ՝ ձերոնց մոտ», «Երեկ, **սիրտս ծակում էր ուժեղ**, գնացի պոլիկլինիկա»: Հաճախ խախտվում է շաղկապի շարահյուսությունը, օր.՝ «Ա.- Շատ տաք ես հագնված: Բ.- Ցուրտ է **որովհետև**»:

Խոսակցությունը հաճախ չի ընթանում մտքի տրամաբանական զարգացմամբ. մի թեման աննկատելիորեն փոխարինվում է մյուսով:

Բնորոշ են անշաղկապ նախադասությունները, որոնցում մեծ դեր է կատարում հնչերանգը՝ (Եթե) **Գաս՝ կզնանք**: «Շարահարությունը խոսքերի կապակցության ամենապարզ, սկզբնական ձևն է և հատուկ է ժողովրդական լեզվին» (Մ. Աբեղյան):

Խոսակցական լեզվում նկատելի են ենթակայի և ստորոգյալի համաձայնության որոշ շեղումներ՝ «**Քո ասածները ինձ ոգևորեց**», «**Ջանքեր պահանջվեց**», «**Նրա կեցվածքն ու պահվածքը անլուրջ թվաց**»: Երբեմն ենթական և ստորոգյալը համաձայնում են ոչ թե քերականորեն, այլ ենթակայի արտահայտած իմաստով (բակառություն)՝ «**Ժողովուրդը հրապարակում հավաքվեցին**», «**Մի մասը հետ գնացին**»: Խնդրառության առանձին դեպքերում զգալի է օտար լեզուների անմիջական ազդեցությունը՝ **ծանոթանալ տեսարժան վայրերի հետ**: Որոշ

կապերի հետ անձնական դերանունների տրական հոլովի (ինձ, մեզ, քեզ, ձեզ) փոխարեն խոսակցականում համատարած գործածություն ունեն սեռական հոլովածները՝ **իմ մոտ, քո համար, մեր հետ, ձեր նման** ևն: Ներգոյական հոլովածներին որոշ դեպքերում փոխարինում են **սեռական հոլով + վրա** կառույցները՝ **հրապարակի վրա, խաչմերուկի վրա, փողոցի վրա, անկյունի վրա**:

Խոսակցական լեզվին հատուկ է **խոնարհված բայ + ըղձական եղանակի բայածն** կառույցը (անորոշ դերբայի փոխարեն)՝ **ուզում եմ ասեմ**:

Խոսակցական ոճն ունի ընդգծված **հուզարտահայտչական երանգ**. դրանով խոսողն ուզում է ներազդել խոսակցի վրա: Ունի որոշակի պատկերավորման համակարգ: Լայն կիրառություն ունեն՝ 1. փոխաբերությունը («Ինչ ես դատարկ-դատարկ խոսում»), 2. համեմատությունը (շան պես չարչարվել, ամպի չափ սիրել), 3. մակդիրը (**անհամ** խոսք, **չուտվող** մարդ) 4. փոխանունությունը («**Թումանյան** շատ եմ սիրում»), 5. չափազանցությունը («Արար աշխարհի ման էկա») ևն:

Խոսակցական ոճն աչքի է ընկնում աշխուժությամբ, կենդանությամբ, անմիջականությամբ, և դրան մեծապես նպաստում են նաև **կոչականները**, որոնցով ասելիքը չի մնում անհասցե. ուղղվում է որոշակի հասցեատիրոջ, դառնում առարկայական, ձեռք բերում մտերմական երանգ. հիմնականում ուղեկցվում են ծայնարկությունների գործածությամբ՝ **վա՛խ, ջա՛ն, ա՛խ, ա՛յ տղա, ա՛յ մարդ, դե՛**:

Հաղորդակցումը հաճախ ընթանում է ընդհատումներով, զեղչումով և մասնատմամբ, որոնց պատճառով խոսքը երբեմն դառնում է թերի: Խոսակցական լեզուն լի է թերի, անավարտ, լիովին չձևավորված, կիսատ, երբեմն նույնիսկ մի նախադասությունը մյուսի մեջ թափանցած կառույցներով: Խոսողը հաճախ ինքն է «ընդհատում» իրեն, լրացնում ասելիքը զանազան պարզաբանող բառերով, ավելադրություններով, և այս բոլորի հետևանքով նախադասությունների սահմանները հաճախ դառնում են անհստակ, անորոշ: Զեղչումների մեծ քանակը պայմանավորված է արտալեզվական գործոններով, իրադրությամբ: Քերականական զեղչումներից խոսակցականին հատուկ է հարակատար դերբայի զեղչումը. «Այս դեպքում նրա խնդիր-լրացումը գալիս բռնում է դերբայի շարահյուսական դիրքը և առաջ բերում անսովոր կապակցություն: Օր.՝ **բրդից գործած գուլպա > բրդից գուլպա, կաշվից ձեռնոց, հավով հարիսա**»⁹⁹:

Խոսակցական լեզուն հիմնականում **երկխոսական բնույթի** է: Հաճախ երկխոսության ընթացքում նախադասության կառույցը անմիջականորեն պայմանավորվում է խոսակցի միջամտությամբ, նրա պատասխանով կամ նույնիսկ շարժումով: Երկխոսության ժամանակ նախադասությունը հաճախ արտահայտվում է մեկ անդամով: Կարող է զեղչվել բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասությունը: Օր.՝ «Ա.- Ինչ էր պատահել՝ չէիր եկել: Բ.- Հիվանդ էի»: («Զէի եկել, որովհետև հիվանդ էի»): Երկխոսություններում

⁹⁹ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Եր., 1990, էջ 418:

զեղչումներ հնարավոր են նաև հրամայական նախադասություններում, օր.՝ «Ձեններդ»: «Շուտ տո՛ւն»: «Ձեռքդ»: Երկխոսությունների ժամանակ բազմապիսի և անսահմանափակ զեղչումները լրացվում են մեծ մասամբ հնչերանգով:

Կրկնությունների միջոցով շեշտվում, ընդգծվում է նախադասության որևէ անդամ կամ հատված, օր.՝ «Վերցրո՛ւ, վերցրո՛ւ, մի՛ ամաչիր»: Կրկնությունը համապատասխան հնչերանգի դեպքում խոսքին հետաքրքիր յուրահատկություն է հաղորդում, դառնում է ապրումի, տրամադրության, մասնավորապես զայրույթի, հուսահատության դրսևորման միջոց: Օր.՝ «Էդ գնալն էր, որ գնաց», «Ատելով ատում էր»:

Այսպիսով՝ խոսակցական լեզուն ունի իրեն հատուկ որոշակի համակարգ: Ի տարբերություն գրական լեզվի նորմի՝ խոսակցական լեզվի նորմը գիտակցաբար չի հաստատվում և չի հսկվում. չափանիշ է համարվում այն, ինչ հանդիպում է լեզվին տիրապետող շատ մարդկանց խոսքում:

Բոլոր դեպքերում, պիտի ջանալ թեկուզ առօրյա հաղորդակցման ժամանակ խոսել այնպիսի լեզվով, որն առավել մոտ է գրականին:

4.4. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃ

4.4.1. *Ընդհանուր հատկանիշներ (211):* 4.4.2. *Հնչյունական յուրահատկություններ (212):* 4.4.3. *Բառապաշար (212):* 4.4.4. *Քերականական հատկանիշներ (216):* 4.4.4.1. *Ձևաբանական առանձնահատկություններ (216),* 4.4.4.2. *Շարահյուսական կառույցներ (219):* 4.4.5. *Հեղինակային ոճ կամ խոսքարվեստ (221):*

4.4.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ: Գեղարվեստական ոճը գրական ստեղծագործությունների լեզվի առանձնահատկությունն է: Այն պատկերավոր մտածողության դրսևորում է, որը իրականացվում է պատկերավորման և լեզվի արտահայտչամիջոցների կիրառմամբ, բառերի փոխաբերական գործածությամբ, նույնիսկ երբեմն որոշակի հնչյունական կազմ ունեցող բառերի նպատակային ընտրությամբ: Եթե գրական լեզվի նորմերի պահպանումը գործառական մյուս ոճերի դեպքում պարտադիր է, ապա գեղարվեստական լեզուն հաճախ է շեղվում ընդունված նորմերից: Դրանց շնորհիվ հզորանում է խոսքի ներգործության ուժը, ասելիքը դառնում է պատկերավոր:

Գեղարվեստական լեզուն գրական լեզվի մի տարբերակն է, որը ստեղծվում, զարգանում և անվերջ հարստանում է գրողների ստեղծագործությունների միջոցով: Այն ամենատարողունակն է և՛ բառապաշարի հարստությամբ, և՛ քերականական զուգաձևություններով, և՛ լեզվի ու պատկերավորման միջոցների գործածության բազմազանությամբ: «Գրական ստեղծագործության լեզուն կիրառվում է մարդկային գործունեության միայն մեկ՝ գեղագիտական ոլորտում: Մինչդեռ գրական լեզուն սպասարկում է մարդկանց գործունեության բոլոր ոլորտները: Այդ

հատկանիշի պատճառով էլ ստացվում է, որ գրական լեզուն գեղարվեստական գրականության լեզվից «ավելի լայն է»¹⁰⁰:

Իհարկե, գործառական որոշ ոճերում էլ կարող են գեղարվեստական լեզվի տարրեր գործածվել: Օր.՝ հրապարակային, մասնագիտական, քաղաքական և այլ ելույթներում կամ հողվածներում հեղինակը կարող է խոսքը տպավորիչ դարձնելու համար օգտագործել դիպուկ համեմատություններ, փոխաբերություններ, մեջբերել նշանավոր մարդկանց խորիմաստ ասույթներ, նույնիսկ բանաստեղծական տողեր: Բայց դա պետք է արվի չափավոր, որպեսզի չխաթարվեն տվյալ գործառական ոճի բնույթն ու ամբողջականությունը: Գեղարվեստական խոսքում էլ հատկապես տարբեր կերպարների տիպականացման համար կարող են ներմուծվել գործառական մյուս ոճերին բնորոշ արտահայտություններ: Սրանց չարաշահումը ևս ընդունելի չէ, որովհետև գրական ստեղծագործությունը նախ և առաջ պետք է աչքի ընկնի գեղարվեստականության պահպանման օրինաչափություններով:

Գեղարվեստական լեզվի հարստությունն ու ինքնատիպությունը դրսևորվում են լեզվական բոլոր մակարդակներում:

4.4.2. ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Որոշակի հնչյունական կազմ ունեցող բառերի միջոցով բանաստեղծության զգացմունքային կողմը ուժգնացնելու հնարանքը (բաղաձայնույթ կամ առձայնույթ) գեղարվեստական գրականության մեջ համեմատաբար քիչ է հանդիպում: Հայ գրականության մեջ բաղաձայնույթի կիրառության հաջող օրինակներ են տալիս Գրիգոր Նարեկացին, Միսաք Մեծարենցը, Վահան Տերյանը, Եղիշե Չարենցը և ուրիշներ: Օր.՝ «Ծավալ ծով ծիծաղ քաղցր օդով շարժենայր...» (ԳՆ), «Աշնան մշուշում շշուկ ու շրշուն...» (ՎՏ), «Հոգվույս դափ ու թմբուկի Կնիջնե ծիծաղն այս գիշեր. Ծնծղաներու պես ցնծուն Ծափ կը զարնեն իմ հուշեր» (ՄՄ):

Առձայնույթը հաճախ գործածվում է բանաստեղծական տողերը հանգավորելու համար, որտեղ կարևորվում է հատկապես վերջին վանկի ծայնավորը: Օր.՝ «Մեկն ասում է՝ հին է, Մեկն ասում է՝ նոր է: Իսկ ինձ համար մեկ է, Երբ որ մեջը վերք է, Եվ քո ապրած օրն է, Երգն իսկապես երգ է, Հին ու նորը ճին է» (ՀՍ):

4.4.3. ԲԱՌԱՊԱՇԱՐ: Գեղարվեստական լեզվի կարևոր արժանիքներից է բառի փոխաբերական գործածությունը, որով խոսքը դառնում է առավել խորիմաստ և պատկերավոր: Հատկապես այս հնարանքի շնորհիվ են ստեղծվում գեղարվեստական լեզվի յուրօրինակությունն ապահովող պատկերավորման և արտահայտչական միջոցները: Ինչպես նշում է Բելինսկին, բառի ընտրությունը այնքան դիպուկ պետք է լինի, որ տվյալ շարադրանքում հնարավոր չլինի այն

А. Горшков, Русская стилистика. Стилистика текста и функциональная стилистика, М., 2006, с. 315.

ուրիշ որևէ բառով փոխարինել¹⁰¹: Թեև գեղարվեստական լեզուն գրական լեզվի մի տարբերակն է, սակայն, ի տարբերություն գործառական մյուս ոճերի, չկա բառապաշարի մի շերտ, որի գործածությունը այս ոճում բացառվի:

ա) **Համագործածական բառեր:** Ինչպես գիտենք, սրանք գրական լեզվի բառապաշարի ամենածավալուն շերտն են կազմում և գործառական բոլոր ոճերում էլ ամենից հաճախ կիրառելի են: Կարծիք կա, որ համագործածական բառերը հազվադեպ են նպաստում խոսքի ոճավորմանը: Այո, կիրառական տարբեր ոճերում այդ բառերը ոճական առումով համեմատաբար չեզոք են: Սակայն հավանաբար չկա համագործածական որևէ բառ, որը չենթարկվի վարպետ արվեստագետի գրչին և գեղարվեստական ստեղծագործության որևէ դրվագում չդրսեվորի իր ոճական արժեքը: Օր.՝ «Ծաղկափռու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան» (ԱԲ): «Ալպիական մանուշակ» պատմվածքի այս նախադասության բոլոր բառերն էլ բառարանային իմաստով ոճական արժեք չունեն: Բայց Բակունցին հաջողվել է այս սովորական բառերի միջոցով ստեղծել խորիմաստ մի պատկեր: Գյուղաշխարհ եկած հայ մտավորականները՝ հնագետն ու նկարիչն էլ այդ գունավոր բզեզի պես Կաքավաբերդի գեղեցկությունները տեսան միայն, բայց չառնչվեցին այդ լեռնաշխարհի մարդկանց հետ, չփորձեցին տեսնել ու հասկանալ նրանց հոգսերը:

Համագործածական բառերին նոր իմաստ ու նրբերանգ հաղորդելու միջոցով գեղարվեստական խոսք կոեղու արվեստը քնորոշ է բոլոր առաջնակարգ գրողներին: Ուստի այս հարցում որևէ արվեստագետի առաջնություն չտալով՝ պարզապես բերենք ևս երկու օրինակ՝ «Մենք վաղ ճաշակեցինք թե՛ փորձություն, թե՛ մահ, Կյանքը մեզ չտրվեց իբրև երգ ու վայելք, Ու թե թախիժ տեսնեք մեր աչքերում հիմա, Ներեք... այդ աչքերով մենք մահին ենք նայել» (ՎԴ), «Դու իմ կյանքն էիր, կյանքիս գինն էիր, Լավագույնն էիր ամենքի մեջ: Դու իմ գրկի մեջ ուրիշինն էիր, Իմն էիր միայն իմ երգի մեջ» (ՀՍ):

բ) **Բարբառային և ժողովրդախոսակցական բառեր:** Գրական լեզվի զարգացման համար բառապաշարային ու քերականական ձևերի հարուստ գանձարան են բարբառները: Այս շտեմարանից չօգտվելու դեպքում գրական լեզուն կարող է վերածվել կաղապարված ու անկենդան գրքային լեզվի և որոշ ժամանակ անց այնքան կիեռանա կենդանի խոսքից, որ իր դիրքերը կգիջի լեզվական մի նոր որակի: Այդպես է V դարի գրական լեզուն վերածվել գրքայինի՝ գրաբարի: Սակայն բարբառային բառերն ու քերականական ձևերը հազվադեպ են առանց «միջնորդության» ներթափանցում գրական լեզվի տիրույթ: Այդ գործընթացում «միջնորդի» կարևորագույն դեր է կատարում գեղարվեստական լեզուն: Ի տարբերություն գործառական մյուս ոճերի՝ գրականության լեզուն ավելի ազատ է ու անկաշկանդ: Գրողը միշտ էլ ձգտում է պահպանել լեզվի կենսունակությունը՝ գրական խոսքը հնարավորինս մոտեցնելով առօրյա-խոսակցական լեզվին: Ժողովրդախոսակցական, բարբառային, նույնիսկ ժարգոնային բառերն ու արտահայտությունները թեև «չեն գործածվում գրական հայերենում, սակայն երբեմն առանձին գրողների կողմից մտցվում են իրենց ստեղծագործությունների

¹⁰¹ Стн В. Белинский, Полное собрание сочинений: в 13 т., т. 4, М., 1954, էջ 545:

մեջ՝ առանձին հերոսների խոսքային բնութագրությունը տալու նպատակով»¹⁰²։ Այդ երևույթը համեմատաբար քիչ է դրսևորվում միայն հեղինակային խոսքով մտահղացված չափածոյում։ Մինչդեռ մեծածավալ երկերում (վիպակ, վեպ, դրամա ևն) բնավորությամբ, կրթական մակարդակով, մասնագիտությամբ և այլ գծերով տարբեր կերպարների տիպականացման ժամանակ անհրաժեշտ պայման է նաև նրանցից յուրաքանչյուրի խոսքի անհատականացումը։ Հեղինակները այդպիսի կերպարների խոսքը առավել համոզիչ ու բնական դարձնելու նպատակով որոշ ներմուծումներ են կատարում բառապաշարի տարբեր, այդ թվում՝ բարբառային և ժողովրդախոսակցական շերտերից։ Օր.՝ «Մեր Անդրին **անցկացած** շաբաթը մի նամակ էր ուղարկել **Վարշավու կողմերից**... Լավ չի գրում. ասում է՝ **էս է մի ամիս է Ծմակի մեջ, գիշեր-ցերեկ թոփերը** տրաքում են։ Մինչև անգամ **չոլ** դուրս գալն էլ **ա** երկյուղալի» (ԱԲ)։

Սակայն բարբառային բառերից, առավել ևս քերականական ձևերից օգտվելը մեծ հմտություն է պահանջում։ Երբեք չի կարելի չարաշահել ոչ խոսակցական, ոչ բարբառային տարրերի գործածությունը։ Հակառակ դեպքում գեղարվեստական խոսքը կկորցնի իր համակարգային ամբողջականությունը, կդառնա բարբառախառն և հանրության համար դժվարընկալելի։ «Ժողովրդական բարբառները,– գրում է Ալ. Շիրվանզադեն,– պետք է լինեն մեզ համար լոկ հում նյութ, ուրիշ ոչինչ, երբ նրանցից պետք է օգտվել գրականական բարբառը հարստացնելու համար։ Ես դեմ եմ այն բանաստեղծական գրվածքներին, ուր ոչ միայն գործող անձինք, այլև հեղինակը խոսում է ամբոխի, իր տեղական ժողովրդի լեզվով։ ... Հեղինակը կարող է իր հերոսներին խոսեցնել ժողովրդական բարբառով իրականությանը հավատարիմ լինելու համար։ Բայց այստեղ ևս նա պիտի աչքի առջև ունենա ընդհանուր մասշտաբը և կուրորեն չհետևի տեղական բարբառի բոլոր մանրամասն ձևերին»¹⁰³։

գ) **Հնաբանություններ**։ Ինչպես բարբառային բառերի, այնպես էլ հնաբանությունների գործածությունը գեղարվեստական խոսքում ինքնանպատակ չպետք է լինի։ Հնաբանություններին՝ քնած բառերին, դիմելու համար ևս գրողից մեծ ճաշակ և վարպետություն են պահանջվում։ Պատմական թեմաներով գրված ստեղծագործություններում դարաշրջանի շունչն ու կոլորիտը վերարտադրելու համար, իրոք, նպատակային է երբեմն գործածել նաև հնաբանություններ։ Ընդ որում, հնաբանություններից պատմաբառերը՝ ժամանակի ընթացքում գործածությունից դուրս եկած իրերի, առարկաների, պաշտոնների և այլ անվանումները (ատրուշան, նիզակ, քուրմ, սեպուի), պատմականությանը նպաստում են ավելի շատ ճանաչողական առումով, քան ոճական, որովհետև դրանք ոչ թե գեղարվեստական պատկեր են կերտում, այլ մասնակցում են պատմական միջավայրի նկարագրությանը։ Ոճականորեն առավել ակտիվ են հնաբառերը՝ այն բառերը, բառաձևերը և քերականական կառույցները, որոնց գործածության շնորհիվ կերպարների խոսքը ինչ-որ չափով համահունչ է դառնում տվյալ պատմական ժամանակահատվածի լեզվին։ Օր.՝ «Եվ արդ **աշխարհակալ իմ հարևան, Ի հատուցումն** ընծաներիդ առատության, Առ այս աքքատական **ակնակուռ**

¹⁰² Թ. Շահվերդյան, Ոճագիտություն, Եր., 2010, էջ 133։

¹⁰³ «Գրականագիտության ներածություն։ Քրեստոմատիա» (կազմ.՝ Էդ. Ջրբաշյան և այլք), Եր., 1984, էջ 176։

գոտին», կամ՝ «Քեզ **Բահալ նյութել է** կին, Բայց գործերով հասար **արանց** մեծագույնին: ...Երբ Շամիրամ աստվածուհին Ճառագեց **յուր** սերը ինձ **վերա**» (Ն2):

դ) **Նորակազմություններ**: Գեղարվեստական երկերի հեղինակների կողմից նորակազմությունների ստեղծումը **բացառապես սուբյեկտիվ** երևույթ է՝ միտված խոսքի նրբերանգային կողմերն ընդլայնելուն: Եվ դա բնական է, որովհետև «նոր բառի ստեղծման ժամանակ գրողի նպատակը ոչ թե գրական լեզուն հարստացնելն է, այլ զգացմունքը, միտքը անհրաժեշտ նրբերանգներով, ոճական պատշաճ որակով արտահայտելը»¹⁰⁴: Այս բնագավառում ստեղծված նորակազմությունների գերակշիռ մասը մնում է տվյալ ստեղծագործության էջերում՝ որպես դիպվածային նորաբանություն, և միայն փոքր թվով բառեր, ժամանակի ընթացքում ուրիշների կողմից ևս գործածվելով, անցնում են գրական լեզվին:

Սակայն հենց գեղարվեստական խոսքում հանդիպող նորակազմություններն են, որ, անցնելով գրական լեզվին, թարմացնում ու նոր նրբերանգներով են հարստացնում այն: Ինչ վերաբերում է դիպվածային բառերին, դրանք, Էդ. Աղայանի բնորոշմամբ, մեկուսացած նորաբանություններ են, որոնք չեն անցնում բառապաշարի գործուն շերտին, բայց «նրանց մի մասը, առանձնապես հեղինակային նորաբանությունները մնում են, այնուամենայնիվ, բառապաշարի չգործուն շերտում, որպես բառագանձի տարր ու կարող են ազատորեն գործածվել ըստ անհրաժեշտության և ինչ–որ ժամանակ անցնել գործուն շերտին»¹⁰⁵:

Նորակազմությունների գլխավոր առանձնահատկությունը բառիմաստային տարողունակությունն է, գրողի ասելիքը առավել հակիրճ, բայց խորիմաստ արտահայտելը: Հայ նշանավոր գրողները հազարավոր նորաբանություններ են կերտել: Օր.՝ «Ո՛վ դուք՝ վկաներ **հավերժավրեժ** հայոց եղեռնի, Զարթեք, որ **պատժանքն** այս **անզույգ** մեղքի կոկորդից բռնի, Հատուցման արծիվն իր ժեռ վանդակից ի լույս սլանա...» (ՀԵ): «Հայոց դանթեականը» պոեմից բերված այս տողերում Հ. Շիրազը, որպեսզի ընդգծի, որ ցեղասպանության զոհերի հիշատակը, արդար վրեժը և փոխհատուցման պահանջատիրությունը երբեք չեն մոռացվելու, ստեղծել է **հավերժավրեժ** բառը, իսկ չարագործների անզույգ մեղքի համար, համագործածական **պատիժ** բառին ավելացնելով –**անք** գրաբարյան մասնիկը, ստեղծել է առավել իմաստավորված բառ՝ **պատժանք**, որը ձևակազմորեն հիշեցնում է տառապանք, չարչարանք, զրկանք, կալանք և նմանատիպ այլ բառեր, ու կարծես հեղինակը դրանց բառիմաստային ընդհանրությունները խտացրել, ծուլել և կաղապարել է մեկ բառի մեջ:

Ի դեպ, առաջ անցնելով, կարելի է հենց այս մեջբերման օրինակով ցույց տալ գեղարվեստական խոսքի արժանիքներից մի քանիսը՝ հակիրճությունը, դիպուկությունը, ներգործության ուժգնությունը և պատկերավորությունը, որոնք դրսևորված են տարբեր արտահայտչամիջոցների կիրառությամբ: Այստեղ Հի-րազը, **զարթե՛ք** և **ի լույս** քերականական հնաբանություններից բացի, օգտագործել է չորս մակդիրային կապակցություն՝ **հավերժավրեժ** եղեռն, **անզույգ**

¹⁰⁴ Ս. Մելոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 174:

¹⁰⁵ Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1988, էջ 170:

մեղք, **հատուցման** արժիվ և **ժեռ** վանդակ, անձնավորել է **պատժանք** և **մեղք** վերացական գոյականները և այս փոքրիկ հատվածը, որն իր ամբողջության մեջ մի ինքնատիպ փոխաբերություն է, եզրափակել է «հատուցման արժիվն իր ժեռ վանդակից ի լույս սլանա» նրբահյուս փոխաբերությամբ:

Նորաբանություններով հարուստ է նաև Սևակի քնարերգությունը: Նրա կերտած բառերն այնքան համահունչ են հայերենի բառակազմական ձևերին, որ թվում է, թե դրանք հանրահայտ, մշտապես գործածված բառեր են: Ահա մի հատված Կոմիտասին բնութագրող տողերից, որտեղ բանաստեղծը ստեղծել է **ամենահայր**, **ամենահայ** նորաբանությունները. «Ամենամեծ դու նահատակ, **Ամենահայր**, **ամենահայ**, Գինու կարասն՝ ուրիշներին, Մեզ հերիք է քո մի թասը»:

4.4.4. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ: Ոճական արժեք ունեցող քերականական իրողությունների մեծ մասը պայմանավորված է ձևաբանական զուգաձևությունների և շարահյուսական կառույցների (բառակապակցություն, նախադասություն) հոմանշային տարբեր կիրառություններով:

4.4.4.1. Ձևաբանական առանձնահատկություններ: Գրողները, հատկապես քնարերգուները առավել հաճախակի են դիմում քերականական զուգաձևություններին տողերի հանգավորման ու բարեհնչության համար: Բնականաբար, նման դեպքերում ոճական արժեք են ստանում և՛ համապատասխան բառընտրությունն ու բառակազմությունը, և՛ բառերի հնչյունական կազմը: Հայերենի բոլոր խոսքի մասերն էլ որոշակի ոճական արժեք ունեն: Նույնիսկ ոչ նյութական արժեք ունեցող խոսքի մասերը համատեքստում հաճախ կարող են մասնակցել խոսքի նրբերանգային ձևավորումներին: Օր.՝ «Վո՛ւշ-վո՛ւշ, Անճւշ, Վո՛ւշ-վո՛ւշ քույրիկ, Վո՛ւշ քու սերին, քու յարին...» (ՀԹ), «Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ-ցավ, Օր ու արև չտեսանք, Վա՛խ, մեր կյանքը սևով անցավ, Աշխարհից բան չիմացանք» (ԱԻ), «Ե՛վ տանջանք, և՛ բեկում, և՛ թախիծ, Սև օրեր ես դեռ շատ կտեսնեմ» (ՎՏ):

Ոճականորեն առավել ակտիվ են նյութական արժեք ունեցող խոսքի մասերը՝ գոյականը, ածականը, դերանունը, բայը, մակբայը:

Գոյականի ոճական ինքնատիպ կիրառությունների բազում օրինակներ կան հայ գրականության մեջ: Օր.՝ «Էս դարում **Մըսըր** անհաղթ ու հզոր Մըսրա-Մելիքն էր նստած թագավոր: Հենց որ իմացավ էլ **Մհեր** չկա, Վեր կացավ կովով Սասունի վրա» (ՀԹ): Ոչ գեղարվեստական շարադրանքի դեպքում **Մըսըր** գոյականը (տեղի պարագա) պետք է դրվեր ներգոյական հոլովով՝ **Մըսըրում**, իսկ **Մհեր** անձնանունը (ենթական)՝ որոշյալ առումով՝ **Մհերը**: Սակայն քառատողի բարեհունչ հանգավորման, ինչպես նաև խոսքը «Սասնա ծռեր» էպոսի բանահյուսական ոճին մոտեցնելու նպատակով Թումանյանը նախընտրել է այս տարբերակները:

Թումանյանի տողերում բազմիցս հանդիպում ենք ձևաբանական զուգաձևություն ունեցող բառերի ժողովրդախոսակցական ձևերի՝ **տղերք** (տղաներ), **արդին** (մարդուն), **գլխովը** (գլխով) ևն. «Սիրուն տիկնայք, ջահել **տղերք**, Լավ

ուշ դրեք իմ խաղին», «Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման, Լավ արարքը, լավ մարդին»:

Գոյականի ոճական արժեքը մեծ է հատկապես մակդիրային կիրառությունների ժամանակ: Տարբեր հոլովներով, նաև կապերի հետ դրված գոյականական մակդիրները անկրկնելի նրբերանգներ են հաղորդում բանաստեղծական խոսքին: **Գոյականին** լրացնող մակդիրներ՝ «Նա էր, իմ **վիթ** հաջեգարեն, Բեկի դուստրը մանկամարդ՝ Երեսը՝ **կաթ**, իսկ շուրթերը՝ այդ կաթի մեջ ընկած վարդ» (ՀՀ), «Մոնչալով ելավ տեղից, Էն առյուծի **առյուծ** որդին» (ՀԹ): **Բային** լրացնող մակդիրներ՝ «Երենկ նրան, ով **մարդ** կգա Ու **մարդ** կերթա անարատ» (ՀԹ):

Գոյականը ոճավորման ինքնատիպ հումք է դառնում, երբ հոգնակի չունեցող բառը գործածվում է հոգնակի թվով: «Եթե ուզեն՝ **արեգակներ**՝ կշարտեն երկինքն ի վեր, Եթե ուզեն՝ վար կբերեն **երկինքներից արեգակներ...**» (ԵԶ), «Ու բախվեցին խաբված ազգերն, արյունն այնպես ծովացավ, Որ մեջն ազգերն այրվեցին, **Շամիրամներն**՝ հովացան» (ՀՀ):

Գոյականի ոճական ինքնատիպ դրսևորումներից է **համըմբռնումը** (եզակի թվով դրված բառը արտահայտում է հոգնակի իմաստ): Օր.՝ «Քանի սերունդ է ապրել Բասուտա գետի ափին, կարկատած թաղիքները փոել ցախերի վրա, **եղեգնով** պատել վրանները և ամեն գարնան, երբ Կաքավաբերդի լանջին բացվել է ալպիական **մանուշակը, այծ ու ոչխարը** քշել է բերդի լանջերը, **պարկը** պարենով լցրել ու **ծմեռը** կրծել կորել **հաց** և **այծի** պանիր» (ԱԲ):

Գեղարվեստական խոսքի ձևաբանական ոճավորման ինքնատիպ օրինակ կա Համո Սահյանի հետևյալ տողերում. «Դու եկել էիր **նշանիդ շորում**, Մի կաթիլ արցունք մատանուդ քարին»: Հայտնի է, որ գրական հայերենում սովորաբար ձևի պարագան ներգոյական հոլովով չի դրվում (չհաշված հազվադեպ բացառությունները, օր.՝ «Մտքում որոշել էր...», «Այդ դիրքում երկար մնաց» ևն): Մինչդեռ Հ. Սահյանը ձևաբանական շեղումով ոչ միայն ապահովել է բանատողի հանգավորման սահունությունը, այլև **նշանիդ շորում** փոքրիկ բառակապակցության մեջ խտացրել է մի ողջ պատկեր, որը «մի կաթիլ արցունք մատանուդ քարին» տարողունակ դարձույթի հետ փոխարինում է այլ ձևակերպումների դեպքում մի քանի անգամ ծավալուն շարադրանքի: (Աղջիկը նախօրեին, իր կամքին հակառակ, հավանաբար ծնողների պահանջով, նշանվել է: Բայց հոգեպես տանջվում է, որովհետև սիրում է բանաստեղծության քնարական հերոսին. դրա վկայությունը նշանի մատանու վրայի արցունքի կաթիլն է...):

Բոլոր լեզուներում էլ գեղարվեստական խոսքի ոճավորման մեջ իր լայն հնարավորություններով առանձնանում է **ածական** խոսքի մասը: Եթե ածականը, բացի մակդիրից, ուրիշ ոչ մի դեր չունենար, արդեն կլիներ ոճականորեն ամենակիրառելի խոսքի մասը: Խոսքն առաջին հերթին վերաբերում է որակական ածականներին, որոնք իրենց համեմատության աստիճաններով ու շարահյուսական բազմաբնույթ կիրառություններով կարող են զարդարել ցանկացած գրական երկ: Օր.՝ «Իմ **սո՛ւրբ** Հայրենիք, Դու սրտիս մեջ ես...» (ՀՀ), «**Բորբ** մի աղջիկ զարկեց ձեռքով իր բոց կոնքին...» (ԵԶ), «Իմ **կոյր** հավատի աչքերն էլ տեսան Գազանի մեջ մարդ, Մարդու մեջ՝ գազան» (ՀՀ):

Փոքր-ինչ սահմանափակ են հարաբերական ածականների ոճական հնարավորությունները, թեև տաղանդավոր արվեստագետների գրվածքներում դրանք ևս կարող են ոճական արժեք ներկայացնող արտահայտություններ ձևավորել: Օր.՝ «Դու – **լուսե** անցար ու չկաս, Դու – թեթև, **անմարմին, անծիր...**» (ԵՉ): «Դու ինձ համար **քարե** մասունք, Յար, ինձ քարեքար մի գցիր» (ՀՇ):

Ածականները հաջողությամբ կազմում են **խոսքային հոմանիշներ և հականիշներ**: Օր.՝ «Ներիր ինձ, դու իմ **անգի՛ն**, Իմ **խելո՛ք** և իմ **համա՛ռ**, **Հարկադիր** այս ծիծաղի, Ու **թաքուն** լացի համար» (ՀՍ). (**անգին, խելոք, համառ** – խոսքային հոմանիշներ, **հարկադիր-թաքուն** – խոսքային հականիշներ):

Որակական ածականները գործածվում են նաև փոխանվանաբար և ստանում գոյականին բնորոշ հատկանիշներ: Այսպիսի կիրառություններում ևս մեծ է ածականի ոճական արժեքը: Օր.՝ «Դարեր գալիս, **չարեր** գալիս, Տեսչում էին ալեկոծ, Իմ Սևանա ծովը խմել, Որպես արյունն իմ հայոց» (ՀՇ), «**Կապույտից** հետո և ոսկուց հետո, Քնյր, փռվեց ահա իմ տրտմած հոգում, Որպես երազում ապրած երեկո – Մի խամրած մշուշ մանուշակագույն» (ԵՉ):

Թվականները որոշ չափով ոճական արժեք են ստանում դարձվածքներում («Հասկացողին՝ **մեկ**, չհասկացողին՝ **հազար ու մեկ**», «**յոթ** սարից այն կողմ»), ժողովրդական ստեղծագործություններում և դրանց մշակումներում, որտեղ հաջողությամբ մասնակցում են չափազանցություն պարունակող դրվագների կառուցմանը: Օր.՝ «...Ու ցած իջավ Թուր-Կայծակին: Անցավ **քառսուն** գոմշի կաշին, Անցավ **քառսուն** քարերը ցած, Միջից կըտրեց ժանտ հըրեշին, **Օխտը** գազ էլ դենը գընաց» (ՀԹ):

Թվականները կարող են գործածվել որպես խորհրդանիշ պատմական կարևորության տարեթվերի մասին պատմող ստեղծագործություններում: Օր.՝ «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմի դրվագներից մեկում հայոց մեծ եղեռնի փոխարեն Ս. Կապուտիկյանը օգտագործել է այդ ողբերգական իրողությունների տարեթիվը՝ «Ինձ համար կյանքը սկիզբ էր առնում իմ ծնված օրով, իմ ծնված օրից... Եվ ես իմացա, իմացա խոով, Դրանից առաջ եղել աշխարհում, **Տասնհինգ** թիվ է անցել աշխարհով»:

Թեև գրողները այնքան էլ հաճախ չեն դիմում **դերանվան** միջոցով ոճավորված կառույցների, բայց դերանունը ևս ոճական որոշակի լիցքեր է պարունակում, և նրա ընձեռած հնարավորություններից հմտորեն օգտվելու դեպքում նույնպես ծնվում են գեղարվեստական խոսքի գլուխգործոցներ: Ասվածը հաստատող լավագույն օրինակներից մեկը Սևակի հետևյալ տողերն են. «**Դու** Հասարակ մի դերանուն, **Դու՛** երկու տառ...» (ՊՍ): Բանաստղերի դերանվանական ոճավորման դասական օրինակ է ստեղծել Վ. Տերյանը՝ «**Ես** եմ, **դու** ես, **ես** ու **դու**, Գիշերում այս դյութական, **Մենք** մենակ ենք՝ **ես** ու **դու**, **ես** էլ **դու** եմ, **ես** չկամ...» (ՎՏ):

Հ. Շիրազը ևս օգտվել է դերանունների միջոցով խոսքը ձևավորելու հնարանքից:

Մենք խաղաղ էինք **մեր** լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:
Բայց մենք հավերժ ենք **մեր** լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:

Այս բանաստեղծության մեջ միաժամանակ գործածվել են մի քանի արտահայտչամիջոցներ: Նախ՝ «Էքսպրոմտ»-ն ամբողջությամբ կազմված է փոխաբերական պատկերներից: Բանատողերում առկա նույնակառույց համեմատությունները («լեռների պես», «հողմերի պես») և նրանց նպատակային կրկնությունները իրենց հերթին ուժգնացնում, տեսանելի ու առարկայական են դարձնում պատկերները: Իսկ ամենակարևորը՝ **մենք** և **դուք** դերանուններով, **լեռներ** և **հողմեր** գոյականներով կազմվել են խոսքային հականիշների զույգեր, որոնց միջոցով ձևավորվել են շեշտված հակադրություններ: Հատկապես նշված դերանունների բառիմաստների ընդլայնման շնորհիվ է ամբողջացել երկի գաղափարական բովանդակությունը:

Թեպետ մյուս չթեքվող խոսքի մասերի պես **մակբայը** ևս ոճական առումով այնքան էլ ակտիվ չէ, այնուամենայնիվ արվեստագետներից շատերին է հաջողվել վարպետորեն օգտվել նաև այս խոսքի մասի՝ գուցե ինչ-որ չափով թաքնված ոճական հնարավորությունից: Մակբայը կարող է բավականին ակտիվ դեր ունենալ փոխաբերությունների, համեմատությունների և այլ արտահայտչամիջոցների ստեղծման գործում: Մակբայով ոճավորված գեղարվեստական խոսքի շքեղ օրինակ է Հ. Սահյանի «Գարունդ հայերեն է գալիս» բանաստեղծությունը, որտեղ **հայերեն** մակբայի իմաստային շրջանակների գրեթե ֆանտաստիկ ընդլայնման միջոցով են ձևավորվել գեղարվեստական պատկերները՝ «Արևդ **հայերեն** է ծագում, Ծառերդ **հայերեն** են ծաղկում, **Հայերեն** են պայթում բառերդ: ...Ձորերդ շնչում են **հայերեն**, Չոհերդ ննջում են **հայերեն**, **Հայերեն** են տանջում ցավերդ» (ՀՍ):

Բայը ևս ոճական մեծ արժեք է ձեռք բերում, երբ գործածվում է փոխաբերաբար՝ նպաստելով պատկերավորման տարբեր միջոցների (փոխաբերություն, համեմատություն, անձնավորում, չափազանցություն ևն) ձևավորմանը: Այսպես՝ շատ բառերի պես **փուլ գալ** և **ծյուն մաղել** հարադիր բայերը ոճականորեն չեզոք են, բայց փոխաբերական գործածության շնորհիվ Պ. Սևակի «Անլուելի զանգակատուն» պոեմում ձեռք են բերել միանգամայն նոր իմաստ ու խորք՝ ձևավորելով մի տարրողունակ այլաբերություն՝ «Գարուն էր: Չեկած ամառ՝ **Փուլ եկավ** երկնականար: **Զյուն մաղեց** մեր բաց գլխին, **Զյուն մաղեց** կրակի պես»:

4.4.4.2. Շարահյուսական կառույցներ: Սրանք գեղարվեստական ստեղծագործությունների ոճավորման գործում առանձնակի դեր ունեն: Այստեղ, ըստ հեղինակների նախասիրության, կարող են էական դեր կատարել նախադասությունների ու բառակապակցությունների շրջուն շարադասությունը, միակազմ, անդեմ նախադասությունների, ճարտասանական դարձույթների, ընդհատված խոսքի և այլ լեզվական միջոցների գործածությունները: Ի դեպ, բայական անդեմ նախադասությունները, որպես կանոն, նպաստում են հերոսի հոգեվիճակի պատկերմանը: Մինչդեռ անվանական անդեմ նախադասությունները ավելի լայնածավալ պատկերներ կարող են կերտել, որոնք սովորաբար կամ լրացնում

են տվյալ դրվագում առկա գործողություններին, կամ հակադրվում: Օր.՝ Տերյանի բանաստեղծություններից մեկում նկարագրվում է մահապատժի տեսարան. որպես այդ դաժան իրողությունը սաստկացնող միջոց հեղինակը գործածել է անվանական անդեմ նախադասություն՝ «Լուսաբացին նա բարձրացավ կախաղան: **Արևածագ, օ՛, արշալույս արյունոտ**»: Անդեմ նախադասությունների տպավորիչ օրինակներով հարուստ է Տերյանի քնարերգությունը, ինչպես՝ «Եվ այն վալսը՝ «Անդարձ ժամանակ», Ծառուղին ամայի պուրակում, Եվ գիշեր, և համբույր, և լուսնյակ, Տաղտկալի, ծանծրալի պատմություն», «Մոռանալ, մոռանալ ամեն ինչ, Ամենին մոռանալ. Չսիրել, չխորհել, չափսոսալ – Հեռանալ...»:

Շարահյուսական ոճավորման նրբերանգները հատկապես տեսանելի են ոչ պատմողական բնույթի նախադասություններով կառույցներում: Բերենք մի քանի օրինակ՝ ա) **հարցական**՝ «Ինչ պիտի անի քեզ մի երեխա, Թեկուզ տեղովը հենց կրակ դառնա» (ՀԹ), «Ո՛վ ես դու, որ անգոր եմ քո դեմ» (ՎՏ), բ) **հրամայական**՝ «Եկեք, քույրեր, սեզ սարերի Չքնաղագեղ ոգիներ...» (ՀԹ), «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին...» (ՎՏ), գ) **բացականչական**՝ «Հեյ ջան, հայրենիք, ինչքան սիրուն ես...» (ԱԻ), «Ա՛խ, նորից մնաս բարով, Ա՛խ, նորից բարի ճամփա» (ՀՍ): Կարող են մեկ բարդ նախադասության մեջ միավորված լինել նշված հնչերանգային առանձնահատկություններով տարբեր նախադասություններ, ինչպես՝ «Հեյ-հեյ, լսեցեք, ծայն տվեք իրար, Ամենքդ եք արթուն, մարդ քնած չկա՛մ» (ԱԻ):

Իհարկե, գեղարվեստական լեզու ասելով՝ առաջին հերթին հասկանում ենք **պատկերավորման և արտահայտչական միջոցներով** հագեցած խոսք: Հնչյունական, բառային և քերականական ոճավորման բոլոր ձևերն էլ ի վերջո միայն նպաստում են պատկերի ձևավորմանը, խոսքին այլաբանական իմաստ հաղորդելուն, ասելիքը առավել հուզական, խորքային ու ներգործող դարձնելուն: Սակայն խոսքի պատկերավորություն ասելով՝ չպետք է հասկանալ արտահայտչամիջոցների աննպատակ կուտակումներ, որոնք չեն նպաստում ստեղծագործության գաղափարական և գեղագիտական նպատակադրումներին: Դեռևս Արիստոտելը գրում էր, որ «ոճի արժանիքը հստակությունն է»: Իսկ Ա. Պուշկինը անթաքույց հեզնանքով ծաղրում էր այն գրողներին, «որոնք, ցածր բան համարելով ամենասովորական բաները պարզ ձևով ասելը, կարծում են, թե լրացումներով և թառամած մետաֆորներով կաշխուժացնեն մանկամիտ արծակը: Այդ մարդիկ երբեք չեն ասի **բարեկամություն**՝ չավելացնելով՝ «սույն սրբազան զգացմունքը, որի վսեմ բոցը» ևն: Պետք է ասել՝ վաղ առավոտյան, իսկ նրանք գրում են «ծագող արևի առաջին ճառագայթները հագիվ էին լուսավորել կապուտակ երկնքի արևելյան եզրերը»։ Րհ, ինչպես նոր ու թարմ է այդ ամենը»¹⁰⁶:

Գեղարվեստական խոսքում այնքան որոշիչ է բառի կամ արտահայտության փոխաբերական գործածությունը, որ ռուս ոճաբան Ա. Վեսելովսկին գրում է. «Եթե ասեմ, որ մակդիրի պատմությունը բանաստեղծական ոճի պատմություն է՝ կրճատ հրատարակությամբ, ապա դա չափազանցություն չի լինի»¹⁰⁷:

¹⁰⁶ «Գրականության ներածություն: Քրեստոմատիա» (կազմ.՝ Էդ. Զրբաշյան), Եր., 1984, էջ 166:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 168:

Անշուշտ, այս ծնակերպման մեջ չափազանցված է մակդիրի դերը, որովհետև մակդիրը խոսքի փոխաբերացման միջոցներից մեկն է միայն, և հավանաբար Վեսելովսկին, մակդիր ասելով, այս դեպքում նկատի է ունեցել փոխաբերությունն ընդհանրապես:

4.4.5. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՈՃ ԿԱՄ ԽՈՍՔԱՐՎԵՍ: Մինչ այժմ խոսվեց գեղարվեստական լեզվի ընդհանուր օրինաչափությունների մասին, որոնց մի մասը բնորոշ է տարբեր լեզուներով գրված գրական երկերին: Սակայն յուրաքանչյուր արվեստագետ ունի իր գրելաոճը, իր խոսքային կառույցները: «Ինքնուրույն ոճ ստեղծել կարող է միայն իսկական տաղանդը: Գրականության մեջ ոճ ունենալը գեղարվեստական տաղանդի լավագույն գրավականն է»¹⁰⁸:

Որոշակի ընդհանրություններից բացի՝ կան օբյեկտիվորեն պարտադիր առանձնահատկություններ, որոնցով բնութագրվում են գրական տարբեր սեռերի ստեղծագործությունների լեզվաոճական իրողությունները: Օր.՝ քնարական սեռի երկերն ուսումնասիրելիս հստակորեն կարելի է նկատել տվյալ բանաստեղծի կողմից առավել հաճախ գործածված բառերը, դարձվածքները, ձևաբանական և շարահյուսական կառույցները, պատկերավորման միջոցներն ու այլևայլ հնարանքները: «Բանաստեղծները հետաքրքիր են նրանով, ինչով նրանք տարբերվում են իրարից, այլ ոչ թե նրանով, ինչով նրանք նման են իրար»¹⁰⁹: Իրոք, մեծ բանաստեղծների խոսքարվեստի յուրօրինակություններն այնքան ակնհայտ են, որ կարդալով կամ լսելով տակավին անծանոթ որևէ բանաստեղծություն՝ սովորաբար գուշակում ենք, թե ով է հեղինակը: Օր.՝ նկատելի է, որ Չարենցը կրկնության հնարանքին դիմելիս ամենից հաճախ նախընտրում է խոնարհված բայերի կրկնությունները: Օր.՝ «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում, Մեր հին սագի ողբանվազ լացակուրմած լարն եմ սիրում, Արևանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման, Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում», «Էլի գարուն կգա, Կբացվի վարդը, Սիրեկանը էլի յարին կմնա: Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը, Բլբուլի երգն էլի սարին կմնա: ...Գոգալը լաց կըլի, Կընկնի արցունքը – Գերեզմանիս մարմար քարին կմնա», «Եթե ուզեն՝ արևներին նոր տեմպ կտան ու նոր ուղի... Եթե ուզեն՝ արեգակներ կշարտեն երկինքն ի վեր. Եթե ուզեն՝ վա՛ր կբերեն երկինքներից արեգակներ...»:

Հանրահայտ է, որ գեղարվեստական խոսքի ոճավորման առանձնահատկությունները զգալիորեն պայմանավորված են նաև ստեղծագործության թեմատիկայով: Սակայն նույնիսկ տարբեր թեմաներով գրված երկերում որոշակիորեն դրսևորվում են տվյալ հեղինակի լեզվամտածողությունն ու ոճավորման այս կամ այն միջոցի հանդեպ նախասիրությունները: Չարենցի վերոհիշյալ ստեղծագործությունները թեմատիկ առումով ոչ մի ընդհանրություն չունեն: «Ես իմ անուշ Հայաստանի»-ն հայրենասիրական բանաստեղծություն է, «Էլի գարուն կգա»-ն՝ Սայաթ-Նովայի գուսանական երկերի նմանությամբ գրված խոհա-

¹⁰⁸ Էդ. Զրբաշյան, Գրականության տեսություն, Եր., 1967, էջ 400:

¹⁰⁹ А. Блок, Собрание сочинений, т. V, М., 1962, с.135.

փիլիսոփայական տաղ, «Ամբոխները խելագարված» պոեմը՝ ժողովրդական ըմբոստացած զանգվածների ընդվզման փոթորկաշունչ նկարագիր: Սակայն երեք (և բազմաթիվ) երկերում էլ առկա է չարենցյան խոսքարվեստի նշված առանձնահատկությունը:

Ակսել Բակունցն էլ քնարական նրբերանգներով հյուսված պատմվածքների շարահյուսական կառույցներում պատճառահետևանքային իմաստ պարունակող բարդ նախադասությունների դեպքում խուսափում է ստորադասական կառույցներից, երևույթ, որը բնորոշ է քնարական սեռի գործերին, որտեղ խոսքը չձանրաբեռնելու և բանաստեղծական ուղիքը չկոտրելու, այն առավել սահուն դարձնելու համար հաճախ պատճառի պարագա երկրորդական նախադասության փոխարեն իրար են հաջորդում **անշաղկապ** (շարահարական) կամ **և, ու** համադասական **շաղկապներով** կապակցված կառույցները: Օր.՝ «Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը», «Այդ աշնան հաջորդ ամառը Սոնան մեռավ երեխայի վրա, և լաց լացին նրա մայրը, ամուսինը, բարեկամները», «Այն կինը ծովափին երդումի խոսքեր ասաց, և աշխարհը թվաց լայնարձակ մի ծով, ու սիրտը ծովվեց ծովին» ևն: Եթե այս նախադասություններից որևէ մեկի մեջ պայմանականորեն ստորադասական շաղկապ ներմուծենք, գեղարվեստական խոսքը կգրկվի բնական ուղիքից ու կդառնա ճապաղ, բակունցյան խոսքարվեստին խորթ մի կառույց, օր.՝ «Քանի որ Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, այդ պատճառով բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ...»: Կամ՝ «Քանի որ այդ աշնան հաջորդ ամառը Սոնան մեռավ երեխայի վրա, այդ պատճառով լաց լացին նրա մայրը, ամուսինը, բարեկամները»:

Իհարկե, բանաստեղծական ոճը շատ հաճախ պայմանավորված է լեզվի զարգացման տվյալ փուլի յուրահատկություններով, տարբեր ստեղծագործությունների թեմատիկ, աշխարհայացքային և այլ հատկանիշներով: Սակայն նույնիսկ այս հատկանիշների ընդհանրությունների դեպքում որոշակիորեն ուրվագծվում են հանճարեղ բանաստեղծների խոսքարվեստի նրբերանգները: Այսպես, Շիրազի «Հայոց հրաշքը» և Սևակի «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն...» պոեմները տպագրվել են ոչ միայն հայոց լեզվի զարգացման նույն փուլում, այլև նույն՝ 1962 թ., երբ նշվում էր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Երկու պոեմներն էլ, ինչպես հայտնի է, նվիրված են հայ գրերի ստեղծողին, այսինքն՝ գրված են նույն թեմայով: Երկու պոեմներում էլ կան հատվածներ, որտեղ հեղինակների աշխարհայացքային ըմբռնումները բացարձակապես նույնն են, ավելին՝ նույն համեմատություններով ու փոխաբերություններով են բնութագրվում և՛ Մաշտոցը, և՛ հայոց գրերն ու նրանց դերը: Օր.՝ երկու բանաստեղծներն էլ մեսրոպյան գրերը համեմատում են ազգապահպան զորքի կամ զենքի հետ, իսկ նրանց արարողին՝ մեծ զորավարի:

Ամեն տառդ հայ ազգապահ մի զինվոր է անմեռական,
 Ամեն բառդ՝ հայոց մի գունդ, այբուբենդ՝ բանակն Հայկյան... (ՀԸ):
 Քանզի քեզնով հայ մնացինք, քանզի քեզնով ենք ազգանում,
 Քեզնով զինված էին հաղթում անթագակիր դարերն հայոց... (ՀԸ):
 Եվ մենք՝ նրանով միշտ զինավառված...

...Անվերջ կրելով զարկեր ու հարված...
...Հաղթեցինք դաժան ժամանակներին... (ՊՍ):

Ըստ էության գործ ունենք գրեթե նույն մտքերի բանաստեղծական ձևակերպման երկու տարբերակների հետ: Սակայն թեմայից բխող ընդհանրությունները չեն խանգարում զանազանելու երկու մեծ բանաստեղծների խոսքարվեստի նրբերանգները:

Նրանց մոտ տարբեր են և՛ բառընտրությունն ու բառաշինությունը, և՛ տաղաչափական կառույցները, և՛ հատկապես բանաստեղծական պատկերի շարահյուսական ռժավորման նրբերանգները: Եթե Շիրազի տողերում իշխում են պատկերավորման ճոխությունն ու հուզական հզոր լիցքը, որոնք նրա խոսքարվեստի գլխավոր յուրօրինակություններն են, ապա Սևակի տողերում գերակայում է համագործական բառերի տարողունակության մեծացման շնորհիվ խոսքին փիլիսոփայական խորք հաղորդելու մշտական նախասիրությունը:

Գրողների ոճի ինքնատիպությունը տեսանելի է հատկապես բնապատկերներ կերտելիս: Այստեղ առավել հստակ է երևում, թե տվյալ արվեստագետը որ արտահայտչամիջոցների զուգորդությամբ է նախընտրում հասնել իր գեղագիտական նպատակադրումներին: Հայաստանի գետերի՝ Դեբեդի և Բասուտա գետի նկարագրությունները հրաշալիորեն տրված են Թումանյանի և Բակունցի ստեղծագործություններում: Օր.՝ «Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը: Ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփոներ և կրծում քարե շղթաները» (ԱԲ): «Գալարվում է գիժ Դեբեդը մոլի, Խելազար թռչում քարերի գլխով, Փրփուր է թքում անզուսպ երախով Ու գոռում գիժ-գիժ՝ վա՜շ-վի՜շ, վա՜շ-վի՜շ» (ՀԹ): Բակունցյան շքեղ, հիրավի բանաստեղծական տողերում գերիշխում են պատկերավորման կարևորագույն միջոցներից **փոխաբերությունն** ու **համեմատությունը**, որոնցով ասես կենդանի շունչ է հաղորդվում լեռնաշխարհին: Սակայն Բակունցի ստեղծագործության մեջ բնության տարրերը անվանող իրանիշ գոյականները՝ **սար, ձոր, գետ**, սովորաբար մինչև վերջ չեն շնչավորվում, առավել ևս **չեն անձնավորվում**: Մինչդեռ թումանյանական տողերում **անձնավորումն** է հատկապես ապահովում բնապատկերի կատարելությունը:

Չափածո երկերի համեմատությամբ էապես տարբեր են արծակի (հատկապես ծավալուն ժանրերի) ռժական առանձնահատկությունները. դրանք ավելի բազմազան են, որովհետև հեղուների կերպավորման գործում կարևոր դեր ունի նաև նրանցից յուրաքանչյուրի խոսքի ռժական անհատականացումը: Եվ որքան շատ են ու տարբեր այդ հեղուները, այնքան մեծ ջանք է պահանջվում գրողից, որովհետև տարբեր բնավորություններ, կրթական մակարդակ ու աշխարհայացք ունեցող կամ սոցիալական տարբեր խավեր ներկայացնող հեղուներին հնարավոր չէ օժտել ո՛չ նույն բառապաշարով, ո՛չ էլ նույն խոսելաոճով: Բնականաբար, այս դեպքում գրողի խոսքարվեստի յուրօրինակությունները պայմանավորված են նաև իր հեղուներին ճիշտ «խոսեցնելու» հմտությամբ:

Ամփոփելով մեկ անգամ ևս նշենք, որ գեղարվեստական գրականության լեզուն գրական լեզվի տարբերակներից մեկն է, որի առանձնահատկությունների ամբողջությունը կոչվում է գեղարվեստական ոճ: Սակայն յուրաքանչյուր գրող ունի նաև

իր անհատական ոճը, որն իր հերթին նպաստում է գեղարվեստական գրականության լեզվի հարստացմանն ու զարգացմանը:

4.5. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԼԵՁՈՒՆ

4.5.1. Ընդհանուր հատկանիշներ (224): 4.5.2. Բառապաշար (225): 4.5.3. Քերականական հատկանիշներ (231): 4.5.3.1. Ձևաբանական առանձնահատկություններ (231): 4.5.3.2. Շարահյուսական առանձնահատկություններ (232): 4.5.4. Պարկերավորման և արտահայտչականության միջոցներ (234):

4.5.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏՎԱՆԻՇՆԵՐ: Զանգվածային լրատվամիջոցների նպատակն է որոշակի տեղեկատվությամբ ներազդել մարդկանց մտքի և զգացմունքների վրա, նրանց գործողություններին ցանկալի ընթացք տալ, հասարակական վերաբերմունք մշակել համազգային կարևորություն ունեցող խնդիրների նկատմամբ:

ԶԼՄ-ների հիմնական գործառույթներն են **հաղորդումը, քարոզչությունը, ներգործումը:** Լրատվամիջոցների լեզվի յուրահատկությունները ներկայացնելիս հարմար է ու ճիշտ առաջնորդվել ոճերի դասակարգման ժանրային սկզբունքով, քանի որ տարբեր ժանրեր դրսևորում են լեզվաոճական ընդգծված տարբերություններ: Այսպես՝ երբ խոսում ենք լրագրային ոճի մասին, նկատի ունենք դրա ժանրերի՝ առաջնորդող հոդվածի, հարցազրույցի, ակնարկի, ֆելիետոնի և այլնի ոճական հատկանիշները. դրանց մի մասում (ակնարկ, վերլուծություն) զգալի է լրագրողի անհատականությունը, մյուսները (լուր, հաշվետվություն) չեզոք են վերաբերմունքի արտահայտման տեսակետից:

ԶԼՄ-ների նպատակներն ու գործառույթները պայմանավորում են նրա ընդհանուր հատկանիշներն ու լեզվաոճական յուրահատկությունները: Դրանք են՝ 1. **Թեմայի հրատապությունը.** լուրը պետք է հաղորդել անմիջապես, որ լինի ուշագրավ: 2. **Հաղորդող և ներգործող լեզվատարրերի համատեղ գործածությունը.** զուգակցվում են լեզվի տեղեկատվական և հուզարտահայտչական միջոցները: 3. **Դրսևորման գրավոր և բանավոր կերպերը.** դրանք ընկած են ԶԼՄ-ների ենթաոճերի առանձնացման հիմքում: Ըստ այդմ՝ տարբերում են երկու ենթաոճեր՝ **պարբերական մամուլի և ռադիոհեռուստատեսության:** Սրանցից յուրաքանչյուրն ունի իր ոճական յուրահատկությունները: 4. **Հիմնականում մենախոսական բնույթը և չեզոքությունը.** առանձին դեպքերում (հարցազրույց, բանավեճ) առկա է երկխոսություն կամ բազմախոսություն: 5. **Լեզվական միջոցների տնտեսումը.** առավելագույն տեղեկույթի հաղորդում լեզվական ամենաքիչ միջոցներով: 6. **Մատչելիությունը.** գրել որքան հնարավոր է պարզ լեզվով (բայց ոչ պարզունակ. դա վնասում է խոսքի ճշգրտությանը): 7. **Գնահատողական լեզվատարրերի առկայությունը.** դա պայմանավորված է հասարակական շարժառիթներով: 8. **Գրական և խոսակցական իրողությունների համատեղ գործածությունը.** խոսակցական լեզվի ազդեցությունը զգալի է ռադիոհեռուստալեզվում և գեղարվեստական-հրապարակախոսական ժանրերում: 9. **Գործառական մյուս ոճերին բնորոշ լեզվատարրերի կիրառությունը:**

4.5.2. ԲԱՌԱՊԱՇԱՐ: ՁԼՄ-ների բառապաշարը ընդհանուր առմամբ գրական-գրքային է: Ըստ գործածության հաճախականության՝ տեղեկատվական ժանրերում առանձնացվում են բառապաշարի հետևյալ շերտերը՝ 1. լրատու կամ լրատվական բառեր, 2. գնահատողական վերաբերմունք արտահայտող բառեր, 3. գաղափարակիր բառեր, 4. մասնագիտական բառեր, 5. կայուն կապակցություն, կաղապար, դարձվածք, 6. համագործածական բառեր:

1. Լրատվական բառապաշարն առանձնացվում է ՁԼՄ-ների տեղեկատվական գործառույթին համապատասխան. գործածվում է լրատվական տարբեր ժանրերում. բաժանվում է իմաստային երկու խմբի. **ա)** տեղ, ժամանակ, կոչում, աստիճան, պաշտոն նշանակող բառեր, անձնանուններ, թվականներ. պատասխանում են **որտե՞ղ, ե՞րբ, ի՞նչ (ո՞վ)** հարցերին, չունեն գնահատողական երանգ, ոճականորեն չեզոք են, ստեղծում են տեղեկատվական յուրօրինակ միջավայր, **բ)** այսպես կոչված **շարքային** բառեր. եղելություն, գործողություն, շարժում ցույց տվող բառեր են, ասացական բայեր (**հայտնել, տեղեկացնել** ևն), որոնցով ստեղծվում են նաև կայուն բառակապակցություններ (ոչ դարձվածքային): Այս բառերի և կապակցությունների կիրառությամբ ՁԼՄ-ների լեզուն դառնում է միօրինակ. դրանցով արագ (օպերատիվ) և հեշտ կարելի է ձևակերպել յուրաքանչյուր տեղեկատվություն: Այլ կարգերի համեմատությամբ՝ շարքային բառերը առավել պայմանավորված են համատեքստով. դրանից դուրս դրանք չեն ընկալվում որպես լրատվական բառապաշարի միավորներ: Այսպես՝ **հարց** բառը «**ազգային հարց**» բառակապակցության մեջ ունի լրագրային-հրապարակախոսական երանգ, բայց առանձին գործածվելիս համագործածական է:

2. Գնահատողական բառաշերտ: Ըստ գնահատողության՝ կարելի է տարբերակել դրական և բացասական վերաբերմունք արտահայտող բառեր: Առաջինների մեջ շատ են նրանք, որոնք բառարաններում նշվում են որպես գրքային-հոետորական, բանաստեղծական, բայց ՁԼՄ-ներում ունեն հրապարակախոսական բնույթ, ինչպես՝ **ոգեշնչել, նախաձեռնել, համերաշխություն, վսեմ, վեհապանծ** ևն: Երկրորդները հաճախադեպ են վերլուծական նյութերում, օր.՝ խաբեության **փաստաբաններ**, ռասիստների **խեղկատակություն**, **անհեռատես** քաղաքականություն, **զավթիչ** գործողություններ ևն:

Բացասական գնահատում արտահայտող բառաշերտում որոշակի թիվ են կազմում **կենդանական աշխարհին վերաբերող** (հատկապես գիշատիչների) անունները՝ բիզնեսի մեծ և փոքր **շնածկներ**, **գայլի** օրենք, կամ «**Շնածկներին** պարտադրում են դուրս գալ ստվերից», «**Մանրածկները** փրկողակ են **շնածկների** համար»:

Անշուշտ, ՁԼՄ-ների բառապաշարի զարգացման կենդանի և բարդ գործընթացում այդ տարատեսակների սահմանները ոչ միշտ են հստակ:

3. Գաղափարակիր բառերը հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող հասկացությունների, տարբեր գաղափարախոսությունների անվանումներ են և հիմնականում գործածվում են տեղեկատվական ժանրերում, այսպես՝ **կուսակ-**

ցություն, կազմակերպություն, խորհրդարան, երկրապահ, դաշնակցություն են: Սրանք խոսքում կատարում են անվանողական դեր:

4. Մասնագիտական բառապաշարը ՁԼՄ-ների լեզվում ունի երկակի կիրառություն. **ա)** բուն՝ տերմինային նշանակությամբ, **բ)** փոխաբերական իմաստով (ոչ բոլորը), որն ունի ոճական նպատակադրում. խոսքին հաղորդվում է բազմազանություն, երբեմն ավելի է հարստանում նյութի բովանդակությունը: Օր.¹ **հիվանդ** հասարակարգ, **դոնոր** երկրներ, քաղաքական **դիմակահանդես**, **բեմ բարձրանալ** են: Այս երևույթը կոչվում է **բանաշրջում**. դա ոճական այն հնարանքն է, երբ մի իմաստային ոլորտի հասկացությունը արտահայտվում է իմաստային այլ ոլորտի հասկացությամբ: Մասնագիտական բառերի՝ փոխաբերական իմաստներով գործածությունը լրագրողից պահանջում է նուրբ լեզվազգացողություն, գեղագիտական ճաշակ. պետք է խուսափել չարաշահումից, որ նյութի ընկալումը չփվարանա:

5. Կայուն կապակցություն, կաղապար, դարձվածք: Առաջինը՝ որպես լեզվական պատրաստի միավոր, հաճախ է գործածվում մամուլի լեզվում, ունի անվանողական արժեք, այսպես՝ **«Հ Ազգային ժողով, Հայաստանի Հանրապետություն, ՌԴ Պետական դումա** են:

Կաղապարը կայունության միտող այնպիսի բառակապակցություն է, որի կիրառությունը ՁԼՄ-ների լեզվում անհրաժեշտ է: Լրատվական ժանրերում, որոնցում նպատակը լեզվական նվազագույն միջոցներով հնարավորին չափ հարուստ տեղեկույթ հաղորդելն է, կաղապարային արտահայտության գործածությունը դիտվում է լեզվական յուրահատկություն, ինչպես՝ «...մարզական լուրերին ձեզ կծանոթացնի...», «...մեր ստացած տեղեկությունների համաձայն...», «Լավատեսյակ աղբյուրները փոխանցում են...» են: Սրանցով արագ և սեղմ կարելի է հաղորդել ցանկացած տեղեկություն: Բացի այդ՝ կաղապարը նպաստում է հաղորդման արագ ընկալմանը:

ՁԼՄ-ների լեզվում **դարձվածքների** կիրառության հաճախականությունը պայմանավորված է ժանրով, նյութի բովանդակությամբ, ինչպես նաև լրագրողի վերաբերմունքով: Լրատվամիջոցներում դրանք կատարում են ոճական-արտահայտչական որոշակի դեր:

1. Խոսքին հաղորդում են անմիջականություն, մտերմիկ երանգ, օր.² «Մեր գործողություններով մենք **կրակի վրա յուղ ենք լցնում**», «Այդ կուսակցությունը **բոլորի գրպանին դիպչող** խնդիր էր ընտրել»:

2. Ասելիքը դարձնում են հակիրճ, պատկերավոր, օր.³ «Հասարակությունը **աչքը ջուր կտրած** սպասում է համաժողովրդական շարժման գործողություններին»:

3. Ստեղծում են բարձր կամ ցածր ոճ, օր.⁴ «Երկիրը հայտնվել է տնտեսական ծանր վիճակում, ու քաղաքական այդ գործիչը **դարձավ քավության նոխազ**», «Ինչպես եք վերաբերվում՝ **ճտերն աշնանը կիաշվեն** հայտարարությանը»:

4. Ընդգծում են լրագրողի վերաբերմունքը, ինչպես՝ «Մարդկանց վճարել են, ու սեփական ծնողներին էլ կծախեն հանուն դեսպանի շահերի», «Այդ երկրի արտգործնախարարը շատ է քիթը խոթում մեր գործերի մեջ»:

Լինելով ոճականորեն երանգավորված լեզվական միավորներ՝ դարձվածքները քիչ են հանդիպում տեղեկատվական ժանրերում, որոնք վերաբերմունքի արտահայտման տեսակետից չեզոք են:

Վերլուծական և գեղարվեստական–հրապարակախոսական ժանրերում դարձվածքները բազմազան են: Երևոյթներն ու իրադարձությունները գնահատելով ու վերլուծելով յուրովի՝ լրագրողը չի խուսափում համեմատություններից, իսկ սրանցում դարձվածքն անփոխարինելի դեր ունի, ինչպես՝ «Մենք կրիայի արագությամբ ենք գնում դեպի քաղաքակիրթ առևտուր», «Պատերազմի փառավոր հաղթանակին իր առյուծ տղերքին մատաղ բերած հզոր կուսակցությունը լուրջ հայտարարություն անելու ուժ չունեցավ»:

Ընթերցողի համար յուրօրինակ ուղեցույց է վերնագիրը, որով սրվում է հետաքրքրությունը, ուշադրությունը հրավիրվում հաղորդվող նյութի վրա: Ճիշտ ընտրված վերնագիրը նյութի բովանդակության խտացված անվանումն է, և դարձվածքով արտահայտվածը ուժեղացնում է ազդեցությունը ընթերցողի վրա, օր.՝ «Սիրտը պատգամավորներից չի կտրվում», «Երևանը վաճում է ձեռքերը»:

Լրատվամիջոցներով ոչ միայն տարածվում են լեզվում եղած դարձվածքները, այլև դրանց վերագրվում են նոր իմաստներ, կամ ստեղծվում են նորերը՝ քաղաքական, տնտեսական, մշակութային նորություններով և դրանց նկատմամբ լրագրողի ունեցած վերաբերմունքով պայմանավորված: Վերնագրերում և վերլուծական–հրապարակախոսական ժանրերում շատ են հանդիպում դարձվածքների փոփոխված տարբերակներ, այսպես՝ «Օֆշորային սկանդալը դեռ շատ ջուր կտանի», «Արջը երկրորդ երգը չսովորեց», «Ասա՛ ընկերդ ով է, ասեմ՝ ինչ վտանգներ են քեզ սպառնում»:

Համագործածական բառապաշարը, ինչպես գիտենք, չունի կիրառական սահմանափակում և ընդհանուր է լեզվի տարբերակային բոլոր ձևերի համար: ԶԼՄ–ների լեզվում (նաև խոսքի մյուս տեսակներում) սա բառապաշարի հիմքն է: Թեև այս բառերը ոճականորեն չեզոք են համարվում, բայց նկատելի է, որ սրանք խոսքային մակարդակում փոխաբերական իմաստով գործածվելիս կամ անսովոր բառազուգորդումներում դառնում են ոճականորեն երանգավորված միավորներ, այսպես՝ «Նրան բանտում մի լավ մշակեցին», «Չար քարոզչությունը շարունակվում է» ևն:

Հասարակաբանությունների, բարբառային և ժարգոնային բառերի հաճախակի կիրառություն վերջին շրջանում նկատելի է հատկապես ռադիոհեռուստատեսային հաղորդումներում և լրագրային որոշ ժանրերում (ոչ տեղեկատվական)՝ պայմանավորված խոսքին անմիջականություն հաղորդելու նկատառումով: Ի տարբերություն գավառաբանությունների («թագա օրենք», «Ես քո հոջիր, ես քո նանն եմ, ես՝ աջակցման հիմնադրամ») և ժարգոնային բառերի (դաբրո տալ), որոնք ունեն կիրառական ինչ–ինչ սահմանափակումներ և հակադրվում են գրական լեզվի նորմին՝ հասարակաբանություններն ունեն

ընդհանրական նշանակություն և կիրառություն, օր.՝ «Մենակ է բիզնեսն ու չունի ընկեր. արդեն համարյա լրիվ **տակ տված յուր է գնում**», «Հանրահավաքի բազմամարդությունը և ելույթներն այնքան **են խոթում** հանրության աչքը, որ արդեն մարդկանց **գահլան գնում է**»:

Ինչքան էլ որ հեշտ է դրանցով ոճավորել խոսքը կամ վերաբերմունք արտահայտել, այդուհանդերձ լրագրողը նշված բառաշերտերից պետք է օգտվի զգուշությամբ, դրանք ծառայեցնի ոճական նպատակների (կերպարի տիպականացում, միջավայրի ստեղծում) և չխաթարի նյութի ոճական բովանդակությունը:

Խոսքը ոճականորեն ճիշտ կառուցելու համար նախընտրելի են բարբառային և ժարգոնային այն բառերն ու արտահայտությունները, որոնց գրական համարժեքները չկան, կամ եղածները ամբողջ խորությամբ չեն արտահայտում հասկացությունը, այսպես՝ **փոշմանել, խաթր, զոռբայություն, դուխով** ևն: Բայց անթույլատրելի է ոճականորեն չպատճառաբանված գործածությունը, ինչպես՝ «Ցանկացած զուռնադիոլային գործարք, մարդկանց ֆռռացնելու ցանկացած փորձ նորից կբերեն աղետալի զարգացումների»:

ԶԼՄ-ների լեզվում չպետք է բացառել ժարգոնի կիրառությունը այն դեպքերում, երբ դա խոսքի տիպականացման, երգիծական վերաբերմունքի արտահայտման և խոսքին դիպուկություն հաղորդելու նպատակներ ունի, ինչպես՝ «Այդ պարտքի առյուծի բաժինը գոյացել է այստեղից-այնտեղից վարկեր **կպցնելու** հիվանդագին մոլուցքի պատճառով»: Ժարգոնի կիրառությունը չարաշահվում է հատկապես ընդդիմադիր մամուլում. խոսքը հաճախ դառնում է հակազեղազիտական: Նկատելի է վտանգավոր մի երևույթ. ժարգոնը որոշ թերթերում ու ժանրերում դառնում է լրագրողի վերաբերմունքի արտահայտման հիմնական միջոց. դա սկզբունքորեն մերժելի է:

ԶԼՄ-ներում լայն կիրառություն ունեն **փոխառությունները**, հատկապես փոխառյալ նորաբանությունները: Լեզու նոր մուտք գործած այս կարգի բառերը կիրառելիս լրագրողը պետք է հաշվի առնի լսարանը (մասնագիտական և ոչ մասնագիտական)՝ ընտրելով առավել հայտնի տարբերակը: Նույն ձևով պետք է վարվել նաև այն դեպքում, երբ հայերենը իր բառակազմական միջոցներով է ստեղծում նոր բառ՝ օտար բառի փոխարեն, օր.՝ **կուրատոր** (խնամարկու, համակարգող, հոգաբարձու), **ստատուս** (կարգավիճակ), **լոզունգ** (կարգախոս), **մենթալիտետ** (մտածելակերպ, հոգեկերտվածք) ևն:

Զանգվածային լրատվամիջոցների լեզուն հեղեղված է **օտարաբանությունների** բոլոր տեսակներով (արտասանական, բառային, իմաստային և քերականական): Ի տարբերություն բառային օտարաբանությունների, որոնց հարցը համեմատաբար հեշտ լուծելի է (**կազինո, պադլալ, միտինգ, բանդա**)՝ քերականական օտարաբանությունները անհարկոր են մեր ազգային լեզվամտածողությանը, խարխուլ են լեզվի քերականական կառուցվածքը, ինչպես՝ «Գնդապետն **իր մոտ է**», «Տոնախմբությունը կենտրոնական **հրապարակի վրա է կայանում**»: Նման արտացոլների կիրառությունը անթույլատրելի է, քանի որ մարդիկ հեշտությամբ չհորինակում են դրանք, զանգվածային դարձնում դրանց գործածությունը՝ ստելով լեզվի մաքրությանը:

Օտարաբանությունները և փոխառությունները ՋԼՄ-ների լեզվում ունեն գործածության հետևյալ յուրահատկությունները.

1. Բնութագրում են խոսակցին կամ հերոսին: Հաճախ լրագրողները միտումնավոր պահպանում են զրուցակցի խոսքը (առանց խմբագրման)՝ նրա լեզվական մակարդակը հենց իր խոսքի միջոցով ներկայացնելով հանրությանը, ինչպես՝ «Աշխարհում ինչքան **նեզաբուդկայով լոգոտիպ** կա, ուսումնասիրել ենք, ոչ մի նման **լոգոտիպ ադնազնաչնո**» (ռուսախոս արվեստագետի հետ հարցազրույցից):

2. Նպաստում են միտքը ճշգրիտ ձևակերպելուն, օր.՝ «Այս դեպքում պետությունն իր վրա է վերցնում **ալիմենտի** վճարումը», «Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցությունը տեղի է ունենալու Ղարաբաղի ներկայիս **ստատուս-քվոյի** պահպանմամբ»:

3. Արտահայտում են որոշակի վերաբերմունք, օր.՝ լրագրողներից մեկը «վերևների և ներքևների» հակադրությունը ընդգծում է օտար բառի հետևյալ կիրառությամբ. «Նրան երևի թվում է, թե ողջ Հայաստանն է այդպես ապրում. անընդհատ խմում են իր կենացը, պարում ու սպասում հաջորդ **գարյաչիին**», կամ՝ «Ո՛հ, այս անգամ այդ հանդեսն իր աղջկան պատկանող **կլուբում** չէր կազմակերպել»:

Հնաբանությունները ՋԼՄ-ների տարբեր ենթաոճերում ու ժանրերում գործածության տարբեր հաճախականություն ունեն, ոճական գունավորումը նույնպես տարբեր է: Եթե լրագրողի ասելիքը վերաբերում է անցյալին, ապա սրանք ստեղծում են բնականության պատրանք, օր.՝ **քանզի, վասն, լուսո, հուսո, թագավորաց, ցայսօր** ևն (օրինակները ընտրված են հոգևոր բովանդակություն ունեցող հաղորդաշարից): Տեղեկատվական ժանրերում առավել տարածված են գրաբարյան նախդիրներով կապակցությունները (**ի, առ, ց**), որոնք խոսքին հաղորդում են հանդիսավորություն, վեհություն, ընդգծում են պաշտոնականությունը, ինչպես՝ «**Ի պատասխան** մեր խնդրանքի՝ նախարարը միայն բազմանշանակ ժպտաց», «**Ի թիվս** այլ հարցերի՝ բանախոսը անդրադարձավ նաև արտաքին քաղաքականության մի շարք խնդիրների»:

Վերլուծական և գեղարվեստական-հրապարակախոսական ժանրերում հնաբանությունները (իրենց ենթատեսակներով) կարող են ոճական նաև այլ կիրառություններ ունենալ. 1. Պատկերավոր են դարձնում ասելիքը, օր.՝ «Դա համահունչ էր **կորուսյալ** հայրենիքի պատկերին», «Նրա քիմքին **հաճո** չեն մեր հրապարակումները»: 2. Արտահայտում են հեզնական կամ երգիծական վերաբերմունք. «Վաղուց մարդկանց աչքն է ծակում այդ կուսակցության **նորին մեծություն** նախագահի հսկայական նկարով պաստառը»: 3. Գործածվում են որպես վերնագիր. «Ո՛չ միայն հացիվ կեցի՜ր», «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման», «Դարձ ի շրջանս յուր»:

Նորաբանությունների տարբեր ենթաշերտեր (փոխառյալ նորաբանությունների մասին արդեն խոսվել է) ամենից առաջ գործածվում են պարբերական մամուլում, ռադիոհեռուստալեզվում և հենց դրանց միջոցով էլ տարածվում են. մի մասը

ընդհանրանալուց հետո անցնում է գրական լեզվի բառապաշար և դադարում նորաբանություն լինելուց:

Նոր առարկաներն ու երևույթներն անվանող նորաբանությունները բուն հրապարակախոսական ժանրերի անբաժան ուղեկիցներն են (**զագաթաժողով, վեհաժողով, խոսնակ, առանձնագրույց, ճեպագրույց** ևն), իսկ այն ժանրերը, որոնցում լրագրողն ազատ է իր վերաբերմունքն արտահայտելիս, հարուստ են հատկապես **հեղինակային** (տարածվելու միտում ունեցող և դիպվածային) նորաբանություններով: ՉԼՄ-ներում արտահայտչական ուժեղ երանգավորում ունեն հենց վերջինները, որոնց ստեղծման գործում կարևոր են լրագրողի ոչ միայն ճաշակը, այլև խոսքային իրադրությունը, հրատապ հարցերին արձագանքելու կարողությունը, այսպես՝ «Սա արդյոք յուրատեսակ **ազգաթալան** չէ», «Առաջիկայում սպասենք **առնետավազքի**», «Հայրենակիցները **վայրենակիցների** վերածվելու հակում ունեն»:

Դիպվածային բառերը սրում են ասելիքը, բովանդակության առանցքային հարցերի վրա հրավիրում ընթերցողի կամ ունկնդրի ուշադրությունը, արտահայտում են լրագրողի վերաբերմունքը (հեզնական կամ երգիծական), օր.[՝] **չընտրություն, բարեփողիչ (բարեփոխիչ-ի նմանությամբ), չհարց, մտաբորիկ** ևն: Անհատական նորաբանությունները կարևոր դեր ունեն նաև խոսքի սեղմության, լեզվի մեջ գործող **խնայողության սկզբունքի** դրսևորման առումով. հատկանիշներ, որոնք շատ կարևոր են հրապարակախոսության մեջ՝ **գրանտակեր, օֆշորահարված, գովազդախեղդ** ևն:

ՉԼՄ-ներում հաճախադեպ է իմաստային նորաբանությունների գործածությունը. բառը կիրառվում է անցյալում չունեցած, նոր իմաստով, օր.[՝] ֆինանսական **հոսք**, բանկային **խողովակ**, ֆինանսական **բուրգ**, հարկային **արծակուրդ**, փաստաթղթերի **փաթեթ**, **թափանցիկ** ընտրություն ևն:

Լրագրային խոսքում խնայողության և սեղմության միջոց են նաև **հապավումները**, որոնք լրատվական որոշ ժանրերում ամենաշատ գործածվող բառերից են:

Բառերի ձևաիմաստային խմբերից (հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն) լրագրողը, ըստ ասելիքի և վերաբերմունքի, ընտրում է. 1. հուզական թույլ կամ ուժեղ երանգավորում ունեցող զուգահեռը (**խոսել-բարբառել, վերջ-վախճան**), 2. գրական կամ խոսակցական, համագործածական կամ գրքային տարբերակը (**բթամիտ-անխելք-իմաստակ**), 3. հնաբանությունը կամ ժամանակակից լեզվում եղած բառաձևը (**հուսո-հույսի, Աստծո-Աստծու, տիկնայք-տիկիններ, պարոնայք-պարոններ**):

Տեղեկատվական ժանրերում զուգաձևերից ընտրվում են հատկապես գրական-գրքայինները, իսկ մյուս ժանրերում բառընտրությունը պայմանավորված է մեծ մասամբ անհատական գործոններով:

Հականիշներով, ինչպես գիտենք, ստեղծվում են ոճական բազմաթիվ հնարանքներ՝ հակադրույթ, օքսիմորոն, պարադոքս, շրջում ևն: Հակադրությամբ կազմված խոսքը հուզական է, հետաքրքիր ու իմաստալից: Արտահայտման այս ձևը բնորոշ է վերնագրերին, ինչպես՝ «**Ծանոթ, անծանոթ** ձեռագիր», «**Լուրջ**

ապուշություն», «Արևմուտքը ո՛չ թշնամի է, ո՛չ բարեկամ», «Ազնավուրը և Էրդողանի թանկարժեք ու էժան քաղաքականությունը»: Գեղարվեստական-հրապարակախոսական և վերլուծական ժանրերում հականիշները խոսքը տպավորիչ դարձնելու միջոց են, օր.¹ **«Վերևում մեծերը կոպում են, իսկ ներքևում մենք պիտի սպասենք, թե ինչ կընկնի մեզ վրա՝ մե՛ծ բեկոր, թե՛ փոքր», «Մեզ անհրաժեշտ է ոչ թե ցատկ դեպի անցյալ, այլ թոփչք դեպի ապագա»:**

Համանուններն ու հարանունները լրագրային որոշ ժանրերում բառախաղի ստեղծման միջոց են. հաճախ գործածվում են **վերնագրերում**, օր.¹ **«Երբ ապաստարանը չի դառնում ապաստան», «Ամենուրեք ներս մտնելով անարգել՝ նա կարող է ազնիվ մարդկանց անարգել»:**

Հարանունների իմաստային տարբերություններն անտեսելու կամ բառիմաստը սխալ ընկալելու պատճառով լրատվամիջոցների լեզվում հաճախ է խախտվում բառային նորմը, ինչպես՝ **«Մայիսի 9-ին ազատեցինք»** (←ազատագրեցինք) **Շուշին», «Ցեղական շները ի պաշտոնե»** (←պաշտոնապես) **պաշտպանված են», «Թեկնածուն անհրաժեշտ թվով ծայներ չհավաքեց** (←չստացավ)», **«մոտակա** (←առաջիկա) նիստը»:

4.5.3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ: Գրական արևելահայերենի քերականական օրինաչափությունները ընդհանուր առմամբ պահպանվում են ՋԼՄ-ների լեզվում: Խոսքի ճշտությունը, միանշանակ ընկալումն ապահովելու նպատակով տեղեկատվական ժանրերում քերականական նորմերի պահպանումը պարտադիր է, մյուս ժանրերում (համանիշ տարբերակների առկայության դեպքում) ընտրությունը պայմանավորված է լրագրողի անհատականությամբ: Գրական-խոսակցական-բարբառային-գրաբարյան զուգաձևերից գրականը չեզոք է, հետևաբար դա այն ժանրերի լեզվական հիմքն է, որոնք վերաբերմունքի արտահայտման տեսակետից չեզոք են:

4.5.3.1. Ձևաբանական առանձնահատկություններ: Ձևաբանական իրողություններից ոճական գործածության հաճախականությամբ աչքի են ընկնում խոսակցական տարբերակները. դրանք խոսքը դարձնում են անմիջական, մտերմիկ: Այդպիսիք են, օրինակ, առօրյա խոսքին բնորոշ հոգնակիի ձևերը, որոնք (մեծ մասամբ անուղղակիորեն) հատուկ են ժողովրդական լեզվամտածողությանը. **«Ինչ փառավոր տղերք կային մեր կողքին»:**

Հոլովական և խոնարհման խոսակցական և բարբառային տարբերակներ հանդիպում են հատկապես բարբառախոս հեղուների խոսքում (հարցազրույցի, ռեպորտաժի, ակնարկի ժանրերում): Դրանց միջոցով տիպականացվում է կերպարի խոսքը, ինչպես՝ **«Տիրոջ հոգեբանություն պտի ունենաք, տենց պտի մեծանաք, դաստիարակվեք: Քննադատեք էն վախտ, երբ որ ձեզ խանգարում են, երբ որ գործ եք անում, իսկ եթե գործ չեք անում ու որևէ մեկին՝ աշխատողին, քննադատում եք, դա արդեն ճիշտ չի»:**

Գրական-գրաբարյան քերականական զուգաձևերը հաճախ են գործածվում տեղեկատվական ժանրերում՝ ստեղծելով հանդիսավոր ոճ, օր.¹ **«Քաղաքական**

գործիչը կոչ է անում իր գործընկերներին չլսել **այլոց** խորհուրդները», «Արտաքին **գործոց** նախարարը հայտարարեց», «**Հրապարակավ** ելույթ ունեցողները հերքեցին այդ լուրերը»: Գեղարվեստական-հրապարակախոսական և վերլուծական ժանրերում դրանք վերաբերմունքի արտահայտման միջոց են, ինչպես՝ «Նրանց **ծեռամբ** այդ հարցը անընդհատ մտցվում է օրակարգ», «Քաղաքական դաշտը վերածվել է **հաճախորդաց** տան»:

ԶԼՄ-ներում խոսքը հիմնականում կառուցվում է **սահմանական եղանակի** ժամանակաձևերով, որոնք իրողությունը, փաստը արձանագրելու, ներկայացնելու ոճականորեն չեզոք միջոցներ են՝ ի տարբերություն մյուս եղանակների, որոնք սուբյեկտիվ վերաբերմունք են արտահայտում, այսպես՝ «Սոցիալացումները **վկայում են**, որ Հայաստանի բնակչության մեծ մասը Սովետական Միության փլուզումը **գնահատում է** բացասական», «Նախօրեին Հայաստանը **տոնում էր** Հայաստանի առաջին Հանրապետության օրը»:

Լրատվական ժանրերի լեզվին բնորոշ է կրավորաձև կառույցների կիրառությունը, օր.՝ «Հարցումներով **պարզվել է**, որ բնակիչների մեծ մասը նրա հանդեպ դրական վերաբերմունք ունի», «**Շարունակվում են** սահմանադրական բարեփոխումները»:

Վերջին շրջանում մամուլի լեզվում նկատվում է մի քանի կապական բառերի գործածության աշխուժացում (որոշ դեպքերում ռուսերենի ազդեցությամբ), այսպես՝ «Քննարկումների **արդյունքում** թերևս գործելու է կանխատեսված տարբերակը», «Վաշինգտոնը այս **ուղղությամբ** քայլեր դեռ կիրականացնի», «ԱՄՆ **աջակցությամբ** արվում են կոնկրետ քայլեր»: Հանդիպում են նաև **ուղղությամբ, արդյունքում** կապական բառերի սխալ կիրառություններ, օր.՝ «Այժմ աշխատանքներ են տարվում (←կատարվում) ուղևորափոխադրման ծախսերն օպտիմալացնելու **ուղղությամբ** (←համար)», «ԼՂՀ իրավապահ մարմինների իրականացրած **նախաքննության արդյունքում** (←նախաքննությամբ) պարզվել է, որ սպանությունը կատարվել է աղբբեջանական դիվերսիոն խմբի կողմից»:

4.5.3.2. Շարահյուսական առանձնահատկություններ: ԶԼՄ-ների շարահյուսական կառուցվածքը նորմատիվ է, շարադասությունը՝ կանոնական. առանձին ժանրերում, սակայն, ոճական նկատառումներով կարող է խախտվել գրական նորմը:

Ինչպես լեզվի գործառական յուրաքանչյուր ոլորտ, այնպես էլ ԶԼՄ-ները, ունեն իրենց **հատուկ կապակցությունները** (հատկապես տեղեկատվական և վերլուծական ժանրերում), որոնք նպաստում են խոսքային յուրահատկությունների ձևավորմանը: Դրանց մի մասը ժամանակի ընթացքում կարող է վերածվել կայուն կապակցությունների: Թերթերից մեկի միայն մեկ առաջնորդողում գործածվել են տասից ավելի այդպիսի կապակցություններ՝ **հակամարտող կուսակցություններ, պառլամենտական համակարգ, գործադիր իշխանություն, քաղաքական գործընթաց, հասարակական ինստիտուտ** ևն:

Բառերի **փոխաբերական կապակցությունները** վերաբերմունքի արտահայտման միջոց են վերլուծական հոդվածներում, գեղարվեստական-հրապարակա-

խոսական ժանրերում, օր.՝ **հերոստրատյան ռազմավարություն, ստվերային քայլեր**, կամ՝ «Ֆինանսական փաստաթղթի քննարկումները քաղաքական շոուի ու պոպուլիզմի շքահանդեսի վերածել իսկապես չարժե»:

Նախադասությունների տեսակներն ունեն խոսքը ռճավորելու տարատեսակ հնարավորություններ: ՁԼՄ-ների լեզվում դրանց կիրառական հաճախականությունը տարբեր է՝ պայմանավորված այս ոլորտի հիմնական հատկանիշներով, հատկապես ժանրային բազմազանությամբ: Այսպես՝ քանի որ լուրը կառուցվում է վեց հիմնական հարցերի պատասխաններով (հվ, ինչ, որտեղ, երբ, ինչպես, ինչո՞ւ), ուստի հասկանալի է, որ նյութի լեզվական ձևավորումը կատարվում է առաջին հերթին **երկկազմ** (ենթակա + ստորոգյալ) պատմողական նախադասություններով, որոնք տեղեկատվական ժանրերի լեզվական հիմքն են: Հարցերից ենթադրվում է նաև, որ երկկազմ նախադասության մեջ քերականորեն առանձնանում են տեղի, ժամանակի, ձևի, պատճառի պարագաները, որոնց շարադասությունը (նաև ենթակայի ու ստորոգյալի) կարող է փոխվել՝ պայմանավորված նրանով, թե ինչի (կամ ում) վրա է հրավիրվում ունկնդրի կամ ընթերցողի ուշադրությունը, ինչպես՝ «Ուկրաինայի և Վրաստանի կողմից ԵՄ ասոցացման համաձայնագրերի ստորագրման առթիվ հուլիսի 7-ին Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավարը, Վրաստանի և Ուկրաինայի դեսպանները ընդունելություն էին կազմակերպել»:

Ընդհանուր առմամբ, լրատվության մեջ գերակշռում են **բարդ նախադասությունները**, որոնք եղելությունը, դեպքը արձանագրելու հիմնական միջոցներ են: Երկրորդական նախադասությունը գլխավորին մեծ մասամբ կապվում է պատճառի, հետևանքի, նպատակի շաղկապներով կամ շաղկապական բառերով (անշաղկապությունը լրատվությանը բնորոշ չէ): Հաճախ են կիրառվում «**Պարզվում է, որ...**», «**Ակնհայտ է, որ...**», «**Հնարավոր է, որ...**», «**Նշվել է, որ...**» գլխավոր բաղադրիչ ունեցող բարդ ստորադասական նախադասությունների կաղապարներ:

Դերբայական դարձվածով կառույցները, հատկապես անորոշ դերբայի գործիական հոլովով կազմվածները, խոսքը դարձնում են սեղմ, տարողունակ, ինչպես՝ «Մեկնաբանելով կատարվածը...», «Վստահեցնելով, որ հարցի լուծումը չեն ուշացնի...», «Այս ամենը համադրելով՝ կարող ենք արձանագրել...» ևն:

Պարզ և բարդ համադասական նախադասությունները հաճախադեպ են նկարագրություններում, հուզական խոսքում. «Ոմանք զարմանում են. իսկ ո՞ր է մեր ճարտարապետությունը: Ո՞ր են ճարտարապետության հանճարները: Ամեն ինչ շատ պարզ է. վերածվել են արհեստավորների»:

Ի տարբերություն լուրի՝ ռեպորտաժում առաջին պլան է մղվում երևույթի անձնավորված ընկալումը: Լրագրողը նաև մեջքերում է մասնակցի (կամ մասնակիցների) խոսքը, այսինքն՝ դեպքի նկարագրությանը զուգահեռ՝ կա ականատեսի խոսքը անհատականացնելու խնդիր: Սա նշանակում է, որ ռեպորտաժում պիտի օգտագործել վերաբերմունք արտահայտող շարահյուսական միջոցներ՝ զեղչված անդամներով կառույցներ, միակազմ նախադասություններ, ճարտասանական հարցեր, կրկնության տարբեր տեսակներ, անշաղկապություն ևն: Օր.

«Եթե Դուք լինեիք իմ փոխարեն, ինչ կպատասխանեիք... Մենք նման խնդիր չունենք, դուք երբևէ տեսել եք՝ մենք նման խնդիր դնենք: Ինչ եք ուզում. ես իրենց տեղը ցուցմունք տամ, ինչ ասեմ: Այսինքն՝ դուք կարծում եք, որ այդ մարդիկ իրենց սեփական մտածողությունը չունեն, որ նման քվեարկության չմնային...»: Ռեպորտաժում մեծ տեղ է տրվում ուրիշի խոսքին: Սա արվում է ռեպորտաժի հավաստիությունն ապահովելու համար:

Ձեռչված անդամներով նախադասությունները հաճախ են գործածվում որպես վերնագիր, օր.՝ «Աշխատատեղեր՝ ազատամարտիկներին, ռազմամարտական կրթություն՝ երիտասարդներին», «Հանրահավաքից՝ ոստիկանություն» ևն: Նշված կառույցները գրավում են ընթերցողի ուշադրությունը: **Քուն հարցական** նախադասություններում հարցերը սովորաբար ձևակերպվում են հետևյալ կաղապարային արտահայտություններով՝ **հավատո՞ւմ եք, բացառո՞ւմ եք, վստա՞հ եք, կարծո՞ւմ եք, հնարավո՞ր է** ևն: Հարցական նախադասությունները ձևավորվում են մեծ մասամբ հարցական դերանուններով, օր.՝ «Ի՞նչ կասեք այս մասին», «Ձեր կարծիքով, ի՞նչ տեղի ունեցավ, ինչպիսի՞ք են լինելու տեղի ունեցածի քաղաքական հետևանքները»: Հարցումն իրենց վրա կրելու դեպքում բայական կամ գոյականական անդամները շեշտվում են նաև տրամաբանորեն. ուշադրությունը հրավիրվում է վերջիններիս վրա, օր.՝ «Գուցե դրա համար կոնկրետ քայլե՞ր են հարկավոր», «Հաջողվե՞ց արդյոք ձեզ ներկայացնել հայկական կողմերի դիրքորոշումը»: Շարադասական փոփոխությամբ երբեմն տրվում է կարևոր հարցի պատասխանը լուրում:

Հաճախադեպ են բուն հարցական և ճարտասանական հարցական նախադասություններով արտահայտված վերնագրերը, որոնք լարվածություն են ստեղծում, մեծացնում հետաքրքրությունը, ինչպես՝ «Անհատի պաշտամունք ՌԴ-ում», «Մարզպետի նկարը մոնտաժված է», «Նրա օրինակը կտարածվի մյուսների վրա», «Սոչիի հանդիպումը չի թուլացնի լարվածությունը» ևն:

Անենթակա նախադասություններով շեշտվում է գործողության իմաստը. «Պարտադրում են ժողովրդին», «Ձերբակալվածներին ինչ-որ տեղ տարան»: Դրանք խոսքին հաղորդում են դինամիզմ. գործածական են նաև տեղեկատվական նյութերում, ինչպես՝ «Կիևից հաղորդում են», «Դամասկոսից փոխանցում են» ևն: Հատկապես արդյունավետ է սրանց կիրառությունը վերնագրերում, օր.՝ «Որտե՞ղ են լվանում փողերը», «Նրան ձերբակալել են օդանավակայանում»:

Անդեմ նախադասությունները խոսքին հաղորդում են սեղմություն և հուզականություն. դարձյալ հաճախ են հանդիպում վերնագրերում, օր.՝ «Հանգվածների ոգևորությունը», «Ո՞ւմ հավատալ», «Ինչպե՞ս պարտվել «Եվրատեսիլ»-ում», «Ո՞ր հեծանիվն ընտրել»: Երկարաշունչ վերնագրերը կարող են ծանծրացնել ընթերցողին:

4.5.4. ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ: Ինչպես արդեն նշել ենք, ՁԼՄ-ներում կարևորվում են լեզվի թե՛ հաղորդման, թե՛ ներգործման գործառնությունները: Սա նշանակում է, որ պահպանելով նյութի հավաստիությունը, հրատապ լինելը՝ լրագրողը կարող է օգտվել գեղարվեստա-

կան ամենատարբեր հնարանքներից: Ասվածը չի կարող վերաբերել բոլոր ժանրերին հավասարապես, քանի որ, ինչպես գիտենք, լրատվական ժանրերը վերաբերմունքի արտահայտման տեսակետից չեզոք են (բացառությամբ ռեպորտաժի և հարցազրույցի):

Պատկերավորությունը **գեղարվեստական–հրապարակախոսական** ժանրերի հատկանիշ է: Սրանցում (մասնավորապես ակնարկում) որոշիչը կերպարի առկայությունն է, իսկ փաստերի վերլուծությունը երկրորդական պլանում է: Լրագրողի խնդիրն է մասնավորի միջոցով ընդհանուրի վերհանումը: Փաստացի նյութից ստեղծվում է պատկեր, իրականության պատկերավոր արտացոլմամբ բացահայտվում է հատկանշականը:

Ոճական հնարանքների կիրառությամբ աչքի են ընկնում նաև **վերլուծական–հրապարակախոսական** ժանրերը. լրագրողի նպատակն է վերլուծել, օգնել ընթերցողին, որ նա հասկանա փաստերը: Հաջողության հասնելու համար պետք է դիմել արտահայտչական և պատկերավորման միջոցների օգնությանը: Առավել գործածական են **մակդիրը, փոխաբերությունը, համեմատությունը, փոխանունությունը, շրջասույթը**: Դրանցից յուրաքանչյուրը կատարում է արտահայտչական որոշակի դեր:

Մակդիր: 1. Երևույթը, իրողությունը ներկայացնում են նոր ու անսովոր նրբերանգներով: Մակդիրների այդպիսի կիրառությամբ հարուստ են քաղաքական թեմայով գրված վերլուծական հոդվածները, այսպես՝ **ժամկետանց** գաղափարներ, **կոշտ** քաղաքականություն, **կարծի** դիրքորոշում, **գունավոր** հեղափոխություն ևն: Սրանք պատկերացում են տալիս նաև այն մասին, թե քաղաքական կյանքում կատարվող իրադարձությունները, փոփոխությունները ինչպիսի արձագանք են գտնում հասարակության մեջ:

2. Կարևոր դեր են կատարում խոսքի խնայողության առումով: Լեզվական սեղմ ձևերի փնտրտուքը ժամանակակից ժուռնալիստիկայի առաջնահերթ խնդիրներից է: Նկատելի է, որ լրագրողները արտահայտման հակիրճ ձևերի մեջ մեծ տեղ են տալիս հենց մակդիրներին. դրանք հաճախ իմաստային այնպիսի խտացումներ են, որոնց բովանդակությունը վերարտադրելու համար բավարար չեն ոչ միայն բառակապակցությունը, այլև նախադասությունը, օր.՝ **փոշիացած** ընտրագանգված, **բազմագույն** կուսակցություն, **հերոստրատյան** ռազմավարություն ևն:

3. Արտահայտում են լրագրողի հեգնական կամ երգիծական վերաբերմունքը, այսպես՝ խուճուճ ասուլիս, ամենափրկիչ խոսնակ, քաղաքական թոշակառու ևն:

Փոխաբերություն և համեմատություն: 1. Արտահայտում են ընդգծված **հեգնանք**. «Այդ կուսակցության փետրվարի 5–ի խորհրդաժողովը կարելի է համարել գարնանային արշավի յուրօրինակ հրետանային նախապատրաստություն, իսկ հնչելը հրետանազարկի հետևում թաքնված է քաղաքական սնանկությունը»:

2. Հաճախ դառնում են քաղաքական երգիծանքի միջոց. օր.՝ «Նախագահական հանրապետությունը երկանիվ հեծանիվ է: Դա թեև այնքան դյուրաշարժ չէ,

որքան միակնանին, բայց անհամեմատ կայուն է, զարգացնում է մեծ արագություն: Սակայն չընկնելու համար պետք է մշտապես պահպանել իշխանությունների հավասարակշռությունը և պտտել բանակցային քաղաքական գործընթացի ոտնակները»:

3. Տպավորիչ են դարձնում ասելիքը, օր.՝ «Քաղաքական շարժումներով փոթորկված այս քուրայի մեջ անցյալ ու ներկա մրոտվել են»:

Լրատվական և վերլուծական ժանրերում խոսքը համառոտ ու բազմազան է դարձնում **փոխանություն** այն տեսակը, որի դեպքում տեղի անունը գործածվում է մարդկանց անունների փոխարեն, ինչպես՝ «Սոչիի հանդիպումից առաջ **Մոսկվան երևանից** ստացել է այն, ինչ հնարավոր է, ու հիմա առևտուր պետք է առաջարկի **Բաքվին**», «**Իրանը** ներկայումս շատ կոնկրետ է խոսում անվտանգության այլընտրանքների մասին»:

Լրատվության տարբեր ոլորտներում լայն կիրառություն ունի **շրջասույթը**. հանդես է գալիս մեծ մասամբ անվանողական դերով և խոսքը հեռու է պահում միօրինակությունից, օր.՝ **Մեծ Բրիտանիայի երկաթյա լեղի, հայոց սպարապետ** ևն:

Կրկնությունը, ճարտասանական հարցը, մասնատումը, հակադրությունը (սրանք ՀԼՄ-ների լեզվում հաճախ հանդիպող շարահյուսական հնարանքներից են) շատ դեպքերում կիրառվում են միասին՝ ընդգծելով բովանդակության առանցքային կողմերը, ոճականորեն գունավորելով խոսքը: Այսպես՝ «Արևմուտքը ի՞նչ թշնամի է, ի՞նչ էլ բարեկամ» խոսույն վերնագրով վերլուծական հոդվածում ասելիքի կարևորությունը շեշտելու նպատակով հեղինակը **կրկնությունը** զարգացնում է աստիճանավորմամբ, նաև դիմում է **հակադրության**: Լրագրողը կրկնվող բառերով սկսում է առանձին նախադասություններ, որոնք կարող էին նույն նախադասության մեջ դառնալ բազմակի անդամներ, սակայն ոճական նպատակով մասնատում է խոսքը. «Արևմուտքը թշնամի չէ: Արևմուտքը բարեկամ չէ: Արևմուտքը աշխարհագրություն չէ: Արևմուտքը երևույթ է: Արևմուտքը կենսակարգ է և հարաբերությունների համակարգ»: Հոդվածի վերջում հեղինակը դարձյալ կրկնում է «Արևմուտք» բառը տողասկզբում և տողավերջում՝ արտահայտելով իր որոշակիորեն ընդգծված վերաբերմունքը. «Կյանքի համար անհրաժեշտ ամեն ինչ ստեղծվում է Արևմուտքում: Ողջ ժամանակակից աշխարհը ստեղծված է Արևմուտքի կողմից: Ճապոնիան արդեն վաղուց Արևմուտք է: Հարավային Կորեան դարձել է Արևմուտք: Արևմուտքը երկիր կամ երկրների խումբ չէ: Արևմուտքը պատմության ուղղություն է»:

Մասնատումը, ինչպես արդեն ասվել է, ռադիկալեզվին բնորոշ արտահայտչամիջոց է: Ռադիոյում պատկերի բացակայությունը լրացվում է հատկապես արտահայտչամիջոցներով, այդ թվում՝ նաև մասնատմամբ: Օր.՝ հաղորդումներից մեկում խոսքը արտահայտիչ են դարձրել **մասնատումը, կրկնությունը, անձնավորումը**. «Ճարտարապետների համատեղ ջանքերով այդ քաղաքը **սպանեցին**: Նպատակաուղղված: Ի վերջո **սպանեցին**»: Ոճական այսպիսի լուծումը ռադիոխոսքում տեսողական պատրանք է ստեղծում: Նախադասության

բաղադրիչները հնչեանգով (գրավորում՝ նաև կետադրությամբ) առանձնացվում են. խոսքը դառնում է հուզական:

Ճարտասանական հարցը ՋԼՄ-ների լեզվում ոչ այնքան հուզականության միջոց է, որքան վերաբերմունք արտահայտելու (հատկապես հեզնական), օր.՝ «Կկա-ռուցվի հիդրոէլեկտրակայանը, թե՛ ոչ, էական էլ չէ: Էականը ոչ թե հիդրո-էլեկտրակայանն է, այլ նրա շուրջ լավատեսական լրատվություն ապահովելը»:

Մտքերի արտահայտման այս ձևի վերնագրային կիրառությանն արդեն անդ-րադարձել ենք: Խոսենք այն դեպքերից, երբ հեղինակն իր սուր հարցադրումնե-րով ընթերցողին կամ ունկնդրին խորհելու տեղիք է տալիս, կարևոր իրո-ղությունների վրա հրավիրում նրանց ուշադրությունը. «Ինչպես հաղթահարել ճգնաժամը. խուճապի մատնվել, ընկնել հուսահատության գիրկը, թե՛ դա դիտարկել որպես շատ բան վերանայելու և փոխելու ասպարեզ»:

Լրագրողներից մեկը մշակութային թեմայով գրված հոդվածում («Մեռնողի մասին մտածենք, թե՛ քիչ-քիչ մեռնողի...») ճարտասանական հարցերով արտահայտում է իր վերաբերմունքը ճանաչված երգչուհիներից մեկի նկատմամբ, ով հարցազրույցներից մեկում ասել էր. «Յուրաքանչյուր զոհված զինվորի հետ ես մի քիչ մեռնում եմ»: Ահա ճարտասանական հարցերի շարք-պատասխանը. «Ձի՛նվորների ծնողներն արժանապատվորեն լռում են, արժե՛ նրանցից առաջ ընկնել», «Երբ հրավիրվում եք Մարտակերտ կամ մի այլ տեղ՝ հարսանիքի, չե՛ք վճարվում: Կամ՝ եթե գնում եք դիրքերում երգելու, չե՛ք վճարվում: Եթե այո՛, ինչո՛ւ եք այդքան հայրենասիրական թմբուկներ զարկում»:

Այսպիսով՝ ՋԼՄ-ների լեզուն աչքի է ընկնում ոչ միայն լեզվամիջոցների բազ-մազանությամբ, այլև պատկերավորման-արտահայտչական միջոցների առատ գործածությամբ: Ինչ խոսք, յուրաքանչյուր ժանր բնութագրվում է խոսքի կառուցման որոշակի ընդհանուր եղանակով, և լրատվամիջոցների լեզվի ոճա-կան յուրահատկությունները գերազանցապես պայմանավորվում են ժանրով:

4.6. ԳՈՎԱԶԴԻ ԼԵԶՈՒՆ

4.6.1. Ընդհանուր հարկանիշներ (237): **4.6.2. Գովազդի տարածման ուղիները (238):** **4.6.3. Գովազդի կառուցվածքը (238):** **4.6.4. Գովազդային տեքստերի լեզվական առանձ-նահատկությունները. բառապաշար, քերականական հարկանիշներ (239):** **4.6.5. Ոճական միջոցներ (241):**

4.6.1. ԸՆԴԿԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ: Ռեկլամա բառը ծագել է լատիներեն **reclamare** բայից, որը նշանակում է **գոռալ, աղաղակել**: Հետագայում բառը ենթարկվել է իմաստափոխության. սկսել է գործածվել իր վրա ուշադրություն հրավիրել (անգլ.՝ **to reclaime**) նշանակությամբ:

Գովազդը հայտարարության յուրօրինակ տեսակ է: Տեսաբանները այն կարծիքին են, որ գովազդը կատարում է երկու գործառույթ՝ **տեղեկատվական** և **ներ-**

գործման¹¹⁰: Դրանք փոխկապակցված են: Գովազդատուի և գովազդառուի նպատակները մասամբ նույնանում են, մասամբ՝ տարբերվում: Գովազդատուն շահագրգռված է ներգործման խնդրով, իսկ գովազդառուն՝ տեղեկատվությամբ: Եթե տեղեկատվությունը անարժեք է, ապա գովազդառուն կորցնում է վստահությունը գովազդի հանդեպ: Այստեղ արդեն կարևորվում են խոսքի կառուցման հմտությունը, արտալեզվական գործոնները: Մեր օրերի սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակում, շուկայական հարաբերությունների ու ազատ մրցակցության պայմաններում առավել կարևոր է դառնում գովազդային տեքստերի բովանդակությունը: Դրանք նախապատրաստմանը մասնակցում են տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ, ուստի գովազդային տեքստերի որակը մեծ չափով պայմանավորված է նրանց մասնագիտական կարողություններով: Գովազդային տեքստ գրելը մեծ արվեստ է: Այն ունի իր պահանջները. քիչ բառերի միջոցով առավելագույն տեղեկույթ հաղորդել, կարողանալ հրապուրել սպառողին, վստահություն ներշնչել գովազդվող ապրանքի կամ ծառայության հանդեպ: Լեզվագործածության առումով գովազդները լինում են՝ ա) **տեսողական** (տպագիր գովազդ, լուսագովազդ, ֆոտոգովազդ, ևն), բ) **լսողական** (ռադիոգովազդ), գ) **տեսալսողական** (հեռուստագովազդ, կինոգովազդ):

4.6.2. ԳՈՎԱԶԴԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ: Բազմազան են՝ զանգվածային լրատվական միջոցներ՝ ռադիո, հեռուստատեսություն, պարբերական մամուլ, էլեկտրոնային լրատվամիջոցներ, կայքէջեր, պաստառային գովազդներ՝ տեղեկատվական վահանակներ, խոշորածավալ պաստառներ, որոնք ամրացված են սյուների վրա կամ կախովի են, պլանշետային (պատկերներ, որոնք հաջորդաբար փոխվում են էլեկտրաշարժիչի օգնությամբ), խանութների ցուցատախտակներ, լուսատախտակներ, վազող տողեր, առձեռն տրվող գովազդ (թերթեր, թուղթիկներ, հուշանվերներ, խանութներում տրվող զանազան ապրանքներ) ևն:

4.6.3. ԳՈՎԱԶԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Գովազդային տեքստերը հաջողված են համարվում, եթե ունեն հստակ կառուցվածք: Սովորաբար տեքստը բաժանվում է երեք մասի՝ **առաջին մաս, հիմնական մաս և եզրափակիչ մաս:** Դրանցից յուրաքանչյուրը կատարում է որոշակի գործառույթ: Առաջին մասը գովազդային ուղերձի կարգախոսն է: Այն պետք է ապահովի գովազդի ներգործուն ուժը: Ընդ որում՝ սովորաբար գոյական(ներ)ով ձևակերպվում է ապրանքի անվանումը: Օր.՝ **«Colgate» ատամի մածուկ, «Ariel» լվացքի փոշի, «Գուդփին» բուքմեյքերական ցանց** ևն: Հիմնական մասը ամբողջական տեղեկատվություն է ապրանքի կամ ծառայության մասին: Այստեղ ածականների և բայերի օգնությամբ նկարագրվում է ապրանքը: Օր.՝ **ատամի մածուկի գովազդը կարող է ունենալ հետևյալ տեքստը. «Ատամների գերազանց մաքրում: Սպիտակեցնում է ատամները...»:** Գովազդի արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է հիմնական մասի բո-

¹¹⁰ Стів Г. Хазагеров, Е. Корнилова, Риторика для делового человека, М., 2003, էջ 63:

վանդակությամբ: Հաճախ որոշիչ ազդակ են դառնում նաև կարգախոսը կամ արտալեզվական գործոնները: Եզրափակիչ մասը (որտեղ կարող են տրվել հասցեն և հեռախոսի համար(ներ)ը) կարգախոսի և հիմնական մասի օգնությամբ ձևավորում է դրական վերաբերմունք ու պոտենցիալ սպառողին մղում համապատասխան «վերաբերմունքի»¹¹¹:

4.6.4. ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Գովազդային տեքստերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ: Գովազդ կազմողները օգտվում են բառապաշարի, քերականության ընձեռած լայն հնարավորություններից: Գովազդի մեջ առանձնացվում են լեզվական և արտալեզվական միջոցներ: Անշուշտ, խոսքը գովազդի կարևոր բաղադրիչներից է. դրա միջոցով իրականացվում է սպառողին համոզելու հիմնական խնդիրը: Լեզվական կամ խոսքային ուղերձներն ուղեկցվում են արտալեզվական միջոցներով՝ դիմային շարժումներ, գունային երանգներ, գրազարդումներ, մարմնի շարժումներ, նկարներ, երաժշտություն ևն: Օր.¹ տեսահոլովակում պատկերվում են հյուրանոցային և ռեստորանային համալիրներ. նման գովազդներում շքեղ կահավորումը, զանազան աղցանների ցուցադրումը, երաժշտությունը, այսինքն՝ արտալեզվական գործոնները, մի տեսակ լրացնում են զուգահեռ հնչող խոսքի բովանդակությունը՝ նպաստելով գովազդի համակողմանի ընկալմանը: Լսողական և տեսողական տեղեկատվությամբ զորանում է գովազդի ներգործուն ուժը:

Բանավոր խոսքում կարևորվում է հնչերանգի, շեշտի, առոգանության դերը: **Դադարը** առավել կարևոր դեր է կատարում հեռուստազովազդում. այն ոչ միայն առանձնացնում է բառերը, նախադասությունները, այլև մեծ ազդեցություն է թողնում տեքստի բովանդակության վրա: Տեքստի ծավալով և խոսքի նպատակով պայմանավորված՝ դադարը կարող է լինել կարճ և երկար: Դադարը հեռուստադիտողին հնարավորություն է տալիս ուշադրություն դարձնելու այս կամ այն լեզվատարրի վրա: Օր.² «Քեզ համար, այս ամառ: Միայն հիսուն օր, միայն այս ամառ», «Մանի, մանի, մանի, ով կխաղա, նա կտանի»: Կամ՝ **համար և համար՝** համանուն բառերի միջոցով ստեղծված հետևյալ գովազդը՝ «Գովազդի՜ **համար՝** գովազդի **համար**». շեշտի օգնությամբ փոխվում է բառիմաստը: Ձայնի դիրքը, ելևէջումը, խոսքի արագությունը և նման այլ միջոցներ տեղին և նպատակային գործածվելիս մեծ չափով մեծացնում են գովազդի ազդեցությունը:

Գովազդային տեքստերի **բառապաշարը** ներառում է թե՛ գրական, թե՛ խոսակցական ու ժարգոնային բառեր: Գրական բառապաշարով կազմված տեքստերը լայնորեն տարածված են և հաջողություն են բերում գովազդատուներին: Այդպիսին են, օրինակ, տարբեր ծառայությունների և բանկերի կողմից տրվող գովազդները՝ «Երկարաժամկետ վարկեր՝ ցածր տոկոսադրույքով», «PANTIN: Միաձուլում բնության հետ» (գովազդվում է շամպուն):

Իհարկե, ճիշտ չէ խոսակցական բառերը գովազդային տեքստերից խալառ բացառելը, քանի որ դրանց միջոցով կարելի է անմիջաբար ազդել մարդու տրա-

¹¹¹ Տե՛ս **И. Голуб**, Русский язык и культура речи, М., 2013, էջ 57:

մադրության և տրամադրվածության վրա և գովազդը դարձնել ավելի ընկալելի, ինչպես՝ «Ջան–ջան, ջան ասենք, ջան լսենք» (հեռախոսակապի մասին է)։

Կան գովազդներ, որոնցում հնչում են հատվածներ գրական ստեղծագործություններից։ Ինչպես այս մեկը Հ. Թումանյանի քաղաքներից (գինու գովազդ է)։ «Էս է, որ կա... Ճիշտ ես ասում, թասդ բեր, էս էլ կանցնի հանց երազում, թասդ բեր։ Կյանքն հոսում է տիեզերքում զնգալեն, Մեկն ապրում է, մյուսն սպասում. թասդ բեր»։ Պետք է խուսափել ժարգոնային բառերով տեքստեր մատուցելուց, ինչպես, օրինակ, այս գովազդն է.

– Հարսիկ Վարսիկ, էս ընչի ես ադին–ադին հելե սեմըչկի հետ։

– Ախր շատ համով ա, է, Վիպոյան ծյա։ ... Էսի «Ատ սոլնեշկի» էլիտար սեմըչկեն ա...

Այսպիսի տեքստերը շատ արագ յուրացվում են հատկապես դեռահասների կողմից և հակադաստիարակչական են (նախ և առաջ խաթարում են նրանց լեզվամտածողությունը)։ Բարեբախտաբար, վերջին տասնամյակում ժարգոնային բառերով կազմված տեքստերը էապես նվազել են։

Գովազդներում հաճախ գործածվում են նաև **դիպվածային նորաբանություններ**, այսպես՝ «Մի հապաղիր, **սնիկերսի՛ր**» գովազդում **սնիկերսի՛ր** բառի գործածությունը արդարացվում է, քանի որ բառը անսովոր երանգ է հաղորդում խոսքին, մեծացնում է հետաքրքրությունը տվյալ ապրանքի հանդեպ։ Նույնը չենք կարող ասել ուղիղ «Ջան»–ի գովազդի մասին՝ «Ջան–ջան, **ջանվենք** միասին»։

Գովազդներում **տերմինների** գործածությունը հիմնականում պայմանավորված է գիտության ու տեխնիկայի վերջին նվաճումները հասարակությանը ներկայացնելու հանգամանքով՝ **աքսեսուար, պլանշետ, սմարթֆոն, մալուխ, ինտերիեր, դիզայն, ֆաստ կրեդիտ, մաստեր կրեդիտ** ևն։ Հաճախակի են գործածվում բանկային տերմինները։ Օր.՝ «Գյուլտեխնիկայի տրամադրում վարկով և **լիզինգով**»։ Հասարակական կյանքի այս կամ այլ ոլորտին վերաբերող տերմինների օգնությամբ հաղորդվում է համառոտ տեղեկություն. խոսքը ավելի համոզիչ է դառնում։

Գովազդային տեքստերի բառապաշարում առանձնակի տեղ են գրավում **օտար բառերը**. դրանք հիմնականում ապրանքանիշի կամ ծառայությունների անվանումներ են։ Անշուշտ, օտար բառերի չարաշահումը, առավելապես անհասկանալի անվանումները դժվարացնում են գովազդային տեքստերի ընկալումը։ Այնուամենայնիվ, օտար բառերի տեղին գործածությունը ավելի մեծ տպավորություն է գործում։ Խոսքի արտահայտչականությունը մեծանում է հատկապես այն դեպքում, երբ նման բառերը կրկնվում են։ Օտար բառերի միջոցով ձևավորվում է գնահատողական վերաբերմունք, որը շատ անհրաժեշտ է գովազդատուին։ Դրանք գործածվում են հատկապես ապրանքի վարկանիշը բարձրացնելու նպատակով, քանի որ ապրանքանիշի անվանումը արագ ձուլվում է մյուս բաղադրիչներին և բարձրացնում գովազդի ներգործման ուժը։ Օր.՝ «**ակումուլատորների** փորձասրահ», «բրենդային **բուտիկ**»։ Պիտի խուսափել այնպիսի օտար բառեր գործածելուց, որոնց հայերեն համարժեքները գովազդում կարող են առավել ազդեցիկ հնչել՝ ավելի հասկանալի լինելով սպառողին, ինչպես՝

«**իդեալական** (←կատարյալ) մաքրություն», «**ֆիքսված** (←կայուն // ամրագրված) հեռախոսահամար, «...օգնում է **բակտերիաներից** (←մանրէներից) ազատվել», «Պայուսակներ: Բարձրորակ ու **օրիգինալ** (←յուրահատուկ)»:

Քերականական հատկանիշներ: Գովազդային տեքստերում խոսքի մասերից առավելապես գործածական են գոյականները, ածականները, դերանունները, բայերը: Ամենից հաճախ գործածվում են **գոյականները**, որովհետև գովազդը պահանջում է մեծաքանակ ապրանքների ու ծառայությունների անվանումներ: Դրանք իրականացնում են տեղեկատվական կարևոր գործառույթ. հուշում են, թե ինչն է ավելի շատ գովազդվում տվյալ հասարակության մեջ: Գոյականների գործածության շնորհիվ կարելի է համապատասխան եզրակացություն անել ներմուծվող ապրանքների, արտադրվող ապրանքների տեսականու, մատուցվող ծառայությունների մասին:

Ածականը անմիջապես բնութագրում է առարկան, երևույթը՝ նպաստելով տեքստի սեղմությանն ու հակիրճությանը, օր.[՝] **շքեղ լողավազաններ, հարմարավետ համարներ, իտալական հանգիստ, անկրկնելի արդյունք, եվրոպական կահույք, աննախադեպ, շշմեցուցիչ գեղչեր** ևն:

Դերանունների միջոցով մի տեսակ անմիջական կապ է հաստատվում գովազդատուի ու ունկնդրի կամ ակնդրի միջև. «**Դու** կապ ունես», «**Միացե՛ք իրար** սուպեր գնով»:

Մեծ է նաև **բայերի** դերը: Կան հանգուցային բայեր, որոնք առաջարկում, խրախուսում կամ բնութագրում են որևէ ապրանք կամ ծառայություն: Այդ բայերից են՝ **հիշել, խոսել, հոգալ, վայելել, հրավիրել, դիմել, զանգահարել, առաջարկել, գնել**: Օր.[՝] «Խաղացե՛ք ու շահե՛ք», «Շտապե՛ք, միացե՛ք բազմաալիքային հեռախոսահամարին»:

Գովազդային տեքստերում հաճախ են գործածվում նաև **թվականներ**, որոնք մատնանշում են առարկաների թիվը, քանակը, կարգը, որևէ իրադարձության ժամանակը կամ վայրը: Օր.[՝] «...Դեկտեմբերի **17-ից 40%** զեղչ», «Հասանելի տարբերակով ներդրե՛ք Ձեր դրամական միջոցներն «X» բանկում և ստացե՛ք տարեկան մինչև **12.5%** տոկոսադրույքով կայուն եկամուտ: ...Ստացե՛ք վարկային գիծ՝ ընդամենը սկսած **2.8%** ավելի տոկոսադրույքով: Հիշե՛ք՝ **15** օրվա ընթացքում օգտագործված գումարը վերադարձնելիս վարկի վրա տոկոսներ չեն հաշվարկվի»:

Գովազդային տեքստերը կառուցվում են հիմնականում **անվանական անդեմ** նախադասություններով՝ «Արարատ: Զգացմունք բացահայտող պահեր», «Միգ: Արագ միջոց ցավի դեմ», «Կիտ: Հարմարավետություն, ճաշակ, որակ»: Դրանք խոսքին հաղորդում են սեղմություն և արագություն:

4.6.5. ՈՃԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ: Գովազդներում տեքստին հուզականություն հաղորդելու նպատակով գործածվում են ոճական–արտահայտչական միջոցներ, որոնք անմիջականորեն ազդում են մարդու ոչ միայն մտքի, այլև զգայական աշխարհի վրա: Ամենագործածականը **բառային կրկնությունն** է: Այն ապահո-

վում է գովազդի ազդեցությունը մարդու ենթագիտակցության վրա: Օր.¹ «Միայն թարմ, միայն էկոլոգիապես մաքուր չրեղեն», «Ոսկե ժառանգություն ոսկե ակնթարթների համար», «Եղի՛ր մաքուր, եղի՛ր թարմ, եղի՛ր պատրաստ»:

Մեծ է նաև մակդիրի դերը (ոսկեշող խաղող, արևաթույր կոնյակ, արևաշող շամպուն, խելահեղ շահում ևն): իր բնութագրական որակներով և պատկերավորությամբ այն հրապուրում է սպառողին: Շարադասությունը ևս գովազդներում մեծ նշանակություն ունի: Գրավոր գովազդվող ապրանքի անվանումը, որպես կանոն, զետեղվում է տեքստի սկզբում, որպեսզի ուշադրություն գրավի և արագ ընթերցվի: Այն սովորաբար լեզվական կամ արտալեզվական ինչ-ինչ հատկանիշներով (տառերի չափով, գունավորումով, արտահայտչական որևէ եղանակով ևն) առանձնացվում է: Օր.² ներկրված ավտոմեքենաների վաճառքը գովազդող՝ Ա ձևաչափով տեքստը առավել նպատակային, արդյունավետ և ազդեցիկ կլինի, եթե տրվի Բ ձևաչափով.

Ա. Արագ և անվտանգ
ներկրված ավտոմեքենաներ
Ամերիկայից

Բ. Ավտոմեքենաներ
Ամերիկայից
ներկրվում են արագ և անվնաս

Շարադասական խախտումները անմիտ ու անհեթեթ են դարձնում գովազդը, ինչպես՝ «Աշխարհահռչակ ֆրանսիական մագերի ներկեր», «Աննախաղեպ ամանորյա զեղչեր», «Ամբողջ տղամարդկանց տեսականին 70% զեղչ»:

Ավելացնենք նաև, որ ցանկացած գովազդային տեքստի հաջողվածության հիմնական պայմանը ոչ կադապարային լինելն է. գովազդատուն ուշադրություն գրավելու նպատակով օգտագործում է լեզվական ամենատարբեր միջոցներ: Քանի որ գովազդները նախատեսված են հասարակության լայն խավերի համար, ուստի գովազդային տեքստերում անթույլատրելի են սխալները. դրանք ազդում են մարդկանց ոչ միայն ենթագիտակցության, այլև հոգեբանության վրա: Բոլոր դեպքերում գովազդի հաջողության գրավականը տեքստի հաջողված բովանդակությունն ու մատուցման եղանակն են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները, «ԲԵՀ», 1982, N 3:
2. Աբրահամյան Ս., Պաշտոնական ոճը և նրա առանձնահատկությունները, «Հայոց լեզու և գրականություն», Եր., 1983, պրակ 1-2:
3. Աղայան Էդ., Տերմինագիտություն, Եր., 1978:
4. «Անգլերեն-հայերեն-անգլերեն իրավաբանական տերմինների բացատրական բառարան», Եր., 2008:
5. Ապրեսյան Մ., Մասնագիտական (իրավաբանական) լեզվի և գործառական ոճի հարաբերակցությունը, Եր., 2010:
6. Բաբայան Օ., Փոխաբերությունը արդի հայերենում, Եր., 1998:
7. Բրուսյան Գ., Տրամաբանություն, Եր., 1998:
8. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., 2007:
9. Գևորգյան Ե., Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան, Եր., 2003:
10. «Գրականագիտության ներածություն: Քրեստոմատիա» (կազմ.՝ Էդ. Զորաշյան և այլք), Եր., 1984:
11. «Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն», Եր., 1981:

12. Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք, Եր., 1986:
13. Հովհաննիսյան Հ., Փաստարկում և հոեւորություն, Եր., 2015:
14. Մեղրոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984:
15. Շահվերդյան Թ., Ոճագիտություն, Եր., 2010:
16. Չալմյան Ն., Դիվանագիտական և հյուպատոսական ծառայություն և իրավունք, Եր., 2005:
17. Պետրոսյան Լ., Արդի ողու-հայերեն իրավաբանական բառարան, Եր., 1998:
18. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Եր., 1991:
19. Զրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Եր., 1967:
20. Սարգսյան Ա., Հակոբյան Ռ., Իրավաբանական տերմինների և շրջասույթների ողու-հայերեն բառարան, Եր., 2005:
21. Սյրրիխտ Ջ., Անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն իրավաբանական բառարան, Եր., 1994:
22. Горшков А., Русская стилистика. Стилистика текста и функциональная стилистика, М., 2006.
23. «Культура русской речи. Учебник для вузов» (под ред. проф. Л. К. Граудиной и проф. Е. Н. Ширяева), М., 1999.
24. Кожина М., О речевой системности научного стиля сравнительно с некоторыми другими, Пермь, 1972:
25. «Разговорная речь в системе функциональных стилей современного русского литературного языка», Саратов, 1992.
26. Рахманин Л., Стилистика деловой речи и редактирование служебных документов, Москва, 1998.
27. «Русская разговорная речь», М., 1973.

ՄԱՍ 5.

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ ԵՎ ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՎԵՍ

5.1. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

5.1.1. Ընդհանուր հատկանիշներ (244): 5.1.2. Հրապարակային ելույթի նախապայտրաստումը (246): 5.1.3. Հրապարակային խոսքի ընդհանուր կառուցվածքը (250): 5.1.4. Հրապարակային խոսքի հիմնական հատկանիշները (253):

5.1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ: Հրապարակային խոսքին մեծ կարևորություն է տրվել դեռևս հնուց: Մարդիկ ուսումնասիրել են այդ խոսքի առանձնահատկությունները, փորձել առանձնացնել դրա տեսակները, դրանցից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշները և ի վերջո նաև պարզել, թե որն է այդ խոսքի ներգործող ուժը: Այդ ամենը ինչ–որ չափով պարզելու համար բավական չէ միայն լեզվական ուսումնասիրությունը, քանի որ հրապարակային (և ընդհանրապես) խոսքի առանձնահատկությունները պայմանավորվում են ոչ միայն լեզվական, այլև հավասարապես տրամաբանական, հոգեբանական և շատ ու շատ այլ գործոններով: Ահա թե ինչ է գրում Պլուտարքոսը. «Երբ Սպարտայի թագավոր Արքիդամոսը հարցրել է նույն այդ Թուկիդիդեսին, թե ով է բռնցքամարտում ավելի լավ՝ ինքը, թե՞ Պերիկլեսը, սա պատասխանել է. «Ճիշտն ասած՝ չգիտեմ. եթե նույնիսկ խփեմ, գետնին փոեմ նրան, նա կհավատացնի, թե չի ընկել, դա կապացուցի բոլոր ներկա եղողներին և կհաղթի»»¹¹²:

Հրապարակային խոսքը կարևորում և նրա արվեստին տիրապետում էին Հին աշխարհում տարբեր երկրներում. «Եգիպտական քրմերը հմուտ հռետորներ էին, չինական արքունիքում հայտնի էր «պաշտոնական, հատկապես ծիսական պերճախոսությունը»: Խոսքի հմտություններին լավ էին տիրապետում հնդիկ իմաստունները: Եվ, այնուամենայնիվ, պերճախոսության հայրենիքը Հին Հունաստանն է»¹¹³:

Հռետորական արվեստը «Հայաստան մուտք է գործել մ. թ. ա. I դ. (Տիգրան Մեծ, Արտավազդ Բ), նշանակալից է եղել V դ. (Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորենացի, Եղիշե, Եզնիկ Կողբացի)»: Թեև ճարտասանության տեսությունը հայ իրականության մեջ սկզբնավորվել է թարգմանությունների միջոցով, սակայն հետագայում ճարտասանական արվեստի զարգացման գործում իրենց տեսական և գործնական աշխատանքներով կարևոր դեր են խաղացել Դավիթ Անհաղթը,

¹¹² Պլուտարքոս, Երկեր (ռուսերենից թարգմ. Հ. Հարյան), Եր., 1988, էջ 673:

¹¹³ Գ. Անանյան, Գիտության և գրականության սահմանագծում, Եր., 1999, էջ 25:

Հովհան Մայրավանեցին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Վարդան Այգեկցին, Հովհաննես Հոլովը և շատ ուրիշներ: Գլա-
ծորի և Տաթևի համալսարաններում դասավանդվել է ճարտասանություն (Եսայի
Նչեցի, Գրիգոր Տաթևացի, Հովհան Որոտնեցի և այլք): Իսկ հետագայում էլ Մխի-
թարյան միաբանության անդամներն են ձեռնարկել Ցիցերոնի ճառերի թարգ-
մանությունը՝ մեծապես նպաստելով ճարտասանական արվեստի տեսական
զարգացմանը (ՀՍՀ):

Հայ իրականության մեջ հնում հրապարակային խոսքը զարգանում էր որոշ
չափով ռազմական և առավելապես հոգևոր ոլորտներում: Հիշենք Վարդան
Մամիկոնյանի նշանավոր խոսքը՝ ուղղված զորականներին: Խոսքի սկզբում նա
նշում է մարտերով լեցուն իրենց անցած ուղին, այնուհետև ներկայացնում է իրենց
պարտավորված լինելը Աստծու և հայրենիքի առաջ, ապա շատ տպավորիչ
ավարտում է խոսքը. «Վախը թերահավատության նշան է. թերահավատությունը
մենք վաղուց ենք մերժել մեզանից. նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից
ու խորհուրդներից»¹¹⁴:

Հետագա դարերում հրապարակային խոսքը առավելապես զարգանում է հոգևոր
ոլորտում: Ստեղծվում են նորանոր հիանալի նմուշներ, որոնք հարստացնում են
այս բնագավառում եղած արժեքները: Մանուկ Աբեղյանը միջնադարյան
մտածողներից մեկի՝ Վարդան Այգեկցու մասին այսպես է գրում. «Ինքը՝ Վարդանն
էլ շեշտում է, որ իր գրությունների, քարոզների նյութը նորություն չէ: ...Բայց
այդպիսի հին թեմաները, որ այն դարում դեռ չէին կորցրել իրենց արժեքը, նա
մշակում է մի բոլորովին նոր, ինքնուրույն ձևով: Վարդանը հորինում է կա-
տարելապես պարզ ու հասարակ, մեկին ու թեթև, ախորժալուր: Նա ոչ թե ճառում
է, այլ կենդանի լեզվով զրույց է անում, սիրով խոսակցում իր ունկնդիրների,
ավելի ևս ընթերցողների հետ՝ հոգալով ոչ միայն ժամանակակիցների համար,
այլև ապագա սերունդների»¹¹⁵: Այգեկցին իր ճառերը հաճախ համեմտում էր
առականերով և սկիզբ դրեց առակավոր ճառին: Խոսելով Վարդանի լեզվի գե-
ղեցկության և պատկերավորության մասին՝ Աբեղյանը նշում է, որ «Նախորդ
ճառագիրների խոսքն էլ այդ նկատմամբ աղքատ չէ»: Եվ իրոք, թե՛ նախորդ, թե՛
հաջորդ հեղինակներից յուրաքանչյուրը յուրովի է հարստացրել ճարտասանական
խոսքի հայկական գանձարանը:

Հրապարակային խոսքը միշտ էլ կիրառվել է, քանի որ միշտ էլ կարիք է լինում
դիմելու մարդկանց, նրանց որևէ բան հաղորդելու, քարոզելու, համոզելու,
ոգեշնչելու և շատ ու շատ այլ նպատակներով: Քանի որ հրապարակային խոսքի
դրսևորման ոլորտները շատ են, ուսումնասիրողները հաճախ են առանձնացրել
հրապարակային խոսքի տարբեր տեսակներ՝ մեծ մասամբ հիմք ունենալով հենց
բնագավառը: Դասակարգումները այս առումով շատ բազմազան են: Դասա-
կարգման վրա ազդեցություն են ունենում նաև ժամանակաշրջանը, ուսումնա-
սիրողի գիտակրթական կողմնորոշումները ևն:

¹¹⁴ **Եղիշե**, Վարդանի և Հայոց պատերազմի մասին (թարգմ. և ծան. Ե. Տեր-Մինասյանի),
Եր., 1958, էջ 95:

¹¹⁵ **Մ. Աբեղյան**, Երկեր, հատոր Դ, Եր., 1970, էջ 195:

Ռուս ուսումնասիրողներից շատերը կիրառում են հետևյալ դասակարգումը, որի համար ընդհանուր առմամբ հաշվի են առնում իրադրությունը, թեման և նպատակը¹¹⁶.

ԵԼՈՒՅԹԻ ՍԵՌԸ	ԵԼՈՒՅԹԻ ՏԵՍԱԿԸ
Ակադեմիական	դպրոցական և բուհական դասախոսություններ գիտական զեկուցումներ գիտական տեսություններ գիտական հաղորդումներ գիտահանրամատչելի դասախոսություններ
Դատական	դատախազական (մեղադրական) փաստաբանական (պաշտպանական)
Սոցիալ-քաղաքական	զեկուցում (համագումարում, նստաշրջանում, ժողովում ևն) խորհրդարանական հանրահավաքային ռազմախայրենասիրական դիվանագիտական քարոզչական քաղաքական տեսություն
Սոցիալ-կենցաղային	հորեյանական ողջույնի բաժակաճառ (կենաց) ընդունելության դամբանական
Հոգևոր (եկեղեցաաստվածաբանական)	խոսք (քարոզ) պաշտոնական եկեղեցական

Դասակարգումները բավականին բազմազան են, թեև դրանց միջև առկա են նաև շատ ընդհանրություններ: Ուսումնասիրողները հաճախ իրենք են նշում, որ դասակարգումները լիակատար չեն, և տարբեր խմբերում ընդգրկված տեսակներն էլ իրարից անջրպետված չեն:

5.1.2. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵԼՈՒՅԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ: Հրապարակային խոսքի ամբողջականությունը պայմանավորվում է թեմայի միասնականությամբ, իմաստային առումով ամբողջական հատվածների ճիշտ դասավորությամբ ու սահման անցումներով, ցանկալի իմաստի հստակ ձևակերպմամբ: Խառնիխուռն, անհետևողականորեն կազմված խոսքը անհրաժեշտ արդյունքի չի հասցնի: Խոսքը պետք է լեզվական ու ոճական առումներով ճիշտ կառուցվի, ինչպես նաև ուղեկցվի համապատասխան պահվածքով, ունենա հուզական համապատասխան երանգավորում ևն: Հաջող ելույթ ունենալու համար կարևոր են նաև ուրիշ

¹¹⁶ Տե՛ս Н. Кохтев, Основы ораторской речи, М., 1992:

գործոններ՝ խոսողի ծայնը, արտասանական հատկանիշները, արտաքինը ևն: Ելույթի ամբողջականությունը ձևավորվում է շատ ու շատ տարրերից: Դրանցից յուրաքանչյուրը անշուշտ իր ուրույն տեղն ու դերն ունի:

Կարևոր է ելույթի **տեքստի պատրաստումը**: Հարց է առաջանում, թե արդյոք անհրաժեշտ է նախօրոք լիովին նախապատրաստել ելույթի տեքստը: Պարզ է, որ ելույթները կարող են ըստ անհրաժեշտության լինել նաև հանապատրաստից, սակայն ավելի հաճախ ելույթի անհրաժեշտության մասին նախօրոք հայտնի է լինում: Այս հարցի վերաբերյալ տեսակետները տարբեր են: Մասնագետների մի մասը կարծում է, որ նախօրոք պետք չէ ոչինչ գրի առնել. հարկավոր է միայն ուսումնասիրել անհրաժեշտ նյութերը՝ օգտվելով տարբեր աղբյուրներից: Մյուս մասն առաջարկում է ելույթին նախապատրաստվել, սակայն ելույթը լիովին գրի չառնել, այլ համառոտ ձևակերպումներով գրառումներ անել և դրանցից օգտվելով՝ ելույթ ունենալ: Ուրիշներն էլ ճիշտ են համարում ելույթը լիովին գրելը, մանրակրկիտ մշակելը և դրանից չչեղվելը: Դրանից բացի՝ հարց է ծագում, թե արդյոք ճիշտ է ելույթն ընթերցելը, թե անհրաժեշտ է նախօրոք սովորել և բանավոր ասել:

Այս հարցերը միարժեք պատասխան չունեն: Իհարկե, բանավոր խոսելն ավելի լավ տպավորություն է ստեղծում, սակայն նախապատրաստվելու և ելույթ ունենալու պարտադրանք չի կարող լինել: Նախ՝ կարևոր է հոետորի անհատական մոտեցումը: Տարբեր մարդկանց կարող են հարմար և սրտամոտ լինել նախապատրաստվելու տարբեր ձևեր: Օր.՝ ասում են, որ ԱՄՆ-ի 16-րդ նախագահ Աբրահամ Լինկոլնը՝ հայտնի իր հոետորական մեծագույն շնորհով, ելույթները նախապատրաստում էր առօրյա գործերով զբաղվելիս: Իր ասելիքի մասին նա մտածում էր փողոցում քայլելիս, ճաշելիս, այգում աշխատելիս և ձեռքի տակ եղած թղթի կտորի վրա ժամանակ առ ժամանակ գրառում էր առանձին արտահայտություններ: Թղթերը ծալում ու դնում էր գլխարկի մեջ և, երբ ժամանակ էր լինում, դրանք վերանայում էր, դասավորում և նախապատրաստում ելույթի կամ հրապարակման մեջ գործածելու համար:

Անհատական մոտեցումից բացի՝ ելույթին առնչվող տարբեր հանգամանքներ թելադրում են իրենց պայմանները: Եթե ելույթը պետք է ունկնդիրների համար թարգմանվի, ապա անհրաժեշտ է տեքստը նախօրոք պատրաստել ու թարգմանել, որպեսզի ելույթի ժամանակ ըստ անհրաժեշտության ներկայացվի թարգմանությունը: Իհարկե, հնարավոր է նաև հընթացս թարգմանություն, սակայն դիվանագիտական, քաղաքական, իրավաբանական, գիտական և այլ ելույթներ ընդունված է նախօրոք թարգմանել՝ հարմարության և միաժամանակյա թարգմանության ընթացքում հնարավոր սխալներից խուսափելու համար: Պետք է հաշվի առնել նաև, որ նշված բնույթների ելույթներում, թեկուզ թարգմանության կարիք չլինի, սխալները հաճախ ներելի չեն, ուստի գրված ու մշակված ելույթը միանգամայն տեղին է: Նախօրոք գրի առնված ելույթը նաև ելույթի ժամանակը ճիշտ հաշվարկելու հնարավորություն է ընձեռում:

Եթե պայմաններն այլ են, ապա ելույթ ունեցողը կարող է նշումներից օգտվելով խոսել, որն ավելի անմիջական կդարձնի խոսքը, չի կաշկանդի, սակայն սա չի

նշանակում, որ պետք է կորցնել չափի զգացումը: Բանավոր ելույթի ժամանակ էլ անհրաժեշտ է չշեղվել բուն թեմայից, չկորցնել ժամանակի զգացողությունը և խոսքն էլ կառուցել տրամաբանական հաջորդականությամբ:

Սակայն արդյո՞ք ելույթի նախապատրաստվելու հարցը սահմանափակվում է միայն ելույթը գրի առնելու կամ չառնելու խնդրով: Անշուշտ ոչ: Ելույթը գրի առնելուց առաջ կարևոր են մի շարք հանգամանքներ: Նախապատրաստվելը առաջին հերթին ասելիքի հստակ պատկերացումն է, գլխավորի ու երկրորդականի ճիշտ տարբերակումը, անհրաժեշտ փաստական նյութի հայթայթումը, բավարար ապացույցների ձեռքբերումը, այնուհետև այդ ամենը ճիշտ ձևով ներկայացնելը են: Այսինքն՝ ասելիքը նախապատրաստվում է, իսկ այն լրիվ կամ մասնակի գրի առնելը կամ ընդհանրապես գրի չառնելը այլ խնդիր է, որը, ինչպես նշվեց, կարող է պայմանավորված լինել թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ հանգամանքներով: Իհարկե, բանավոր ելույթն ավելի լավ տպավորություն է թողնում, քան գրավորը, սակայն միայն դա չէ որոշիչը: Հին աշխարհի հզորագույն ճարտասաններից մեկը՝ Դեմոսթենեսը, միշտ մանրակրկիտ նախապատրաստում էր ճառերը, երկար ժամանակ աշխատում ու մշակում: «Այստեղից էլ ծագել է այն կարծիքը, – գրում է Պլուտարքոսը, – թե Դեմոսթենեսը բնությունից քիչ է օժտված եղել, այլ իր ողջ վարպետությունն ու հմտությունը ձեռք է բերել ծանր աշխատանքով: Ահա թե ինչը, թվում է, թե կհաստատեր այդ բանը ողջ ակներևությամբ. դժվար էր Դեմոսթենեսին լսել առանց նախապատրաստության ելույթ ունենալիս, և նույնիսկ երբ ժողովուրդը, ժողովում նստած, նրան հրավիրում էր անունով՝ պահանջելով ելույթ ունենալ, նա տեղից վեր չէր կենում, եթե ճառը չէր մտածել ու պատրաստել նախապես: Դրա համար շատ հոետորներ ծիծաղում էին նրա վրա, իսկ Պիթիասը մի անգամ սրամտել է, թե Դեմոսթենեսի մտահանգումներից պատրույգի հոտ է գալիս, ինչին Դեմոսթենեսը թունալից պատասխան է տվել. «Այնուամենայնիվ, տարբերում են իմ և քո կանթեղները»: Ուրիշների հետ գրուցելիս, սակայն, նա լիովին չէր ժխտում դա՝ խոստովանելով, որ թեև չի էլ գրում բոլոր ճառերը ամբողջությամբ, բայց բոլորովին առանց նախնական նշումների համենայն դեպս ելույթ չի ունենում»¹¹⁷: Ելույթին նախապատրաստվում էր նաև Յիցերոնը: Ահա թե ինչ է գրում Միշել Մոնտենը. «Ավելացնեմ Յիցերոնի մասին ևս մի պատմություն, որը շոշափելի ակներևությամբ պատկերում է նրա անհատականությունը: Նա պետք է հրապարակավ խոսք ասեր, և ժամանակը չէր բավարարում, որ ինչպես հարկն է նախապատրաստվեր: Էրոտես անունով նրա ստրուկներից մեկը հայտնեց, թե ելույթը տեղափոխվում է հաջորդ օրը: Նա այնքան ուրախացավ, որ այդ լավ լուրի համար ստրուկին ազատ արձակեց»¹¹⁸:

Ինչպես տեսնում ենք, նույնիսկ ամենանշանավորները ելույթին նախապատրաստվելը կարևոր են համարել:

Ինչ վերաբերում է հանպատրաստից ելույթներին, ապա դրանց մասին կարելի է ասել հետևյալը: Հանպատրաստից ելույթ ունեցողը նախօրոք հնարավորություն

¹¹⁷ Պլուտարքոս, նշվ. աշխ., էջ 318:

¹¹⁸ Մ. Մոնտեն, Փորձեր 1 (ռուս. թարգմ. Ա. Խոցանյան), Եր., 1991, էջ 296:

չի ունենում ուսումնասիրելու ասելիքին վերաբերող կոնկրետ նյութեր, որը կաներ նախապատրաստվելու դեպքում, ուստի նա այդ դեպքում փորձում է ի մի բերել իր իմացած այն ամբողջը, ինչն այս կամ այն չափով առնչվում է քննարկվող թեմային և կարող է գործածվել ելույթում: Ստացվում է, որ նա ելույթին պատրաստ է այսպես ասած անուղղակիորեն, մինչ այդ իր սովորածով ու իմացածով, որը գործածում է ըստ անհրաժեշտության: Հետևաբար ինչքան բազմակողմանիորեն զարգացած լինի ելույթ ունեցողը, այնքան հեշտությամբ կհաղթահարի հանպատրաստից ելույթ ունենալու դժվարությունը: Այս ամենը լավ է հաստատվում հետևյալով: 1928 թ. Մոսկվայի Մեծ թատրոնում Մաքսիմ Գորկու հետ հանդիպում է կազմակերպվում: Նրա ստեղծագործական ուղու մասին ելույթով պետք է հանդես գար Ա. Լուինաչարսկին, սակայն նա դրա մասին իմանում է ելույթից ընդամենը քառասուն րոպե առաջ: Լուինաչարսկին մի այնպիսի փայլուն ելույթ է ունենում, որն առանձնանում է հենց իր՝ հոետորական բարձր արվեստ ունեցող մտավորականի շատ ու շատ հաջողված ելույթների շարքում: Հետագայում, երբ գործընկերները, իմանալով եղելության մանրամասները, հարցնում են, թե ինչպես նա կարողացավ հանպատրաստից այդպես ելույթ ունենալ, Լուինաչարսկին պատասխանում է. «Ինչպե՞ս թե հանպատրաստից: ԶԷ որ ես Գորկու մասին այդքան գրել եմ դեռևս հեղափոխությունից առաջ և, բնական է, շարունակում եմ որպես քննադատ զբաղվել նրա ստեղծագործությամբ»: Այսինքն՝ Լուինաչարսկին այդ ելույթին, իր խոսքերով ասած, «նախապատրաստվել էր ամբողջ կյանքում»¹¹⁹:

Այս ամենից կարելի է եզրակացնել հետևյալը:

ա) Ճիշտ կլինի հնարավորության դեպքում հանգամանորեն նախապատրաստվել ելույթին:

բ) Նախապատրաստվելիս պետք է օգտվել հնարավոր բոլոր աղբյուրներից՝ հանրագիտարաններ, տեղեկատուներ, համացանցային կայքեր ևն: Կարելի է գտնել նաև համապատասխանող առաձևեր, ասացվածքներ, թևավոր խոսքեր, առակներ, հումորային զրույցներ ևն ու, պայմանավորված ասելիքի բնույթով, ելույթի մեջ ըստ անհրաժեշտության գործածել:

գ) Եթե ելույթը գրի առնելը պարտադիր չէ (նախօրոք թարգմանելու կամ այլ պատճառով), ապա նախապատրաստվել պետք է ըստ անհատական ընտրության՝ համակարգված գրառումներ կատարելով, տեքստն ամբողջությամբ գրելով ևն: Եթե պարտադիր չէ ելույթն ընթերցելը, պետք է ձգտել հնարավորության դեպքում բանավոր ելույթ ունենալու:

դ) Քանի որ հնարավոր են դեպքեր, երբ հանպատրաստից ելույթ ունենալու անհրաժեշտություն կառաջանա, ապա պետք է ընդհանրապես միշտ էլ հետաքրքրվել հասարակական կյանքում կատարվող իրադարձություններով, արվեստի պատմությունով, գիտության նվաճումներով, մի խոսքով՝ ձգտել լինելու բազմակողմանիորեն զարգացած: Այսինքն՝ խոսել հանպատրաստից, բայց ոչ անպատրաստ:

¹¹⁹ Տե՛ս «Культура русской речи. Учебник для вузов» (под ред. проф. Л. К. Граудиной и проф. Е. Н. Ширяева), М., 1999:

5.1.3. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Հրապարակային խոսքը, ինչպես ամեն մի գրավոր կամ բանավոր տեքստ, ունի իմաստակառուցվածքային մասեր: Տարբեր ուսումնասիրողներ հրապարակային խոսքի տարբեր մասեր են առանձնացնում: Շատերը պարզապես նշում են երեք մաս՝ **սկզբնամաս, հիմնամաս, ավարտամաս:** Մյուսները ուշադրություն են դարձնում այս հիմնական մասերի միջև եղած անցումներին, դրանց իմաստանրբերանգային տարբերություններին՝ առանձնացնելով հետևյալ հինգ մասերը՝ **սկիզբ, ներածություն, հիմնական մաս (բովանդակություն), եզրակացություն (հետևություն), ավարտամաս**¹²⁰: Վ. Միրզոյանը իր «Ճարտասանություն» համակողմանի ուսումնասիրության մեջ գրում է. «Հայ ճարտասանության մեջ ևս տարբեր են մոտեցումները, սակայն... տիրապետողը (և առավել ընդունելին) Մարկոս Քվինտիլիանոսից ավանդաբար պահպանված վեցմասյա դասդասումն է. առաջաբան, առաջարկություն, պատմություն, ցուցում (ցուցումն), հորդոր և վերջաբան»¹²¹:

Դասակարգումները տարբեր են, սակայն ելույթի ինչ մասեր էլ առանձնացվեն, կամ տվյալ դեպքում եթե որոշ մասեր բացակայեն, ամենակարևորն այն է, որ ելույթին բնորոշ լինեն նյութի միասնականությունը, ասելիքի մասերի լեզվատրամաբանական փոխկապակցվածությունը, ինքնատիպությունը, թարմությունը: Խոսքում կարող են գործածվել ինչ-որ օրինակներ կյանքից, զրույցներ, անսպասելի ձևակերպումներ ևն: Հնարավոր է, որ առաջին հայացքից թվա, թե դրանք չեն առնչվում ելույթի բուն թեմային, բայց դրանք ի վերջո պետք է կապվեն բուն նյութին, դառնան խոսքի գեղեցկացման, հարստացման, ապացուցման կամ այլ միջոց: Սակայն խոսքը չպետք է խճողել զանազան պատմություններով, ասույթներով ևն: Դրանց կիրառության չարաշահումը էական թերություն է:

Գնահատելի է պարզ, բայց ոչ պարզունակ խոսքը: Ամեն ինչ պետք է լինի տեղին, չափավոր ու տրամաբանված, և նրա խոսքն է լավ ու տպավորիչ ստացվում, ով կարողանում է իրականացնել այդ ամենը: Ներսես Շնորհալու արձակ գործերը քննելիս Մ. Աբեղյանը գրում է. «Դրանցից ժամանակով առաջինն է «Ատենաբանութիւնը», որ նա ասել է իր՝ կաթողիկոս ձեռնադրվելու առթիվ բազմության առաջ: ...Ով սիրում է ճոճոան ֆրազներ, այնպիսուն հաճելի չի լինիլ այս ատենաբանությունը, որ վսեմ է իր պարզությամբ, ազդու է ոչ թե արտաքին ձևով, այլ ջերմ ներքինով, որ բխում է սրտից: Մեկ-մեկ բանեցնում է երկար ասացվածքներ, բայց ընդհանրապես շատ հասարակ, իսկապես մեկին ոճով մի հորինվածք է դա՝ առանց որևէ ճարտասանական ճոռոմ զարդարանքների, կիրառում է հարցումներ և շրջումներ միայն և սակավաթիվ պատկերավոր ձևեր: Բայց դրանց փոխանակ՝ նրա ճառն ուժեղ է տրամաբանությամբ, մտածության կապակցված ու կարգավորյալ ընթացքով, որ այսպիսի խոսքերի համար անհրաժեշտ պայման է»¹²²:

¹²⁰ Տե՛ս նույն տեղը:

¹²¹ Վ. Միրզոյան, Ճարտասանություն, Եր., 2006, էջ 85-86:

¹²² Մ. Աբեղյան, նշվ., աշխ., էջ 147-148:

Մուտքը կամ առաջաբանը կարևոր դեր ունի և կատարում է երկու հիմնական գործառույթ՝ **հոգեբանական** (կապ ստեղծել լսարանի հետ) և **բացատրական** (հիմքեր ստեղծել՝ հետազայում ասվածը լավ ըմբռնել տալու համար): Տարբեր բնույթների ելույթների առաջաբանները տարբեր են լինում, ուստի հնարավոր է նշել միայն այն ընդհանուր, բայց էական գծերը, որոնք հիմնականում պետք է բնորոշ լինեն առաջաբանին: Առաջաբանը պետք է լինի սեղմ, քանի որ ունկնդիրներն այնուամենայնիվ սպասում են բուն ասելիքին, լինի հետաքրքրող և տրամադրող: Նրա միջոցով ունկնդիրները պետք է պատկերացում կազմեն ելույթի ընդհանուր ուղղվածության մասին: «Այսպիսով՝ առաջաբանը ելույթի սկիզբն է, նույնը, ինչ որ բանաստեղծական ստեղծագործության մեջ նախերգանքը, իսկ ֆլեյտայի նվագում՝ նախերգը» (Արիստոտել):

Եթե ինչ-որ հատուկ նպատակով չի արվում, ապա պետք չէ ելույթի հենց սկզբից նշել, թե ժամանակ չի եղել լավ պատրաստվելու, սովոր չեք մեծ լսարանի առջև հանդես գալու, հուզվում կամ անհանգստանում եք ևն: Նման պատճառաբանությունները ունկնդիրներին տրամադրում են այն բանին, որ հետաքրքիր ու հաճելի ելույթ չեն լսելու: Պետք է փորձել վստահ ու անկաշկանդ խոսել. մեծ մասամբ ելույթի ընթացքում խոսողի նախնական լարվածությունը աստիճանաբար թուլանում է:

Առաջարկության մեջ պետք է ուրվագծվեն խոսքի հետագա զարգացումները: Դրանով պարզ են դառնում խոսողի մտադրություններն ու նպատակները, առաջ քաշած խնդիրները, ունկնդիրները լիովին ընդգրկվում են ընկալման գործընթացի մեջ: Առաջարկությունը ներառում է մի քանի գործոններ: Հոգեբանական առումով կարևորվում է այն, որ ուժեղանում են կապը, ուշադրությունը և հետաքրքրությունը, որոնք սկզբնավորվել են առաջաբանի միջոցով, ստեղծվում է անհրաժեշտ տրամադրվածություն: Բովանդակային առումով կարևորվում է այն, որ նկարագրվում է ելույթի նպատակային ուղղվածությունը, թվարկվում կամ կարճ նկարագրվում են այն խնդիրները, որոնց մասին պետք է խոսվի պատմության մեջ: Հասկացական առումով կարևորվում է այն, որ նշվում է թեմայի առանձնահատկությունը, բնորոշվում հրատապությունը և հասարակական հնչեղությունը: Եթե ունկնդիրները սկիզբից ուշադիր չլինեն և չհետևեն խոսքի ընթացքին, ապա շարունակությունն էլ լիովին հասկանալի չի լինի, եթե նույնիսկ հետո սկսեն ուշադիր լսել: Այս առիթով կարելի է հիշել մի պատմություն: Մի բարդ գործի քննության ժամանակ Դեմոսթենեսը տեսնում է, որ դատավորները ցրված ու անուշադիր են: Նա ընդհատում է իր ելույթը և սկսում պատմել մի մարդու մասին, որը մի էշ էր վարձել իշապանի հետ: Շոգ օր էր, և մարդը նստում է հանգստանալու ավանակի գցած ստվերում: Իշապանը բողբոջում է՝ ասելով, թե նա վարձել է միայն ավանակը, բայց ոչ նրա ստվերը: Վեճը հասնում է դատարան: Այստեղ Դեմոսթենեսը լռում է և, երբ դատավորները խնդրում են շարունակել պատմությունը, տխրությամբ նկատում է. «Ավանակի ստվերի մասին առակը դուք պատրաստ եք լսելու, բայց կարևոր գործը լսել չեք ցանկանում»: Փաստորեն, թեմայից դիտավորյալ շեղվելով, Դեմոսթենեսը ուշադրություն է հրավիրում:

Պատմությունը ելույթի հիմնական մասն է: Հենց այստեղ են ներկայացվում խնդրի բուն էությունը, բովանդակային փաստական տեղեկությունները: Փաստական կամ տեսական նյութով հագեցվածության աստիճանը պայմանավորված

է խոսքի բնույթով, թեմայով, լսարանի առանձնահատկություններով: Պատմությունը պետք է շարադրել տրամաբանական հաջորդականությամբ, հստակ և առանց ձգձգելու: Բոլորին հայտնի իրողությունները պետք է սոսկ հիշատակվեն: Սակայն մյուս կողմից ծայրահեղ հակիրճ խոսքն էլ կարող է անհասկանալի մնալ: Արիստոտելը դիպուկ է բնորոշում. «Ինչպես մեկը հացավաճառի հարցին, թե ինչպիսի հաց հունցեմ՝ պինդ, թե փափուկ, պատասխանել է՝ ինչպես, միթե հնարավոր չէ լավ հաց հունցել: Ճիշտ այդպես էլ և այստեղ. պետք չէ ընդարձակ պատմել, ինչպես նաև պետք չէ ասել ընդարձակ առաջաբան և բերել ընդարձակ ապացույցներ: Այս դեպքում «լավը» ընդարձակությունը կամ սեղմությունը չէ, այլ պատշաճ չափը. վերջինս էլ այն է, որ պետք է ասել այն ամենը, ինչը պարզում է գործը, կամ ինչ հարկավոր է նրա համար, որպեսզի ցույց տրվի, որ այսինչ բանը եղել է, կամ, որ այսինչը վնաս է հասցրել կամ անարդարացի է վարվել, կամ այն (տվյալ դեպքը) կարևորությունն ունի, որը դու ցանկանում ես նրան հաղորդել»¹²³: Այսինքն՝ հարկավոր է գտնել այն լավագույն չափը, որը տվյալ դեպքում համապատասխանում է բոլոր առումներով:

Փաստարկումը (ցուցումը) հաջորդում է պատմությանը: Փաստարկման միջոցով խոսողը հիմնավորում է ասվածը: Փաստարկումն առաջին հերթին պետք է հիմնվի տրամաբանության օրենքների վրա, սակայն հնարավոր է, որ ելույթ ունեցողը դիտավորյալ դիմի այլ միջոցների (հոգեբանական ազդեցության, բառախաղերի ևն), եթե չկան տրամաբանական բավարար հիմքեր: Ահա թե ինչպես է փաստարկում Փոկիոնը՝ փորձելով հանդարտեցնել ժողովրդին. «Երբ Ալեքսանդրի մահվան լուրը հասավ Աթենք, Փոկիոնը զսպում էր քաղաքացիների անժամանակ ապստամբությունը՝ ասելով, թե չպետք է շտապել՝ հավաստի համարելով այդ լուրը. «Աթենացիք, եթե նա այսօր մեռած է, ապա մեռած կմնա վաղն էլ, վաղը չէ մյուս օրն էլ»»¹²⁴:

Հորդորը հաջորդում է փաստարկմանը: Հորդորի միջոցով խոսողը նախապատրաստում է ավարտը՝ մեկ անգամ էլ շատ սեղմ ներկայացնելով ասվածի բուն էությունը և հուզական նոր լիցք հաղորդելով: Միշել Մոնտենը «Այն մասին, որ մեր մտադրությունները մեր արարքների դատավորներն են» գրվածքում, որն սկսում է «Ասում են, թե մահը մեզ ազատում է ամեն տեսակի պարտավորություններից» նախադասությունով, ավարտից առաջ նշում է հետևյալը. «Ավելի վատ են վարվում նրանք, ովքեր ամբողջ կյանքում ռիս են պահում իրենց որևէ մեթոդների նկատմամբ՝ արտահայտելով այն լոկ վերջին կամքով: Հարուցելով վիրավորված մարդու անբարեհաճությունն իրենց հիշատակի հանդեպ՝ նրանք այդպիսով ցույց են տալիս, որ քիչ են մտածում իրենց պատվի և ավելի քիչ՝ խղճի մասին, քանզի չեն ուզում թեկուզև մահը հարգելով մարել իրենց չարությունը և թողնում են, որ այն իրենցից հետո էլ ապրի: Նրանք նման են այն անիրավ դատավորներին, որոնք անվերջ հետաձգում են իրենց վճիռը և կայացնում լոկ այն ժամանակ, երբ արդեն մոռացել են գործի բուն էությունը»¹²⁵:

¹²³ **Аристотель**, Риторика (перевод Н. Платоновой), Античные риторика, М., 1978, էջ 180:

¹²⁴ **Պլուտարքոս**, Նշվ. աշխ., էջ 513:

¹²⁵ **Մ. Մոնտեն**, Նշվ. աշխ., էջ 32–34:

Վերջաբանով ամփոփվում է ասվածը: Վերջաբանները տարբեր են լինում՝ պայմանավորված խոսքի բնույթով, նյութով, խոսողի նպատակադրմամբ ևն, սակայն շատ կարևոր է տպավորիչ ավարտը: Տպավորիչ վերջաբանի շնորհիվ խոսքը երկար է հիշվում: Մ. Մոնտենը վերը նշված իր գրվածքն այսպես է ավարտում. «Եթե միայն ինձ հաջողվի, ես կաշխատեմ, որ մահս չասի ոչ մի այնպիսի բան, ինչ նախկինում չի ասել կյանքս»:

5.1.4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ: Հրապարակային ելույթի հաջողությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Ինչպես տեսանք, կան հրապարակային խոսքի տարբեր խմբերին բնորոշ թե՛ ընդհանուր, թե՛ մասնավոր հատկանիշներ: Էական են նաև ճարտասանի անհատական հատկանիշները՝ կապված ելույթի նախապատրաստվելու և ելույթ ունենալու հետ: Լսարանի ազդեցությունն էլ խոսողների վրա տարբեր է: Պլուտարքոսը գրում է. «Իմ դիտարկումների համաձայն՝ զայրույթը հոետորներին էլ է հաճախ հանգեցնում լուրջ սխալների: Արիստոտելը պատմում է սամոսացի Սատիրոսի մասին, թե նա դատարանում ելույթից առաջ իր ականջներին մոմ էր քսում, որպեսզի հակառակորդների լուտանքներից զայրացած՝ շեղվելով գործը չփչացներ»¹²⁶: Մինչդեռ Միշել Մոնտենն էլ գրում է, թե «Սևերոս Կասիոսի մասին պատմում են, թե նա զգալիորեն ավելի լավ էր խոսում առանց նախապես խորհելու և թե իր հաջողություններով պարտական էր ավելի շուտ բախտին, քան ջանասիրությանը: Պատմում են նաև, թե երբ ճառելիս ջղայնացնում էին, դա օգնում էր նրան, և հակառակորդները զգուշանում էին դիպչել նրա զգայուն թելերին՝ վախենալով, թե զայրույթը կկրկնապատկի նրա պերճախոսությունը»¹²⁷:

Խոսքը ունկնդիրների վրա նաև գեղագիտական ազդեցություն է գործում: Հաջող ելույթի համար կարևոր են մի շարք դրական հատկանիշներ, որոնք պետք է բնորոշ լինեն հրապարակային խոսքին:

Խոսքն ընդհանրապես և հրապարակային խոսքը մասնավորապես պետք է լինի **հստակ, հասկանալի, արտահայտիչ**: Դրա համար հոետորը պետք է թե՛ լեզվական գիտելիքներ ունենա, թե՛ ընդհանրապես զարգացածության բարձր աստիճան: Լեզվական առումով կարևոր են ուղղախոսական նորմերի պահպանումը, ճիշտ բառընտրությունը, քերականական միջոցների ճիշտ կիրառությունը, ռճական համապատասխանությունը: Սրանցից բացի՝ կարևոր են շարժումները, հագուստը, սանրվածքը ևն:

Պետք է հաշվի առնել **տպավորության կարևորությունը**: Խոսքը մեծ ուժով է ներագրում, երբ թարմ է ու ինքնատիպ: Ծամծմված, ստանդարտ արտահայտություններ պարունակող խոսքը հետաքրքրություն չի առաջացնի և տպավորություն չի գործի: Արդեն գիտեցածը գրավիչ չէ: Այս առումով ուշագրավ է Պլուտարքոսի գրառած հետևյալ պատմությունը. «Մի անգամ Լիսիոսը դատավեճ ունեցող մի մարդու տվել է նրա համար իր գրած ճառը: Սա, կարդալով մի քանի անգամ, վիհաված եկել է Լիսիոսի մոտ և ասել, թե առաջին անգամ ծանոթանա-

¹²⁶ Պլուտարքոս, նշվ. աշխ. էջ 511:

¹²⁷ Մ. Մոնտեն, նշվ. աշխ., էջ 43:

լիս ճառն իրեն թվաց հիանալի, իսկ երկրորդ ու երրորդ ընթերցումներից հետո՝ խամրած ու բոլորովին անպետք։ Լիսիոսը ծիծաղելով հարցրել է. «Իսկ միթե դու մտադիր ես մի քանի անգամ ասել այդ ճառը դատավորների առաջ»¹²⁸:

Խոսողի **ծայնը, խոսքի տեմպը, ուժը, տոնը, դադարները** ևս շատ կարևոր են։ Իհարկե, կարևոր են ճարտասանի բնատուր հատկանիշները, հնարավորությունները, բայց դրանք պետք է զարգացնել տարբեր վարժություններով։ Արտասանական հատկանիշները պետք է համապատասխանեն ասվածի բովանդակությանը։ Այս առիթով էլ մեջբերենք մի պատմություն. «Կարնեադոսը, երբ դեռ մեծ փառքի չէր արժանացել, զրուցելիս է եղել գիմնասիոնում, վերակացուն մեկին ուղարկել է նրա մոտ՝ խնդրելով, որ մի քիչ չափավորի իր ծայնի ուժը (քանզի նա խիստ բարձրախոս է եղել), իսկ Կարնեադոսն ասել է. «Դե ծայնաչափ տուր ինձ», ինչին սա լավ պատասխան է տվել. «Քեզ ծայնաչափ եմ տալիս քո զրուցակցին»¹²⁹:

Եթե հոետորը տարբեր պատճառներով ստիպված է միևնույն լսարանի առջև մի քանի անգամ ելույթ ունենալ կամ էլ տարբեր լսարանների առջև նույն թեմայով ելույթ ունենալ, ապա նրա գործը խիստ դժվարանում է։ Անհրաժեշտ է գտնել նորանոր ձևեր ու միջոցներ, բովանդակային հավելումներ, որպեսզի խոսքը ծանծրալի չդառնա։ Վահան Թոթովենցը, ով ասում է, թե «Բանավոր Թումանյանը մի քանի հասակով ավելի բարձր էր, քան գրավոր Թումանյանը», Հովհաննես Թումանյանի 50-ամյակի միջոցառումներում ունեցած նրա ելույթների մասին գրում է. «Հիսնամյակի գրեթե բոլոր երեկոյաններին ես ներկա եմ եղել։ Ինձ զարմացնում էր մի հանգամանք, որ ամեն մի երեկոյթի Թումանյանը կարողանում էր նոր խոսք ասել։ Չարավ նա ոչ մեկ կրկնություն»¹³⁰:

Խոսքը պետք է լինի **պարզ ու բնական**։ Սա չի նշանակում, թե չպետք է գործածել ոճական տարբեր միջոցներ, դարձվածային միավորներ, թևավոր խոսքեր, տարբեր աղբյուրներից մեջբերումներ ևն։ Դրանք անշուշտ պետք է լինեն, սակայն պետք է կիրառվեն տեղին և չափավոր։ Ահա թե ինչպես է բնութագրում Մ. Աբեղյանը Ներսես Լամբրոնացու ճարտասանական արվեստը. «Ն. Լամբրոնացու ճարտասանությունն ավելի ևս փայլուն է նրա Հոգեգալստյան և Համբարձման ներբողյանների մեջ, որոնցով նա հանդիսանում է տաղանդավոր հոետոր, լավագույն ներկայացուցիչը մեր հոգևոր պերճախոսության... Նա բնականաբար կիրառում է ամեն տեսակի ճարտասանական ձևեր՝ դիմում, բացադարձություն, ծայնարկություն, հարցում, նմանություն, կրկնություն ևն։ Դրանք նա բանեցնում է վարպետորեն, ոճի պեսպիսությամբ։ Կրկնություններով էլ, օրինակ, նրա ասացվածը ոչ թե թուլանում է, ճապաղ ու ծանծրալի դառնում, այլ, ընդհակառակն, զորանում և գրավչություն է ստանում։ Ամենն ասում է նա վայելիչ դարձվածներով, ոչ սակավ բանաստեղծական պատկերներով, հորդ ու ծաղկուն, բայց պարզ ու մեկին ոճով, առանց կուտակաբանության, հեռու մթնությունից և բարդ ու պարբերական ասացվածներից»¹³¹:

¹²⁸ Պլուտարքոս, նշվ. աշխ., էջ 526:

¹²⁹ Նույն տեղում, էջ 541:

¹³⁰ Վ. Թոթովենց, Երկեր (3 հատորով), հ. 3, Եր., 1991, էջ 504:

¹³¹ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 160:

Ելույթի ծավալը այնքան էլ էական չէ. իհարկե, այն ընդհանուր առմամբ պետք է համապատասխանի իրադրությանը, ընդունված նորմերին ևն, սակայն առավել կարևորը ասելիքի ամբողջական լինելն է:

5.2. ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՎԵՍ

5.2.1. Ընդհանուր հատկանիշներ (255): 5.2.2. Բանավեճի տեսակները (256): 5.2.3. Բանավեճի բաղադրիչները (257): 5.2.4. Բանավեճ վարելու ընդհանուր սկզբունքներ և միջոցներ (260):

5.2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆՈՒՄՆԵՐ: Բանավեճի արվեստը՝ **էրիստիկան**, ծնավորվել և իր ծաղկման գագաթնակետին է հասել Հին Հունաստանում, թեև այս կամ այն չափով ուսումնասիրվել է նաև Հին աշխարհի տարբեր երկրներում: Հին Հունաստանում բանավեճի արվեստի սկզբնավորման ու կատարելագործման մեջ էական դերը սովեստներինն է, որոնք կարծում էին, թե կյանքի պայքարում հաղթելու միջոցներից մեկն էլ բանավեճն է: Մեր ժամանակներում էլ այն չի կորցրել իր արդիականությունը. բանավեճը լայնորեն կիրառվում է առօրյա խոսքից մինչև դիվանագիտական տարբեր հանդիպումներում:

Հին Հունաստանում բանավեճի արվեստը լայնորեն ուսումնասիրվում էր, գրվում էին տեսական աշխատություններ: Հետագա դարերում ուսումնասիրողները բանավեճի արվեստին վերաբերող տարբեր հարցերի անդրադարձել են թե՛ փիլիսոփայությանը, տրամաբանությանը, արվեստին, գրականությանը, խոսքի մշակույթին, թե՛ հենց բանավեճի արվեստին նվիրված աշխատություններում: Հիշենք, օրինակ, Պիեր Աբելյարի, Ուիլյամ Օկամի, Միշել Մոնտենի, Անտուան Առնոյի, Պիեր Նիկոլի, Միխայիլ Լոմոնոսովի և այլոց աշխատությունները: Հայ իրականության մեջ բանավեճի արվեստին տարբեր աշխատություններում և տարբեր ընդգրկումներով անդրադարձել են Դավիթ Անհաղթը, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Սարկավազը, Հովհաննես Հովվը, այնուհետև՝ Էդ. Հյուրմյուզյանը, Ս. Գանթարյանը, Մ. Գարագաշյանը, մեր ժամանակներում՝ Ս. Արևշատյանը, Գ. Բրուտյանը, Վ. Միրզոյանը, Պ. Պողոսյանը, Մ. Ասատրյանը, Լ. Եզեկյանը և ուրիշներ:

19-րդ դարի սկզբին բանավեճի արվեստի վերաբերյալ արժեքավոր աշխատություն է գրել Արթուր Շոպենհաուերը, 20-րդ դարի սկզբին՝ Սերգեյ Պոլարնինը: Ա. Շոպենհաուերը էրիստիկան բնորոշում է որպես հոգևոր սուսերամարտ՝ բանավեճից հաղթող դուրս գալու համար: Բանավեճում ամեն գնով հաղթելու ցանկությունը էրիստիկայի հիմքում դրված էր դեռևս Հին Հունաստանում: Արիստոտելը տարբերակում էր բանավեճի երեք տեսակ՝ **դիալեկտիկական** (ճշմարտությանը հասնելու համար), **սոփեստական** (թվացյալ իմաստությունը ցույց տալու համար) և **էրիստիկական** (հաղթանակի հասնելու համար):

Էրիստիկան ուսումնասիրելու համար կարևոր և օգտակար է ուսումնասիրել տրամաբանության հատկապես այն բաժինները, որոնք վերաբերում են մտահանգումներին ու փաստարկմանը:

5.2.2. ԲԱՆԱՎԵՃԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ: Բանավեճն ուսումնասիրողները փորձել են առանձնացնել բանավեճի տեսակները¹³²: Դա կատարելու համար անհրաժեշտ է հստակեցնել, թե որ հիմունքով է դասակարգվում բանավեճը: Այս հարցի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ:

Ամենից հաճախ բանավեճը դասակարգում են հետևյալ հիմունքներով՝ **ըստ արտահայտման ձևի, ըստ դրսևորման կերպի, ըստ ձևավորման եղանակի, ըստ նպատակի, ըստ մասնակից կողմերի քանակի, ըստ անցկացման ձևի:**

Ըստ արտահայտման ձևի՝ բանավեճը լինում է **բանավոր** և **գրավոր**: **Բանավոր** բանավեճի դեպքում, ի թիվս մյուսների, կարևոր դեր են կատարում նաև հոգեբանական և այլ գործոններ՝ արագ կողմնորոշման ունակությունը, արտասանությունը ևն: Իսկ եթե կան նաև լսողներ, ապա կարևորվում են նաև ուրիշ հանգամանքներ. բանավիճողները ցանկանում են ոչ միայն հաղթել, այլև լավ տպավորություն թողնել, հոգեբանական կապ ստեղծել լսարանի հետ ևն: **Գրավոր** բանավեճերը հատկապես ծավալվում են գիտական, հասարակական, քաղաքական կարևոր հարցերի վերաբերյալ: Բանավիճողները կարող են հանդես գալ հոդվածներով, գրքույկներով ևն: Այս դեպքում արդեն բանավեճը հանպատրաստից լինել չի կարող, ուստի բանավիճողները հնարավորություն ունեն տարբեր նյութեր ուսումնասիրելու, իրենց խոսքը մշակելու, ավելի սառը դատելու: Սակայն գրավոր բանավեճն էլ այն թերությունն ունի, որ կարող է երկար ձգվել, և ընթերցողները այդ ընթացքում կմոռանան ասվածի մի մասը:

Ըստ դրսևորման կերպի՝ բանավեճը լինում է **բացահայտ** և **ծածուկ**: **Բացահայտ** բանավեճերը ծավալվում են հրապարակայնորեն՝ հենց ունկնդիրների առջև, եթե բանավեճը բանավոր է, կամ մամուլում, տպագիր տարբեր աշխատություններում, եթե բանավեճը գրավոր է: **Ծածուկ** բանավեճը սովորաբար դրսևավորվում է գաղտնի գրախոսությունների միջոցով: Հնարավոր է նաև մեկ այլ կերպ (ըստ էության՝ բացահայտ), երբ բանավիճողը կոնկրետ չի նշում իր հակառակորդին, սակայն գործին տեղյակ մարդկանց պարզ է լինում, թե ում նկատի ունի: Ահա թե ինչպես է Ա. Գլուխովն իր գրքում ներկայացրել ռուս նշանավոր գիտնական Ի. Մ. Սեչենովի և Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Կ. Դ. Կավելինի գիտական բանավեճի մի դրվագը. «1872 թվականին «Վեստնիկ Եվրոպի» լիբերալ ամսագիրը տպագրեց Կավելինի «Հոգեբանության խնդիրները» ծավալուն աշխատությունը: Չնայած Սեչենովն այդ աշխատությունում հիշատակված չէ, սակայն բոլորի համար պարզ էր, թե ում հետ է բանավիճում նրա հեղինակը: Պետերբուրգյան պրոֆեսորի հոդվածի պատասխանին Ի. Սեչենովը ձեռնամուխ եղավ «մեծ հաճույքով»¹³³:

¹³² Բանավեճի արվեստի մասին տե՛ս նաև Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Եր., 1991, էջ 320–332: Н. В. Блажевич, Т. А. Блажевич, Теория спора, Тюмень, 2010. С. Поварнин, Искусство спора, 2–е изд., Петроград, 1923. А. Шопенгауер, Эристика, или искусство побеждать в спорах (перевод с немецкого: Н. Л. д'Андре), С.–Петербург, 1900 ևն:

¹³³ Ա. Գլուխով, Դարերի միջով անցնող գրքեր (թարգմ. Մ. Բլոսյան), Եր., 1980, էջ 204:

Ըստ ձևավորման եղանակի՝ բանավեճը լինում է **պաշտոնական** և **պարտադրված**: **Պաշտոնական** բանավեճերը որևէ կանոնադրությամբ կամ այլ ձևով նախատեսված բանավեճերն են: Օր.՝ ուսումնական հաստատություններում ավարտական աշխատանքների, գիտական ատենախոսությունների պաշտպանությունները պաշտոնապես սահմանված գիտական բանավեճեր են, որոնցում բացահայտ բանավեճի միջոցով պարզաբանվում են գիտական հարցեր: Իսկ **պարտադրված** բանավեճերը պաշտոնապես նախատեսված չեն. դրանք թելադրվում են անհրաժեշտությամբ և կարող են ծագել տարբեր իրավիճակներում ու տարբեր խնդիրների վերաբերյալ:

Ըստ նպատակի՝ (հիշենք Արիստոտելի դասակարգումը) բանավեճը լինում է **դիալեկտիկական** (ճշմարտությանը հասնելու համար), **սոփեստական** (թվացյալ իմաստնությունը ցույց տալու համար) և **երիստիկական** (հաղթանակի հասնելու համար):

Ըստ մասնակից կողմերի քանակի՝ առանձնացվում են **երկխոսական** և **բազմախոսական** բանավեճեր: **Երկխոսական** բանավեճին մասնակցում են երկուսը, իսկ **բազմախոսական** բանավեճին՝ երեք և ավելի անձինք: Շատ ուսումնասիրողներ առանձնացնում են նաև **մենախոսական** բանավեճ: **Մենախոսական** բանավեճի դեպքում մարդն ինքն իր հետ է բանավիճում (հիշենք, օրինակ, Պեպոյի նշանավոր մենախոսությունը Գ. Սունդուկյանի «Պեպո» ստեղծագործությունից):

Ըստ անցկացման ձևի՝ բանավեճերը լինում են **կազմակերպված** և **հանապատրաստից**: **Կազմակերպված** բանավեճերը նախօրոք ծրագրվում և նախապատրաստվում են, իսկ **հանապատրաստից** բանավեճերը կազմակերպվում ու ընթանում են ըստ իրադրության:

Շատ ուսումնասիրողներ տարբերակում են նաև բանավեճի այլ տեսակներ՝ **ա)** կենտրոնացված (մեկ հարցի վերաբերյալ) և չկենտրոնացված (տարբեր հարցեր ընդգրկող), **բ)** ըստ բնագավառի՝ քաղաքական, տնտեսական, իրավական, մաթեմատիկական, լեզվաբանական, գրականագիտական ևն, **գ)** կարճատև, միջին տևողությամբ, երկարատև և անավարտ, **ե)** անձնական և հասարակական ևն: Ռուս անվանի գիտնական Ս. Պովարնինը, ի թիվս բանավեճի այլ տեսակների, նշում է նաև բանավեճ-սպորտը և բանավեճ-խաղը:

5.2.3. ԲԱՆԱՎԵՃԻ ԲԱՂԱԴԻՉՆԵՐԸ: Բանավեճի հիմնական բաղադրիչներն են **հերքումը**, **ապացույցը**, **եզրահանգումը** (հետևությունը):

Հերքման և ապացուցման համար անհրաժեշտ են փաստեր և փաստարկներ: Գ. Բրուսյանը փաստարկման վերաբերյալ գրում է. «Փաստարկումը բացահայտ կամ ոչ բացահայտ երկխոսության ձևով իրականացվող կշռադատություն է, որի ընթացքում առաջադրվում է որևէ դրույթ, ապացուցվում է այդ դրույթը, հերքվում են ընդդիմախոսի (առկա կամ հնարավոր) հակափաստարկները, արժեքավորվում է առաջադրված դրույթը՝ որպես գործողության ծրագիր, ստեղծվում է համոզմունք թեզիսի ճշմարտության և գործողության ծրագրի նպատակահար-

մարության վերաբերյալ՝ ցանկանալով դարձնել ունկնդրին (ընդդիմախոսին, բանավիճողին) փաստարկողի համախոհը և առաջադրված ծրագրի իրականացման համամասնակիցը»¹³⁴:

Ապացուցումն ու հերքումը կատարվում են տարբեր ձևերով և ունեն տարբեր տեսակներ: **Ապացուցումը** հնարավոր է իրականացնել ուղղակիորեն՝ ելնելով հիմքերի ճշմարտությունից, և անուղղակիորեն՝ հակասող ենթադրության միջոցով կամ բաժանարար ապացուցմամբ, որի ընթացքում ձևակերպվում են բոլոր հնարավոր թեզիսները, հերթով ժխտվում, և միակ հնարավորը մնում է ապացուցելին: **Հերքումը** հնարավոր է իրականացնել փաստերի միջոցով, հակաթեզիսի ճշմարտության ապացուցմամբ կամ էլ թեզիսից հետևանքներ բխեցնելով և ցույց տալով դրանց անհնարինությունը:

Երբ ռուս գիտնական Իվան Սեչենովին դատարան պետք է կանչեին (արգելում էին նրա «Գլխուղեղի ռեֆլեքսները» աշխատության հրատարակումը), անհանգստացած բարեկամները հարցնում են, թե իր պաշտպանության համար փաստաքաններից ում է մտադիր հրավիրել: Նա պատասխանում է. «Ինչ եմ անում փաստաքանը: Ես ինձ հետ դատարան կտանեմ մի գորտ և դատավորների առջև կկատարեմ իմ բոլոր փորձերը. թող այն ժամանակ դատախազը հերքի ինձ»¹³⁵:

Հերքմանը և ապացույցին հետևում է եզրահանգումը: **Եզրահանգման** միջոցով խոսողն ընդհանրացնում է ասածը, համադրում բերած փաստարկները և ներկայացնում իր տեսակետի վերջնական հիմնավորումը:

Սակայն պետք է հիշել, որ բանավեճի ժամանակ, ինչպես նշվել է, շատերը կարևորում են տպավորություն գործելը, իրենց գիտելիքները ցույց տալը, համոզելը ևն, այսինքն՝ իրենց նպատակին, այլ ոչ թե ճշմարտությանը հասնելը: Ուստի երբեմն բանավիճողները ապացուցումն ու հերքումը չեն կատարում տրամաբանության սահմաններում: Ահա թե ինչ է գրում Ա. Շոպենհաուերը այդ մասին. «Եթե մարդկանց էության մեջ չարը չլիներ, եթե մենք մտքերի ամեն մի փոխանակման դեպքում լիովին արդար լինեինք, ապա այդ դեպքում անպայման մենք միայն կաշխատեինք հասնել ճշմարտին և ուշադրություն չէինք դարձնի, թե որ տեսակետն է արդարացի՝ սկզբից մեր ասածը, թե մեր հակառակորդի: Այդ վերջին տեսակետին մենք կվերաբերվեինք լիովին անխռով կամ էլ ծայրահեղ դեպքում դրան այդքան կարևոր նշանակություն չէինք տա: Իսկ հիմա հակառակն է. դա առաջնահերթ կարևորության իրողություն է: Մեր ուղեղը շատ դյուրագրգիռ է այն ամենում, ինչը վերաբերում է ինտելեկտուալ ուժերին, և ոչ մի կերպ չի ուզում համաձայնել, որ սխալ լինի այն, ինչ մենք ասել ենք սկզբից, իսկ այն, ինչ ասել է հակառակորդը, ճշմարիտ: ... Սերը ճշմարտության նկատմամբ, որը մեծ մասամբ ճիշտ թվացող թեզիսի հարցադրման միակ դրդիչն է եղել, լիովին զիջում է տեղը սեփական կարծիքի նկատմամբ եղած սիրուն. այնպես որ այդ կերպով ճիշտը սուտ է թվում, իսկ սուտը՝ ճիշտ»¹³⁶:

¹³⁴ Գ. Բրոուտյան, Տրամաբանություն, Եր., 1998, էջ 123:

¹³⁵ Ա. Գլովսով, նշվ. աշխ., էջ 201:

¹³⁶ А. Шопенгауер, Эристика, или искусство побеждать в спорах (перевод с немецкого: Н. Л. д'Андре), С.-Петербургъ, 1900, с. 34.

Այս առիթով տեղին է հիշել նաև Ֆրիդրիխ Նիցշեի մի ասույթը. ««Ես դա արել եմ»,– ասում է իմ հիշողությունը, «Ես դա չէի կարող արած լինել»,– ասում է իմ հպարտությունը և մնում է անդրդվելի: Ի վերջո հիշողությունը տեղի է տալիս»¹³⁷: Հավելենք նաև, որ բանավիճողը, իր ինքնասիրությունը բավարարելուց բացի, կարող է նաև այլ պատճառներով էլ շահագրգռված լինել բանավեճում հաղթելու (օր.՝ վճարով պաշտպանել մեկին ևն): Այդ էր պատճառը, որ սովետները (հետագայում էլ շատերը) փաստարկման ժամանակ կիրառում էին տարբեր եղանակներ: Նրանք դիմում էին տրոհման, աղճատման, միակողմանի մոտեցման, թերասացության, այլափոխման, անտեսման և այլ եղանակների¹³⁸: Մեջբերենք հետևյալ զրույցը, որում կիրառված է այլափոխման եղանակը.

Տեսնելով Սոկրատեսին արմտիքով սնվելիս՝ մեկն ասաց.

– Եթե ծառայեիր մեր տիրակալին, ապա երբեք չէիր հասնի այնպիսի վիճակի, որ արմտիքով սնվեիր:

– Իսկ եթե դու գոհանայիր արմտիքով, ապա չէիր ծառայի քո տիրակալին,– պատասխանեց փիլիսոփան¹³⁹:

Իսկ այս օրինակում կիրառված է հակասությունների բացահայտման եղանակը. «Ում գրասեր մի ժողովածու էր կազմել, որում գովաբանել էր ժլատությունը: Իր ստեղծագործությունը հրամցրեց ժլատությամբ հայտնի տիրակալին: Այդ տիրակալը ստեղծագործությունը կարդաց և պատվիրեց հայտնել հեղինակին. «Հիանալի է գրված: Բայց քո աշխատանքի համար ես ոչինչ չեմ նվիրում, որպեսզի չանտեսեմ քո գերազանց և հույժ ուսանելի խորհուրդները: Եթե ես այլ կերպ վարվեի, կժխտեի այն բոլորը, ինչ գրված է այդ գրքում»: Ստանալով այս ուղերձը՝ գրասերը հրաժարվեց այն ամենից, ինչ գրել էր իր ձեռքով»¹⁴⁰: Իր պատասխանով տիրակալը բացահայտում է այն հակասությունը, որն առկա է հեղինակի խոսքի և գործի միջև: Հեղինակը գովաբանում է ժլատությունը, բայց և գիրքն ուղարկում է տիրակալին՝ վարձատրության հույս ունենալով:

Տրամաբանության մեջ տարբերակում են **պարալոգիզմն** ու **սովետությունը**: Պարալոգիզմի դեպքում սխալ թույլ տվողը չի գիտակցում կամ չգիտի, որ սխալվում է, իսկ սովետության դեպքում սխալ թույլ տվողը գիտակցաբար է դա անում՝ ցանկանալով մոլորեցնել հակառակորդին կամ ունկնդիրներին: Տարբերակվում է նաև **սրամտությունը**, որի դեպքում սխալ պարունակող կշռադատությունը կատարվում է ոչ թե մոլորեցնելու, այլ ուրիշ նպատակներով (զվարճացնելու ևն): «Արքելայոս թագավորը, երբ որ ասող–խոսող վարսավիրը, սրբիչով արդեն փաթաթելով նրան, հարցրել է. «Քեզ ինչպե՞ս խուզեմ, արքա», սրամտորեն պատասխանել է. «Լուռ»»¹⁴¹: Պարզ է, որ վարսավիրը հարց տալիս

¹³⁷ **Ֆ. Նիցշե**, Բարոց և չարից անդին: Չաստվածների մթնշաղ (գերմաներենից թարգմ. Հակոբ Մովսես), Եր., 1992, էջ 60:

¹³⁸ Սրանց մասին հանգամանորեն տես **Վ. Միրզոյան**, Ճարտասանություն, Եր., 2006, էջ 102–193: Տես նաև **Դ. Брутян**, Аргументация, Ереван, 1984:

¹³⁹ **Արուլ–Տարաջ**, Հետաքրքրաշարժ պատմությունների գիրք (թարգմ. Հ. Աղասարյան), Եր., 1981, էջ 16:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 166:

¹⁴¹ **Պլուտարքոս**, Երկեր (ռուս. թարգմ. Հ. Հարյան), Եր, 1988, էջ 534:

նկատի ունենալով մագերը կտրելու ձևը, մինչդեռ թագավորը դիտավորյալ **ինչպես**–ը վերագրում է վարսավիրի պահվածքին՝ նկատի ունենալով նրա շատախոս լինելը:

5.2.4. ԲԱՆԱՎԵՃ ՎԱՐԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐ:

Բանավեճը ճիշտ վարելու և անհրաժեշտ արդյունքի հասնելու համար պետք է առաջնորդվել որոշակի սկզբունքներով: Իհարկե, բանավեճի ժամանակ հնարավոր են տարբեր զարգացումներ, և բանավիճողները պետք է կողմնորոշվեն նաև ըստ իրադրության, սակայն, այնուամենայնիվ, կան որոշակի միջոցներ, որոնք սովորաբար կիրառվում են տարբեր իրադրություններում: Ինչպես արդեն ասվել է, տարբեր դեպքերում բանավիճողները տարբեր նպատակներ են ունենում և բանավիճելիս էլ տարբեր միջոցներ են կիրառում: Հնարավոր են թե՛ ազնիվ մղումներով բանավեճեր, որոնք միտված են ճշմարտությունը գտնելուն, թե՛ բանավեճեր, որոնք տարվում են հաղթելու, համոզելու և այլ նպատակներով: Եվ բանավիճողներն էլ տարբեր ձևերով են փորձում հասնել իրենց նպատակին: Հնարավոր են թե՛ ազնիվ միջոցներ, թե՛ անազնիվ: Վերջինների դեպքում բանավիճողը շեղվում է տրամաբանության օրենքներից, փորձում է օգտվել դիմացինի հոգեբանական վիճակից, եղածը հարմարեցնել իր նպատակը իրագործելուն, իսկ «Ամենավտանգավոր սուտը թեթևակի նենգափոխված ճշմարտությունն է»¹⁴²:

Հետևաբար բանավեճ վարելու ձևերն ու միջոցները տարբեր են: Այդ առումով շահեկան կլինի հիշել հետևյալը:

1. Առաջին հերթին ճիշտ է հենվել տրամաբանության օրենքների վրա, չխախտել նույնության, հակասության, երրորդի բացառման, բավարար հիմունքի օրենքները ևն, փաստարկումն էլ կատարել տրամաբանական հիմունքներով: Անկախ բանավեճի նպատակից՝ սա կարևոր է, քանի որ տրամաբանական ապացուցման դեպքում անհրաժեշտ չի լինում այլ միջոցների դիմելու: Հիշենք, որ սովետներն էլ ապացուցման բավարար հիմքեր չունենալու դեպքում էին դիմում այլ միջոցների՝ դրանք, սակայն, ցանկանալով ներկայացնել գոնե առաջին հայացքից որպես տրամաբանորեն հիմնավորված:

2. Անհրաժեշտ է բանավեճը վարել բարեկիրթ, զուսպ, առանց վիրավորանքների՝ հարգելով թե՛ հակառակորդին, թե՛ ունկնդիրներին (գրավոր բանավեճի դեպքում՝ ընթերցողներին):

3. Բանավեճ վարելու համար անհրաժեշտ է բանավեճին առնչվող նյութերի խոր և համակողմանի իմացություն: Սա կարևոր է միշտ: Նույնիսկ տրամաբանության օրենքներից շեղվելու և այլ միջոցներով բանավեճում հաղթելու համար անհրաժեշտ են գիտելիքներ, վերլուծական մտածողություն, ճարտասանական շնորհ: Ավելին, դրանք շատ են կարևորվում, քանի որ տրամաբանական հիմքերի բացակայության դեպքում դառնում են ապացուցման հիմնական միջոցները:

¹⁴² Գ. Լիխտենբերգ, Աֆորիզմներ (ռուս. թարգմ. Գ. Մադոյան և Ա. Մադոյան), Եր., 1979, էջ 96:

4. Անհրաժեշտ է նաև լավ տիրապետել խոսքարվեստին: Վատ խոսքը լավ տպավորություն չի թողնի: Նույնիսկ տրամաբանորեն հիմնավորված, բայց վատ ձևակերպված ու ասված խոսքը դժվար թե բանավեճում հաղթանակ ապահովի: Նաև կարևորվում է հոգեբանական գործոնը, քանի որ ունկնդիրները (կամ ընթերցողները) մեծ մասամբ հակվում են դեպի գեղեցիկ, գրագետ խոսողը, իսկ ոչ գրավիչ խոսքն ընդհանրապես կարող են չլսել: Բացի դրանից՝ խոսքը պետք է ճիշտ ձևակերպվի, որպեսզի ասվածը հասկանալի լինի, և արտահայտվի անհրաժեշտ իմաստը: Հարկավոր է հիշել նաև, որ հակառակորդը կարող է իսկույն կառչել դիմացինի վրիպումներից և տարբեր եղանակներով օգտագործել դրանք՝ պարզապես մատնանշել դիմացինի չիմացությունը, սխալ ձևակերպումը ծառայեցնել հօգուտ իրեն, օգտվել ձևակերպման երկիմաստությունից ևն:

5. Բանավեճերում հաճախ է կիրառվում հարցին հարցով պատասխանելը, ինչպես՝ «Իսկ Դուք ինչ եք կարծում», «Իսկ Դուք այդ դեպքում ինչ կանեիք» ևն: Եթե դիմացինը ճիշտ չկողմնորոշվի և պատասխանի հարցին, ապա կհետևի մեկ այլ հարց, և բանավեճի ընթացքը կշեղվի նախնական հունից, իսկ կողմերից մեկը կվերածվի հարցերին պատասխանողի ու մի տեսակ արդարացողի: Այս հնարը ակամա գործածվում է նույնիսկ մանկական բանավեճերում: Օր.՝ երեխաներից մեկը անզգուշորեն կոտրել է մյուսի գրիչը: Գրիչի տերը հարցնում է կոտրողին. «Ինչու կոտրեցիր»: Կոտրողը կարող է պարզապես ներողություն խնդրել և ասել, որ պատահաբար ստացվեց: Սակայն նա կարող է նաև փորձել չընդունել իր մեղքը և որպես արդարացում իր հերթին հարցնել. «Իսկ դու ինչու երեկ կոտրեցիր իմ քանոնը»: Մյուս երեխան էլ միգուցե դիմացինի մեկ այլ արարքի մասին հարց տա, և շուտով նրանք լիովին այլ խնդրի վերաբերյալ կվիճեն: Սա մանկական առօրյա բանավեճում: Իսկ կարևոր հարցերի վերաբերյալ բանավեճի դեպքում վարպետ բանավիճողը չպետք է ենթարկվի այս ճնշմանը և հենց առաջին հարցին պատասխանելու փոխարեն պահանջի շարունակել բուն նյութի վերաբերյալ քննարկումը և չշեղվել:

6. Բանավեճի (նաև ելույթի), մասնավորապես բանավոր և ունկնդիրների ներկայությամբ ընթացող բանավեճի դեպքում շատ են կարևորվում հոգեբանական գործոնները: Ընդ որում, կարևոր է ոչ միայն հակառակորդ կողմին հոգեբանորեն ճնշելը, այլև լսարանին գրավելը, դեպի իրեն դրականորեն տրամադրելը: Իրենց տեսակետները ներկայացնելիս այս նպատակով հաճախ կիրառում են բայի առաջին դեմքի հոգնակի թվով ստորոգյալներ, ինչպես՝ «բոլորս էլ գիտենք», «ցանկանում ենք», «ծգտում ենք» ևն: Սրանով խոսողը ցույց է տալիս, որ իրեն չի առանձնացնում լսողներից, ինքն էլ նրանցից մեկն է, տպավորություն է ստեղծում, որ լսողներն իր համախոհներն են, իրենց նպատակները ընդհանուր առմամբ նույնն են, ինքը հանդես է գալիս նաև նրանց անունից ևն:

7. Բանավեճի ընթացքում երբեմն կիրառվում է հեզնանքը: Առաջին հերթին պետք է հիշել, որ հեզնանքը չպետք է ուղղված լինի դիմացինի ֆիզիկական (կամ խիստ անձնական) հատկանիշներին: Միգուցե այդպիսի հեզնանքը հանկարծակիի բերի նրան և շփոթեցնի, բայց այն բոլորովին լավ չի անդրադառնա լսարանի վերաբերմունքի վրա. ներկաները կմտածեն, որ հեզնողն ուրիշ միջոց չունի: Տեղին և դիմացինի ֆիզիկական հատկանիշներին չուղղված հեզնանքը

բանավեճի ժամանակ կարող է արդյունավետ միջոց դառնալ, քանի որ հեզնանքին կամ պետք է համարժեք հեզնանքով պատասխանել, կամ էլ չափազանց լուրջ՝ միանգամից վերջ դնելով հեզնական տոնին. երկուսն էլ չափազանց դժվար են: Բայց պետք է նաև հիշել, որ հեզնանքը սրում, բորբոքում է վեճը, և բանավեճի հետագա ընթացքը կարող է դժվարանալ: Ընդհանուր, ոչ կոնկրետ անձի ուղղված հեզնանքն ավելի արդյունավետ է ու մեղմ: Այս առիթով կրճատ մեջբերենք Հովհաննես Թումանյանի վերաբերյալ մի դեպք, որը պատմում է Վահան Թոթովենցը. «Գրական «Ատրուշան» ընկերությունը Պոլսում մի դասախոսություն է կազմակերպել ի պատիվ Թումանյանի: Դասախոսությունը կարդացել է Հակոբ Քյուֆեճյանը (< Օշական): ...Բանախոսը հանդես է գալիս Թումանյանի բանաստեղծության խստագույն քննադատությամբ: ...Երբ դասախոսությունը վերջանում է, Թումանյանն ասում է մի կարճ խոսք՝ խորագույն հեզնական ժպիտով.

– Ես կարծում էի, որ Պոլիսը չեմ ճանաչում, բայց բանից դուրս է գալիս, որ Պոլիսն էլ ինձ չի ճանաչում»¹⁴³:

8. Բանավեճի շատ կարևոր է նաև խոսողի պահվածքը: Հավասարակշռված, հանդարտ պահվածքը վստահություն է ներշնչում, ունկնդիրներին տրամադրում դեպի նման պահվածքով մարդը: Այդ պատճառով էլ բանավեճողները հաճախ ձգտում են հունից հանել հակառակորդին՝ իրենք մնալով հանգիստ: Սա նաև մեկ այլ նպատակ ունի. զայրացած մարդը մեծ մասամբ արդեն չի կարողանում սթափ մտածել, սկսում է հուզականորեն մոտենալ քննարկվող հարցին և կարող է պարտվել բանավեճում: Ա. Շոպենհաուերը գրում է. «Այնուամենայնիվ սառնասրտությունը այստեղ էլ կարող է օգնել: Արժե միայն, երբ հակառակորդը անցնում է անձնական բնագավառին, նրան հիշեցնել, որ դա գործին չի առնչվում, և նորից վերադառնալով նյութին՝ շարունակել ապացուցել՝ ուշադրություն չդարձնելով հասցված վիրավորանքին, այսինքն՝ մոտավորապես այնպիսի բան անել, ինչ ասաց Թեմիստոկլեսը Եվրիբիադեսին. «Խփիր, բայց մինչև վերջ լսիր»: Ճիշտ է՝ բոլորը չեն կարող այդպես վարվել»¹⁴⁴ (Ա. Շոպենհաուերը նկատի ունի հետևյալ պատմությունը. ռազմավարական մի հարցի քննարկման ժամանակ Թեմիստոկլեսն առարկում է Եվրիբիադեսին, և վերջինս նրա վրա է բերում գավազանը: Թեմիստոկլեսը հանգիստ ասում է. «Խփիր, բայց մինչև վերջ լսիր»):

9. Տարածված է բանավեճի ժամանակ հեղինակությունների վկայակոչումը՝ որպես փաստարկում, ինչպես՝ «այս նշանավոր գիտնականն ասել է», «այդ բնագավառի նշանավոր ուսումնասիրող այսինչ գիտնականը այս կարծիքին է» ևն: Հակառակորդը, հակադրվելով ասվածին, ականա հակադրվում է նաև հեղինակավոր մի գիտնականի և ստիպված է հերքել նաև նրա կարծիքը կամ գոնե ցույց տալ այն վրիպումը, որն իր կարծիքով առկա է նրանում: Դա, ինչ խոսք, չափազանց դժվար է ոչ միայն ապացուցման առումով, այլև հոգեբանորեն:

10. Բանավեճի երբեմն գործածում են նաև հետևյալ հնարը. խոսողը ստեղծում է կեղծ հակառակորդներ, նրանց վերագրում ինչ-որ կարծիք կամ արարք,

¹⁴³ Վ. Թոթովենց, Երկեր (3 հատորով), հ. 3, Եր., 1991, էջ 509:

¹⁴⁴ Տես Ա. Շոպենհաուեր, նշվ. աշխ., էջ 71:

այնուհետև հերքում նրանց կարծիքը կամ սխալ համարում նրանց արարքը, իսկ իրենք, հակադրելով դրանց, համարում միակ ճիշտն ու ընդունելին: Նման դեպքերում մեծ մասամբ գործածվում են այսպիսի արտահայտություններ. «Շատերն ասում են, որ այսպես է, բայց մենք...», «Շատերը հաճախ են մեզ մեղադրել, սակայն մենք...», «Ուրիշները այդպես կվարվեին, բայց մենք...», «Ոմանք միայն խոսում են, բայց մենք...» ևն:

11. Բանավեճի ընթացքում գործածվում է նաև մի միջոց, որով խոսողը ցանկանում է իր տեսակետները ներկայացնել որպես համընդհանուր ճանաչում ունեցող, բոլորին հայտնի անառարկելի իրողություններ՝ ընդ որում որևէ հակադրություն չստեղծելով: Այդ նպատակով հաճախ գործածվում են այսպիսի արտահայտություններ՝ «Բոլորն էլ գիտեն...», «Վաղուց հայտնի է...», «Դուք էլ գիտեք...» ևն: Կարող են կիրառվել նաև ճարտասանական հարցեր, ինչպես՝ «Ո՞րն է հայտնի չէ...», «Ո՞ր՞ չգիտի...», «Միթե որևէ մեկը կասկածում է...» ևն: Ունկնդիրները (կամ ընթերցողները) սովորաբար հակված են լինում ընդունելու, որ ասվածը հայտնի ճշմարտություն է, որը իրենք չգիտեին կամ չէին հիշում, քան թե ասելու, որ դա իրենց հայտնի չէ, իրենք չգիտեին այդ մասին:

12. Կիրառվում է նաև մի եղանակ, որը կարելի է կոչել **առերևույթ համաձայնության** եղանակ: Սա կիրառում են այն դեպքում, երբ կոնկրետ հարցեր են տրվում, որոնց պետք է կոնկրետ պատասխան տրվի: Նման դեպքում խոսողն առերևույթ համաձայնում է, որ խնդիրը կարևոր է, իր մտահոգությունն է հայտնում՝ ըստ էության խուսափելով բուն ճշմարտությունն ասելուց: Օր.՝ տրվում է հետևյալ հարցը. «Ինչո՞ւ մինչև այսօր չի լուծվել այդ խնդիրը»: Փոխանակ կոնկրետ նշելու չլուծվելու պատճառները՝ տրվում է այսպիսի պատասխան. «Այո՛, դա շատ կարևոր խնդիր է. մենք էլ մտահոգված ենք դրանով, քայլեր ենք ձեռնարկում, և ես շուտով կհայտնեմ արդյունքների մասին»:

13. Բանավեճի ժամանակ երբեմն փորձում են հաղթանակի հասնել ոչ թե հակառակորդի առաջ քաշած դրույթը հերքելով, այլ փորձելով ապացուցել դրա անարդյունավետ, անօգտակար լինելը: Օր.՝ «Իսկ դա ի՞նչ օգուտ կբերի», «Ի՞նչ կշահենք դա անելով» ևն:

14. Հարմար պատասխան չունենալու դեպքում կիրառվում է նաև **հետաձգման հնարը**, այսինքն՝ կողմերից մեկը չի խոսում որևէ հարցի վերաբերյալ՝ իբր տվյալ դեպքում հարմար չհամարելով կամ ցույց տալով, թե իբր այնքան շատ ասելիք ունի, որ այդ պահին դրան անդրադառնալու ժամանակ չկա, կամ էլ իբր խնայում է հակառակորդին: Նման դեպքերում գործածվում են այսպիսի արտահայտություններ՝ «Այդ մասին ավելի լավ է չխոսենք...», «Այնքան ասելիք կա, որ չեմ հասցնի նույնիսկ թվել հիմնական խնդիրները...», «Եկեք դրան չանդրադառնանք...», «Ավելի լավ է՝ բերանս բաց չանեմ...» ևն: Իհարկե, հնարավոր է նաև, որ խոսողն իրոք այդպես կարծի: Մեկ անգամ էլ անդրադառնանք ուս նշանավոր գիտնական Ի. Սեչենովի և Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Կ. Կավելինի գիտական բանավեճի մի դրվագի. «Մեր հայացքներում այն մասին, թե ինչ է գիտությունը, որն է գրական մեթոդը, ինչ է նշանակում

բացատրել երևույթը ևն, – գրում է Սեչենովը, – շատ խոր տարբերություններ կան, որպեսզի մենք վիճենք իրար հետ»¹⁴⁵:

15. Բանավիճելիս երբեմն կիրառվում է կեղծ սիրաշահման հնարը: Այդ դեպքում կողմերից մեկը մյուսին վերագրում է դրական այնպիսի հատկանիշներ, որոնք ունենալով՝ նա չի կարող հակադրվել իրեն: Նման դեպքերում գործածվում են մոտավորապես այսպիսի ձևակերպումներ՝ «Ձեզ նման կրթված մարդը չի կարող չիմանալ...», «Եթե Ձեզ նման փորձառու մարդն էլ է դժվարանում, բա մյուսները...», «Դուք, որ խելացի մարդ եք, չեք կարող չհամաձայնել...» ևն:

16. Բանավեճի ժամանակ լարվածությունը թուլացնելու նպատակով երբեմն էլ հնարավոր է կատակել: Սա չպետք է շփոթել հեզնանքի կիրառման հետ: Ինչպես նշվեց, հակառակորդին ուղղված հեզնանքը թեժացնում է բանավեճը, և հեզնողի նպատակն էլ ուրիշ է, իսկ կատակը ուղղված չի լինում դիմացինին, նույնիսկ անուղղակի հեզնանք կամ ակնարկ էլ չի պարունակում, այլ, ընդհակառակը, ասվում է իրադրությունը լիցքաթափելու նպատակով, երբ բանավիճողներից մեկն զգում է, որ խոսակցության ընթացքն աստիճանաբար լարվում է, և ինքն այդ տեմպով չի կարող շարունակել: Կարելի է ասել, որ սա կարող է նաև մի տեսակ ժամանակավոր զիջման կամ ժամանակ շահելու տարբերակ համարվել, որը, սակայն, բացահայտ չէ ու չի վիրավորում կատակողի ինքնասիրությունը, և ունկնդիրներն էլ պարտություն չեն համարում: Միաժամանակ դա լսողներին կարող է դրականորեն տրամադրել դեպի կատակողը: Կարելի է նաև մի կատակով կամ բառախաղով վերջ դնել խոսակցությանը:

Իհարկե, կան շատ ուրիշ ազնիվ ու անազնիվ եղանակներ ու միջոցներ, որոնք գործածվում են ճշմարտության կամ պարզապես հաղթանակի հասնելու նպատակով տարվող բանավեճերում, և, անշուշտ, դեռ նորերն էլ կծնվեն նորանոր բանավեճերում: Բայց պետք է միշտ ձգտել ազնիվ բանավեճի ու աշխատել հաղթանակի հասնել ազնիվ միջոցներով: Այսպիսով՝ բանավեճերը բազմազան են թե՛ իրենց տեսակներով, թե՛ վարելու միջոցներով ու եղանակներով: Յուրաքանչյուր ոք, ով բանավիճելիս անհրաժեշտ լուծումներ է փնտրում, պետք է ոչ միայն լավ զինված լինի գիտելիքներով, այլև լավ իմանա հակառակորդի կիրառած մեթոդները:

Գրականություն

1. Արուլ-Ֆարաջ, Հետաքրքրաշարժ պատմությունների գիրք (թարգմ. Հ. Աղասարյան), Եր., 1981:
2. Արևշատյան Ս., Հոետորական արվեստի հիմունքները, Եր., 1961:
3. Գուլիտով Ա., Դարերի միջով անցնող գրքեր (թարգմ. Մ. Բլոկյան), Եր., 1980:
4. Լիխտենբերգ Գ., Աֆորիզմներ (ռուս. թարգմ. Գ. Մարտյան և Ա. Մարտյան), Եր., 1979:
5. Հովհաննիսյան Հ., Փաստարկում և հոետորություն, Եր., 2015:
6. Միրզոյան Վ., Ճարտասանություն, Եր., 2006:
7. Մոստոն Մ., Փորձեր 1 (ռուս. թարգմ. Ա. Խոցանյան), Եր., 1991:
8. Նիցշե Ֆ., Բարոց և չարից անդին: Չաստվածների մթնշաղ (գերմ. թարգմ. Հակոբ Մովսես), Եր., 1992:
9. Պլատոն, Երկեր (4 հատորով), հ. 2 (հին հուն. թարգմ. և ծան. Ս. Ստեփանյան), Եր., 2009:
10. Պլուտարքոս, Երկեր (ռուս. թարգմ. Հ. Հարյան), Եր., 1988:

¹⁴⁵ Ա. Գուլիտով, նշվ. աշխ., էջ 205:

11. **Аристотель**, Риторика (перевод Н. Платоновой), Античные риторики, М., 1978.
12. **Брутян Г.**, Аргументация, Ереван, 1984.
13. **Блажевич Н., Блажевич Т.**, Теория спора, Тюмень, 2010.
14. **Кохтев Н.**, Основы ораторской речи, М., 1992.
15. **Поварнин С.**, Искусство спора, 2–е изд., Петроград, 1923.
16. **Хазатеров Г., Корнилова Е.**, Риторика для делового человека, М., 2003.
17. **Шопенгауер А.**, Эристика, или искусство побеждать в спорах (перевод с немецкого: Н. Л. д'Андре), С.–Петербург, 1900.

ՄԱՍ 6.

ԽՈՍՔԱՅԻՆ ԷԹԻԿԵՏ

**6.1. Ընդհանուր հարկանիշներ (266): 6.2. Արտալեզվական գործոններ (267): 6.3. Հնչե-
րանգ և դիմելածն (272): 6.4. Իրադրություն և խոսքային կադապարներ (275):**

6.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ճիշտ հարաբերությունների ձևավորման և անմիջական շփման համար լեզվական գիտելիքների պաշարն իհարկե անհրաժեշտ նախապայման է, բայց միակը չէ: Ձրույցն արվեստ է, որին տիրապետելու համար անչափ կարևոր են ոչ միայն լեզվական գիտելիքները, այլև էթիկետի կանոնների իմացությունն ու կիրառությունը: Էթիկետը երեք բաղկացուցիչների ամբողջությունն է՝ **արտաքին տեսք, վարվեցողություն և խոսք**¹⁴⁶. սրանք զգալիորեն փոխկապակցված են և փոխլրացնում են միմյանց:

Խոսքային էթիկետի տարբեր սահմանումներ կան¹⁴⁷: Ընդունված է ասել, որ այն խոսքային տեղին միջոցների և վարվեցողության կանոնների համադրությունն է հաղորդակցական որևէ իրավիճակում: Ասել է թե՛ այն անհատի բարեկրթության, քաղաքավարության այցեքարտն է «բարևից ցտեսություն» ճանապարհին: Խոսքային և վարվեցողության կանոնների հետևողական կիրառությունը ձևավորում է հասարակական հաշտ, հարգալից և բարեկիրթ հարաբերություններ:

Ժամանակի ընթացքում յուրաքանչյուր ազգ մշակում է խոսքային և վարվեցողության էթիկետի իր կանոններն ու յուրահատկությունները, որոնք երբեմն խստորեն հակադրվում են միմյանց:

Ծան. Ճապոնիայում, որպեսզի չվիրավորեն (չնեղացնեն) զրուցակցին, անգամ բացասական պատասխանի դեպքում չեն գործածում «Ոչ», «Զգիտեմ», «Զի լինի», «Ճիշտ չես» արտահայտությունները¹⁴⁸, իսկ Արևմուտքի և Արևելքի տասնյակ ազգերի խոսքային մշա-

¹⁴⁶ Հմմտ. **И. Стернин**, Русский речевой этикет, Воронеж, 1996, էջ 3–4:

¹⁴⁷ Տե՛ս **Н. Формановская**, Речевой этикет и культура общения, Научно-популярное изд., М., 2005, էջ 68, 73: **И. Стернин**, նշվ. աշխ., էջ 4: «Стилистический энциклопедический словарь русского языка», под ред. М. Кожиной, М., 2003: «Русский язык и культура речи» (соавт. **О. Гойхман**, **Л. Гончарова**, **О. Лапина** и др.), М., 2009, էջ 117 նն: Խոսքային էթիկետի, մասնավորապես դրա հիմնադրույթների մասին տես նաև **Г. Грайс**, Логика и речевое общение, «Новое в зарубежной лингвистике», Выпуск XVI, М., 1985, էջ 217–238:

¹⁴⁸ Տե՛ս **О. Фролова**, Японский речевой этикет (лингвистический аспект), Новосибирск, 1997: (էլ. հասցե՝ <http://www.philology.ru/linguistics4/frolova-97.htm>)

կոյթում սրանք անհամաձայնություն արտահայտող չեզոք միջոցներ են: Կամ՝ արաբները, բուլղարները համաձայնություն, հավանություն արտահայտում են՝ գլուխը աջոճախ տարրերելով, իսկ անհամաձայնությունը փաստում են գլխի հետ ու առաջ շարժումով: Սակայն տասնյակ ազգերի համար այդ շարժումները ճիշտ հակառակ նշանակությունն ունեն: Մի ազգի համար ցածրաձայն խոսելը չիմացության, շփոթմունքի վկայություն է, մեկ ուրիշի համար՝ պատվի ու հարգանքի, կամ՝ մի ազգի համար հայացքը հատակին հառած խոսելը հարգանքի նշան է, մեկ ուրիշի համար՝ արհամարհանքի նշան: Խոսքային և վարվեցողության էթիկետի այսպիսի տարբերությունները խորապես ազգային, պատմական, ավանդական և կրոնական կնիք ունեն: Ուստի խորհուրդ է տրվում որևէ երկիր մեկնելուց առաջ որոշ չափով ծանոթանալ ոչ միայն նրա քարտեզին, այլև խոսքային և վարվեցողության հիմնական յուրահատկություններին:

Սակայն կան հատկանիշներ, որոնք, անկախ ազգային պատկանելությունից, ընդհանուր և համապարտադիր են խոսքային էթիկետի համար: **Դրանցից են՝ չափի զգացողությունը, զսպվածությունը** (որոնք արտահայտվում են ինչպես խոսքով, այնպես էլ հագուստով, շարժումով, դիմախաղով), **հավասարակշռվածությունը, ուշադրությունը, հարգանքը խոսակցի հանդեպ, փոխզիջումը, փոխընկալումը:** Նշվածներից որևէ մեկի անտեսումը կարող է բացասաբար ազդել զրույցի ընթացքի վրա:

6.2. ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Կան տարատեսակ իրողություններ, որոնք հաղորդակցման գործընթացի մուտքն են և ուղղակիորեն պայմանավորում են խոսքային էթիկետը: Դրանք պայմանականորեն կարելի է անվանել **արտալեզվական գործոններ**, որոնցից յուրաքանչյուրը սահմանում է վարվեցողության որոշակի պահանջներ և թելադրում խոսքային համապատասխան միջոցներ: Դրանք միասնաբար ձևավորում են հաղորդակցման ողջ գործընթացը: Այդ գործոններից են՝ միջավայրը, անհատի հասարակական դերը, հագուստը, ավանդույթն ու ծիսակարգը, տարածական վարքը, զրուցակիցների դիրքը, հայացքը, շարժումը, դիմախաղը:

Ա. Միջավայր: Հաղորդակցական հարաբերությունները, ըստ միջավայրի, բաժանվում են 3 խմբի՝ **պաշտոնական, ոչ պաշտոնական** (մտերմիկ), **կիսապաշտոնական** (պաշտոնական-գործնական): Դրանցից յուրաքանչյուրին բնորոշ է վարվեցողության և խոսքի ուրույն մշակույթ¹⁴⁹: Միջավայրը խոսքային էթիկետը պայմանավորող ամենից գլխավոր գործոնն է. այն ելակետ է մյուս գործոնների համար:

● **Պաշտոնական միջավայր.** բնորոշ է ղեկավար-ենթակա, ուսուցիչ-աշակերտ, դասախոս-ուսանող, հաճախորդ-սպասարկու, անձանոթ-անձանոթ և այլ հարաբերություններին: Խոսակիցներից պահանջվում է խոսքային և վարվեցողության կանոնների կատարյալ պահպանում: Այս միջավայրում շփումները պետք է ընթանան որոշակիորեն սահմանված կարգով, քանի որ, անկախ ոլորտից և այլևայլ հանգամանքներից, առավելապես գործում է մեկ կարգի հարաբերություն՝ **գերադաս-ստորադաս:** Յուրաքանչյուրը պետք է հստակորեն

¹⁴⁹ Հմմտ. И. Стернин, նշվ. աշխ., էջ 8-9:

ճանաչի և իրականացնի իր գործառույթները: Այս իրավիճակում պետք է բացառվի հատկապես անհատական–զգացական մղումներով թելադրվող գործելաճը: Խոսքային և վարվեցողության բոլոր նորմերը խստագույնս պետք է պահպանվեն, քանի որ աննշան շեղումը կարող է բացասաբար ազդել հարաբերությունների (աշխատանքի) վրա:

● **Ոչ պաշտոնական միջավայր.** բնորոշ է ընտանիքի անդամների, ընկերների, մտերիմների հարաբերություններին: Այս միջավայրը վարվեցողության և խոսքային էթիկետի կանոնների ազատությամբ, նաև բազմազանությամբ անմիջականորեն հակադրվում է պաշտոնականին: Հարաբերությունները անկաշկանդ են, գերակայում է հատկապես «**հավասարը հավասարի հետ**» սկզբունքը, շփումներում մեծ է հատկապես զգացական վերաբերմունքի դերը: Սակայն իրավիճակին խորթ մի երրորդ անձի ներկայությամբ ազատ շփումները պետք է որոշակիորեն սահմանափակվեն:

● **Կիսապաշտոնական միջավայր.** բնորոշ է գործընկերների, հարևանների, ոչ մտերիմ ծանոթների, ազգակիցների հարաբերություններին: Այս միջավայրի համար փոքր–ինչ բարդ է որոշակի չափանիշներ սահմանելը. այն պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակների համադրություն է, որում խոսքային և վարվեցողության կանոնները գերազանցապես պայմանավորված են իրավիճակային հանգամանքներով և անընդհատ ենթակա են փոփոխության: Ծանոթության աստիճանը, տեղը, ժամանակը, տարիքը, սեռը, երրորդ անձանց ներկայությունը որոշում են, թե խոսքային էթիկետի որ դրսևորումից օգտվեն խոսակիցները: Այս դեպքում անհատը պետք է լինի զգոն, շրջահայաց, նրբանկատ, տիրապետի խոսքային տարբեր որակների, պետք է արագ կողմնորոշվի՝ նկատի առնելով անգամ իրադրական չնչին փոփոխությունը:

Բ. Հասարակական դեր: Առանձնացվում է երկու տեսակ՝ **կայուն** (տևական) և **փոփոխական**: Առաջինը պայմանավորված է տարիքով, սեռով, մասնագիտությամբ, բնակության վայրով, աշխատանքային դիրքով ևն: Ըստ այդմ՝ առանձնացվում են, օրինակ, կնոջ և տղամարդու, ծնողի և երեխայի, ղեկավարի և ենթակայի, մեծի և փոքրի դերեր: Երկրորդը պայմանավորված է միայն միջավայրի փոփոխությամբ: Այս դեպքում առանձնացվում են գործընկերոջ, ընկերոջ, հյուրի, ուղևորի, անցորդի և այլ դերեր, որոնցից յուրաքանչյուրի համար խոսքային էթիկետը սահմանում է որոշակիորեն տարբեր կանոններ¹⁵⁰:

Բոլոր շփումները ճիշտ ընթացք են ստանում այն դեպքում, երբ կողմերը օբյեկտիվորեն գիտակցում են իրենց հասարակական դերը: Հասարակական դերի յուրահատկությունները ուղղակիորեն բխում են միջավայրային գործոնից: Շատ կարևոր է այն, թե անհատը իր հաղորդակցական գործունեությունը որ միջավայրում է իրականացնում՝ պաշտոնական, ոչ պաշտոնական, թե՛ կիսապաշտոնական: Օր.՝ պաշտոնական իրավիճակում, եթե ղեկավարն է ուշանում աշխատանքից, ապա այդ մասին ենթակայի թեթև ակնարկն անգամ անբարեկրթություն է և կարող է արժանանալ լուրջ դիտողության, քանի որ որոշակի

¹⁵⁰ Այս մասին մանրամասն տես **Л. Крысин**, Речевое общение и социальные роли говорящих // Социально–лингвистические исследования, М., 1976:

իրավիճակում խախտվում է հասարակական դերի գործառույթը: Մինչդեռ ղեկավարը, իրեն վերապահված իրավունքներով, ուշանալու համար կարող է դիտողություն անել ենթակային: Կամ՝ պաշտոնական միջավայրում ղեկավարի թելադրող պահվածքն ու խոսքը էապես պետք է փոխվեն ոչ պաշտոնական միջավայրերում (օր.՝ ընտանեկան, ընկերական մթնոլորտում), հակառակ դեպքում հնարավոր են ինչ-ինչ բախումներ:

Գ. Հազուստ: Այն լիովին պետք է համապատասխանի անհատի դերին, գտնվելու տեղին, ժամանակին և ճշտորեն լրացնի նրա կերպարը: Ժամանակի ընթացքում հանրային տարբեր ոլորտների համար (օր.՝ աշխատանքային զանազան միջավայրեր՝ զինվորական համակարգ, կրթական, բանկային ոլորտներ ևն) ստեղծվել և ստեղծվում են համազգեստներ, որոնք գերազանցապես ներաշնակում են անհատի հասարակական դերին: Ինչպես նշել ենք, էթիկետը 3 բաղկացուցիչ տարրերի միասնություն է, որոնցից մեկի բացթողումը կարող է բացասաբար անդրադառնալ հաղորդակցման վրա: Ուստի որևէ միջավայրում, հատկապես պաշտոնական իրավիճակներում ներդաշնակ ներկայանալու համար խորհուրդ է տրվում նախապես ծանոթանալ արտաքին տեսքի էթիկետի կանոններին¹⁵¹:

Դ. Ավանդույթ և ծիսակարգ: Սրանց առնչվող խոսքային և վարվեցողության կանոնները սովորաբար փոխանցվում են ժառանգորդաբար: Օր.՝ հայկական ավանդույթի համաձայն՝ առաջին անգամ որևէ մեկի տանը (տարածքում) հյուրընկալվելիս ասում ենք. «Ուղք(ներ)ս բարի/խեղով լինի», որին սովորաբար պատասխանում են. «Բարով եք եկել, հազար բարի...»: Ավանդույթով պայմանավորված խոսքային կառույցներ են բազում բարեմադթանքներ (նորապսակներին՝ «Մի բարձի ծերանաք», «Յոթ որդով սեղան նստեք», «Ծլեք, ծաղկեք, զորանաք»), օրհնանքներ («Կյանքդ ջրի նման երկար լինի», «Վատ օր չտեսնես») ևն: Կամ՝ պսակադրության ժամանակ, ըստ առաքելական եկեղեցու ծիսակարգի, փեսային ուղղված «Տեր ես...» և հարսին ուղղված «Հնազանդ ես...» հարցերին ի պատասխան պիտի հնչեն միայն «Տեր եմ» և «Հնազանդ եմ» կաղապար-արտահայտությունները: Իսկ «Այր», «Համաձայն եմ», «Իհարկե» պատասխանները չեն ընդունվում, որովհետև խախտվում է ծիսակարգով սահմանված խոսքը: Կամ՝ Զատիկը պետք է շնորհավորել ոչ թե «Ձեր Զատիկը շնորհավոր», այլ «Քրիստոս հարյավ ի մեռելոց» արտահայտությամբ, որի պատասխանն է՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Ե. Տարածական վարք: Խոսակիցների միջև, ըստ իրավիճակի, պետք է պահպանվի որոշակի տարածություն: Պայմանավորված ավանդույթով և զանազան գործոններով՝ տարածական վարքականոնի չափանիշները փոփոխական են:

Ծան.: Իսրայելում, օրինակ, կրոնական արգելք է, որ տղամարդը հանրային փոխադրամիջոցում նստի օտար կնոջ կողքին կամ ծանոթանալիս ձեռքով բարևի կնոջը: Մեկ այլ երկրում, հակառակը, այդպիսի վարքը վիրավորական է: Կամ՝ անգլիացիները, ֆրանսիացիները նույնիսկ ոչ պաշտոնական շփումներում պահպանում են որոշակի տարածություն միմյանց միջև, մինչդեռ իտալացիները, Արևելքի որոշ ժողովուրդներ, այդ

¹⁵¹ Այս մասին մանրամասն տես **И. Кузнецов**, Деловое общение. Деловой этикет, М., 2005: (էլ. հասցե՝ <http://nemaloknig.info/downloadbook-fb2-34716/>)

թվում նաև հայերը սովորություն ունեն քիթ քթի տալով զրուցելու նաև այնպիսի իրավիճակներում, երբ խոսակիցների միջև որոշակի տարածություն պահպանելը ուղղակի պարտադիր է: Համենայն դեպս, խոսքային վարվեցողությամբ մենք առավելաբար հետևում ենք քաղաքակրթական միջազգային չափանիշներին:

Առանձնացվում են տարածական վարքի հետևյալ տեսակները.

ա) մտերմիկ՝ 0–50 սմ. բնորոշ է ամուսնական զույգի, սիրահարների, ծնող–երեխա հարաբերություններին,

բ) անհատական՝ 50–100 սմ. բնորոշ է գործընկերային, բարեկամական հարաբերություններին,

գ) սոցիալական՝ 100–150 սմ. բնորոշ է ոչ այնքան ծանոթ (օր.՝ նոր գործընկեր), նաև անծանոթ մարդկանց հարաբերություններին (օր.՝ ուղևոր–վարորդ, վաճառող–գնորդ),

դ) պաշտոնական՝ 150–300 սմ. բնորոշ է պաշտոնական հարաբերություններին,

ե) հրապարակային (հասարակական)՝ 300 սմ մինչև 3 մ. բնորոշ է խմբակային–հասարակական շփումներին (օր.՝ դասախոս–լսարան, ունկնդիր–հոգետոր ևն)¹⁵²:

Ըստ խոսակիցների պայմանավորվածության, ինչպես նաև ըստ տարբեր իրավիճակների ու հանգամանքների՝ այս չափանիշները կարող են փոխվել: Այսպիսի դեպքերում ցանկալի է խոսքային միջոցներով նախապես հուշել, զգուշացնել խոսակցին, ինչպես՝ «Խնդրեմ մոտ նստեք/մոտ նստիր...», «Եկեք մոտ նստենք, զրուցենք...» ևն: Իհարկե, մոտ նստելու հրավերը հոգեբանորեն շատ ավելի հեշտ է ձևակերպել: Դժվար իրավիճակ է ստեղծվում այն դեպքում, երբ ցանկություն է լինում սահմանված տարածությունը հեռացնելու: Խոսքային միջոցների գործածությունը այս դեպքում ոչ միայն ցանկալի չէ, այլև ինչ–որ առումով հակասում է վարվեցողության նորմերին: Նույնիսկ «Խնդրում եմ՝ հեռու նստիր...», «Որ խնդրեմ, հեռու կնստեմ...» և նման խնդրանք–դիմումներն անհարմարություն են ստեղծում երկուստեք: Դրա համար զրույցի ընթացքում միշտ պետք է ուշադիր և նրբանկատ լինել: Երբ զրուցակիցը տվյալ իրավիճակում փորձում է տարածությունը խախտել (կարող է խոսելով փոխել տեղը, զգուշորեն հեռացնել աթոռը, անգամ մարմնով հետ նստել)՝ ավելի հեռանալով խոսակցից, դա նշանակում է, որ ցանկանում է որոշակի տարածություն ստեղծել իր և խոսակցի միջև: Այս դեպքում աննկատ պետք է ցույց տալ համապատասխան վերաբերմունք և ոչ թե տվյալ տարածքում համառորեն «հետապնդել» նրան: Առավել ևս ցանկալի չէ «Ինչհի հեռու նստում...», «Ինչհի հետ քաշվեցիր...» և նման հարցերով անհարմար վիճակի մեջ դնել խոսակցին: Մյուս դեպքերում ցանկացած չնախատեսված խախտում հնարավոր է՝ ընկալվի որպես անբարեկրթություն և կամ անհարգալից վերաբերմունք:

2. Զրուցակիցների դիրքը: Խոսակիցները, անկախ ղեկավար կամ ենթակա լինելու հանգամանքից, զրույցի ընթացքում պետք է գտնվեն նույն հարթության

¹⁵² Այս մասին տե՛ս **И. Стернин**, նշվ. աշխ., էջ 28–29: **Տ. Խաչատրյան**, Հաղորդակցման և աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ, Եր., 2012, էջ 20:

վրա՝ հավասար դիրքում: Խոսքային և վարվեցողության կանոնները այս դեպքում նույնպես փոխադրվում են միմյանց: Պաշտոնական և կիսապաշտոնական միջավայրերում նախընտրելի է հետևյալը. եթե նստած եք, և մեկը ներս է մտնում, ապա կանգնելով հրավիրեք նրան նստելու՝ գործածելով «Ներս արի, նստիր...», «Համեցիր/համեցեք...», «Նստիր/նստեք...» արտահայտությունները: Նույնը կարելի է անել նաև ձեռքի շարժումով (ձեռքը պարզելով՝ հրավիրեք նստելու): Իսկ եթե գրույցը ակնթարթային բնույթ ունի, ապա մեծ դժվարություն չէ 1–2 րոպե ոտքի վրա անցկացնելը, ընդ որում, բնավ չարժե գրուցակցին ակնարկել կամ ցույց տալ, թե իր «պատճառով» մնացիք ոտքի վրա:

Ծան.: Առավել մեծ՝ լսարանային շփումների ժամանակ ճիշտ է խոսակցի կանգնած դիրքը: Օր.՝ փորձը ցույց է տալիս, որ խոսողը (ուսուցիչը, դասախոսը, հոեւորը ևն) ավելի լավ է տիրապետում լսարանին, երբ կանգնած է: Այս կերպ մեծանում է արձագանքին հետևելու հնարավորությունը, որը մեծապես օգնում է հենց խոսողին: Այսպիսի իրավիճակում հարցեր տալիս կամ տեսակետ արտահայտելիս կանգնելը պարտադիր է և ճիշտ (եթե, իհարկե, չկան խոչընդոտող հանգամանքներ կամ պայմանավորվածություն): Ոչ պաշտոնական (մտերմիկ) միջավայրում այս նորմերը որոշ չափով կարող են խախտվել:

Բարեկրթության նշան չէ, երբ գրուցակիցներից մեկը խոսելիս գնում–գալիս է, նայում աջուձախ, ուղղում խոսակցի հագուստը կամ անընդհատ թփթփացնում նրա թևին, ուսին, խաղում ձեռքի տակ ընկած որևէ իրով, թղթի վրա անորոշ պատկերներ նկարում ևն: Իհարկե, խորհուրդ չի տրվում գրուցելիս անշարժ նստել. սա էլ մյուս ծայրահեղությունն է և կաշկանդում է գրուցակցին: Նման դեպքերում խոսակցին կարելի է նրբանկատորեն «դարձի բերել». թերևս արդյունավետ կլինի «Անհանգիստ ես..., գուցե նստեիր...», «Մի փոքր էլ նստած խոսենք...», «Իսկ ինչ ես նկարում...» արտահայտությունների գործածությունը. դրանք հաստատ կսթափեցնեն կամ կզսպեն խելացի գրուցակցին:

Է. Հայացք, դիմախաղ, շարժում: Զրույցի ընթացքում խոսակցին պետք է պահել ուշադրության կենտրոնում, պարբերաբար նայել նրան: Ողջ գրույցի ժամանակ, անկախ տևողությունից, **աչքերին անընդմեջ նայելը ճիշտ չէ.** սևեռում հայացքը ճնշում է գրուցակցին: Թերևս առավել նպատակահարմար է ժամանակ առ ժամանակ հայացքը սահեցնել խոսակցին մոտ առարկաների վրա: Սակայն հատկապես կարևոր հարցադրումների ժամանակ չարժե պատասխանել՝ շրջակա առարկաներին նայելով: Դա մի բան թաքցնող, պատասխանից խուսափել փորձող մարդու վարքագիծ է:

Խոսելիս մարդիկ միմյանցից ազդակներ են ստանում նաև **դիմախաղի և շարժումների միջոցով**¹⁵³: Այս դեպքում նույնպես չափի զգացողությունը անհրաժեշտություն է: Հաստատապես հաճելի չէ դեմքի ոչինչ չասող արտահայտությունը: Այդ դեպքում գրուցակիցը թողնում է անտարբեր, սառը մարդու տպավորություն և վանում խոսակցին: ԶԷ որ շփման ընթացքում մարդիկ իրենց խոսքի ազդեցության մասին զգալի չափով տեղեկություն են ստանում հենց

¹⁵³ Հաղորդակցման ընթացքում շարժումների և դիմախաղի նշանակության մասին մանրամասն տես **Ա. Пиз, Язык телодвижений. Как читать мысли окружающих по их жестам, М., 2003: Տ. Խաչատրյան, Հաղորդակցման և աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ, Եր., 2012, էջ 21–34:**

խոսակցի դիմախաղից, որը հաճախ պայմանավորում է խոսքի հետագա զարգացումը կամ դադարը: Մի բարի ժպիտը, հոնքերի թեթև շարժը, գլխով թեթև հավանություն տալը հաստատապես չի խանգարի զրույցի ընթացքին: Սրանք փաստում են, որ Դուք անտարբեր չեք խոսքի, ասելիքի հանդեպ: Բայց նաև հաճելի չեն դիմային ակտիվ և տարատեսակ շարժումները (անընդհատ ժպտալը, շուրթերը կծոտելը ևն), որոնք պարզապես կարող են հոգնեցնել կամ նյարդայնացնել խոսակցին:

Կարևոր են նաև **շարժումները**. անշարժ և մոայլադեմ զրուցակիցը թողնում է ծանր տպավորություն, և դժվար է նրա հետ շփման եզր գտնելը: Մինչդեռ ձեռքերի և մատների թեթև շարժումները, ուս(եր)ի թույլ շարժը կոտրում են զգաստությունը, միօրինակությունը և նպաստում կենդանի զրույցի ծավալմանը: Միանշանակ հաճելի չեն այն զրուցակիցները, որոնք անընդհատ թափահարում են ձեռքերը, հարկի-անհարկի հավանություններով տարուբերում զուլսը, անընդմեջ ծիծաղում, ստեպ-ստեպ փոխում են նստելու դիրքը: Իհարկե, ասվածը վերաբերում է չեզոք հարաբերություններին. անձից անձ, միջավայրից միջավայր փոխվում են բոլոր նախապայմանները: Այսուհանդերձ, **չափի զգացողությունը, զսպվածությունը** խոսքային և վարվեցողության նորմերի՝ անհրաժեշտ նախապայմաններ են:

6.3. ՀՆՁԵՐԱՆՉ ԵՎ ԴԻՄԵԼԱԶԵՎ

Բոլոր իրավիճակներում զրույցը սկսելու համար առանձնակի կարևոր են ծայնի **հնչերանգն** ու համապատասխան **դիմելածնը**: Ըստ էության, դրանք կատարում են կարգավորող դեր, խոսքի սկիզբն են և նպաստում են առաջին տպավորության ձևավորմանը:

Ա. Հնչերանգ: Զրույցի ընթացքում ծայնի բարձրությունը պետք է լինի այնքան, որ խոսակիցը չլարվի և կամ ստիպված չասի. «Ինչ», «Եթե կարելի է, մի քիչ բարձր խոսեք», «Կներեք, լավ չեմ լսել»: Պաշտոնական և կիսապաշտոնական միջավայրերում խոսքը պետք է արտաբերվի հստակ, ծայնի հանդարտ և անխախտ հնչերանգով՝ առանց հուզառատ խանդավառության կամ վրդովմունքի: Հակառակ դեպքում՝ ասելիքը կարող է թողնել ոչ թե զրույցի (երկխոսության), այլ մի տեսակ մարտահրավերի տպավորություն, որը հաստատապես կվանի զրուցակցին: Նույնիսկ ամենաթեժ զրույցի ժամանակ արժե հիշել խոսքային էթիկետի կարևոր պայմաններից մեկը. Ձեր կարծիքը, որքան էլ այն ճշմարիտ թվա կամ լինի, չպետք է հնչի որպես անվերապահ դատողություն կամ «դատավճիռ»:

Պաշտոնական և կիսապաշտոնական շփումներում հաճախ պատահում է՝ զրուցակիցներից մեկը (հիմնականում դիրքով ցածրը) խոսում/պատասխանում է գրեթե անլսելի ծայնով, հնչյունների անհասկանալի քմայնացումներով՝ հայացքը հառած հատակին կամ պատին: Իհարկե, կան ազգեր, որոնց վարվեցողական մշակույթում այսպիսի պահվածքը հարգանքի նշան է: Բայց մեզանում ճիշտ չէ այն մտայնությունը, թե դա առանձնակի համեստության, ամոթխածության և

կամ զսպվածության ապացույց է: Ատամների արանքից նետված խոսքը կամ քթի տակ նվնվոցը բնավ էլ բարեկրթության նշան չէ:

Պետք չէ այնքան բարձր խոսել, որ մի երրորդ անձ կամա-ակամա վերածվի հարկադիր ունկնդրի: Ցավոք, մեզանում վերջին տասնամյակներում արմատավորվում է մի տհաճ իրողություն. բուռն և երկարատև զրույցներ, հեռախոսազրույցներ տրանսպորտում, թատրոնում, հասարակական այլ վայրերում: Այսպիսի պահվածքը անընդունելի է: Ըստ վարվեցողության կանոնների՝ կարելի է զրույցը հետաձգել «Ներիր, խոսելը հարմար չէ...», «Զանգեք մի քանի րոպեից...» արտահայտություններով: Իսկ եթե զրույցը հրատապ է, ապա անհրաժեշտ է բավարարվել խոսքային սեղմ և չեզոք կառույցներով. «Այո», «Ո՛չ», «Զգիտեմ», «Հետո կորոշենք», «Կարելի է» ևն:

Բ. Դիմելաձևեր: Յուրաքանչյուր զրույց սկսվում է դիմելաձևից: Առաջին տպավորությամբ՝ հայերենի հարուստ բառազանձը այս առումով կարծես այնքան էլ հարուստ չէ: Արդեն իրողություն է, որ անծանոթ մեկին որևէ բան հարցնելիս կամ վարորդին, վաճառողին, ուսանողին դիմելիս, որը, հիշեցնենք, պաշտոնական-կիսապաշտոնական շփում է, հաճախ ենք լսում **հոպար, քուրիկ, մորքուր, տոտա, դյադյա, ընկեր ջան, ա՛յ աղջի/տղա** և նման աղավաղված ու մերժելի դիմելաձևեր: Ընդ որում, խոսքն էլ սովորաբար ուղեկցվում է **դու-ով**, կարծես հին ու բարի օրերի մեր ընկերոջն ենք հանդիպել: Սա, մեղմ ասած, շփման այնքան էլ հաճելի ձև չէ: Մինչդեռ մեր լեզվում գրեթե բոլոր իրավիճակների համար կան շատ հարմար դիմելաձևեր, խոսքային կառույցներ, ի վերջո, **Դուք** հարգանքի հոգնակի, որոնք իմանալն ու գործածելը կնպաստի արդյունավետ շփմանը: Եվ թյուր է այն կարծիքը, թե իբր հայերենում, ի տարբերություն այլ լեզուների, դիմելաձևերը շատ չեն և կամ չեն ընդգրկում մեր կյանքի բոլոր ոլորտները: Պարզապես, ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված, հաճախ շրջանցում ենք էթիկետի տարրական կանոնները՝ մոտենալով գավառական շփումների հարթակին:

Խոսքային միջավայրով պայմանավորված՝ դիմելաձևերը կարող են ունենալ հետևյալ դրսևորումները.

1. Պաշտոնական **չեզոք** իրավիճակում, երբ զրուցակիցը ղեկավար է, և գիտեք նրա ազգանունը, դիմեք՝ **պարոն/տիկին-ով**: Այս դիմելաձևը կարելի է գործածել՝ համադրելով պաշտոնի անվանը՝ **պարոն/տիկին նախարար/ռեկտոր/վարչապետ/տնօրեն**: Պաշտոնական վերամբարձ խոսքում ազգանվանը կամ անվանը պետք է ավելացնել **հարգելի, հարգարժան, մեծահարգ, պատվելի** բառերից մեկը (սա տարածված է հատկապես գրավոր խոսքում՝ պաշտոնական նամակ, ուղերձ, դիմում ևն): Իսկ եթե խոսքն ուղղված է բազմամարդ լսարանի, ապա գործածվում են նույն դիմելաձևերը՝ առանց ազգանվան կամ պաշտոնի անվան՝ **Հարգելի տիկնայք/պարոնայք/տիարք/հյուրեր** ևն: Հի հանձնարարվում գործածել **Հարգարժան/հարգելի պարոն Պողոս Պողոսյան** դիմելաձևը: Կառույցը ճիշտ է, երբ ազգանվան փոխարեն գործածվում է պաշտոնի անունը՝ **Հարգարժան/հարգելի պարոն/տիկին նախարար/տնօրեն**:

Ծան. Խորհրդային տարիներին ընդունված և տարածված **ընկեր** դիմելաձևը անկախացումից հետո աստիճանաբար օտարվում է. լեզվի արդի փուլում գրեթե դուրս է մղվում

գործածությունից, թեև վիրավորական որևէ ենթատեքստ չունի: Բացի այդ՝ նույն՝ խորհրդային ժամանակներից ռուսերենի դիմելաձևերի նմանությամբ պաշտոնական և կիսապաշտոնական հարաբերություններում տարածված է անուն–հայրանունով դիմելու ձևը՝ **Սեդրակ Սիմոնիչ, Անահիտ Հրանտովնա, Աշոտ Սերգեյիչ**, ընդ որում, դրանք առավելաբար հնչում են ռուսերենին բնորոշ արտասանությամբ: Այս օտարամուտ ձևերի փոխարեն արժե գործածել մասնագիտության (զբաղմունքի) և ազգանվան համադրությամբ կազմված դիմելաձևեր, ինչպես՝ **բժիշկ Գրիգորյան, ուսանող Հակոբյան** ևն:

2. Պաշտոնական և կիսապաշտոնական իրավիճակներում, երբ չգիտեք խոսակցի անուն–ազգանունը, և զրույցն էլ ակնթարթային բնույթ ունի, կարելի է գործածել **ԴՈՒՔ** հարգական ձևը կամ **պարոն, տիկին, երիտասարդ (տղաս), օրիորդ (աղջիկս), հարգելի** բառերը: Իսկ եթե զգում եք, որ զրույցը երկար է տևելու, ապա նախապես կարելի է ճշտել դիմելաձևը հետևյալ հարցումներով. «Ներողություն, Ձեզ ինչպե՞ս դիմեմ», «Կներեք, ինչ է Ձեր անունը», «Կասե՞իք Ձեր ազգանունը»: Պաշտոնական այնպիսի իրավիճակներում, երբ Ձեզ նույնպես չեն ճանաչում, ճիշտ է, որ **Դուք** էլ ներկայանաք՝ նշելով Ձեր անունը (անուն–ազգանունը), ըստ անհրաժեշտության՝ նաև հասարակական դիրքը: Ի դեպ, վերջին տարիներին հատկապես սպասարկման ոլորտում Արևմուտքի ազդեցությամբ բավականաչափ տարածվել է անվանաթերթիկ (փեյջ) փակցնելու մշակույթը: Փոքր–ինչ ուշադիր լինելու դեպքում կարելի է կարդալ խոսակցի անունը (ազգանունը) և դիմել ըստ այդմ:

Չպետք է մոռանալ, որ պաշտոնական և կիսապաշտոնական միջավայրերում խոսակցին միշտ պետք է դիմել **Դուք**-ով: Ընդ որում, խոսքը հավասարապես վերաբերում է երկու կողմերին՝ անկախ նրանից, ղեկավար է, թե՛ ենթակա, դասախոս է, թե՛ ուսանող, ավագ, թե՛ կրտսեր գործընկեր: Եվ քանի դեռ զրուցակցից չեք ստացել **Դուք**-ից **դու**-ի անցնելու ակնարկ կամ առաջարկ, խորհուրդ չի տրվում ինքնակամ փոխել դիմելաձևը: Օր.՝ չարժե վարորդին կամ մատուցողին/մատուցողուհուն կանչել «Ախպեր/ընկեր/հուպար ջան», «Քուրիկ/սիրուն ջան...» դիմելաձևերով միայն այն բանի համար, որ **Դուք** պատվիրատու եք: Աշխարհում ընդունված դիմելաձև է մասնագիտության, զբաղմունքի անվան գործածությունը. ըստ այդմ՝ կարելի է ասել մատուցող, վարորդ ևն: Իսկ եթե շփումը պարբերական է ու երկարատև, ապա ուղղակի պետք է հարցնել անունը:

Ծան.: Խորհրդային տարիներին տարածված էր **վարպետ** (←վարդպետ← վարդապետ←վարժապետ) դիմելաձևը, որը հաճախ գործածում էին նաև արհեստագործներին, վարորդներին դիմելիս: Ներկայումս անհասկանալի պատճառներով այն կարծես փոխարինվել է **հուպար (ջան)** դիմելաձևով: Բոլոր առումներով **վարպետ** բառը հասարակական որոշակի միջավայրերում նախընտրելի, նաև հաճելի դիմելաձև է: **Հուպար** աղավաղված ձևը պետք է դուրս մղվի ընդհանուր գործածությունից, իսկ **հորեղբայր** բառը՝ որպես դիմելաձև, թերևս ճիշտ կլինի գործածել միայն ազգակցական հարաբերությունների տիրույթում:

Հանգամանքները, իհարկե, կարևոր են: Գործնական շփումներում հասարակական տարբեր դիրքերում գտնվող անձինք կարող են մտերմանալ և ինքնաբերաբար անցնել ոչ պաշտոնական հարաբերությունների: Այս դեպքում բնական է **դու–դու** տարբերակը: Սակայն, անկախ մտերմության աստիճանից, պաշտոնական որոշակի միջավայրում, մանավանդ դիրքով ցածր կամ տարիքով փոքր անձանց ներկայությամբ ճիշտ է **Դուք–Դուք**-ի գործածությունը: Իսկ եթե

առանց պայմանավորվածության **Դուք**-ից անցնում եք դու-ի, ապա սա երկու նշանակություն կարող է ունենալ. կամ բավարար չափով բարեկիրթ չեք, կամ չեք հարգում զրուցակցին¹⁵⁴:

3. Ոչ պաշտոնական իրավիճակներում տիրում է դիմելաձևերի խայտաբղետ բազմազանություն. **բալես/բալիկս, հոգիս, արևս, լույս(ս), ազիզ (ջան), մորաքույր (մորքուր), հորեղբայր (հոպար) ջան, ջանս, կյանք(ս), սիրելիս, սիրուն ջան/սիրուն(իկս), քաղցր (ջան), ախպեր (ջան), ընկեր (ջան), աղջի (ջան), արա** են: Սրանք, բացի վերջին երկուսից, առօրյա մտերմիկ շփումներում խոսքին հաղորդում են հուզական ինչ-ինչ լիցքեր: Առավել բնորոշ են ընտանեկան, ընկերական հարաբերություններին, և այս շփումներից դուրս թերևս **չարժե կիրառել**: Պետք է նկատենք, որ այս դիմելաձևերի գործածությունը հաճախ կառավարվում է ոչ այնքան բանականությամբ, որքան սովորույթի ուժով: Այլ կերպ ասած՝ դրանք հաճախ արտաբերվում են բնազդաբար, քանի որ ուշադրությունը կենտրոնացնում ենք ասելիքի բուն նպատակին՝ չկարևորելով խոսքի սկիզբն ու ավարտը: Բացի այդ՝ հայերս հոգեկերտվածքով սովոր ենք առավել «տաք» ու բուռն շփումների. հարկի-անհարկի փորձում ենք մտերմիկ մթնոլորտ ստեղծել, որն արտահայտում ենք նաև նշված դիմելաձևերով: Այսուհանդերձ, բնավ նախընտրելի չէ անծանոթին դիմել «Սիրուն/մորքուր/հոպար/աղջի (ջան)» են: Հարկ է միտքն ու խոսքը հարմարեցնել, վարժեցնել նրան, որ **ոչ պաշտոնական դիմելաձևերը չտեղափոխենք պաշտոնական կամ կիսապաշտոնական միջավայր**:

6.4. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ¹⁵⁵

Անկախ մեր գործունեությունից՝ յուրաքանչյուրս մշտապես հայտնվում ենք այնպիսի իրավիճակներում, երբ պետք է ողջունել, ծանոթանալ, շնորհակալություն հայտնել, ներողություն խնդրել, հրաժեշտ տալ, շնորհավորել են: Հանգամանքներով պայմանավորված՝ տարբեր են դրանց իրացման խոսքային կաղապարները:

Ա. Ծանոթություն: Բոլոր տեսակի ծանոթությունները սկսվում են պաշտոնական իրավիճակից, ուստի ցանկալի է ըստ հնարավորին պահպանել էթիկետի բոլոր կանոնները: Հնարավոր է ծանոթանալու երկու իրավիճակ՝ **ա)** Ձեզ են ծանոթացնում որևէ մեկին, **բ)** Դուք անձամբ պետք է ծանոթանաք: Առաջին դեպքում անպայման գործածեք «(Շատ) հաճելի է», «(Շատ) ուրախ եմ», «Ուրախ եմ մեր ծանոթության համար» խոսքային կաղապարները: Ընդ որում, ասեք դրանք ցածր ձայնով, հանգիստ տոնով և խոսքին զուգակցեք թեթև ձեռքսեղմումը՝ ի նշան ծանոթության: (Խոսքը, իհարկե, չեզոք հարաբերությունների մասին է):

¹⁵⁴ **Դու/Դուք** դերանվան գործածության մասին հանգամանորեն տե՛ս Н. Формановская, Речевой этикет и культура общения, Научно-популярное изд., М., 2005, էջ 98–110:

¹⁵⁵ Պաշտոնական, մասնավորապես դիվանագիտական վարվեցողության կանոնների և խոսքային էթիկետի մասին մանրամասն տե՛ս Ն. Չալոմյան, Դիվանագիտական արարողակարգ և վարվելակերպ, Եր., 2003: **Նույնի՝** Դիվանագիտական վարվեցողության կանոնները, Եր., 2009:

Եթե Ձեր առջև կին է, ապա ձեռք մեկնեք միայն այն դեպքում, եթե նա առաջինը այն կպարզի: Երբ Դուք եք ծանոթանում, դիմեք «Կարելի՞ է Ձեզ հետ ծանոթանալ», «Թույլ տվե՞ք ծանոթանալ/ներկայանալ», «Ծանոթանանք, եթե դեմ չեք» արտահայտություններով: Հավանության դեպքում ներկայացեք, ապա, մի պահ դադար տալով, թույլ տվեք, որ խոսակիցը նույնպես ներկայանա: Վերը նշված կաղապարներին զուգահեռ՝ կարելի է գործածել նաև «Պատիվ ունեմ ծանոթանալու», «Ձեր մասին շատ եմ լսել» կառույցները:

Նոր ծանոթությունների ժամանակ խորհուրդ է տրվում շատ չխոսել: Հատկապես պետք է խուսափել եսակենտրոն մենախոսությունից: Թերևս հարկ չկա արագ **ինքն**աներկայանալու: Խելացի գրուցակիցը կհասցնի որոշակի կարծիք կազմել Ձեր ընդհանուր պահվածքից: Ինչպես բոլոր հարաբերություններում, նոր ծանոթությունների դեպքում հատկապես կարևորագույն գործոններից է **լսելը**: Աշխատեք չընդհատել, զգոն եղեք, և քանի դեռ չեն հարցրել Ձեր կարծիքը, մի շտապեք **ինքն**արտահայտվել ու մի միջամտեք մյուսների զրույցին: Եվ անկախ շփման տևողությունից՝ հրաժեշտ տալիս ցանկալի է ասել «Ուրախ էի Ձեզ հետ ծանոթանալու համար», «Հաճելի էր, հուսամ՝ դեռ կհանդիպենք» և նման արտահայտություններ: Իսկ եթե ծանոթությունն այնքան էլ Ձեր սրտով չէ, ապա իհարկե կարելի է նաև ոչինչ չասել, բայց հրաժեշտ տալը պարտադիր է:

Բ. Ողջույն և հրաժեշտ: Սրանք հարգանքի դրսևորումներ են ծանոթների, երբեմն նաև անծանոթի հանդեպ: Պաշտոնական և կիսապաշտոնական իրավիճակներում ողջույնի առավել տարածված կաղապարներն են՝ «Բարև Ձեզ/ձեզ», «Հարգանք(ներ)ս», հազվադեպ՝ «Ձերմագին ողջույններս» (վերջին երկուսը պատճենումներ են ռուսերենից, սակայն, կարծում ենք, խորթ չեն մեր լեզվամտածողությանը): Խոսքն ուղեկցվում է ձեռքսեղմումով: Կանանց դեպքում ձեռքսեղմումը պարտադիր չէ (նկատի չունենք դիվանագիտական արարողակարգերը): Ինչպես նշել ենք, կնոջը ձեռք պետք է մեկնել այն դեպքում, երբ նա առաջինն է ձեռքը պարզում: Եթե բազմամարդ միջավայրում եք, ապա նախընտրելի է պարզապես բարձրաձայն ողջունել: Առավել հարմար պահի կարելի է մոտենալ և ձեռքով բարևել: Միշտ պետք է հիշել հետևյալը. **բարևեք՝ խոսակցի աչքերին նայելով և ժպտադեմ**, նաև, ամենից կարևորը, **բարևեք բարձր, հստակ լսելի ձայնով**: Իսկ եթե աջուձախ նայելով և ի միջի այլոց ինչ-որ հնչյուն պիտի արձակեք ատամների արանքից՝ իբրև ողջույնի խոսք, ապա թերևս ավելի լավ է՝ լռեք (և պատասխան չստանալու դեպքում չնեղանաք): Եթե օրվա ընթացքում նույն մարդուն տեսնում եք մի քանի անգամ, ապա նախընտրելի է՝ մի թեթև ժպիտով, հայացքով, ձեռքի թեթև շարժումով ցույց տաք, որ նկատել եք իրեն:

Ոչ պաշտոնական իրավիճակում բարևելու խոսքային միջոցներն են՝ «Բարև», «Ողջույն», «Բարի լույս/օր/երեկո/»: Առօրյա շփումներում ողջույնն ու հրաժեշտը կարող են ուղեկցվել գրկախառնումով, համբույրով (**այտը այտին հպելով**) այն դեպքում, երբ խոսակիցները տևական ժամանակ միմյանց չեն հանդիպել: Մի կարևոր հանգամանք. վերջին տասնամյակներում մեր մշակույթ է թափանցել մի տիպի իրողություն, որը արմատավորվում է հատկապես պատանիների ու երիտասարդների շրջանում: Խոսքը միմյանց բարևելիս ամենօրյա գրկախառնումների, համբույրի ու ողջագուրվելու մասին է: Ամենօրյա շփումներում նույնպես ողջույնի արդիական ու քաղաքակիրթ պահվածք է համարվում ձեռքսեղմումը,

իսկ ամեն օր՝ միմյանց տեսնելիս համբուրվելը բնավ բնորոշ չէ մեր ազգային ավանդույթին:

Ինչ վերաբերում է հրաժեշտին, ապա խոսքային կառույցները պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակներում գրեթե նույնն են՝ «Ցտեսություն», «Առայժմ», «Հաջողություն», «Մինչ նոր հանդիպում», «Շնորհակալություն հաճելի օրվա համար», «Լավ մնա(ցեք)», «Բարի ճանապարհ/գիշեր»: Բազմամարդ իրավիճակներում նույնպես հրաժեշտ տալը պարտադիր է: Ընդհանրապես վարվեցողական կանոնների խախտում է անձայն և աննկատ հեռանալը: Դա կարող է ընկալվել որպես արհամարհանք կամ անհարգալից վերաբերմունք: Ուստի եթե շատ եք շտապում կամ արտակարգ միջադեպի պատճառով պետք է հեռանաք, միևնույնն է, հրաժեշտ տվեք, թեկուզ շատ արագ: Ձեզ վրա ուշադրություն չիրավիրելու համար բազմամարդ հավաքներին կարող եք հրաժեշտ տալ միայն հյուրընկալողին (հավաքը նախաձեռնող(ներ)ին):

Ծան.: Հեռանալ անգլիական ձևով դարձվածքից թյուր տպավորություն կա, թե անգլիացիները հեռանում են առանց հրաժեշտ տալու (դարձվածքի նշանակությունն է): Արտահայտությունը ծագել է 1756–1763 թթ. պատերազմի ժամանակ: Ֆրանսիացի ռազմագերիները ինքնակամ լքում էին դիրքերը, և անգլիացիները ծաղրում էին նրանց՝ ասելով «Հեռացան ֆրանսիական ձևով»: Իսկ ֆրանսիացիներն այս արտահայտությունը շրջեցին անգլիացիների դեմ՝ փոխելով այն «Հեռանալ անգլիական ձևով» տարբերակի: Վերջինը առավել տարածվեց. 18–րդ դարում անգլիացիները այդ դարձվածքն էին գործածում այն դեպքում, երբ որևէ մեկը առանց տանտիրոջը հրաժեշտ տալու հեռանում էր պարահանդեսից կամ հրավերից¹⁵⁶:

Գ. Շնորհակալություն: Սա արձագանք է որևէ բարի գործի, մատուցված ծառայության, ուշադիր կամ նրբանկատ վերաբերմունքի համար: Պաշտոնական և կիսապաշտոնական իրավիճակներում հիմնականում գործածվում են «Թույլ տվեք շնորհակալություն հայտնել...», «Ուզում եմ շնորհակալություն հայտնել...», «Ընդունեք մեր երախտագիտությունը...», «Խորին երախտագիտությամբ...» և այլ կաղապարներ:

Ոչ պաշտոնական իրավիճակում թերևս ամենից տարածված են «Շնորհակալություն/շնորհակալ եմ/շատ շնորհակալ եմ», «(Շատ) Ապրես» արտահայտությունները: Կարծում ենք՝ ներկայումս անհրաժեշտություն կա մեր շնորհակալության խոսքային միջոցներից **խապառ բացառելու** «Մերսի»–ն և հատկապես անգլերենի ազդեցությամբ թափանցած «Թենքս» (thanks), «Թենք յու» (thank you) օտարամոծությունները: Տարածված են հատկապես աղջիկների խոսքում. իբրև թե «մոդայիկ» երևալու միջոց են, բայց իրականում գավառամտության, օտարին կապկելու հնարներ են:

Շատ կարևոր է նաև պատասխանական խոսքը. ըստ խոսքային էթիկետի՝ **ցանկալի չէ գործածել** «Չարժե/չարժի» բառը: **Ճիշտ են**՝ «Խնդրեմ», «Նորեն համեցեք», «Մեծ հաճույքով», «Դժվար չէ(ր)», «Հոգ/խնդիր չէ» ևն:

Ընդհանրապես, բոլոր տեսակի շփումներում դրական գործի, մի բարի խոսքի հանդեպ շնորհակալական վերաբերմունքը անհրաժեշտ է. այն էապես նպաստում

¹⁵⁶ Հմմտ. <http://masterok.livejournal.com/1607303.html>

է վստահելի, կայուն և շիտակ հարաբերությունների ձևավորմանը: Եվ հակառակը՝ չասված կամ ուշացած շնորհակալական խոսքը կարող է ընկալվել որպես անկարևոր, անհարգալից կամ արհամարհական վերաբերմունք:

Ի դեպ, շնորհակալություն հայտնողից հաճախ ենք լսում «Շնորհակալություն, ես քո/Ձեր լավության տակից դուրս կգամ...», «Մի օր էլ ես օգտակար կլինեմ քեզ/Ձեզ», կամ՝ «Շնորհակալ եմ, անպայման կփոխհատուցեմ...» և նման արտահայտություններ: Քիչ թե շատ բարեկիրթ գրուցակիցը հաստատապես Ձեզ այդ կերպ չի պատասխանի: Ավելին, գուցե այդպիսի խոսքը փոքր-ինչ վիրավորական լինի. միշտ չէ, որ մարդիկ միմյանց օգնում են փոխադարձ ու պարտադիր ակնկալիքներով: Ուստի խորհուրդ է տրվում այսպիսի մտքերը չբարձրաձայնել:

Դ. Ներողություն: Էթիկետի կանոնների մեջ առաջնային նշանակություն ունի ներողություն խնդրելը: Միշտ չէ, որ «Ներողություն/կներեք» բառերը գործածվում են անպայման վատ արարքի կամ խոսքի համար ներողություն խնդրելու նպատակով: Որոշ դեպքերում այդ բառերի գործածությունը ուղղակի բխում է խոսքային նորմերից: Ասենք՝ անհրաժեշտ է ներողություն խնդրել, եթե, օրինակ, փողոցում որևէ անցորդից ինչ-որ բան եք հարցնում, ինչպես՝ «(Շատ) Ներողություն/կներեք, կասե՞ք՝ որտեղ է...», կամ՝ որևէ մեկի աշխատասենյակ մտնելիս՝ դուռը թակելուց հետո, նախ պետք է հարցնել. «Ներողություն/կներեք, կարելի է/թոյլ կտա՞ք»: Չի կարելի միանգամից դիմել բուն հարցով: Եվ կամ՝ գործընկերոջը ինչ-որ հարցով, խնդրանքով դիմելիս երբեմն կրկին ցանկալի է գործածել նշված բառը, ինչպես, օրինակ՝ «Կներես/ներիր, հեռախոսը կփոխանցես...»: Առաջին տպավորությամբ թվում է՝ նշված հանգամանքները առօրյա կամ գործնական շփումներում մանրուքներ են, և դրանք շրջանցելը այնքան էլ լուրջ բացթողում չէ: Մինչդեռ իրականում հենց այդ աննշան թվացող հանգամանքներն են, որոնք ձևավորում են օբյեկտիվ կարծիք մարդու դաստիարակության, բարեկրթության, նրբանկատության մասին:

Այլ են արարքի կամ խոսքի համար ներողություն խնդրելու նորմերը: Նախ՝ խոսողի ծայնը պետք է լինի բարձր: Ապա՝ բառերը պետք է արտաբերվեն հանդարտ և հստակ, խոսելիս պետք է նայել խոսակցի աչքերին: Եթե սխալը թույլ է տրվել այլ անձանց ներկայությամբ, ապա, ըստ վարվեցողության կանոնների, հենց նրանց ներկայությամբ էլ պետք է ներողություն խնդրել: Ընդ որում, ներողություն պետք է խնդրել բոլոր դեպքերում՝ անկախ խոսակցի տարիքից, սեռից, սոցիալական դիրքից: Նախընտրելի է սեղմ, բայց համոզիչ բացատրել կատարվածի պատճառ(ներ)ը: Կարելի է գործածել «Ներիր, ես ճիշտ չէի...», «Կներես/կներեք, ես ինձ ճիշտ չպահեցի...», «Ներողություն եմ խնդրում...», «Սխալս ընդունում եմ...», «Մեղավոր եմ...» ևն: Ի վերջո, ներողության համար յուրաքանչյուր դեպք պահանջում է շրջահայաց, նաև անհատական մոտեցում և իրավիճակին համապատասխան խոսքային միջոցներ:

Կարևոր է նաև պատասխանը: Եթե հասկանում և ընդունում եք գրուցակցի ներողությունը, ապա կարելի է մեղմել իրավիճակը, թուլացնել խոսակցի հոգեբանական լարվածությունը հետևյալ արտահայտություններով՝ «Լավ, արդեն անցավ...», «Եկեք մոռանանք...», «Ես էլ եմ այդպես սխալվել...» ևն: Լավ կլինի

խոսքն ասել ժպիտով, ձեռքսեղմումով և միանգամից փոխել զրույցի թեման: Սա ներողամտության և նախկին հարաբերությունները վերականգնելու նշան է: Եթե մտադիր եք ներելու, ապա ցանկալի չէ խոսակցին ծանրաբեռնել հանգամանքները մանրամասնող զրույցով կամ խրատական ճառով. այս կերպ Դուք, այսպես ասած, փորձում եք առավելություն հաստատել խոսակցի նկատմամբ, որը ցանկալի չէ:

Ե. Անհամաձայնություն: Միշտ չէ, որ համամիտ ենք լինում զրուցակցի կարծիքին, և հաճախ ուզում ենք հայտնել մեր անհամաձայնությունը: Սա խոսքային մի իրավիճակ է, որում շատ զգույշ պիտի լինել՝ զրուցակցին չվիրավորելու համար: Մեր խոսքային կառույցներն այդ հնարավորությունն իհարկե ընձեռում են, միայն թե պետք է ճիշտ օգտվել դրանցից:

Այսպես. պաշտոնական և կիսապաշտոնական իրավիճակներում հարգալից փոխհարաբերությունների դեպքում չի կարելի խոսքը միանգամից սկսել «Սխալ եք/սխալվում եք...», «Ո՛չ, ճիշտ չեք...», «Դուք չգիտեք...», «Դուք կարծեք թե չեք հասկացել...» և նման կտրուկ պատասխաններով նույնիսկ այն դեպքում, երբ զրուցակցի տեսակետը (խոսքը) իրոք սխալ է կամ անհիմն: Պետք է հաշվի առնել միջավայրային և իրադրական բոլոր գործոնները՝ զրուցակցի դիրքը, զրույցի ընթացքում երրորդ անձի ներկայությունը, մտերմության աստիճանը և ըստ այդմ գործածել խոսքային այնպիսի կառույցներ, որոնք հաստատապես չեն վիրավորի զրուցակցին, նաև կնպաստեն երկխոսության հանդարտ շարունակությանը: (Նախընտրելի է այսպես վարվել նաև այն դեպքում, երբ զրուցակիցները իրար նկատմամբ բացասական տրամադրվածություն ունեն): Բոլոր դեպքերում, հատկապես երրորդ անձի (անձանց) ներկայությամբ պետք է պահպանել էթիկայի կանոնները: Պաշտոնական–գործնական զրույցի կամ քննարկման ընթացքում անհամաձայնությունը կարելի է հայտնել մեղմասությամբ, ինչպես՝ «Ձեր կարծիքը (տեսակետը), իհարկե, լսեցի, սակայն եթե չեմ սխալվում...», «Եթե թույլ կտաք/Ձեր թույլտվությամբ մի բան հավելեմ...», «Ես լսեցի Ձեզ, սակայն որոշակի առարկություն ունեմ. թո՛ւյլ կտաք/կարելի՞ է...», «Ներողություն, բայց կարծես ինչ–որ բան այն/պարզ չէ...» ևն:

Ոչ պաշտոնական իրավիճակում կարելի է օգտվել առավել սեղմ կառույցներից, ինչպես՝ «Կներես/ներ՛ր, բայց համաձայն չեմ...», «Այնքան էլ ճիշտ չես...», «Մի բան այն չես ասում...», «Ինչքան հասկացա, դու... բայց...» ևն: Նույնիսկ ամենաջերմ հարաբերությունների դեպքում վիրավորական են «Դու ինչ գիտես որ...», «Դու ինչ ես հասկանում որ...», «Իսելքդ չի հասնում, մի՛ խոսիր...», «Անհեթեթություն/հիմարություն/ապուշություն...» և նման արտահայտությունները: Ի դեպ, նախորդ կառույցների գործածությունը էապես արդյունավետ կլինի նաև երեխաների, մասնավորապես պատանիների հետ շփվելիս, քանի որ անհամաձայնությունը հանդիմանանքով արտահայտելու դեպքում մեծանում է հոգեբանական ճնշման ազդեցությունը, որը խոսակցին թույլ չի տալիս ազատ արտահայտվել, և երկխոսությունը մտնում է փակուղի՝ չհասնելով արդյունքի: Մյուս կողմից՝ նա, ում հակադրվում են, իր կարծիքը չպետք է արտահայտի հետևյալ սկզբունքով. «Աշխարհում կա երկու կարծիք՝ իմը և սխալը»: Բոլոր ոլորտներում այսպիսի հաղորդակցումը դատապարտված է:

2. Հաճոյախոսություն: Էական դերակատարություն ունի բոլոր հարաբերություններում: Այն դրական վերաբերմունքի դրսևորման և անհատին ոգևորելու լավագույն միջոցներից է. չէ որ մի բարի խոսքը կարող է բարձրացնել խոսակցի ինքնագնահատականը, փոխել տրամադրությունը, նպաստել հարաբերությունների դրական զարգացմանը:

Կարելի է հաճելի խոսք ասել խոսակցի արտաքինի, ոճի, մտածողության, աշխատանքի, ընդունելության, հյուրասիրության և այլ որակների մասին: Եվ պետք չէ մտածել, թե դա կարող է ընկալվել որպես շողոքորթություն: Չափավոր և տեղին հնչած հաճոյախոսությունը միշտ էլ փոխադարձաբար հաճելի է:

Հաճոյախոսելիս ժպտացեք, խոսեք աշխույժ, նայեք խոսակցին: Ի միջի այլոց և անհասցե նետվող հաճոյախոսությունը մի բարձրաձայնեք:

Շատ կարևոր է **պատասխանական խոսքը**: Առաջարկում ենք հիմնավորապես և անպայման **հրաժարվել** մեզանում շատ տարածված անճաշակ ձևակերպումներից, ինչպիսիք են՝ «Ճաշակդ է բարձրացել», «Ես նույնն եմ, ուղղակի դու ես նոր տեսնում», «Դու քեզ տես», «Ա՛ղդ է պակաս, թե՛ մպղդ» ևն: Անգամ երգիծական նկատառումներով գործածելը հանձնարարելի չէ: Խոսքային էթիկետը սահմանում է հետևյալ պատասխանները. «Շնորհակալ եմ հաճելի խոսքերի համար», «Նմանապես», «Հաճելի է լսել», «Նույնը կասեի քո (Ձեր) մասին» ևն:

Է. Հեռախոսագրույց: Դժվար է պատկերացնել ժամանակակից մարդու կյանքն առանց հեռախոսի: Սակայն միշտ պետք է հիշել, որ հեռախոսը ոչ թե ժամանցի, այլ տեղեկություն ստանալու միջոց է: Կան հեռախոսագրույցի էթիկայի մի շարք կանոններ, որոնք հաճախ են խախտվում մեզանում: Խոսքը հատկապես վերաբերում է պաշտոնական և կիսապաշտոնական միջավայրերին, քանի որ ոչ պաշտոնական իրավիճակները ենթադրում են առավել թեթև, ազատ հարաբերություններ: Այսպես.

1. Անկախ զբաղեցրած դիրքից՝ էթիկայի կանոնները պահանջում են գործնական բնույթի հարցերով տուն չգանգահարել: Խիստ անհրաժեշտության դեպքում **զանգահարել մինչև երեկոյան ժամը 21:00-ը**:

2. Եթե հեռախոսագրույցը գործնական բնույթ ունի և հրատապ քննարկում կամ իրազեկում չի ենթադրում, ապա **մի՛ զանգահարեք աշխատանքից հետո**. այդ մասին կարելի է խոսել աշխատանքային հաջորդ օրը: Խոսքը հավասարապես վերաբերում է և՛ ղեկավարին, և՛ ենթակային:

3. Չանգահարելիս ընդունված է պահել 3–4 զանգ. պատասխան չստանալու դեպքում անջատեք հեռախոսը և նորից զանգահարեք մոտ 30 րոպե հետո: Կրկին պատասխան չստանալու դեպքում այլևս մի՛ զանգահարեք. սպասեք տվյալ մարդու զանգին: Այսպիսի դեպքերում, անշուշտ, հետադարձ զանգը (հետզանգը) անհրաժեշտ է:

4. Գործնական հեռախոսագրույցը **պետք է կարճ լինի**: Քննարկման ենթակա հարցերը պետք է լուծվեն գործնական, այսպես ասած, դեմ առ դեմ հանդիպումների

միջոցով (ընթացքում): Իսկ հեռախոսագրույցը այս դեպքում միայն միջոց է հարցը (խնդիրը) ներկայացնելու և հանդիպման պայմանավորվածություն ձեռք բերելու:

5. Շատ կարևոր է **ծայնը**: Խոսելիս պետք է հետևել ծայնին, հնչերանգին և ելևէջումներին: Որպես կանոն՝ ծայնը պետք է լինի չափավոր բարձր, հնչերանգը՝ կայուն, վստահ: Յուրաքանչյուր բառ պետք է արտաբերել հստակ, հասկանալի, պետք է պահել խոսքի տրամաբանական շեշտերը: Որքան էլ շտապում եք, արագախոսությամբ մի՛ ճնշեք խոսակցին:

6. Խորհուրդ չի տրվում խոսքը սկսել «Ո՛վ է», «Ո՛վ է խոսում», «Ո՛ւմ հետ եմ խոսում» և նման արտահայտություններով: Զանգահարողն ինքը **պետք է ներկայանա**, նշելով անունը: Պայմանավորված զանգահարելու նպատակով, գրույցի բովանդակությամբ՝ պետք է նշել նաև ազգանունը, պաշտոնը:

7. Եթե խոսակիցն անծանոթ է, մի՛ դիմեք նրան **դու**–ով, կամ՝ ընկեր/ընկեր ջան, տիկին/տիկին (ջան), աղջիկ/աղջիկ ջան, երիտասարդ և նման դիմելաձևերով: Նախընտրելի է ուղղակի գրույցը սկսել չեզոք՝ հարգանքի հոգնակիով՝ **Դուք**–ով:

8. Խոսնքը ըստ հնարավորին կարճ, հստակ ձևակերպեք Ձեր մտքերը և հարցի պատասխանը ստանալուց հետո անպայման շնորհակալություն հայտնեք «Շնորհակալ եմ/շնորհակալություն», «Ներողություն (ներող կլինեք) անհանգստացնելու համար» կաղապար–արտահայտություններով:

9. Որևէ մեկին (ծանոթ կամ անծանոթ) զանգահարելիս «Հարմար է խոսել», «Թի՛յլ կտաք մի բան հարցնել» և նման արտահայտություններով անպայման ճշտեք, թե որքանով է հարմար խոսակցին, որ այդ պահին խոսի Ձեզ հետ:

10. Եթե խոսակիցը շատախոս է, և կամ գրույցն է անկարևոր, ապա նրան ընդհատեք նրբանկատորեն: «Ներիր, փոքր–ինչ ուշ կխոսենք», «Կներես, ինձ մյուս հեռախոսով զանգում են», «Հիմա դուրս եմ գալիս, հետո կխոսենք» և այսպիսի արտահայտություններով կարելի է կարճել գրույցը՝ չվիրավորելով խոսակցին: Զի կարելի միանգամից ընդհատել նրան «Լավ, ժամանակ չունեմ» կամ «Կարճ ասե՛ք/կարճ կապե՛ք» կտրուկ արտահայտություններով: Մյուս կողմից էլ բնավ ցանկալի չէ, որ խոսակիցը վերը նշված խոսքերը լսելուց հետո համառորեն փորձի ձգձգել գրույցը «Մի՛ րոպե, մի՛ բան էլ ասեմ», «Կներես, բայց սա էլ ասեմ» և նման արտահայտություններով: Այսպիսի պահվածքը անբարեկրթություն է:

11. Երբ զանգահարում են և ուզում խոսել գործընկերներից կամ տան անդամներից որևէ մեկի հետ, պետք չէ գործածել «Ո՛վ է», «Իսկ ո՛վ է հարցնում», «Կներեք, իսկ ինչ հարցով եք զանգում» և նման արտահայտություններ: Եթե զանգի հասցեատերը ներկա է և ակնարկում է, որ պատրաստ է խոսելու, ապա հեռախոսը փոխանցեք նրան՝ գործածելով հետևյալ արտահայտությունները՝ «Այո, իհարկե», «Հիմա փոխանցեմ»: Հակառակ դեպքում՝ ճիշտ է կամ ցանկալի է ասել. «Նա այստեղ/տանը չէ: Ինչ հաղորդեմ»: Այսպես կիմանաք զանգողին, միաժամանակ չեք թողնի հետաքրքրասեր մարդու անցանկալի տպավորություն:

12. Երբեք մի՛ ընդհատեք զրուցակցին, եթե իհարկե դրա համար հիմնավոր պատճառ(ներ) չկա(ն): Եվ հիշեք, որ ցանկացած չմտածված բառ կամ արտահայտություն կարող է բացասաբար ազդել Ձեր գործի և հարաբերություն-ների վրա:

13. Գործնական աշխատանքի կամ հանդիպման ժամանակ նախընտրելի է օգտվել հեռախոսի «անձայն (без звука)» հրահանգից (ռեժիմից) կամ նախապես անջատել: Պատասխանելու դեպքում ներողություն խնդրեք զրուցակցից և խոսեք շատ կարճ՝ գործածելով «Կներես/ներիր, հիմա հարմար չէ խոսել», «Քիչ ուշ կգանգեմ», «Քիչ հետո գանգիր» խոսքերը:

Եվ ընդհանրապես, հեռախոսագրույցի ընթացքում պետք է ուշադիր և հետևողական լինել յուրաքանչյուր բառի, արտահայտության նկատմամբ, քանի որ սա շփման այն ձևն է, որի դեպքում միայն Ձեր խոսքային որակներն են ստեղծում որոշակի տպավորություն:

Էթիկետի ներկայացված կանոնները խիստ համառոտ են, ընդհանուր և առա-վելաբար վերաբերում են հաղորդակցական չեզոք հարաբերություններին: Հաղորդակցման համար կան նաև այլ հանգամանքներ ու գործոններ, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է մյուսից տարբեր խոսքային մշակույթ: Սակայն սա գիտելիքի նվազագույն սահմանն է, որին պետք է հասնի յուրաքանչյուր չափա-հաս մարդ և հիշի ամենակարևորը. բոլոր տեսակի հարաբերությունները պետք է կազմակերպել այնպես, որ իրականանա խոսքային վարվեցողության հիմնական նպատակը՝ **հաշտ, հարգալից և բարեկիրթ** հաղորդակցումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Խաչատրյան Տ.**, Հաղորդակցման և աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ, Եր., 2012:
2. **Չալոմյան Ն.**, Դիվանագիտական արարողակարգ և վարվելակերպ, Եր., 2003:
3. **Չալոմյան Ն.**, Դիվանագիտական վարվեցողության կանոնները, Եր., 2009:
4. **Гойсман О., Гончарова Л., Лапина О. и др.**, Русский язык и культура речи, М., 2009.
5. **Крысин Л.**, Речевое общение и социальные роли говорящих // Социально-лингвистические исследования, М., 1976.
6. **Кузнецов И.**, Деловое общение. Деловой этикет, М., 2005 (էլ. հասցե՝ <http://nemaloknig.info/downloadbook-fb2-34716/>)
7. «Стилистический энциклопедический словарь русского языка», под ред. М. Кожиной, М., 2003.
8. **Стернин И.**, Русский речевой этикет, Воронеж, 1996.
9. **Формановская Н.**, Речевой этикет и культура общения, М., 2005.
10. **Фролова О.**, Японский речевой этикет (лингвистический аспект), Новосибирск, 1997 (էլ. հասցե՝ <http://www.philology.ru/linguistics4/frolova-97.htm>)

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԲ - Ակսել Բակունց
 ԱԻ - Ավետիք Իսահակյան
 ԳՄ - Գուրգեն Մահարի
 ԳՆ - Գրիգոր Նարեկացի
 ԳՆԺ - Գարեգին Նժդեհ
 ԳԷ - Գևորգ Էմին
 ԴԴ - Դերենիկ Դեմիրճյան
 ԴՎ - Դանիել Վարուժան
 ԵԶ - Եղիշե Չարենց
 ԵՕ - Երվանդ Օտյան
 ՋԽ - Ջորայր Խալափյան
 ԼՇ - Լևոն Շանթ
 ԽԴ - Խաչիկ Դաշտենց
 ԽԱ - Խաչատուր Աբովյան
 ԿԶ - Կոստան Ջարյան
 ՀԹ - Հովհաննես Թումանյան
 ՀՄ - Հրանտ Մաթևոսյան
 ՀՇ - Հովհաննես Շիրազ
 ՀՊ - Հակոբ Պարոնյան
 ՀՍ - Համո Սահյան
 ՀՍՀ - Հայկական սովետական
 հանրագիտարան
 ՄԳ - Մուշեղ Գալշոյան
 ՄՄ - Միսաք Մեծարենց
 ՄՊ - Մկրտիչ Պեշիկթաշյան
 ՆԶ - Նաիրի Ջարյան
 ՇՇ - Շահան Շահնուր
 ՊՍ - Պարույր Սևակ
 ՊԴ - Պետրոս Դուրյան
 Զ - Զիվանի

ՌԴ - Ռազմիկ Դավոյան
 ՌՀ - Ռուբեն Հովսեփյան
 ՌՍ - Ռուբեն Սևակ
 Ս - Սիամանթո
 ՍԿ - Սիլվա Կապուտիկյան
 ՄՆ - Սայաթ-Նովա
 ՎԴ - Վահագն Դավթյան
 ՎՏ - Վահան Տերյան
 Ֆ - Ֆրիկ
 անգլ. - անգլերեն
 գ. - գոյական
 գերմ. - գերմաներեն
 թարգմ. - թարգմանություն
 իրավք. - իրավաբանական
 ժող. - ժողովրդական
 ծան. - ծանոթագրություն
 հնց. - հնացած
 իտ. - իտալերեն
 լատ. - լատիներեն
 խսկց. - խոսակցական
 հմմտ. - համեմատել/համեմատիր
 հուն. - հունարեն
 պիլ. - պահլավերեն
 ռուս. - ռուսերեն
 փոխ. - փոխաբերական
 քղք. - քաղաքագիտական
 նն - և այլն
 օր. - օրինակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
------------------	---

ՄԱՍ 1. ԼԵԶՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԸ, ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒԹՅՆԵՐԸ	
1.1. ԼԵԶՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԸ	5
1.2. ԼԵԶՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ	5
1.3. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ	6
1.4. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ	6
1.5. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ	7
1.6. ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ	9
1.7. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ	11
1.8. ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒ	12
1.9. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՆԵՐԸ	13

ՄԱՍ 2. ԽՈՍՔ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ, ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ:	
ԽՈՍՔԻ ՄԵԼԱԿՈՒՅԹ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ	
2.1. ԽՈՍՔ	14
2.2. ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԶԵՎԵՐԸ	15
2.2.1. Համառոտ և ծավալուն խոսք	15
2.2.2. Բանավոր և գրավոր խոսք	15
2.2.3. Մենախոսություն և երկխոսություն	18
2.2.4. Արտաքին և ներքին խոսք	19
2.2.5. Հեղինակային և ուրիշի խոսք	20
2.2.6. Արձակ և չափածո խոսք	20
2.2.7. Պարբերություն	20
2.3. ԽՈՍՔԻ ՄԵԼԱԿՈՒՅԹ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ	21

ՄԱՍ 3. ԽՈՍՔԻ ԱՐՃԱՆԻՔՆԵՐԸ	
3.1. ՃՇՏՈՒԹՅՈՒՆ	23
3.1.1. Բովանդակության ճշտություն	23
3.1.2. Լեզվական նորմի պահպանում	23
3.1.2.1. Լեզվական նորմ հասկացությունը	24
3.1.2.2. Նորմավորման չափանիշները	24
3.1.2.3. Հայոց գրական լեզվի հիմնական նորմերը	25
Ա. ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ (ԱՐՏԱՍՄԱՆԱԿԱՆ) ՆՈՐՄԵՐ	25
Ա.1. Ուղղախոսություն	25
Ա.2. Տառադարձություն	29
Ա.3. Հնչյունափոխություն	30
Ա.4. Շեշտ	32
Բ. ԲԱՌԱՅԻՆ ՆՈՐՄԵՐ	33
Բ.1. Հայոց լեզվի բառապաշարը	33
Բ.1.1. Բնիկ հայերեն բառեր	35
Բ.1.2. Ստացվածքային բառեր	35
Բ.1.3. Փոխառություններ և օտարաբանություններ	35
Բ.1.4. Նորակազմություններ	39
Բ.2. Տերմիններ	41
Բ.3. Բառի կազմության սխալ ընկալում	44
Բ.4. Ստուգաբանություն	45
Բ.5. Հապավական բարդություններ և համառոտագրություններ	47
Բ.6. Իմաստափոխություն	49
Բ.7. Հոմանիշների շփոթություն	51
Բ.8. Հարանունների շփոթություն	52

Բ.9. Բառային զուգակցում (համապատասխանություն)	53
Բ.10. Ավելորդաբանություն և կրկնաբանություն	55
Գ. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ	57
Գ.1. Ձևաբանություն	57
Գ.1.1. Անձնանիշ և իրանիշ գոյականներ	58
Գ.1.2. Գոյականի հոգնակի թվի կազմության յուրահատկություններ	58
Գ.1.3. Հավաքական գոյականներ	62
Գ.1.4. Հոգնակերպ գոյականներ	62
Գ.1.5. Անեզական գոյականներ	62
Գ.1.6. Որոշյալ և անորոշ առումներ	63
Գ.1.7. Հոլովական տարբերակային ձևեր	64
Գ.1.8. Ածականի տարբերակային ձևեր	69
Գ.1.9. Թվականի տարբերակային ձևեր, թվականի ուղղագրությունը	69
Գ.1.10. Դերանվան տարբերակային ձևեր	73
Գ.1.11. Դերանվանական հոդեր	76
Գ.1.12. Բայ	78
Գ.1.13. Մակբայների գործածության յուրահատկություններ	83
Գ.1.14. Կապերի գործածության յուրահատկություններ	83
Գ.1.15. Շաղկապների գործածության յուրահատկություններ	85
Գ.1.16. Վերաբերականների և ձայնարկությունների գործածության յուրահատկություններ	86
Գ.2. Շարահյուսություն. նախադասության անդամների կապակցման եղանակների և միջոցների յուրահատկություններ	87
Գ.2.1. Համաձայնություն	87
Գ.2.2. Խնդրառություն	90
Գ.2.3. Առդրություն	91
Գ.2.4. Շարադասություն	91
3.2. ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱԶՄԱԶՆՈՒԹՅՈՒՆ	95
3.2.1. Բովանդակության հարստություն և տեղեկատվականություն	95
3.2.2. Հնչյունական (ձայնական) հարստություն	96
3.2.3. Բառային կազմի հարստություն: Բառապաշար	98
3.2.4. Խոսքի քերականական հարստություն և բազմազանություն	106
3.2.5. Արտահայտչամիջոցներ	110
3.3. ՃԵԳՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՍԱԿՈՒԹՅՈՒՆ	110
3.3.1. Խոսքի առարկայի իմացություն	111
3.3.2. Բաղնետրություն և բառագործածություն	111
3.3.2.1. Հոմանիշների ընտրություն	112
3.3.2.2. Բազմիմաստ բառեր և համանուններ	113
3.3.2.3. Ժամանակավրիպություն	113
3.3.2.4. Տերմիններ	114
3.3.2.5. Օտար բառեր	114
3.3.2.6. Բարբառայնություններ և ժարգոնային բառեր	115
3.3.3. Տրամաբանականություն	116
3.3.4. Խոսքի ճշգրտության այլ հատկանիշներ	116
3.3.4.1. Հնչերանգ և տրամաբանական շեշտ	116
3.3.4.2. Բառակազմության և ձևակազմության ճշգրտություն	117
3.3.4.3. Շարահյուսական կառույցների հստակություն	118
3.4. ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ	118
3.4.1. Մատչելի բառապաշար	119
3.4.2. Քերականական ձևերի և կառույցների ճիշտ ընտրություն	120
3.5. ՍԵՂՄՈՒԹՅՈՒՆ (ԿԱՐՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)	120
3.5.1. «Սեղմ» բառապաշար	121
3.5.2. Դարձվածքներ, ասույթներ, թևավոր խոսքեր	122
3.5.3. Հապավումներ և համառոտագրություններ	123
3.5.4. Քերականական կարճ ձևեր և կառույցներ	124

3.6. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	125
3.6.1. Տեքստի կառուցվածքային և իմաստային բաղադրիչների սերտ կապի ապահովում	125
3.6.2. Տրամաբանության օրենքների պահպանում.	126
3.6.3. Տրամաբանական սխալներ.	128
3.7. ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ-ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.	131
3.7.1. Հնչերանգ	132
3.7.2. Հոմանշություն	135
3.7.3. Աստիճանավորում	138
3.7.4. Համանունություն	139
3.7.5. Հարանունություն	140
3.7.6. Հականշություն և հակադրություն	140
3.7.7. Բառախաղ	143
3.7.8. Շրջաստյալ	145
3.7.9. Ավելադրություն և կրկնաբերություն	147
3.7.10. Նախադասության տարբերակային ձևեր կամ տեսակներ.	148
3.7.11. Համանիշ շարահյուսական կառույցներ.	151
3.7.12. Անշաղկապություն	156
3.7.13. Բազմաշաղկապություն	156
3.7.14. Ջեղչում	157
3.7.15. Մասնատում (պարզեցացիա)	157
3.7.16. Ծարտասանական հարց	158
3.7.17. Ծարտասանական բացականչություն	158
3.7.18. Զուգադրություն	159
3.7.19. Խաչաձևում.	159
3.7.20. Մեղմասություն	159
3.7.21. Չափազանցություն	162
3.7.22. Նվազաբանություն	162
3.7.23. Նրբաբանություն	163
3.7.24. Շրջադասություն	164
3.7.25. Հեզնանք	164
3.7.26. Պարադոքս.	165
3.7.27. Համեմատություն	166
3.7.28. Փոխաբերություն	167
3.7.29. Մակդիր	169
3.7.30. Անծանալորում	170
3.7.31. Փոխանունություն	171
3.7.32. Համըմբում	172
3.7.33. Փոխարկում	172
3.8. ԽՈՍԹԻ ԱՅԼ ԱՐԺԱՆԻՔՆԵՐ	175

ՄԱՍ 4. ԽՈՍԹԻ ԳՈՐԾԱՊԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

4.1. ԳԻՏԱԿԱՆ ՈՃ	178
4.1.1. Ընդհանուր հատկանիշներ.	178
4.1.2. Բառապաշար	180
4.1.3. Թերականական առանձնահատկություններ	184
4.1.4. Ենթաոճեր և ժանրեր.	187
4.1.5. Գիտական աշխատանքների կառուցվածքը	189
4.1.6. Աշխատանքների ձևավորումը	190
4.2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՃ	191
4.2.1. Ընդհանուր հատկանիշներ	191
4.2.2. Բառապաշար	193
4.2.3. Թերականական հատկանիշներ.	195
4.2.3.1. Ձևաբանական առանձնահատկություններ	195
4.2.3.2. Շարահյուսական առանձնահատկություններ.	196
4.2.4. Պաշտոնական ոճի ենթատեսակներ	199

4.2.4.1. Իրավաբանական ենթաոճ	199
4.2.4.2. Դիվանագիտական ենթաոճ	201
4.3. ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՃ	204
4.3.1. Ընդհանուր հատկանիշներ	204
4.3.2. Հնչյունական առանձնահատկություններ	205
4.3.3. Բառապաշար	206
4.3.4. Քերականական հատկանիշներ	208
4.3.4.1. Ձևաբանական առանձնահատկություններ	208
4.3.4.2. Շարահյուսական առանձնահատկություններ	209
4.4. ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՈՃ	211
4.4.1. Ընդհանուր հատկանիշներ	211
4.4.2. Հնչյունական յուրահատկություններ	212
4.4.3. Բառապաշար	212
4.4.4. Քերականական հատկանիշներ	216
4.4.4.1. Ձևաբանական առանձնահատկություններ	216
4.4.4.2. Շարահյուսական կառույցներ	219
4.4.5. Հեղինակային ոճ կամ խոսքարվեստ	221
4.5. ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԼԵՂՈՒՆ	224
4.5.1. Ընդհանուր հատկանիշներ	224
4.5.2. Բառապաշար	225
4.5.3. Քերականական հատկանիշներ	231
4.5.3.1. Ձևաբանական առանձնահատկություններ	231
4.5.3.2. Շարահյուսական առանձնահատկություններ	232
4.5.4. Պատկերավորման և արտահայտչականության միջոցներ	234
4.6. ԳՈՎԱԶԴԻ ԼԵՂՈՒՆ	237
4.6.1. Ընդհանուր հատկանիշներ	237
4.6.2. Գովազդի տարածման ուղիները	238
4.6.3. Գովազդի կառուցվածքը	238
4.6.4. Գովազդային տեքստերի լեզվական առանձնահատկությունները, բառապաշար, քերականական հատկանիշներ	239
4.6.5. Ոճական միջոցներ	241

ՄԱՍ 5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ ԵՎ ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՎԵՍ

5.1. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ	244
5.1.1. Ընդհանուր հատկանիշներ	244
5.1.2. Հրապարակային ելույթի նախապատրաստումը	246
5.1.3. Հրապարակային խոսքի ընդհանուր կառուցվածքը	250
5.1.4. Հրապարակային խոսքի հիմնական հատկանիշները	253
5.2. ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՎԵՍ	255
5.2.1. Ընդհանուր հատկանիշներ	255
5.2.2. Բանավեճի տեսակները	256
5.2.3. Բանավեճի քաղաղորիչները	257
5.2.4. Բանավեճ վարելու ընդհանուր սկզբունքներ և միջոցներ	260

ՄԱՍ 6. ԽՈՍՔԱՅԻՆ ԷԹԻԿԵՏ

6.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ	266
6.2. ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐ	267
6.3. ՀՆԶԵՐԱԳ ԵՎ ԴԻՄԵԼԱԶԵՎ	272
6.4. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ	275

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	283
--	-----

ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ

Դասագիրք բուհերի հումանիտար և բնագիտական
ֆակուլտետների ուսանողների համար

АРМЯНСКИЙ ЯЗЫК И КУЛЬТУРА РЕЧИ

Учебник для вузов, адресован студентам
гуманитарных и естественных факультетов

(на арм. яз., изд. «Зангак», Ереван)

ARMENIAN LANGUAGE AND RHETORICS

Textbook for the students of the faculties
of humanities and natural sciences

(in Armenian, «Zangak» Publishing House, Yerevan)

Հրատարակչության տնօրեն՝
Վերստուգող սրբագրիչ՝
Շապիկը՝
Էջադրումը՝

Էմին Մկրտչյան
Վ. Դերմյան
Մարիամ Կանայանի
Գրիգորի Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 18 տպ. մամուլ: Տառատեսակը՝ GHEA Grapalat

«ԶԱՆԳԱԿ» հրատարակչություն

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak